# ՀԻՆ ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՏՈՐ I

Նվիրվում է Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատման XX-ամյակին

*Посвящается XX годовщине установления Советской власти в Армении*

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ
ИНСТИТУТ ИСТОРИИ И АРХЕОЛОГИИ

ПРОФ. Х. САМУЭЛЯН

# ИСТОРИЯ ДРЕВНЕГО АРМЯНСКОГО ПРАВА

ТОМ I

ИЗДАТЕЛЬСТВО АРМФАН-а
ЕРЕВАН 1939

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՌԱ
42 48

ՊՐՈՖ. Խ. ՍԱՄՈՒԵԼՅԱՆ

# ՀԻՆ ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՏՈՐ I

Ա 24684
ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՒՆՂԱՍԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԱՐՄՖԱՆ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

Տպագրվում է ՆՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Գիտական Խորհրդի որոշմամբ։



## ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

*Պրոֆ. Աշչիկ Սամուելյանի այս աշխատությունը յերկարամյա գիտական աշխատանքի արդյունք է։ Հին հայ իրավունքի պատմությամբ շատերն են զբաղվել թե՛ հայ և թե՛ յեվրոպացի գիտնականներից, բայց մինչև այժմ ամփոփ ձևով գիտականորեն մշակված հայ իրավունքի պատմություն չկա հրապարակի վրա։ Պրոֆ. Աշչիկ Սամուելյանի այս աշխատությունն, իբրև առաջին փորձ, անշուշտ, զերծ չէ թերություններից, բայց, այդու հանդերձ, գալիս է մասամբ մեղմելու այդ պակասը։*

*Հին հայ իրավունքի պատմությունն ունի գիտական մեծ արժեք, վորովհետև առանց այդ իրավունքի պատմության հնարավոր չէ գիտականորեն մշակել և շարադրել հայ ժողովրդի պատմությունը, առանձնապես տնտեսական, սոցիալական, ընտանեկան և հողային հարաբերությունների ճշտիվ պարզաբանումն ու վերլուծումը։ Պատմական բազմաթիվ խնդիրներ կան հայ ժողովրդի պատմության մեջ, վորոնց մեկնաբանումը կապված է միջնադարյան և հին հայ իրավունքի հետ։ Դյուզպյիական պարտավորությունների ու իրավական վիճակի մասին հայ պատմիչները տեղեկություններ գրեթե չեն տալիս։ Այդ տեսակետից միակ հավասարը, առաջին հերթին, հանդիսանում են հայ իրավունքի վերաբերյալ յեղած աշխատությունները, վորոնց մասին հեղինակը հանդամանորեն խոսում է իր այս աշխատության մեջ, իրավական նորմերը կապելով պատմական յերևույթների վերլուծման և զարգացման հետ։ Հաշվի առնելով այդ հանգամանքները, ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Պատմության և Հնագիտության Ինստիտուտը հրատարակության է հանձնում պրոֆ. Աշչիկ Սամուելյանի «Հին հայ իրավունքի պատմությունը» խորագրով աշխատությունը յերկու հատորով։*

Սակայն կան մի շարք սկզբունքային հարցեր, որոնք հետևնական կողմից արծարծվել են որպես լուսաբանված խնդիրներ։ Օրինակ, հայկական ֆեոդալիզմի պատմությունը նա բաժանում է մի շարք ետապների և յենթաետապների, հողը Բագրատունիների թագավորության ժամանակ համարում է պետական, ինչպես նաև մի շարք այլ կարևոր պրոբլեմներ, որոնք, սակայն, դեռևս վիճելի են։

*7 դեկտեմբերի 1939 թ.*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՏՎԱԾ ԱՌԱՋԻՆ

### Ն ե ր ած ա կ ա ն


| | էջ |
|---|---|
| I. Հայ իրավունքի պատմության նշանակությունը | 3 |
| II. Հայ իրավունքի հետազոտության վիճակը | 7 |


## ՀԱՏՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

### Ի ր ա վ ու ն ք ի ա ղ բ յ ու ր ն ե ր ը


| | |
|---|---|
| I. Ընդհանուր ակնարկ | 24 |
| II. Սովորույթ | 26 |
| III. Կանոնական վավերաւմեռներ | 40 |
| IV. Ոտար ռեցեպցիա | 54 |
| 1. Մովսիսական իրավունք | 54 |
| 2. Ասորա-Հռոմեական Դատաստանագիրք | 59 |
| 3. Հռոմեական իրավունք | 63 |
| V. Ազգային դատաստանագրքեր | 73 |
| 1. Դավիթ վարդապետի Ալավկայ վրդու Դատաստանագիրք | 74 |
| 2. Մխիթար Գոշի Դատաստանագիրք | 75 |
| 3. Սմբատ Գունդստաբլի Դատաստանագիրք | 90 |
| VI. Հայ պատմագիրները | 95 |
| VII. Վիմական արձանագրություններ | 98 |


## ՀԱՏՎԱԾ ՅԵՐՐՈՐԴ

### Հ ա յ ի ր ա վ ու ն ք ի հ ա մ ա ռ ո ւ թ յ ու ն ը

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### Հ ա յ ի ր ա վ ու ն ք ի զ ա ր գ ա ց ման շ ր ջ ա ն ն ե ր ը


| | |
|---|---|
| I. Նախապատմական իրավունք | 101 |
| 1. Վաղագույն ֆեոդալիզմ | 102 |
| 2. Արշակունյաց թագավորություն | 103 |
| 3. Մարզպանական Հայաստան | 108 |

4. Բյուզանդական Հայաստան . . . . . 115
5. Յեկեղեցական ֆեոդալիզմ . . . . . 120
II. Բագրատունյաց կամ Արաբա-բյուզանդական շրջան . . . . 125
1. Արաբական տիրապետություն . . . . . 125
2. Բագրատունյաց թագավորություն . . . . . 128
3. Բյուզանդական տիրապետություն . . . . . 133
4. Գործող իրավունքն ու որևնքները . . . . . 135
III. Թյուրք-մոնղոլական տիրապետության շրջան . . . . . 140
1. Սելջուկյան տիրապետություն . . . . . 140
2. Ջաքարյաններէ իշխանություն . . . . . 143
3. Մոնղոլական տիրապետություն . . . . . 146
4. Կիլիկիայի հայ թագավորություն . . . . . 149
5. Գործող իրավունքը . . . . . 151

## ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

### Պետական ու վարչական իրավունք

I. Գերագույն իշխանություն . . . . . 157
1. Հողային պետական իրավունք . . . . . 157
2. Հողի պետական սեփականությունն Արշակունյաց ժամանակաշրջանում . . . . . 164
3. Ռեգալիաները . . . . . 170
4. Հողի պետական սեփականությունը Բագրատունյաց ժամանակաշրջանում . . . . . 173
5. Հողի պետական սեփականությունը Զաքարյաններէ ժամանակաշրջանում . . . . . 177
6. Թագավորի սեղնորական հողերը . . . . . 180
7. Թագավորական իշխանություն . . . . . 182
II. Նախարարական իշխանություն . . . . . 184
1. Նախարարական հողատիրություն . . . . . 184
2. Հողատիրության պայմանականությունը . . . . . 191
3. Մայորատ . . . . . 193
III. Զրային իրավունք . . . . . 197
IV. Ֆեոդալական ծառայություն . . . . . 207
1. Ֆեոդալական հիերարխիա . . . . . 207
2. Նախարարական ծառայություն . . . . . 215
3. Ազատները . . . . . 219
4. Նախարարների հարկաւորությունը . . . . . 221
5. Նախարարական իշխանություն . . . . . 226
6. Ֆեոդալական հիերարխիան և ծառայությունը Բագրատունյաց ժամանակաշրջանում . . . . . 229

7. Կառավարչական պաշտոններ Բագրատունյաց ժամանակաշրջանից հետո . . . . . 237
8. Կանանց իրավունքը . . . . . 246
V. Շինականություն . . . . . 248
1. Հողային սեփականություն և հարաբերություններ . . . . . 248
2. Ճորտական ծառայություն . . . . . 256
3. Շինականների իրավական դրությունը . . . . . 261
4. Շինականների պայքարը . . . . . 267
VI. Սերվություն . . . . . 272
1. Ընդհանուր ակնարկ . . . . . 272
2. Հայաստանի ֆեոդալիզմը և սերվության բնույթը . . . . . 276
3. Արքունի սերուկները . . . . . 287
4. Ճորտացած սերուկներ . . . . . 292
5. Տնային սերուկներ . . . . . 302
6. Տաճարական սերուկներ . . . . . 304
7. Սերուկների քանակը . . . . . 306
8. Սերուկների սոցիալ-իրավական դրությունը . . . . . 306
9. Տիրոջ սեփականության իրավունքն սերուկների վրա . . . . . 308
10. Սերկի իրավունքները . . . . . 316
11. Սերվության աղբյուրները . . . . . 319
I. Ծանոթություններ . . . . . 325
II. Աղբյուրներ . . . . . 335
III. Գրականություն . . . . . 336
IV. Անվանացանկ . . . . . 345
V. Резюме . . . . . 355

# ՀԻՆ ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՏՎԱԾ ԱՌԱՋԻՆ

# ՆԵՐԱԾԱԿԱՆ

## I. ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

*Հայ իրավունքի պատմությունը փոքրիկ մասնիկն է իրավունքի համաշխարհային պատմության: Հայ իրավունքը մեզ չի հասել, ինչպես հռոմեական* Corpus juris*-ը, կամ բաբելական սեպագրերի Համմուրաբիի ժողովածուն, կամ այլ հին ժողովուրդների իրավունքները, պետականորեն օրենսդրված, ազգային ամփոփ մի կոդիքսի վերածված: Մեզ հասել են հայկական մի քանի օրենսդրքեր, վերջիս թե ամփոփ ժողովածուներ, օրինակ՝ Կանոնագիրքը կամ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, սակայն նրանք իրենց բովանդակությամբ լիակատար ազգային իրավական կոդեքսներ չեն հանդիսանում: Մեկը, ինչպես Կանոնագիրքը, իր միակողմանի իրավաբանական նորմերով, որոնք վերաբերում են սոսկ կրոնա-եկեղեցական աշխարհին, պատկանում է կղերական դասին. մյուսը՝ Մխիթար Գոշի Դատաստանագիրքն իր խայտաբղետ, մեծ մասամբ ոտար աղբյուրներից քաղված օրենքներով, տալիս է հայ իրավունքի խճողված պատկերը: Մինչդեռ հայ իրավունքը, թեև նա ամբողջովին չի արտացոլել վերոհիշյալ օրենսդրքերում, թեև նա մեզ չի հասել պետականորեն օրենսդրված, դարձյալ իրավաբանական նորմերը կոդիֆիկացիայի չենթարկված, անհատականների պրոյեկցիան է ունեցել ու զոր է խաղացել Հայաստանի հասարակական հարաբերություններում, ունենալով իր բարմավարյան պատմությունը:*

*Հայ իրավունքն արտացոլել է վո՛չ միայն Կանոնագրքում և Մխիթար Գոշի Դատաստանագրքում, որոնք հասել են մեզ*

բազմաթիվ ձեռագիր օրինակներով, այլև անվել և այն ժողովուրդներից յուրացրած օրենքներով, որոնց հետ նա քաղաքական և կուլտուր-տնտեսական հարաբերություններ է ունեցել: Այդ օրենքները մասնավոր ռեցեպցիայի կարգով մուտք են գործել հայ իրականության մեջ և կիրարկվել են տեղական իրավաբանական ու դատական պրակտիկայում: Այդպիսի օրենքների ժողովածուներ են Մովսիսական օրենքները, Ասորի-Հռոմեական Դատաստանագիրքը և մի շարք քաղվածական ձեռնարկներ հունա-բյուզանդական օրենսդրական մատյաններից: Այսպիսով, հայ իրավունքը, որ մեզ հասել է պրավոր հուշարձաններում, չի ներկայացնում մի ուրույն ազգային իրավաբանական սիստեմ, կենտրոնական օրենսդրական բովով անցած մի կերպարանք, այլ կոնգլոմերատ է, որի մեջ մտած տեղական կամ ոտար օրենսդրքերն այս կամ այն չափով կիրառում են ունեցել իրավական բնագավառում՝ յերկրի սոցիալ-տնտեսական զարգացման դանդաղ ետապներով և մանավանդ մրցիածուի քաղաքական կյանքի հետևանքով:

Սակայն հայ իրավունքի բովանդակությունն ու ծավալը չի սահմանափակվում միմիայն դրավոր օրենքների մեզ հասած ժողովածուներով: Դոյություն ունեցին իրականում նաև իրավաբանական նորմեր, որոնք անդիր եկին մնացել ու չեն արձանագրվել իր ժամանակին իրավաբանական հուշարձաններում: Այդ վերաբերում է գլխավորապես հայոց պատմության նախաբարական շրջանին: Այդ անդիր իրավաբանական նորմերը, որոնք դեր եկին խաղում մի ժամանակ հասարակական փոխադարձ հարաբերությունների սահմանավորման ու կարգավորման մեջ, թեև հանդիսանում են հայ իրավունքի աղբյուրը: Այդ անգիր մնացած իրավաբանական նորմերը պահպանում եկին իրենց գործնական ուժը համապատասխան հասարակական ձևերում և պարտավորեցուցիչ դառնում սովորութական իրավունքի կարգով:

Այս տեսակետից հայ իրավունքն իր համապատասխան տեղն է գրավում իրավագիտության մեջ:

Սակայն մեզ համար հայ իրավունքի պատմությունն առանում է վո՛չ միայն իրավագիտական նշանակություն, այլ առա-

վերլուծել պատմափիլիսոփայական տեսանկյունից: Ինչպես հայտնի է, մեր հին պատմագրական աղբյուրները չափազանց սուղ նյութեր են մատակարարում հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքի մասին, կենտրոնանալով սոսկ քաղաքական իրադարձությունների վրա, որոնք կապվում են թագավորների ու իշխանական տների փոխհարաբերությունների, սրանց միջև տիրող հարատև պայքարների և արտաքին նվաճողների դեմ վարած պատերազմների հետ: Այս դեպքում հին հայ իրավունքն իր աղբյուրներով հանդերձ հնարավորություն է ընձեռում պատմագրական այդ թերությունները վորոշ չափով վերացնելու, ներկայացնելով բավական հարուստ նյութ՝ Հայաստանի սոցիալական, մասամբ նաև տնտեսական պատկերը վերականգնելու համար: Ցերբ ուսումնասիրում ենք վորևե ցեղի ու նրա ժողովրդի պատմությունը մարքսիստական տեսանկյունով, այստեղ հիմնականում ուսումնասիրության առարկան հանդիսանում են տվյալ ժողովրդի հասարակական հարաբերությունները. իսկ հասարակական հարաբերությունները կարգավորվում են վորոշ կանոններով, նորմերով, վորոնք առանում են իրավաբանական ձևակերպումն և մարմնանում են հատուկ իրավական ինստիտուտների մեջ: Մարքս-լենինյան պատմահայեցողության համեմատ, ամեն մի հասարակության մեջ գործող իրավունքները, իրավական ինստիտուտները հանդիսանում են այն վերնաշենքերից մեկը, վոր բարձրանում է արտադրական հարաբերությունների հիմքի վրա:

Ահա թե ինչ է ասում Ֆ. Ենգելսը իրավունքի մասին իբրև վերնաշենքի. «Ամեն մի դեպքում հասարակության տնտեսական կառուցվածքն այն իրական հիմքն է կազմում, վորով և վերջին հաշվով պիտի բացատրվի յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջանի իրավական ու քաղաքական հաստատությունների, ինչպես նաև կրոնական, փիլիսոփայական և այլ հայացքների բովանդակ վերնաշենքը»[1]: Այդ միտքն ավելի պարզորոշ արտահայտում է Կ. Մարքսը. «Իմ հետազոտությունները ինձ բերին այն եզրակացության, վոր իրավական հարաբերությունները, ինչպես և պետության ձևերը չեն կարող ըմբռնվել իրենք իրենց մեջ, և վոչ էլ կարող են բացատրվել այսպես կոչված մարդկա-

յին վարու- ընդհանուր պարպացմամբ, այլ նրանց սեփականների ավելի շատ դռնվում են կյանքի նյութական պայմաններում... Իրենց կյանքի հասարակական արտադրության ժամանակ մարդիկ մտնում են որոշ, անհրաժեշտ, իրենց կամքից անկախ՝ արտադրական հարաբերությունների մեջ, որոնք համապատասխանում են իրենց նյութական արտադրողական ուժերի զարգացման որոշ աստիճանին: Այդ արտադրական հարաբերությունների ամբողջությունը կազմում է հասարակության տնտեսական կառուցվածքը, այն իրական բազիսը, որի վրա հիմնվելով՝ բարձրանում է իրավական ու քաղաքական վերնաշենքը և որին համապատասխանում են հասարակական գիտակցության որոշ ձևերը»[2]:

Կ. Մարքսի ու Ֆ. Ենգելսի վերևում բերված խոսքերից հետևում է, որ իրավունքը դասակարգային հասարակության մեջ պայմանավորված է տնտեսական հարաբերություններով, որոնք ունեն իրավական արտահայտություն և ըստ այնմ էլ կարող է ստանալ զանազան բովանդակություն՝ արտադրական-հասարակական հարաբերություններին վերաբերմամբ: Ոչ թե հասարակության և հիմնված սրանցից, իրավունքի վրա, այլ, ընդհակառակն, իրավունքը, սրանցից բխում են հասարակության կառուցվածքից, որովհետև «արտադրության յուրաքանչյուր ձևը ստեղծ է բերում իրեն հատուկ իրավական հարաբերություններ, կառավարության ձևեր և այլն»[3]:

Հետևապես իրավունքը, որը, իբրև իրավաբանական նորմերի համակցություն, այնպես պարզորոշ ձևով մարմնանում է օրենքներում, իր ցայտուն արտահայտությունն ստանում է դասակարգային հասարակության մեջ, սրբագործելով ու վավերացնելով տիրող հարաբերությունները, որոնք, իհարկե, ծառայում են տիրապետող դասակարգին:

Ուրեմն հայ իրավունքի պատմությունը կարևոր նշանակություն է ստանում թե՛ իրավագիտության և թե՛ հայ պատմագիտության համար: Մի կողմից՝ հայ իրավունքի ուսումնասիրությունը ձգտում է վերականգնել, մեզ հասած իրավաբանական նյութերի հիման վրա, հայ իրավունքի իսկական բնույթն ու պատկերը: Դրանով նա զգլխ է ծառայելու իրավագիտությանը և այլ պատմական ժողովուրդներին կից նաև

հայ ժողովրդի իրավունքի ուսումնասիրության համար ավելացնում է մի դրվագ ընդհանրապես իրավունքի ծագման ու զարգացման տեսության մեջ: Մյուս կողմից՝ հին հայ հասարակության իրավական վերնաշենքը լայն ուղիներ է բաց անում պատմագետի առաջ՝ լուծելու մի շարք պրոբլեմներ Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման պատմության նկատմամբ, որոնք մութ են մնացել կամ անտեսվել են մեր հին մատենագրության մեջ: Վերջին հանգամանքով կարելի է բացատրել այն բնորոշ երևույթը, որ չեթե մեզանում փորձեր են չեղել ուսումնասիրելու հին Հայաստանի իրավական հնաոխությունները, այդ արել են սկզբնաղբյուրների ու բանասերները, բայց ոչ իրավագետները:

## II· ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

Հայ իրավունքի հետազոտության գործը տակավին հետամնաց վիճակում է գտնվում: Հայ իրավունքի ուսումնասիրության անդրանիկ փորձերը կատարել են ո՛չ թե հայ, այլ ոտարազգի եվրոպական պետականագետները, պլեսավորապես գերմանացի իրավագետները:

Հայ իրավունքի մասին առաջին տեղեկությունները եվրոպական դրականության մեջ հանդիպում են XIX դարի սկզբներին, շնորհիվ Ռուսական Ակադեմիայի անդամ Ա. Բրոսսեի: Սա Փարիզում հրատարակում է 1829 թ. տեղեկություններ վրաց որենագրքի (Վախթանգի) և իրավունքի մասին, որի մեջ մտնում էին նաև «Հայկական» կոչված որենքները, որոնք բաղկացած են պլեսավորապես Մխիթար Գոշի Դատաստանագրքից և Ատրպատ-Հոռոմեական Որենագրքի հայկական վերամշակից[4]: Այդ հրատարակված նյութերի հիման վրա գերմանացի պետական բիները հետազոտական մի ակնարկ է լույս ընծայում վրացական ու հայկական որենագրքերի մասին[5]: Այնուհետև հայտնի Ն. Հաքստհաուզենն Անդրկովկասում կատարած իր ճանապարհորդության պատմության տալիս՝ հաղորդում է նաև մանրամասն տեղեկություններ վրացական ու հայկական իրավունքների մասին[6]: Վերոհիշյալ հեղինակների, մանավանդ վերջին յերկուսի, տվյալները հայ իրավունքի մա-

սին չափազանց թեթև ու անկատար են: Նրանք ոգտվել են վո՛չ թե անմիջական հայ աղբյուրներից, այլ վրաց թագավոր Վախթանգի որենսդրքից, վորի մեջ պարունակվում է նաև հատուկ գլուխ «Հայկական որենքներ» խորագրով, վորոնք այստեղ վորոշ փոփոխման են յենթարկվել, հարմարեցվելով վրաստանի տիղական պայմաններին:

Հայ իրավունքի հետազոտության առաջին փորձն իրավագիտության մեջ պատկանում է Ֆերդինանդ Բիշոֆին, վորն պրաղվել է լեհահայոց իրավունքի հարցով, լույս ընծայելով 1857 թ. «Das alte Recht der Armenier in Polen»[7] և ապա 1862 թ. «Das alte Recht der Armenier in Lemberg»[8] աշխատությունները: Պրոֆեսոր Ֆ. Բիշոֆը ավստրիական քաղաքային իրավունքների իր ժողովածուի համար Լեմբերգի արխիվում նյութեր պրպտելիս՝ անսպասելի հայտաբերում է մի շարք արխիվային վավերագրեր Լեմբերգի հայ գաղութի իրավական հարաբերությունների մասին: Այդ վավերագրերը ուսումնասիրությունը նրան բերում է այն յեզրակացության, վոր Լեմբերգի հայ համայնքը ղեկավարվելիս և յեղել սեփական աղգային որենսդրքով: Հետամուտ լինելով՝ նա իսկապես կարողանում է գտնել նույն արխիվում իր կռահած որենսդիրքը, գրված լատիներեն և լեհերեն, վորը և գտնում է նրա ուսումնասիրության առարկան: Այդ որենսդրքի լատիներեն որինակը կրում է հետևյալ խորագիրը. «Հայ իրավունքի որենքներ՝ լեհաց Սիգիսմունդ Ա. ամենաբարեպաշտ թագավորից քննված ու հաստատված և նորին թագավորական մեծության հրամանով ու կամքով լրենց մայրենի լեզվից լատիներեն թարգմանված և բնագրից հարազատորեն ընդօրինակված»[9]: Այն հաստատված է յեղել լեհաց Սիգիսմունդ Ա. թագավորի կողմից 1519 թ.: Բիշոֆը, վերլուծելով այդ որենսդրքի բովանդակությունը, այն կարծիքին է հանգում, թե որենքները մեծ մասամբ վերցված են հին և նոր կտակարանից, իսկ մնացած մասը պարունակում է բարոյագիտական-խրատական աչխարհայացք. «առաջին վեց գլուխը,— շարունակում է Բիշոֆը,— վերագրվում են հայոց թագավորներին, մյուս մի քանիսը պարունակում են անշուշտ շատ հին որենքներ, իսկ ամ-

թողչ որենգրքի հոբինվածքը համանականորեն կատարված և, երբ հայերը դադթել եյին Լեհաստան»:

Պրոֆ. Բիլոֆին, անծանոթ լինելով հայոց պրակտիկային ու պատմությանը, չի կարողացել ճիշտ վորոշել իր հայտարերած լեհահայոց որենգրքի աղբյուրների ծագումն և ընդհանրապես հայ իրավունքի մասին պատշաճ չի ունեցել: Մինչդեռ Լեմբերգի հայ որենգրքի և Մխիթար Գոշի Դատաստանագրքի հոդվածների հատարակ համեմատությունն իսկ ապացուցում է նրանց սերտ առնչությունը: Իրոք, Վատան Բատատմյանը, բաղդատելով այս յերկու որենգրքի հոդվածաշարը, հատատեց, վոր Լեմբերգի հայ որենգրքի հոդվածների մի մասը վերցված է Մխիթար Գոշի Դատաստանագրքից դրեթե բառացի, իսկ մեծագույն մասը յենթարկված է քիչ կամ շատ փոփոխությունների[10]: Անշուշտ, այդ փոփոխությունները կատարված են որենքները տեղական պայմաններին հարմարեցնելու նպատակով:

Ֆ. Բիլոֆի աշխատությունները լեհահայոց իրավունքի մասին վորոշ հետաքրքրություն առաջացրին իրավագիտության բնագավառում, մանավանդ վոր Ֆ. Բիլոֆից մի վորքր հետո յեվրոպական մատենադարաններում անցյալ դարի 70-ական թվականների վերջերը հայտարերվեցին այսպես կոչված «Ասորա-Հռոմեյական Դատաստանագրքի» հայկական վարիանտները: Այդ որենգրքի մի ձեռագիրը, վոր գտնվում է Լոնդոնի ազգային թանգարանում, հրատարակել են 1880 թ. Բրունս և Զախաու գերմանացի պրոֆեսորները իրենց խարտիանությամբ և լուսաբանությամբ, չհաշվելով նաև հայ իրավունքը, վորի հետ վորոշ չափով կապում եյին հիշյալ Ասորա-Հռոմեյական Որենգիրքը, իբրև V դարի գործ:

Այդ հանգամանքները խթան հանդիսացան մի քանի իրավագետների համար՝ զբաղվելու հայ իրավունքի հարցով: Սրանց մեջ հայտնի դարձավ համեմատական իրավագիտության ականավոր մասնագետ պրոֆ. Ց. Կոհլերը: Ցեթե Ֆ. Բիլոֆը զբաղվեց լեհահայոց իրավունքով վորպես հետևանք յուր ձեռնարկած հետազոտական աշխատանքների՝ Ավստրիայի քաղաքային իրավունքների մասին, վորոնց չարքին եր պատ-

կանում նաև լեհահայ իրավունքը, իբրև Լեմբերգ քաղաքի իրավունք, ապա Յ. Կոհլերը մտահղացավ հայ իրավունքի հետազոտությանը համեմատական իրավագիտության տեսանկյունով: Բուրժուական իրավագետ-տեսաբանները, պրպտվելով իրավունքի ծագման ու զարգացման պրոբլեմներով, փորձում էին այդ հարցը լուծել պատմա- համեմատական ու սոցիոլոգիական-համեմատական մեթոդներով: Նրանք ամենալայն չափերով կանդնում էին իրավունքի յուրացման ու վերլուծման, ինչպես և սոսկ ազգագրության թեորիաների վրա: Ահա այդ տեսակետով էլ հայ իրավունքը, թե՛ հին գրավորը և թե՛ սովորութիականը, գրավում էր Յ. Կոհլերի և սրա հետևորդների ուշադրությունը, հարստացնելու համար համեմատական իրավագիտության հետազոտական պաշարը: Իր առաջին ունենալով Յ. Բիշոֆի գործերը, նաև Ասորա-Հռոմեական Դատաստանագրքերն ու Հաքսահատուցների աշխատությունի մեջ թարգմանաբար առած բերված հայ իրավունքի նորմերը, վորոնք գտնված էին Վախթանգի Դատաստանագրքից և ուրիշներ չէին ներկայացնում Մխիթար Գոշի Դատաստանագրքի հարաբերությունը, պրոֆ. Յ. Կոհլերը 1888 թ. հրատարակեց «Das Recht der Armenier» («Հայերի իրավունքը») աշխատությունը, վորը հայ հին իրավունքի պատմությունն ու սիստեմը կառուցելու մի փորձ է: Հիշյալ հեղինակը, թեև նույնպես զուրկ էր հայ պրյուրներից և գրականությունից անմիջորեն ոգտվելու հնարավորությունից, այնուամենայնիվ կարողացել էր վորոշ չափով իրագիտ լինել հայ պատմության ու իրավունքի վերաբերյալ ամեն գրականության և ըստ այնմ չարահյուսել իր աշխատությունը: Ինչպես ասացինք, նա հայ իրավունքի նորմերը համեմատության է ենթում զանազան հին ժողովուրդների օրենսդրքերի (Համմուրաբիի, Մովսիսական օրենքների, ասորականի և այլն) հետ: Անշուշտ, Յ. Կոհլերի աշխատությունը զերծ չէ թերություններից, մանավանդ գրե հայ օրենսդրության աղբյուրների և իրավաբանական նորմերը նա համարում է մեծ մասամբ սոսկ վերապատումներ կամ ազգեցություններ ուրիշ իրավունքներից: Այդ նույն վերապատման տեսակետն է նա արծարծում 1906 թ. լույս ընծայած «Altsyrisches und armenisches

Recht» հետազոտության մեջ, քննության առնելով հին ասորական և հայկական իրավունքներն իրենց ունեցած առնչության:

Նույն փոխառությունների տեսակետը վրա են կանգնած Դավիդ Մյուլլեր[11] և վ. Ազատովիցեր[12] պրոֆեսորները, որոնք Մխիթար Գոշի Դատաստանագրքի հոդվածների մեծ մասը համարում են փոխառած մովսիսական և նույնիսկ թալմուդ-տալմուդական իրավունքից:

Ամենից արժեքավոր և ուշագրավ են պրոֆ. Յ. Կարասի հայ իրավաբանության վերաբերյալ ուսումնասիրությունները: Ինչպես հայտնի է բանասիրը, ուրիշն և անմիջականորեն ծանոթ լինելով հայ մատենագրությանն ու ոգեշնչվել ընդհանրաններին հենց այդ առանձնությունները, որոնք նրա հետազոտություններին ամենից գրական հմայնավորություն են տալիս: Իր հայագիտական բանասիրական աշխատությունների շարքում Յ. Կարասը հանդես է եկել նաև յուրահատուկ իրավաբանական ոլորտում: Առաջինը՝ «Sempad'scher Kodex aus dem XIII Jahrhundert», յուրահատուկ հատորներից բաղկացած և 1905 թ. լույս տեսած աշխատություն է: Դրա առաջին հատորը կազմում հայ թագավորության մեջ կիրառվող Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքի հայ բնագրի և գերմաներեն թարգմանության հրատարակությունն է, իսկ յուրաքանչյուր հատորը՝ Դատաստանագրքի որևէ հոդվածների համեմատությամբ Մխիթար Գոշի Դատաստանագրքի: Այդ ճոխ ու մանրակրկիտ աշխատությունը մեր մատենագրական բնագրերի հրատարակման առաջարկում յուրահատուկ է, որպես փոխառության, այն էլ հայ իրավաբանական բնագրերի, որոնց պահանջն այնքան զգալի է մեր իրականության մեջ: Ի հարկե, Յ. Կարասը հետ չի մնում, ինչպես և սպասելի էր, բուրժուական իրավագետներից, երբ իր համեմատություններում հայկական իրավունքի նորմերի մեջ շատ անգամ տեսնում է առանձին փոխառություններ տարբ իրավունքներից, ինչպես օրինակ՝ Առաքելից, Մովսիսականից, Բյուզանդականից և այլն:

Ամենից հետաքրքրականն է Յ. Կարասի յուրահատուկ աշխատությունը՝ «Grundriss der Geschichte des armenischen Rechtes».

1906 թ.—«Հայ իրավունքի պատմության ուրվագծերը»: Հեղինակը փորձում է տալ հայ իրավունքի պատմությունը, բաժանելով այն յերկու մասի— արտաքին պատմության, վորտեղ տեսության են առնվում նրա աղբյուրները, և ապա ներքին զարգացման պատմության, վորտեղ տրվում է այդ իրավունքի դիտեմը: Այստեղ Յ. Կարասը, ըստ յերևույթին, մի փոքր մեղմացնում է իր նախորդ աշխատության մեջ արծարծած տեսակետը վերաբերմամբ ազդեցության մասին, ընդունելով հայ իրավունքի զոյացման ու զարգացման տեղական բնահատուկ հանգամանքները: Սակայն նա ընկնում է սխալների մեջ, ամբողջովին հաղթահարելով թագավորության չլքմանին վերաբերյալ բյուզանդական օրենքների անցկացման հայաստանում: Չնայած վորոշ թերությունների և անընդունելի տեսակետներին, Յ. Կարասի հիշյալ աշխատությունը պետք է համարել մի յեվրոպական իրավաբանության, այլև հայ բանասիրական ու իրավաբանական գրականության մեջ անգրանիկ և միակ լուրջ փորձը՝ տալու հայ իրավունքի պատմության ամփոփ ու հանգամանորեն արծարծած մի ուսումնասիրություն:

Այստեղ վանդ չենք առնում գերմանական իրավաբանական գրականության մեջ հրապարակված մի շարք հին ժողովուրդների իրավունքների պատմությանը նվիրված գործերի վրա, ինչպես՝ B. W. Leist—Graeco-italische Rechtsgeschichte (1884 թ.) կամ՝ L. Mitteis—Reichsrecht und Volksrecht in den östlichen Provinzen des römischen Kaiserreichs (1891 թ.), կամ՝ Zachariae v. Lingenthal—Geschichte des Griechisch-römischen Rechts (1892 թ.) և այլն, վորոնց մեջ հարևանցիորեն չոշափվում և նաև հայ իրավունքը:

Գերմանականի համեմատությամբ չափազանց աղքատ են ֆրանսական իրավաբանության մեջ հայ իրավունքի վերաբերյալ աշխատությունները: Սակայն, ինչպես վերը նշել ենք, հայ իրավունքի մասին առաջին տեղեկությունները, վորոնք հայտնի յեղան յեվրոպական գիտնականներին, յերևացին Ֆրանսիայում, Նորհիվ Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի անդամ Բրոսսեյի: Սա գլխավորապես ուշադրություն էր դարձրել վրացական իրավունքին, նկատի ունենալով վրաց Վախթանգ թագավորի օրենսգիրքը, վորի հատվածներից մեկն էլ

կրում է «Հայկական օրենքները» վերնագիրը: Բրոսսեի աշխատությունները չի կարելի ուսումնասիրություններ անվանել. նրանք ավելի շուտ ինֆորմացիոն և տեղեկատուական հոդվածներ են: Այնուհետև պետք է հիշատակել R. Dareste—Etudes d'histoire de droit (1887 թ.) աշխատությունը, ուր հատուկ գլուխ է հատկացված հայ իրավունքի պատմությանը: Սա համառոտ պատմական տեսություն է, չարահյուսված բացառապես ոտար գրական աղբյուրների հիման վրա, այն է՝ Մ. Բրոսսեի, Մ. Կովալևսկու, Թևրևս և Ց. Կոհլերի ուսումնասիրությունների: Դարեստի աշխատությունն հայ իրավունքի մասին Ց. Կոհլերի և մանավանդ Ց. Կարստի գործերից հետո միանգամայն զուրկ է արժեքից: Իրավաբանական տեսակետից նույնպիսի անարժեք գործ է հանդիսանում Կ. Բամաջյանի «Le droit armenien puis l'origine jusqu'à nos jours» (1901 թ.)—«Հայ իրավունքը սկզբից մինչև մեր օրերը»—Թուրքիայի ակնարկը, վորով հեղինակը ցանկացել է ծանոթացնել յուրոպական արևելագետներին հայ իրավունքի պատմության հետ:

Հայ իրավունքի պատմության են վերաբերում Ե. Դյուլորիեյի և Վ. Լանգլուայի աշխատությունները, վորոնք սահային, ավելի պատմագիտական բնույթ են կրում: Առաջինն իր «Etude sur l'organisation politique, religieuse et administrativ du royaume de la petite Armenie au temps de Croisades» աշխատության մեջ տալիս է Կիլիկյան հայ թագավորության պետական ու վարչական կառուցքի պատկերը, իսկ յերկրորդը՝ «Le trésor des Chartes d'Armenie au Cartoulaire de la chancellerie Royal de Roupeniens» աշխատության մեջ հրատարակել է Կիլիկիայի Ռուբինյանց թագավորության դիվանից դուրս յեկած գանազան վավերագրերի պատճենները, վորոնք մեծ մասամբ առնչություն ունեն միջազգային հարաբերությունների հետ՝ առևտրական ու այլ դաշնագրերի բնագավառում:

Վերջապես հիշենք Հ. Մեղավորյանի իրավագիտական-ազգագրական աշխատությունը՝ «Ընտանիքի և ամուսնության մասին» (1894 թ.)—«Etude ethnographique et juridique sur la famille et le mariage armeniens, pre'cede' dlun aperçue historique».

Նմանատիպ հարուստ չէ ռուսական իրավագիտությունն հայ

իրավունքի հետազոտություններով: Բնորոշ է, որ, բայց երկու–երեք ուսանողից՝ մնացածները դեղել են հայ ուսումնասիրողները, որոնք հրապարակել են իրենց աշխատությունները ռուսերեն: Անդրանիկ դարձն հայ իրավունքի մասին դեղել է Алексеев–ի «Армянский судебник» խորագրով գրքույկը (1870 թ.): Այստեղ տեսության է առնված Նոր–Նախիջևանի քաղաքի հայկական համայնքի օրենսդիրքը, որի օրենքների մեծ մասն, ըստ հիշյալ հեղինակի կարծիքի, թարգմանված է Հուստինիանոսի օրենքներից: Այնուհետև հիշյալ մ Մաքսիմ Կովալևսկուն, որը հայտնի է մի շարք համեմատական իրավաբանական հետազոտություններով: Սա էլ ավել հատուկ հետազոտություն հայ իրավունքի մասին, բայց իր մի աշխատության մեջ «Закон и обычай на Кавказе», հատոր I (1890 թ.), IV գլխում, որը կրում է «Влияние армянского и греческого права» խորագիրը, նա փորձում է ապացուցել, թե կովկասյան լեռնցիների իրավունքի վրա մեծ ազդեցություն է ունեցել նաև հայ իրավունքը: Մ. Կովալևսկին ինքն անձամբ լավ իրազեկ չէ հայ իրավունքի պատմության ու հայ օրենսդրքերի բովանդակության, այլ ստիպում է կարմնակի աղբյուրներից, այն է՝ Հուբելի և պրեսվորատես Վարդանի օրենսդրքերի հայկական մասից:

Ավելի մ ընդհանուր իր մի քանի աշխատություններով Մ. Կովալևսկու աշակերտ և նրա մեթոդաբանական ուղղության պատկանող պրոֆ. Ա. Յեղիազարյանը: Նրա այն հետազոտությունը, որը հատկապես արժարժում է հայ իրավունքը, լույս է տեսել 1919 թ. «Исследования по истории армянского права публичного и частного» խորագրով: Այդ իրավաբանական աշխատության մեջ, որի միայն առաջին մասն է հրատարակվել, նա տալի է մինչնազարյան (X—XIII դարերի) Հայաստանի պետական, հասարակական, տնտեսական և իրավաբանական կառույցը և ընդ նմին փորձում է ներկայացնել հայ իրավունքի սիստեմը: Թեև առաջադրված պրոբլեմները ու արծարծվող հարցերը հետաքրքրություն են շարժում, սակայն հեղինակն իր տրամադրության տակ է ունեցել չափազանց աղքատ նյութ, բավականանալով սոսկ Անիի և Շիրակի վիմական արձանագրություն-

ներով, այն էլ մինչև 1881 թ. հրապարակված ընդարձակ, որոնք պետեղված են Դ. Ալիշանի «Շիրակ» ուղղագրական աշխատության մեջ ու թարգմանված են ռուսերեն Մ. Եմինի ձեռքով՝ «Армянские надписи в Карсе, Ани и окрестностях последнего», որոն ինքնին անգնահատելի մի գործ է:

Ս. Յակիպարյանը, կատարելով մինչդարյան հայ իրավունքի սիստեմը, չի կապում այդ սրբանապես հայ իրավունքի պարզացման նախորդ ետապների հետ. ստացվում է ինչ-որ ինքնամփոփ, ժամանակագրորեն ու տեղագրորեն կղզիացած իրավունք, որը իր պարունակությամբ թերի չի և չի հանդիսանում դեներալ պարզացած իրավունքի պատմություն: Նույն հեղինակի մյուս աշխատությունները—«Административно-экономический строй сельской общины в Эриванской губернии», այնուհետև «Исследования по истории учреждений в Закавказье» 2 հատորից և «О водовладении в Закавказском крае»,—թեև անմիջապես չեն վերաբերում հայ իրավունքի պատմությանը, բայց արծարծված հարուստ նյութը խիստ չափական և ուշ միջնադարի և նոր դարերի վաղագույն շրջանի հայ սովորութիական իրավունքը պարզաբանելու համար այնպիսի կարևոր հարցերի նկատմամբ, ինչպես են հողատիրության իրավունքը, գյուղական համայնքը, ընտանի իրավունքը, հողային ռենտան ֆեոդալիզմի պայմաններում:

Թիֆլիսում մի ժամանակ լույս տեսնող «Юридическое обозрение» ամսագրում քանիցս հրապարակվել են հայ իրավունքի վերաբերյալ հոդվածներ: Արանցից կարևոր է հիշատակել Ս. Աբծրունու «Семейственное право по Мхитару Гошу», և Հ. Տեր-Հովհաննիսյանի «Судебник Мхитара Гоша». վերջինը թարգմանական բաղվածք է Մխիթար Գոշի Դատաստանագրքի որևէ հրատարակից:

Վերջին ժամանակներս լույս են ընծայվել երկու աշխատություններ հայ իրավունքի պատմության առնչությամբ: Առաջինը՝ «Древне-армянская книга канонов», առհանգամանալից և հայ կանոնական իրավունքի վերաբերյալ զանազան մատենագրություններում եղած ձեռագրերի համագրական դասակարգումով և նկարագրությամբ, իսկ երկրորդը՝ «Судебная книга

Мхитара Гоша и книга канонов», *որի* պրպտում է այն հարցով, *թե ի՛նչ չափով Հայ Կանոնագիրքը և ո՛ր աղբիւրն աղբիւր է ծառայել Մխ. Գոշի Դատաստանագրքի համար:*

*Նոյն կանոնագիրքը հետազոտութեան առարկա յն դարձել Լ. Մելիք-Թանգիևի «Об источниках древне-армянского права» դրքում, որտեղ հեղինակն պրպտում է մեզի հայ կանոնական իրաւունքի աղբյուրների հարցով:*

*Հետաքրքրութեան և ներկայացնում Համաուկրաինական արևելագիտական ընկերութեան «Східні Світ»—«Արևելյան աշխարհ» պարբերական հանդեսում (1927 թ.) զետեղված հոդուածը՝ «Բյուզանդիոնի ազդեցութիւնը հայ իրաւունքի վրա» որ պատկանում է պրոֆ. Ճա. Ֆասսին: Հեղինակը, համաձայնելով դէպի անական Մխիթարի, թե Աստրա-Հռոմէական Դատաստանագիրքը հունական հիմք ունի, նշում է, թե Մխիթար Գոշի Դատաստանագրքում լայն չափերով փոխառութիւններ են կատարված բյուզանդական իրաւունքից. այստեղ հեղինակն, անշուշտ, չափազանցութիւնների մեջ է ընկնում:*

*Ի վերջո նշենք Ս. Ամուելյանի «Очерки по обычному семейному праву армян» (1901 թ.), որտեղ ազգագրական ու պատմական նյութերի հիման վրա ուրվագծվում է հայ ընտանեկան սովորութեական իրաւունքը:*

*Դառնանք այժմ հայ իրաւագիտական աշխարհին: Հայոց պատմութեան հետազոտութեան առարկա յն եղել հայ բանասէրների ու պատմագէտների կողմից մեզի քաղաքական ու բանաստեղծական, վերջերս նաև սոցիալ – տնտեսական կողմից: Ներքանք, ուսումնասիրելով Հայաստանի հասարակական ձևերը, դաշտավարահուսական և այլ վերնաշէնքերը, միանգամայն աչքաթող են արել այնպիսի մի կարեւորագոյն վերնաշէնք, ինչպիսին է իրաւականը, որով հնարաւոր և շատ բան պարզել հայոց պատմութեան մթին էջերում: Ի հարկե, այդ առաջարկում անհրաժեշտ եր իրաւագէտների մասնակցութիւնը, որ, ինչպէս տեսնում ենք, բացի եերկու—երեք դէպքից, բնաւ չի եղել: Հայ իրաւական փնտրտուքների ուսումնասիրութեան գործում հանդես են եկել նաև հայ պատմաբանները ու բանասէրները,*

քայլ սրանք մոտեցել են առաջադրված պրոբլեմներին զուտ պատմական կամ լեզվափիլիսական թեքումներով: Կանդնած լինելով հետազոտության ֆորմալիստական յեղանակների վրա՝ նրանք տվել են դիվանագիտական, վարչական ու դինվորական, մասամբ նախարարական կառուցքի արտաքին նկարագիրը կամ տերմինաբանական վերլուծումը, առանց խորանալու նրանց սոցիոլոգիական տեսության մեջ:

Մեր իրականության մեջ հայ իրավունքի ուսումնասիրության անդրանկությունը պատկանում է Վահան Բաստամյանին: Նրա դլուխ-դործոցը պետք է համարել Մխիթար Գոշի Դատաստանադրքի հրատարակումը (1880 թ.), վորով նա հայ իրավունքի այդ միակ պատմական ժողովածուն հրապարակի վրա յեր դնում հետաքրքրվողների և հետազոտողների առաջ: Այդ Դատաստանադրքի դիտական հրատարակության բնույթը վորոշ չափով հնացել է և չի կարող բավարարել արդի դիտական պահանջներին:

Բանն այն է, վոր Վ. Բաստամյանը հրատարակության համար վերցրել է իրոք միայն մի ձեռագիր, իր կարծիքով համեմատաբար լրիվ որինակը, կցելով իրրև ծանոթություններ մի քանի այլ ձեռագրերի տարբերություններ. մինչդեռ դիտական արժեք կարող է ունենալ այն հրատարակությունը, վոր կազմվում և խմբագրվում է բոլոր ձեռագրերի համեմատությամբ: Բայց և այնպես, նա տակավին մնում է միակ մատչելի աղբյուրը և պահպանում է իր դերազանցությունը վերջին ժամանակներս հայերեն հրապարակված մի քանի այլ որենագրքերի վերաբերմամբ, վորոնց հրատարակողները պլացել են նույնիսկ նվազագույն չափով պահպանել այդպիսի պատասխանատու տպագրությունների դիտական ձևավորումը: Կարևոր նշանակություն եր ներկայացնում իր ժամանակին Վ. Բաստամյանցի ընդարձակ «Հառաջաբանությունը», վոր կցված է Մխիթար Գոշի Դատաստանադրքի բնագրի հրատարակությանը, և վորը նախապես «Դատաստանադրքք Մխիթար Գոշի, իրավաբանական հետազոտություն» խորագրով պարբերաբար տպագրվել է Թիֆլիսի Մեղու թերթում 1879 թ.: Դա հայ իրավունքի պատմության մոնոդրաֆիական մի հետազոտություն է, վոր առաջին անդամ է

Հ 2 4984



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ

յերևան գալիս հայ իրականության մեջ և դրանով պատվավոր տեղ գրավում: Հիշյալ «Հառաջաբանության» մեջ հեղինակը փորձում է ուրվագծել հայ որենսդրության պատմությունը և ապա մանրամասնորեն կանգ է առնում Մխիթար Գոշի անձնավորության ու նրա կազմած որենսդրքի վրա, վերհանելով նրա նշանակությունը, վերլուծելով նրա սիստեմը, աղբյուրներն և իրավաբանական տեսական ու գործնական բովանդակությունը:

Նույն Վ. Բաստամյանը, հիմնվելով ձեռագիր որենսդրքերի ու կանոնագրքերի ուսումնասիրության վրա, տպագրել է (1880 թ.) և մի այլ ստվար աշխատություն— «Ամուսնությունն ըստ հայ յեկեղեցական իրավաբանության»: Չնայած վերնագրի ընդգծված բնույթին՝ այդ հետաղոտությունը չահեկան է հայ իրավունքի պատմության համար, ներկայացնելով ամուսնական իրավունքի ուսումնասիրությունը վորոշ չափով նաև քաղաքացիական իրավունքի սահմաններում: Այդ աշխատությունը, վոր տարաբախտաբար անավարտ է մնացել, պատկերացնում է ամուսնական իրավունքի որենսդրության ամբողջ զարգացումը, թեև առանց այն կապելու հասարակական-արտադրական հարաբերությունների զարգացման հետ:

Այնուհետև 1905 թ. Շուշում լույս է տեսել «Հայոց յեկեղեցական իրավունք» աշխատությունը, վորը պարունակում է նեղածություն և աղբյուրներ: Հեղինակը մոտեցել է իր նյութին խիստ սահմանափակ առումով, կղերական իմաստավորումով, ուստի կանոնական իրավունքն այդտեղ յերևան է գալիս իբրև ինքնամփոփ, ինքն իր մեջ զարգացող յերևույթ, հասարակական հարաբերությունների բովանդակ, իրական վերնաշենքից անջատ մի կատեգորիա: Այդ աշխատության նշանակությունն այն է, վոր այնտեղ է մի յեն ամփոփված բոլոր աղբյուրները, այն է՝ յեկեղեցական ժողովների վորոշումները, ժողովական ու անհատական ծագումն ունեցող յեկեղեցական կանոնները ու կարգադրությունները, վորոնք, անկասկած, հայ իրավունքի ուսումնասիրության համար կարևոր նյութեր են: Սակայն այդ աղբյուրների արժեքը մի փոքր նսեմանում է, վորովհետև նրանց բովանդակության մշակումն ու խմբագրումը

չէ կատարվել դիտական հրատարակության պահանջների համաձայն:

Հայ իրավունքի պատմության վերաբերյալ մի քանի ուսումնասիրություններով հանդես է եկել Ա. Ղլոճյանը: Ցուր վերջին հրատարակած աշխատության մեջ, «Հայոց հին իրավունքը» խորագրով (1913 թ.), նա փորձում է տալ հայ ընտանեկան իրավունքի սիստեմը, ընդ որում նյութը բաժանում է երկու մասի՝ ընտանեկան կազմակերպության հիմունքները և ապա ամուսնական իրավունքը: Այդ աշխատության առավելությունն այն է, որ հեղինակն ոգտագործում է, մյուս աղբյուրների շարքում, նաև հայ ազգագրական նյութեր: Սակայն վերոհիշյալ գործն իր մոտավ նախոնալիստական բնույթ ունի, իսկ իր դատական կոնցեպցիայով արծարծում է ռեակցիոն տեսակետ: Ա. Ղլոճյանը մոտենում է իրավունքի պրոբլեմին ռասայական թեորիայով, ճանաչելով միայն արիական ազգերի իրավունքը և սեմական ազգերի իրավունքն իբրև հակոտնյա կատեգորիաներ, որոնք իբր թե տարբերվում են իրարից ուրույն հատկանիշներով, իրավաբմբռնման յուրահատուկ ցեղական–ռասայական պունավորումով: Ի հարկե, ըստ Ա. Ղլոճյանի, հայ իրավունքը դուս արիական է, որ հետագայում հայ ցեղի ազգայնացումով ստացել է ազգային բնույթ, պահպանելով արիական նախադրյուրի հիմնական դծերը: Անտեսելով պատմական զարգացման որինաչափությունն և հաշորդական սոցիալ–անտեսական ֆորմացիաները՝ Ա. Ղլոճյանը վերցնում է հայ իրավական վերնահենքի տերմիններն ու իրավական ինստիտուտներն իրենց ստատիկայում: Նա հայ իրավունքը համեմատության է ենթարկում այլ արիական ժողովուրդների իրավունքների հետ և, առանց նրբանց զարգացման մոմենտները վորոշելու, այն հայտարարում է արիական, կանխապես հետու վանելով սեմական իրավունքը, իբրև միանգամայն այլ իրավաբանական նորմեր և այլ իրավական ինստիտուտներ պարունակող: Մինչդեռ արիական թեորիայով տարված իրավագետները չեն ուզում դիտել, վոր «սեմական իրավունքի» շատ ինստիտուտներ նույնն են եղել, ինչ վոր «արիական իրավունքի», բայց տվյալ ստատիկայում կանգնած են սոցիալ–անտեսական տարբեր աստիճանի վրա: Հետևա-

պես իրավական շատ ինստիտուտների տարբերությունները առաջացել եկին ոչ թե ռասայական տարբերությունից, այլ սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր աստիճաններից:

1924 թ. Ցերեվանում լույս տեսավ «Հայ իրավունքի պատմության ներածություն» խորագրով մի աշխատություն, որը, լինելով միայն առաջին մասը, է հարկե լրիվ գործ չի համարվում: Այդ հետազոտությունը շատ քիչ բան է տալիս իսկապես հայ իրավունքի պատմության մասին: Հեղինակն այստեղ նախ զբաղվում է իրավունքի և նրա աղբյուրների ընդհանուր տեսության մասին և, ապա, դառնալով բուն հայ իրավունքին, կանգ է առնում դրանց աղբյուրների վրա մինչև Բագրատունյաց շրջանի վերջը, ըստ որում դիմավորապես նյութ է առնում կանոնական իրավունքը և մասամբ հնագույն շրջանի մաքենադրական ու յերկու վիմագրական հուշարձանները: Անդրադառնալով անցնելով Բյուզանդական իրավունքի հուշարձաններին, որոնք աղբյուրի նշանակություն են ունեցել հայ իրավունքի զարգացման մեջ, նա ընդհատում է Ս. պրակիի չարահյուսությունը, վերապահելով այս աղբյուրների մանրամասն պատմական ուսումնասիրությունը հաջորդ՝ Բ. պրակին:

Վերոհիշյալ աշխատության պատմական կոնցեպցիան ամբողջովին էկլեկտիստական է և առդրված է մեր նախորդ պատմագիտության մեջ իշխող ազգայնական դրույթներով, իսկ մանավանդ նրա հեղինակի իրավական տեսաբանությունը դուրս չի գալիս բուրժուական իրավագիտության թեորիաների սահմաններից:

Մեր բանասիրական ու իրավագիտական գրականության մեջ միանգամայն անարդար կերպով անուշադրության է մատնվել մի հետաքրքրական հետազոտություն, որը հիմնականում վերաբերում է հայ իրավունքի պատմությանը: Դա Ս. Բահաթրյանի «Հողային և անձնական իրավունքը հին Հայաստանում» խորագրով աշխատությունն է (1894 թ.): Թեև նա նյութերի պակասով աղքատ է, որովհետև հիմնված է դիմավորապես Մովսես Խորենացու պատմության տվյալների վրա, սակայն, նկատի առնելով այն ժամանակվա հայ բանասիրության ու պատմագիտության պայմանները, մեծ առաջադիմություն էր ներկայաց-

նում իր արծարծած հարցերով: Այստեղ առաջին անգամ ենք տեսնում Հայաստանի արխայիկ և ֆեոդալական հասարակական ձևերի վորոշ պատկերը, թեև ուրվագծերով, բայց և այնպես պատմագիտորեն արծարծված, վորտեղ հեղինակը նշանակալից տեղ է հատկացրել ճորտատիրության ու ստրկատիրության պրոբլեմներին, կապակցելով հողատիրության հետ: Ս. Բահաթրյանն առաջինն եր հայ պատմագիտության մեջ, վոր փորձում եր ապացուցել ճորտության և ստրկության ինստիտուտների դոյությունը հին Հայաստանում. թեև Լեոն ինքնահավանորեն իրեն է վերագրում այդ պատիվը[13], սակայն նրանցից դեռևս 10 տարի առաջ այդ հարցը դրել և ասպարեզի վրա ու փորձել է ապացուցել Ս. Բահաթրյանը: Ի դեպ՝ հիշատակենք, վոր իրոք Լեոն իր մի հոդվածում՝ «Անցյալի հարցերից»[14] Ելրակի վիմական արձանագրությունների հիման վրա թեորետիկ տեսություն և տալիս Հայաստանում գործացած ճորտատիրության մասին:

Հայ իրավունքի ուսումնասիրության գործերի շարքը պետք է դասել Կ. Կոստանյանի յերկու մենագրությունները: Առաջինում— «Պատյդ և տուայր»— հեղինակը քննության է առնում հարսի գնման ու ժխտի պրոբլեմները ըստ հայ ամուսնական իրավունքի, ուր, ինչպես հայտնի յե, հայկական «պատյդ»-ը և «տուայր»-ը համանիշ են հին հռոմեական dos և donatio ինստիտուտներին: Յերկրորդում—«Դավիթ Ալավկայ որդի»—փորձում է ապացուցել, վոր Մխիթար Գոշից առաջ հայ որենքների հավաքածուի կազմող և յեղել Դավիթ Ալավկը (XII դարի սկզբները) և այդ ժողովածուի ձեռագիր որինակից, վոր մինչև որս հրատարակված չե, քաղվածորեն բնորոշ հոդվածներ և առաջ բերում:

Չհիշատակելով այստեղ զանազան հեղինակների մի շարք մանր հոդվածները հայ իրավունքի մասին, վորոնք լույս են տեսել մեր պարբերականներում, նշենք Մ. Սամուելյանի ուսումնասիրությունները՝ «Մխիթար Գոշի Դատաստանագիրքն և հին հայ քաղաքացիական իրավունքը» (1907 թ.), նմանապես և հայ սովորութային իրավունքին վերաբերող «Արյան վրեժ

և վրկանք» (1953 թ.), «Հայ ժառանգական իրավունքը» (1910 թ.), «Գնմամբ ու առևանդմամբ ամուսնություն» (1905 թ.):

Բացի վերոհիշյալներից, վորոնք կրում են իրավագիտական հետազոտությունների բնույթ, պետք է ընդգծենք, վոր հայ իրավունքն ու հայ իրավական ինստիտուտները քիչ թե շատ շոշափվել են նաև զուտ պատմագիտական աշխատություններում: Այդ կողմից ուշադրության արժանի յե Ա. Մ. Դարբազյանի «Քննական պատմություն հայոց» (բ. հատոր, եջ 1—21.) աշխատությունը, ուր խոսվում է պետական իշխանության, ֆինանսների, դատարանների, որենքների ու պատիժների մասին: Նմանապես նույն բովանդակության նյութեր են պարունակվում Ինճիճյանի՝ «Հնախոսություն Հայաստանեայց աշխարհի» աշխատության մեջ, վորն այժմ շատ բանով հնացած է:

Վերևում բերված տեսության մեջ քննության չենթարկեցինք հայ իրավունքի բնագավառում լույս տեսած աշխատությունները, բայց մի յերկու պետքից, այն ել թռուցիկ ակնարկով: Այդ մի կողմից՝ մեզ կշեղեր ներկա աշխատության ծրագրված շրջանակներից և մյուս կողմից՝ կլիներ ավելորդ կրկնություն: Անշուշտ, վերոհիշյալ աշխատություններում չենք գտնի մարքսիստական մեթոդաբանության և մատերիալիստական պատմահայեցողության նշույլներն անգամ, թեև կարելի յե նկատել, վոր մի քանի յեզակի դրվածք կանդնած են դեպի մոցիոլոգիայի դիրքերի վրա: Դեպի պատմագիտության ու իրավագիտության բուրժուական աշխարհայեցողության վոլորտներում, իշխանության դաղափարախոսության մշուշում, այդ աշխատությունները պարունակում են կոնցեպցիաների և նույնիսկ անորոշ տեսակետների մի խայտաբղետ շարան, սկսած մոլի ազգայնականությունից ու վերջացրած ռեակցիոն ռասայական թեորիայով, վորոնց միջին տեղը պերազանցորեն գրավել և ազդեցության, փոխառության հայեցակետը, սոցիալ-տնտեսական հարաբերությունների, հասարակական ձևերի ծագման ու զարգացման բարդ պրոբլեմների բացատրության այդ ամենադյուրին յեղանակը: Իրավաբանական նորմերն ու իրավական ինստիտուտներն այդ դրվածքում վո՛չ թե իրավական վերնաշենքեր են արտադրական-հասարակական հարաբերությունների հիմքի վրա կա-

ուցված, այլ մարդկային բանականության բղխող ու պարպացող, վորում իրավաբանական նորմերն ու իրավական ինստիտուտները ծագում են հենց ինքնին իրավունքից, վորպես մարդկային բնության մեջ հավիտյանս բովանդակված «արդարության ու ճշմարտության» վոգուց:

ՀԱՏՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

# ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

*Իրավունքն, ինչպես ասացինք, իրավաբանական նորմերի մասեմ է, հասարակության անդամների համար պարտադիր ու հարկադիր, որոնք վավերացնում և կարգավորում են հասարակական-արտադրական հարաբերությունները և որոնք կազմում են հասարակության արտադրական հարաբերությունների բազիսի վրա բարձրացող իրավական վերնաշենքը: Ուրեմն իրավունքի անմիջական աղբյուրները պետք է որոնել տվյալ հասարակության արտադրական հարաբերություններում: Այս դեպքում իրավունքի աղբյուր ասելով՝ մենք պատկերացնում ենք այն արտահայտչ ձևը, որով իրավաբանական նորմերը մարմնանում ու պարտադիր ուժ են ստանում: Այդպիսի աղբյուրներ են սովորույթը և ապա, հետագայում՝ որեճքը, որոնք հասարակության անդամների հարաբերությունները համախող արտաքին ձևերն են:*

*Իրավունքի պատմադրի համար այդ աղբյուրների նշանակությունը տո՛չ թե տոկ այն է, որ նա իր մի հավաքի և լուսաբանի սովորույթի ու օրենքի մեջ խտացած իրավաբանական նորմերն, այլ նաև պետք է դեկավորապես ծանրանա նրանց ծագման ու զարգացման հանգամանքների վրա: Ամեն մի հասարակության պատմական զարգացումն, ըստ Մարքս —Լենինի, անցնում է իրար հաջորդող չորս սոցիալ-տնտեսական ֆորմացիաները—արխայիկ կամ նախադասակարգային, անտիկ կամ սարկատիրական, ֆեոդալական և, վերջապես, կապիտալիստական: Այստեղից հետևցնում ենք, որ այդ ամեն մի ֆորմացիայի հասարակական հարաբերությունների համար բնորոշ իրավական ինստիտուտները, յուրաքան-*

*Հյուր այդ ֆորմացիայի հասարակական հարաբերությունները կնկավարվում են համապատասխան իրավաբանական նորմերով, որոնք բղխում են ավյալ ֆորմացիայի արտադրական հարաբերություններից:*

*Ցերբ խոսքը գալիս է հայ իրավունքին, մեր առաջ ծառանում է մի իրավունք, որը ներկայումս չունի դրական-գործնական նշանակություն և անցել է արդեն պատմության դիրկը: Այնուամենայնիվ, չեմք զբաղվում հայ իրավունքի հետազոտությամբ, այդ անում ենք սոսկ պատմական տեսակետներով, ինչպես այդ մասին վերը չեշտել ենք:*

*Հայ իրավունքի, ինչպես և ամեն մի հին իրավունքի պատմությունը հետաքրքրելիս՝ կանգնած ենք լինում որոշ դժվարությունների առաջ: Այդ իրավունքի աղբյուրներից շատ քան մեզ չի հասել, իսկ յեղածներն էլ պատառ-պատառ են մշուշով: Հնում, մանավանդ հայ պատմության սկզբնական շրջանում, գործող իրավունքը հնարավոր չէ մեր մատենագրություններում վերականգնել ամբողջովին. միայն ողոռ-ուրվագծեր են նշմարվում, իսկ յերբ վերականգնվում են որոշ պատկերներ, ապա միայն իրավաբանական կենցաղի մի քանի կողմերի մասին: Մեզ չի հասել նույնիսկ որոշակի իրավաբանական հայ տերմինաբանություն, որպիսի պարագան մի ցայտուն ապացույց է իրավաբանական մտքի անկատար զարգացման, թերևս որևէ պատմական սխեմատիկ գործունեության բացակայության:*

*Սակայն ներկա աշխատության բուն առարկան է հին հայ իրավունքի պատմությունը: Այս դեպքում իրավական աղբյուրները կրում են այլ բնույթ: Ցերբ իրավունքի աղբյուրները գլխավորապես սովորույթներն ու օրենքներն են, ապա իրավունքի պատմության աղբյուրներ դառնում են այն, ներպատճառներն գրավոր, հուշարձանները, որոնց մեջ արտացոլել է ավյալ ժամանակների գործող իրավունքը, այն է՝ դանազան դատաստանագրքեր, օրենքների ժողովածուներ, մատենագրական ու վիմագրական վկայություններ և այլն: Սրանք էլ, իրենց հերթին, իրրև իրենց ժամանակի իրավունք, կազմվել ու ձևավորվել են որոշ աղբյուրների հիման վրա: Ուստի կանգ առնելով այստեղ գլխավորապես իրավունքի պատմության աղբյուրների տեսության վրա, մենք*

*ինքնըստինքյան պետք է միաժամանակ հետազոտենք և այն պայմանները, որոնք հիմք են դարձել դրավոր իրավաբանական հուշարձաններին: Այդ ուղիով միայն հնարավոր է քիչ թե շատ պարզորոշ ներկայացնել հայ իրավունքի բովանդակ պատկերը, վերականգնել հիմնական գծերով այն իրավունքը, որ մի ժամանակ գործել է Հայաստանում:*

## II. ՍՈՎՈՐՈՒՅԹ

*Իրավունքի ամենահնագույն ու ամենահին աղբյուրն եղել է սովորույթը, իսկ սրա գործող հետևանքը եղել է սովորութային իրավունքը: Ամեն մի սովորույթ անխտիր չի կարող իրավունքի աղբյուր լինել, այլ միայն այն սովորույթները, որոնք հասարակական համակեցության մեջ գործադրվում և պահպանվում են երբեմն պարտադիր նշանակություն ունեցող վորոշ նորմեր:*

*Սովորույթը, հակառակ օրենքի, որ սահմանվում է հայտնի օրենսդիր մարմնի կողմից, անգեմ է, նրա հեղինակն անհայտ է. նա ծագում է հասարակության մեջ, ինչպես լեզուն, բանահյուսությունը. նրա սկիզբն անորոշ է: Նա հայտնի է դառնում իր գոյությամբ միայն այն ժամանակ, երբ արդեն կաղապարվել է ու կիրառվում է մարդկանց կողմից: Սովորութային իրավունքը կարող է գոյություն ունենալ, ինչպես նկատում ենք իրավունքի պատմության մեջ, դրեթե բոլոր հասարակական ձևերում, նույնիսկ պետականորեն կազմակերպված հասարակություններում, ուր գործում են հատուկ օրենսդիր մարմիններ: Սակայն սովորութային իրավունքը հասարակական զանազան ձևերում տարբեր դեր է սաանում, սկսած սկսիլ գործունից մինչև վերապրուկի և մնացուկի դերը, որն իրավաբանական նշանակություն կարող է ունենալ, եթե այդ ճանաչում են պետական որգանները:*

*Ցեթե սաում ենք, որ իրավունքի ամենահնագույն ու ամենահին աղբյուրն եղել է սովորույթը, հետևապես և ամենահին իրավունքն եղել է սովորութայինը, ապա այդ կապում ենք սոցիալականորեն ու քաղաքականորեն տակավին անզարգացած հասարակությունների հետ, այդ վերաբերում ենք պրիմիտիվ սոցիանի վրա կանգնած ժողովուրդների համակենցաղին: Ուրևմն սովորույթի հասարակական նշանակության նախնական աստիճանին*

ու ծագման սկզբնական մոմենտը պետք է վերոնշենք սոցիալ-տնտեսական արխայիկ ֆորմացիայում, ուր սկզբում եղ տոհմային հասարակակարգը: Դա անդասակարգ հասարակություն եր, հիմնված նախնադարյան կոմունիզմի վրա, ուր հասարակական արտադրությունն ու սպառումը համայնական եր: Այդ սոցիալական համայնքի հասարակական ու արտադրական հարաբերությունները եյապես տոհմային կարգեր էյին, վորոնք, անշուշտ, պահպանվում ու զեկավարվում էյին ամբողջ կոլեկտիվի կողմից սահմանված ու ճանաչված համակյաց կյանքի կանոններով, նորմերով: Այս դեպքում հիշյալ նորմերը պետք է պարտադիր բնույթ ունենային, իսկ այդ պարտադրությունը բղխում եր վո՛չ թե մարդը մարդու վրա բռնանալուց և խլելուց, վո՛չ թե չահագործման տենդենցներից, ինչպես դասակարգային հասարակության մեջ է, այլ ամբողջ կոլեկտիվի անվթար զոյության, նրա համակենցաղի պահպանության և չրջապատող բնության դեմ պայքարի կազմակերպվածության սոցիալական բնազդներից:

Ահա այդ նորմերը սովորույթներն էյին: Նախնադարյան մարդը, յերկար ու ճիգ հազարամյակներ խմբովին պայքար մղելով յուր զոյության ու կյանքի համար, բնազդորեն ճնռք եր բերում և կատարելագործում զոյության կռվի միջոցներ ու յեղանակներ, մշակում եր համակենցաղի կարգեր: Այդ միջոցները զարավոր կենսական փորձերում սերնդե-սերունդ վերանցելով, պահպանելով ու ավանդելով հաջորդներին իրենց կատարելագործությունները՝ ի վերջո դառնում էյին դիտակցական զործողություններ ու կարգեր, վորոնք սրբագործվում ու վավերացվում էյին իբրև սովորույթներ: Այդ սովորույթներն ունեյին պարտադիր նշանակություն, վոր բնկվում է արխայիկ մարդու դիտակցության մեջ, թե նրանց կիրառումն և անչեղ կատարումն անհրաժեշտ է համայնքի պահպանության ու չահերի համար, վորից զուրս իր զոյությունն ի չիք եր դառնում: Այս տեսակետից սովորույթները նախնադարյան կոմունիստական հասարակության մեջ տակավին իրավաբանական նորմեր չեն, վորովհետև նրանք արտաքին հարկադրանքի, տիրապետողների ուժի ներքո չեն կիրառվում, քանի վոր այդպիսիները զոյություն չունեն անդասակարգ հասարակության մեջ և քանի վոր հասարակության

զարգացման այդ աստիճանում դեռևս չի կարելի դիտել իրավունք առած բանը այդ խոսքի իրավաբանական առումով: Այդ սովորութիւնները, կարելի է ասել, էթիկական նորմեր են, վորոնք մշակվել են նախնադարյան համայնքի հասարակական ու արտադրական հարաբերութիւններում զարգացող մտայնութեան մեջ, իբրև վնասակարի ու ոդտավետի արտահայտիչները, և ըստ այնմ էլ դառնում են բացասական կամ արդելական, դրական կամ դրծոն վերաբերմունքի անհրաժեշտութիւն: Այդ էթիկական նորմերը կրում են ուտիլիտար բնույթ, վոր բղխել և կոլեկտիվի ինքնապահպանման բնազդից և նրանց դարձրել և պարտադիր սովորութիւններ:

Տոհմային հասարակութիւնն իր համայնական կենցաղով, նախնադարյան կոմունիզմին հատուկ արտադրական հարաբերութիւններով՝ հանդիսում է վորոշ կարգերի վրա, վորոնք խստիվ պահպանվում են ամանդարար ու սրբազործված են սովորութիւններով: «Եւ այս տոհմային կառուցքն,—ասում է Ֆ. Էնգելսը,—ինչ զարմանալի կազմակերպութիւն է իր բովանդակ մանկութեամբ ու պարզութեամբ: Առանց զինվորների, ժանդարմների, վոստիկանների..., առանց դատավորների, բանտերի, դատավարութիւնների —ամեն ինչ այնտեղ դնում է իր սահմանված ընթացքով: Ամեն տեսակ վեճերն ու ընդհարումները հարդարում է այն կոլեկտիվը, վորին վերաբերում են այդ հարցերը, այսինքն տոհմը կամ ցեղը, կամ առանձին տոհմեր իրար մեջ. միայն իբրև ծայրահեղ, հազվադեպ կիրառվող միջոց սպառնում է արյան վրեժխնդրութիւնը... Թեև ամենի շատ ընդհանուր դրծոներ կան, քան ներկայումս,— ունայնն անտեսութիւնը վարում են մի շարք ընտանիքներ՝ ընդհանուր և կոմունիստական ձևով, հողը պատկանում է ամբողջը ցեղին, — բայց և այնպես նրանց մոտ չկա մեր բազմաճյուղ ու բարդ վարչական ապարատի հետքն անգամ: Շահագրգռված մարդիկ իրենք են վճռում ամեն բան, իսկ մեծ մասամբ բազմադարյան սովորույթն (ընդգծումը մերն է. Ի. Ս.) արդեն ամեն ինչ կարգավորել է: Այնտեղ չեն կարող աղքատներ ու կարիքավորներ լինել—կոմունիստական տնտեսութիւնն ու տոհմը ճանաչում են իրենց պարտավորութիւնները (ընդգծումը մերն է. Ի. Ս.) ծերացածների, հիվանդների ու պա-

ներաղմների հաշմանդամների հանդեպ: Բոլորը հավասար են ու ազատ,—նաև կանայք: Սարուկների համար դեռևս տեղ չկա, նմանապես և, իբրև ընդհանուր կանոն, սովորություն չե ոտար ցեղերին իրենց յենթարկել»[15]:

Հիրավի, տոհմային հասարակության համայնական կենցաղը, չնայած իր պարզության, խառացած և այնպիսի ներքին ու արտաքին հարաբերություններով, որոնց կանոնավոր ընթացքը պայմանավորված և ընդհանուրի կողմից ավանդաբար ճանաչված ու դարերով պարտադիր դարձած կարգերով: Վերցնենք այդ հասարակության հիմնական չենքը՝ արտադրական հարաբերությունները, որոնք անխզելի կապված են հողի ոգտագործման ու մշակության հետ: Այստեղ իշխում է հողի տոհմային համայնական պատկանելությունը, բայց և միևնույն ժամանակ հողի մշակման ասպարեզում տոհմի ամբողջ հողային տարածությունը,— բացի հանրային անտեսության նշանակություն ունեցող մասերից (արոտատեղիներ, անտառներ և այլն), որոշ մասերով բաշխվում է տոհմի բազկացուցիչ ընտանեկան համայնքների միջև՝ սահմանված ժամանակով ոգտագործելու համար և այդ բաժինները տրվում են մեծ մասամբ վիճակով: Նույնիսկ ընտանեկան համայնքի անտեսությունն ու կենցաղն ընթանում է իր ներքին կարգերով, ուր մենք կդտնենք աշխատանքի բնական բաժանումն ըստ սեռի ու հասակի, կոլեկտիվ արտադրություն ու սպառում: «Այստեղ ինչ որ ստեղծվում ու ղործ է ածվում ընդհանուրի կողմից, դա ընդհանուրի սեփականություն է, ինչպես տունը, բանջարանոցը, նավը, հետևապես այստեղ և միայն այստեղ իրոք գոյություն ունի քաղաքակիրթ հասարակության իրավագետների ու անտեսագետների հնարած «սեփական աշխատանքով ձեռք բերված սեփականությունը»[16]:

Տոհմային ծագման ու պարզագման ներքին չաղկապը յեղել է արյունակցական ազգակցությունը, որն ունեցել է յերկու հիմնական փուլեր՝ մատրիարխատ ու պատրիարխատ: Այդ յերկու ինստիտուտների հետ են կապված համապատասխան ամուսնական ձևերը (խմբակցական և զուգավոր), ամուսնության յեղանակները, ազգակցության ճյուղերը (մայրական ու հայրական գծերը) և այլն: Վերջապես տոհմերը միանում էին ու կազմում ցեղեր,

կային միջանհատական հարաբերություններ ու միջցեղային հարաբերություններ. կային նաև ցեղի ու իր բաղկացուցիչ առհասների, ինչպես և առհասի ու իր բաղկացուցիչ ընտանեկան համայնքների հարաբերությունները[17]:

Սկսա այս առհասային հասարակության ամբողջ սոցիալ-առտնեական կառուցքն, ամբողջ համայնական կենցաղի կարգը պահպանվում և դեկավարվում էր սովորույթներով, վորոնք, ինչպես վերը չեշտել ենք, ունեցին վո՛չ թե իրավաբանական, այլ եթիկական նորմերի նշանակություն, այսինքն կանոնների, վորոնք ստացել էին պարտադիր վարքի ու գործելակերպի ձևավորում: Երանք իրավաբանական նորմեր չէին, վորովհետև չկային տիրապետողներ, իշխաններ, հետևապես որենսդիրներ ու ընդհատ որենքներ: Թեև կային առհասապետներ, ցեղապետներ, պատերազմի առաջնորդներ, արտադրության դեկավարներ, ընտանիքի դըլխավորներ, բայց սրանք բոլորը մյուս առհասայինների հետ հավասարապես յենթակա էին սկզբով սովորույթներին, և հենց իրենք իրենց դերով այդ սովորույթների հետևանք էին:

«Այս պարզ կազմակերպությունը (այսինքն առհասային),—ասում է Ֆ. Ենգելսը, — մի անդամ ևս հասարակական պայմաններին, վորոնցից նա ծագել է: Այն վոչ այլ ինչ է, եթե վոչ այդ պայմանների առանձնահատուկ, բնական համապատասխանությունը. այն ի վիճակի չէ հարթելու այն բոլոր կոնֆլիկտները, վորոնք կարող են ծագել այդ ձևով կազմակերպված հասարակության ներսում: Տոհմային հասարակության վեհությունը, բայց նաև նրա սահմանափակությունը հետզհետ պարզացման տեսակետից այն է, վոր նրա մեջ տեղ չկա տիրապետության և ստրկացման համար: Տոհմի ներսում դեռ վոչ մի տարբերություն չի դրվում իրավունքների և պարտականությունների մեջ (ընդդծումը մերն է. Ի. Ս.). հնդկացիների համար դժոխք չունի այն հարցը, թե արդյոք հասարակական դործերին մասնակցելը, արյան վրեժխնդրությունը կամ նրա վերկանքը իրավո՞ւնք է, թե՞ պարտականություն. այդպիսի հարցը նրան նույնքան անհեթեթ կթվար, վորքան և այն, թե արդյոք ուտելը, քնելը, վորսորդությունը՝ իրավո՞ւնք է, թե՞ պարտականություն»[18]:

Սակայն սովորույթն իր ամենազոր ու պահպանողական հատկություններով հանդերձ՝ աստիճանաբար փոխվում էր ու նոր հասկանալ դնելը յուրացնում արտադրական հարաբերությունների ու հասարակական ձևերի փոփոխություններով: Տոհմային կազմի քայքայումով հետզհետե զարգանում և սոցիալական վերտվորումն ու առաջանում են հասարակական դասակարգեր իրենց ներհակ շահերով: Այդ վերտավորման պրոցեսում տոհմային սովորույթները վերափոխվում են նոր ձևերի, որոնք ծառայում են անհեռատես ուժեղ խմբերի շահերին: Այստեղ ծագում են դասակարգային նորմեր, այսինքն իրավունքի նորմեր: Ցերբ անհաշտ սպես ուժեղացող խմբերը միաձուլվում են մի դասակարգի մեջ, վերջինս մի կողմ է չպրտում տոհմային ինստիտուտներն ու սովորույթները, որոնք խոչընդոտ են հանդիսանում նրա տիրապետության: Նրա շահերին խանգարող տոհմային սովորույթները հետզհետե վերացվում են և դառնում են իրավունքի սաղմեր, որոնք վերածվում են իրավական սիստեմի: Այդ իրավական սիստեմի նորմերին արդեն արտացոլում են տիրապետող դասակարգի շահերն ու պահպանում են նոր հասարակական հարաբերությունները պետական իշխանության ուժով, դասակարգային տիրապետության այդ ապարատով: Մասնավոր սեփականությունն ու մարդը մարդուն շահագործելու սիստեմը դառնում են այն ահռելի ուժը, որի շուրջն են աճում իրավաբանական նորմերը, որոնք իրենց սկզբնական շրջանում, թեև արդեն գոյություն ունեն պետական օրգաններ, դեռևս կաղապարվում են սովորույթների մեջ և կազմում են այսպես կոչված սովորութային իրավունքը:

Սովորութային իրավունքի նորմերը դեռևս օրենքներ չեն: Նրանք օրենք են դառնում հետագայում, ցերբ պետական իշխանությունն այդ նորմերին տալիս է յուր սանկցիան և օրենսդրության միջոցով վավերացնում է նրանց իրավաբանական նշանակությունը: Հիրավի, հին պետությունների օրենսդրական ժողովածուները դեռատանցորեն կազմված են սովորութային իրավունքի վոխատումներից: Այսպես է հնադարյան Բաբելոնի «Համմուրաբիի Օրենսգիրքը», հին Հռոմի «XII տախտակները», հին Հունաստանի Լիկուրգոսի և Սոլոնի օրենքներն և, մանավանդ, «Գորթինի օրենքը», գերմանական «Sachsenspiegel»-ը և «Lex salica»-ն,

ռուսական «Русская правда»-ն և այլն: Նույնիսկ ռուսերեն закон բառը, որ օրենք է նշանակում, իր սկզբնական առումով սովորույթի էր նշանակում[10] կամ վաղ միջնադարի դերմանացիների մեջ lex— հին հռոմեական օրենք բառը գործածվում էր սովորույթի իմաստով:

Սակայն սովորութիական իրավունքի նորմերը, չնայած պետության օրենսդրական գործունեության, այնուամենայնիվ չատ անգամ կարողանում են պահպանել իրենց գոյությունը գործող օրենքներին կից մինչ այն աստիճան, որ հաճախ չեշտակի սահման չեր գծվում օրենքի և սովորույթի միջև: Արևմտյան միջնադարի իրավական հուշարձաններում lex բառի մեջ յենթադրվում էր և՛ օրենքը, և՛ սովորութիական իրավունքի նորմը· սովորաբար jus (իրավունք), mos (սովորույթ), usus (սովորութիյուն) գործադրվում էին առանց վորոշակի տարբերության: Այդ հանգամանքը ցույց է տալիս, թե վո՛րքան անդարգացած էր պետական կառուցվածքը, որ չեշտակի օրենսդրական գործունեության կարիք չէր զգում և բավականանում էր գործող սովորութիական իրավունքով, իսկ մյուս կողմից՝ վկայում է, թե վո՛րքան արմատացած է յեղել սովորութիական իրավունքը հասարակութիյան մեջ, չնորհիվ իր պահպանողական ուժի, ավանդական նշանակութիյան:

Այդ պահպանողականութիյունն արտահայտվում էր նաև մի այլ հետաքրքիր կողմով: Չնայած, որ սովորութիական իրավունքի նորմերը գոյացել ու ձևավորվել են առհմային հասարակութիյան քայքայումով և գործում էին դասակարգային հասարակութիյան մեջ, նրանք այնուհանդերձ իրենց մեջ պահպանել են նախորդ առհմային կազմի վորոշ կենցաղային վերապրուկներն ու մնացուկները: Այդպիսիք բնորոշ յերևույթը պիտի բացատրել վո՛չ թե սովորութիական իրավունքի ինքնաբավ պահպանողականութիյամբ կամ նրա ինչ-վոր բնածին հնավանդականութիյամբ, այլ պետք է վերագրել այն հասարակական հարաբերութիյուններին, վորոնց իրավական վերնաշենքն է նա հանդիսանում· հասարակական հարաբերութիյունների, վորոնց մեջ, չնայած դասակարգային հերտավորման, վերապ-

բուհային ձևերով մնացել են տակավին նախընթաց կենցաղային հետքերը:

Սովորութային իրավունքի վերոգրյալ հատկանիշներն առանձին նշանակություն են ստանում իրավագիտական տեսակետից ասիական յերկրների և մասնավորապես Հայաստանի նկատմամբ:

Մեզ հայտնի հայոց պատմությունը բնորոշվում է դասակարգային հասարակական կազմով, ուր տիրում և արտադրության ֆեոդալական ձևը: Հայկական ֆեոդալիզմը, ինչպես հանդամանորեն կխոսվի ստորև, ունի առանձնահատուկ դծեր, վորոնք վորոշ չափով տարբերում են նրան Արևմտյան Յեվրոպայի միջնադարյան ֆեոդալիզմից:

Այստեղ առայժմ չենք խոսում ենք յերկու առանձնահատուկ դծերի վրա: Առաջին՝ այդ ֆեոդալական հասարակության մեջ կանդուն ու անփոփոխ դոյություն ևր պահպանում գյուղական համայնքը, վորից իսկապես դարգացել և արևելյան տիպի ֆեոդալիզմը: Այդ գյուղական համայնքը, ինչպես քանիցս նշել են Կ. Մարքսն ու Ֆ. Ենգելսը[20], ամենդպական պահպանողականությամբ դանդաղության, նույնիսկ անշարժության կնիք և դրոշմել ֆեոդալական հասարակության զարդացման վրա: Այստեղից էլ ծագում է ֆեոդալիզմի ասիական տարբերակի մյուս բնորոշ դիծը, այն է՝ ֆեոդալիզմի բազմադարյան դոյությունը դրեթե մինչև XVIII դարը:

Ահա այդ սոցիալ-տնտեսական պայմաններում սովորութական իրավունքը, իբրև իրավաբանական վերնաշենք, ամուր կապված լինելով գյուղական համայնքի հետ,— վորը կարելի յե համարել տոհմային հասարակակարգի վերապրուկային մնացորդ, թեև վորոշ չափով դասակարգայնորեն վերափոխված,— նույն պահպանողականությամբ ու դանդաղաշարժությամբ շարունակել է իր դոյությունը մինչև հայկական ֆեոդալիզմի վերջը: Ֆեոդալական Հայաստանը չէր ներկայացնում մի ամբողջություն, կենտրոնացած պետություն. նա չունեցավ զարգացած պետական-վարչական որդաններ: Իր բազմադարյան դոյության ընթացքում, անդադար յենթակա արտաքին ու ներքին քաղաքական տակնուվրայությունների, մինչև վերջը դեգերելով

բնական անտեսության չրջանակներում, հայ ֆեոդալական պետականությունն անկարող չեղավ որևէ արդյունավետ դործունեություն ծավալելու: Հայոց պատմության ամբողջ ընթացքում մինչև XII դարը չենք դտնում մի՛ միայն վորևէ պետական կողմիցիկացիայի նշույլ, այլև չեն չերևացել նույնիսկ մասնավոր ձեռնարկությամբ կատարված ժողովածուներ՝ դործող իրավաբանական նորմերից: Սակայն այդ աչք ծակող բացը դեռևս չի կարող հիմք դառնալ չենթադրելու, թե չի չեղել իրավունք, որևէ: Ֆեոդալական Հայաստանը, իբրև դասակարդային պետություն, իր հասարակական հարաբերությունները, տիրապետող դասակարդի պաշտպանությունը կարդավորում ու ապահովում էր, անշուշտ, վորոշ իրավաբանական նորմերով: Ցեվ իրոք, այդպիսի իրավաբանական նորմեր չեղել են և դեր են խաղացել հայ իրավունքի պատմության մեջ: Հայ մատենադրական աղբյուրներն ավանդում են, թե ինչպես մի քանի հայ թագավորներ, որոնցից՝ Վաղարշակը (Մով. II, է, Ը) սահմանում է որևէքներ, կամ Տրդատը հրատարակում է մի չարք հրովարտակներ, վորոնք որևէքի նչանակություն ունեչին (Ագ. ժԲ, 73—77, ճժԹ, ճի, 423.): Սակայն ավելի դործոն դեր են խաղացել սովորութային իրավունքի նորմերը:

Սովորութային իրավունքի ավանդական դերը հասարակական հարաբերություններում այնքան ուժեղ և արմատացած է չեղել, վոր կարիք չի դդացվել այդ ամենը դրավոր ձևերի վերածելու: Թեև սովորութային իրավունքի այդ ընդհանրացած բնույթին պետք է վերադրել հայ թագավորների որևէդրական դործունեության սղությունը:

Գրավոր որևէքների բացակայությունն առիթ է ծառայել մի քանի հարևան պետություններին համար նայել Հայաստանի վրա, վորպես որևէքներից ու իրավունքներից դուրկ մի չերկրի: Բյուզանդական կայսր Հուստինիանոսը, հրատարակելով 534 թ. Արևմտյան Հայաստանի համար ժառանդական իրավունքի վերաբերյալ նոր որևէք, XXI Novella-ն, պատճառաբանում է, վոր Հայաստանը դուրկ է որևէքներից և կիրառում է «բարբարոսական սովորույթ»— τὸ βαρβαρικὸν ἔθος — ժառանդության հարցում: Նմանապես նա իր Ed. 3-ում նչում է հայերի մեջ

ասիրող «բարբարոսական սովորույթը»— ναγχος βαρβαρικὸν Անշուշտ, Հուստինիանոս կայսրի այդ կարծիքը պետք է հարաբերական լմաստով ընդունել: Հելլենական կրթությամբ սնված ու հռոմեական կլասիկ իրավահայեցողությամբ տոգորված, նա ըստ ասիրող սովորության՝ ոտար ազգերին ու ժողովուրդներին անվանում էր «բարբարոսներ», հետևապես և ժխտում էր նրանց ազգային իրավունքն ու որենքը, վորպես հռոմեական իրավունքին խորթ և ասիրապետող հունա–հռոմեական ժողովրդին անհամատեղելի: Սակայն բնորոշ է Սիրիայի Հակոբ Ցեղեսացու կարծիքը, վորն իր «Sermo adversus Armenos» ճառում գրում է, թե՝ «Հայաստանի ժողովուրդներն աշխարհի սկզբնավորությունից ի վեր ապրել են առանց որենքի»: Նմանապես բյուզանդական պատրիարք Ատանիկոսը հայոց կաթողիկոսին գրած իր նամակում ասում է. «Բազում դժուարին Աստուծոյ մատուցանեմք յաղագս քո բարեհամբաւութեանդ ի մէջ այդպիսի բարբարոս ազգի···» (Մխ. III, ԺԷ, 346):

Ջանենալով Հայաստանում գրավոր որենքներ, կամ դռնելով սովորույթներ, վորոնք խորթ են յեղել իրենց մոտ կիրառվող որենքներին, ոտարներն այն թյուր կարծիքին են հանգել, վոր հայերը զուրկ են որենքներից և անկուլտուրական ազգ են:

Այստեղ պակաս դեր չէ խաղացել նաև ազգային ու կրոնադավանաբանական ներհակ պայքարը, վոր շարունակ տեղի ուներ մի կողմից՝ հույն–հայկական (Ատանիկոսի նամակը) և մյուս կողմից՝ հայ–սիրիական (Հակոբ Ցեղեսացու ճառն ընդդեմ հայերի) հարաբերությունների մեջ: Մինչդեռ ոտարների այդ յեղծատրյալ կարծիքներն ապացուցում են միայն, վոր Հայաստանում գործել է սովորութային իրավունքը, բայց առանց գրի ձևավորված կամ առանց որենսդրական կարգի: Սակայն հայ մատենագրության մեջ հիշատակվում է, վոր հին Հայաստանում, տակավին այն ժամանակները, երբ հայերեն տառեր դեռ չկային, զանազան պարտավորական ու իրավաբանական գործարքները կատարվում էին գրավոր կերպով— հունարեն կամ պարսկերեն: Մովսես Խորենացին ասում է. «Գիր Պարսից և Յունաց, որովք այժմ գիւղից և գաւառաց ևս և իւրաքանչիւր

*) Այստեղ և հաջորդ բոլոր մեջբերումներում ընդգծումները մերն են: Ա. Ս.

տանց առանձնականութեանց, և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անթաւ դրուցաց մատեանք, մանաւանդ որ՝ի սեփական աղատութեան պայազատութիւն» (I, Գ, եջ 13): Փավստոս Բուզանդացին վկայում է, որ «Թագաւորքն զմուրհակս դիւղաց կամ զպարտակաց դրեալ և կնքեալ դնէին» (VI, ԺԹ, եջ 278): Ամենի հետաքրքիր և լաւագոյն (Ղեռւբնա) Յեղեսացու դրչին վերադրված վկայութիւնը. «Զամենայն ինչ, զոր հրամայեն թագաւորք, և զամենայն, որ ինչ միանգամ լինի առաջի նոցա, գրի և դնի ի տունս յիշատակաց»[21]: Այստեղ տեսնում ենք, որ նոյնիսկ հատուկ արխիվներ են յեղել այդ տեսակ գրութիւնները պահելու համար: Նաև հայ միջնադարում, ինչպես ասինքն և Ստեփանոս Որբելյանի պատմութիւնից, հայ թագաւորներն ու իշխանները հողերի ընծայումները, վաճառումները և դնումները կատարում էին գրաւոր կերպով (Գլ. Լթ., Խ., եջ 201—220 և այլն):

Այս պարտաւորական ակտերն ու իրաւաբանական գործարքները, անտարակոյս, կատարվում էին միևնոյն սովորութեական իրաւունքի համաձայն:

Սովորութեական իրաւունքը հիմնական նշանակութիւն է վայելել հին հայերի իրաւաշրջանառման բնագաւառում: Այդ բացահայտ և նրանից, որ մինչ մի խարութիւն չէին դնում որևէքի և սովորութիւն-իրաւաբանական նորմի խմատասովորումների միջև: Որևէքը—դա նոյն պարտադիր սովորութիւնն էր: Այդ յատկութիւնը, ինչպես վերը տեսանք, նկատելի է մի շարք հին ժողովուրդների իրաւահայեցողութեան մէջ: Մեր հին մատենագրութեան մէջ հաճախ «օրէնք նախնեաց», «կարգ նախնեաց», «սահմանք» (որ իսկապես որևէք և նշանակում) բառերն ունեն միևնոյն իմաստը և այն էլ սովորութեական իրաւունքի նշանակութեամբ: Որևէքի և սովորութեական իրաւունքի հոմանիշ իմաստասովորումը նկատելի է յերբեմն նոյնիսկ Մխիթար Գոշի Դատաստանագրքում: Մխիթար Գոշն որևէք և համարում դրի առնված իրաւաբանական նորմը[22], իսկ այն, որ չի ձևավորված դրաւոր կերպով, դա սովորութիւն է[23], բայց և միևնոյն ժամանակ՝ այն, որ առանց դրի է, «քննաւորական օրէնք» է (ՄԳ., Նախ., եջ 65), այսինքն՝ սովորութեական իրաւունք:

Մխիթար Գոշի Դատաստանագրքում արտահայտված տե-

սակեան որենքի մասին— մի կողմից՝ իբրև դրաւոր ձևով արձանագրված իրաւաբանական նորմի, իսկ մյուս կողմից՝ իբրև մի նրա նուիրագործումը սովորութիական իրաւունքի նորմին,— մի ապացոյց է, որ ընդհանրապես հայ իրաւունքը, մանաւանդ նախաարարական շրջանում, բնաւ դրի չէր առնված, չէր ներկայացնում կոդիֆիկացիայի ենթարկված կամ ժողովածուի վերածված՝ հայ իրաւաբանական նորմերի կոմպլեքս: Իսկ այդպիսի պայմաններում, անտարակոյս, ֆեոդալական հասարակութեան հարաբերութիւնները կարգաւորւում էին սովորութեական իրաւունքի նորմերով, որոնք իրականում որենքի ուժ և նշանակութիւն ունէին:

Որենք բառը, իբրև տերմինաբանական առումն, սկսում է տարբերվել սովորութեական իրաւունքի նորմից, ինչպես պետք է կռահել, այն ժամանակ, երբ հայ իրականութեան մեջ մուտք են գործում տարբ որենսդրական ժողովածուներ, այն է՝ Մովսէսեան, Աստրա–Հռոմէական և, մանաւանդ, Բիւզանդական: Այդ ժողովածուները, որոնք մանաւանդ ենթադրի կարգով կիրառվում էին Հայաստանում, անշուշտ, հունարեն բնագրեր էին: Հետագայում, երբ նրանք թարգմանվում են հայերեն, հունական նոմոս— ν — տերմինն արտահայտում է հայերեն «որենք» բառով, որն առանում է տերմինաբանական նշանակութիւն և, իբրև դրաւոր իրաւաբանական նորմ, հակադրվում է սովորութեական իրաւունքին: Այդ բացահայտ է Աստրա– Հռոմէական Դատաստանագրքի ԺԲ հոդվածից, ուր ասված է. «և լինի այս բան նոմոսի և ըստ սովորութեան երկրի» (եղ 24). այսուհետ, ինչպես նկատելի է, նոմոս բառը մնացել է առանց թարգմանելու: Այդպիսի դեպքեր հանդիպում են ոչ միայն թարգմանական մի քանի որենսդրքերում, այլև երբեմն Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքում:

«Նոմոս» և «որենք» բառերի նույնանիշ բնույթը կարելի է բացատրել նրանով, որ հունարեն «նոմոս»–ի մեջ հայ թարգմանիչները տեսնում էին բյուզանդական թագավորների վորոշումներ, սահմանումներ: Իսկ մեր հին մատենագրութեան մեջ նկատում ենք, որ հայ թագավորների կամ կաթողիկոսների վորոշումներն ու սահմանումները վորակվում էին վորպես «ո–

բենք»: Մովսես Խորենացին վաղարշակ թագավորի մասին պատմում է. «Այդ, նախ և առաջին օրինադրէ թագաւորն զենքն և զառնն իւր» (II, Ը, 103) կամ՝ «եւ օրէնս լմն հաստատէ ի տան թագաւորութեան իւրոյ» (II, Ը, 110): Աշխիշատի ժողովում Ներսես կաթողիկոսի ձեռներեցությամբ «կարգեցին, կազմեցին, կանոնեցին, յօրինեցին» (ՓԲ. III, Դ, 76·): Հետևապես «նոմոսի» տերմինաբանական նշանակությունը՝ թագավորական վորոշումների իմաստով՝ նույնացվում եր հայ միջավայրում դործածվող համանիշ իմաստով «որենք»-ին:

Ուրեմն հայ իրավունքի պատմության մեջ «որենքը», վորպես սովորութային իրավունքի նորմերից տարբեր մի հասկացողություն, հանդես և գալիս, յերբ Հայաստանում սկսվում և ոտար որենսդրքերի ներգործությունը և յերբ սրա հետևանքով ել առաջանում և տեղական ազդային որենսդրքեր կամ դատաստանադրքեր կազմելու անհրաժեշտությունը: Այդպիսի ազդային կոդեքս կազմողը չեր կարող պարփակվել միմիայն ոտար ներգործությամբ յուրացված կամ ոտար ներմուծված որենքների սահմաններում, այլ ծանրանալու յեր նաև բնիկ տեղական, ազդային իրավաբանական նորմերի վրա. հակառակ պարագայում այդ կոդեքսը զուրկ կլիներ ազդային նշանակությունից: Այդ ազդային իրավաբանական նորմերը կարելի յեր քաղել միմիայն ներող սովորութային իրավունքից և մասամբ հայ յեկեղեցական ժողովների կանոնական վորոշումներից: Մխիթար Գոշի Դատաստանադրքը և սրա հետևությամբ կազմված՝ Սմբատ Գունդստաբլի Կիլիկյան Հայ Դատաստանադրքը, չնայած վոր յերկուսն ել մասամբ հորինված են ոտար աղբյուրներից քաղված իրավաբանական նորմերով, այնուամենայնիվ զգալի չափով բովանդակում են նաև հայ սովորութական իրավունքի նորմեր: Մխիթար Գոշի այն վկայությունը, «որ ոչ թուխն ի կանոնաց, ի կենդանի առաք ճանէ» (I, ճԹ, 228), հաստատում է, թե ի՛նչ մեծ դեր եր կատարում սովորութային իրավունքը հայ իրավաբանական կենցաղում: Այլ կերպ չեր ել կարող լինել այն հասարակութեան մեջ, վորտեղ չեր զարդացել որենսդրական գործունեությունը, վորտեղ բացակայում ելին հաստուկ որենսդրական մարմինները:

Սակայն հայ սովորութիական իրավունքը չի արտացոլել ըստ ամենայնի հայ որենսդրքերում ու դատաստանագրքերում: Հայ սովորութիական իրավանորմերը տեղ են գտել մեր իրավաբանական ժողովածուներում այն չափով միայն, ինչ չափով ոտար ռեցեպցիայով մուտք գործած որենքներն անհարիր էին տեղական կենցաղին ու իրավաբանական կազմակերպություններին կամ մխանգամայն խորթ համարվում: Այսպիսի դեպքերում սովորութիական իրավանորմերը, իբրև հարազատ միջավայրից բղխած ու դարերով իր գործոն նշանակութիյունը պահպանած, յետ եյին մղում ոտար նորմերը և համապատասխան տեղ գրավում հայկական որենսդրքերում: Հետևապես, այստեղ հայ սովորութիական իրավունքը հանդես է գալիս պատասխաններով և իր մասին ամբողջական պատկեր չի տալիս: Այդ պատկերը կարող են լրացնել այն հարուստ նյութերը, վոր մատակարարում է հայ ազգագրութիյունը:

Հայ ժողովրդական կենցաղում մինչև XIX դարի վերջերը գործանալի պահպանողականութիյամբ հասել եյին վերապրուկային ձևով վո՛չ միայն միջնադարի, այլև ավելի հին, տոհմային նահապետական կյանքի ու հասարակական-ընտանեկան սովորութիների մնացուկները, վորոնց նյութական առանցքը յեղել է մինչև այդ պահպանված դյուղական համայնքը: Հայ ազգագրական բանահավաքներն ամբողջ XIX դարում կարողացել են իրենց հետախուզական աշխատանքներով ահագին նյութ հավաքել, վոր կուտակված է դիմաավորապես մեր պարբերական մամուլի եջերում և մասամբ լույս են տեսել նաև առանձին հրատարակութիյուններով: Այդ ազգագրական նյութերի մեջ մեծ տեղ են բռնում ֆոլկլորը, ընտանեկան կենցաղը (ծնունդ, սմոուանութիյուն, հարսանիք, թաղում և այլն) ու հավատալիքները, իսկ դուռ իրավաբանական կենցաղին վերաբերող սովորութիններ համեմատաբար քիչ են հավաքված: Դա պետք է բացատրել նրանով, վոր հայ ազգագրական բանահավաքները, դուրկ լինելով իրավաբանական մասնագիտութիյունից, վո՛չ միշտ թերագնահատել են սովորութիական իրավունքի նշանակութիյունը, այլ չեն կարողացել նշմարել ու հայտաբերել այն սովորութիները, վորոնք բնորոշում են ժողովրդական իրավամտքը-նումը:

Բայց և այնպես ներկայումս ամբարված հայ ազգագրական նյութերը, զորոնք տակավին կարոտ են գիտական ուսումնասիրության, և հայտ են բերում այնպիսի կենցաղային դծեր ու սովորույթներ, զորոնք պատմա-համեմատական ու վերապրուկային վերլուծման լեզանակով մեր մտապատկերներում վերականգնում են ժողովրդական իրավահայեցողության հիմունքները, դրսևորում սովորութային իրավունքի նորմերը: Հայ Ֆոլկլորի գաղափարախոսության և սյուժետային պատկերների մեջ, ընտանեկան և գյուղական նահապետական կենցաղի ծիսական կարգերում զորոշ չափով արտացոլել են հասարակական-արտադրական հարաբերությունները, զորոնք մեզ կուժանները են տալիս պատկերելու ամբողջ սովորութային իրավունքը:

Սովորութային իրավունքի վերաբերյալ ազգագրական նյութեր գտնում ենք նաև մեր հին ու միջնադարյան մատենագրության մեջ, որինակ՝ Փավստոս Բուզանդացու և Մովսես Խորենացու յերկերում, կամ Մխիթար Գոշի ու Վարդան Այգեկցու առակներում[24]:

## III. ԿԱՆՈՆԱԿԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Ցեթե մեզ չեն հասել մինչև XII դարը հայերեն կազմված որենսգրքեր, ապա հասել են կանոնագրքեր, այսինքն՝ յեկեղեցական կանոնների ժողովածուներ, զորոնք կազմվել են թեևս սկսած V դարից և հանդիսանում են հայ իրավունքի մեկ դրավոր ամենահին աղբյուրները:

Հայաստանի քրիստոնեացումը, զորը վերագրվում է Տրդատ Թագավորին ու Գրիգոր Լուսավորչին, և քրիստոնեության յերկու պետական կրոն հանդիսանալը, զոր տեղի յե ունեցել պաշտոնապես 300-ական թվականների սկզբներին, մեծ ազդեցություն և գործել հայերի հասարակական ու կուլտուրական կյանքի զարգացման, ընդամին նաև հայ իրավունքի ու իրավաբանական ինստիտուտների վրա:

Հայ քրիստոնեական յեկեղեցին և հիերոկրատիան սկզբնավորման որից իր սոցիալ-տնտեսական նյութական գերագույն ատացավ: Ֆեոդալիզմը հին Հայաստանում, նույնիսկ նախարարական ֆեոդալիզմը, զոյացել ու զարգանում եր ամ-

կավին քրիստոնեյացումից առաջ: Այդ նախաքրիստոնեական Հայաստանում ֆեոդալացած եր նաև հեթանոսական յեկեղեցին և քրմությունը, վորն, ըստ յերևութին, իր սոցիալ-անտեսական ամուր դիրքի շնորհիվ նաև ազդեցիկ քաղաքական դործոն եր հանդիսանում: Բավական և հիշատակել, վոր Հայաստանի դլխավոր քրմապետ Մաժանը, վորի մասին ավանդում և Մովսես Խորենացին, Արտաշես Թագավորի վորդին եր (II, ԾԱ, 177, ԾԹ, 180) և քաղաքական դեր եր խաղում:

Հետևապես, քրիստոնեական յեկեղեցական ֆեոդալիզմը մի նոր յերևույթ չեր: Նա վերաճել եր նախորդ հեթանոսականից նրանով, վոր քրմական հողային ու տաճարական հարստությունների տեր դարձավ քրիստոնյա հիերոկրատիան, վորին անցավ նաև ֆեոդալական քրմական դասի քաղաքական դերը:

Հայաստանի քրիստոնեյացումը տեղի ունեցավ այնպիսի պատմական մոմենտում, յերբ Արշակունյաց Թագավորության ուժն զդալապես թուլացել եր: Պետք և կռահել, վոր քրիստոնեյությունը մուծելով և այն հռչակելով պետական կրոն՝ Տրդատ Թագավորը ծրագրում եր ուժեղացնել Արշակունիների իշխանությունը, հուսալով հենվելու նոր կրոնի կենտրոնաձիգ հիերոկրատական սիստեմին: Սակայն հիերոկրատիայի հետագա դերը մի ընդհամար այլ ընթացք ստացավ: Ընդհակառակն, հողային ֆեոդալականությունը, տնտեսապես ու քաղաքականապես իրեն ուժեղ զդալով և մի շա հակվելով Բյուզանդիայի կողմը, իր ֆեոդալական եքսպանսիայով մրցակից հանդիսացավ աշխարհիկ ֆեոդալականությանը՝ հանձին Թագավորական իշխանության: Այդ պայքարն յուր դադաթնակետին եր հասել վերջին Արշակունիների ժամանակ (Արշակ II և սրա վորդի Պապ Թագավորների), յերբ Արշակունիների տապալումով Հայաստանը բաժանվեց Բյուզանդիայի ու Սասանյան Պարսկաստանի միջև (387 թ.):

Այս պատմական մոմենտից սկսած, յերբ Հայաստանում այլևս գոյություն չուներ միասնական կենտրոնական իշխանություն և յերկիրը վաստորեն դարձել եր արևմտյան մասով բյուզանդական կայսրների, իսկ հարավ-արևելյան մասով Սասանյան Թագավորների վասալական տերիտորիաների, կղերական ֆեոդալիզմն իր կենտրոնաձիգ հիերոկրատական ապարատով ուժեղ

քաղաքական դործոն ու ազդեցիկ դեկավար դարձավ ապակենտրոնացած ու սեպարատիստական նախարարների միջավայրում։ Եկեղեցական Փեոդալականության քաղաքական-հասարակական դերն ու նշանակությունն ավելի ևս ուժեղացավ Հայաստանի յերկրորդ բաժանումից (428 թ.) հետո, յերբ Բյուզանդիան ու Պարսկաստանը հաշվի եյին առնում նրա դերն ու ձգտումները և նրա ազդեցությունը ծառայեցնում եյին իրենց քաղաքական-նվաճողական շահերին՝ Հայաստանի լիակատար աննկատելի դծով։ Սասանյան Պարսկաստանն այնքան հեռու յե գնում, վոր Հայաստանից իրեն հասանելիք տուրքերի և հարկերի դանձումը հանձնարարում է հայոց կաթողիկոսին։

Ահա այդ պատմական դարերից սկսած, յեկեղեցական Փեոդալականությունն իր ազդեցությունն ու դերը, վոչ ընդհատումներով, անվիճար պահպանեց հայ քաղաքական և հասարակական-կուլտուրական աշխարհում մինչև վերջին ժամանակները։

Քրիստոնեական յեկեղեցին իր պարզացման, մանավանդ իր կազմավորման, սկզբնական շրջանում հիերոկրատական ինստիտուտն ամրացնելու և նրան հանրային նշանակություն ու ազդեցություն տալու նպատակով մշակում և հորինում եր իր սոցիալ-քաղաքական տիրապետության դատակարգային գաղափարախոսությունը։ Սահմանվում եյին հատուկ պարտավորություններ, իրատներ, կարգեր, հրահանգներ, վորոնք պարտադիր եյին քրիստոնեական համայնքների համար և կոչվում եյին կանոններ։ Կանոն բառը հունարեն է՝ κανών, վոր նշանակում է յեղեգի ցողուն և ապա ուղիղ վայա, ձող, ուղիղ գիծ, սահմանագիծ, այստեղից էլ փոխաբերական իմաստով՝ ձև, որենք, այն էլ հատկապես յեկեղեցական որենք։ Սկզբնական շրջանում այդ կանոնները գավանաբանական թեզերի ու բարոյագիտական նորմերի համախմբումներ եյին։ Հետագայում նրանք հետզհետե ընդգրկում են նաև հասարակական հարաբերությունների կարգավորման վորոշ շրջանակներ և համակվում են իրավաբանական նորմերի բնույթով։ Այդ կանոնները սահմանվում եյին յեկեղեցական աշխարհում գլխավորող ու հեղինակավոր անձերի կողմից, կամ ավելի հաճախ՝ այսպես կոչված յեկեղեցական ժողովներում, վորոնք լինում եյին տիեզերական և տեղական։

Այսպիսով, եկեղեցին յուրացնում է իրավադիր ֆունկցիաները, որոնց չափն ու սահմանը պայմանավորվում էին ավյալ երկրի քաղաքական կացութիւամբ: Հիերոկրատական իրեն իրավունք էր վերապահում վո՛չ միայն կարգավորելու եկեղեցու և կղերական դասի ներքին հարաբերությունները, պարտականությունները, տնտեսական- գույքային հարցերը, կազմել սահմանադրություն, այլև միջամտելու աշխարհիկ հասարակական հարաբերություններին ու այդ ենթարկել եկեղեցու իրավասությանը: Այդ միջամտությունը, որ հիմնավորվում էր եկեղեցու կողմից կրոնա-աստվածաբանական դոգմատիկայով, տարածվում էր գլխավորապես ընտանեկան իրավունքի որոշ կողմերի վրա, այն է՝ ամուսնության, վորդեծնության, աղդակցության աստիճանների, ծնողների ու զավակների փոխհարաբերությունների, նմանապես որոշ տեսակի հանցագործությունների վրա, ինչպես սպանություն, առևանգում, պոռնկություն, արուադիտություն և այլն: Ահա այդ հարաբերությունները կարգավորող նորմերը կազմում էին կանոնական իրավունք, այսինքն՝ կանոնների իրավադիր համախմբում, որով կանոնը հակադրվում էր օրենքին, νόμος –ին, որպես աշխարհիկ իրավաբանական նորմին:

Կանոնադիր գործունեությունն և կանոնական վորոշումները, որպես կանոնական իրավունքի աղբյուրներ, աչքի ընկնող նշանակություն ունեցան ընդհանրապես հայոց պատմության և մասնավորապես հայ իրավունքի պատմության մեջ:

Քանի վոր քրիստոնեական եկեղեցին ընդհանրական եր և հայ եկեղեցին բաժանված չեր նրանից, անշուշտ, Հայաստան էլին մտնում ռեցեպցիայի կարգով տիեզերական ժողովների և առանձին կրոնական պետերի կանոնական վորոշումները: Մովսես Խորենացու և Հովհան Իմաստասիրի վկայությունների համաձայն՝ այդ կանոնները մուտք են գործում Հայաստան IV դարի կեսերից: Դրանք, ի հարկե, լինում էին հունարեն կամ ասորերեն լեզուներով, ուստի և մեծ ծավալումն չէին ստանում: Ամենը հավանական և ու իրականությանը համապատասխան, ինչպես արևելք և կորյուն պատմագրի տվյալներից և մանավանդ պատմա-հետազոտական ուսումնասիրություններից (Տաշյան, Գա-

թլրճյան, Որմանյան և այլք), վոր հունարեն ու ասորերեն կանոնները մուտք են գործել Հայաստան ու թարգմանվել են հայերեն V դարից՝ հայերեն տառերի գյուտից հետո, մանավանդ վոր արդեն V դարում Բյուզանդիայում գոյություն ուներ տիեզերական ու տեղական ժողովների վորոշումներից բաղկացած կանոնների մի կոդեքս: Սակայն չուտով ոտար կանոնական հավաքածուների ռեցեպցիայի հետագա զարգացմանը վերջ է տրվում առեղծված քաղաքական պայմանների չնորհիվ: Արշակունյաց պետության անկումով և Հայաստանի բաժանումով Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև՝ հայ յեկեղեցական ֆեոդալական նությունը, վոր հաղթող դուրս յեկավ իր ֆեոդալական եքսպանսիայի պայքարում Արշակունյաց թագավորական իշխանության կենտրոնաձիգ ուժերի դեմ, սկսեց ակտիվ քաղաքական դեր խաղալ յերկրում: Ողավելով յերկու հզոր պետություններին՝ Հայաստանին ամբողջովին տիրելու սրված մրցումից, վորոնք հաշվի եյին առնում հայ հիերոկրատիայի ուժն ու ազդեցությունն իրենց նպատակների համար, վերջինս չհապաղեց ստեղծված քաղաքական կացությունը, և հարում այս կամ այն կողմը, բերան դառնալով ու ներկայացուցիչ հանդիսանալով աշխարհիկ ֆեոդալական տների, նախարարությունների մեծամասնության: Ցերը Հայաստանում վերջնականապես հաղթանակեց պարսկական կողմնորոշման քաղաքականությունը և դրա հետ միասին հայ յեկեղեցին մի անգամ ընդմիշտ անջատվեց Հունաստանից, չընդունելով Քաղկեդոնի տիեզերական ժողովի դավանաբանական վորոշումները, հայ հիերոկրատիան իրեն անկախ զգաց: Նա մշտական եր լինում նախարարական տների ու ասպետին քաղաքական հարաբերություններում, նաև ազդեցիկ դեր և խաղում յերկրի ներքին կյանքում: Կենտրոնական պետական իշխանության բացակայությամբ նա իր ձեռքն առավ դատավարական ու իրավաբանական ամբողջ գործունեությունը: Հույն և հայ յեկեղեցիների անջատման մոմենտից սկզբ են առնում Հայաստանում, հայ հիերոկրատիայի ձեռնհասությամբ, այսպես կոչված ազգային յեկեղեցական ժողովները, վորոնք սահմանում են կանոններ, ստեղծում նորմատիվ կարգեր իրենց իրավասության ու քաղաքական ազդեցության կամաններն ամրացնելու և ընդհանրապես տիրապետող դասակարգի շահերն ապահովելու

ուղղությամբ: Ուստի հայ եկեղեցական ժողովների կանոնական վորոշումները մեծ մասամբ կրում էին ո՛չ միայն կրոնա-դավաբանական բնույթ, այլև վերաբերում էին ներքին հասարակական հարաբերություններին, կարգավորելով այն հատկապես սահմանված իրավաբանական նորմերով: Այս տեսակետից հայ եկեղեցական ժողովների կանոնական վորոշումները մեծապես տարբերվում էին նախկին սիեղերական եկեղեցական ժողովների կանոններից, վորոնք ռեցեպցիայով ընդունված էին Հայաստանում, նաև հետագա հունական եկեղեցական ժողովների կանոնական վորոշումներից: Բնորոշ է, վոր հայ եկեղեցական ժողովներին էլ երբեմն մասնակից են եղել նաև աշխարհիկ ֆեոդալները, մանավանդ քաղաքական ճգնաժամային մոմենտներին, որինակ՝ Շահապիվանի (443 թ.), Դվինի Դ. ժողովը (648 թ.): Այս հանգամանքը հիմք և տվել մեր կղերամիտ լիբերալ պատմագետներին, նույնիսկ հայ իրավունքի պատմությամբ զբաղված մի-երկու հայ իրավագետներին, վեր հանել այդ ժողովների նշանակությունն իբրև դեմոկրատական ազգային ինստիտուտներ, դրանք համարել ժողովրդական ներկայացուցչական հաստատություններ, նմանեցնելով յուրատեսակ պառլամենտարիզմի, վոր իբր թե զարգացել է հին Հայաստանի հասարակական–քաղաքական կյանքում:

Ազգային եկեղեցական ժողովները իրենց վերապահում էին որենսդիր կամ իրավարար ֆունկցիաներ: Դա բացահայտ է այն բնորոշ դարձվածքներից, վորոնք գործածվում են հայ հին մատենագրության ու կանոնական վորոշումների բնագրերում: Փավստոս Բուզանդացին, պատմելով Աշտիշատի ժողովի մասին (365 թ.), բնորոշում է նրա գործունեությունն այս խոսքերով՝ «կարգեցին, կազմեցին, կանոնեցին, յօրինեցին...» (III, գլ Դ., 76). յօրինեցին ծագում է «օրէնք» բառից, հետևապես պետք է հասկանալ՝ «օրէնադրեցին»: «Կարգեցաք և սահմանեցաք», ասվում է Կարինի ժողովի կանոնական վորոշումների մեջ (ԿՀ, էջ 108): Շահապիվանի ժողովի վորոշումների նախաբանը վերջանում է «ապա կարգեցին և եդին այսպէս» խոսքերով, վորոնք նույնպես նշում են որենսդիր ֆունկցիայի վրա (ԿՀ, էջ 60): Հետաքրքիր ձևով են վավերացվում Դվինի 648 թ. ժողովի հո-

բինած 12 կանոնները. «Ես Ներսէս Հոռոմոց Տաճատեան կաթողիկոս հայոց վանս վերոգրեալ կանոնիս ամենայն աթոռակցովք մերովք տուբք եպիսկոպոսօք հայոց ձեռնարկեալ կնքեցաք ըստ հրամանի և սահմանի հոգւոյն սրբոյ և ընտրելոց նորա» (Անդ, եջ 129): Ձերբեմն եվ յնկեղեցական ժողովների վորոշումներում «կանոն» տերմինը չի հակադրվում «որենք» բառին, աշխարհիկ առումով, այլ գործածվում է վերջնիս հետ համազոր նշանակութեամբ (ԿՀ., եջ 111, 127, 115, 57, 59): Թեև «օրենք» տերմինը հայ կանոններում մեծ մասամբ այլ նշանակութեան ունի, այն է՝ կրոնատաճառամունքային կարգ, ծես, և կամ Մովսիսական իրավունքի նորմեր, վորպես աստվածային կանոն, որենք (ԿՀ., եջ 87, 88, 71):

Նմանապես «սահմանք» տերմինը հաճախ կրում է «կանոնի», «որենքի» հոմանիշ իմաստ. այստեղից եվ կանոնական վորոշումներում հաճախ են պատահում սահմանել, սահմանադրել բայերը՝ որինադրել, կանոնադրել առումով: «Զգուշութեամբ պահեսցի ի մէջն ձերում սահմանքս այս կանոնական» (ԿՀ., 43). «սոյնպէս կարգեալ և սահմանեալ եղիցին» (Անդ, եջ 54). «ըստ սահմանի սրբոց հարցն և սրբոյն Գրիգորի և բարեպաշտ թագաւորին Տրդատայ» (ԿՀ., եջ 129): «Սահման» տերմինի նշանակութեունն որենքի իմաստով դանում ենք սլավոնական հին իրավունքում: Հին ռուսական законъ— որենք բառը կամ նրա համանիշը՝ поконъ— նշանակում են հին իրավունքում՝ обычай և ծագում են кон բառից, վոր նշանակում է սկիզբ, նաև սահման, սահմանագիծ, հետևապես за և по նախդիրները ցույց են տալիս «մինչև սահման» թուլլատրվող մարդկային գործողութեուն կամ ազատութեուն[25]:

Ազգային յնկեղեցական ժողովները լրենց վերապահելով որենսդիր գործոնի նշանակութեունը, տրամաբանորեն պետք է կանոնական վորոշումներին տային պարտադիր ուժ: Դա բացահայտ և հաճախ գործածվող «կանոն այդ կացցէ» դարձվածքից (ԿՀ., եջ 63, 67, 68, 72 և այլն), «կանոնք ոչ հրամայեն» (ԿՀ., եջ 83): Կանոնական վորոշումների պարտադիր նշանակութեունն ավելի ցայտուն կերպով չեշտվում է Շահապիվանի ժողովի վորոշումների նախաբանում, ուր առած են բերված աշխարհիկ

ժողովականների համաձայնության խոսքերը. «Արդ, օրհնք որ Աստուծոյ հաճոյ են և եկեղեցւոյ նորա չինութիւն, դուք զայն կարդեցէք և մեք հնազանդ եմք և հաստատուն պահեմք և եթէ ոք հաստատուն ոչ պահէցէ զկարգս օրինաց կամ եպիսկոպոս կամ երէց կամ ազատ կամ չինական, պատուհաս կրեսցէ և տուգանս տացէ» (ԴՀ., եջ 59—60):

Վերն ակնարկեցինք, որ հայ եկեղեցական ժողովների կանոնադրական գործունեության սկսվել է V դարից, Արշակունյաց թագավորության անկումից հետո: Սակայն պետք է ընդգծել, որ եկեղեցական ժողովներ տեղի չեն ունեցել նաև առաջները, Արշակունիների թագավորության շրջանում: Այդ մասին հայ մատենագրության մեջ պահպանվել են աղոտ հիշատակումներ[26]: Ավելի հավաստի տեղեկություն ենք գտնում Փավստոս Բուզանդացու Պատմության մեջ Աշխիշատի ժողովի (365 թ.) մասին, որի հորինած կանոնների բովանդակությունը նա մեզ ավանդում է: Ընդորոշ է, որ այդ ժողովի մասին մեր մյուս մատենագիրները լուրյուն են պահպանում, բացի Մովսես Խորենացուց, որ ժողովի վայրը չի հիշատակում: Նմանապես բազմաթիվ կանոնադրքերի ձեռագրերում վոչ մի տեղ չի նըշմարվում Աշխիշատի կանոնների վորևե հետք: Մինչդեռ Փավստոս Բուզանդացու առաջ բերած կանոնների բովանդակությունը հետաքրքրական նյութ է տալիս հին հայ մի քանի սովորույթների մասին:

Սակայն մեզ հասած կանոնական վորոշումները բղխում են հենց այն եկեղեցական ժողովներից, որոնք տեղի չեն ունեցել մեր նշած ժամանակից: Այդ ժողովների մեջ անդրանիկը համարվելու չի Շահապիվանի ժողովը, որ կայացել է 443 թ., երբ Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքական կացությունը խիստ խառնակ ու անկայուն եր, մի ժամանակ, որի հետ են կապված Վարդանանց պատերազմի հետ առնչող դեպքերը: Տարօրինակն այն է, որ հայ մատենագիրները այդ նշանավոր ժողովի մասին վոչինչ չեն ավանդում, մինչդեռ կանոնադրքերի գրեթե բոլոր տարբերակներում այդ ժողովի կանոնները առաջնակարգ տեղ են բռնում:

Բացի եկեղեցական ժողովների կանոնական վորոշումներից՝

հայ կանոնագրքերում տեղ են գտել նաև առանձին անհատների՝ կաթողիկոսների, հայրապետների, այսպես կոչված «սուրբ հայրերի» հորինած կանոնները: Այստեղ էլ նկատում ենք ոտար, դիմավորապես հունական եկեղեցու «հայրերի» հորինած կանոնների ներգործման հայաստանում, որը հետագայում դադարում է հայ եկեղեցու անջատումով: Այնուհետև սկսում են նշանակություն ստանալ մի քանի հայ կրոնապետների կազմած կանոնները, որոնք երբեմն հորինվում են ոտար «հայրերի» կանոնների հետևողությամբ:

Այսպիսով, V դարից սկսած, հայ եկեղեցական իրավասության բնագավառում կուտակվում են թե՛ ոտար աղբյուրներից մուտք գործած և թե՛ ազգային հորինմամբ գոյացած բազմանաչափ կանոնագրություններ: Ուստի հետագա դարերում անհրաժեշտություն է զգացվում որոշ կոդիֆիկացիայի, այն է՝ ի մի ամփոփելու եկեղեցական ժողովների կողմից ընդունված և հիերոկրատական վարչության մեջ գործող կանոնագրությունները: Այդ կոդիֆիկացիան կատարվեց, ինչպես հավանորեն կենթադրելու է պատմական, թեև սուղ, տեղեկություններից, VIII դարում Ոհան Իմաստասեր Ոձնեցի կաթողիկոսի (717—728 թ. թ.) ձեռքով: Ձեռագիր կանոնագրքերի պատմա-համեմատական հետազոտություններից կերևում է, որ նախնագույն կանոնական կոդեքսը բաղկացած է 29 կանոնագրություններից, որոնք մերթ նում են Ոհան Իմաստասիրի հորինած կանոններով:

Հաջորդ երկու դարում վերոհիշյալ կանոնագիրքն սկսում է սուվարանալ: Հետզհետե այդ հավաքածուին ավելացվում են առանց մտքի սիստեմի ու դանազան ժամանակ մի շարք կանոնագրություններ, որոնց մի մասը ծագում է VIII դարից առաջ, իսկ մյուս մասը՝ Ոհան Ոձնեցուց հետո: Կանոնական հավաքածուի այդ աճումը կանգ է առնում մոտավորապես X—XI դարերի վերջերին, և մեզ հասել են կանոնագրքի բազմաթիվ ձեռագրեր, բաղկացած 40-ից մինչև 65 կանոնագրություններից, որոնք ժամանակագրորեն հորինված են մինչև VIII դարի վերջը:

Ուրեմն հին Հայաստանում գործող եկեղեցական կամ կանոնական իրավունքն արդեն VIII դարից սրճանագրված եր որպես կանոնագրությունների մի հավաքածու և լրնարեն ամրագ-

նում եր յուր իրավաբանական նշանակությունն ու կիրառումը, պահպանելով այն մինչև այսոր հայ կղերական աշխարհում «կանոնադիրք» անունով: Այդ, հատկապես Ոհան Ոձնեցու կազմած հավաքածուն, վոր հանդիսանում է սկզբնական կանոնադիրքը, կարելի յե ասել, առաջին կոդիֆիկացիան է Հայաստանում, հայկական «Corpus juris canonici»-ն, որենքների մի ժողովածու, վոր դոյություն է առնում հիերոկրատիայի դլխավորող կաթողիկոսից և բավանդակում է հայ յեկեղեցական ժողովների վավերացրած և ընդունած կանոնադրությունները: Հետևապես, Ոհան Ոձնեցու հորինած կանոնադիրքը վորոշ չափով պաշտոնական բնույթ է կրում: Սակայն այդ կանոնադիրքն, առնելով ու ամփոփելով հետագա հավելումներով, վորոնք կատարվել են անհայտ հոդվոր անձերի ձեռքով, թերևս կորցնում է իր պաշտոնական բնույթն և կասկածելի յե դառնում, թե վորքան նա պարտադիր ուժ եր ներկայացնում: Սակայն պատմա-հետազոտական ամփոփները և կանոնադրքի մեջ հասած բազմաթիվ ձեռագիր որինակներն ու տարբերակները վկայում են, թե ինչ մեծ ծավալով նրանք տարածված են յեղել ու ամանդական դարավոր կիրառում ունեցել, չնայած վոր յեկեղեցական մասնագրության և հետագա յեկեղեցական ժողովների կանոնական վորոշումների մեջ բնավ էլ հիշատակվում վո՛չ կանոնադրքի հորինման ու պարտադիր կիրառման, վոչ էլ նրա պաշտոնական սանկցիայի մասին: Այսահղից պետք է հետևցնել, վոր կանոնադրքի հատարակաց կիրառումն ու պարտադիր նշանակությունն ամանդաբար ստրդացել և սովորութական իրավունքի ընորհիվ և լռելյայն, e silentio, ընդհանուր համաձայնության ուժով:

Դա բացահայտ է այն խոսքերից, վոր դանում ենք Գրիգոր Լուսավորչի կաթողիկոսի առ Բյուզանդական կայսր Մանուելն հղած դրության մեջ. «զառաքին և այլ ժողովոց կանոնադրութիւնք և մեք ընդունելի են, որք զղանագան կարգս եկեղեցւոյ հաստատեցին և զպէտսդին հերձուածս հերքեցին...»[27]: Ընդ ամին խիստ բնորոշ է, վոր մեզ հասած հայ կանոնադրքերի ձեռագրերը ծագում են մեծ մասամբ XVI—XVIII դարերից, իսկ ամենից հնագույն որինակները, վորոնցից նրանք արտագրվել են, բացակայում են միանգամայն: Վոչ մի կասկած չկա, վոր հին

ձեռագիր կանոնագրքեր, թեև սկսած VIII—IX դարերից, զոյություն են ունեցել հայ իրականության մեջ, բայց մեզ չեն հասել այն պատճառով, որ կամ դարերի ընթացքում քաղաքական խառնաշփոթ իրադարձությունների կրել են, կամ անընդհատ դրծածության հետևանքով մաշվել ու բնականորեն վոչնչացել են: Մեզ հասած կանոնագրքի բազմաթիվ որինակները տարբեր տիպի յեն, այն է՝ ամբողջական հորինվածքով, վոր սովորաբար սկսվում է Ոհան Ոձնեցու 29 կանոնագրությունների, և անկատար հորինվածքով: Ամբողջական տիպի կանոնագրքի մեզ հասած ձեռագրերը լիակատար պարունակում են սովորաբար 70—100 կանոնագրություններ, վորոնք մխաին ընդդրկում են 1000—1500 կանոններ:

Հայ կանոնագրքի կամ կանոնական իրավունքի աղբյուրները բաժանվում են յերկու գլխավոր տեսակների՝ արտաքին ու ազգային: Առաջին տեսակին են պատկանում այն կանոնները, վորոնք հունական ու ասորական ծագում ունեն և անցեպցիայի կարգով են մտել Հայաստան, այսինքն՝ այն կանոնական վորոշումները, վորոնք հորինվել են, յերբ հայ յեկեղեցին տակավին մի յեր տեղերամասնի հետ, որինակ՝ նախանիկիական կանոններին[28] և ապա յերեք տիեզերական ժողովների[29] ու արտաքին տեղական ժողովների կանոնները՝ սկսած Անկյուբիայից մինչև Սարդիկիայի[30], նմանապես ոտար հայրապետների կանոնները: Յերկրորդ տեսակին են հարում այն կանոնները, վորոնք հորինվել են Հայաստանում, յերբ հայ յեկեղեցին անջատվել էր հունականից, այն է՝ հայ յեկեղեցական ժողովների կանոնական վորոշումները և ապա հայ հայրապետների կանոնները:

Այս կանոնները մեծ մասամբ, մանավանդ արտաքին աղբյուրները, կրոնա-դավանաբանական ու յեկեղեցական բնույթ ունեն, ուստի ներկա աշխատության համար այնքան էլ արժեք չեն ներկայացնում: Հայ իրավունքի պատմության տեսակետից կարևոր են ազգային կանոնական վորոշումները[31]: Այստեղ հանդիպում է բավականաչափ նյութ, վոր հայ իրավունքի գլխավոր աղբյուր է հանդիսանում և բնորոշում է հին Հայաստանում տիրող իրավահարաբերությունը: Ինչպես արդեն նկատվել էր, հայ կանոնական վորոշումները հաճախ պատվում են վո՛չ միայն

կրոնա–եկեղեցական առանցքի շուրջը, այլև տարածվում են աշխարհիկ կենցաղի վրա: Այդ կանոնները շատ անգամ իրավաբանական նորմերի նշանակություն են ստանում, որոնք իրականում կարգավորում էին հասարակական հարաբերությունները քաղաքացիական ու քրեական իրավունքների մակարդակով: Այդ տեսակետից հետաքրքրություն են ներկայացնում Աչտիշատի (365 թ.), Շահապիվանի (443 թ.), Ազվանից Վաչագան Բաղավանի (488 թ.), Դվինի (Բ–րդ 555 թ. և Դ–րդ 648 թ.), Պարտավի (768 թ.), Սսի (1243 թ.), Զաղալանի (1270 թ.) եկեղեցական ժողովների կանոնները, նմանապես առանձին հայրապետների, այն է՝ Ներսես Մեծին (353—363 թ. թ.), մասամբ նաև Սահակ Պարթևին (387—439 թ. թ.) ու Գրիգոր Լուսավորչին (302—325 թ. թ.) վերագրված կանոնները:

Վերոհիշյալ եկեղեցական ժողովների կանոնները, որոնք երբև իրավաբանական նորմեր վերաբերում են աշխարհիկ կենցաղին և կարգավորում են հասարակական հարաբերությունները, անտարակույս, բղխում են սովորութային իրավունքից: Հետևաբար, նրանք հայ իրավունքի կարևոր ու հետաքրքրական աղբյուրներ են և իրենց հնությամբ մեծ արժեք են ներկայացնում իրավա- պատմական ուսումնասիրության համար:

Ինչ վերաբերում է Գրիգոր Լուսավորչի, Ներսես (Մեծի) Հայոց Հայրապետի, մասամբ Թեոդոս Սահակ Պարթևի կանոններին, պետք է ասել, որ այդ կանոնները սահմանային հավանականությամբ անվավերական են և չեն բղխում անմիջապես վերոհիշյալ անձնավորությունների, ինչպես այդ սովորաբար ընդունված է կարծելու: Նույնը պետք է ասել նաև այսպես կոչված «Առաքելական կանոնների» մասին: Այդ վկայակոչը մանավանդ ուժեղ է Գրիգոր Լուսավորչին վերագրվող կանոնների նկատմամբ: Մի կողմ թողած Գրիգոր Լուսավորչի անձի պատմականության վերաբերյալ արտահայտված թեր և դեմ կարծիքները՝ նրա կանոնների բովանդակության համեմատությունը ցույց է տալիս, որ նրանք մեծ նմանություն ունեն Բարսեղ Կեսարացու (370 թ.), և ընդհանրապես այսպես կոչված «Հարանց հետևողաց», ինչպես և վերոհիշյալ Ներսես Հայրապետի (Մեծի) կանոնների և, վերջապես, Հովհան Մանդակունու կանոնների հետ, որոնք ժամանա-

կապրսին Գրիգոր Լուսավորչից հետո են գրել։ Ավչ մի հիմք չկա կարծելու, որ սրանք, մանավանդ Բարսեղը, իրենց կանոններով բովանդակությունը վերցրած լինեն Գրիգոր Լուսավորչից։ Ավելի շուտ կարելի է ենթադրել, որ մի անհայտ անձն հետագայում, հավանորեն V դարի վերջերին, քաղվածորեն կազմել է այդ կանոնները ու միասամանակ կերպով վերագրել է Գրիգոր Լուսավորչի անվանը։ Այդ անձը կարող էր քաղել վերոհիշյալ հեղինակներից, գուցե և մեկն Բարսեղ Կեսարացուց, որը մեծ հռչակ էր վայելում ասկետական քրիստոնեական աշխարհում և որի կանոնները ռեցեպցիայով անցել էին ու թարգմանվել նաև Հայաստանում։

Այդպիսի վերագրումներ ու վկայություններ, ինչպես ասինք և եկեղեցական մատենագրության, սովորական երևույթներ էին, որ կատարվում էին կղերի կողմից՝ իրենց շահերի ու միտումների հաստատելու համար։

Համենայն դեպս, այդ մեզ համար նշանակություն ունի այն չափով, ինչ չափով վերոհիշյալ կանոնների բովանդակությունն, անկախ նրանց հեղինակների անունից և ժամանակից, անհրաժեշտ նյութ է մատակարարում՝ ընդորոշելու համար հայ իրավունքի նորմերը։

Հայ կանոնագրքում պարունակվող ազգային–եկեղեցական ժողովների վորոշումներն ու հայրապետների հրովիրած կանոնները հնագույն են տալիս վորոշ չափով պարզելու նախապարսկան Հայաստանի գործող իրավունքի աղբյուրները։ Այսպես Թեոդիս սովորութային իրավունքի նորմերն արձանագրվել են, կանոնների ձև ընդունելով և վավերացվելով՝ ստացել են պաշտոնական օրենսդիր նշանակություն։ Նույնիսկ շատ կանոնների արդեյական բնույթը մեզ տանում է դեպի իրական հասարակական կենցաղը, ուր տիրում էին եկեղեցուն և քրիստոնեական կրոնին անհարիր սովորույթներ ու սոցիալական բարքեր, վորոնք, սակայն, հիմնականում բղխում էին ժողովրդի իրավահավատարմությունից։

Ահա այդ կանոններում արձանագրված հայ աշխարհիկ իրավունքն իր ելույթներով հայ ֆեոդալական հասարակության իրավական վերնաշենքն է հանդիսանում։ Նրանք արտացոլում են

նախաբարական իրավունքն իր դասակարգային բնորոշ դծերով: Սահմանելով հասուկ կանոնական նորմեր և այն դնելով կրոնական դաշտախաբախաստությամբ, հայ հին հեթանոսական, իբրև նախաբարական սիստեմի բաղկացուցիչ մասը, հետապնդում էր առաջին հերթին իր կրոնա- ֆեոդալական շահերը, ամրացնելով իր սոցիալական ու քաղաքական տիրապետությունը: Միևնույն ժամանակ չէին անտեսում նաև աշխարհիկ ֆեոդալականության շահերը, որոնք հակադրվում էին, ինչպես հետո կտեսնենք, նրանց տիրապետության ներքո չհադրծվող ժողովրդական զանգվածներին:

Հայ կանոնագրքի, որպես ամբողջական՝ մի Corpus-ի, ստեղծման հրատարակությունը մինչև այժմ չունենք. Այդպիսի ստեղծությունը կապված է մեծ դժվարությունների հետ, նկատի ունենալով կանոնագրքի բազմաթիվ որբնականերն ու վարիանտները: Կանոնագրքի դիտական հրատարակությունը պահված է դանազան մատենադարաններում ցրված ձեռագրերի մանրակրկիտ համեմատության հետ, որ մի մարդու և կարճ ժամանակվա գործ չի կարող լինել:

Սակայն հրատարակված են բավականաչափ առանձին կանոնագրություններ, մի քանիսը նույնիսկ համապատասխան ձեռագրերի համեմատությամբ: Այդ կանոնագրություններից չատերը պարունակվում են Ն. Մելիք-Թանդյանի «Հայոց յեկեղեցական իրավունքը» աշխատության մեջ, բայց սրա մեծ թերությունն այն է, որ հեղինակը չի հետաքրքրում, թե ո՛ր ձեռագրերից և քաղել կանոնները: Ա. Ղլոճյանն էլ հրատարակել է «Կանոնագիրք հայոց» խորագրով ժողովածու, ըստ երևույթին այդ առաջադրելով իրեն մի ամբողջական Corpus: Այս հրատարակությունը դուրկ է գիտական արժեքից: Նախ՝ այստեղ չեն նշված այն ձեռագրերը, որոնցից ոգտվել և հրատարակիչը. յերկրորդ՝ այդ ստեղծված վերնագիրը բնավ չի համապատասխանում բովանդակությանը: Հրատարակիչն ունեցել և բնագրական մոտեցումն իր գործին, դուրս և հանել մի շարք կանոնագրություններ, որոնք չատ հաճախ պատահում կանոնագրքերի որբնականերում և, ընդհակառակը, մուծել և այնպիսիները, որոնք բնավ տեղ չունեն կանոնագրքում: Հետևապես, դա ո՛չ

թե պատմական, վորոշ չափով կոդիֆիկացիա տեսած, իսկական կանոնադիրքն է, այլ անհատական, Ա. Դյուճյանի «նոր խմբած»-ի հավաքածու, այլ խոսքով՝ իր «հորինած» կանոնադիրքը:

## IV. ՈՏԱՐ ՌԵՑԵՊՑԻԱ

1. *ՄՈՎՍԻՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.*— Բրիտանիայի հատատուտով Հայաստանում հարդարվել եր այն ճանապարհը, վորով զարգանում եր ոտար, դլխավորապես հունական և ատրական կանոնադրությունների ռեցեպցիան: Նույն ճանապարհով միաժամանակ այդ կանոնների հետ կատարվում եր նաև աշխարհիկ ոտար որենսդրությունների ռեցեպցիան, վորի կարիքը խիստ զդալի եր: Ինչպես դիտենք, նախարարական Հայաստանում հասարակական հարաբերությունները կարդավորվում եյին սովորութական իրավունքի նորմերով, վորոնք դրի չեյին առնված, իսկ դրավոր որենսդրությունը տեղի ունեցավ VIII դարի վերջերին, այն ել կանոնադրով, վոր ներապանցորեն հողևոր-յեկեղեցական քնույթ եր կրում և ձգտում եր որինականացնել հիերոկրատիայի իրավասությունը դատական ու իրավաբանական քնագավառում: Ահա նույն հիերոկրատիան, հիմնվելով իր իրավաբանական դրծունեության վրա, ատանձնում և նաև աշխարհիկ որենսդրական ժողովածուներ, այն է՝ դրավոր ոտար որենքների ռեցեպցիայի դործը: Այս բնորոշ պարագան ունենում և իր ապդեցիկ նշանակությունն և Մխիթարյանի հետևանքները հայ իրավունքի հետագա զարդացման պատմության մեջ: Հիերոկրատիայի մենաշնորհ իրավաբանական դործունեության առաջին հետևանքը լինում և այն, վոր աշխարհիկ որենքների անդրանիկ ռեցեպցիան ատամնատիպակվում և ակդրնկում այսպես կոչված «Մովսիսական որենքներով»: Դա հրեական ժողովրդի դործող իրավաբանական նորմերի ժողովածուն եր, վոր ահագին դեր եր խաղում Արևելքի, մանավորապես Առաջավոր Ասիայի ժողովուրդների իրական կյանքում ու իրավահայեցողության զարդացման մեջ, մանավանդ քրիստոնեության առաջին դարերում: Հայաստանի հիերոկրատիան, ձեռնամուխ լինելով ոտար ռեցեպցիային, յուրացնում կը ա՛յն թե հին հատնյական իրավունքը, վոր ավելի դարդացած իրա-

վարմբանման ու ավելի նուրբ իրավաբանական նորմերի սիսեմ եր և վազուց հետե ղրի իր առնված, այլ հրեական իրավունքը՝ «Մովսիսական սրենքները» իրենց պրիմիտիվ կառուցվածքով ու հայացքներով: Ցեվ այդ քայլն արվում եր այն ժամանակ, երբ քրիստոնեության մուտքը Հարաստանում հաղթական եր դառնում, սկզբա առնչություն ունենալով հունական կեկեղեցու հետ: Պարզ և, վոր այստեղ դեպրատանց ղեր և խաղացել հայ կեկեղեցու և հիերարխիայի սոցիալական ու քաղաքական սկզբտալեսության սենդենցը:

Ցեկեղեցին, քրիստոնեության հիմնադիր ընդունելով կենթագրյալ Քրիստոսին, վոր ծագում եր իբրև Թե աստուծու ընտրյալ հրեական ժողովրդից, իր համար հեղինակավոր եր համարում այդ ժողովրդի «սուրբ գիրքը»՝ «Աստվածաշունչը», այն է՝ Հին Կտակարանը: Վերջինի հորինումը վերագրվում եր մարգարեներին, վորոնք սահմանել եյին հրեական ժողովրդի հասարակական հարաբերությունները, սոցիալ-տնտեսական ու հոգևոր կյանքը կարգավորող կանոններ, պատգամներ ու խրատներ: Այդ մարգարեների մեջ անդրանիկն եր Մովսեսը, վոր իբր սատցել եր աստծուց «սրենքները» և առաջին անգամ գրի առել: Հետևապես ամենահին գրավոր սրենքն, ըստ քրիստոնեական կեկեղեցու, յեղել և «Մովսիսական Որենքը»: Քրիստոնեական կեկեղեցու և հոգևոր դասի, մասնավորապես և հայերի մեջ դոյություն ունեցող այդ հայացքը պարզորոշ արտահայտվում և Մխիթար Գոշի Դատաստանագրքում: Մխիթար Գոշն իր կողքի աղբյուրները հիշատակելիս նշում և, վոր քաղել և գրավոր սրենքներ նաև Հին Կտակարանից. «Իսկ ի գրոց—առաջինն՝ յելից և յերկրորդ Օրինացն և յայլ ևս գրոցն, որ է ասացյ Աստուծոյ օրինիւ և դատաստանք. գոր և ասէ իսկ Թէ—այս են օրէնք և դատաստանք և վկայութիւնք, գոր պատուիրեաց ձեզ Տէր» (Մ. Գ., Նախ., էջ 65): Մի այլ տեղ նույն հեղինակն ավելի յե ճշտում այդ տեսակետը. «Եկեսցուք այժմ իսկ ի գործ դատաստանաց, դիտելով դի ըստ քաղաքաց դատաւորս հրամայէ լինել Մովսէս և նոցունց գործոց. յորոց յայս է, գի ո՛չ ամենայն գրով աւանդեաց Մովսէս գիրս դատաստանաց, այլ տեսակս ինչ ի գրոյն աւանդեաց Մովսէս գիրս դատաստանաց արար՝ի դանագան իրս և ի սակաւս ի դատաւորս ապաստան արար՝ի դանագան իրս և ի

ժամանակս: Եւ վասն այն ղպղիբս կարգեաց, զի զեղեալ զաստառանս նոցա զրով պահեցին. քան զրում և մերս եղիցի, որպէս յառաջ իսկ ասացաւ» (I, Ա., 81):

Ուրեմն «Մովսիսական օրենքը» աստվածային օրենք և, արբաղդաբար, աստծուց հաստատված: Ընդունելով ենթադրյալ կարգով հրեական այդ իրավունքը իրրև աշխարհիկ օրենքներ, հիերոկրատիան դրանով իսկ կրոնական առնկցիա չեր տալիս այդ իրավաբանական նորմերին, ինչպես և յուր կանոնական նորմերին, և կիրառում եր աշխարհիկ կյանքում յուր իսկ իրավական ինստիտուտներին միջոցով: Դրանով նա մի նոր զենք եր ձեռք բերում, որը միացնելով կանոնական իրավունքի նորմերին՝ ավելի ուժեղացնում եր քաղաքական ազդեցությունն և ապահովում իր սոցիալ-անտեսական արտոնությունը:

Հիրավի, Մովսիսական օրենքները մեծ ծավալով ներս եկին թափանցել հայ իրավունքի մեջ, մանավանդ դրամոր օրենքների ժողովածուներում, և չքնաղատվում եկին նաև իրրև առանձին, ինքնուրույն հավաքածուներ: Այդ են վկայում թե՛ Մխիթար Գոշի Դատաստանագրքի հոդվածների մեծամասնությունը և թե՛ մեզ հասած Մովսիսական օրենքների բավականաչափ առանձին ձեռագրերը: Կասկած չկա, որ Մովսիսական օրենքների ուսումնասիրման կատարվել և վո՛չ թե անմիջապես հրեականից, այլ դիտավորապես ասորականից՝ Սիրիայից, որտեղ Մովսիսական Օրենքը մեծ չափով թափանցել եր տեղական կանոնական իրավունքի մեջ:

Բայց Մովսիսական օրենքները, ինչպես կարելի յե յեղրակացնել Մխիթար Գոշի Դատաստանագրքից, քաղված են վո՛չ միայն ուսար ժողովածուներից թարգմանաբար, այլև անմիջապես իրենց հայկական աղբյուրից, այն է, այսպես կոչված «Ատվածաշնչի կամ «Ս. Գրքի»—«Հին Կտակարանի»—հայերեն թարգմանական բնագրից: Մանավանդ այդ վերաբերում է Ատվածաշնչի «Ցնդից դրքի» և «Ելից կրկրորդ օրենքի» մեջ պարունակված Մովսիսական օրենքներին:

Սակայն հետագայում Մովսիսական իրավունքը Հրեաստանի անկումից և հրեաների արտագաղթից հետո, յերբ նրանք իրենց դաղութներում ավելի բարդ ու զարդացած հասարակական-սըն-

տեսական հարաբերությունների մի ջամայրի հետ եկին չխլում, սկսում է վերամշակման ենթարկվել տաբինետական դասի ձեռքով: Այդ վերափոխված Մովսիսական իրավունքը հայտնի է «Թալմուդ» անունով, որը կիրառվում էր բոլոր հրեական համայնքներում և ընդգրկվում էր Առաջավոր Ասիայի ժողովուրդների մեջ: Այսպիսով, առաջ եկան Պաղեստինում «Ցերուսաղեմի Թալմուդը» (368 թ.) և Բաբելոնում ու Միջագետքում՝ «Բաբելոնի Թալմուդը» (476 թ.): «Թալմուդի» իրավաբանական նորմերը նմանապես մուտք եկին դործել Արաբիա, ուր նրանք յուրացվեցին նաև մահմեդական Ղուրանի ոգենքների՝ Շարիաթի մեջ:

Սկսա այդ վերամշակված Մովսիսական, այն է՝ Թալմուդական իրավունքը նույնպես մուտք է դործել Հայաստան: Այդ միանդամայն ճիշտ կարծիքին են հանդում Ց. Կարան և Ց. Կոհլերն իրենց ուսումնասիրություններում. մի կարծիք, որը ամենի հանդամանորեն ապացուցում են հայտնի սեմիտաբաններ Դ. Մյուլլերը[32] և Վ. Ազատովիցերը[33], որոնք Միխիթար Գոշի Դատաստանագրքի մի շարք հոդվածները համեմատության են առնում Թալմուդական իրավունքի համապատասխան հոդվածների հետ և հայտաբերում են յերբեմն նույնիսկ բառացի նմանություններ: Սակայն դժվար է ասել, թե Թալմուդական իրավունքի նորմերն ի՞նչպես և ի՞րը են մուտք դործել Հայաստան: Պետք է ենթադրել, որ այդ կատարվել է արաբական միջնադարության ընթացքում, վոչ վաղ, քան VII դարում, այն ել վո՛չ թե անմիջականն, այլ մուսուլմանական իրավունքի միջոցով: Այդ բացահայտ է Միխիթար Գոշի Դատաստանագրքից, ուր, այլ աղբյուրների շարքում հիշատակվում է նաև մահմեդական իրավունքը, որը ոգտագործվել է այն չափով, ինչ չափով այնտեղից հնարավոր է յեղել քաղել Մովսիսական որենքները. «Երրորդ [աղբյուր]՝ առնումք և ի մահմետականաց. ո՛չ որ նոքա ուսան ի Մահմետայ զախտաւոր բանս կամ զդատաստանս, այլ զոր աւրէն՝ի Մովսէսէ օրինացն՝ մեք զայնս ընտրեմք և առնումք» (ՄԳ., Նախ., ԺԱ, եջ 65):

Այն փաստը, որը Միխիթար Գոշն իր Դատաստանագրքերը կազմելիս մեծ չափերով ոգտվել է Մովսիսական որենքներից, վկա-

յում է, որ հին Հայաստանում գոյություն են ունեցել Մովսեսական օրենքների ժողովածուներ, որոնց առանձին ձեռագրերը հասել են մեզ: Սրանից պետք է եզրակացնել, թե ինչ մեծ նշանակություն եր վերագրում հայ հին եկեղեցին Մովսեսական իրավունքին: Սակայն հետաքրքիրն այն է, որ տակավին 1196 թ., այսինքն՝ Մխիթար Գոշի Դատաստանագրքի հրատարակությունից հետո (1184 թ.), Կիլիկյան հայ թագավորության մեջ հայտնի կեղեցական Ներսես Լամբրոնացին, որ թարգմանել է մի շարք ուրիշ օրինադրքեր, անկախ Մխիթար Գոշից, թերևս և անտեղյակ լինելով նրա կազմած Դատաստանագրքին, թարգմանել է հունարենից Մովսեսական Օրենքները տեղական կիրառման համար, որի մասին խոսքը հիշատակում է թարգմանության հատորաբանում. «Յետ որոց ասաց ի Տէրէնացոց զրոց արարի թարգմանութիւն Մովսիսական աւրինաց»[34]:

Մովսեսական օրենքները մտել են գոչ մխայի Մխիթար Գոշի Դատաստանագրքի մեջ, որի սոցիալ քրեական իրավունքը, սարկաստիրական նորմերը և մասամբ պատասխանական ու գույքային իրավահարաբերական նորմերը նույն հարաբերությամբ, որով եկեղեցին էլ հայ կենցաղին հարմարեցրած վիճակով, ուղղված են այդ օրենքներով: Մովսեսական օրենքները մտել են նաև հայ կանոնական իրավունքի մեջ: Մխիթար Գոշից շատ առաջ՝ եկեղեցական ժողովների կանոնական վորոշումներում, որպիսիք՝ պատժական իրավունքի, հոգևորականների ժառանգելու իրավունքի, տասանորդային հարցերի ու այլ «մուտքերի» հոգուտ եկեղեցու և նման հարցերի նկատմամբ:

Անկարող չէ լինել նշել մի հետաքրքրական երևույթ: Ակնառավոր ասորա- բաբելագիտներ Բրունո Մայսներ, Հուգո Վինկլերն իրենց հետազոտություններով ապացուցում են, որ բաբելական Համմուրաբիի օրենքները (2067—2025 թ. մեր տարեթվից առաջ), որոնք հայտարերվել են հնագետ Ժակ Մորգանի պեղումներով Սուզայի ավերակներում, իրենց մի շարք իրավահարաբերական նորմերով մեծ նմանություն ունեն Մովսեսական օրենքներին, որոնք պատմական «Համմուրաբիի կոդեքսից» շատ դարեր հետո են գոյացել: Այստեղից նրանք եզրակացնում են, որ հին հրեաների առաջին օրենսդրական վորոշումները բոլոր

են Համմուրաբիի, ավելի ճիշտ ասած՝ բաբելական օրենքներից։ Այդպիսի աղբյուրի համանման կենսագրությունը միանգամայն ընդունելի է, քանի որ Հրեաստանը մի ժամանակ նվաճվել էր Բաբելոնի կողմից և հրեության մեծ մասը, սերկարաուն գերությունից հետո, նորից վերադարձել էր Պաղեստին՝ իր հայրենիքը։ Անշուշտ, այս պայմաններում հրեաները չատ բան էին յուրացրել բաբելական կուլտուրայից, ընդ որում նաև նրանց իրավունքի նորմերը։ Ահա այս դեպքում Մխիթար Գոշի Դատաստանագրքի մեջ մտած Մովսիսական իրավունքի նորմերով հետաքրքիր աբճադանք են դառնում ավելոր հնության մի իրավունքի, Համմուրաբիի օրենքների բնորոշ հետքերը։

Ի վերջո նշենք, որ Մովսիսական օրենքների հայերեն հավաքածուները տակավին ուսումնասիրված չեն ու չեն կնքվարկվել համեմատական վերլուծման, հետևապես չեն էլ հրապարակվել։ Իսկ ասանց այդ ուսումնասիրությունների՝ չատ կարևոր հարցեր, որոնք կապված են այդ օրենքների ակցեպցիայի հանգամանքների հետ (ժամանակը, ինչ չեզոքով, որ՞րտեղից և այլն), նմանապես այն հարցը, թե այդ հավաքածուներից որո՞նք են հին Մովսիսական և որոնք հետագա Թալմուդական,— մնում են մինչև այժմ չպարզաբանված։

2. ԱՍՈՐՍ–ՀՈՄԵՅԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ.— Ինչպես կարելի է եզրակացնել մեզ հասած զանազան օրենքների ժողովածու ձեռագրերից, հին Հայաստանում մուտք է գործել նաև ասորիս կոչված «Ասորա–Հռոմեական Դատաստանագիրքը»։ Առայժմ բացակայում են ամուր կռվաններ վորոշելու համար, թե ի՛նչ և ի՛նչ չեզոքից և նա թարգմանվել ու մեզ մոտ գործածվել։ Այդ Դատաստանագրքի բացի հայերեն ձեռագրերից, որոնք զանազան վարիանտներով են հանդիպում, Աբեմատյան Ձեռագրատան թանգրանիներում գտնվում են նաև արաբական ու ասորական (սիրիական) ձեռագրերը, նույնպես տարբեր վերնագրերով։ Այդ Դատաստանագրքով, մանավանդ նրա հայերեն, ասորերեն ու արաբերեն տարբերակները 1880 թ. հրատարակվեցին Բրուսա և Զախաու գերմանացի գիտնականների ձեռքով, հետաքրքրվեցին մի շարք եվրոպական արևելագետներ ու համեմատական լրագրությամբ պրպտվող անձեր, ձգտելով լուսաբանել այդ օրենքների

ծագումն ու բնույթը: Այդ հետազոտողների մի մասը, ինչպես Բրունս և Զախաուն, նմանապես և Լ. Մխոտսյոը պնդում են, որ դա զուտ հռոմեական է, այսինքն բյուզանդական ծագումն ունի և հունական աղբյուրներից է բղխում: Իսկ մի խումբ այլ գիտնականներ, ինչպես՝ Զ. Լինդենթալը, Յ. Կոհլերը, մանավանդ Դ. Մյուլլերը, որ այդ մասին մի քանի ուշագրավ համեմատական ուսումնասիրություններ են հրատարակել, նմանապես Վ. Ատամովիցերը և մասամբ Յ. Կարաթը հակառակ տեսակետի վրա են կանգնած: Վերջիններիս, համեմատության առնելով համապատասխան օրենքներն ու պրակտիկները, նաև լեզվական ու պատմական տվյալները, ապացուցում են, որ վերոհիշյալ Դատաստանագիրքը մո՛չ թե հունական, այլ հին ասորական է: Նույնիսկ այն հանգամանքը, որ այդ Դատաստանագրքում հիշատակվում են բյուզանդական կայսրներ Կոստանդիանոս, Թեոդոս, և Լևոն որոնց անունից առաջ են բերված մի քանի օրենքներ, չի կարելի հիմք ընդունել ապացուցելու համար, թե այդ օրենքները հռոմեա-բյուզանդական ծագումն ունեն, քանի հենց այդ օրենքների ներքին բովանդակությունը միանգամայն խորթ է բյուզանդական իրավահայեցողությանը:

Բացի այդ՝ հիշյալ Դատաստանագրքի հոդվածներում նշմարելի են նաև Մովսիսական օրենքների հետքեր: Այդ Դատաստանագիրքը, ուրեմն, հիմնականում ասորական է և հորինվել է Փոքր Ասիայում: Ինչ վերաբերում է Դատաստանագրքի «Ասորա-Հռոմեական» անվանը, այդ, անշուշտ, հետագայում առաջացած մի թյուրիմացություն է, որ ավանդաբար ու անհիմն կերպով, միանգամայն սխալ ձևով պահպանվել է, փոխանակ ասել «Ասորական» կոչվելու: Մեր ձեռագրերում այդ Դատաստանագիրքը կրում է մեծ մասամբ այսպիսի վերնագիրը՝ «Օրէնք յաղթող թագաւորացն Կոստանդիանոսի, Թէոդոսի և Լեւոնի»: Մենք ել հակված ենք ընդունելու վերջիններիս տեսակետը:

Վերևում բերված պարագաները կտահել են տալիս, որ Ասորա-Հռոմեական Դատաստանագիրքը Հայաստանում ընդունվելիս՝ թարգմանվել է ասորերենից: Սակայն ի՞նչ է նա մուտք գործել Հայաստան ու թարգմանվել,— այդ հարցը դեռ է քննվում մեծ դժվարություններով՝ ասույթ տեղեկությունների բացակա-

յութեան հետևանքով: Կասկածից դուրս է, որ այդ Դատաստանագրքի ինչպես ամբողջ Առաջավոր Ասիայում, այնպես և Հին Հայաստանում, խիստ տարածված է եղել: Մենք նկատում ենք նրա մի քանի հոդվածների ազդեցությունը Մխիթար Գոշի Դատաստանագրքի վրա: Հետևապես նա մինչև XII դարը հայտնի է եղել Հայաստանում: Տարօրինակ է, որ Մխիթար Գոշն այն չի հիշատակում իր ապստամբած ազգայիների շարքում: Ջնաջած դրան՝ պերմանացի հայտնի Պետերմանը կարծիք է հայտնել, թե այդ Դատաստանագրքի թագմանիչն եղել է Մխիթար Գոշը[35], հիմնվելով այն փաստի վրա, որ հիշյալ Դատաստանագրքի մի քանի ձեռագրերում պետղվում է Մխիթար Գոշի Դատաստանագրքից անմիջապես հետո: Թարգմանության լեզուն և բառերի ուղղագրությունը հայ բանասերներից շատերին հիմք են տվել ենթադրելու, թե թարգմանությունը կատարվել է մինչև դարերում (AIO, 191): Սակայն Յ. Կարապետ ենթադրում է, որ այդ Դատաստանագրքի հայերեն թարգմանությունը կատարվել է Բագրատունյաց թագավորության շրջանում (887—1042 թ. թ.), երբ սկսում է զարգանալ հունա-լատինական սրինգների մուտքը Հայաստան[36]:

Վերջին ժամանակներս մի քանի հայ բանասերներ Այսրա-Հռոմեական Դատաստանագրքի թարգմանությունը, իրրև ապացուցված վաստ, վերագրում են Կիլիկյան հայ թագավորության ականավոր քաղաքական ու մտավորական Ներսես Լամբրոնացուն, որը իբր այդ գործը կատարել է 1197 թ.: Իրենց ապացույցը նրանք հիմնավորում են Ներսես Լամբրոնացու հիշատակարանով. «և պատահեալ ինդ յասորոց Թէոդոս անուն կիլիք եպիսկոպոսէն քահանայ, յայնմհետ տեառնից [հայոց կաթողիկոս Գրիգորէն], որ զայս առ ինքն այս համառօտ աւրինադրութիւնս և հրամայեաց տեսանել զնա տալոյ ի հայս»[37]: Մեզ բերված խոսքերը քիչ բան են ասում Այսրա-Հռոմեական Դատաստանագրքի թարգմանության հնության հարցը վերջնականորեն լուծելու համար: Նախ՝ չի հիշատակվում է, թե ինչ «օրինադրություն» է եղել տասրի Թեոդոս քահանայի առաջարկածը. այդ կարող էր լինել դուցե մի ուրիշ տասրերեն սրինգների ժողովածու, որը թարգմանել է

Ներսես Լամբրոնացին։ Ցերկրորդ՝ յէթէ նուիրեալ ընդունենք, որ իրաք դա Ասորա–Հռոմէական Դատաստանագիրքն է, ապա այստեղից հետևում է, որ Ներսես Լամբրոնացին 1197 թ. կատարել է մի թարգմանութիւն, առանց դիտակ լինելու, որ այդպիսի թարգմանութիւն արդէն չատ առաջ գոյութիւն ուներ Մեծ Հայքում, որտեղ, մեր յիշեցեալ աղբիւրի համեմատ, տակաւին Մխիթար Գոշից առաջ, հետևապես առ առաւելն XI դ., արդէն այդ Դատաստանագիրքը գործածւում էր, քանի որ այդտեղից ոգեվել է Մխիթար Գոշն իր Դատաստանագիրքը հրատարակելիս, այն է՝ 1184 թ.։ Ընդամէնը բնորոշ է, որ Ներսես Լամբրոնացին մխածմանակ տեղեկութիւն չունի, որ Մեծ Հայքում, արդէն իրենից 14 տարի առաջ, հրատարակել է Մխիթար Գոշի Դատաստանագիրքը։ Վերջապես, ինչպես նախորդ դէպքում ակնարկեցինք, նոյն Լամբրոնացին թարգմանում է, համաձայն իր հիշատակագրի, Մովսիսական որէնքները, որոնք վաղուց մուտք էին գործել Հայաստան ու թարգմանված էին։

Այս նկատառումներով չի կարելի Ասորա–Հռոմէական Դատաստանագրքի ընդհպիան ու թարգմանութիւնը կապել բացառապես Ներսես Լամբրոնացու անձի հետ։ Լավագոյն դէպքում նա կարող է համարվել մի հետագա թարգմանիչ, որը պատահար չի ունեցել նախորդ, աւելի հին թարգմանութեան, ինչպես և այդ Դատաստանագրքի աւելի հին ժամանակի ընդհպման մասին։ Ասորա–Հռոմէական Դատաստանագիրքն ինքնին չատ հին ծագում ունի, հար ու նման Մովսիսական որէնքներին, մանաւանդ՝ Թալմուդական իրաւունքին։ Նա աւելի հին ծագումն ունի, քան հունա-բիւզանդական որէնքները։ Ինչպես ասինեաև և Լանդոնի Թանգարանում գտնվող այդ Դատաստանագրքի առաջին բնագրից, նա գրված է 510—520 թ. թ.։ Այդ որինակը, ըստ Բրունսի կարծիքի, հավանորէն 476—477 թ. թ. գրված կաղապարի պատճենն է։ Ահա այդ հնութիւնը, որ հասնում է V դարին, ինչպես և նրա հատարակաց տարածումը Փոքր ու Առաջաւոր Ասիայում, յիշեցրել են տալիս, որ այդ Դատաստանագիրքը համենայն դեպս մի՛չ թե XII դարում, այլ անհամեմատ աւելի վաղ պետք է մուտք գործած լիներ Հայաստան։

Անտարակոյս, այս կնճռոտ հարցի լուսաբանութիւնն և

վերջնական լուծումը հնարավոր և միայն թե՛ հայերեն և թե՛ ասորերեն պրչագիր սրինակների հիմնավոր բաղդատութիւնից ու համեմատական ուսումնասիրութիւնից յետոյ:

3· ՀՌՈՄԵՑԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.—Զգալի դեր է խաղացել նաև հռոմեական իրավունքը հին Հայաստանի իրավական հարաբերութիւններում: Այդ սկզբ և առնում այն ժամանակից, երբ Արշակունյաց հարստութեան անկումով՝ Հայաստանը 387 թ. և ապա 428 թ. բաժանվում է Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև:

Այսպես մասնատված Հայաստանը՝ Բյուզանդական կամ արևմտյան, ու Պարսկական կամ արևելյան, սոսկում են հետապայում քաղաքական և կուլտուրական զարգացման տարբեր ուղիներ, վարել իրավունքն ու օրենքը նոր պայմաններին համապատասխան ընթացքով են տարվում: Տիրող ընդհանուր նախադարական իրավունքն սկսում է քայքայվել ու այսպես թե այնպես համակերպվել մի կողմում՝ բյուզանդական, իսկ մյուս կողմում՝ իրանական սոցիալ–քաղաքական դրծոններին: Բյուզանդիայի կողմից անձնեքսիայի յենթարկված արևմտյան Հայաստանը կցվում է Փոքր Հայքին, վոր չատ հնուց, տակավին Արշակունիներից առաջ, միացված էր կայսրութեանը և, կարելի է ասել, արդեն հռոմեական էր: Անձնեքսիայի միջոցով գրավված Հայաստանն իսկապես Մեծ Հայքն էր, վորի չորքն էլ տեղում բազմադարյան սուր մրցումը յերկու քաղաքական ուժեղ ախոյանների՝ Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև, մինչև վոր նրանք բաժանեցին այդ յերկիրը: Ահա Մեծ Հայքի այն մասը, վոր ընկավ բյուզանդական կայսրների իշխանութեան ներքո, իր պետական–վարչական կառուցվածքով ու իր վասալական կախումով կայսրներից՝ ներկայացնում էր յերկու տերիտորիալ հասկած, վորոնք կոչվում էին՝ ա) Հռոմեական Մեծ Հայք— Armenia magna, կամ Ներքին Հայաստան—Armenia interior, դա իսկապես Բարձր Հայքն էր, և բ) Gentes, կամ հայկական սատրապիաներ, այն է՝ հինգ ինքնավար իշխանութիւններ (նախարարութիւններ) — Ճանճխք, Անձևդ տուն, Հաշտյանք, Մեծ Ծոփք, Փոքր Ծոփք, Բալահովիտ: Armenia magna–ն կամ Բարձր Հայքը կառավարվում էր հատուկ կայսերական տեղակալով, վոր կոչվում

եր comes Armeniae, իսկ հինգ սատրապութիւնները անմիջորեն ենթարկվում էին կայսրներին, երրև վասսալներ: Այս չերկու չերկրամասերը՝ Մեծ Հայքը — Armenia magna (interior) և սատրապութիւնները չէին հանդիսանում provincia հռոմէական իրաւաքմբնմամբ, այսինքն պետականութեան միացրած չերկրներ, քնակիչները չէին համարվում հռոմէական քաղաքացիներ, հռոմէական իրաւունքն ու որենքները այստեղ նշանակութիւն և ուժ չունէին: Տեղական չերկրային իրաւական ինսթիտուտները, քնիկ սովորութիական իրաւունքը շարունակում էին ամբողջովին տիրապետել հասարակական-իրաւական հարաբերութիւններում, ուր հայ նախարարներն իրենց ձեռքում կենտրոնացրած ունէին վարչական ու իրաւական – դատական ֆունկցիաներ[38]: Այս իրաւական դրութիւնը շատ քիչ փոփոխումներով տևում է մինչև Հուստինիանոս կայսրի թագավորումը (527—565 թ.թ.):

Բյուզանդիոնի քաղաքական վարքագիծը, այն է՝ ապաղբայնացնելու ենթակա Հայաստանն ու համաձուլելու Հայութիւնը Հռոմէականութեան հետ, մի առանձին թափով և չերևան գալիս Հուստինիանոս կայսրի ժամանակ: Բյուզանդիոնի որենսդրական գործունեութիւնն սկսում է տարածվել նաև Հայաստանի վրա, հռոմէական որենքներն ու իրաւունքը մտցվում են այստեղ ի կիրառումն՝ տիրող հայ իրաւունքի փոխարեն: Այդ նպատակով Հուստինիանոսը հրապարակում է դեկրետային կարգով հատուկ որենքներ: Առաջին հերթին 528 թ. մի դեկրետ՝ c. I. I, 29,5 «Imp. Iustinianus A Zetae viro illustri magistro militum per Armeniam et Pontum Polemoniacum et gentes», որով սրմատական փոփոխման եր ենթարկվում Հայաստանի դինվորական ուժը: Բացառ վերացվում եր նախարարների ու տեղական հայ իշխանների դինվորական իշխանութիւնը, որն այնուհետև կենտրոնանում եր կայսրի կողմից նշանակված հատուկ դինվորական հրամանատարի՝ magister militum-ի ձեռքին: Մի փոքր հետո Մեծ Հայքում նաև քաղաքացիական-վարչական իշխանութիւնը կենտրոնացվում և այսպես կոչված Praeses-ի անձնավորութեան մեջ: Սակայն 536 թ. Բյուզանդիոնին ենթակա Հայաստանը պետական-վարչական կողմից ամբողջովին ենն-

թարկվում և փոխոխման, վորով սեղական ֆեոդալ իշխանները զրկվում են նաև իրենց քաղաքական-վարչական բոլոր իրավունքներից: Հուստինիանոսի XXI Novella- ով «Περὶ διατυπώσεως τῶν τεσσάρων ἀρχόντων Ἀρμενίας» («Հայաստանում չորս կառավարիչներ հաստատելու մասին») ամբողջ Հայաստանը բաժանվում է չորս անջատ նահանգների, վորոնք, իբրև provincia-ներ, ունենալով կայսրների կողմից նշանակված հատուկ զինվորական ու քաղաքացիական իշխանություններ, մտցվում էին հանուր պետական կազմին: Այս ակտերով Արևմտյան Հայաստանը մտնում եր հռոմեական իրավունքի ու օրենսդրության չրջանակների մեջ և վերացվում եր տեղում գործող գարավոր նախարարական իրավունքը: Այդ քաղաքականությունն իրագործվում եր նաև մի շարք հրապարակված նովելլաներով: Հուստինիանոսը 535 թ. հրապարակում է Edictum III—«Հայ ժառանգական իրավունքի մասին՝ „De armeniorum successione"—Περὶ τῆς τῶν Ἀρμενίων διαδοχῆς", իսկ 536 թ. XXI Novella—„De armeniis, ut et illi per omnia Romanorum leges sequantur" —«Περὶ Ἀρμενίων ὥστε καὶ αὐτοὺς ἐν πᾶσι τοῖς Ῥωμαίων ἀκολουθεῖν νόμοις («Հայերի մասին, վոր նրանք այսուհետև ամեն բանում ղեկավարվեն հռոմեական օրենքներով»), վորով մի ակ գործող իրավունքը Հայաստանում ճանաչվում եր հռոմեականը: Անտարակույս, հռոմեական օրենքների այս ձևի տարածումը Հայաստանի վրա չի կարելի ռեցեպցիա համարել: Այստեղ տեղի չի ունենում վոչ թե մի ժողովրդի կողմից ուրիշ օրենսդրքի վերամշակումն ու յուրացումն, այլ մի ժողովրդի կողմից ուրիշ օրենսդրքի վերամշակումն ու յուրացումն, այլ մի ժողովրդական միացումով ընդհանուր պետական տերիտորիային՝ կատարվում է նաև նրա իրավական կարգերի վերափոխումն ու ենթակայությունն ընդհանուր պետության օրենսդրությանը: Մյուս կողմից՝ նկատում ենք մի բնորոշ երևույթ, վոր նույնպես վկայում է ամբողջ դեպքում ռեցեպցիայի բացակայությունը: Այդ հռոմեական իրավունքը, տարածվելով Արևմտյան Հայաստանի վրա, դուրս չի գալիս նրա սահմաններից, նա չի թափանցում ու փոխադրվում Արևելյան, այսինքն՝ պարսկական Հայաստան, վոր շարունակում եր ղեկավարվել սեղական նախարարական իրավունքի նորմերով: Հռոմեական իրավունքի այդ սահմանափակումը Բյուզանդական Հայաստանի

ընդհանուրների և նրա անդորրությունը տարածվելու մյուս մասերում՝ պետք է բացատրել հետևյալ հանգամանքներով:

Ընդհատ, որ Բյուզանդիոնն ու Պարսկաստանը փոխադարձ համաձայնությամբ բաժանել էին Հայաստանն իրենց միջև, այնուամենայնիվ այդ երկու պետությունների մրցումն ու հակամարտությունը հայկական աերիատրիայի շուրջը, որ իր բուֆերային դիրքով կարևոր առևտրական և մանավանդ տարատեղիական տարանցիկ կետ էր հանդիսանում, չէին դադարում և ներքուստ միշտ վառ էին մնում: Ուստի Սասանյան Պարսկաստանն իր ամբողջ տիրապետության ժամանակաշրջանում (428—654 թ.թ.) ամեն տեսակ խոչընդոտներ ու պատնեշներ էր ծառայեցնում Հայաստանի յերկու հատվածների փոխադարձ հարաբերություններում: Այդ նպատակը նպաստում էր նաև Մեծ Հայքի արևելյան մասում տիրապետող դասակարգի՝ հայ նախարարների մեծամասնության պրոպարսկական կողմնորոշումը, որ հետզհետե ավելի ուժ ստացավ հայ յեկեղեցու աղգայնացումով ու ֆեոդալական հասարակության մեջ հիերոկրատիայի ձևոք բերած մեծ ազդեցությամբ: Մենք վերը նշել ենք, որ հենց այս ժամանակաշրջանում Հայաստանի որևնգրական ու դատաիրավաբանական գործունեությունը կենտրոնանում է հիերոկրատիայի ձեռքին, հենց այս շրջանում պարզանում և հայ կանոնական իրավունքը, որը, բնական չխախտելով տիրող նախապրատական իրավունքի ուժը, վերջինիս հետ մրցման մեջ էր ու արդելակում հռոմեական իրավունքի մուտքը դեպի Արևելյան Հայաստան:

Պետք է ավելացնել նաև մի այլ կարևոր հանգամանք: Հռոմեական իրավունքը, Արևմտյան Հռոմեական կայսրության անկումից հետո (476 թ.), իր հիմնական ղրությունների վերականգնում է Արևելյան Հռոմեական կայսրության մեջ և կազմակերպվում է Հուստինիանոս կայսրի ձեռնարկությամբ հրապարակված Corpus juris civilis-ի հրապարակումով: Այդ հռոմեական իրավունքը Բյուզանդական կայսրության խաչատրդեռ սոցիալ-տնտեսական պայմաններում չէր համապատասխանում իր հիմնական դծերով այսպես տիրապետող հերետիական կուլտուրային:

Այդ իրավունքն, որ ենթադրվում է միակ դործողն ամբողջ կայսրության մեջ, չպահպանվեց այստեղ, վերացավ հասարակության իրավահավասարության մեջ, մանավանդ ասիական հպատակ յերկրներում: Հռոմեական իրավունքը, չնայած վերոհիշյալ նովելլաներին ու եդիկտներին, թեև ձևականորեն հաստատվում եր իպարտադիր կիրառման Բյուզանդական Հայաստանում, այնուամենայնիվ իրականում նա խորթ մնաց այստեղ տիրող սոլորության իրավունքին և ազդեցություն չունեցավ ժողովրդի իրավաբանության վրա: Այսպիսի պարադաններում ինքնին հասկանալի է, որ հռոմեական իրավունքը չեր կարող ներդործության ունենալ ու ռեցեպցիայի առարկա դառնալ նաև Պարսկական Հայաստանում, որտեղ խիստ կենտրոնացած եր ու չափազանց եր իր պատմական դերը խաղալ հայկական ազդային կուլտուրան:

Հետևապես, հուստինիանական չրջանի հռոմեական օրենքները չեն կարող համարվել հայ իրավունքի աղբյուր և այդ տեսակետից նրանք մեզ համար նշանակություն չունեն: Բայց և այնպես, նրանք հայ իրավունքի նկատմամբ ստանում են որոշ արժեք այն չափով, ինչ չափով Հայաստանի վերաբերյալ հուստինիանոսի հրատարակած նովելլաններն ու եդիկտներն իրենց բացատրական դերբաղվորումով դեպի տեղական հայ կենցաղը՝ հիմք են տալիս դրսևորելու բնիկ հայ իրավունքի բնորոշ գծերը, որոնց մասին մեզ այլ պատմական տվյալներ չեն հասել:

Պարսկական Սասանյանների անկումով և արաբների տիրապետությամբ Հայաստանում (654—859 թ. թ.) Պարսկաստանի ու Բյուզանդիոնի միջև գոյացած պատնեշները մի ժամանակ չարունակում են պահպանվել արաբների կողմից: Սակայն, չնորհիվ զարգացող առևտրա-վաչխատուական կապիտալի ու սրան հարակից տրանզիտային առևտրի, այդ խզող խոչընդոտներն սկսում են թուլանալ և Բագրատունյաց Թագավորության չրջանում (887—1045 թ. թ.), յերբ, արդեն որոշ չափով վերականգնում է հայ քաղաքական կյանքը, նույն իսկ վերանում են: Ահա այս ժամանակաշրջանում հռոմեական իրավունքը Բյուզանդիայի սահմաններից սկսում է թափանցել Հայաստան և հնարավոր դառնում է

ռեցեպցիայի առարկա: Սակայն այդ հռոմեական իրավունքն այլևս նախկին կլասիկ հուստինիանականը չէր, որ հիմքեր դնել հելլենական կուլտուրայով սնված Բյուզանդիայի հասարակության իրավահայեցողության մեջ: Նմանապես Հայաստան մուտք գործող հռոմեական իրավունքը չի հանդիսանում հետագայում Մակեդոնյան կայսրների (867—1042 թ. թ.) վերակենդանացրած հուստինիանական իրավունքը, այսպես կոչված Բազիլիկյան իրավունքը, այլ հանդիսանում է մեկ այն Բյուզանդիոնի Իսավրյան թագավորների (717—867 թ. թ.) որենսդրական գործունեությամբ առաջացած իրավաբանական կոդեքսները:

Իսավրյան կայսրների որով Բյուզանդիան ապրում է մեծ ռեֆորմների մի շրջան, հարուստ ներքին հասարակական-կուլտուրական պայքարով (պատկերամարտություն և այլն), ուր ցայտուն կերպով չեզնան և դալիս նաև հուստինիանական հռոմեական իրավունքի անհամապատասխանությունն ու անկայունությունը և զարկ և տալիս իրավունքի բարեփոխման գործին: Իսավրյան հենց առաջին թագավորներ՝ Լեվոնն ու Կոստանդինը ձեռնամուխ են լինում նոր որենսդրության և կազմում մի նոր կոդեքս, որը հայտնի է Ἐκλογή կամ Ecloga («Ընտրություն») անունով ու հետագայում հետզհետե լրացվում և դանազան հավելումներով: Այդ վերափոխված բյուզանդական իրավունքի նոր սիստեմը կառուցված եր հունական տեղական սովորույթների ու ժողովրդական իրավահայեցողության վրա, մի բան, որ ո՛չ մեկն համապատասխանում եր Բյուզանդական կայսրության մեջ տիրող հունների կենցաղին ու հասարակական հարաբերություններին, այլև վորոշ չափով համակերպվում եր նաև հարակից ժողովուրդների իրավաբանական կենցաղին, վորոնք երենց սովորութական իրավունքով այնքան էլ չատ չեյին տարբերվում հույներից: Նույնը կարելի է ասել նաև հայերի վերաբերմամբ: Իսավրյան կայսրների ժամանակաշրջանի հունա-բյուզանդական իրավունքը, նեկա իրավաղիտության մեջ Ecloga կոչվող իրավունքը, հայերին ավելի մոտ եր ու համապատասխանող, քան թե նախորդ, միանդամայն անհարիր հռոմեական իրավունքը՝ Հուստինիանոսի Corpus juris civilis-ը:

Ահա այդ Իսավրյան հունա-բյուզանդական իրավունքն է մուտք գործում Հայաստան և վարչ չափով, ուրեմն, հանդիսանում է նաև հայ իրավունքի աղբյուրը: Որենսդրքերի հայկական ձեռագրերում առայժմ հայտաբերված են հետևյալ հունա-բյուզանդական որենքների քաղվածք-ժողովածուները.

Ա. «Ընտրութիւն հատառոյ աւրինացն քաղաքական Լևոնի և Կոստանդեայ իմաստուն և բարեպաշտ թագաւորացն, զոր և մեծն Յուստինիանոս նորոգեաց զկարգն ուղղեալ 'ի բարեպաշտութիւն»: Սա Իսավրյան Լևոն և Կոստանդին կայսրների կազմած Եկլոգայից քաղվածք է, տեղ-տեղ վոփոխման ենթարկված:

Բ. «Աւրինադրութիւն Եւրինեայ թագուհւոյ, մօր Կոստանդեայ վասն զղուշանալոյ երդմանց ըստ պատուական Տեառն հրամանի»: Սա Թարգմանություն է կայսրուհի Իրենեյի (797—802 թ. թ.) հրապարակած Novella-ի՝ De testium juramento, վոր վերաբերում է վկաների ու վկայությունների մասին սահմանված կարգերին:

Գ. «Յօրինացն Յուստին [իա] նոսէ զլուխ ԲԺ. վասն պատուելոյ թագաւորացն և իշխանացն զկանոնս եկեղեցւոյ և զորս 'ի նոսա զսահմանադրութիւնն». Հոդվածները քաղված են Հուստինիանոսի 83-րդ և 123-րդ Novella-ներից, վորոնք յեկեղեցական բնույթ ունեն և վերաբերում են պետական-յեկեղեցական իրավունքին:

Դ. «Համառօտ ժողովումն աւրինաց վերստին». բաղկացած է հունա-հռոմեական 85 հոդվածներից, վորոնց համապատասխան բնագիրը տակավին գտնված չէ[39]:

Ե. «Սահման զինուորութեան և ահարկութեան 'ի քաղաքական աւրինացն և կարգէ հատատութեան», վորի զլուխների ցանկն և ներկայացնում «Վասն զինուորաց սահմանադրութիւն» խորագիրը, զետեղված առաջին վերնագրի սկզբին: Բաղկացած է 56 հոդվածներից, վորոնք թարգմանություն են Νόμος στρατιωτικός խորագրով զինվորական որենսդրությունից, վորը հունա-բյուզանդական որենսդրական ժողովածուներում դրվում է իբրև III հավելված Ekloga-ի[40]:

Զ. «Վասն աստիճանաց ազգականութեան». 7 հոդվածներից

և բաղկացած. ըստ Յ. Կարսաւի կարծիքի՝ դա աղճատված Թարգմանութիւն է Prochiron auctum օրինադրքից[41]:

Հարց է ծագում վերևում բերված օրինադրութիւնների ռեցեպցիայի ու Թարգմանութեան ժամանակի մասին, քանի որ այդ հավաքածուների հայերեն ձեռագրերը դրա մասին վոչ մի տեղեկութիւն չեն տալիս:

Պետք է յենթադրել, ինչպես նաև Յ. Կարսաւն է կարծում, որ այդ հունա-բյուզանդական օրենքների ռեցեպցիան սկսվել է Բագրատունյաց Թագավորութեան շրջանում: Այդ հավանական է, յեթե ի նկատի առնենք, որ հենց այդ ժամանակաշրջանում քաղաքական ու առևտրական հարաբերութիւնները Բյուզանդիայի և Հայաստանի միջև մեծ աշխուժութեան էին հասել և, մանավանդ, հենց այդ ժամանակաշրջանում Բյուզանդիոնը վերսին սկսել էր իր դավերն ու մեքենայութիւնները հայկական տերիտորիան կլանելու նպատակներով: Այդ տեսակետից բնորոշ է, որ հայ միջնադարի պատմական մատենագրութեան, մանավանդ վիմական արձանագրութիւնների մեջ հանդիպում է հայ իրավական ինստիտուտների և յերևույթների հունա-բյուզանդական տերմինաբանութիւն: Գոյութիւն ունեցին մի շարք վարչական ու պետական պաշտոններ ու կոչումներ, որոնք սովորաբար տիտղոսավորվում էին համապատասխան հունա-հռոմեական անուններով, ինչպես օրինակ՝ դուկ, կոմես, մագիստրոս, հիպատոս, ապոհիպատոս, սպատար, կատապան և այլն: Այնուհետև, այդ տերմինաբանութիւնը կարող էր մուտք գործել Հայաստան վո՛չ թե XII դարից սկսած, յերբ հունա-բյուզանդական քաղաքական եքսպանսիան հայկական տերիտորիայի վրա սրդեն զարգացել էր, և ինքը՝ Բյուզանդիոնը ոգմա-կանորեն ու քաղաքականորեն ապրում էր իր քայքայման շրջանը, այլ IX դարից, յերբ նա արաբական խալիֆաթի թուլանալու հետևանքով ավելի ակտիվ քաղաքականութիւն էր վարում Բագրատունյաց Հայաստանի նկատմամբ: Այս քաղաքական ու առևտրական պայմաններում առաջանում էին հարմար հնարավորութիւններ հունա-բյուզանդական օրենքների ռեցեպցիայի համար:

Յեթե հիմնավոր ավյալներ չունենք հունա-բյուզանդական

*որենքների ընդհանրացման IX—X դարերից հետամնացություն, ապա մեզ հասել է մի հետաքրքիր վկայություն այդպիսի ուշ թարգմանության մասին XII դարի վերաբերմամբ: Այս պարագան շատերին հիմք է ծառայել պնդելու, որ հունա-բյուզանդական իրավունքի ընդհանրացման Հայաստանում չէր կարող XII դարից առաջ տեղի ունենալ: Այդ վկայությունը բղխում է Կիլիկիայի հայ յեպիսկոպոս Ներսես Լամբրոնացուց: Սա իր հիշատակարանի մեջ, որ կցված է ոսկեր որենսդրությունների կազմված թարգմանական հայ որենսդրքի ձեռագրին, ի միջի այլոց գրում է. «Զայս ծայրագոյն աւրինադրութիւնքս ոսկեայ եպիսկոպոս Տարսոնի թարգմանեցի՝ ի ծերացեալ հիւանդէ մատենէ, թուին ՈՒԽԵ [645 թ. հայկական, իսկ մեր ներկա թվականով՝ 1196 թ.] Նոյեմբերն ամսոյն Լուսաւոյ»: Այնուհետև հիշատակելով ասորական մի որենսդրքի թարգմանության մասին, շարունակում է. «Ձեզ որոյ ապա՝ի հիւանդացոյ զրոց արարի թարգմանութիւն Մովսիսական աւրինաց և Լևոնի և Կոստանդեայ աւրինացդ, ՝ի նմանէ թարգմանեցի և զինուորական աւրէնդրէ և ընծայեցի որոց սիրեն վարիլ սովաւ և հաճոյ գոսնել Աստուծոյ և կատարիչք քաղաքաց և գաւառաց»[42]:*

*Այդ հիշատակարանից բացահայտ է, որ Ներսես Լամբրոնացին 1196 թ. թարգմանել է, բացի Ասորական գաւառական որենքերից ու Մովսիսական որենքներից, նաև Լևոն և Կոստանդին թագավորների որենքները, այսինքն Ecloga-ն և ապա «զինվորական որենքը», որը կոչվում է Νόμος στρατιωτικός: Սակայն այդ վկայությունը, որով իրոք հաստատվում է յերկու հունա-բյուզանդական որենսդրքերի թարգմանությունը XII դարում, բնավ չի կարող կասկած հանդիսանալ յեզրակացնելու, որ ընդհանրապես հունա-բյուզանդական որենքների մյուս հավաքածուները և նույնիսկ Ecloga-ն, հիրավի, բացի զինվորական որենքից, չեյին կարող մուտք գործած լինել Հայաստան ու թարգմանված XII դարից առաջ: Այդ յենթադրությունը հիմնում ենք Ներսես Լամբրոնացու նկատմամբ վերևում մեր արտահայտած կարծիքի վրա, որ նա թարգմանություններ և կատարել Կիլիկյան հայ թագավորության մեջ, միանգամայն անպիտակ լինելով Մեծ Հայքում դոյություն ունեցող որենս-*

դրությունների ժողովածուների ու հայ դատաստանագրքերի մասին: Ինչպես որինակ՝ նա դաղափար չուներ Մեծ Հայքում Մխիթար Գոշի Դատաստանագրքի հրաինման մասին:

Իր հիշատակարանում Ներսես Լամբրոնացին ընդգծում է, վոր Կիլիկյան հայ թագավորության սահմաններում բացակայում էին աշխարհիկ հայացրած որենքներ ու դատավարության կանոններ. «ոչ ունէին դիրս, որով ընտրեսցին դիրաւունս, զոր և այլոց ազգաց տեսանէին»: Ուստի նա ձեռնամուխ է լինում թարգմանելու վերոհիշյալ որենդիրքը, վորպեսզի դոցվի այն մեծ թերությունը, վոր այնքան զգալի էր Կիլիկյան հայ պետության իրավաբանական կյանքում: Մի չարժառիթ, վոր միանգամայն բնական էր դարձնում այնտեղ ոտար որենքների, մասնավորապես հունա-բյուզանդական որենդրությունների, ռեցեպցիան:

Սակայն աչքաթող չանենք, վոր մի դար առաջ, սկսած IX դարից, Մեծ Հայքում գոյություն ուներ ավելի մեծ պետական կազմ, այն է՝ Բագրատունյաց Հայաստանը: Այստեղ պետական-վարչական ֆունկցիաները, ֆեոդալական-հասարակական վարթաժ չինաբարությունը, զարգացող առևտրական հարաբերությունները, ծաղկող բաղմաճյուղ արհեստները, աճող ու հարըստացող քաղաքները, վերջապես ֆեոդալական շահագործման միջոցները՝ նույնպես մեծ չափերով անհրաժեշտություն էին դգալու համապատասխան իրավաբանական նորմերի, հատկապես աշխարհիկ որենքների, վորոնք հայ որենդիր գործոնների բացակայության պատճառով՝ չէին հորինվել տեղում: Բնական է, վոր այդ բավականին բարդացած հասարակական-պետական հարաբերությունները կթելադրեին գեթ ոչովելու համապատասխան ոտար որենքներից ռեցեպցիայի միջոցով: Վոր իրականում այդ ժամանակ չեղել է այդպիսի ոտար ռեցեպցիա, այդ կարելի է ապացուցել զարուցվի ավյալներով, հիմք առնելով Մխիթար Գոշի Դատաստանագրքի II մասի «Աշխարհական որենքների» առաջին գլուխը՝ «Յաղագս դատաստանաց Թագաւորաց և որք ընդ ձեռամբ նոցա»: Այստեղ Մխիթար Գոշն արծարծում է հայ պետական-վարչական իրավունքը, վորի իրավաբանական նորմերը նա չէր կարող վերցնել իր ժամանա-

կակից իրականութիւնից, քանի վոր այլևս դոյութիւն չուներ հայ պետականութիւնը: Թագավորի ու իշխանների իրավունքները, պետական– վարչական իրավասութիւններն և այլ նման իրավական ինստիտուտները Դատաստանագրքի հեղինակը ձևավորում է իրավաբանորեն, անշուշտ, ի նկատի առնելով նախկին հայ պետականութիւնն, այսինքն Բագրատունյաց Հայաստանը, վոր ժամանակագրորեն իրեն ավելի մոտիկ եր և վորն, անտարակույս, ունեցել է այդ նպատակին ծառայող վորոշ իրավաբանական նորմեր, վորոնք պահպանված կլինեին տեղական ավանդութիւններում: Հերավի, Մխիթար Գոշի Դատաստանագրքի այդ ընդարձակ հոդվածը (II, Ա. էջ 299—319) վորոշ չափով կրում է ոտար ռեցեպցիայի աղբյուրների հետքեր, մասամբ Մովսիսական որենքների և մանավանդ հունա–բյուզանդական որենադրութիւնների, վորոնք վերաբերում են թագավորի իշխանական իրավասութեանը:

Այսպես թե այնպես չի կարելի ժխտել, վոր հռոմեական իրավունքը, հատկապես հունա–բյուզանդական իրավունքը, մուտք է գործել Հայաստան և աղբյուր է հանդիսացել հայ իրավունքի զարգացման: Թեև համանական յենթադրութեամբ վորձում ենք հաստատել, վոր այդ ռեցեպցիան սկիզբ է առնում IX դարից, այնուամենայնիվ այդ կնճռոտ պրոբլեմը վերջնականորեն լուծված չենք համարում: Այդ հարցի դրական լուծումը կարող է տալ համապատասխան ձեռագրերի ուսումնասիրութիւնը, վոր ցարդ սպասում է իր հետազոտողներին: Մի կողմից՝ զանազան վերնագրերով ու խմբագրութիւններով մեզ հասած հունա–բյուզանդական որենքների հայկական ձեռագրերի պատմա – լեզվափիլիսական համեմատութիւնը, և մյուս կողմից՝ հայ թարգմանութիւնների և հույն բնագրերի վերջապես համեմատութիւնները մեզ շատ բան կպարզաբանեյին:

## V. ԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԵՐ

Պատմական տվյալներն և մանավանդ Մխիթար Գոշի վկայութիւնը մեծ հայքի նկատմամբ ու ներսես Լամբրոնացու հիշատակարանը կիլիկյան հայ թագավորութեան վերաբերմամբ հատատում են, վոր մինչև XII դարը դոյութիւն չի ունեցել

ազգային օրենսդիրք, հայկական կոդեքս: Միակը՝ կանոնական իրավունքն եր, վորը կարելի յե ասել, կոդիֆիկացիայի յեր յենթարկվել VIII դարում ու դրծում եր իբրև ղրի առնված, վորոշ համաղրութիյամբ կազմված օրենսդիրք, բայց սա ել իր իրավաբանական բովանդակութիյամբ սերտորեն կապված եր հիերոկրատիայի իրավասութիյան, յեկեղեցական ֆեոդալականութիյան հետ:

Միայն XII դարումն է սկիզբ առնում և իրականանում ազգային օրենսդիրք հավրինելու ձգտումը: Հայաստանի ժամանակակից քաղաքական ու սոցիալական պայմանները սուր կերպով թելադրում եյին կատարել այդ վճռական քայլը, հավրինելով հայկական օրենսդիրք, վորի անհրաժեշտութիյունն ղգացվում եր վաղուց և անորոշ արտահայտումներով դեղերում եր տիրապետող հասարակական դասակարգերի դիտակցութիյան մեջ: Այդ դատաստանագրքերը մի-յերկու անուն են, բայց բավականաչափ ձեռագրերով, և կազմվել են այն աղբյուրների ուղտագործումով, վորոնք միրը տեսութիյան առանք: Հետևապես այդ դատաստանագրքերի հետազոտութիյունը մեզ հնարավորութիյուն և տալիս պարզելու ընդհանրապես հայ իրավունքի աղբյուրները, վորոնց մասին մեզ թերի պատմական տեղեկութիյուններ են հասել: Մյուս կողմից ել՝ այդ դատաստանագրքերը հենց իրենք դառնում են հայ իրավագիտութիյան համար աղբյուրներ, վորոնք հնարավորութիյուն են տալիս թե՛ վերականգնելու հայ իրավունքի պատմութիյունը և թե՛ պատկերելու հայ իրավունքի բովանդակ սիստեմը: Այդ՝ տեսութիյան առնելիք հայ դատաստանագրքերը:

1. ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱԼԱՎԿԱ ՎՈՐԴՈՒ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ.—Այդ Դատաստանագիրքը բաղկացած է 98—100 հոդվածներից· այն կազմել է Դավիթ վարդապետը, ծագումով Դանձակ քաղաքից, իր ժամանակ ըստ յերևվութին մեծ հեղինակութիյուն վայելող անձն, լինչպես այդ ակներև է Կիրակոս Դանձակեցու պատմութիյունից: Դատաստանագրքի հավրինման վրա շշակի տարեթիվը մենք չունենք, բայց գիտենք, վոր Դավիթ վարդապետը վախճանվել է 1140 թվին, իսկ այդ Դատաստանագիրքը կազմած պետք է լինի նույն դարի 30-ական թվականները:

նելին[43]: Այդ Դատաստանագիրքը դեռևս ապագրված չէ, վոչ էլ ուսումնասիրված: Մեր գրականության մեջ կան միայն մի քանի կցկտուր տեղեկություններ և մի փոքր մանրամասն, վոչ իրավաբանական, այլ մատենագրական ուսումնասիրության տորձ՝ Կ. Կոստանյանի: Հնարավորություն չունենալով անմիջապես այդ Դատաստանագրքի մեզ հասած սակավաթիվ ձեռագրերից ոգտվելու, մենք նկատի կենք ունեցել լույս տեսած տպագրական տեղեկությունները, վորոնք, իհարկե, բավական չեն նրա մասին լրիվ դաղափար կազմելու համար:

Ալավկա վորդի Դավթի այդ հավաքածուն, իսկապես, չի կարելի դատաստանագիրք, ևս առավել որենսգիրք անվանել, ինչպես այդ յեղրակացնելու յե նրա բովանդակությունից ու վերնագրից, վոր արձանագրված է այսպես. «Դավթի վարդապետ Ալավկայ որդի, որ գրեաց զկանոնական օրինաց գրութիւնս դեղեցկայարմարս և պիտանացուս 'ի խնդրոյ քահանայի միոջ, որում անուն եր Աբգարյութիւն 'ի քաղաքէն Գանձակայ»: Ըստ յերևության, այն կազմված է հայ կանոնական նորմերի հիման վրա և մեծ մասամբ ներկայացնում է կանոնական նորմերի ու կարգերի մեկնություններ ու հրահանգումներ: Սակայն ի նկատի առնելով մի կողմից՝ վոր այդ առաջին փորձն է յեղել «կանոնական որենքների» մի հավաքածու կազմելու լինքնուրույն բովանդակությամբ, ուր տեղ են գտել նաև ամուսնական, պատժական իրավունքի վերաբերյալ նորմեր և մյուս կողմից՝ վոր այն վորոշ կիրառումն է ունեցել Հայաստանում, քանի վոր Մխիթար Գոշն յուր Դատաստանագրքի մեջ մուծել է մի քանի հոդվածներ[44], բառացի քաղելով այդտեղից, մենք Ալավկա վորդի Դավթի հորինած այդ ժողովածուն դասում ենք ազդային դատաստանագրքերի չարքը, իբրև կոդիֆիկացիոն աշխատանքի մի փորձ, թեև կատարված անհատական ձեռնարկությամբ և սահմանափակ չրջանակներով:

2. ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ.—Հայ իրավունքի պատմության ընթացում բացառիկ տեղ և դրավում «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրքը Հայոց», վոր բազմաթիվ ձեռագրերով հասել է մեզ: Ձեռագրերի քանակն, ինչպես և պատմական տվյալները վկայում են, վոր նա մեծ չափերով տարածված եր

Հայաստանի իրավական-դատական ասպարեզում, հանդիսանալով մեկ ուրենագիրքը, որ հայկական իրավունքի կոդեքսի հռչակ ես վայելում: Ինչպես ակնհայտ է Դատաստանագրքի վերնագրից, նաև նրա հորինողի խոսքերից (ՄԳ., Նախ. ԺԱ., եջ 69—75), հայկական անդրանիկ ուրենագիրքը կազմել է Մխիթար Գոշը: Բայց Մխիթար Գոշի իր մասին պատմածից Դատաստանագրքի Նախադրության ԺԱ. գլխում, նրա անձնավորության մասին տեղեկություններ և հաղորդում Կիրակոս Գանձակեցի մատենագիրը: Մխիթարը ծնվել է Գանձակ քաղաքում XII դարի կեսերին, յերբ ամբողջ Առաջավոր Ասիան, նաև Հայաստանը, գտնվում էր սելջուկյան հորդանների ավերածության ներքո: Փոքր հասակից ուսում առնելով՝ նա այնքան է համառում «յուսումն սուրբ գրոց», վոր հետագայում կուսակրոն հոգևորական է դառնում: Զբաղվականանալով իր ստացած ուսումով՝ նա չարունակում է կատարելագործվել աստվածաբանական և այն ժամանակվա փիլիսոփայական դիտությունների մեջ, դիմելով վարդապետներով հռչակավոր վանքերը, մինչև իսկ գնում է այդ նպատակով Կիլիկյան հայ թագավորությունը: Շնորհիվ ձեռք բերած գիտության ու մտավոր զարգացմանը՝ նա ստանում է վարդապետ կոչումն և ահագին հեղինակություն ու «մեծ վարդապետի» հռչակ է վայելում ժամանակակիցների չրջանում, մանավանդ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալական հասարակության: Նա ոչ միայն գիտական-կրթական ու մատենագրական գործունեություն է արծարծում իր նստած վանքերում, այլև վորոշ քաղաքական դեր է խաղում հայ իրականության մեջ: Մխիթար Գոշի այդ գիտական հռչակն էր, վոր թելադրեց Աղվանից Ստեփանոս Բ. կաթողիկոսին համառություն դրդելու նրան, վոր ձեռնարկի այնքան անհրաժեշտ ազգային ուրենագրքի հորինմանը: Կաթողիկոսի յերկար թախանձանքներից հետո Մխիթար Գոշը 1184 թ. ձեռնամուխ է լինում այդ գործին: Թե յե՛րբ ավարտեց Մխիթար Գոշն իր Դատաստանագիրքը, հայտնի չե, բայց հայտնի յե, վոր հեղինակը վախճանվել է 1213 թ. խորին ծերություն հասակում, ինչպես կարելի յե յեզրակացնել Կիրակոս Գանձակեցու խոսքերից:

Մխիթար Գոշի Դատաստանագիրքը բաղկացած է յերեք մա-

սից· Նախադրութիւն—11 դլուխ, Եկեղեցական կանոնք—12½ դլուխ և Աչխարհական որենք —130 դլուխ: Նախադրութեան Բ· դլխում Մխիթար Գոշը մի առ մի բացատրում է այն բոլոր չարժառիթները, վորոնք դրդել են նրան ձեռնարկելու մի այնպիսի դժվարին ու պատասխանատու գործի, ինչպիսին է հայ որենսդիրքը: Այդ չարժառիթները նա թվում է կարդով 12 կետերում, վորոնց ընդհանուր բովանդակութեան ամփոփումն ենք առաջ բերում այստեղ: Այդ կետերի մէջ կարմիր թելի նման անցնում է մի հետապնդող խորհրդածութիւն· հայերը մինչև այդ չեն ունեցել որենքների դրավոր ժողովածու, հայերեն Դատաստանագիրք, վորի հետևանքով առաջանում են բազմաթիվ անհարմարութիւններ ու չարիքներ· ուստի «կամեցաք 'ի դրոց հաւաքմամբ դրել զդատաստան, զի լիցի անշարժ ըստ նմանութեան օրինաց և մարդարէից և աւետարանին» (էջ 10)· 1) հայերը, զուրկ լինելով սեփական որենսդրութիւնից, ստիպված են դիմելու ուսաց, զլխաւորապես մահմեդական դատական հաստատութիւններին· Մխիթար Գոշի կարծիքով՝ ինչպես վոր հայերն իրենց կրոնով տարբերվում են մահմեդականներից, նույնպես էլ պետք է դատվեն իրենց որենքներով ու դատարաններով· «որպէս բաժանեալ եմք 'ի նոցանէ խոստովանութեամբ և հաւատովք և գործովք, նոյնպէս պարտ է և դատաստանաւ բաժանեալ լինել 'ի նոցանէ» (Նախ·, Բ·, 63)· 2) դրավոր որենքների բացակայութեան պատճառով մի կողմից՝ մեծ զրկանք է կրում ժողովուրդը, մատնված լինելով դատավորների կամայականութեանն ու կեղեքմանը, մյուս կողմից՝ հենց իրենք դատավորները, զուրկ լինելով ուղեցույց դատաստանագրքից, անկարող են չիտակ ու արդար դատավճիռներ կայացնել· 3) անհրաժեշտ է հայերի ազգային պատիվը պաշտպանել ուսարնեբի առաջ, վորոնք միշտ առիթ են ունենում մեզ նախատելու, թե չունենք սեփական դրավոր որենքներ, և ուրեմն մեզանում բացակայում է արդար ու չիտակ դատաստան:

Մխիթար Գոշի 12 կետերից բաղկացած պատճառաբանութիւնը (Նախ· Բ·, 9—15), վոր դրդել է նրան ձեռնամուխ լինելու հայ Դատաստանագրքի հորինմանը, թեև չարահյուսված և սխոլաստիկ ու մասամբ ճևաբանական վոգով, բայց և այնպես

չեշտը դնում և այն հանդամանքի վրա, որ մինչ այդ դեպքում չի ունեցել սեփական ազգային կոդեքս, որի անհրաժեշտությունն այնքան ուժեղ կերպով էր զգացվում: Հետաքրքրական է, որ այդպիսի տուրուններ ու դանդաղաններ չեն հնչում հայ մատենագրության էջերում, և ահա XII դարումն է, որ այդ լսում ենք Մխիթար Գոշի բերանից: Նույն այդ XII դարում Մեծ Հայքից հեռու, Կիլիկիայի հայ թագավորության մեջ էլ դժգոհության ձայն է բարձրանում հայկական աշխարհիկ որենսդիրք չլինելու մասին: Այդ բանն արձանագրում է Ներսես Լամբրոնացին. «Յամին քահանայապետութեան հայոց Գրիգորի ...թուին Թ[ոհ]— 642 [1193 թ.]... խնդիր եղև առ նոյն սրբազանն՝ի քաղաքաց և՝ի պատուոց բնակչաց քաղաքական աւրինացըն, զի որք իմացեալցուցն էին իշխանք և քաղաքս և դատաւորք, զդատ Հայաստանեայցս ոչ դատէին, այլ զինդրոյն իրաւանց առ իւրեանց աւրէնս առաքէին... եւ եկեալք ոսոխքն յեկեղեցին հարցանէին աւրէնս՝ի քահանայից և՝ի քահանայապետոց. զի ոչ ունէին զիրս, որով ընարեսցեն զիրաւունս, զոր և այլոց ազգաց տեսանէին քրիստոնէից և մահմետանաց»[45]:

Անշուշտ, հայ Դատաստանագրքի հրատարակ անհրաժեշտությունը XII դարում, որին ձեռնարկեց Մխիթար Գոշը, բղխում էր ամենի խոր պատճառներից, քան այդ չարահյուսում է Մխիթար Գոշը: Այդ անհրաժեշտությունը հասունացել էր այն սոցիալ-քաղաքական պայմաններում, որոնց մեջ ապրում էր Մեծ Հայքը:

Արաբական տիրապետության ժամանակաշրջանում, ինչպես հայտնի է, հայ հիերոկրատիան մեծաչնորհ դեր էր խաղում Հայաստանի քաղաքական կյանքում, ինչպես և իր ձեռքին էր պահում իրավական ու պատմական ինոտխոուսները: Բավական է հիշել, որ այդ շրջանում տեղի ունեցավ հայ կանոնական իրավունքի կոդիֆիկացիան: Բագրատունյաց թագավորության անկումով հայ ֆեոդալ իշխաններն ակսում են կազմալուծվել, անտնապես հյուծվել ու քաղաքականապես թուլանալ, մրցակից դրությունն իր գագաթնակետին և հասնում սելջուկների արշավանքի ու տիրակալության որով (1049 թ.): Այդ ժամանակվա պատմագիրները ամենամռայլ գույներով են ներկայացնում հա-

յաստանի վիճակը: Սելջուկյան հորդաների առաստաակումները, պերեվարությունը, սուրն և հուրը քամել էին ժողովրդի ֆիզիկական զոյությունը, ավերել անտեսությունը. ցիր ու ցան էին եղած նաև հայ Ֆեոդալները: Սրանցից կենդանի մնացած ու նոր բռնակալներից իրենց զոյությունը դնած իշխաններն ապավինել էին սելջուկան ամրոց- բերդերում, իրարից անջատ ու կղզիացած: Սակայն XII դարի յերկրորդ կեսից սկսած՝ Մեծ Հայքը, Վրաստանի ոժանդակությամբ և Զաքարե ու Իվանե հայ Ֆեոդալների ձեռներեցությամբ, թոթափում է սելջուկների լուծը: Կազմակերպվում է Զաքարյանների Ֆեոդալական լայնածավալ իշխանությունը, վոր ընդգրկում եր պատմական Հայաստանի մեծագույն մասը: Վերակենդանանում է անտեսական կյանքը, սկսվում է լայնածավալ շինարարություն: Համախմբվում է և բազմազգանում հայ Ֆեոդալականությունը Զաքարյանների սուլերեն իշխանության ներքո, կազմելով հզոր ու ամփոփ ազգային պետական միավորումն: Տնտեսապես ու քաղաքականապես վերակենդանացած հայ Ֆեոդալական դասակարգն իր տնօրինական տիրապետությունն այժմ հիմնավորում եր ազգային վոգով, ազգային գաղափարախոսությամբ, վոր բղխում եր նախորդ սելջուկյան շրջանում նվաճող –չահագործողների ու նվաճված– չահագործվողների միջև առաջացած ազգային ներհակությունից: Այժմ, յերբ հայ Ֆեոդալականությունը վերատին տիրացել եր իր նախկին իշխանությանն և իր ձեռքն եր առել իսկական արտադրողներին չահագործելու միջոցները, անհրաժեշտորեն թելադրվում եր այդ ամենը ձևավորել իրավաբանորեն, ամրապնդել իրավաբանական նորմերով, վորոնք արբազործված լինելին ազգային բնույթով ու հակադրվելին նախկին տեր նվաճողների չահերը պաշտպանող օրենքներին: Ահա Ֆեոդալական դասակարգի այդ տոզորումներն են, վոր անդրադարձել են Մխիթար Գոշի, ինչպես և իր ժամանակի հասարակական–քաղաքական դործիչների մտահայեցողության մեջ, ինչպես ուրիշներ՝ Ստեփանոս Օրբելի, վորի հորդորանքներով էլ իրականացավ հայ Դատաստանագրքի հորինումը: Հենց ինքը՝ Մխիթար Գոշն էլ իորթ չեր տիրապետող Ֆեոդալական դասակարգին. նա միշտ չեվոում եր այդ դասակարգի հետ, հեղինա-

կություն վայելում այնտեղ, և ինքն էլ նմանապես պատկանում էր հոգևոր ֆեոդալականությանը, վարելով վանահոր և այլ պաշտոններ: Հիրավի, Մխիթար Գոշի Դատաստանագիրքը մինչդամային ծառայում էր հայ ֆեոդալականության ազդային տենդենցներին՝ իր իրավաբանական նորմերի բովանդակությամբ: Դատաստանագրքի բոլոր հոդվածներում կարմիր թելի նման անցնում է ազդային խարուխյան դաղափարը, ուր հայը հակադրվում է «այլազգուն», ուր իրավական դերակշռությունը պատկանում է հայությանը, հանձին ֆեոդալական դասի և դրա համապատասխան չափով սեղմվում, սահմանափակվում են «այլազգիների» իրավաբանական պաշտպանության միջոցները:

Դատաստանագիրքը հորինելիս՝ Մխիթար Գոշն, անտարակույս, աչքի առաջ պետք է ունեցած այն բոլոր աղբյուրները, որոնց մասին խոսք կեղավ նախորդ գլուխներում և որոնք տակավին դոյություն ունեցին նրա ժամանակ: Բայց թե ի՛նչ չափով է նա ոգտվել նրանցից, այդ կտեսնենք ստորև: Մխիթար Գոշը Դատաստանագրքի Նախաբանության ժ գլխում մի առ մի թվում է իր ոգտագործած աղբյուրները, որոնք հետևյալներն են.—

Ա. Բնավորական որենք.— Այստեղ է անվանում Դատաստանագրքի հեղինակն այն որենքները, «զոր ունէին նահապետքն Աբրահամ և այլքն առանց գրոյ, զոր ունէին զնոյն և հեթանոսք...» (Նախ., գլ. ժ., եջ 65): Բնավորական որենք ասելով, կերեսին էլ այդ վորոշելով սոսկ «օրէնք» տերմինով, Մխիթար Գոշը նկատի ունի իրավունքի զարգացման ամենանախնական աստիճանը, «հեթանոսականը», կերբ իրավաբանական նորմերն առանց գրի եյին. իսկ որենքներն առաջին անգամ գրի են առնվել Մովսես մարգարեյի ձեռքով, կերբ նա այդ ստացավ աստծուց 10 պատգամների ձևով: Այստեղ բնավորական որենքի մեջ պարզապես պետք է տեսնել այն, ինչ վոր մենք անվանում ենք սովորության իրավունք: Սակայն Մխիթար Գոշն այլ կերպ է վորակում այդ իրավունքը, ստիպորեն հետևելով իր կրոնա-աստվածաբանական դաղափարախոսության. «Աստուած է սկզբանէ է բնութիւն մարդոյն սահմանեաց ընտրել զերաւացին» (Նախ. Ա., եջ 6), այսինքն առաջին որենքը, իրավունքն աստվածանից տրվել

և մարդու բնությանը, ուստի և այդ նախնական որենքը բնավորական է: Մխիթար Գոշի տեսակետով՝ բնավորական որենքը, ինչպես և Մովսիսական որենքը կամ ավետարանը, վորոնք իբր թե աստծուց են տրված, մշտնջենական, հավիտենական, մեր լսացականության միջոցով իրերի բնությունից ծագող, մարդկային կամքից անկախ իրավունք է: Հայ Դատաստանագրքի մեջ արծարծված այդ իրավահայեցողությունը վորոշ չափով համապատասխանում է յեվրոպական ֆեոդալական աշխարհում ուշ միջնադարում ծաղկող jus naturale— բնական իրավունքի տեսությանը, վոր նույնպես հիմնված էր կրոնական սխոլաստիկ վարդապետության վրա և ճանաչվում էր իբրև lex aeterna— հավիտենական որենք:

Ը. Քրիստոնեյական ազգերի որենքները, «զոր լուաք և տեսաք 'ի նոսա բարւոք դատաստանս» (Նախ., ժ, եջ 65): Մխիթար Գոշը չի հիշատակում, թե վո՛ր քրիստոնեյական ազգերի որենդրություններից և ոգտվել: Դժվար չե կռահել, վոր առաջին հերթին դրանք յեղել են Հայաստան մուտք որենդրություններն, այն է՝ Ասորա- Հռոմեյական Դատաստանագրքի և ապա հունա-բյուզանդական որենքները, վորոնք տեսության առանք նախորդ դրություններում: Բայց քանի վոր Մխիթար Գոշն ասում է «զոր լուաք և տեսաք», պետք է յենթադրել, վոր բացի այդ, նա նկատի յե ունեցել նաև այնպիսի ազգեր, վորոնց որենքները մեզանում մուտք չեն յեղել, բայց վորոնց ինքը ծանոթացել է իբրև ականատես կամ լսելով: Դրանք կարող եյին լինել վրացիները, վորոնց մասին, հիրավի, նա մի տեղ ակնարկում է, ինչպես և այն ժողովուրդները, վորոնց նա տեսել է իր ճանապարհորդությունների ընթացքում, մանավանդ դեպի Կիլիկիա:

Գ. Մահմեդական իրավունք.— Մահմեդական որենքներից հեղինակը նկատի չե առել «ո՛չ զոր նոքա ուսան ի Մահմետայ զախտաւոր բանս կամ զդատաստանս, այլ զոր առին 'ի Մովսիսի օրինացն՝ մեք զայնս ընտրեմք և առնումք»: (Անդ, եջ 65): Ուրեմն մահմեդական որենքները, ինչպես ակնարկել ենք վերը, ծանոթ են միայն իբրև զարտուղի աղբյուր Մովսիսական որենքներից ոգտվելու համար: Մխիթար Գոշին դժվար չեր ոգ-

ավել մահմեդական իրավունքից, քանի որ Հայաստանն այն ժամանակ շարունակում էր դանվել տակավին մահմեդական իրավական ինստիտուտների ազդեցության ներքո, որ սկսվել էր արաբական տիրապետության չրջանից և ապա պահպանվել սելջուկյան տիրակալության օրերին, հնարած, որ Դատաստանագրքի հովինման մոմենտին Հայաստանն արդեն թոթափել էր մահմեդական բռնակալների լուծը և Զաքարյաններից Ֆեոդալական իշխանության տակ էր դանվում: Բավական է միայն նշել, որ այդ ժամանակ վարչա-պետական ու հարկային տերմինաբանության մեջ մեծ չափերով պահպանվել և իշխում էին տակավին արաբա- թյուրքական անուններ, ինչպես այդ ակներև է վերոգրյալ ու մատենագրական հուշարձաններից:

Դ· Հին և նոր կտակարան.—Մխիթար Գոշը դրավոր որևէ և համարում այսպես կոչված «Աստվածաշունչը», «ըստ ամենայն գիրք ըի՞նչ այլ ինչ են, եթէ ոչ խրատ և օրէնք հոգևոր և մարմնաւոր դատաստանի» (Նախ· ժ, եջ 66): Այստեղ նրա համար առաջնակարգ նշանակություն ունի «Հին կտակարանը», մանավանդ «Գիրք ելից» և «Երկրորդ օրինաց», որոնք կազմում են «Աստվածաշնչի» Մովսես մարգարեին վերագրված II և V գրքերը և որոնք, Մխիթար Գոշի կարծիքով, հանդիսանում են «ստոյգ աստուածոյ օրէնք և դատաստանք» (Անդ, եջ 65): Հետևապես, այս դեպքում վերոհիշյալ նյութերը ծառայել են Մխիթար Գոշին իբրև անմիջական աղբյուր՝ Մովսիսական որևէքից ոգտվելու համար:

Ե· Կանոնական իրավունք.— Մխիթար Գոշն ամենամեծ չափերով քաղել և Դատաստանագրքի համար հոդվածներ «ի կանոնական գրոց», որ պետք է հասկանալ հայ «Կանոնագիրքը»: Սակայն հեղինակը, ինչպես ակներև է Դատաստանագրքի բովանդակությունից, ոգտագործել և ո՛չ միայն «Կանոնագիրքը», իբրև յեկեղեցական կոդեքս, այլ և ուրիշ կանոնագրություններ, որոնք չեն մտել հայ «Կանոնագրքի» մեջ, բայց հայ յեկեղեցական կյանքում ունեցել են իրավաբանական նշանակություն: Դրանով թերևս պետք է բացատրել, որ Մխիթար Գոշը չատ հաճախ իբրև տերմին գործածում է իր աղբյուրի նկատմամբ «կանոնք» բառը, որն ավելի լայն իմաստ և պարունակում, քան «Կանոնագիրք» անունը, կամ, ինչպես ինքն է անվանում՝

«Կանոնաց գիրքը»: Հիրավի, Մխիթար Գոշի Դատաստանագրքի ամբողջ Ա. մասը և Բ. մասից էլ բավականաչափ հոդվածներ վերցված են «Կանոնագրքից» և գետեղված են Դատաստանագրքի մեջ գրեթե նույն հաջորդականությամբ, ինչ կարգով նրանք գրված են Կանոնագրքի մեջ[16]:

Ահա այն բոլոր աղբյուրները, որոնք Մխիթար Գոշը մի առ մի ակնարկում է Դատաստանագրքի Նախադրության մեջ: Այդ ակնարկումները խիստ առաձգական են և վորոշակի, կոնկրետուրեն չեն ընդգծում ոգտագործված աղբյուրները: Որինակ՝ Դատաստանագրքի չարահյուսության մեջ նկատում են Աստրա- Հռոմեական Դատաստանագրքի և հունա- բյուզանդական որենքների հետքերը, բայց հեղինակն այդ աղբյուրների մասին վոչ մի հիշատակություն չի անում: Նմանապես, իրրև հատուկ աղբյուր չեն հիշատակվում հայ սովորութական իրավունքի նորմերը, վորոնք նա ոգտագործել է և վորոնց հետքերը նկատելի յեն մանավանդ ընտանեկան, ամուսնական, ժառանգական իրավունքների բնագավառում, թեև կողմնակի կերպով որենքների չարահյուսության մեջ տեղ- տեղ ընդգծում է, վոր «ըստ սովորութեան ասացաք» (I, ձԹ, 228· II, Ա, եվ 313· ճԻ, 432· ճԻԲ, 433):

Ահա այդ բազմապիսի, հայտնի և մասամբ անորոշ աղբյուրները խճողել են հայ Դատաստանագրքի բովանդակությունն և յուրահատուկ կնիք դրոշմել նրա չարահյուսության վրա:

Առաջին հայացքից կարող է թվալ, վոր Մխիթար Գոշի Դատաստանագիրքը չի հանդիսանում իսկական հայ որենքների կոդեքս, այնտեղ չեն արտացոլել իրավունքի աղղային տարրերը, հայերի իրավահայեցողությունը: Սակայն վորքան էլ Մխիթար Գոշն ահագին տեղ և ավել Դատաստանագրքում կանոնական իրավունքին և Մովսիսական որենքներին, այնուամենայնիվ նրա չարահյուսության մեջ էլ կարելի յե վորոնել ու յերևան հանել հայ իրավունքի վահայեցողության տարրերը: Հայ կանոնական իրավունքի նորմերը շատ անգամ բղխում են սովորութական իրավունքից և կարգավորում են գուտ աշխարհիկ հասարակական հարաբերությունները, ուրեմն այդ կողմից հիշյալ նորմերը կրում են ազ-

դային բնույթ: Ինչ վերաբերում է յուրացրած ոտար կանոնական նորմերին և մանավանդ Մովսիսական օրենքներին, Մխիթար Գոշն այստեղ հանդես է գալիս մի՛այն իբրև կոդիֆիկատոր, այլև իբրև ինտերպրետատոր, մեկնաբանող: Մեջ բերելով ոտար օրենքը, նա անմիջապես տալիս է յուր մեկնաբանությունն ու բացատրությունը, ընդ որում կամ ընդունում է տվյալ օրենքը, կա՛մ վերախոսում և կա՛մ ժխտում իբրև անհանդուրժելի, և իր կողմից առաջարկում է համապատասխան այլ վորոշում: Նման դեպքերում Մխիթար Գոշի Դատաստանագրքում սովորական ու հաճախակի են այսպիսի դարձվածքներ. «իսկ մեզ վրնասել լիցի այսպիսի լրմամբ», «այլ ըստ մեզ Դատաստանաց... լիցի, որպէս ցուցեալն է», «և ի մեզ զնոյն ամբողջ պահելի է» և այլն: Ահա այստեղ է, վոր Մխիթար Գոշի մեկնաբանություններով կերևան և գալիս մի իրավահայեցողություն, վորի մեջ, անշուշտ, արտացոլում է և՛ իր թե հեղինակի անձնական հերյուրած իրավունքն, այլ տեղում ու իր ժամանակի հասարակության մեջ գործող սովորութիական իրավունքի վոգին, տիրող իրավաբանական նորմերի ազդեցությունը:

Ինչպես արդեն ակնարկել ենք, Մխիթար Գոշը Դատաստանագրքը բաժանում է յերեք մասի՝ «Նախադրութիւն», «Եկեղեցական կանոնք» և «Աշխարհական օրէնք»: Առաջին մասը նեբածական է, ուր հեղինակն արծարծում է յուր իրավահայեցողությունը, վորի հետ կապում է նաև դատակազմությունն ու դատավարությունը. ապա կանգ է առնում Դատաստանագրքի հորինման շարժառիթների ու հանգամանքների, ինչպես և աղբյուրների վրա: Բուն օրենսդրքը կազմում են վերջին յերկու մասերը: Իր համապրած հայ իրավունքը բաժանելով յեկեղեցականի ու աշխարհականի, Մխիթար Գոշը ղեկավարվում է՛ և՛ թե իրավական հարաբերությունների սկզբունքով, իրավաբանական նորմերի ներքին բովանդակության տեսակետով, այլ այն յելակետով, թե ի՛նչ դատաստանի յեն յենթարկվում իրավաբանական դիպվածները (casus)— յեկեղեցակա՞ն, թե աշխարհիկ: Սակայն այստեղ էլ նա չի կարողացել հավատարիմ մնալ իր առաջադրած սկզբունքին և չարահյուսության ընթացքում վորոշակի սահմանադիծ քաշել յեկեղեցական ու աշ-

խարհիկ օրենքների միջև: Հաճախ այնպիսի օրենքներ, որոնք վերաբերում են աշխարհիկ, այսինքն քաղաքացիական իրավունքին, տեղ են գտել «Եկեղեցական կանոնք»-ի մեջ և ընդհակառակն: Իրավունքի այդօրինակ մեքենական բաժանումն, անշուշտ, պետք է հանգեր անհաջողության, քանի որ դատական հմխնարկութիւններին բաժանումն եկեղեցականի ու աշխարհականի՝ ինքնին խիստ անորոշ ու խախուտ բնութիւն ուներ հին Հայաստանում: Ինչպես բացահայտ է մեր պատմական տվյալներից, եկեղեցական ու աշխարհիկ դատարանների իրավասության շրջանակներն իրականում յերբեք չեն տարբերվում իրարից, այլ կախված են յեղել տեղական պայմաններից ու քաղաքական մոմենտներից, նայած թե որքան պետող դասակարգի վո՛ր հատվածն եր վարտորեն հեղինակություն վայելում, աշխարհի՞կը, թե՞ հոգևորը: Մենք արդեն քանիցս ակնարկել ենք, որ իրոք այդ հեղինակությունը և դործոն աղդեցությունը դատա- իրավաբանական ու որենսդրական ասպարեզում դարձել եր հիերոկրատիայի մենաշնորհը: Դրանով պետք է բացատրել, թե ինչու յեկեղեցական կոնսադրություններում շատ անգամ յերևան են գալիս այնպիսի իրավաբանական նորմեր, որոնք ըստ ամենայնի վերաբերում են աշխարհիկ կյանքին: Մասամբ սրանից է բղխում նաև այն պարադան, որ Մխիթար Գոշի Դատաստանադրքի «Եկեղեցական կանոնք»-ի մասում սպրդել են զուտ քաղաքացիական իրավունքի նորմեր:

Նկատելի յե նաև մի այլ թերություն. դա իրավաբանական նյութի ներքին դասավորման անհետևամ ձևն է: Որենսդրքի թե՛ առաջին և թե՛ յերկրորդ մասում հոդվածները հետևում են իրար առանց վորևե կարդի ու վերադարձ ազերսի: Նույնիսկ առաջին մասը՝ «Եկեղեցական կանոնք»-ը, որ, միտպաղաղ նյութ ունենալով՝ առաջին հայացքից կարծես վորոշ սիստեմով է կազմված, պարզվում է, որ այդ մասի սիստեմն էլ մեքենական է: Մխիթար Գոշն այստեղ հոդվածները դասավորել է վո՛չ թե ըստ ներքին բովանդակության ու նյութի վերադարձ կապակցության, վերածելով առարկայական սեռակների, այլ

այն հայրապետական կարգով, որը պահպանված է հայ կանոնագրքում:

Յեթե «Եկեղեցական կանոնք» մասը չարահյուսելիս՝ Մխիթար Գոշն ունեցել է իր առաջ մի հիմնական աղբյուր, կանոնագիրքը, ապա «Աշխարհական օրէնք» մասը կազմելիս՝ նա ոգտագործել է դանազան աղբյուրներ, որոնց նյութը, ի հարկե, նա դասավորել է ըստ իր ժամանակի սիստեմով, այլ կարծես ըստ այնմ, թե իր ձեռքին ո՞ր աղբյուրն է եղել: Ուստի այս մասի հոդվածները հետևում են իրար առանց որևէ ղեկավար սկզբունքի և մշակված կարգի: Այն ապացուցությունն է առաջվում, որ հեղինակն իր աշխատանքի ընթացքում հետզհետե ձեռք է բերել այս կամ այն աղբյուրն և ապա մուծել է իր ընտրած իրավաբանական նորմերը:

Այսպիսով, ամբողջ օրենսգիրքը ներկայացնում է հոդվածների անկապ կուտակումն և իրավաբանական նյութերի խճողումն: Մի ենթադրյալ հարցի վերաբերյալ հոդվածները ցրված են այս ու այն տեղ: Նույնիսկ յուրաքանչյուր հոդված, չնայած որ կրում է հատուկ խորագիրը, ինքնին չի ներկայացնում խստորեն վորոշված նյութ և մի ուրույն բովանդակություն: Այդտեղ հաճախ խճողված են առանձին պարբերություններ, որոնք արդեն վերաբերում են իրավունքի այլ կատեգորիայի:

Այդ կողմից Դատաստանագրքի Նախաբերությունը թողնում է համեմատաբար ավելի սիստեմատիկ ու ամփոփ դործ տեսակավորություն: Այս հանգամանքը պետք է վերագրել Նախաբերության հիմք կազմող նյութին, որ առիթ չէր տալիս հեղինակին ցրվելու և դանազան աղբյուրների հետևից ընկնելու. այստեղ նա կենտրոնացած է ահմանավոր առարկայի շրջանակներում և տրամաբանական հետևողությամբ շարահյուսում է իր գործը:

Մխիթար Գոշի Դատաստանագրքի ինքնահատուկ մի նշանակություն էլ այն է, որ նա չի բավում որևէ մարմնից, այլ անհատական, մասնավոր ձեռներեցությամբ կատարված կոդիֆիկացիա է, թեև այդ գործին նա ձեռնամուխ է եղել Սյունիից կաթողիկոսի, կրոնական բարձրագույն պաշտոնյայի, առաջադրությամբ: Ընդյայն դրան՝ Դատաստանագիրքն

այնուամենայնիվ գործող օրենսդրքի դեր եր առանձնել ու համատարած ընդունելություն եր վայելում, կիրառվելով վո՛չ միայն բուն Հայաստանում, այլև դուրսը, հայ գաղութներում: Դատաստանագրքի հորինման այդ անհատական բնույթը արտացոլել է նաև նրա ներքին բովանդակության ու չարահյուսության ձևի մեջ: Այստեղ առաջին հերթ աչքի յն զարնում կրոնավոր հեղինակի առկայությունը, կղերական մտահղացդությունը: Միխիթար Գոշը նախամեծար նշանակություն է տալիս քրեակրաւիզմին ու կրոնական ինստիտուտներին՝ համեմատած աշխարհիկ իրավունքի ու ինստիտուտների հետ:

Հայ Դատաստանագրքի օրենքները զուրկ են ձևական բովանդակությունից: Այստեղ ձևակերպված իրավաբանական նորմերի վերաբերն հաճախ հանդիպում ենք հեղինակի մի շարք խորհրդածություններին ու անձնական կարծիքներին այս կամ այն իրավաբանական երևույթների ու դիպվածների, իրավական ինստիտուտների մասին: Դատաստանագրքի ամբողջ իրավաբանական կոնցեպցիան զուրկ է արծարծած նյութը վերացականացնելու և ընդհանրացնելու ձգտանակից: Օրենքները հարմարեցված են առանձին կոնկրետ երևույթներին և չեն ընդգրկում այն բոլոր իրավաբանական պրեցեդենտները, որոնք կարող են ծառել հասարակական հարաբերություններում և մարդկային քիչ թե շատ բազմակողմանի կենցաղում: Սրբանք բնորոշ գծեր են, որ յուրահատուկ են եղել հին օրենսդրքերին և միջնադարյան Եվրոպայի այսպես կոչված Leges barbarorum *օրենսդրական ժողովածուներին*:

Հայ Դատաստանագրքի հորինողի կրոնավոր լինելու հանգամանքը ձևական և դալիս նաև նրա իրավաբանման մեջ: Միխիթար Գոշի հայացքով իրավունքը էթիկական մի հասկացողություն է. իրավունք և բարոյականություն ասած բաները անանջատ առումներ են. նրանք կազմում են մի ամբողջություն, իրար համակերպված միասնություն: Իրավունքը— արդարության վարոնումն ու պաշտպանումն է և առաջանում է աստծուց. «աստուած՝ ի սկզբանէ ի բնութիւն մարդոյն սահմանեաց ընտրել զիրաւացին» (ՄԳ, Նախ., էջ 6): Այսպիսի կրոնական ծագում ունեցող իրավունքն աստվածաբանական անպուրով եյին չպարում այն իրավունքն

ու իրավաբանական նորմերը, որ գոյանում էին ֆեոդալական հասարակության մեջ և կոչված էին ծառայելու նրա շահերին:

Մխիթար Գոշի Դատաստանագրքի հորինման հանգամանքներն ու նրա միակ հայ աշխարհիկ կոդեքս լինելու փաստը մեծապես նպաստել են, որ այդ Դատաստանագրքերն ահագին նշանակություն սահնար ու հայերի մեջ համատարած հռչակ վայելեր: Այդ բանը տեղի ուներ անկախ նրանից, որ որևէ կոդիֆիկացիան անհատական մի գործ եր: Մեզ հասած բազմաթիվ ձեռագիր օրինակներն ապացուցյ են նրա տարածման ու նշանակության: Այդ գրչագրերից յերևում է, որ XII դարի վերջերից Մխիթար Գոշի Դատաստանագրքերը կիրառվելիս է յեղել Հայաստանի ազգային դատարանական հիմնարկներում իբրև գործնական իրավաբանական ձեռնարկ, թեև այն ժամանակ հայերն արդեն զրկված էին քաղաքական ինքնուրույնությունից:

Մխիթար Գոշի Դատաստանագրքերը, պարունակելով քաղաքացիական օրենքներին կից նաև յեկեղեցական կանոններ, դրավել եր դյուրավորապես հողևոր վարչական մարմինների ուշադրությունը: Նա գործել եր ամենատարածված ու ամենագործնական օրենագրքերը հայ հողևոր հաստատություններում դատավարական գործերի համար, մանավանդ քնատնեական ու ժառանգական իրավունքների քնագավառում, ինչպես որինակ, այդ յեղել է եջմիածնում մինչև վերջին ժամանակները:

Մխիթար Գոշի Դատաստանագրքերը ճանապարհ հարթեց իրեն համար նաև Մեծ Հայքի սահմաններից դուրս: Նա, ինչպես կտեսնենք ստորև, մուտք գործեց Կիլիկիա, ուր այն ժամանակ ծաղկում եր Ռուբինյան թագավորությունը, և գլխավոր աղբյուրը հանդիսացավ Կիլիկյան հայ պետության օրենագրքերը կազմելու համար:

Անցյալ դարի 50-ական թվականների վերջերին Վենետյան պրոֆ. Բիչոփը, ինչպես վերն ակնարկել ենք, Լեմբերդի քաղաքային դիվանատանը գտել եր մի հայ օրենագրքի ձեռագիր, հատատված 1518 թ. Լեհաստանի թագավոր Սիգիզմունդի ձեռքով: Ինչպես յուրյ և տալիս հիշյալ պրոֆեսորը,

դաղթած հայերը Լեմբերգում և ընդհանրապես լեհական Գալիցիայում XIV դարի սկզբներից վայելում էին ինքնավար համայնքների իրավունքներ՝ ազգային դատարաններով։ Մխիթար Գոշի Դատաստանագրքի հրատարակիչ ու անդրանիկ ուսումնասիրող Վահան Բաստամյանն իր կատարած համեմատական հետազոտության հիման վրա ապացուցում է, որ Լեմբերգի հիշյալ հայ որենադրքը կազմված է Մխիթար Գոշի Դատաստանագրքի հոդվածներից, տեղական պայմաններին հարմարեցրած ջնջին վոխոխություններով ու հավելումներով։ Նույն կարծիքին է հանգել գերմանական պրոֆ. Յ. Կոհլերը, միանդամայն անկախ Վ. Բաստամյանից։

Նմանապես հայտնի են Ղրիմի Թեոդոսիայի թաթարների լեզվով թարգմանված հայ որենագրքեր, վորոնք XIV դարի ղրոշմն են կրում։ Որենքների այդ ժողովածուները, ինչպես յերևում է բնագրից, վոխադրվել են Լեմբերգի հայ որենագրքից և ծառայում էին Ղրիմի հայ դաղթավայրերի ինքնավար համայնքների պահանջներին։

XVIII դարի սկզբներին Վրաստանի Թագավոր Վախթանգ VI-ը կազմել էր որենքների վրացերեն ժողովածու՝ «Դատաստանագիրք Թագավոր Վախթանգի» անունով, բաղկացած 7 մասերից։ Վրացական այդ որենագրքի 3-րդ մասը բաղկացած է հայ որենքներից, վորոնք քաղված են Եջմիածնում կիրառվող կանոնագրքերից։ Վախթանգի Դատաստանագրքի այդ հայկական որենքները բաժանվում են յերկու մասի. առաջին մասը, բաղկացած 150 հոդվածներից, վոչ այլ ինչ է, յեթե վոչ աստրախանի հռոմեյական որենքների հայերենից կատարված թարգմանությունը, իսկ յերկրորդ մասը կազմում է Մխիթար Գոշի Դատաստանագրքի «Եկեղեցական կանոնք» և «Աչխարհական օրենք» հատվածների բառացի թարգմանություն, միայն տեղ-տեղ աննշան վոխոխությունների բառացի թարգմանություն, միայն տեղ-տեղ աննշան վոխոխություններով և հոդվածների խանգարված դասավորությամբ։ Հետազոտում, յերբ 1801 թ. Վրաստանը բռնի կերպով միացվեց Ռուսաստանին, Վրաստանին արտոնված եր քաղաքացիական գործավարության մեջ պահպարվել վրաց սովորութական իրավունքով ու Վախթանգի Դատաստանագրքով։ Վախթանգ Թագավորի այդ որենագրքի ինչ-ինչ վոխոխություններով

ներմուծվից 1835 թ. ռուսական Свод законов-ի մեջ, այն է՝ X т., I ч. Св. зак. гражд.-ի մեջ, վորով ուրեմն, Մխիթար Գոշի Դատաստանագրքի որենքներն ել տեղ գտան ռուսական որենսդրության մեջ և կովկասում գործող որենքների աղբյուր դարձան:

Այսպիսով, տեսնում ենք, թե ինչ կարևոր պատմական նշանակություն ունի Մխիթար Գոշի Դատաստանագիրքը թե՛ իբրև իր ժամանակին գործող ազգային որենսդիրք և թե՛ իբրև աղբյուր այլ հայկական որենսդրքերի և թե՛, վերջապես, իբրև հայ իրավունքի ուսումնասիրության նյութ:

3. ՍՄԲԱՏ ԳՈՒՆԴՍՏԱԲԼԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔԸ.— Այս որենսդրքի յերևան գալը կապված է Կիլիկյան հայ թագավորության պատմության հետ: Բագրատունյաց Հայաստանի անկումով և ապա սելջուկյան արշավանքների հետևանքով շատ ֆեոդալ իշխաններ, նույնիսկ յերբեմն իրենց հպատակների հետ միասին, գաղթում էին Կիլիկիա, վորը տակավին շատ և շատ առաջները, չնորհիվ իր բարենպաստ առևտրական դիրքի, հարաբերություններ ուներ Մեծ Հայքի հետ: XI դարի յերկրորդ կեսին, այստեղ գաղթած հայությունը հատատումած լինելով մի շահավետ առևտրական կենտրոնում, վոր հանդիսանում էր Արևմտյան Յեվրոպայի և Առաջավոր ու Փոքր Ասիայի վաճառականական հարաբերությունների, սրնտեսապես այնքան ուժեղացավ, վոր շահադրգռված յեղավ իր ազդեցությունն ու ինքնավարությունն ապահովելու նպատակով նաև քաղաքական ուժ ունենալու: Յեվ սրա կատարվում է տեղական հայ ֆեոդալ իշխանների կոնսոլիդացիան: Ռուբեն իշխանի, վերջին Բագրատունի Դավիթ Բ. թագավորի ազգականի գլխավորությամբ նրանք հաստատում են այստեղ հայ պետություն (1080 թ.), վոր, հետզհետե զարգանալով ու ընդլայնվելով իր սահմանները, դոյություն ունեցավ գրեթե յերեք դար (մինչև 1365 թ.): Այսպիսով, ստեղծվեց Կիլիկյան հայ թագավորությունը, մի նոր ֆեոդալական պետություն, վորի ամենածաղկած ժամանակաշրջանը համարվում է Ռուբինյան տոհմի իշխանության: Այդ նոր հայկական պետությունը, վոր սերտ քաղաքական ու առևտրական հարաբերությունների մեջ էր Արևմտյան Յեվրոպայի հետ,— մանավանդ Խաչակրաց ար-

չավանքներից հետո, որոնց ճանապարհը Կիլիկիայի վրայով էր,— զգալու չեր իր պետական ազգային գոյության կարիքը, քանի որ ապահովում գոյություն չունեին հայ ընդերքները: Այդ պահանջն առավելապես զգալի դարձավ XII դարի երկրորդ կեսին, երբ Կիլիկյան հայ պետությունը հասել էր քաղաքական ու տնտեսական բարձր զարգացման: Այդ դարաշրջանի տրամադրությունը տեսիլական որենագիրք ունենալու մասին ցայտուն կերպով դրսևորվում է Ներսես Լամբրոնացու այն խոսքերից, որոնք հիշատակված են վերը, և այն ձեռնարկումից, որ նա արել է Կիլիկիայի Գրիգոր կաթողիկոսի թելադրությամբ, թարգմանելով ասորական, Մովսիսական և հունա-բյուզանդական (Եկեղեցական օրենք) ընդհանրի ժողովածուները: Սակայն այդ օրենագրքերն ոտար էին և չէին համապատասխանում հայ պետականության պահանջներին: Կիլիկիայի հայ ֆեոդալականությունն իր տնտեսական ու սոցիալ- քաղաքական դիրքերն ամրապնդելու կռվանները տեսնում էր Արևմտյան Եվրոպայի ֆեոդալականության, և մոչ թե հարևան Բյուզանդիայի մեջ, որն այդ ժամանակ արդեն կորցրել էր իր տնտեսական նշանակությունն ու քաղաքական ազդեցությունը Փոքր ու Առաջավոր Ասիայում:

Արևմտյան Եվրոպայի ֆեոդալականության ազդեցությունը, մանավանդ Խաչակրաց արշավանքների ներգործությամբ, այնքան ուժեղ էր Կիլիկյան հայ թագավորության վրա, որ ամբողջ պետական- վարչական կազմը, արքունի և իշխանական պալատական կարգերը, ֆեոդալական ինստիտուտները կառուցվում էին արևմտյան ֆեոդալական, զլխավորապես Ֆրանկների, օրինակով և նույնիսկ յուրացնելով նրանց պետական- վարչական ու սոցիալական տերմինաբանությունը: Դա արտահայտվում է նաև նրանով, որ XIII դարի առաջին կեսին, հավանորեն, ընդունվել էին ու հայերեն թարգմանվել Խաչակիրների՝ Պաղեստինում հիմնած Ցերուսաղեմի ու Սիրիայում հիմնների Գաղեսաինում հիմնած Ցերուսաղեմի ու Սիրիայում հիմնված Անտիոքի ֆեոդալական իշխանությունների օրենագրքերը, այն է՝ «Անտիոք Երուսաղեմի» և «Անտիոք Անտիոքայ»[47] անունների, որոնցից մեզ հասել են երկրորդի հայերեն թարգմանությունը: Ենթադրվում է, որ այդ օրենքների թարգմանիչը յղել է Սմբատ Գունդստաբլը: Ահա այդ պայմաններում էր, որ XIII

դարի յերկրորդ կեսին (1265 թ.) այստեղ հորինվում և ազգային օրենսդիրք՝ Սմբատ Գունդստաբլի ձեռքով: Սմբատ իշխանը բարձրագույն ֆեոդալներից եր, Հեթում Թագավորի յեղբայրը, և առաջնակարգ դեր եր խաղում, վարելով հայկական զորքի սպարապետությունը (այստեղից էլ նրա տիտղոսը՝ Գունդստաբլ, այսինքն զորահրամանատար, ֆրանկ լեզվով) և միաժամանակ լինելով Թագավորի ամենամոտ խորհրդականը: Սմբատ իշխանը պատմության մեջ հայտնի յե նաև իբրև մատենագիր: Բացի իր չարագրած Դատաստանագրքից, նա թողել և մի տարեգրություն՝ «Պատմութիւն Գունաց 'ի Կոստանդնուպոլիս և Հայոց Մեծաց, ըստ կարգի ժամանակաց» խորագրով և սպա «Անեղք Անեղոքաց» թարգմանությունը:

Սմբատ Գունդստաբլի Դատաստանագիրքը, վոր կրում է «Յաղագս դատաստանաց Թագաւորաց» վերնագիրը, նաև «Աւրէնք և կանոնք ընդհանրական եկեղեցականաց և աշխարհականց» վերտառությունը, դալիս եր ծածկելու այն բացը, վորի մասին դեռ մեկ դար առաջ դանդատներ եյին լսվում Ներսես Լամբրոնացու և տիրապետող ֆեոդալ դասակարգի ներկայացուցիչների կողմից, այն է՝ ազգային իրավարանական կոդեքսի բացակայությունը: Ահա այդ ազգային օրենսդրքով դուրս եյին վանվում ասպարեզից ուսուցչների ժողովածուները, մանավանդ Հունա-Բյուզանդականը, վոր դերիշխում եր այդտեղ և վոր հետագայում Կիլիկյան հայ Թագավորության ուժեղացումով և սրա ու Բյուզանդիայի միջև սրված քաղաքական ներհակության պատճառով դարձել եր այլևս անընդունելի: Չնայած վոր Կիլիկյան հայ օրենսդիրքը կազմվել և անհատական ջանքերով, այնուամենայնիվ նա առանում է տեղական ֆեոդալ հասարակության աչքում պետական-օրինադրական նշանակություն, վայելում և պետական սանկցիայով անցած կոդեքսի արժեք, վորովհետև նրա կազմողը հանդիսանում եր հայ կառավարության մեջ առաջնակարգ դեր խաղացող մի անձ, Թագավորի յեղբայրը, վորը Թերևս Թագավորի առաջադրանքով եր ձեռնամուխ յեղել իր օրենսդրքի հորինմանը:

Սմբատ Գունդստաբլը Դատաստանագրքի հորինման մասին

այսպես է արտահայտվում առաջաբանի մեջ. «...Բազում աշխատանաւք աշխատեցայ ի Դատաստանագիրքս ծերացեալ մտաւք վասն զի այլակերպած էր և հեռացած ի հին հայ բառէն ի նոցա՝ յայնց որ իսկի չէին՝ ի հասկնալ, և ոչ յօկտել զայր— և ես բազում աշխատութեամբ վոխեցի զսա՝ ի հին և՝ ի գժուարաբառ և յանհասկընալի դրոց, ՝ի մեր հեչտալուբ և՝ ի սովորական բառս... Եւ արդ դրեցի զսա վասն հասատատութեան սրբոյ եկեղեցւոյ և գոյանալոյ երկրի, և ապա վասն աշխարհական դատաւորաց և թագաւորաց»:

Նախ՝ այստեղ չեշտվում է, վոր Սմբատը Դատաստանագիրքը կազմել է թե՛ եկեղեցական և թե՛ աշխարհիկ իրավասության պետքերի համար: Յերկրորդ՝ հիշատակվում է, վոր նա այդ որենագիրքը վերածել է հին, անհասկանալի դրաբարից՝ խոսակցական, դյուրըմբռնելի բարբառի: Սակայն չի նշվում, թե այդ ինչ Դատաստանագիրք է եղել, վորի բնագրից ոգտվել է կազմողը:

Բանասիրական համեմատական հետազոտությունը պարզաբանում է, վոր Սմբատ Գունդստաբլի Դատաստանագիրքի հիմքն ու արմատական աղբյուրն եղել է Մխիթար Գոշի Դատաստանագիրքը: Հիշյալ կիլիկյան որենագիրքը Սմբատը կազմել է 1264 թ., իսկ Մխիթար Գոշի Դատաստանագիրքի հորինման տարին համարվում է 1184 թ.: Ուրեմն 80 տարիների ընթացքում վերջինս հասել էր նաև Կիլիկյան հայ Թագավորությանը և իբրև Մեծ Հայքի Դատաստանագիրք, վոր լայն կիրառումն ուներ ու հռչակ էր վայելում, անտարակույս, դառնալու էր Սմբատ Գունդստաբլի համար միակ հայկական իրավաբանական աղբյուրը: Թեև Սմբատ Գունդստաբլի վկայությամբ՝ իբր թե նա վոխել է «՝ի մեր հեչտալուբ և՝ ի սովորական բառս», բայց Մխիթար Գոշի և Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքերի բովանդակության համեմատական վերլուծումը յերևան է հանում, վոր այստեղ սոսկ բառացի վոխադրություն չէ եղել, այլ կատարվել է բավականին բարդ աշխատանք: Սմբատ Գունդստաբլը շատ անգամ նրա հոդվածները վերամշակում կամ վերախոհում է, հարմարեցնելով Կիլիկյան հայ պետության սոցիալ- տնտեսական ու քաղաքական պայ-

մանները։ Նա նույնիսկ յերբեմն իր կողմից մուծում է նոր հոդվածներ, նոր իրավաբանական նորմեր, վորոնք ամենայն հավանականությամբ վերցված են ուիրոդ սովորութական իրավունքից։ Մխիթար Գոշի Դատաստանագրքի համեմատությամբ Սմբատ Գունդստաբլի Դատաստանագիրքը հանդիսանում է ավելի վորոշ ու չեշտակի դծերով կերտված ֆեոդալական իրավունք, ուր մի կողմից՝ պարզ ու մեկին լայնացված և ամուր արտոնություններով ապահովված են ֆեոդալական իշխանների իրավունքները, մյուս կողմից՝ ավելի խիստ ու դաժան կարգերի մեջ են դրված իսկական արտադրողները, այսինքն՝ շահագործվող չինականները ու սարուկները։

Այստեղ ակներև է Մեծ Հայքի և Կիլիկյան Հայ պետության ֆեոդալական կարգի տարբերությունը։

Մինչդեռ Մխիթար Գոշի Դատաստանագրքում արտացոլել է Մեծ Հայքի տարատիպ քաղաքական վիճակը, պետական կենտրոնական իշխանության բացակայությունն և առանձին ֆեոդալական բազմաթիվ իշխանությունների հեղհեղուկ կացությունն ուստր նվաճողների բռնակալության ներքո, ընդհակառակն, Կիլիկյան Դատաստանագիրքն արտահայտիչ է հանդիսանում տեղական ֆեոդալական իշխանությունների կոնսոլիդացիայի իրենց սուվերեն իշխանավորի՝ թագավորի գլխավորությամբ, մի ֆեոդալ պետականության, վորի կառուցքը ներծծել է Արևմտյան Եվրոպայի ֆեոդալական կարգի բնորոշ գծերը։ Հակառակ Մխիթար Գոշի Դատաստանագրքի՝ Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքում պետական-վարչական ինստիտուտների և պաշտոնների տերմինները զերազանցորեն ֆրանկյան են, յերբեմն միայն հայկական, նույնիսկ բյուզանդական և թյուրքական։ Վերջապես, ընդգծենք մի կարևոր հանգամանք ևս։ Մինչդեռ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը հիմնականում հանդիսանում է ռեցեպցիական ու դրսից մասամբ սովորութական իրավունքների տարրերից չարահյուսված որենագիրք, ընդհակառակը, Սմբատ Գունդստաբլի Դատաստանագիրքն իր վերամշակված նյութով ներկայացնում է թեև աղգային, բայց տեղական, վորոշ յերկրային իրավունք։ Հենց այս հանգամանքով պետք է բացատրել այն հետաքրքրական

յերևույթը, վոր Մխիթար Գոշի Դատաստանագիրքը համա-տարած նշանակություն և ունեցել և ճանապարհորդել է Մեծ Հայքի սահմաններից դուրս դեպի հեռավոր հայ գաղթավայրերը, իսկ Սմբատ Գունդստաբլի Դատաստանագիրքը Կիլիկիայի սահման-ներից չի կարողացել դուրս գալ և Կիլիկիայի հայ թագավորության անկումով չքացել և ասպարեզից ու մխառժամանակ անհայտու-թյան մատնվել: Միայն XIX դարի վերջերին Սիբիայի Հալեպ քաղաքում[18] դիպվածով հայտաբերվել և նրա մի որինակ ձե-ռագիրը, վորն այժմ պահվում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում, իսկ յերկրորդ որինակը գտնվում և նախկին եչմիածնի, ներկայումս մեր խորհրդային պետական ձեռագրատունը: Յերրորդ ձեռագիր էլ կա Վիեննայի Մխիթարյանների մոտ, բայց դա XIX դարի ակզբների արտագրություն է, վոր նման է Վենետիկի ձե-ռագրին: Եչմիածնի ու Վենետիկի ձեռագիր որինակները, վո-րոնց համեմատությունը կատարել է Ց. Կարապետ և հրատարա-կել է թե՛ Սմբատի Դատաստանագրքի տեքստը և թե՛ նրա ու-սումնասիրությունն ըստ Վենետիկի որինակի,— ունեն վորոշ տարբերություններ բովանդակության և, մանավանդ, լեզվի կող-մից: Վենետիկի որինակը հարազատությամբ պահպանել և Կիլի-կյան հայ բարբառը, իսկ Եչմիածնինը, ըստ յերևույթին, ար-տագրողի կողմից յենթարկվել է լեզվական փոփոխության, դարաբարին մոտեցնելու ձգտումով: Հետևապես Վենետիկի որի-նակը պետք և ավելի հարազատ ու հին համարել: Եչմիածնի ձե-ռագիր որինակը լույս և տեսած Արսեն Ղլճյանի խմբագրու-թյամբ. այդ հրատարակությունը վո՛չ միայն գիտական բնույթ չունի, այլև կատարված և անխնամ կերպով ու լի յե վրիպակ-ներով:

## VI. ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐ

Ինչպես կարելի յե յեզրակացնել, հայ իրավունքը ներկայա-նում և մեզ բավականին ազգատ գրական նյութերով— յերկու Դատաստանագիրք և Կանոնագիրք: Ահա գուտ հայկական կոդեքսները, վորոնք աչքնատմենաչնիվ լրիվ ու ամփոփ պատկեր չեն տալիս հայ իրավունքի բովանդակ սիստեմի

ու պատմության մասին: Այդ Դատաստանագրքերը, լինելով միջնադարի արդյունքներ, առնչություն ունեն միջնադարյան հասարակության իրավահավասարության հետ, իսկ ավելի հին, նախնադարական շրջանի իրավունքը չախտանոց սուզ սովորություններով, այն էլ մնացուկների կամ վերապրուկների ձևով է արտահայտվել նրանց մեջ:

Այդ թերությունը հնարավոր է վորոշ չափով վերացնել, ոգտվելով հայ դասական մատենագիրների թողած ժառանգությունից: Բայց այստեղ էլ դեմ ենք ընկնում դժվարությունների: Թեև մեզ հասել է հարուստ պատմական գրականություն, սակայն նրա մեջ շատ աղքատ նյութերով են արտացոլել հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքը, իրավական ինստիտուտները և այլ հասարակական երևույթները: Այնուամենայնիվ մեր հին մատենագիրների երկերում ցիրուցան տեղեկություններ կան, վորոնք այսպես թե այնպես ոժանդակ աղբյուր են հանդիսանում հայ իրավունքի պատմության պակաս կողերը լրացնելու համար: Այդ տեսակետից չահեկան են նախնադարական իրավունքի, ֆեոդալական հարաբերությունների մի շարք երևույթները պարզաբանելու համար Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդացու, Ագաթանգեղոսի, Մովսես Կաղանկատուացու, Անանիա Շիրակացու աշխատությունները, բացատուկայց Հայաստանի նկատմամբ՝ Հովհաննես Դրասխանակերտցու, Թոմա Արծրունու, և վերջապես, միջնադարի նկատմամբ՝ Ստեփանոս Որբելյանի աշխատությունները: Կան նաև մի շարք այլ պատմագրիներ, ինչպես Ցեղիշե, Ղազար Փարպեցի, Ցեղնիկ Կողբացի և այլն, վորոնց մոտ հանդիպում են հատուկառոր տեղեկություններ մեր առաջադրած առարկայի վերաբերմամբ:

Մեր հին մատենագրության մեջ կան նաև առանձին հուշարձաններ, շատ անգամ անհայտ հեղինակների մանր գործեր, վորոնք նույնպես կարող են ծառայել հայ իրավունքի պատմության ուսումնասիրական նպատակներին: Այդպիսի հուշարձաններ են «Գիրք թղթոց» կոչված հավաքածուները, «Գահնամակը», անհատական հիշատակարանները: «Գիրք թղթոց» անունով են հայտնի մեզ հասած մատյաններ, վորտեղ ամփոփված

են զանազան անձնական ու պաշտոնական դրութիւններ, հաղորդակցութիւններ, նամակները՝ հասարակական, քաղաքական, դաւանաբանական ու նման հարցերի մասին: Այդ «թղթերը», բղխելով զանազան պաշտոնական անձերից, քաղաքական ու եկեղեցական ականաւոր գործիչներից, կազմւում էին կաթողիկոսական ու իշխանական դիւանններում: Այդ դրութիւնների մէջ կարելի է գտնել հետաքրքրական տեղեկութիւններ, վկայութիւններ, քաղուածքներ կանոնադրքից և իրաւաբանական բնոյթ ունեցող վաւերագրերից:

Մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում «Գահնամակը», դրված մագաղաթի վրա, որ դիպլոմատով հայտաբերվել է XIX դարի յերկրորդ կեսի սկզբներին Թբիլիսիում, մի հին հայերեն ձեռագրի կազմին փակցրած[49]: Սա մի ցուցակ է Հայաստանի նախարարական տների, դասաւորված ըստ գահերեցութեան աստիճանի, և վորոշ պատկեր է տալիս հին ֆեոդալական հիերարխիայի, այն է՝ «բարձ ու պատիվ» վայելելու իրաւունքի մասին: Բացի այս «Գահնամակ»-ից, վոր դրականութեան մէջ հայտնի է Սահակ- Վռամյան (Սահակ կաթողիկոսի կողմից ներկայացված ու պարսից Վռամ Թագաւորի կողմից հաստատված) անունով, հայտարերված է նաև մի այլ վարիանտ՝ գահնամակ անունով, հայտնի նաև Սրշակ- Ներսիսյան: Վերջապես՝ այս յերկու այսպես կոչված Սրշակ- Ներսիսյան: Վերջապես՝ այս յերկու գահնամակների հետ սերտ առնչութիւն ունի մի այլ գահնամակ, վոր մեր պատմագիտական գրականութեան մէջ հայտնի է «Զորանամակ» անունով[50]: Այս հուշարձանի առանձնահատկութիւնն այն է, վոր առաջ է բերված նախարարական տների ցանկը, նշելով յուրաքանչիւրի զորքերի քանակը:

Զանգրագառնալով այստեղ վերոհիշյալ գահնամակների չուրջը ծագած թեր ու դեմ կարծիքներին՝ նրանց վաւերականութեան ու ծագման ժամանակի նկատմամբ, պետք է նշել, վոր համենայն դեպս այդ «գահնամակները» խորթ յերևույթներ չեն հին հայ պատմութեան տեսակետից և նրանց պատմական ու կենցաղային հիմքը իրոք յեղել է «գահերեցութիւնը», կամ ֆեոդալական հիերարխիայի սկզբունքը: Այսպես թե այնպես, նրանք առանում են պատմական վաստագրի բնոյթ, անկախ ծագման ժամանակի անորոշ հարցերից, վորովհետև այդպիսի

դրավոր հուշարձանի ծագումն անհնարին կը առանց պահպանության ինտիտուտի գոյության:

Ինչ վերաբերում է «Հիշատակարաններին», վորոնք պատկանում անձերի դրած համառոտ հիշատակումներ, ավանդություններ և նկարագրություններ են իրենց ժամանակակից դեպքերի մասին և սովորաբար կցված են ձեռագիր մատյաններին, նրանք մեծ մասամբ միջին դարերին են պատկանում և կարևոր նշանակություն ունեն: Սակայն այդ հիշատակարանները տակավին ուսումնասիրված և իմ մի հավաքված չեն և, վոր դժվարն է, հրատարակված չեն: Ուստի նրանք առայժմ անմատչելի են մնում իրավագիտության ու պատմագիտության համար:

Հայ պատմագիրների մատենագրության նյութերը կարելի է հարստացնել նաև այն ուրույն պատմագրական աղբյուրներով, վորոնք տեղեկություններ են տալիս հին հայերի մասին: Թեև այդ բնագավառում նյութերը հարուստ չեն, բայց և այնպես հին հունական (Հերոդոտ, Ստրաբոն, Քսենոֆոն, Պլուտարքոս), հին հռոմեական (Տակիտոս, Ամմիան, Պլինիուս), բյուզանդական (Պրոկոպիոս), արաբական (Տաբարի, Ցակուբի, Բալաձուրի և այլն) և վերջապես ասորական պատմագրություններում հանդիպում են յերբեմն հետաքրքրական տեղեկություններ հին հայ կենցաղի ու հասարակական հարաբերությունների մասին: Պետք է ասել, վոր ասորական աղբյուրները տակավին բավարար չափով մեզանում ուսումնասիրված չեն, ուստի մեզ չատ բան այդ դրականություն հայտնի չէ, մինչդեռ հայ ասորական հարաբերությունները, մանավանդ Հայաստանում քրիստոնեության տարածման դարերում, խիստ զարգացած են յեղել:

## VII. ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատմագրության հետ հարակից, իբրև իրավունքի պատմության աղբյուր, կարևոր նշանակություն են ստանում վիմական արձանագրությունները: Սրանք հավիտենական, մշտնջենական հուշարձաններ են համարվել, մի տեսակ մնայուն, հետնորդ դարերի համար պահպանվող վավերագրեր, ուր դրոշմված են վոչ միայն քաղաքական դեպքերի հիշատակում-

նը, այլև իրավական դործարքներ ու օրենսդրական ակտեր: Այդպես են ասորա-բաբելական (սկսած XX դ. նախքան մեր տար.), խալդական (IX դ. նախքան մեր տար.) և այլ սեպագիր արձանագրություններն իրենց ժամանակիվա թագավորների դործունեության մասին:

Նույնն ենք տեսնում Հայաստանում, ուր հայտաբերված են ահագին քանակով վիմական արձանագրություններ: Սրանք ըղխում են հայկական մի ջավայրից և բավականաչափ լույս են սփռում սոցիալ-իրավական հարաբերությունները պարզաբանելու վրա: Այդ արձանագրությունները, մոր առնչություն ունեն մեր ներկա աուարկայի հետ, հանդիսանում են հայ թագավորների հրովարտակներ, ֆեոդալ իշխանների, զանազան բարձր պաշտոնատար անձերի հրամաններ, կարդադրություններ, վորոշումներ հողերի բաշխման, հարկերի, չինականների, դյուղերի և զանազան դույքերի, շինարարական աուարկաների և այլն մասին: Այսենահին արձանագրությունները մեզ հասել են հունարեն լեզվով, այսինքն՝ հայ տաուերի դյուտից առաջ դրված. դրանք են՝ Ասարանի արձանագրությունը[51], վորով դրված. դրանք են՝ Ասարանի արձանագրությունը[51], վորով Տրդատ թագավորը, հավանորեն Տրդատ Մեծը (IV դարի սկզբին), Հոդեր և նվիրում Նիք դավառում գինձունի նախաբարձներից մեկին: Մյուսը հին Տիգրանակերտի պարսպի վրա կերտված արձանագրությունն է, վոր պետք է վերադրել III դարի Աբշամունյաց հեթանոս թագավորներից մեկին[52]: Վերջինս դիմում է Հալատակ քաղաքացիներին, հայտարարելով իր դիվանագիտական հարաբերությունների մասին պարսից թագավորի ու հռոմեացիների հետ ինչպես և Տիգրանակերտը հայ դորքերով դրավելու մասին: Կան և լատիներեն արձանագրություններ, ինչպես որինակ՝ Վաղարշապատինը, վորի մեջ խոսվում է Հայաստանը նվաճող հռոմեական դորավարների մասին[53]: Հայերեն արձանագրություններն սկսվում են VII դարից և ամենամեծ թիվով հանդես են դալիս XII—XIII դարերում, պարունակելով չափազանց հարուստ նյութ ֆեոդալական սիրապետության նաև իրավաբանական ակտերի մասին (հողային իրավունք, վաչկատական իրավունք, ֆինանսա- հարկային իրավունք, ճորտատիրություն և այլն): Դժբախտաբար արձանագրություն-

ների զգալի մասը, վորոնցից չատերը հայտաբերված ու արտանկարված են վերջին ժամանակներում, տակավին մնում են չհրապարակված, հետևապես առժամանակ անմատչելի լեն ուսումնասիրողների համար: Հրապարակվածներն էլ, ցրված լինելով զանազան պարբերականներում ու առանձին գրքերում, մեծ դժվարություններ են առաջացնում՝ նրանցից լրիվ ոգտվելու համար: Միակ ամփոփ հավաքածուն, «Վիմական տարեգիրքը»[54ա], ներկայումս էլ դադարնում իբր պետական հրատարակություն և, բացի այդ, հրատարակիչը լրիվ էլ ընդգրկել ու ամփոփել չուր ժամանակ հայոնի բոլոր արձանագրություններըը:



ՀԱՏՎԱԾ ՑԵՐՈՐԴ

# ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

### Ա. ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

*Ցուրաքանչյուր հասարակության մեջ գործող իրավունքը* վերնաշենքային կատեգորիա է: Իրավունքը, որպես հասարակական հարաբերությունները կարգավորող իրավարանական նորմերի խառացումն, առաջանում է դասակարգայնորեն տրոհված հասարակության մեջ, ծառայելով տիրապետող դասակարգին իբրև նրա պետական կազմն ու չհատգործման յեղանակները որինականացնող գործոն: Ուստի իրավունքն ու նրա արտահայտիչ որենքները դասակարգային հասարակության մեջ, վոր անցել է սոցիալ-անտեսական յերեք ֆորմացիաները— սարկատիրական, ֆեոդալական ու կապիտալիստական —ընդունում են տվյալ սոցիալ- անտեսական միջավայրին համապատասխան ձևեր ու բովանդակություն: Նույնը պետք է ասել *հայ իրավունքի* նկատմամբ:

Վորքան մինչև այժմ հայտնի է պատմական տվյալների հիման վրա, հայերի հասարակական կազմը, սկսած քաղաքակրթության սպարզեցում նրանց յերևալու մոմենտից մինչև XVIII դարը, յեղել է ֆեոդալական. այդ հասարակության արտադրության յեղանակը հիմնված եր ֆեոդալական չհատգործման վրա: Հետևապես հայերի քաղաքական կառուցքը, թե՛ այն դասակերպում, յերբ Հայաստանը հանդիսացել է ազգային պետություն, և թե՛ այն ժամանակները, յերբ նա դոնվում եր ուրիշ նվաճողների իշխանության ներքո, միշտ էլ հանդիսում եր ֆեոդալական հիմքերի վրա: Ուստի Հայաստանի պատմության այդ

բաղմադարյան ընթացքում դործող իրավունքը, իրավական ինստիտուտները կրել են ֆեոդալական բնույթ:

Սակայն հայկական ֆեոդալիզմը յերկար ու ձիգ դարերի ընթացքում, արտադրողական ուժերի և սրանց վրա հենվող հասարակական- արտադրական հարաբերությունների զարդացումով, անցնում է զանազան ետապներ, բյուրեղանում և սոցիալ-տնտեսական համապատասխան ձևերի, դրսևորվում է բնորոշ ու յուրահատուկ քաղաքական դծերով, բայց և այնպես հիմնականում անփոփոխ և մնում ֆեոդալական արտադրության յեղանակը: Ըստ այդ ժամանակաշրջանների սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմանների՝ հայ իրավունքն էլ տարբերվում էր համապատասխան վարդ ու բովանդակությամբ, արտահայտում էր տիրապետող դասակարդի իրավահայեցողությունը:

1· ՎԱՂԱՖՈՒՑՆ ՖԵՈԴԱԼԻԶՄ — Այս շրջանը ժամանակագրորեն սկսվում է մոտավորապես Աքեմենյան տիրապետությունից Հայաստանում, այն է՝ մոտավորապես VI դարից (ն. ք· մեր տարեթվարկումն) և տևում է մինչև արաբական տիրապետությունը, այսինքն մինչև VII դարը (մեր տարեթվարկության), դրեթե մի հազարամյակ, յերբ Հայաստանի սոցիալ-քաղաքական կառուցքը նախարարական էր: Սակայն այդ նախարարական կարգը Հայաստանի հազարամյա պատմության ընթացքում չի ներկայացնում միակերպ ֆեոդալական պատկեր: Այդ շրջանի սահմաններում նշմարում ենք զանազան իրար հաջորդող, հետեղհետե զարդացող ետապներ: Սկզբնական ետապը՝ վաղագույն ֆեոդալիզմն է, յերբ տոհմա-ցեղային հասարակության քայքայումից հետո սկսվում է նախարարությունների կազմավորման պրոցեսը, վորը զարդանում է Արտաշիսյան հարստության որով, մանավանդ Տիգրան Մեծի թագավորության ժամանակ: Այս ետապը հայոց պատմության ամենամութ և դեռ չլուսաբանված եջն է: Այդ վաղագույն ֆեոդալիզմը պատկերելու համար դեռ բացակայում են քիչ թե շատ վստահելի պատմական տվյալները, ևս առավել դժվար է խոսել այս ետապի ֆեոդալական իրավունքի բնորոշ դծերի մասին: Բայց և այնպես պետք է յենթադրել, վոր նախարարու-

թյուններէ կազմավորման ընթացքում ձևավորվում էր նաև դործող իրավունքը: Անշուշտ, այստեղ խոսք անդամ չի կարող լինել վորևե որենսդրական դործունեության, դրավոր որենքի մասին: Այստեղ բացարձակորեն տիրապետում էր սովորութային իրավունքը, հասարակական հարաբերություններում դործում էին միևն սովորութային իրավունքի նորմերը: Ինչպես վոր տոհմա-ցեղային կազմի քայքայումով նրա ամբարիների վրա բարձրացան նախարարությունները, այնպես էլ նույն տոհմային հասարակության քայքայումով ու սոցիալ-տնտեսական չերտավորումով՝ սովորույթները, ձևավորվելով դասակարդայնորեն և վերածվելով իրավական նորմերի, դառնում են նախարարական իրավունքի աղբյուրներ: Հայկական վաղադույն ֆեոդալիզմին համապատասխանում էր նաև իր հյությամբ վաղադույն նախարարական իրավունքը: Այս նախարարական իրավունքի մեջ դեռևս դդալի չափով յերևում էին տոհմային հասարակության վերապրուկները, վորոնք կարողանում էին դարմանալի պահպանողությամբ հարմարվել, ժամանակի ու պայմանների համեմատ, սոցիալական հարաբերությունների ներհակության և վերասերվել դասակարդային վոդով:

2. ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.— Արշակ կամավորված նախարարական կառույցը մանում և հաջորդ հատվածն է՝ Արշակունյաց հարստության դարաշրջանը, ուր նա հասնում և ֆեոդալական զարգացման չարձր աստիճանին: Այստեղ և, վոր Հայաստանի նախարարական կառույցն իր բոլանդակ ամբողջությամբ ու զարդացած մանրամասնությամբ կանդնած և մեր առաջ: Զարմանալի չե, վոր Մովսես Խորենացին իր Պատմության մեջ հայ առաջին Արշակունի թագավոր Վաղարշակի[54]ր անվան հետ և կապում հայ նախարարությունների հիմնադրումն ու զարդացումն, ինչպես և նրանց կոնսոլիդացիան մի պետականության մեջ ու թագավորի մխահեծան իշխանության ներքո: Ի հարկե, Մովսես Խորենացին ճիշտ տեղեկություն չի տալիս, քանի վոր նրա պատմական շրջահայացքից դուրս և ընկել հայ ֆեոդալիզմի, հետևապես հայ նախարարության, ինստիտուտի զարդացման ժամանակաշրջանում: Բայց հայ պատմագրի խոսքերը վորոշ չափով արժեք են ստանում այն

տեսակետից, մոր նրա ամբողջ պատմությունը Վաղարշակի պետական հինարարության մասին արտացոլում է Հայաստանի քաղաքական վերականգնման դարաշրջանն ըստ ազգային ամենադարձությունների, մորոնց համաձայն այդ վերականգնումը խարխլված եր բարմաթիվ կազմակերպված նախարարությունների համակենտրոնացման վրա, նախարարությունների, մորոնցից մի քանիսն, այսպես կոչված ավագ նախարարությունները, հզոր ֆեոդալական իշխանություններ էին Արշակունիների պետության դեմ: Ահա այդ նախարարական տները, մորոնց հզորությունն ու քաղաքական-պետական նշանակությունն ահսել էին զարգանալ նախորդ շրջանի սոցիալ-անտեսական պայմաններում, Արշակունյաց հարստության շրջանում այնպիսի աչքի ընկնող դեր էին խաղում, մոր նրանց առաջացումը վերագրվում եր Վաղարշակին, հայ Արշակունյաց դինաստիայի հիմնադրին: Ահա այդ ավանդական մոտապատկերը, մոր արձագանք և գտել նաև Մովսես Խորենացու պատմության մեջ, մեզ հիմք և ծառայում յեղրակացնելու, մոր իրոք նախարարությունները Արշակունյաց դարաշրջանում արդեն կազմակերպված սոցիալ-քաղաքական միավորներ էին հայկական ֆեոդալիզմի զարգացման այս ետապում: Հիրավի, պատմական իրադարձությունները եվ այդ են ապացուցում:

Արշակունյաց դինաստիայի քաղաքականությունը, այն է՝ ստեղծել միակերպ, քաղաքականապես ուժեղ պետություն ֆեոդալ իշխանությունների կոնսոլիդացիայի ու համակենտրոնացման վրա՝ դեմ եր առնում նախարարական տների կենտրոնախույս տենդենցներին: Այդ պայքարի այս կամ այն հետևանքն իրականում կախված եր լինում թագավորական իշխանության ռեալ ուժից, մորը, ինչպես նշվարում ենք Արշակունյաց թագավորների պատմությունից, մեծ մասամբ հեղհեղուկ եր: Թերևս Հայաստանի քրիստոնեացումը, մոր տեղի յեր ունենում վերևից Տրդատ թագավորի ու Գրիգոր Լուսավորչի ջանքերով, դառնալու յեր նրա հեղինակների նկատառումներով մի նոր քաղաքական միջոց, մոր պետք և դարեր ու թուլացներ այդ ժամանակ գոյություն ունեցող նախարարական կենտրոնախույս ուժերը՝ կրոնատաճարական դաղափարախոսության ազդեցությամբ: Սա-

կան սոցիալ-տնտեսական պայմաններն այլ կերպ էին տնօրինում ընթացիկ պատմությունն և հեղաշրջում Արշակունի թագավորների վարած ամբողջ քաղաքականությունը: Մի պահ սկզբնական հաջողությունից հետո թագավորական իշխանությունն ստիպված եր տեսնել, որ նորամուտ քրիստոնեությունը վո՛չ միայն չկասեցրեց նախարարների կենտրոնախույս ձգտումները, այլև մի նոր սխոյան ստեղծեց իր դեմ: Հեթանոս քրմական ֆեոդալների ավերակների վրա բարձրացավ քրիստոնեա-յունական ֆեոդալական դասը, որն անհամեմատ ավելի ուժեղ եր, քան իր նախորդը: Կազմակերպվելով հար ու նման աշխարհիկ ֆեոդալականության, այն ե՝ նախարարություններին, նա չնորհիվ իր հիերոկրատական ապարատի և տնտեսական առավելությունների, ձեռք բերեց էրականում այն կենտրոնաձիգ ուժը, որը տենչում էին Արշակունի թագավորներն էրենց համար, մի ուժ, որ սկսեց դեր խաղալ սկզբում յերկրի ներքին քաղաքականության, իսկ հետագայում նաև արտաքին քաղաքականության մեջ: Այժմ թագավորական իշխանությունն իր առավելն դիրքը պահելու համար գործ ուներ վո՛չ միայն կենտրոնախույս նախարարների հետ, այլև հաշիվ եր տեսնելու իր դեմ ծառացած հոգևոր ֆեոդալականության հետ: Վերջինս ավելի վտանգավոր ու ճակատագրական հակառակորդ հանդիսացավ, որը դիտեր իր շահերի տեսակետից ոգտագործել թագավորի ու նախարարների միջև չդադարող պայքարը: Այդ պայքարը դարձել եր նախարարական եքսպանսիայի բաղխումների առտարեզ: Այդ հակամարտությունն իր դագաթնակետին հասավ վերջին Արշակունիների, Արշակ ու Պապ թագավորների որոշ, յերբ ազդային սեռակալությունն և հայ թագավորական իշխանությունն էրենց որհասի չեմքին եյին կանգնած ներքին ու արտաքին հարվածներից:

Այդ ներքին պայքարն իր հերթին նյութվում եր նաև արտաքին միջամտություններով: Հայաստանի տերիտորիան իր առևտրա-տրանսիտային և ստրատեգիական մեծ նշանակությամբ դարձել եր յերկու հարևան մրցող հզոր պետությունների՝ Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև մի կռվախնճոյր, որը դրդռում եր նրանց աննկեքխոն ախորժակները: Հայաստանի ներքին այդ իրար դեմ պայքարող նախարարական խմբավորումների

հակամարտությունն ավելի ևս սրվում այդ արտաքին ուժերի միջամտությամբ, առաջ բերելով բյուզանդական ու պարսկական ոսխնոտացիայի ներհակությունը: Այստեղ ահագին դեր էր խաղում հելլենեցական ֆեոդալական դասը, որի թևքումն ըմբղձներում Բյուզանդիոնի և հետագայում Պարսկաստանի ոսոխն՝ վճռական նշանակություն էր ստանում, խոնարհելով կշեռքը նժարն այս կամ այն կողմը: Այս պայքարում թագավորական իշխանությունը, չնայած իր լարած ջանքերին, միանգամայն ուժասպառ եղավ, և Արշակունյաց հարստությունը տապալվեց: Հայաստանը կորցնելով իր ազգային պետականությունը, նախ՝ 387 թ. և ապա 428 թ. բաժանվեց Բյուզանդիոնի ու Պարսկաստանի միջև, որով վերջապես իրականացան այդ երկու մրցակից հզոր պետությունների աննենգխոհ նպատակները:

Ի՞նչ էին ներկայացնում այն իրավաբանական նորմերն ու իրավական ինստիտուտները, որոնցով բնորոշվում էր Արշակունյաց ժամանակաշրջանի նախարարական իրավունքը: Հայաստանի պետական կենտրոնական իշխանության ու առանձին նախարարական իշխանությունների առկայության ընդունին սահմանադրվում էր սենիորական ու վասալական հարաբերությունների, իրրև ֆեոդալական հիերարխիայի, սիստեմը, հարաբերությունների, որոնք կարգավորվում էին վորոշ իրավական նորմերով:

Ահա այդ նորմերի խախտումներն էին, որ հանդիսանում էին սոցիալ-տնտեսական պայմանների աոաջացող միջֆեոդալական պայքարի ձևական արտահայտությունները նախարարական միջավայրում: Նախարարական իրավունքն, իրրև ֆեոդալական հասարակության հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի մի սիստեմ, թեև էր եյությամբ միակերպ էր, սակայն նա իր մեջ պարփակում էր վորոշ հակասություններ, որոնք և պայմանավորում էին ֆեոդալական ներքին պայքարը: Առաջին հայ Արշակունի թագավորները, վինելով ծագումով պարթևական, հետևապես ծնված ու սնված պարթևական ֆեոդալիզմի տրադիցիաներով, ջանում էին նույն ֆեոդալական իրավունքի նորմերը վերհաստել Հայաստան և կարգավորել թագավորի, իրրև դերագույն դեսպոտ իշխանի ու յեն-

թակա նախարարների սեռիորական ու վասսալական հարաբերությունները պարթևական ձևով: Սակայն հայ նախարարությունները, որոնք դոյություն ունեին Հայաստանում դեռ Արշակունիներից առաջ և իրենց սեփականության սահմաններում վարչական ու անտեսական կոմից մի ինքնավար էին, զեկավարվում էին տեղական պայմաններում զարգացած ֆեոդալական իրավունքի նորմերով, որոնք դոյացել ու ձևավորվել էին տակավին վաղադույն ֆեոդալիզմի ժամանակաշրջանում: Տեղական ֆեոդալական իրավունքի մեջ պահպանված վերապրուկները ու մնացուկները նախորդ տոհմային հասարակակարգից՝ ավելի մեծ ինքնուրույնություն ու անկախություն էին վերապահում նախարարական տներին նահապետներին, նման ավանդական տոհմապետներին: Նախարարական նահապետները չունեին իրենց դլխավորող իշխողներ և իրարից անկախ էին: Ահա Արշակունյաց պարթևական ֆեոդալիզմի կենտրոնաձիգ սկզբունքին, որով բնորոշվում է տակական ֆեոդալիզմի էությունը, հակադրվում էր նախարարական իրավունքը, այն է՝ տեղական ֆեոդալիզմի սովորութական իրավունքի նորմերը: Նախարարական իրավունքով էր արդարացվում այն եքսպանսիան, որ այնքան հատուկ էր Հայաստանի հին պատմության մեջ նախարարներին, որոնք դործադրում էին տանեն մինչև ընդլայնելու իրենց ֆեոդալական շահագործման տերիտորիան:

Սակայն նախարարական իրավունքը չէր պարփակվում սոսկ իշխանական ներդատակարդային հարաբերությունների տահմաններում: Այն տարածվում էր ավելի մեծ չափերով ֆեոդալական հասարակության ներհակ դասակարդի, չհատկործվող մասսաների վրա: Այս դեպքում թե՛ պարթևական և թե՛ տեղական հայ ֆեոդալական իրավունքը վոչ մի տարբերություն չուներ, քանի որ արտադրության ֆեոդալական կեղանակը, ֆեոդալական շահագործման ձևերը միևնույն էին, միատեսակ էին: Հենց այս ներհակ դասակարդային հարաբերություններն էին հանդիսանում այն հիմնական բնագավառը, որտեղ դործում ու դարդանում էին նախարարական իրավունքի նորմերը: Սրանց դարդանում էին նախարարական իրավունքի, սոցիալ-անտեսական մասնակի կերևույթների նկատմամբ վորոշ պարտիկու-

լարելով մոցնելով ընդհանուր Ֆեոդալական իրավունքի մեջ, որը Արշակունյաց ժամանակաշրջանում արդեն ներծծել էր իրանա-պարթևական տարրեր:

Սակայն չմոռանանք, որ հենց այս ժամանակաշրջանում մուտք գործեց Հայաստան քրիստոնեությունը: Վերջինս Ֆեոդալ հասարակության մեջ առաջ բերեց որոշ սոցիալ-քաղաքական տեղաշարժումներ, առաջատար դործոն ունենալով յեկեղեցական դասը, որ կառուցվել էր նախարարական կարգի համակերպությամբ: Այսպիսով, հանուր նախարարական իրավունքի սահմաններում աշխարհիկ իրավաբանական նորմերին կից յերևան են դալիս յեկեղեցական կամ կանոնական իրավունքի նորմեր, որոնք սահմանադրվում էին հիերոկրատիայի ձեռքով, ծառայելով նրա սոցիալ-տնտեսական շահերին ու քաղաքական նպատակներին: Սհա այդ միջֆեոդալական պայքարն Արշակունյաց ժամանակաշրջանում, յերբ յեկեղեցական դասն այնքան դործոն դեր էր խաղում, իր արձագանքն ունեցավ հայ իրավունքի զարդացման մեջ: Այստեղ կանոնական իրավունքի սահմանադրումով՝ նախարարական իրավունքի աշխարհիկ ու յեկեղեցական նորմերն սկսում են իրար հակադրվել և մյուս կողմից՝ այդ պայքարի հետևանքով որևէ դրական կարդավորումն յենթարկվում է ուժեղացող հիերոկրատիայի ձեռներեցությանը: Արշակունյաց ժամանակաշրջանի հայ իրավունքի այդ զարդացման մեջ անդրադառնում են նաև արտաքին քաղաքական ազդակները: Մինչդեռ նախարարական իրավունքի աշխարհիկ իրավաբանական նորմերը վրում էին զուտ տեղական ազդային բնույթ, որոշ չափով ներծծելով պարթևա-իրանական Ֆեոդալական իրավունքի տարրերը, ընդհակառակն, նախարարական իրավունքի յեկեղեցական-իրավաբանական նորմերը լրիսում էին հուն յեկեղեցական իրավունքի նորմերից, որոնք ներմուծվում էին Հայաստան Փոքր Ասիայից մուտք գործող քրիստոնեության հետ: Այդ պարագան հատկանշելի յե զարձնում հայ յեկեղեցական Ֆեոդալականության բյուզանդական կողմնորոշումն Արշակունյաց շրջանում:

3. ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՑՄԱՏԱՆ.— Մենք տեսանք, որ միջ-Ֆեոդալական պայքարն և յերկու հարևան հզոր պետություննե-

րի հակամարտությունը Հայաստանի տերիտորիայի չորքն այն հետևանքն ունեցան, որ Արշակունյաց տապալումով Հայաստանը մասնատվեց Բյուզանդական կամ Արևմտյան և Պարսկական կամ Արևելյան Հայաստանի: Սրանով Հայաստանի նախարարական կառուցքը ճեղքված սացավ, որ դնալով խորանում եր և ներփակում իր մեջ հետագա քայքայման սաղմերը: Հայկական ֆեոդալիզմն և նախարարական իրավունքը մտնում են իր զարգացման յերրորդ հասալը, հետարշակունյաց ժամանակաշրջանը, որ Պարսկական Հայաստանի վերաբերմամբ մեր պատմության մեջ հայտնի յե մարզպանական անունով, որովհետև Հայաստանը կառավարվում եր Սասանյանների կողմից նշանակված թագավորական տեղակալներով՝ մարզպաններով: Իսկ Արևմտյան կամ Բյուզանդական Հայաստանը կառավարվում եր Comes-ների ձեռքով, որոնք վարչա-ռազմական տեսակետից նույն նշանակությունն ունեյին, ինչ որ մարզպանները Արևելյան Հայաստանում:

Ինչո՞ւմն եր կայանում նախարարական կառուցքի ճեղքվածքը և ի՞նչպես եր անդրադարձել այդ նոր դրությունը նախարարական իրավունքի վրա:

Արշակունիների վերջին ժառանգների վերացումով (մոտավորապես 420 թ.) հայ նախարարներն անմիջորեն յենթարկվում եյին, երբև ֆեոդալ վասսալները, իրենց նոր այշուղերեն Սասանյան թագավորներին: Թվում եր, որ նախարարները, Արշակունյաց դինաստիայի տապալումով, հասել եյին իրենց նպատակին. նրանց կենտրոնախույս ձգտումներն ստացել եյին վորոշ բավարարություն, դուրս վանելով ասպարեզից իրենց դեմ ծառացող Արշակունիների կենտրոնաձիգ իշխանության քաղաքականությունը: Սակայն հայ նախարարները Արշակունիների դեմ ծառացող դարավոր պայքարում դոլծ ունեյին կենտրոնացող իշխանության և ֆեոդալական սերտ հարաբերությունների կոնսոլիդացիայի առաջին քայլերի հետ: Իսկ այժմ, Հայաստանի բաժանումով ստեղծված նոր պարմաններում, նրանք ստիպված պիտի լինեյին հաշվի առնել սերտ դրությունը, յերբ Բյուզանդիայում ու Պարսկաստանում սուվերենիտետը պատկանում եր արևելյան տիպի դեսպոտ թագավորներին, որոնք ոժտված եյին արդեն կազմա-

կերպված ուժեղ կենտրոնական իշխանությամբ և վաղուց կոնսոլիդացիայի ենթարկել տեղական ֆեոդալական միավորները: Հիրավի, քանի վոր Պարսկական Հայաստանում, սկսած 387 թվից մինչև 429 թ., անվանորեն դեռևս թագավորում էին Արշակունյաց վերջին ժառանգները, և Սասանյաններն իրենց առաջին քայլերում քաղաքական նկատառումներով հանդուրժում էին հայ նախարարների տեղական իրավունքները, հայ նախարարները կարծես ապահովել էին իրենց վիճակը, վորի համար այնքան պայքարում էին Արշակունիների դեմ: Բայց իրերի դրությունը միանգամայն փոխվում է Սասանյան Հաղկերտ Ա-ի թագավորության վերջին շրջանում և նրա հաջորդների, մանավանդ Հաղկերտ Բ-ի (438—457 թ. թ.) և Պերոզի (457—484 թ.թ.) որով, յերբ Բյուզանդիայի դեմ, Հայաստանի տերիտորիայի շուրջը շարունակվող հակամարտության հետևանքով, Սասանյան թագավորները ձեռնամուխ են լինում սահմանափակելու հայ նախարարների իրավունքները, կոնսոլիդացիայի ենթարկելով նրանց ֆեոդալական դասակարգային ինքնուրույնությունն և այն համակերպելով հանուր պարսկական պետական կազմին: Նույնը տեղի է ունենում բյուզանդական կայսրների կողմից իրենց ենթակա Արևմտյան Հայաստանի նախարարների նկատմամբ:

Այս պայմաններում բուռն կերպով դրսևորվում են այն հակասությունները, վորոնք հատուկ են մի կողմից՝ կենտրոնախույս ձգտումներով նախարարական ֆեոդալիզմի և մյուս կողմից՝ նոր սյուզերենների, այն է՝ բյուզանդական կայսրների ու Սասանյան թագավորների մեջև, հակասություններ, վորոնք վերջիվերջո պիտի ընդհարվեին: Այդ հակասության սոցիալ-տնտեսական հիմքերը կայանում էին նախ՝ նրանում, վոր Հայաստանի մասնատումով ու բաժանված մասերի առևտրական փոքր ու միջնավոր Ախայում և մրցելով հեղեմոնիայի հա-

մար, իրենց առևտրական կապիտալի ճանապարհները հարդարելու և ծավալումն ապահովելու շահերից դրդված՝ պետք է վերացնեին այն խոչընդոտները, որոնք կային Հայաստանում, իրեն տարանցիկ տերիտորիայում, հանձինս նախարարությունների և ապահենարան իշխանությունների: Այս սոցիալ-տնտեսական հիմքերից էլ բղխում էին նրանց քաղաքական ծրագրերն ու գործողությունները:

Սասանյան քաղաքականությունն այս դեպքում, ինչպես տվեցինք և Ցեղիչեյի ու Ղազար Փարպեցու պատմություններից, հայ նախարարական կառույցը կազմալուծելու և նրա վենտրոնատեսա ձգտումները կոտրելու նպատակով՝ դիմում էր բավականին կարուկ միջոցների: Սասանյան թագավորների համար առաջնակարգ նշանակություն և տանում հայ նախարարներին մաղձրանց կրոնին դարձնելու խնդիրը, որի համար նրանք սկսում են մոգական կրոնի, իրեն պետական կրոնի, բռնի պատվաստումը Հայաստանում: Սրանով յերկու նպատակ էր հետապնդվում: Առաջին՝ հայ նախարարներին կրոնական կապերով միացնել պարսկական պետականությանը, որպեսզի նրանք կախումն ունենան Սասանյան արքունիքից և իրենց դասային շահերով ձուլվեն վերջինիս հետ: Սրանով խորտակվում էր քրիստոնյա Բյուզանդիոնին հարող որևէ նացիան հայ նախարարական իշխանների շարքում, որոնց դլխավորում էր Մամիկոնյան տոհմը, և, ընդհակառակը, ուժեղանում էր պարսկական որևէ նացիայով տոգորված նախարարների կուսակցությունը, որի մեջ ներգործական դեր էին կատարում Սյունի և Արծրունի նախարարական տոհմերը: Յերկրորդ՝ խորտակել յեկեղեցական ֆեոդալական դասը, որն ամենաուժեղն էր հայ նախարարական կազմի մեջ և դեկավար դեր էր ստանձնել աշխարհիկ ֆեոդալական միջավայրում, հանդիսանալով ամբակուռ կենտրոնացնող ապարատ, որն իր դաղափարախոսությամբ ու քաղաքական ձգտումներով միշտ հարած էր քրիստոնյա Բյուզանդիոնին:

Սասանյան քաղաքականությունն այնուհետև իրեն սիստեմ էր դարձրել՝ չճանաչել նախարարների տոհմիկության իրավունքը, նսեմացնել նրանց ֆեոդալական հիերարխիայի աստիճանները, որոնց հետ կապված էին ավագ ու կրտսեր նախարարներին

ժառանգաբար ու իրավաբար պատկանող պետական պաշտոնները: Այդ պաշտոնները այժմ տրվում էին շատ անգամ աննշան նախարարներին, որոնք հավատարիմ էին ճանաչվում Սասանյանների կողմից կամ ընդունում էին մազդեզանց կրոնը:

Վերջապես, նախարարների ինքնուրույնությունն ու իշխանական արժանապատվությունը նսեմացնելու, ինչպես և նրանց «ըստ օրինի նախնեաց» վաղեմի սոցիալական ու քաղաքական դիրքը թուլացնելու նպատակով՝ նախարարների դատողն ու քննողը, նրանց վրա անմիջական իշխանությունը դործադրողը դառնում է մո՛գ թե դերագույն սենյորը՝ պարսից թագավորն, այլ, ըստ էության, նրա տեղակալը՝ մարզպանը: (ՂՓ, III, ՁԹ, 161):

Այսպիսի հարվածներով էին ջանում Սասանյան թագավորները ջլատել հայ նախարարների կենտրոնախույս տենդենցները և խարխլելով նրանց սոցիալական ու քաղաքական նշանակությունը, սահմանափակել նախարարական ինքնուրույն իրավունքները ու համաձուլել նրանց պարսկական ֆեոդալականության հետ:

Պարսկական այդ քաղաքականության հետևանքն էղավ այն, որ նախարարների շարքերում խմորվող դժգոհությունը վերջնվերջո բռնկեց ապստամբությամբ, որի դլուխն եր անցած բյուզանդական կողմնորոշման ամենաակտիվ պաշտպան Մամիկոնյան իշխանական տոհմը: Այդ ապստամբությունը, որ տևեց դրեթե կես դար, հայ պատմագրության մեջ հայտնի է իր առաջին շրջանում Վարդանանց (սպարապետ Վարդան Մամիկոնյանի անունով) և ապա հետագայում Վահանանց (սպարապետ Վահան Մամիկոնյանի անունով) պատերազմներ անուններով: Բնորոշ է, որ հայ պատմագիրները Սասանյանների դեմ այդ ապստամբական չարժումները նկարագրում են իբրև կրոնական պատերազմներ, որտեղ, հերթով, հայ բարձր դղեկի ներկայացուցիչները ներդործող դեր էին խաղում: Այս հանդամանքը դիպվածական չեր: Մենք արդեն տեսանք, թե ի՛նչպիսի դիրք եր բռնել հայ յեկեղեցական ֆեոդալականությունն Արշակունիների տապալման դործում և թե ի՛նչպես նա Մամիկոնյան նախարարների հետ միասին դեկավարում եր

Պարսկական Հայաստանում բյուզանդական տրիենտացիան։ Ձևը պարսկական քաղաքականությունն սկսեց ամրապնդել հայ նախարարների դարավոր արտոնություններն ու ինքնուրույն իրավունքները, անշուշտ, այդ քաղաքականության հարվածները տեղում էին նաև յեկեղեցական դասի դլխին։ Ոտան հողևոր իշխանները, իրենց ֆեոդալական շահերից դրդված, հենց սկզբից հանդիսացան այդ ապստամբության հրահրողներն ու դործոն մասնակցողները, այդ պատերազմներին տալով կրոնական ազատագրման բնույթ։

Այդ ապստամբություններն ունեցան իրենց հետևանքները։ Սասանյան Պարսկաստանը, վոր այն ժամանակ դլալիսրին թուլացել էր արտաքին պատերազմներից, ստիպված յեղավ վերջվերջո դիջել պայքարող նախարարներին, և Վաղարշ թագավորի (484–488 թ. թ.) որոշ հաշտություն կնքվեց։ Նվաճական դաշնագրով վերահաստատվում էին նախարարների ու հողևոր ֆեոդալների նախկին իրավունքները։

Այս ուժական արյունալի պատերազմները Սասանյանների դեմ, ծանր կերպով հարվածում էին Հայաստանի տնտեսական դրության։ Ձեթի ստոկ մեծապես վնասվում ու ավերվում էին ֆեոդալ իշխանների տնտեսություններն, ապա ևս առավել տուժում էին նրանց յենթակա չինական մասսաները, իսկական արտադրողները, վորոնք, անշուշտ, արամադիր չէին պաշտպանելու իրենց շահագործող նախարարների շահերը։

Սակայն պարսիկների կրոնական հալածանքները և մանավանդ բանի հարկահանության սիստեմն այնպիսի ծանր ու աոստկալի չափերով էին ճնշում դյուղացիության, վոր վերջինս էլ իր վրկության տեսնում էր ստար նվաճողների դեմ ապստամբելու մեջ։ Պատմագիր Ցեղիշեն քանիցս հիշատակում է պատերների ծանրության մասին. «Էր ծանրութիւն հարկացն. քանդի ուստի արժանն էր առնուլ հարիւր դահեկան չափ, կրկին առնուին. սոյնպէս և եպիսկոպոսաց և երիցանց դնէին, ոչ մնայն չինաց, այլև աւերակաց։ Նա բնաւ ո՛վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մարդ և սակից, բաժից և հասից՝ և հարկաց լեառնց և դաշտաց և մարդեաց. ոչ լսա արքունի արժանաւորութեանն առնուին, այլ հինաբար յաւիշատակելով» (էջ

43)։ Յեվ այդքան հարկերի ծանրութիւնը, յեղիչեյի կարծիքով, նպատակ ուներ չինականներին անտնտապես քայքայել. «որ դչինականն վատնեցէ» (Անդ, 42)։ Սա մի պարարտ հող էր դյուզացիութեյան ապստամբութեյան համար, այս անդամ արդեն նվաճող պարթևների չհատատակումների ու անասելի հարկերի դեմ, վորի ծանրութեյան ամբողջ բեռը չինականութեյան ուսերին էր ընկնում։ Թեև նախարարների ապստամբութիւնները, սկզբում Վարդան Մամիկոնյանի և հետո Վահան Մամիկոնյանի դլխաւորութեյամբ, դասակարդային բնույթ էյին կրում, վորոնց անմիջական նպատակն էր՝ պաշտպանել ֆեոդալական իրավունքներն ու վաղեմի արտոնութիւնները, բայց և այնպես այդ ապստամբութեյանը միանում և նաև չինական դասակարդը։ Այստեղ անհնարին ենք ժամանակավոր դարձնում երկու հակադիր դասակարդերի՝ ուրապետող ազնվական կալվածատերերի և չհատատրծված դյուզացիական մասսաների, վորոնք թեև մնկնում էյին տարբեր սոցիալական շահերից, բայց դեմում էյին միևնույն կնային, այն է՝ տապալել նվաճողներին, վորոնցից յերկու կողմերն էլ նեղվում և տուժում էյին։ Այսպիսով, յերկու տարբատմբրական հոսանքները ձուլվում են միասնական չարժման, վոր դառնում և ազդային ազատագրման նպատակ։

*Մեր բուրժուական պատմագետների սխալն այն է, վոր նրանք, հավատարիմ մնալով իրենց դասակարդային դաղափարախոսութեյանը, այդ ապստամբութիւնների ազդային նշանակութեյունը վերագրել են միմիայն ուրապետող նախարարական դասակարդին և համակել ռոմանտիկ դույներով, չինծու ազդայնական բնույթով։ Իսկ վերջերս մեր նորագույն պատմագետները, վորոնցից մի քանիսն իրր թե կանդնած էյին մարքսիստական պատմագիտութեյան սկզբունքների վրա, հնդում էյին այդ ապստամբութիւնները վերածել կրոնական պայքարի և կապել միայն ուրապետող դասակարդի հետ, յերևելով այն փաստից, վոր այդ ապստամբական չարժումներին ակտիվ մասնակցութեյուն ուներ նաև հայ հոդևորականութիւնը։ Այդ մակերեսային տեսակետը հետևանք է մեխանիստական մոտեցման, վորի հետևանքով միանդամայն անտնտնել են պարսից ուրապետութեյան ներքո հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական զարդացման հիմ-*

նական մոմենտները: Այդ տեսակետի կողմնակիցները մոռանում են, որ ինչպես հաճախ տեսնում ենք նաև ուրիշ պատմության մեջ, ժողովրդական, մանավանդ գյուղացիական, ազատագրական շարժումները շատ անգամ ընթանում էին կրոնական առասպելի տակ:

Այդ պայքարը Սասանյան Պարսկաստանի դեմ թեև վերջացավ նախարարական դասակարգի ֆեոդալական իրավունքների ու արտոնությունների վերականգնումով, բայց և այնպես նախարարությունները, մանավանդ քայքայվելով, բավականաչափ կորցրել էին իրենց վաղեմի քաղաքական ուժն ու ազդեցությունը: Միայն յեկեղեցական ֆեոդալական դասն էր, որ այս քաղաքական իրագործություններում չքայքայվեց, այլ մյուսից դուրս յեկավ, վերականգնելով իր նախկին դիրքն ու ազդեցությունը, ուժեղանալով ու իր ձեռքին կենտրոնացնելով գրեթե ամբողջ դերը յերկրի քաղաքական ու հասարակական կյանքում:

4. ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ.—Նույնանման պատմական տեսարան և ներկայացնում նախարարական կազմը և սրա հետագա վիճակը Բյուզանդական Հայաստանում: Աբշահունյաց անկումով և Հայաստանի բաժանումով Բյուզանդիայի ձեռքն անցավ Բարձր Հայքը, որը Բյուզանդական պաշտոնական վավերագրերում կոչվում էր Armenia magna (Մեծ Հայաստան) կամ Armenia interior (Ներքին Հայաստան): Սակայն նախքան այդ բաժանումը, տակավին Արշակ II–ի ժամանակ, Բյուզանդիոնի վաստական իշխանության ներքո էին դանվում այսպես կոչված Հայկական սատրապությունները (Անձիտ, Անգեղտուն, Հաշտյանք, Ծոփք, Բաղաց), որը պարզորոշ կերպով հակական նախապարարություն տերմինի թարգմանություններն են: Թե՛ սատրապիաներում և թե՛ Ներքին Հայաստանում անփոփոխ էին թողնվել նախարարների տեղական վարչական ինքնուրույնություններն և վաղեմի իրավունքները: Սատրապիաներն անմիջորեն կախում ունեին կայսրներից, իսկ Ներքին Հայաստանում գտնվում էր կայսերական ներկայացուցիչը կամ տեղակալը՝ comes, որն իր իրավական–քաղաքական նշանակությամբ համապատասխանում էր Պարսկական Հայաստանի

մարզպանին: Այս դրությունն անփոփոխ չարունակվում էր գրեթե մի ամբողջ դար, մինչև Զենոն կայսրի իշխանության օրերը (474—491 թ. թ.): Ըստ էության այդ ժամանակ փորձեր են եղել սահմանափակելու հայ նախարարների իրավունքներն ու արտոնությունները և ընդհանրապես սեղմել նրանց կենտրոնախույս ձգտումները, որովհետև պատմական ապրյուրներում նկատելի է, որ հայ նախարարների շարքերում համոզվել են ինչ-որ դժգոհություններ: Այդ դժգոհությունն է, որ դրդել էր բոլոր հայ նախարարներին միանալ Զենոն կայսրի դեմ բարձրած ապստամբությանը (484 թ.), երբ Արևելյան բանակի զորապետ Իլլուսը վռաքի եկավ՝ կայսերական գահի վրա Լևոն տիրոջին բազմեցնելու համար:

Զենոն կայսրը, ճնշելով այդ ապստամբությունը, անմիջապես ձեռնամուխ եղավ հայ նախարարությունների իրավունքների սահմանափակմանը: Նա վերացրեց «նահապետության» կամ «տանուտերության» իրավունքը: Սատրապներն ու նախարարներն այսուհետև նշանակվում էին կայսրի ընտրությամբ, ի հարկե, նախարարական տոհմից, բայց առանց պահպանելու ժառանգականության ու ավագության կարգերը: Այսպիսով, Բյուզանդական Հայաստանում էլ հայ նախարարությունները զրկվում էին ֆեոդալական իրավունքի հիմնական սկզբունքից:

Նախարարական իրավունքին հասցրած այս առաջին հարվածին 40 տարի անց հաջորդեց երկրորդ, ավելի արմատական հարվածը Հուստինիանոս կայսրի (527—565 թ. թ.) ձեռքով, որով միանգամայն քայքայվեց նախարարական կարգը Բյուզանդական Հայաստանում: Հուստինիանոսի այդ քաղաքականության առիթ հանդիսացավ Պարսկաստանի դեմ մղած պատերազմը, որի մեջ Բյուզանդիան պարտություն կրեց: Պարսկական զորքերը, ներս խուժելով Բյուզանդական Հայաստան, որի սահմանների պաշտպանությունը դրված էր նախարարների վրա, հասան մինչև Պոնտոս: Այս դեպքից հետո Հուստինիանոսը մի չարք որոշումներով ձեռնամուխ եղավ միաձուլելու իրեն ենթակա Հայաստանը Բյուզանդիայի հետ: Այդ նպատակով Հայաստանը վերակազմվեց ռազմա-քաղաքական առումով: Հաստատվեց ընդհանուր հրամանատարություն՝ զորական մարմի-

գոս— magister militum, կամ ստրատեգ, որը նշանակվում էր կայսրի կողմից և իր տրամադրության ներքո ուներ Բյուզանդական զորքերը՝ իրենց զորավարներով: Այսպիսով, վերացվեցին Comes-ի պաշտոնը և նախարարների քինվորական իշխանությունն ու դերը (528—529 թ.թ.): Այնուհետև 536 թ. XXXI Novella-ով Հայաստանը վարչա-քաղաքական տեսակետից բաժանվել էր չորս մարզերի, իրենց հատուկ, կայսրի կողմից նշանակված բյուզանդական վարչապետներով[55]: Հետևապես, նախարարները զրկվում էին նաև իրենց ներքին վարչա-քաղաքական իրավունքներից: Երանք ավելի ևս ծանր հարված ստացան, երբ III Հուստինոս— De successione armeniorum (535 թ.) և XXI Novella-ով De armeniis ut et illi per omnia romanorum leges sequantur (536 թ.) ներմուծվեցին հռոմեական իրավունքը, մանավանդ ժառանգական իրավունքի հռոմեական նորմերը, և վերացվեց տեղական հայ իրավունքի կիրառումը:

Ինչպես տեսնում ենք, Բյուզանդիոնի հետևողական քաղաքականությամբ կրճատուժվում էին դարավոր նախարարական կարգերը: Նախարարական տոհմերը կորցնում էին իրենց ֆեոդալական իշխանության հիմնական կռվանները և զրկվում իրենց տնտեսական ու քաղաքական արտոնություններից, ինքնուրույնություններից:

Սակայն Հուստինիանոսի քաղաքական վերափոխումներով նրան չհաջողվեց Հայաստանում բնավ էլ վերացնում ֆեոդալիզմը, ֆեոդալական հասարակարգը, որպեսզի հանդիսանում էր և ինքը՝ Բյուզանդական կայսրությունը, այլ միմիայն վերացնում էր նրա նախարարական ձևը, որ իր կենցաղային ու սոցիալ-տնտեսական, նաև քաղաքական յուրահատուկ դծերով, էր համապատասխանում բյուզանդական ֆեոդալ հասարակության կառուցքին ու շահերին: Բանը նրանումն է, որ հայ նախարարական կարգն իր սոցիալ-տնտեսական ու հասարակական բնորոշ դծերով կրում էր պարթևա-իրանական ազդեցության հետքը, նա հար ու նման էր պարսկական ֆեոդալիզմին, որի հետ էր-կար ու ձիգ դարերով ապրել էր կողք-կողքի և կապված էր տնտեսական թելերով: Այնպես որ Հայաստանի ֆեոդալիզմի նա-

խաղաղական կապերը, հնազոտ նրա բաժանմանը Բյուզանդիոնի ու Պարսկաստանի միջև, ներկայացնում էր միանձնական ամբողջությունն իր դասակարգային շահերով և կուլտուր-կենցաղային պայմաններով։ Ցեղ վորովհետև այդ նախարարական Հայաստանի դրեթե $^3/_4$-ը Պարսկաստանի իշխանության ներքո էր, տպա բնական է, վոր Բյուզանդիոնին բաժին ընկած Հայաստանի նախարարությունները վարոշ ձգողականություն հարում էին Պարսկական Հայաստանին։ Նրանց մեջ չէր մարում տակավին ֆեոդալական կենտրոնախույս ձգտումը, վոր ամենադաժան իր մասին դրել էր տալիս թե՛ Պարսկաստանի և թե՛ Բյուզանդիայի հայ նախարարական էքսպանսիայի տենդենցներում։ Բավական է միայն հիշել Մամիկոնյան նախարարական տոհմի խաղացած քաղաքական դերը հայ նախարարությունների չարքերում, Մամիկոնյանների, վորոնք կալվածքներ ունեցին Հայաստանի այդ յերկու հատվածներում։ Ընդուշա, Բյուզանդիոնին աննկատելի չէին մնում այս հանգամանքները, վորոնք կայսրների դեսպոտական իշխանության շահերին միանգամայն հակառակ էին։ Այստեղից էլ ահա բյուզանդական անչեզ ու սիստեմատիկ քաղաքականության մեջոցառումները, մանավանդ Հուստինիանոսի որով։

Այդ միջոցառումները թուլացնում և կաթվածահար էին անում Հայկական ֆեոդալիզմի նախարարական հիմքերն և այն խմորում ու միաձուլում էին ընդհանուր բյուզանդական ֆեոդալիզմին, վոր կառուցված էր խիստ կենտրոնացած և բյուրոկրատական սիստեմի վրա, յենթակա լինելով կայսրների դեսպոտական իշխանության ու կայսրության մեջ գործող հոռմեական իրավունքի նորմերին։

Ի հարկե, այս ամբողջ քաղաքականությունն առանց զինված ուժի չէր անցնում կենտրոնախույս տրադիցիաներով ու տոհմային ֆեոդալական իրավունքի չափերով անված հայ նախարարների կողմից։ Բյուզանդական Հայաստանում, ինչպես Պարսկական Հայաստանում, բանակում էին ապստամբություններ ու դավադրություններ, վորոնք ճնշվում էին ամենադաժան ձևերով։ Այդ պայքարը Բյուզանդիայում չունեցավ նախարարների համար վոչ մի հաջողություն։ Ընդհակառակը, կայսրները ոգտվում էին ամեն առիթից, վորպեսզի ավելի կտրուկ ու հիմնովին

կերաւեն իրենց քաղաքականութիւնը: Նախարարները դրկում էին ոմն մեծ իրենց իրաւունքներից ու քաղաքական նշանակութիւնից, ոմն մեծ քաջքաշում էին տեսակապես, այլև դրկում էին հողային հարստութիւններից և զրկեցնում էին Կ. Պոլիս կամ Բիւզանդիայի այլ շրջանները, Հայաստանի տահմանները: Յետ Պարսկական Հայաստանում հայ նախարարները իրենց պայքարի յիշեցնելում Սասանեանների դեմ կարողացան մորչ հետևանքների հասնել, զեթ պահպանելով նախարարական, թեև բաւականաչափ թուլացած, կազմի հիմքերը, ապա Բիւզանդական Հայաստանում նախարարական իշխանութիւնները լոպաս վերացան քաղաքական ասպարեզից:

Սահմանած պայմաններում նախարարական անների բիւզանդական օրինաստեղծման կորցրեց իր առկի հողն և, ընդհակառակն, մանաւանդ վերջին Սասանեանների հաշուողական քաղաքականութեան հետևանքով, ակսեց տեղի տալ պարսկական օրինաստեղծին ոմն մեծ Պարսկական, այլև Բիւզանդական Հայաստանի նախարարները չարքերում: Ինչպես վկայում է Հուստինիանոսի ժամանակակից բիւզանդական պատմագիր Պրոկոպիոսը (De bello persico II, 2), նախարարները դեռ պարսկա- բիւզանդական պատերազմից առաջ (540–562 թ. թ.), դեմում էին պարսիկների թագաւոր Խոսրով Նուշիրվանին, ռազմական ոգնութիւն հայցելով ընդդեմ կայսրների: Նմանապես չատ հայ նախարարներ, որոնք սկզբներում անցել էին Բիւզանդական Հայաստան, թողնում էին յերկիրն և, վերադառնալով Պարսկական Հայաստան, հաստատվում էին ապատեղ ու նորից տեր գառնում իրենց կորցրած իրաւունքներին:

Այս հակաբիւզանդական տրամադրութիւնը Հայաստանի տիրապետող դասակարգերի մէջ առաւել սուր արտահայտութիւն ստացավ, երբ բիւզանդական կայսրները իրենց քաղաքականութեան մէջ՝ նախարարական իշխանութիւնները բիւզանդականի հետ համաձուլելու ձգտումներում՝ ակսեցին նաև դրծադրել կրոնա- դաւանաբանական մէթոդներ: Դէմին յեկեղեցական ժողովը 554—555 թ. թ., որը դումարվել եր այդ քաղաքական հանդամանքներում և որին մասնակցում էին նաև աշխարհիկ ֆեոդալներ, պաշտոնապես ապղարարեց հայերի հակաբիւզան-

դական տրամաղրությունը, մերժելով քաղկեդոնական դավանանքը և կարականորեն բաժանելով հունականից հայ եկեղեցին, իբրև հայ ազգային: Այս կրոնա-դավանաբանական ակտի մեջ արտացոլում եր քաղաքական մի ձեռնարկումն, որով հայ տիրապետող ֆեոդալական դասակարգն ամրացնում եր իր թուլացած դիրքերն և վերականգնում իր նախարարական իրավունքները, ընդ որում հայկական ֆեոդալիզմի և ընդհանրապես կուլտուրական ու քաղաքական կյանքի կենտրոնը մնում եր բացառապես Պարսկական Հայաստանը:

Այսպիսով, նախարարությունները, Արշակունյաց թագավորության անկումից հետո, անվերջ պայքար մղելով իրենց ֆեոդալական տեղական իրավունքներն ու արտոնությունները պահպանելու, թերևս նաև լայնացնելու համար, չհասան այն նպատակներին, որոնց նկատառումներով ընդունք թուլացրել և նույնիսկ տապալել էին հայ թագավորական իշխանությունը: Ընդհակառակը, Բյուզանդական Հայաստանում հայ նախարարական կազմը քայքայվեց, համաձուլվելով բյուզանդական ֆեոդալիզմին, իսկ Պարսկական Հայաստանում նախարարությունները մեծ պահպանեցին մորոշ չափով իրենց պատմական, բայց չեզին ներկայացնում կոմպակտ մի զանգված, հանուր դասակարգային շահերի պիտակությամբ ներշնչված: Պարսկական Հայաստանի նախարարները, մի կողմից՝ ներքին պայքարով չլսված և մյուս կողմից՝ իրենց սյուզերեն Սասանյան թագավորների կենտրոնաձիգ իշխանությանը համառությամբ դիմադրելով, մնում էին ապակենտրոնացած բջիջներ Հայաստանի ֆեոդալիզմի մարմնում, պարբերկուլյարիստական ինքնամփոփ իշխանություններ, որոնք դրալի ձեղքված եին առաջացնում նախարարական ընդհանուր կառուցքում և թուլացնում այդ կազմը: Այդ թուլությունն արհատական նշանակություն ունենալով նախարարությունների համար, որոնք անկարող եղան վերևի լուրջ դիմադրություն և միասնական ինքնապաշտպանության միջոց արտարերելու հետագա արաբական սրբկալի արշավանքների հանդեպ:

5. ՑԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՖԵՈԴԱԼԻԶՄ.—Մեկը հայ եկեղեցական ֆեոդալականությունն եր, որ իր կենտրոնացած կազմով ու ապարատով կարողացավ անվնաս դուրս գալ Արշակունյաց անկումից

հետևող մըրևաձուի քաղաքական իրադարձությունները և իրա-
տացնել իր կենտրոնացումը նախարարական պարտիկուլյարիզմի
պայմաններում: Կարելի է համարձակ ասել, որ Աբշահունյաց
թագավորական կենտրոնաձիգ իշխանության ղերն ու նշանակու-
թյունը Հայաստանի քաղաքական կյանքի այս շրջանում փոխանց-
վեցին մոդիֆիկացիայով ֆեոդալական վերնախավերի ձեռքը: Սա, հակառակ նախարարական պարտիկուլյարիզմին, հանդի-
սանում էր իրական դարձան Հայաստանում, իր շուրջը կենտրոնացնելով աշխարհիկ ֆեոդալներին և նրանցից իր մե-
նաշնորհը զարձնելով արտաքին քաղաքականության ղեկավարու-
մը Սասանյան ու Բյուզանդական թագավորների նկատմամբ:

Մենք արդեն վերը նշել ենք, թե ինչ ղեր էր խաղում ֆե-
ոդալական ֆեոդալականությունը հայ նախարարների ապստամ-
բական չարժումներում: Բայց այդ ղերն ու ազդեցությունն
ավելի ուժեղ արտահայտվեցին յերկրի ներքին կյանքում: Նա որ-
միայն իր ձեռքում էր պահում յերկրի կուլտուրա- լուսավորական
կյանքը, նա որ միայն նրա էր խուժում նախարարական տների
վոխադարձ հարաբերությունների ու հասարակական կենցաղի
հարցերի մեջ, այլև առանձնել էր իրավական ու վարչական
դործունեության մենաշնորհն ամբողջ Հայաստանում: Յերբ
նախարարները, հենվելով իրենց ֆեոդալական իրավունքի վրա,
դատ էին անում և որենք սահմանում իրենց կալվածական
յերկրի ներսում ըստ տեղական սովորութական- իրավական
նորմերի, ապա այժմ, յերբ բացակայում էր հայ թագավորական
ղերադույն իշխանությունը և նախարարական կարմն էլ բավակա-
նաչափ խարխլվել էր, ֆեոդալական իշխանու-
թյունն էր դատ ու որենք անում, իրավաբանական ու որենս-
դրական ակտիվ դործունեություն արծարծում, տարածելով իր
հեղինակությունն անխտիր բոլոր նախարարական յերկրների
վրա: Այս ղեպքում կղերական ֆեոդալականության համար ար-
դելիկ միջոց էին ֆեոդալական ժողովները, վորոնք կյանք ա-
ռան ու սկսեցին դործել մանավանդ Աբշահունյաց իշխանության
տապալումից հետո:

Այդ ֆեոդալական ժողովները, վորոնք դումարվում էին
հոդևոր ֆեոդալ իշխանների ձեռնարկությամբ ամբողջ Հայաս-
տանի մասշտաբով, ի տարբերություն տեղական ու ոտար

յերկրներում տեղի ունեցող յեկեղեցական ժողովների, հայտնի եյին ազգային ժողով անունով: Սրան մասնակցում եյին չատ անգամ նաև աշխարհիկ ֆեոդալները: Այդ ժողովներն գրավում եյին, բացի կրոնական ու յեկեղեցական հարցերից, նաև աշխարհիկ բնույթ ունեցող խնդիրներով, վորոնց մեջ առաջնակարգ տեղ եր գրավում արհնագրական դործունեյությունը: Այդպիսի ժողովներից առաջինն ու նշանավորն եր Շահապիվանի[56], վոր տեղի յե ունեցել 443 թ., մոտավորապես այն խառն ժամանակները, յերբ հաստատում եր՝ նախարարական ապստամբությունը վարդան Մամիկոնյանի դեկավարությամբ: Այդ ժողովին ներկա եյին, բացի բարձրաթիվ հոդևորականներից, նաև բոլոր նախարարներն ու զանազան ֆեոդալական իշխաններ, դործակալները, և այլն: Վերջինները միտրան դլխում են ժողովի դեկավար հոդևորականներին. «դեղեալ կարդ սրբոյն Գրիգորի և Ներսէսի և Սահակայ և Մաշտոցի դուք անդրէն հաստատեցէք և այլ դլուխ ևս, որպէս և ձեր կամք են և մեք կամօք և ախորժիւք յանձն առնումք... Դուք դայն կարգեցէք և մեք հնազանդ եմք և հաստատուն պահեմք» (ԿՀ., 59—60): Շահապիվանի ժողովի կանոնական վորոշումները բնորոշ են նրանով, վոր սահմանափակում են վո՛չ միայն յեկեղեցական իրավունքի, այլև քաղաքացիական ու քրեական իրավունքի նորմերը, վորոնց կիրառումը, ինչպես ակնհայտ է ժողովի կանոններից վերահիշյալ նախարանից, պարտադիր է դառնում նաև աշխարհիկ ֆեոդալների համար:

Ահա այս ժամանակաշրջանի մի չարք յեկեղեցական ժողովներում, ինչպես Դվինի Բ (554—555 թ. թ.), Դվինի Դ (648 թ.), նույնպես սահմանվում են նոր կանոններ և կամ վերահաստատվում նախորդ ժողովների կանոնները, վորոնց մեջ վորոշ չափով տեղ են դտնում նաև քաղաքացիական ու պատժական իրավունքների նորմերը:

Բացի յեկեղեցական ժողովներից, կղերական ֆեոդալական իշխանն որենսդրական դործունեյություն եր ծրծրծում նաև առանձին կաթողիկոսների կամ ապրելիք յեպիսկոպոսների ձեռքով: Սրանք յուրացրել եյին իրավունք՝ հրատարակելու կանոններ պարտադիր դործադրության համար: Այդ կանոնների մեջ, ինչպես օրինակ՝ «Ներսիսի կաթողիկոսի և Ներսեսհոյ Մամի-

կոնվից եպիսկոպոսին», կամ «Ներսիսի հայոց Հայրապետին» հանդիպում են նաև քաղաքացիական իրավունքի նորմեր, դիվանագործառնական ընտանեկան իրավունքի:

Ամփոփելով մեր ասածները՝ հայ իրավունքի զարգացման առաջին շրջանի, այն է՝ նախնադարական իրավունքի մասին, տեսնում ենք, որ այդ շրջանի հասարակական ձևում գործող իրավարանական նորմերն ու իրավական ինստիտուտները, իրրև վերնաշենք ֆեոդալական Հայաստանի նախնադարական կարմի, բղխում են հենց նախնադարական սոցիալ-քաղաքական կառուցքից: Այսպիսով, նախնադարությունները ու սրանց դիմաջորդ թագավորական իշխանությունն հանդիսանում են իրավական գործոններ, որոնք ստեղծում են իրենց դասակարգային սեփականությունն ու գույքությունն ապահովող իրավարանական նորմեր: Այդ նախնադարական իրավունքի նորմերն ներքին դրի չեն առնվել ու օրենսդրական ճանապարհով հեղինակավոր մարմնի կողմից չեն հաստատվել, քանի որ իրականում այդպիսին բնավ գոյություն չի ունեցել, այլ ուժ և կիրառումն են ստացել սոսկ սովորույթի հիման վրա, որը հասարակության իրավագիտակցության մեջ պարտադիր նշանակություն ուներ:

Սովորութային իրավունքի համաձայն՝ Արևելքի ֆեոդալական պայմաններում դեսպոտական պետության հիմնական հատկանիշներից մեկն էլ այն էր, որ թագավորի բռնապետական իշխանության մեջ էր պարունակվում նաև օրենսդիր ֆունկցիան, որ կապված էր թագավորի անձնավորության հետ: Մեր մի քանի պատմագիրներ հիշատակում են թագավորների հրապարակած օրենքներ ու կարգադրություններ, բայց չեն նշում, թե ինչ ձևով էր այդ տեղի ունենում:

Ագաթանգեղոսը պատմում է, որ Տրդատ թագավորն ուղղում էր նախարարներին և ընդհանրապես Հայաստանի «մեծամեծներին, դործակալներին և շինականներին» հատուկ հրովարտակներ՝ վարչական-պետական հարցերին վերաբերող տարբեր հրամաններով, որոնք օրենքի ուժ ունեին:

Որևնակ՝ Տրդատը հրապարակում է հրովարտակ աստվածներին պաշտելու մասին և հակառակորդների վերաբերմամբ խիստ պատիժ սահմանում: «Արդ, եթէ յանկարծ ոք թէկ գոցէ, որ դիմեան անպատուհասչէ, և գոցեն գայնպիսին՝ կապեալ ոտիւք և

կապել ձեռք և կապել պարանոցս ի դուռն արքունի ածցեն. և տուն և կեանք և արարք և ստացուածք և դանձք՝ այն ամենայն այնոցիկ լինի, որ զայնպիսին ի մէջ ածցեն» (Ագ. ԺԴ., 75): Նոյնպիսի հրովարտակ է արձակում Տրդատը քրիստոնյաների դեմ, վորպեսզի նրանց ձերբակալեն և բերեն «ի դուռն արքունի»: Իսկ քրիստոնյաներին թագցնողների վերաբերմամբ սահմանում է. «այսպիսին ընդ մահապարտս համարեալ լինի, և ի հրապարակ արքունի եկեալ մեռցի, և տուն նորա յարքունիս երթիցէ» (Անդ, ԺԲ, 77): Քրիստոնեության ընդունելուց հետո Տրդատ թագավորը սահմանում է արևնք պետական հոգևորականներին վորոշ չափի հողարաժիններ հանկերձ չինականներով հատկացնելու մասին (Անդ, ՃԺԹ., 423): Սակայն այդ ամենը ժամանակավոր բնույթ էր կրում, դեռվածական մոնոմային կոնկրետացած կարգադրություն էր, վոր, բղխելով դասապատական իշխանության անձնավորող թագավորից, սահմանում էր արևնքի նշանակություն, քանի նրա հեղինակը կենդանի էր և իշխում էր:

Մենք միաժամանակ տեսանք, վոր նախաբարաական կարգի իր զարգացման պրոցեսում, այն է՝ վաղադուն ֆեոդալիզմի և ապա Աբշխունյաց թագավորության ֆեոդալիզմի առաջին շրջիկ ետապներում, վորոշակի ձևավորված պետություն չուներ շրջիկ քաղաքական պայմաններում: Հետևապես այդ պայմաններում գործող իրավունքը, իբրև ֆեոդալական, բղխում էր այդ նախաբարաական կարգի եությունից և, ամրողջովին հիմնված լինելով սովորութական իրավունքի վրա, կարող չէր գրավոր արևնքրության: Սակայն նախաբարաական կարգն իր զարգացման յերրորդ ետապում, քաղաքական իրարաբերությունների ճնշման ներքո, ճեղքվածներ սուանալով, կորցնում է վաղեմի ուժն ու ազդեցությունը, տեղի տալով հզոր ֆեոդալական եության առաջ: Նախաբարաական իրավունքը, թեև չի կորցնում իր սովորութա- իրավական բնույթը, բայց յենթարկվում է վորոշ չափով յեկեղեցական ֆեոդալականության, համակերպվելով նրա դատական-իրավաբանական գործունեության, ճանաչելով նրա արևնագրական իրավասության: Այս պարագաներում նախաբարաական իրավունքի նորմերը մասամբ սուանում են գրավոր արտահայտություն յեկեղեցական ֆեոդալների ճնշքով ու մանում են կանոնական իրավունքի մեջ, մարմնանում են յեկե-

*ղեկտական ժողովների ու առանձին կաթողիկոսների կողմից հաստատված կանոնադրություններում, որոնք նույնպես իրենց էությամբ ֆեոդալական հասարակության իրավահաջորդության արտահայտներն էին:*

## II. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԿԱՄ ԱՐԱԲԱ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՇՐՋԱՆ

1. *ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.* — Միանգամայն վոխվում են քաղաքական-տնտեսական պայմանները Հայաստանում արաբական տիրապետության ժամանակ, երբ առաջանում են խոշոր սոցիալական տեղաշարժեր: Արաբական արշավանքները վոդողնցին Հայաստանը 640 թվականից: Գրեթե կես դար տևող մարտական պայքարը Բյուզանդիայի ու արաբների միջև Հայաստանի տերիտորիան դրավելու շուրջը՝ վերջացավ արաբների հաղթանակով 698 թ., երբ նրանք իրենց ձեռքը ղեկեցին ամբողջ Մեծ Հայքը: Հայաստանը զուրկ եր կենտրոնական ղեկավար իշխանությունից և տրոհված եր գրեթե ինքնուրույն, ցիրուցան ֆեոդալական իշխանությունների, որոնք իրարից անջատ մարտնչում էին նոր նվաճողների դեմ, ապավինած սոսկ իրենց տեղական ղինվորական ուժերին և ամրոցներին: Ուստի արաբները դյուրին կերպով կարողացան խորտակել նախարարների դիմադրությունը և գրավել ամբողջ յերկիրը: Այնուհետև Հայաստանը, դառնալով արաբական խալիֆատի հպատակ յերկիր, կառավարվում եր խալիֆի ներկայացուցիչ-տեղակալի միջոցով, որը հայ մատենագրական աղբյուրներում սովորաբար կոչվում է վոստիկան, յերբեմն էլ՝ եմիր: Այդ տեղակալը նստում եր Դվինի մայրաքաղաքում, որ այն ժամանակ խոշոր վաճառաշահ կենտրոն եր և դառնում եր տարածքի առևտրական ճանապարհների հանգույցի վրա:

Արաբական նվաճողական արշավանքները հաղթականորեն ծավալվում էին հանուն մահմեդական-խալիֆական կրոնի: Այդ կրոնն իրականում հանդիսանում եր արաբական հասարակության մեջ կատարվող սոցիալ-տնտեսական հեղաշրջի մի վերնաշենք և միաժամանակ դառնում եր նորելուկ տիրապետող դասակարգի ձեռքին մի հզոր գենք՝ չհապաղելու էքսպանսիայի համար: Արաբների վաչկատուն տոհմային կազմակերպությունն-

ցում ստկավին Մահմեդից առաջ տեղի ունեցող սոցիալական չափավորումը հուժկու խթան և առանում առևտրա-վաչխառուական կապիտալի զարգացման, վոր Արաբական Թերակղզուց ձգտում եր դեպի այն ժամանակվա համաշխարհային շահառաններըՙ Միջերկրածովյան ավազանն ու Միջագետքը: Այդ սոցիալական սրոհման հետևանքով ֆեոդալականացած տարբերն իրենց առանձնապահական ու նորաստեղծ յերկրագործական սընառուցիչների չահագործման ախորժակը հագեցնելու համար ձեռնարկում եյին նոր յերկրների նվաճումների, նոր հողերի հափշտակման և մշտժամանակ ճանապարհ բաց անում առևտրա-վաչխառուական կապիտալի առաջ: Այդ նվաճողական ձեռնարկումները մի կողմիցՙ հարստացնում եյին ֆեոդալների նյութական կարողությունը, իսկ մյուս կողմիցՙ ժամանակավորապես հարթում եյին արատանոնեական ճնշման սրությունը չահագործվող արաբական մասսաների մեջ, հնարավորություն տալով նրանց նաև նոսկես քիչ թե շատ շահվելով ռազմական ավարների միջոցներից:

Ահա այդ իրական նպատակներից եյին բղխում Հայաստանի նվաճումն արաբների ձեռքով և այն քաղաքականությունը, վոր վարում եյին նրանք հպատակեցրած Հայաստանի նկատմամբ: Յեթե Սահակյան Պարսկաստանն իր ֆեոդալական էքսպանսիայի ամբողջ ընթացքում և իր ազդեցությունը Հայաստանում ամրացնելու համար հնարավոր եր գտնում պահպանել նախարարական սիստեմը, ճանաչելով նախարարների վաղեմի արտոնյալ իրավունքները և ձգտելով կապել հայ ֆեոդալ լշխաններին պարսկական արքունիքի ու ազնվականության հետ, ապա արաբները հաշվի եյին առնում նախարարներին այն չափով, ինչ չափով նրանք խոչընդոտ չեյին հանդիսանում իրենց նվաճողական նպատակներին: Այս դեպքում արաբները չատ հատարակ և կարուկ քաղաքականություն եյին կիրառում: Քանի վոր միակ հողատերերը նախարարներն եյին, վորոնք վախենալով, թե կզրկվին իրենց հարստություններից, մեծ մասամբ թշնամաբար եյին տրամադրված դեպի նոր նվաճողները, ուստի վերջիններն այդ պիտի անցանկալի նախարարներին ուղղակի վոչնչացնում եյին ֆիզիկապես և դավճում նրանց հողերը: Հայ[57] ու արաբ պատմագրներըը[58] հաղորդում են նախարարների մասսայական

կատարածների մասին արաբական հրամանատարների ու եմիրների ձեռքով, ինչպես և նախարարական հողերը ղրավելու և արաբական գաղմական աններով բնակեցնելու մասին:

Այսպիսով, սկսած VII դարից՝ Հայաստանի շատ մասերում, ինչպես օրինակ՝ Դվինում, Նախիջևանում, Արձնում, Բերկրիում, Խլաթում, Կարինում (Երզրում), Մանազկերտում և այլ խոշոր կենտրոններում և նույնիսկ այնպիսի անտառիկ նախարարական յերկրում, ինչպիսին եր Սյունիքը (ՍՕ., IX, 174): Հաստատվեցին արաբ ֆեոդալներ, որոնք իրենց ձեռքն էին դցել ահագին տարածություններ նախարարական հողեր՝ դյուղերով և չինականներով հանդերձ, նաև հիմնվեցին բազմաթիվ արաբական գաղութներ:

Սակայն արաբների ֆեոդալական եքսպանսիան չեր սահմանափակում սոսկ հողերի զավթումներով՝ իրենց չահագործման տերիտորիական չրջանները լայնացնելու և յուրացների հավելյալ արդյունքի քանակն ավելացնելու համար: Այդ եքսպանսիան նմանապես ձգտում եր հարստությունների կուտակման թե՛ դրամական ռենտայի միջոցով, որի խթանն եր հանդիսանում նրա խուժած առևտրա-վաչխառուական կապիտալը, և թե՛ պարբերաբար կատարվող դիշատիչ թալաններով:

Արաբների նվաճումը չեր բերում հպատակեցրած Հայաստանում արտադրության նոր յեղանակ: Թե՛ նվաճող արաբները և թե՛ նվաճված Հայաստանը դանվում էին մինչնույն սոցիալ-անտեսական ֆորմացիայի չրջանակներում, բայց զարգացման տարբեր աստիճաններում: Տարբերությունը առևտրա-վաչխառուական կապիտալն եր, որը մինչև այդ բացակայում եր Հայաստանում: Վերջինս մուտք եր գործում Հայաստան արաբ նվաճողների հետևից և տիրապետող բնատնտեսության մեջ հանդարտ եր հարթում դրամական չրջանառության համար: Դրամական չրջանառությունը Հայաստանում դոյություն եր ունեցել դեռևս Աքեմենյանների ու Սելևկյանների զարաշրջաններում և մանավանդ Արտաշեսյանների տիրապետության ժամանակ: Սակայն նա ապրելիք դեր չեր խաղում ժողովրդական անտեսության մեջ, որովհետև ֆեոդալական չահագործման ձևերում տիրում եր արդյունավճար ռենտան, իսկ դրամական ռենտան աննչան դերծոն եր և ժամանակ նչանակություն ուներ:

Արաբական նվաճումն իր հետ բերից դրամական ռենտա, որը բնականաբար վերջ աշխարհն պահանջ առաջացրեց չհատած դրծվող մասաների մեջ, որոնք սահմանված էին մեսադյա դրամանիշներ ձեռք բերելու համար իրենց արտադրած արդյունքները չուտ հանել:

Արաբական նվաճումների հետևանքով ստեղծված տնտեսական ու քաղաքական պայմանները թեև անխախտ էին թողնում Հայաստանում արտադրության ֆեոդալական յեղանակը, բայց և այնպես մեծ տեղաշարժեր առաջացրին սոցիալական մթնոլորտում, մանավանդ հայ ֆեոդալական ազնվականության շարքերում, և կազմալուծեցին նախարարական ամբողջ սիստեմն ու կառուցքը:

Մենք վերը նշեցինք, որ արաբ նվաճողները հողեր դավթելու և աղգաբնակության չհատադրծելու նպատակով դարձադրում էին անցանկալի նախարարների ֆիզիկական վոչնչացման և տոհմային կալվածատիրության իրավունքից նրանց զրկելու քաղաքականությունը: Մյուս կողմից՝ նույն արարները վորոշ չափով համբերատար էին այն նախարարների նկատմամբ, վորոնք ճանաչում էին նվաճողների իշխանությունը և համակերպվում էին նոր պայմաններին: Այս նախարարներն, ոգտվելով իրենց համար քիչ թե շատ նպաստավոր պայմաններից, ձգտում էին ոգտագործել մոմենտը, կուտակելով հարստություն և լայնացնելով ֆեոդալական կալվածքները՝ իրենց քաղաքական ուժի այդ հիմնական խարիսխները:

Այս պարագաներում աչքի ընկան և ուժեղացան յերեք նախարարական տոհմեր՝ Բագրատունի, Արծրունի և Սյունի: Սրանք ընդունակ յեղան կուտակելու հողային և դրամական հարստություններ և այսպիսով դլխավորող դեր խաղալու այդ դարաշրջանի Հայաստանի քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքում, և սրանց սահմանված էին հաշվի առնել արարները:

2. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.— Բագրատունի նախարարությունը համարվում եր ամենահին ու ամենաանվանի տոհմերից մեկը: Նա վայելում եր առաջնակարգ պատիվ հայ սրբազնության և աշխարհի քաղաքական ազդեցություն ուներ յերկրում: Այս տոհմը մրցակից հռոյան եր մի այլ ազդեցիկ ու անվանի նախարարական տոհմի՝ Մամիկոնյանների, վորոնք ժա-

ռանդաբար իրենց ձեռքում էին պահում Հայաստանի ռազմական ուժերի սպարապետությունը: Նախարարների բազմազարյան յերկպառակչական պայքարում և Թագավորական կենտրոնական իշխանության դեմ ուղղված հարատև կենտրոնախույս յելույթներում, նմանապես նախարարական խմբավորումների որևէնատյիաններում, հակառակորդ կուսակցություններն ընթանում էին մեկը՝ Մամիկոնյանների, իսկ մյուսները՝ ակզբներում Սասանյանների ժամանակ, Սյունիների, իսկ հետագայում Բագրատունիների հետ: Այս պայքարներն առանձնապես չեչտակի արտահայտումն ստացան արաբական տիրապետության ժամանակ, յերբ նախարարական կառուցքը խոշոր ճեղքվածքներ ստանալով՝ քայքայման որհասական որեր էր ապրում:

Բագրատունիները ճարպկորեն կարողանում էին անվնաս դուրս գալ այդ պայքարի բոլոր չրջաններում: Նրանք պահպանում էին իրենց տոհմային կալվածքների ամբողջությունը և լայնացնում նրանց սահմանները՝ յուրացնելով հակառակորդների հողերը: Սասանյանների ժամանակաշրջանում Բագրատունի տոհմից նույնիսկ յեղել են յերկու մարզպաններ (VII դ. սկզբներում)՝ Մամիկոնյան տոհմի մի քանի նախարարների մարզպանությունից հետո: Նմանապես արաբական դարաշրջանում, յերբ Հայաստանը ժամանակավորապես արաբների ձեռքից ընկնում էր Բյուզանդիայի ձեռքը՝ բյուզանդական կայսրները նշանակում էին կուրապալատներ Բագրատունի իշխաններից, ինչպես և արաբները նրանց նշանակում էին վոստիկանի և նույնիսկ հայ զորքերի սպարապետի պաշտոններում: Այս նախարարական հարատև պայքարում հետզհետե թուլանում էր Մամիկոնյանների դրությունը: Նրանց քաղաքական դերն ու նշանակությունն անցնում էր Բագրատունիներին: Մամիկոնյանները, վոր մինչև բյուզանդական կոմնենակիզների պարագլուխները եկին, պետք է վերջնականապես կորչեին իրենց ազդեցությունից Հայաստանում, վորովհետև այդ կոմնորոչումը, չնորհիվ Բյուզանդիոնի նենգ քաղաքականության, կորցնում էր իր նշանակությունը հայ ֆեոդալների միջավայրում և արաբական ժամանակաշրջանում խոպան վարկաբեկվեց: Այս պայքարում Բագրատունիները վո՛չ միայն հարվածում էին Մամիկոնյանների քաղաքական ազդեցությանը, այլև խորտակում նրանց սոցիալ-տնտեսական դիրքը:

Մամիկոնյանների ղեկավորությամբ արաբների դեմ բարձրացած ելեկու ապստամբությունները (771 և 859—885 թ. թ.) ճնշվեցին արաբների ձեռքով Բագրատունի իշխանների դործակցությամբ, վորոնք իրրև վարձահատուցումն ստացան Մամիկոնյանների տոհմային կալվածքների մեծ մասը: Մամիկոնյաններն այս դեպքերից հետո չքացան Հայաստանի քաղաքական ասպարեզից: Աչդպիսով միջոցներով Բագրատունիները, հենվելով արաբների բարեհաճ վերաբերմունքին իրենց հավատարիմ վասալության համար, կարողանում են իրենց հողերը յուրացնել նաև ուրիշ, ավելի թույլ նախարարներից, վորոնք մասնակցում էին տեղական ապստամբություններին:

Սակայն Բագրատունիները չէին սահմանափակվում տըրայի ֆեոդալական իշխանների հողերի գավթումով: Այս ժամանակաշրջանում Բագրատունիները կարողացան կուտակել այնքան հարստություն, վոր սկսած VIII դ. յերկրորդ կեսից՝ ձեռք են բերում կալվածքներ, գնելով այլ ֆեոդալ իշխաններից[59]: Աչսպիսի Բագրատունին, վոր հայտնի յեր Մասակեր մականունով, գնում է անվանի ու նշանավոր կամսարականներից նրանց ամբողջ տոհմային կալվածքը՝ Արշարունիքն ու Շիրակը[60]: Վերջինում գտնվում էր Անի ամրոցը, վոր հետագայում դարձավ Բագրատունի թագավորների մայրաքաղաք (սկսած X դ. յերկրորդ կեսից) և խոշորագույն առևտրական կենտրոն: Այս հանգամանքը վկայում է, վոր ֆեոդալները ղերծ չէին մնացել առևտրա-վաշխառուական կապիտալի ազդեցություններից և նույնիսկ իրենք ներգրավվել էին կալվածական հողերի առուծախի դործարքների և դրամական կուտակման շրջանակների մեջ: Այսպիսով, արաբական տիրապետության դարաշրջանում ֆեոդալական հքսպանսիայի զարդացմանը ծառայում էին վո՛չ միայն հողերի սեփականացումը բռնի յուրացման կամ ընծայման միջոցներով, այլև, չնորհիվ առևտրա-վաշխառուական կապիտալի ներգործության, կալվածքների գնումները: Այս հանգամանքը խթան էր հանդիսանում հողերի մոբիլիզացիային և հնարավորություն ընձեռում տնտեսապես ուժեղ ֆեոդալներին՝ կալվածական հողերի հավաքումով ու լայնացումով իրենց ձեռքում հսկայական հողային հարստություններ կենտրոնացնել:

Դրամական շրջանառությունը վճռական նշանակություն ունեցավ Բագրատունիների, ինչպես և այլ խոշոր ֆեոդալների տնտեսությունների կուտակման գործում: Տնտեսության առաջին աղբյուրը հանդիսացավ արաբների ֆինանսական քաղաքականությամբ Հայաստանում հաստատված դրամական rենտան: Եթե այնուամենայնիվ չարունակում եր մասամբ դոյություն պահպանել նաև արդյունավճար rենտան, որը բացառապես անցնում եր տեղական ֆեոդալների ձեռքը, ապա վերջինները կարող եյին այդ ստացած արդյունքների ավելցուկներն իրացնել իրրև ապրանք, մանավանդ, որ այդ ժամանակաշրջանում վերսոնն վերականգնվեց Հայաստանի տրանզիտային առևտուրը, որն արաբական նվաճման առաջին դարում խափանվել եր ընդհիվ անդադրում ռազմական գործողությունների Բյուզանդիայի ու արաբների միջև, ինչպես և տեղական նախարարների ապստամբությունների հետևանքով:

Բագրատունիները իրենց հողերի հարաճուն լայնացումով մի կողմից՝ ծավալում եյին ֆեոդալական չահագործման ասպարեզը, դուրս քաշելով rենտան իսկական արտադրողների տալապացող մասսայից, իսկ մյուս կողմից՝ տեր եյին դառնում մի տերիտորիայի, վորտեղ անցնում եր հնուց ի վեր տրորված տարանցիկ առևտրական ճանապարհը: Այդ ճանապարհն առևտրական հարաբերությունների վերականգնումով ու աշխուժացումով դառնում եր ֆեոդալական յեկամտի անսպառ աղբյուր՝ մուտք դառնում եր ֆեոդալական յեկամտի անսպառ աղբյուր՝ անցնող կարավաններից մաքսային հարկեր և այլ տուրքեր կորզելու համար: Հիրավի, Բագրատունիների տնտեսական վերելքն և ընդհանրին քաղաքական ուժեղացումը սերտորեն կապված են Հայաստանի տրանզիտային առևտրական ճանապարհի աշխուժացման հետ: Այդ ճանապարհի վերականգնումով նորից կենդանացավ Դվինի, Նախիջևանի ու այլ քաղաքների առևտրական նշանակությունը, և Բագրատունիների կալվածական հողերի վրա առաջացան առևտրական նոր քաղաքներ, ինչպես Անին, Ղարսը, Արծն:

Նուհնալիսի յերևույթ ենք նկատում նաև Հայաստանի հարավում Արծրունի նախարարական տոհմի, ինչպես և հյուսիսում՝ Սյունյաց նախարարական տոհմի պատմության մեջ: Արծրունիները, ոգտագործելով արաբների հովանավորությունը, կարող-

ցան նույնպես լայնացնել իրենց կալվածքները, մասամբ զավթելով, մասամբ էլ դնելով թուլացած և հյուծված նախարարներից նրանց տոհմային հողերը: Արծրունիների տնտեսական ու քաղաքական վերելքին նպաստում էր նաև այն կարևոր հանգամանքը, որ նրանց տերիտորիայով էր անցնում տրանզիտային առևտրական ճանապարհի հարավային ճյուղը, որտեղ գտնվում էին այնպիսի խոշոր առևտրական կետեր, ինչպես Վան, Բերկրի, Արճեշ, Մանազկերտ, Բաղեշ (Բիթլիս) և այլն:

Այսպիսով, IX դարի չեմքին Հայաստանում բարձրացել էին Բագրատունի, Արծրունի և Սյունի խոշոր ֆեոդալները, որոնք ընդունակ չեղան իրենց ձեռքում կենտրոնացնել լայնածավալ հողային տարածություններ և քաղաքական կշիռ վայելել արաբների ու Բյուզանդիայի առաջ: Փաստորեն այդ ժամանակ ամբողջ Հայաստանը վարչված էր յերեք ուժեղ ֆեոդալական տերիտորիաներից, որոնց տերերն իրենց արդեն կոչում էին ո՛չ թե նախարար, այլ իշխան, և որոնք վասսալական կախումն ունեին արաբական խալիֆատից:

Բաժանելով իրենց միջև տնտեսական շահերի ու քաղաքական ազդեցության շրջանակները, այդ ֆեոդալական իշխանությունները, մանավանդ Բագրատունիները ու Արծրունիները, անդուհանդերձ շարունակում էին վոխադարձ հակառակություն ու մրցակցություն՝ տերիտորիական եքսպանսիայի ու քաղաքական իշխանության շուրջը: Այդ պայքարում դարձյալ Բագրատունիները էին հաղթանակողը: IX դարի յերկրորդ կեսին Աշոտ Բագրատունին, իր դերազույն այուղերենի՝ խալիֆի մաճանությամբ, հայտարարեց իրեն «իշխանաց իշխան» և ապա հետագայում (885 թ.)՝ «թագավոր հայոց»: Առաջացավ Բագրատունյաց թագավորությունը, որ ընդգրկում էր Հայաստանի հյուսիս- արևմտյան մասը: Հետևելով Բագրատունիներին, X դարի սկզբում (908 թ.) Արծրունիները նույնպես իրենց կոչում էին թագավոր, որոնց իշխանության տերիտորիան կազմում էր Հայաստանի հարավային մասը՝ Վասպուրականը (Վանա ծովի շրջապատ տարածությունը): Վերջապես X դարի յերկրորդ կեսին (978 թ.) առաջացավ յեկավ նաև Սյունյաց թագավորությունը, Հայաստանի հյուսիս- արևելյան մասում:

3. ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.— Բյուզանդիոնը, վոր IX դարի յերկրորդ կեսից սկսեց նորից ուժեղանալ, կամաց-կամածով ու անհանգստությամբ եր նայում Հայաստանի քաղաքական վերածնության ու իր սահմաններին կից Բագրատունյաց և ապա Արծրունյաց թագավորությունների յերևան գալու վրա: Բյուզանդիոնն, ոգտվելով խալիֆատի թուլանալու ու քայքայման հարմար մոմենտից, սկսեց ագրեսիվ քայլեր ձեռնարկել խալիֆատի Հայաստանի սահմանների վրա և մի քանի խոշոր հաղթանակներ տարավ արաբական զորքերի հետ ունեցած պատերազմներում: Ջնայած, վոր Հայաստանն ոդակված եր բյուզանդական ու արաբական պետությունների քաղաքականության ջրջանակներով և յենթակա նրանց ինտրիգներին, Բագրատունի թագավորները կարողանում եյին չեզոքություն պահպանել, մերնալով խալիֆատի հավատարիմ վասսալներ, և միաժամանակ բարեկամական հարաբերություններ վարել Բյուզանդիոնի հետ: Շնորհիվ այդ հանգամանքի՝ Հայաստանում X դարի ամբողջ ընթացքում տիրում եր խաղաղություն, վոր նպաստում եր մեջազգային տրանզիտային առևտրի ծաղկմանն ու յերկրի տնտեսական վերելքին: Այդ միջազգային առևտրի հայկական ուղիների վրա դտնվող քաղաքների չարքում առանձնապես մեծ նշանակություն ստացավ Անին, վորպես ամուր բերդ և խոշոր առևտրական կենտրոն, ուր Բագրատունիները տեղափոխեցին X դարի յերկրորդ կեսին իրենց նստավայրը, վորով Անին դարձավ Հայաստանի մայրաքաղաք:

Բյուզանդիոնն, ինչպես արդեն նշել ենք, իր քաղաքական կայունության նպատակներով Առաջավոր Ասիայում և իր մեջազգային առևտրական հարաբերությունների շահերից ղեղված՝ միշտ ձգտում եր տիրել Հայաստանին: Յերբ արաբական հակայական պետությունն սկսեց թուլանալ և կազմալուծվել կետրոնախույս եմիրների անջատողական տենդենցների հետևանքով, Բյուզանդիոնը միանգամայն փոխեց իր հարկադրված խաղաղ քաղաքականությունը Հայաստանի վերաբերմամբ: Նա վերսկսեց իր սովորական խարդավանական քաղաքականությունը և, հրահրելով տեղական ֆեոդալների մեջ կենտրոնախույս ձգտումները, ընդդեմ Բագրատունի և Արծրունի թագավորների և նյութելով

ներքին պատակոտմները, ձեռնարկեց ազրեսիվ քայլերի՝ ամբողջ Հայաստանը Բյուզանդական կայսրության մի ացնելու նպատակով: Արաբական խալիֆատը, որ ապրում էր իր հակայական պետության քաղաքական քայքայման պրոցեսը, անզոր էր դիմադրելու Բյուզանդիոնի նվաճողական առաջխաղացմանը: Յեվ ահա Բագրատունիների թագավորությունն և սրա մայրաքաղաք Անին, ինչպես և Արծրունիների թագավորությունը (Վասպուրականը) XI դարի առաջին կեսին ընկան Բյուզանդիոնի ձեռքը: Հայաստանի ֆեոդալ աղնվականության մեծ մասը նվաճված յերկրից տեղահան յեղավ ու վերաբնակություն հաստատեց Փոքր Ասիայում, Բալկաններում և Կիլիկիայում, որով վերջ տրվեց նախարարական տոհմերի մնացորդների դոյությանը Հայաստանում:

Նախարարական կառուցքի տապալումն Հայաստանում բնավ չեր նշանակում ֆեոդալականության քայքայումն կամ անկումն, որն, իրրև սոցիալ-տնտեսական ֆորմացիա, դեռ շարունակում էր իր դոյությունը: Նախարարական կառուցքը, ինչպես արդեն վերը չեշտել ենք, հանդիսանում էր սոսկ Հայաստանի ֆեոդալիզմի յուրահատուկ քաղաքական ձևավորումն նրա պատմական զարդացման որոշ ետապում՝ Արշակունյաց դարաշրջանում: Արաբական տիրապետության դարերում նախարարական ֆեոդալիզմը, հետեղհետե կորցնելով իր հնավանդ բնորոշ գծերը, վերածվում էր նոր ձևերի, անխախտ պահպանելով արտադրության ֆեոդալական յեղանակը: Այդ նոր ձևերում հին պատմական նախարարական տոհմերի որոշ մասի անհյացումով՝ ասպարեզ եկին յնկել նոր ֆեոդալներ արաբ նվաճողներից, ինչպես և մի քանի ուժեղացած հայ նախարարական դինաստիաներից; վերջիններս կարողացան իրենց ձեռքում կենտրոնացնել ահագին տերիտորիաներ և միաժամանակ առևտրա- վաշխառուական կապիտալի հորձանքներում թագեցին հողային աղնվականության տոհմային տրադիցիաները:

Յեթե նախարարական սիստեմը ներծծել էր երանական ցեղ տուրայի տարրեր և սոցիալ- կենցաղային տեսակետից որոշ չափով երանացել էր, ապա արաբական տիրապետության ժամանակաշրջանում, այդ կառուցքի քայքայման հետ, Հայաստանի ֆեոդալիզմը յենթակա յեր արաբացման աղդեցության: Այդ ա-

բաբացումն, արտահայտվում էր վո՛չ միայն ֆեոդալական դասակարգի նեղնիկ շահադրդումներով, որով մեջ թափանցել էին մուսուլմանական հերեսը, վո՛չ միայն տերկրի քաղաքական կոնյունկտուրայով, այլև ֆեոդալական չափազանցման ձևով, վորտեղ ամբողջանում էր դրամական ռենտան: Դրանով պետք է բացատրել բարմաքիդ արաբական տերմինների ու անունների մուտքը քաղաքացիական չրջանառության ու իրավաբանական նորմերի, հարկային ու դրամական սիստեմի, պետական-վարչական հիմնարկների ու ֆեոդալական տոհմանունների բնագավառներում: Այդ տերմինները մասամբ դուրս մղեցին իրանական անուններն և պահպանվեցին դրեթե մինչև վերջին ժամանակները: Ահա այս բյուզանդա-արաբական չրջանումն էին զարգացում այն նախադրյալները, վորոնք մի կողմից՝ զգալ ավին հայ իրավունքի զգալոր հոլինման կամ հայերեն որենսդրքերի անհրաժեշտությունը, իսկ մյուս կողմից՝ խթան հանդիսացան տարբ որենքների ուեցեպցիայի:

4. ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎՈՒՆՔՆ ՈՒ ՈՐԵՆՔՆԵՐԸ.— Նախարարական իրավունքը, վոր գործում էր Աբշակունյաց թագավորության և սրա անկումից հետո նաև Սասանյան Հայաստանում, այնպիսի իրավաբանական նորմերի կոմպլեքս էր, վորոնք կարգավորում էին հասարակական- իրավական հարաբերությունները նախարարական սիստեմի վրա կառուցված ֆեոդալական պետականության մեջ: Սակայն արաբների նվաճողական քաղաքականության հետևանքով նախարարական սիստեմը քայքայվեց ու խորտակվեց, ուստի նախարարական իրավունքն էլ բոլորովին կորցրեց իր նշանակությունը: Նա վերացավ, տեղի տալով ֆեոդալական հարաբերությունները կարգավորող այնպիսի նորմերի, վորոնք համապատասխանում էին արաբական տիրապետության չրջանում վերափոխվող ու կատարվելիք պետական-հասարակական կառուցքին, սոցիալ-անտեսական պայմաններին: Արաբները իրենց հետ բերին Շարիաթը, մահմեդական որենքների կոդեքսը, վորը հայաստանում կիրառվող նրանց քաղաքականության մեջ հակադրվում էր հայկական իրավունքին, մասնավորապես նախարարական իրավունքի վերջին մնացորդներին: Շարիաթին ունեցավ իր ազդեցությունն ամբողջ տերկրի վարչա-պետական քաղաքացիական և մասնավոր ֆինանսական իրավունքների բնագավա-

ռում: Այդ ազդեցությունն այնքան խորն եր, որ նրա առաջ-յությունը տակավին նշմարում ենք միջնադարյան Հայաստանի քաղաքացիական չրջանառության մեջ, առանձնապես հարկային սիստեմի տերմիններում:

Շարխարը մահմեդական օրենքների դրամով ժողովածու չի, իսկ նրան հակադիր հայ իրավունքը մինչ այդ չուներ դրամով հարկված: Նախորդ նախարարական իրավունքն ամբողջովին բաղկացած եր սոցոուլմա–իրավական նորմերից, որոնք դրի չեյին առնված ու չեյին վերածված օրենսգրքի, եվ չենք ասում՝ կոդիֆիկացիայի: Մեյն յեկեղեցական ժողովների կանոններն եյին, որոնք, դրված լինելով, կարողացել եյին ամփոփել իրենց մեջ մասամբ նաև նախարարական իրավունքի նորմերը: Ուստի կարիք եր զգացվում Հայաստանում Շարխարին հակադրել տեղական սդդային մի օրենսգիրք, գրի առնված հայ օրենքների ժողովածու, թեև հայկական կոդեքս:

Այն ժամանակվա Հայաստանի քաղաքական–հասարակական կյանքում, դատա–իրավաբանական ասպարեզում, յերբ բացակայում եր հայ պետականությունն, կենտրոնացած ազդային աշխարհիկ իշխանություն, սդդեցիկ գործոն եր հանդիսանում և նուիրիկ սրբազնների առաջ ներկայացուցչական նշանակություն եր ստացել հայ յեկեղեցական դասը: Սա յեր, որ ձեռնամուխ յեղավ ծածկելու այն մեծ բացը, որ նկատվում եր հայ իրավունքի բնագավառում վորոշ օրենսգրքի կամ ժողովածուի բացակայությամբ: Ահա VIII դարում տեսի յե ունենում մի կոդիֆիկացիա, որը, յեկեղեցական հիերոկրատիայի գործ լինելով, ի հարկե, հյուսվում և յեկեղեցական ժողովների կանոնադրություններից և այսպիսով կազմվում և կանոնագիրքը:

Սակայն առևտրա–վաշխառուական կապիտալի մուտքը և մի առժամանակ խափանված տրանզիտային առևտրի նոր վերականգնումը Հայաստանում՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ հողերի մոբիլիզացիան և սրան հարակից փեոդալական կալվածքների կենտրոնացումը մի քանի ուժեղացած իշխանների ձեռքում նախապատրաստում են նոր քաղաքական իշխանության վերածնությունը, որը, ինչպես տեսանք, իրականանում և առաջին հերթին Բագրատունյաց թագավորության հիմնադրումով (887—1045 թ. թ.): Այս նոր պետությունն, հանձին վերա-

հանդիսած ֆեոդալական ոչխարապահող դասակարգի՝ Բագրատունի թագավորների գլխավորությամբ, ներծծել էր արաբական կալվածատիրի տարրեր և սոխալված էր դեկավարվել վորոշ չափով, մանավանդ ֆինանսա-հարկային ու վարչական բնագավառում, Շարխաձի նամակով: Բագրատունյաց թագավորությունն էր քաղաքական դերերն ամրացնելու և ֆեոդալական արտադրության յեղանակն առավելապես իր չահերին ծառայեցնելու համար պետք էր դադար վերականգնել նաև հայ իրավունքն, արձանագնելով այն դրավոր որենքներով, ունենալով իր ձեռքի տակ Շարխաձին հակադիր աշխարհիկ որենսդրքեր: Իսկ հայկական առաջին կոդիֆիկացիայի արդյունք հայ կանոնագիրքը չէր համապատասխանում Բագրատունյաց թագավորության առցեխալ-անհատական պայմաններին, չէր բավարարում արդին ազդեցության ձեռք բերած աշխարհիկ ֆեոդալականության չահերին: Ձեվ ահա Բագրատունյաց Հայաստանում, ուր միջագարյին արտնվիտային առևտրի ծաղկումով խաչաձևվում էին Բյուզանդիոնի ու ամբողջ Միջագետքի առևտրական հարաբերությունները, մուտք են գործում ոտար որենսդրքեր նաև այդ ճանապարհներով, թերևս այդ առևտրականների ձեռքով, վորոնք չահագրգռված էին իրենց իրավունքները պաչտպանել դրավոր որենքներով: Այս յեղանակով կարող էին յերևալ Հայաստանում Ատրպատականի Դատաստանագիրքը Սիրիայից և Ecloga-ն՝ ընտրված քաղվածքներով՝ Բյուզանդիայից: Այս որենսդրքերի ոգեկոչման Հայաստանում, յեթե չեր կատարվել Բագրատունյաց պետական իշխանության միջոցով, ապա վստահվել էր սովորության կարդով, վոր ավելի քան հավանական է:

Վոր բյուզանդական իրավունքի, մանավանդ պետական վարչական իրավունքի մուտքն յեղել է այս շրջանում, մանավանդ Բագրատունյաց թագավորության որով, այդ բացահայտ և բյուզանդական տերմիններից, վորոնք յուրացվում էին հայ Ֆեոդալ իշխանների կողմից: Այն ժամանակվա հայ պատմագրական հուշարձաններում և վիմական արձանագրություններում, սկսած VII դարի յերկրորդ կեսից, հանդիպում ենք վարչական-պետական տերմինների, ինչպես են՝ պատրիկ, կատապան, կուրոպալատ, հյուպատոս, ապոհիպատ, մագիստրոս, անթիպատ, վեստես, դուկ. հարկեր՝ պախտ, անգարիոն (ՎՏ, եվ

2, 3, 14, 16, 17, 20, 22, 23, 27 և այլն) նոմոս՝ օրենք և այլն: Բագրատունյաց ժամանակաշրջանում հայ պետականությունն արդեն հետամուտ եր դրավոր կերպով արձանագրելու իր օրենքները, կիրառվող իրավունքը: Այդ վկայում են մի քանի փաստեր:

Բագրատունի թագավորները, ասվորաբար, իրենց օրինական կարգադրությունները վարոչ հարկերի վերացման կամ թեթևացման մասին հատատում էլին վիմական արձանագրություններով (ՎՏ, էջ 9, 10, 13), որոնք մատամբ հասել են մեզ: Սակայն Մխիթար Գոշի Դատաստանագրքի մեջ եղ գտնում ենք օրենքներ, որոնք բոլոր են Բագրատունյաց շրջանից, որը մի-յերկու դար առաջ և յեղել Մխիթար Գոշից: Հետևապես, այդ տակավին վոչ այնքան յերկարատև ժամանակամիջոցում Բագրատունյաց օրենքները չեին մոռացվել ու պահպանվել էլին դրավոր կամ բանավոր կերպով, քանի վոր Մխիթար Գոշը կարողացել և այն մտցնել իր Դատաստանագրքի մեջ: Մխիթար Գոշի Դատաստանագրքի այդ օրենքները վերաբերում են Հայաստանի պետական-վարչական, մասամբ եվ քաղաքացիական իրավունքին: Հայտնի յե, վոր Մխիթար Գոշի ժամանակ, XII դարում, Արևելյան Հայաստանում գոյություն չուներ հայկական պետականություն, հետևապես պետական-վարչական իրավունքը, վոր չարտահայտված և Դատաստանագրքի յերկրորդ՝ «Աչխարհական օրենք» խոսքով՝ մասի առաջին գլխում, Մխիթար Գոշը չեր կարող քաղել իր ժամանակակից իրականություններից, յերբ այդպիսի օրենքներ այլևս կիրառումն չունեյին, այլ քաղել և անցյալից մնացած ու պահպանված հնչատակություններից, նախորդ հայ պետականության, վոր Բագրատունյաց թագավորությունն եր:

Վերահիշյալ Ա. գլուխը կրում և «Յաղագս դատաստանաց թագավորաց» խորագրերը, վոր, ինչպես ճիշտ նկատում և Յոզեֆ Կոլերը (ZVR. XIX 2/3 Heft. s. 330), չի վերաբերում այդ հոդվածի բովանդակությանը, այլ Մխիթար Գոշն ի նկատի յե ունեցել այդտեղ օրենսդիրը—հեղինակին, այսինքն հայ թագավորներին, վորոնք օրինադրել են այդ հոդվածում մեջ բերված իրավաբանական նորմերը: Այդ բավականին յերկար ու մանրամասն Ա. հոդվածը չարտահայտված և վորպես մի չորք իրավաբանական նորմերի կոմպլեքս, մի ամբողջացած իրավունք, վոր

պարունակում է դանազան իրավական հարցեր՝ թագավորի իշխանության, թագավորական ժառանգության, թագավորական դատաստանի, ֆեոդալական հողատիրության, բերդերի, ամրոցների ու քաղաքների, պատերազմի ու ավարառման, հարկերի, դրամների, կոռ ու բեկարի, քրեական հանցանքների մասին: Հիշյալ հոդվածում Մխիթար Գոշը քանիցս կրկնում է, թե այդ իրավաբանական նորմերը սահմանված են հետևությամբ «առաջին թագաւորների», այսինքն Արշակունյաց ժամանակ գոյություն ունեցող որենքների. «որպէս և զայս սովորութիւն կալան առաջինք թագաւորք»[61] (էջ 304), «զի և կարգ առաջնոցն է մերոց թագաւորացն այդոքիկ»[62] (էջ 318):

Հետևապես, Մխիթար Գոշը «առաջին թագաւորներին», այն է՝ Արշակունիներին, հակադրում է իր Ա. հոդվածում «յերկրորդ թագաւորներին», վորոնք, ի հարկե, Բագրատունիներն էին: Այս պարագան վկայում է, վոր Բագրատունյաց թագավորները իրենց պետական ու վարչական սիստեմը սահմանադրելիս՝ ձգտել են վերականգնել հայ առաջին թագավորության, Արշակունյաց պետության, իրավական կարգերը, ֆեոդալական իրավունքի սովորույթներն ու նորմերը: Ահենայն հավանականությամբ Բագրատունյաց թագավորության այդ որենքները կազմված են յեղել դրավոր ժողովածուի ձևով և այդ ժողովածուի բովանդակությունն ամբողջովին մտել է Մխիթար Գոշի Դատաստանագրքի II մասի Ա. հոդվածի մեջ, ուստի և սա կոչվում է «Յաղագս դատաստանաց թագաւորաց»:

Այսպիսով, Հայաստանի պատմության բյուզանդա-արաբական շրջանը, մասնավորապես Բագրատունյաց թագավորությունն իր անտեսական վերելքով, առևտրա-վաչխառուական կապիտալի զարգացումով և կուլտուրական չինարարությամբ՝ անհրաժեշտորեն առաջ է մղել հայ իրավունքի զարգացումն հենց այս ուղղությամբ: Այդ իրավունքն իր նորմերով դալիս էր կարգավորելու Հայաստանի այդ դարերի սոցիալ-քաղաքական կառուցքը, վորտեղ մի կողմից՝ յեկեղեցական ֆեոդալիզմը հանդես էր գալիս իր դիրքերն ամրացնելու համար կանոնական կոդիֆիկացիայով, իսկ մյուս կողմից՝ աշխարհիկ ֆեոդալիզմը, հատկապես Բագրատունի թագավորությունը, վերականգնում էր իր դերն ու ազդեցությունն ոտար որենքների ռեցեպցիայով:

*Այս ժամանակաշրջանը Հայաստանի պատմության մեջ աչքի չի ընկնում քաղաքական տեսակետից նրանով, որ չերկիլը դարձել եր թյուրք–մոնղոլական անվերջ արշավանքների մրրկածուփ ասպարեզ: Սրևելյան Ասիայի խորքերից դուրս չեկած նվաճողները դիշատիչ շահագործման նոր տերիտորիա ձեռք բերելու նպատակով՝ հրով և սրով հաստատում էին իրենց իշխանությունն այստեղ, որն այնուհետև ստիպված էին լինում դիմելու հաջորդ, ավելի ուժեղ տիրապետողներին: Մի շարք դարերի ընթացքում իրար հաջորդում էին և փոխվում չերկիլի նվաճողները: Այդ պարբերական, տագնապալի իրադարձությունների մթնոլորտում Հայաստանի սոցիալ–տնտեսական զարգացումը մերթ ընդհատվում եր անկման մեջ, մերթ վերականգնվում վերելքի ուղիներով: Տեղի էին ունենում ֆեոդալական կառուցքի նոր չրջադարձեր և փոխվում եր տիրապետող դասակարգերի դիրքը: Այդ ամենը յուրահատուկ ձևով արտահայտվում եր եքինիկ բաղկացուքյան ու քաղաքական հարաբերությունների մեջ: Այս չերկարատև դարաշրջանում նկատում ենք չերեք բնորոշ ու դլխավոր ժամանակաշրջաններ:*

1. *ՍԵԼՋՈՒԿՑԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՑՈՒՆ.—Սելջուկները իրենց նվաճողական արշավանքների ճանապարհին հանդիպեցին ընդարմացած ու քաղաքականապես կազմալուծված Հայաստանին, որին 1048 թ. տիրեցին առանց դժվարության, ուղեկցելով իրենց արշավանքը սոսկալի ավերածությամբ, արյունհեղությամբ, դերեվարությամբ ու ավարառությամբ: Այդ ժամանակ Հայաստանը՝ արաբական խալիֆատի քայքայման հետևանքով, նմանապես Բագրատունյաց ու Արծրունյաց թագավորությունների անկումով՝ ամբողջովին դոնվում եր Բյուզանդիոնի ձեռքում: Սելջուկների արշավանքի նախորյակին, բյուզանդական քաղաքականության չնորհիվ, ֆեոդալական Հայաստանում մնացել էին նախկին նախարարությունների խղճուկ բեկորները, ինչպես որինակ, Բագրատունիները՝ Զորագետում, Աբասյանները (Բագրատունի տոհմի մի ճյուղը) Կարսում, Սյունիները՝ Ղափանում, Ռշտունիները, Մամիկոնյանները՝ Սասունում, Գահլավունիները՝ Շիրակում, վորտեղ Անի քաղաքը դոնվում եր*

Բյուզանդիայի անմիջական իշխանության ներքո, և այլ մանրամունր աննշան ֆեոդալները: Այդ բոլոր հայ ֆեոդալական կալվածքները, ցիրուցան, ողակված եկին մուսուլման ֆեոդալների դանդվածով և վո՛չ մի իրական ուժ, վո՛չ մի քաղաքական նշանակություն չունեին:

Բյուզանդիոնը, վորի վրա յեր ընկած Հայաստանի պաշտպանությունը, վորպես նրա տիրապետողի, վոչ մի լուրջ միջոցի չձեռնարկեց սելջուկների ներխուժման դեմ, այլ ինքն եվ հետո յենթարկվեց նրանց հարվածներին: Սելջուկները գրավեցին Փոքր Ասիայի մեծ մասը, վոր Բյուզանդիոնի տերիտորիան եր կազմում, և կանդ առան Կ. Պոլսի չեմքին (1086 թ.): Այսպիսով, Հայաստանն ընկավ Արաբական խալիֆատի ավերակների վրա բարձրացած Սելջուկյան տիրապետության տակ, վոր տարածվում եր Միջերկրական ծովից մինչև Զինաստան, Անդրկովկասից մինչև Յեմեն:

Սելջուկների սոցիալ-տնտեսական հասարակակարգը դեռ բավարար չափով ուսումնասիրված և լուսաբանված չե: Անտարակույս, սելջուկներն իրենց ձեռնարկած արշավանքների մոտ մենաին ներկայացնում եկին դասակարգայնորեն չերտավորված հասարակություն, վաչկատուն ֆեոդալիզմի հիմքերի վրա, վոր կենտրոնացվել եր Միջին Ասիայի թյուրքական ցեղերից: Սելջուկների նվաճողական յելույթի մղիչ դործոնն, ինչպես և նախորդ արաբներինը, ֆեոդալական եքսպանսիան եր: Դա հնարավորություն եր տալիս զավթելու լայնածավալ հողեր, վորոնք անհրաժեշտ եկին իրրև արոտատեղիներ՝ նվաճողների վաչկատուն մասի համար և իրրև մշակության ենթակա կալվածքներ՝ նրանց նստակյաց մասի համար: Հողային հարստությունների կուտակման հետ միասին տեղի յեր ունենում նաև հարստության կուտակումն՝ նվաճված յերկրների անխնա ավարառման, գերեվարության ու հարկահանման միջոցով: Ի հարկե, այս դիշատիչ չահագործումն ոդուտ եր բերում ֆեոդալ դասակարգին վո՛չ միայն իրրև սեփական կուտակման աղբյուր, այլև իրրև միջոց, վորով նա բթացնում եր իրեն յենթակա թյուրք չահագործվող մասսաների ներհակ արամադրությունները, մասն հանելով նրանց ռազմական ավարից:

Սելջուկների նվաճումը չեր բերում իր հետ արտադրության

վորևէ նոր յեղանակ: Ընդհակառակն, այդ նվաճումը, ըղխելով նվաճած յերկրների համեմատաբար զարգացման ստոր աստիճանի վրա կանգնած վաչկատունների, վոչնչացնում եր տեղական արտադրողական ուժերը, քայքայում եր բովանդակ ժողովրդական տնտեսությունը: Յերբ արդեն անցավ նվաճման առաջին հրոսն, և սելջուկները հաստատեցին իրենց իշխանությունը նվաճած յերկրներում, նրանք սկսեցին յուրացնել նվաճվածների արտադրության յեղանակը, ներծծվելով տեղական բնակչության դանդվածների մեջ: Այդ տեղի ունեցավ առանձնապես Սելջուկյան Մելիք-Շահի (1072—1092 թ. թ.) թագավորության ժամանակ:

Սակայն Մելիք-Շահի մահից հետո հսկա Սելջուկյան պետությունը ճեղքվածներ տվեց: Ծայր առան դինաստիական դժտություններ, վորոնք կազմալուծում էին ահագին պետությունը: Խոշոր սելջուկ ֆեոդալները, վորոնք, իբրև կենտրոնական իշխանության ներկայացուցիչներ, նստած էին հպատակ յերկրներում, անջատվում էին կենտրոնից և իրենց հայտարարում կառավարած յերկրների անկախ իշխաններ: Ամբողջ Հայաստանում առաջացան մի քանի խոշոր անկախ ֆեոդալական իշխանություններ՝ եմիրություններ: Սրանք կենտրոնացել էին հինավուրց հայոնի վաճառաշահ քաղաքների շուրջը, ինչպիսիք են Դվինը, Անին (Շեդդատյանները), Սեբաստիան (Դոնիշմանյանները), Մերդինը և Հիսնկեյֆը կամ Մծբինը (Որթոկյանները), Մանազկերտն ու Խլաթը (Շահ-Արմեններ և այնուհետև Եյուբյաններ), Կարինն ու Կարսը (Սալդուխներ) և այլն: Այդ մուսուլման ֆեոդալական ծովում, վորպես ցաք ու ցրիվ կղզիներ, շարունակում էին իրենց դոյությունը նախորդ նախարարական տոհմերի վերջին մնացուկները, մանավանդ Թուլակազմ և քաղաքականապես անդոր հայ ֆեոդալները:

Ինքնուրույն թյուրք ֆեոդալական իշխանությունների դոյացումը խոշոր առևտրական կենտրոնների շուրջը՝ վկայում է, վոր առևտրա-վաչխառուական կապիտալը պահպանում եր իր կենսունակությունը, չնայած յերկրի համատարած ավերմանը: Յեթե արաբական նվաճողական առաջխաղացմանը հետևում եր առևտրական կապիտալը, վոր մուտք եր գործել նաև Հայաստան, ապա սելջուկների ժամանակ. առևտրա-վաչխառուական

կապիտալը կարողացավ պահպանել իր զրաված նախկին դիրքերը, վորովհետև սելջուկներին էլ այն խորթ չէր։ Ջուր չէր առում Կ. Մարքսը, վոր «առևտրական կապիտալը յուրահատուկ և հենց վոչ-նատակյաց, վաչկատուն ժողովուրդներին»[63]։

Այդ թյուրք խոշոր ֆեոդալներն, իրենց ձեռքին ունենալով հինավուրց հայոնի առևտրական քաղաքները, իրենք էլ ամենայն հավանականությամբ աշխույժ մասնակցություն ունեցին առևտրա- վաչխատուական կապիտալի կուտակման մեջ։ Նրանք դառնում էլին այնպիսի խոշոր դրամական միջոցների տերեր, վոր հնարավորություն էլին ստանում կանխիկ դրամով ամբողջ քաղաքներ ու խոշոր կալվածքներ գնել։ Շեդդատյաններից մեկը 1072 թ. գնել եր Անի քաղաքը Ալփասլանից[64]։ Կեչդորի եմիր 1072 թ. Կարաչայը վաճառել եր Ղըզըլ- Ասլանին մեծաքանակ վոսկով Ծարաքարը, բերդաքաղաք Անիի մոտ[65]։

2. ՋԱՔՍԱՐՑԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ.—XII դարի առաջին քառորդում Վրաստանը, վոր այնքան էլ չէր տուժել սելջուկների արշավանքներից, կարողացավ ոգտվել Սելջուկյան թագավորության կազմալուծումից և սելջուկներին դուրս քշել Վրաստանի սահմաններից, ինչպես և հարևան վասալական հայ ֆեոդալական իշխանություններից։ Հայաստանի հյուսիսային մասի ֆեոդալները, վորոնք համեմատաբար պակաս էլին տուժել սելջուկներից, ղեկավորությամբ Վրաստանի ակտիվ հայ ֆեոդալներ Զաքարեյի ու Իվանեյի, վորոնք վրաց թագուհի Թամարայի (1184—1210 թ. թ.) և սրա վորդի Գեորգի Լասայի (1210—1223 թ. թ.) ժամանակ աղդեցիկ քաղաքական դեր էլին խաղում վրաց արքունիքում և Հայոնի էլին առաջինն իրրև ամիր- սպասալար, իսկ յերկրորդն իրրև ատաբեկ, համախմբվելով, ազատեցին ամբողջ Հայաստանը սելջուկների լծից։ Հայաստանը XIII դ. սկզբին քաղաքականապես նորից վերականդնվեց Զաքարեյի ու Իվանեյի իշխանության ներքո։ Սրանք, լինելով Վրաստանի ֆեոդալներ, իրենց անվանեցին Հայաստանի տերեր և յուրացրին անսահմանափակ իրավունք ու իշխանություն սելջուկներից ազատագրված Հայաստանի վրա։ Վերջինը, թեև համարվում եր անվանորեն Վրաստանին յենթակա վասալական պետություն, բայց փաստորեն հանդիսանում եր

անկախ ու ինքնուրույն մի երկիր, վոր պատկանում եր Զաքարյաններին իշխանությունը: Դա լայնածավալ մի տերիտորիա էր, վոր բռնում եր նախկին Բագրատունյաց և Սյունյաց թագավորությունները միասին վերցրած: Զաքարյանների այդ Հայաստանը մի ընդհատ պատմագրություններում, ինչպես և վիմագրեր հուշարձաններում հիշատակվում և վորպես «թագավորություն», «պետական իշխանություն», «աշխարհակալություն», «ինքնակալ պետություն», «աշխարհակալ տերություն» և այլն (Վ.Տ, 47, 50): Իրենք՝ Զաքարեն ու Իվանեն, իրենց անվանում եյին վո՛չ միայն «պարոն», այլև «թագավոր», «չահին չահ» և մի քանի դեպքերում նաև «կեսար» (Վ.Տ, 47, 49, 50, 141):

Անին նրանք համարում եյին իրենց «թագավորանիստ» քաղաք (Վ.Տ, 141): Զաքարյաններն իրենց ֆեոդալական իշխանության հեղինակությունը բարձրացնելու նպատակով այնքան հռուռ եյին գնում, վոր իրենց առհմային ծագումը սերում եյին Բագրատունի թագավորներից «...այս մեր դեր և յիշատակի է և արճան մշանջենաւոր որդեաց մեծին Սարգսին յաղդէ Բագրատունեան, Իւանէի և Զաքարէի...» (Վ.Տ. 141):

Սելջուկների արշավանքի ժամանակ Հայաստանի հյուսիս-արևելյան մասերում գոյություն եյին պահպանում մի քանի նախկին նախարարական առհմերի մնացորդներ: Զաքարյանների տիրապետության որով նրանք, մասնակցություն ունենալով սելջուկների դեմ մղվող պատերազմներին, մեծացրին իրենց կալվածքները և սկսեցին աչքի ընկնող դեր խաղալ, վերականգնելով իրենց ֆեոդալական նշանակությունը: Միևնույն ժամանակ Զաքարեն և Իվանեն նպատակ եյին հետապնդում նորելուկ ֆեոդալական իշխանությունների դոյացմանը, լայնածավալ կալվածներ տրամադրելով իրենց զորապետներին սելջուկներից ազատագրված հայկական տերիտորիայում: Այսպիսով, առաջացան ֆեոդալ իշխաններ՝ Վաչուտյանք, Որբելյանք, Խաղբակյանք, վորոնք հետագայում վերանվանվեցին Պռոշյանք, Դոփյանք, Մաչենք և այլն: Սրանք Զաքարյանների վասալներն եյին և միևնույն ժամանակ այնքան խոշոր ու հարուստ, վոր ունեյին նաև իրենց յենթակա մանր վասալ ֆեոդալներ:

Հայաստանը, վոր վերջին սելջուկների ժամանակ սկսել եր տնտեսապես վերականգնվել, Զաքարյանների որով արդեն ա-

բաղ թափով ընթացավ տնտեսական և կուլտուրական վերելքով: Տեղական արտադրողական ուժերի զարգացումն, առևտրական հարաբերությունների աշխուժացումն և այդ կապակցությամբ քաղաքների ծաղկումն Անիի դվինավորությամբ և, վերջապես, անմիջական արտադրողների դյուրին շահագործման հնարավորություն ստեղծված խաղաղ պայմաններում,— այդ ամենը նպաստում էր հարստությունների կուտակմանը ֆեոդալների և առաջին հերթին Զաքարյանների ձեռքում: Ֆեոդալներն հենց իրենք էլ մասնակից էին առևտրա- վաշխառուական կապիտալի շրջանառությանը:

Առևտրա- վաշխառուական կապիտալի խոշորագույն ներկայացուցիչներից էր Տիդրան Հոնենցը: Սա, հնորհիվ իր հսկայական հարստության, դրամվում էր հողերի գնումներով, փոխատու գործարքներով հողերի ու կալվածքների դրավի դիմաց, նա իր հարստությունից մասն էր հանում՝ ընծայելով վանքերին ու Անիի եկեղեցիներին խոշոր հողեր, անշարժ կայքեր և այլ թանգարժեք սպասներ ու եկեղեցական պարագաներ «հոդուս փրկության» համար: Նա անվանում է իրեն «հավատարիմ ծառայ ամէր ազատասէր Շահնշահ Զաքարիայի»: Այսպիսով, նա վաստակավածառեր էր Զաքարյանների և ընդամին իր ժամանակի բոլոր նորոչ «կապիտալիստ» (ՎՏ, հէ 54, 58):

Հայ պատմագրության մեջ (ԿԳ, հէ 349) և հայ վիմական արձանագրություններում հիշատակվում է մի այլ «կապիտալիստ» Ամենի անունը, որ հարուստ վաճառական էր կարին քաղաքում և ապա մոնղոլական արշավանքների ժամանակ տեղափոխվել էր Թբիլիսի: Ըստ էության, այդ վաճառականական տունը ժառանգական է եղել, որովհետև նրա վորդին՝ Ճաբրը, հետևելով իր հորը, մեծամեծ գումարներ ծախսելով՝ հողեր է գնում, խոշոր նվիրաբերություններ անում վանքերին (ՎՏ, 124—125): Մոնումենտալ շենքերի կառուցումը, ճարտարապետական վարթամ հուշարձանները, շինարարական արվեստի զարգացումը, վորտեղ ֆեոդալները մրցում էին իրար հետ, և վորտեղ տեսնում ենք նյութական կուլտուրայի փառահեղ զարգացումը, վկայում են, թե ինչ ահագին հարստություններ էին կուտակվել ֆեոդալ իշխանների ու խոշոր առևտրականների ձեռքում և թե

ինչպես այդ փոքրամասն չինարարությունը կատարվում էր նրանց ճորտերի բանվորական ուժի չհատուցվող օգտագործմամբ:

Չնայած որ Զաքարյաններից ժամանակ Հայաստանն իր տնտեսական և կուլտուրական վերելքով ներկայացնում էր ամբողջական պետական կազմակերպություն, այնուամենայնիվ պետք է ասել, որ ընչացների տիրապետությունը թեև կարճատև էր պատմական տեսակետից, բայց թողել էր իր ազդեցության հետքերը: Այդ հետքերը նկատելի են Զաքարյանների Հայաստանի ֆեոդալական կառուցքում, որտեղ դասային–վարչական և ֆինանսա–հարկային նախորդ արտաբական արմատացած անուններին մխանում և յուրացվում են թյուրքական տերմիններ:

3· ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ.— Զաքարյանների իշխանության վերջ դրեց Չինգիզ–խանի հորդաների արշավանքը՝ Զարմագանի հրամանատարության: Մոնղոլների արշավանքը Հայաստանում սկիզբ է առնում 1236 թ· և, ընթանալով վաչկատուն ժողովուրդներին յուրահատուկ անողոք ավերածություններով, արյունհեղություններով, ավարառություններով ու դեռևվարություններով, ավարտվում է 1244 թ· Հայաստանի վերջնական նվաճումով: Ներս խուժած ահարկու ուժի դեմ չկարողացան վորևե քայլ անել վո՛չ Վրաստանը, վո՛չ էլ Հայաստանը: Վրաստանն այդ ժամանակ պառակտվել էր, ասպարեզ դառնալով մի֊֊ֆեոդալական և թագավորի դահի շուրջը բռնկած պայքարի: Իսկ Հայաստանը, բաղկացած լինելով բազմաթիվ ֆեոդալական իշխանություններից, չէր ներկայացնում մի կուռ դրություն և միացյալ կայուն դանդված, մանավանդ վոր այդ ժամանակ Զաքարյանների տոհմը կորցրել էր իր նախկին հզորությունն ու ազդեցությունը: Հայ ֆեոդալ իշխաններն այդ պայմաններում դերդաստում էին իրենց հպատակությունը հայտնել ու ճանաչել նորեկ նվաճողների իշխանությունն և այսպիսով փրկել իրենց կյանքն ու կալվածքները:

Մոնղոլներն ընդհանրապես անխոփոխ թողին Հայաստանի ֆեոդալական կառուցվածքը, վորը նրանք կարողացան ոգտագործել իրենց նվաճողական նպատակների համար: Նախ՝ նրանք ձգտում էին տեղական իշխանների միջոցով կառավարել նվաճած յերկիրը և յերկրորդ՝ տեղական ֆեոդալներն, իրրև վասալներ, իրենց զինվորական ուժերով պարտավորվում էին

մանակել մոնղոլների ձեռնարկած արշավանքներին: Այդ քաղաքականությունը սովորական դարձելակերպն էր մոնղոլական կենտրոնական իշխանության, որը այդ յեղանակով հնարավորություն էր ստանում Միջին Ասիայից, Կարա-Կորումից, կառավարել ու իրեն իշխանության ներքո պահել նորակազմ պետության անսահման տարածության վրա սփռված բազմազան յերկրները:

Հայաստանում արտադրության ֆեոդալական յեղանակն իր տնտեսական դրությամբ ավելի բարձր էր կանգնած մոնղոլների վաչկատուն հասարակության ֆեոդալական արտադրության յեղանակից: Ուստի վերջիններն իրենց չհադարձողական տեսակետից պահպանում էին տեղական ֆեոդալական կառուցվածքն իր իշխաններով ու կալվածատիրություններով: Այդ կառուցվածքը, հանդիսանալով մոնղոլների աչքում ավելի նպատակահարմար միջոց նվաճած յերկիրը կառավարելու համար, միաժամանակ հնարավորություն էր ընձեռում բարձրացնելու հավելյալ արդյունքի քանակը և սիստեմատիկորեն այն դուրս կորզելու արտադրող մասսաներից:

Հիրավի, նվաճողական առաջին քայլերից հետո, յերբ յերկիրն ասպատակվել էր ու ավերվել էին արտադրողական ուժերը, մոնղոլները աշխատում են յերկրում կյանքի նորմալ ընթացք հաստատել: Պատմագիր Կիրակոս Գանձակեցին, մոնղոլական արշավանքների ժամանակակիցը, բնորոշում է այդ մոմենտը հետևյալ խոսքերով. «Ապա հրաման եառն մնացորդացն՝ որ ապրեալ էին ի սրոյ անտի և ի դերութենէ, դնալ յիւրաքանչիւր տեղիս, ի գիւղս և ի քաղաքս, և չինել յիւրեանց անուն և ծառայել նոցա. և ոչսաւ երկիրն առ սակաւ սակաւ դչինութիւն առնուլ» (49, եջ 247, 277):

Նույնը վկայում է և մի այլ ժամանակակից պատմագիր՝ Մաղաքիա Աբեղան[66]:

Անկման չրջանից հետո Հայաստանում սկսում են վերականգնվել արտադրողական ուժերը, նորից չարունակվում է նյութական կուտակումն և աշխուժանում առևտրական կապիտալի դործունեությունը: Վերակենդանանում են առևտրական հարաբերությունները:

Սակայն հայ ֆեոդալական հասարակության հալածացումը, որը, անշուշտ, վերջին հաշվով ամենամեծ վնասը պետք էր հասցներ քաղաքական ուժեղացմանը, այնքան էլ նպատակահարմար չէր համարվում, և նույնիսկ վտանգավոր էր թվում մոնղոլներին: Ուստի նրանք համապատասխան միջոցների ձեռնարկեցին: Մոնղոլների տիրապետության որով Հայաստանի հարկերը մտնում էին խանական կենտրոնական գանձարանն առանց սահմանված սիստեմի և ճիշտ հաշվառման: Յերկրի տնտեսի չհատուցած ընչաքաղց նվաճողներին թվում էր վոչ բավարար: Ուստի, նրանք XIII դարի յերկրորդ կեսին ազգաբնակության մարդահամար արին և ըստ այնմ էլ մացրին նոր հարկային սիստեմ: Հայ պատմագիրների վկայությամբ՝ հարկերը չափազանց ծանր էին և բնակչության ուժերից վեր: Յեթե իսկական արտադրողները միշտ, յերբ նույնիսկ Հայաստանն ազատ էր ոտար նվաճողներից, հեծում էին կոռ ու բեկարի ծանրության տակ, ապա այժմ ավելի ևս ճնշվելու էին հարկերի բեռից, քանի վոր նրանց բնիկ տերերը, ստիպված լինելով ստացած ռենտայի մասը հատուցել տուրքի և հարկի ձևով մոնղոլ նվաճողներին, այդ իրենց վնասը լրացնում էին՝ ավելի մեծ չափով ուժեղացնելով չհատոցածումը: Սակայն հարկային ծանրությունն ավելի ևս բարդանում էր հարկահավաքների ապօրինի կորզումներով և մոնղոլական զորաբաժինների կամայականություններով ու թալանններով: Մոնղոլական ֆեոդալական վերնախավը մեծ խանի դևիտավորությամբ, տեսնելով, վոր զորքերը ռազմական արշավանքների ընթացքում յուրացնում էին ավարների մեծ մասը և դրանով վնասում խանական գանձարանին, սահմանեց յուրաքանչյուր տուրք նաև զորաբանակի վրա: Վերջինս պարտավորվում էր ռազմական ավարի $^1/_{10}$ մուծել խանական գանձարան (ԿԴ, եջ 135): Հետևանքն այն յեղավ, վոր զինվորական մասերը, սկսած մեծից մինչև հետին զինվորը, ջանում էին իրենց վնասը ծածկել բռնի հարկերով և կողոպուտով, խաղաղ բնակիչներին թալանելով:

Այս պայմանները քայքայիչ կերպով եյին ազդում յերկրի նյութական բարեկեցության վրա: Ժամանակակից հայ պատմագիրների վկայությամբ[67] բազմաթիվ հայ եկեղեցիներ ստիպված

եկին վաճառել կամ գրավ դնել իրենց կալվածները, ապրանքներն ու ամրոցները, վորպեսզի կարողանային վճարել տուրքերը: Նմանապես հայ բնակչության մեծ մասը, անկարող լինելով տանել հարկային ծանրությունը, կեղեքողների կամայականություններն ու ճնշումները, թողնում էր հովիտներն ու դաշտավայրերն և ապաստանում լեռնային կիրճերում ու բարձունքներում: Ահա այս ժամանակ, մանավանդ XIV դարի առաջին կեսին, ծայր առավ նաև քաղաքների տնտեսական անկումը, ինչպես որինակ՝ վաճառաշահ Անիի անկումը: Այս քաղաքական ու տնտեսական ծանր հանգամանքները պատճառ հանդիսացան քաղաքային բնակիչների արտագաղթելուն և քաղաքային առևտրականն կյանքի մեռնելուն Հյուսիսային և Միջին Հայաստանում:

Այս դրության ավելի ևս վատթարացավ վերջին իլխաններ ի ժամանակ, յերբ XIV դարի յերկրորդ կեսին մոնղոլական լայնածավալ պետությունը դինաստիական դժտությունների հետևանքով մասնատվեց մի քանի մուսուլմանական ֆեոդալական իշխանությունների: Ծայր առան անվերջ կռիվներ ու պայքար այդ նորելուկ իշխանների միջև՝ Հայաստանի ու Վրաստանի տերիտորիաներին տիրելու համար: Բոլոր պատերազմները տեղի էին ունենում գլխավորապես Հայաստանի սահմաններում, վորով յերկիրը մասնավում էր հարատև ավերման, իսկ ժողովրդական մասսաները՝ տնտեսական ու ֆիզիկական քայքայման:

Այդ անմխիթար վիճակը կատաստրոֆիկ բնույթ ստացավ XIV դ. վերջերին և XV դ. սկզբներին, յերբ Լանկթամուրի ավերածու արշավանքներով Հայաստանը դարձավ հրի ու սրի ճաքակ: Յերկրի տնտեսական ու քաղաքական կյանքը կարկամեց ու կանգ առավ իր զարգացման ընթացքում և նույնիսկ հետադիմեց, իսկ նյութական և հոգևոր կուլտուրան միանգամայն ամայացավ:

4. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ.—Հայկական ֆեոդալիզմի պատմության մեջ, կարծես, առանձնակի տեղ է բռնում Կիլիկյան հայ թագավորությունը, վոր գոյություն ունեցավ յերեք հարյուրամյակ (1080—1375 թ. թ.): Այդ ֆեոդալական-ազատության առաջանալը Կիլիկիայում իր արմատներով մտնում է Մեծ Հայքի պատմության մեջ:

Կիլիկիան, որը բռնում է Փոքր Ասիայի հարավ-արևմտյան անկյունը՝ Միջերկրական ծովին կից, արդեն հնուց լավ հայտնի էր հայերին, չնորհիվ առևտրական հարաբերությունների Մեծ և Փոքր Հայքի հետ: Բյուզանդիայի նվաճողական ելքտանսիայի և մանավանդ սելջուկյան արշավանքների ժամանակները Հայաստանից մեծ արտագաղթային շարժում սկսվեց դեպի Կիլիկիա: Այստեղ հայերը վերկուլթյուն էին մորոնում նվաճողների ձեռքից: Այդ վտարանդիների մեջ կային նախարարական ու իշխանական տոհմերի մի քանի ներկայացուցիչներ, որոնց ձեռքից դնացել էին հայրենի հողերն ու կալվածները և որոնք այժմ այդտեղ, լեռնային վայրերում, ապաստան էին դտնում բյուզանդական կայսրների ու սելջուկյան եմիրների հալածանքներից: Այսպիսով, Կիլիկիայում, որը դտնվում էր Բյուզանդիայի իշխանության ներքո և բնակված էր գլխավորապես հույներով, առաջացան հայ դաղութներ: Այդ դաղութները, յերկրի բարեհաջող աշխարհադրական դիրքի ու Միջերկրածովյան յերկրների հետ ունեցած աշխույժ առևտրական հարաբերությունների չնորհիվ, արագ թափով սկսեցին անտեսապես զարգանալ և ուժեղանալ: Այդ դաղութներում, ազգային տրադիցիաների կամ, ավելի չուտ, սոցիալ-տնտեսական պղեցիկ դրության հետևանքով, սկսեցին գեկավար դեր խաղալ այստեղ ապաստանած հայ Ֆեոդալ իշխանները: Ժամանակի ընթացքում հայկական տարրը Կիլիկիայում քանակորեն ու տնտեսապես այնքան աճեց, որ դուրս մղեց բնիկներին, որոնց հողերը հետզհետե անցան այդ վտարանդիների, գլխավորապես հայ Ֆեոդալների ձեռքը:

XI դարի յերկրորդ կեսին հայ Ֆեոդալականությունն այստեղ այնքան ուժեղացավ, որ իր տիրապետող դիրքն ապահովելու նկատառումներով անհրաժեշտ դտաց սեփական պետական կազմ հիմնելու: Այդ Ֆեոդալների մեջ ամենաուժեղն և ամենահարուստը, իշխան Ռուբենը, որը վերջին Բագրատունի թագավոր Գագիկ II-ի մոտիկ ազգականն էր, կարողացավ համախմբել նրանց և, իրեն հռչակելով ինքնուրույն իշխան, հիմնադրեց Կիլիկիայի հայ պետությունը: Հետագայում, Ռուբենի հաջորդների որով, Կիլիկիայի հայկական թագավորության սահմանները դգալիորեն ընդարձակվեցին, և խաչակրաց արշավանքների

ժամանակ նա հասավ իր անհեռատես ու քաղաքական զարդացման ամենաբարձր աստիճանին: Այսպիսով, հայ պատմության մեջ հանդես եկավ Կիլիկյան հայ թագավորությունը, որը ծագեց ու զարդացավ Արևմտյան Եվրոպայի հետ ունեցած առևտրական հարաբերությունների մթնոլորտում: Կիլիկյան հայ թագավորությունը ներկայացնում էր տիպիկ ֆեոդալական պետություն, բավականաչափ կենտրոնացած իշխանությամբ, մի պետություն, որը սկզբնական շրջանում կազմակերպվել էր նախարարական կառուցքի վերապրուկային արտոնյալների վրա: Սակայն Արևմտյան Եվրոպայի և խաչակիրների հետ ունեցած սերտ հարաբերությունների շնորհիվ՝ կիլիկյան ֆեոդալական սխեմայի մեջ ներծծեց արևմտա-եվրոպական, դրվատորապես ֆրանկյան, ֆեոդալիզմի բնորոշ գծերը: Արևմտա-եվրոպական ազդեցությունն այստեղ այնքան ուժեղ էր, որ XII դարից սկսած՝ կիլիկյան ֆեոդալականության հասարակական, պետական- վարչական և ֆինանսա- հարկային բնագավառներում տիրապետում էին արևմտա-եվրոպական ֆեոդալական տերմիններ:

Թեև կիլիկյան հայ թագավորությունը քաղաքականապես կապված չէր բնիկ Հայաստանի, Մեծ Հայքի հետ, բայց և այնպես նա սերտ կուլտուրական կապեր էր պահպանում նրա հետ, մանավանդ Զաքարյանների ժամանակաշրջանում, երբ Մեծ Հայքի տարանոյկ ճանապարհներով էին կատարվում առևտրական հարաբերությունները Միջերկրածովյան կենտրոնների հետ՝ Կիլիկիայի վրայով: Այդ կապերի շնորհիվ Զաքարյան Հայաստանը հնարավորություն էր ստանում վորոշ չափով հաղորդակից լինել եվրոպական կուլտուրային և նույնիսկ մի քանի բան յուրացնել Կիլիկիայից: Զաքարյան Հայաստանի ֆեոդալական կենցաղում թափանցել են ֆեոդալական տերմիններ, որը արևմտա-եվրոպական ծագումն ունեն և այնքան խորն են արմատացել հայ լեզվի մեջ, որ պահպանվել են մինչև մեր օրերը: Բավական է միայն հիշել «պարոն» բառը, որը վոչ այլ ինչ է, եթե վոչ եվրոպական ֆեոդալական «baron» տերմինը:

5. ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԸ.— Այս վերջին ժամանակաշրջանների պայմաններում հայ իրավունքը, իբրև տվյալ հասարակության մեջ գործող իրավաբանական նորմերի և իրավական ինս-

տիտուսների կոմպլեքս, ենթակա էր այն իրադարձություններին և վերապրում էր այն ազդեցությունները, որոնք ներքում էին ներկի բովանդակ սոցիալ-քաղաքական կյանքը և խափանում նրա տնտեսական զարգացման նորմալ ընթացքը:

Մեզ չեն հասել պատմական տեղեկություններ, թե ի՛նչ էր ներկայացնում և ինչո՛վ էր արտահայտվում իրավունքը Հայաստանում սելջուկյան տիրապետության վոչ այնքան երկարատև շրջանում: Սակայն կարելի է վորոշ ենթադրություններ անել, վորոնց հավանականությունը բղխում է առեղծված քաղաքական ու հասարակական հարաբերություններից: Այստեղ չարունակում էր պահպանել իր նշանակությունը արաբներից մնացած շարիաթական իրավունքը, վոր համապատասխանում էր նաև սելջուկների դաղափարախոսական վերնաշենքին և իրավական դործիք էր դառնում նվաճողների ձեռքին՝ իրենց տիրապետության հիմքերն ամրացնելու համար: Իսկ տեղական հայ իրավունքը, վոր զարդացել էր, մի կողմից, ինչպես տեսանք, Բագրատունյաց շրջանում հունա-բյուզանդական, ասորական և Մովսիսական որենքների ժողովածուների մանավանդ ռեցեպցիայով և մյուս կողմից՝ հենց Բագրատունիների «թագավորական որենքներով», կանդ և առնում սկսած զարդացման մեջ ու միանդամայն կարկամում, քանի վոր այլևս դոյություն չուներ հայ քաղաքական իշխանությունը: Սակայն ասպարեզում մնում էր հայ հիերոկրատիան, վորի ուժն ու ազդեցությունը խորտակված չէին, ինչպես աշխարհիկ ֆեոդալներինը: Ուստի հայ եկեղեցական ֆեոդալականությունը հնարավորություն և ունենում իր ձեռքում կենտրոնացնելու դատական և իրավաբանական ամբողջ բնագավառը: Այստեղ «Կանոնագիրքն» ու «Մովսիսական որենքները», վորոնք սերտորեն կապված էին թեոկրատական իրավահայեցողության հետ, դառնում են տիրող պայմաններում դործող իրավունքի միակ արտահայտիչները: Թե վորքան զորեղ էր հայ հիերոկրատիայի նշանակությունը սելջուկյան ժամանակաշրջանի իրավաբանական բնագավառում՝ այդ բացահայտ և հաջորդ, Զաքարյան ժամանակաշրջանում նրա վայելած հեղինակության, յերը դատական հիմնարկների դեկավարումն և մանավանդ որենսդրքերի հորինումը հանձնարարվում էր հոդևոր

դասի ներկայացուցիչներին: Հիրավի, հայ որենսդիրք կազմելու առաջին, թեև անհաջող փորձը պատկանում է, ինչպես տեսանք, Դավիթ Ալավկա վորդուն, իսկ յերկրորդ փորձը կատարվեց Մխիթար Գոշի ձեռքով. յերկուսն էլ հոգևորականներ էին:

Սելջուկյան տիրապետությանը հաջորդող Զաքարյաններին տիրապետությունը, յերբ Հայաստանը տնտեսապես ու քաղաքականապես վերականգնեց, և քաղաքական իշխանությունը կենտրոնացավ հայ աշխարհիկ ֆեոդալականության ձեռքում, քնորոշ է այն տեսակետից, վոր հասարակական և կուլտուրական զարգացումն առաջ մղեց նաև հայ որենսդրքի պահանջը: Այդ պահանջն իրականացավ մասամբ Մխիթար Գոշի Դատաստանադրքով, վորը հայ իրավունքի պատմության մեջ յուրատեսակ կոդիֆիկացիայի առաջին և վերջին փորձն եր: Մենք արդեն վերը տեսության ենք առել այն սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմանները, վորոնք թելադրեցին Մխիթար Գոշի Դատաստանադրքի հորինումը: Այստեղ միայն նշենք, վոր Զաքարյանների Հայաստանում ազգային որենսդրքի սուր կերպով զգացվող անհրաժեշտությունը հաստատում է մեր վերևում բերած յենթադրությունն այն մասին, վոր սելջուկյան տիրապետության տակ հայ իրավունքը կարկամել ու յետ եր մղվել:

Հայ իրավունքի զարգացումը, վոր նոր խթան եր ստացել Զաքարյան Հայաստանում, ճակատագրական հարվածի յենթարկվեց հաջորդ՝ մոնղոլական շրջանում, յերբ հայ քաղաքական իշխանությունը վերստին չքացավ ասպարեզից: Թեև մոնղոլական տիրապետության ներքո Հայաստանում պահպանում էին իրենց դոյությունը տեղական հայ ֆեոդալները, ինչպես որինակ՝ Պռոշյաններն և այլք, նաև վաճառաշահ քաղաքներն, ինչպես Անին, բայց սրանք լինելով ցիրուցան և ապակենտրոնացած վիճակում և վասսալական կախումն ունենալով դերադույն այրուձեն մոնղոլական խանից, չէին ներկայացնում այն պետական կազմը, այն ազգային քաղաքական կոմպակտ մարմինը, վորտեղ կարողանար տեղական որենսդրություն դոյանալ և հայ իրավունքն իր հետագա զարգացումն ունենար: Այս պայմաններում հայկական մի ջավայրի հասարակական հարաբերությունները կարգավորվում էին սովորութական իրավունքի նորմերով և հայ

որենագրքերով, վորոնք հասել եյին նախորդ՝ Զաքարյաննելի իշխանութեյունից, վորտեղ, անկասկած, դլխավոր տեղն եր բռնում Մխիթար Գոշի Դատաստանագիրքը:

Ինչպես ակներև է միջնադարյան հայ պատմագիրներից և մանավանդ բազմաթիվ վիմական արձանագրութեյուններից, մոնղոլական տիրապետութեյան ժամանակ դեռ դործում եյին հայ ֆեոդալական աշխարհում, առավելապես տնտեսական հարաբերութեյունների բնագավառում, չարիքաթական իրավունքի նորմերը: Շարիաթի կիրառումն ավելի որինական ուժ և առանում Հայաստանում, յերբ մոնղոլները հարում են մահմեդական կրոնին, և ապա բացարձակորեն սկսում է տիրել հաջորդ դարերի թյուրք նվաճողների որով, յերբ Հայաստանն այլևս չեր ներկայացնում քաղաքական մեծութեյուն և կազմում եր թյուրք պետութեյունների սոսկ մի տերիտորիական մասը: Այստեղ այլևս իսոք չի կարող լինել հայ իրավունքի մասին իրրև իրավական մի սիստեմի: Այն արդեն կորցրել եր իր քաղաքական և սոցիալ-տնտեսական նշանակութեյունը: Հայ իրավունքը դարձել եր միայն անցյալի պատմական մի յերևույթ, դրավոր հուշարձանի արժեք ունեցող մնացորդ, բացառութեյամբ հայ սովորութեյական իրավունքի, վորի նորմերը, մանավանդ ընտանեկան ու ժառանգական հարաբերութեյունների բնագավառում, համառ պահպանողականութեյամբ տիրում եյին բնատնտեսութեյան պայմաններում դեղերող հայ համայնքներում:

Հայ իրավունքը պատմական դեպքերի դասավորութեյամբ չարունակում է մի առժամանակ պահպանել իր դոյութեյունը հեռավոր հայ դաղութներում, ինչպես Լեհաստանում, Ղրիմում, Աստրախանում և Նոր-Նախիջևանում: Սակայն և այնպես, հայ իրավունքը միայն թեոկրատական առումով կարողացավ պահպանել իր դոյութեյունը մինչև վերջին ժամանակները հայ հիերոկրատական հաստատութեյուններում: Վորպես հայ ֆեոդալական իրավունքի մնացորդ՝ յեկեղեցական իրավունքն իր «Կանոնագրքով» և այն որենքների ժողովածուներով, վորոնք բացարձակապես աստվածաբանական- յեկեղեցական դաղափարներով եյին համոզված, պահում է հայ կղերական կազմակերպութեյան իրավաբանական հիմքը: Այդ իրավունքի նորմերով եր նա մի կող-

մից՝ ամրապնդում իր քաղաքական ու տնտեսական նշանակությունը տիրող ոստար պետության սահմաններում, դերբեմն վորպես պետություն պետության մեջ, շահագործելով իր մենաշնորհ դիրքը, միշտ լինելով տիրող ոստար պետականության քաղաքական դործիքը. մյուս կողմից՝ այդ իրավունքի նորմերով նա ամրացնում էր իր հարաբերությունները հայ աշխարհիկ համայնքների հետ և հնարավորություն ստանում շահագործելու նրանց:

Իրրև վերջաբան, ամփոփենք ներկա դլխում արծարծված տեսությունը: Ֆեոդալական իրավունքը, ինչպես ասել ենք, իրավական վերնաշենք է ֆեոդալական հասարակական կառուցվածքի տնտեսական հիմքի վրա և հանդիսանում է տիրապետող դասակարդի ձեռքին ճնշման, հարկադրման կենտրոնացած մի միջոց: Այդ իրավունքի նորմերի մեջ արտացոլում են ֆեոդալական հասարակության արտադրական հարաբերությունները:

Հին Հայաստանի ֆեոդալական իրավունքը կոդիֆիկացիայի չէր ենթարկվել: Նա դործում և պահպանվում էր սովորութային իրավունքով, ընորհիվ արտադրական յեղանակի պահպանողականության: Հետագայում այդ սովորութային իրավունքի մի շարք նորմերը, վորոշ պրեցեդենտների աղդեցության տակ, հաստատվում են յեկեղեցական ժողովների վորոշումների և ապա դործող որենսդրքերի ու կանոնական կոդեքսների մեջ մի-ջին դարերում: Սակայն այդ սովորութային- իրավական նորմերն, ինչպես յերևում է, միշտ խախտվում կամ զանց էլին առնվում տիրապետող ֆեոդալ դասակարդի առանձին ներկայացուցիչների կամայականությամբ կամ «ուժեղի իրավունքով», մանավանդ ճորտացած ու հպատակ բնակչության չհագործելու բնագավառում: Այդ բացահայտ է մի քանի կանոնական վորոշումներից, վորոնք սահմանվել են այդպիսիկ պրեցեդենտների հետևանքով[68]:

Մյուս կողմից՝ նախարարական սեփականի սովորութային իրավունքի հիմնական սկղբունքները բյուդանդական, արաբական և ապա թյուրք-մոնղոլական տիրապետությունների ժամանակ, նախարարական կառուցքի կազմալուծման հետ միասին,

համապատասխան փոփոխություններ կենթարկվեցին: Հայ ֆեոդալական իրավունքի մեջ ներթափանցեցին ժողովրդական, հասարակա-քաղաքական և ապա շարիաթական իրավունքնե-րի դրույթները:

---

## Գլուխ յերկրորդ

# ԳԵՏԱԿԱՆ ՈՒ ՎԱՐՁԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

### I. ԳԵՐԱԳՈՒՅՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *ՀՈՂԱՅԻՆ ԳԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.*—Վերը քանիցս ակնարկել ենք, վոր հայ իրավունքն իր էությամբ յեղել է ֆեոդալական. նա հանդիսանում էր ֆեոդալական հասարակության իրավական վերնաշենքը: Ֆեոդալական հասարակությունը ներկայացնում է այն սոցիալ-տնտեսական ֆորմացիան, վոր բնորոշվում է արտադրության ֆեոդալական յեղանակով: Այս համեմատաբար (անտագոնիստական) հասարակության մեջ տիրապետող դասակարգը, հանճինս ֆեոդալների, արտադրության հիմնական միջոցի՝ հողի սեփականության իրավունքը դարձրել էր իր մենաշնորհը: Իսկ ներհակ դասակարգը, հանճինս գյուղացիների, վորոնք իսկական արտադրողներ էին, կարող էր ունենալ երբեմն սեփականություն արտադրության ու վերարտադրության բոլոր միջոցները, բացառությամբ միայն հողի: Այս դասակարգը, վոր անձնապես կախված էր ֆեոդալներից ու ամրացված էր հողին արտատնտեսական ճնշման շնորհիվ, շահագործվում էր, զրկվելով իր հավելյալ արդյունքից, վոր կորզում էր նրանից հողատեր ֆեոդալը: Այս պայմաններում արտադրության ֆեոդալական յեղանակը խարսխվում է գյուղատնտեսության սխտեմի վրա, վորտեղ, սակայն, չի բացառվում արհեստաարտադրական աշխատանքը:

Հայաստանը դերազանցորեն գյուղատնտեսական յերկիր էր, վորտեղ ֆեոդալիզմի բազմադարյան զարգացման ընթացքում տիրում էր բացառապես բնատնտեսությունը, յերբ, Կ. Մարքսի խոսքերով ասած, «տնտեսական պայմաններն ամբողջովին կամ ճնշող մասով արտադրվում են հենց տնտեսության մեջ, հա-

տուցվում են և վերարտադրվում անմիջորեն նրա համախառն արտադրանքից»[69]: Բնատնտեսության հիմնական ճյուղերը հայրատնտեսում հողագործությունն ու անասնապահությունն էին, որոնք ֆեոդալական արտադրության հիմքն էին կազմում: Ուստի հողը, իբրև արտադրության հիմնական միջոց, ստանում էր գերակշռող նշանակություն ֆեոդալական հասարակության սոցիալ-տնտեսական սիստեմում: Հողի սեփականության իրավունքը դառնում էր ֆեոդալների դասակարգային տիրապետության նյութական հիմքը: Բռնի յուրացնելով նախկին գյուղական համայնական հողերը, ֆեոդալական դասակարգը հողերի սեփականության իրավունքն իր մենաշնորհն էր դարձնում և համայնական ազատ գյուղացիներին, իսկական արտադրողներին, դնում կախյալ դրության մեջ, ճորտացնելով արտատնտեսական ճնշման նրբո, վերջիններիս նրանց աշխատանքի չհատուցվող յուրացնելու հողային սեփականությունը:

Հին Հայաստանի ֆեոդալիզմը, պահպանելով տվյալ սոցիալ-տնտեսական ֆորմացիայի այդ հիմնական գծերը, միևնույն ժամանակ արտունակում էր նաև այնպիսի առանձնահատուկ հոգմեր, որոնք բնորոշում են նրան որպես ֆեոդալիզմի արևելյան կամ ասիական ձև: Այդ տարբերությունն ամենից առաջ յուրահատուկ է ընկնում հողատիրության սիստեմում, որտեղ և կազապարվում էր պետության գերագույն իշխանության բնույթը:

Թագավորի իշխանությունը հին Հայաստանում, ինչպես և հին Արևելքի մյուս պետություններում, բացարձակ դեսպոտական էր: «Քանզի նախադոյն թագաւորն Հայոց Արշակ ունէր մեծութեան զթագաւորութիւնն ՚ի վերայ ամենայն աշխարհին Հայոց» (ՂՓ, էջ 17): Արևելյան այդ յուրահատուկ դեսպոտիզմը բղխում էր հողի սեփականության իրավունքից, որը պատկանում էր միայն պետությանը՝ հանձին նրան դլխավորող թագավորի: Թագավորը, հենվելով իր դեսպոտական իշխանության վրա և ոտնձգելով իր սուբյեկտների իրավունքից, ճանաչում էր իրեն որպես ամբողջ պետության հողերի կարգադրող և տնօրինող: Հողային սեփականատիրության այդպիսի իրավաբանորեն դարդացել էր ֆեոդալիզմի ծագման ու կազմավորման պրոցեսում՝ գյուղական համայնքի միջոցով: Գյուղական համայնքը, հանդի-

անհատով տոհմային հասարակության քայքայման վերջին հատվածը, շարունակում էր պահպանել հողային սեփականության կոլեկտիվ իրավունքը: Յեթե դյուղական համայնքը մինչև ֆեոդալական հասարակական ձևի կազմավորումը ոժտված էր իր տերիտորիայի սահմաններում ընդարձակ հողային իրավունքով և համայնական հողերի տերն ու տնօրենն էր, ապա ֆեոդալական պայմաններում այդ իրավունքն ըստ համանմանության վերանայվում և պետական իշխանության, և համայնքին վերապահվում է միմիայն հողային տիրության կոլեկտիվ, բայց վոչ թե սեփականատիրական ձևը: Այդ իրավարմբռնումը ձևավորվում է ֆեոդալական պետության կազմավորման պրոցեսում, յերբ առանձին ֆեոդալական իշխանությունները համակերպվում էին և հարում ասիական պետության կենտրոնական դեսպոտական իշխանությանը: Այստեղ դյուղական համայնքները, չնայած իրենց կախյալ դրության, հիմնական նշանակությամբ շարունակում էին մնալ հատուտուն:

Ինչպես վերը նշել ենք, վաղադույն ֆեոդալական Հայաստանը գոնվում էր սկզբում Աքեմենյան, իսկ այնուհետև Սելևկյան թագավորության սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերությունների շրջագծում: Սելևկյան միապետությունն իր հելլենիստական կառուցվածքի մեջ անփոփոխ պահպանել էր Աքեմենյան ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները, մանավանդ հողային իրավունքի վերաբերմամբ: Սելևկյան թագավորները յուրացրել էին Աքեմենյան պետական իշխանության բոլոր հատկությունները: Սելևկյան թագավորներն էլ ամրապնդ ասիական դեսպոտներ էին, վորոնք իրենց իշխանությանը յենթակա պետական տերիտորիան համարում էին իրենց ժառանգական սեփականություն, անձնական կալվածք, վոր տնօրինում էին իրենց կամքով և յուրացրած հողային իրավունքով:

Պետական հողային իրավունքի նույնանման իմաստավորում նկատում ենք նաև բյուզանդական կայսրության մեջ: Վերջինը ներծծել էր իր սոցիալական ու քաղաքական կառուցքի մեջ ասիական դեսպոտական պետականության բոլոր բնորոշ տարրերը նախկին՝ հելլենիստական թագավորություններից, վորոնց մեծ մասը մտել էր նրա կազմի մեջ, նաև սահմանակից Սասանյան

Պարսկաստանից, որի հետ նա թե՛ խաղաղ և թե՛ ռազմական բնույթի մշտական հարաբերություններ ուներ: Բյուզանդիայի հողային իրավունքի հարաբերություններում մինչև VII դ. սկիզբները պահպանվել էին դարձնականության γῆ βασιλική և γῆ οὐσιακή անուններով հողային տեսակները: Այդ տերմինները հայտնի էին հին հելլենիստական պետություններում, մանավանդ Պտղոմեյան Եգիպտոսում, ուր γῆ βασιλική էին կոչվում արքունի հողերը՝ պետական առումով, իսկ γῆ οὐσιακή թագավորական հողերը՝ անձնական առումով:

Ահա հողային իրավունքի այդ ըմբռնումն, որով ամբողջ պետության հողային սեփականությունը ճանաչվում էր թագավորի անձնավորության մեջ, դառնում ենք նաև հին Հայաստանում, որը սերտորեն կապված է եղել մի կողմից՝ Իրանյան աշխարհի հետ Աքեմենյանների, Պարթևների և ապա Սասանյանների տիրապետության դարերում, իսկ մյուս կողմից՝ հելլենիստական աշխարհի հետ Սելևկյանների որով: Թեև մեզ չեն հասել այդ հարցի աղերսով վորոշ տվյալներ Հայաստանի պատմության Աքեմենյան ու Սելևկյան ժամանակաշրջաններից, այնուամենայնիվ Հայաստանի քաղաքական վերականգնման ամբողջ պատկերը Սելևկյաններից անկումից հետո, այն է՝ Արտաշիսյանների և մանավանդ Տիգրան Մեծի թագավորության շրջանում, հնարավորություն է տալիս, ջնայած սուղ տեղեկություններին, մեր այդ կարծիքը վորոշ չափով հաստատելու:

Ֆեոդալական հայ իշխանությունների կոնստիտուցիան Արտաշեսի թագավորության (189—161 թ. թ. մեր տարեթվից առաջ), ինչպես և Տիգրան Մեծի թագավորության որով (95—55 թ. թ. մեր տարեթվից առաջ), նմանապես այդ թագավորների նվաճողական եռքսպանսիան կարող էին տեղի ունենալ միայն թագավորի դեսպոտական իշխանության պայմաններում: Թագավորի անձնավորության մեջ քաղաքական տերապետության ու իշխանության կենտրոնացում էին ամբողջ պետական տերիտորիայի վրա տարածվող նրա հողային սեփականատիրության իրավունքի հետ: Հին պատմագրի Պլուտարքոսի ասելով՝ թագավորներ» և իշխաններ ծառայում էին Տիգրան թագավորին, որ նրանց բաշխում էր նվաճած հողերը և նրանց ստիպում էր քնա-

կությունն հաստատել այդ նոր մարզերում, իսկ այդ մարզերից նա սովորաբար տեղական բնակչությունը տեղափոխում էր կամ բռնի ուժով, կամ էլրև դերիներ՝ բուն Հայաստանի ներքին գավառները, տեղավորելով քաղաքներում և դյուղերում[10]:

Հողային դերպետուն իրավունքի մարմնացումը պետության պարագլխի անձնավորությամբ՝ կարմիր թելի նման անցնում է հին Հայաստանի բովանդակ պատմության միջով: Այդ իրավարմբռնումը տիրապետում էր Հայաստանի վաղ-ֆեոդալական շրջանում, երբ ֆեոդալիզմը տակավին իր կազմավորման փուլն էր ապրում, երբ դյուղական համայնքի հողային սեփականատիրության վերապրուկային մնացուկները տակավին վերջնականորեն չէյին մարել. այդ նաև տիրապետում էր հաջորդ նախարարական ֆեոդալիզմի շրջանում, երբ ֆեոդալական հասարակությունն արդեն ձևավորվել էր: Այդ իրավարմբռնումը ցայտուն կերպով էրևան է դալիս մանավանդ Արշակունյաց թագավորության շրջանում, երբ նախարարությունների կենտրոնախույս ուժերն ամենամեծ լարման էյին հասել, երբ թագավորական իշխանության ու ֆեոդալական իշխանների իրավունքի միջև հակասությունները սրվել էյին մեծ չափերով, հակասություններ, որոնք ըղխում էյին հենց այդ հողային սեփականության իրավունքի շուրջը բաղխվող շահերից:

Բիչ թե շատ տեղեկություններ պետական հողային սեփականության և թագավորի դերպետուն իշխանության նույնության մասին մեզ հասել են դլխավորապես Արշակունյաց թագավորության շրջանից: Այդ վկաները միաժամանակ հնարավորություն են տալիս հետագրծ հայացքով, վորոշ չափով պարզել նախընթաց, այն է՝ վաղ-ֆեոդալական շրջանի խավար պատկերը: Տարակույս չկա, վոր Արշակունյաց Հայաստանի հողային դերպետուն իրավունքի իմաստավորումը վաղ- ֆեոդալական հասարակության իրավարմբռնման հետագա զարդացման աստիճանն է:

Վերևում բերված ընդհանուր ակնարկները մանրամասն հաստատվում են Կ. Մարքսի պատմահայեցողական կոնցեպցիայով, վորի համաձայն, Ասիայում, կամ Արևելքում պետությունը

հանդիսանում է հողի միակ դերադուն սեփականատերը: «Պետությունն այստեղ (Ասիայում) հողի դերադուն սեփականատեր է: Սուվերենությունն այստեղ—հողային սեփականություն է, որը կենտրոնացել է պետական մասշտաբով: Սակայն այս դեպքում դոյություն չունի ոչ մի մասնավոր հողային սեփականություն, թեև դոյություն ունի հողի թե՛ մասնավոր և թե՛ համայնական տիրություն և ոգտագործություն»[71]:

Նախարարական կառուցքը, որին հին Հայաստանի ձևավորված ֆեոդալական պետությունը, սովորաբար կապում են Արշակունի տոհմի թագավորելու հետ: Հայ Արշակունիներն իրենց թագավորական, այն է՝ քաղաքական դերադուն իշխանությունը հետևցնում էին ամբողջ Հայաստանի տերիտորիայի վրա իրենց վերապահված իշխանությունից: Նրանք իրենց համարում էին բոլոր հողերի դերադուն սեփականատեր, ճիշտ այնպես, ինչպես այդ պարթևների ներկրումն էր, որտեղից նրանք ներմուծ էլեն, և ինչպես այդ տեղ ուներ Առաջավոր Ասիայի բոլոր պետություններում: Թագավորական իշխանության այդ իրավաբանությունն արտացոլել է այն բնորոշ տիտղոսի մեջ, որին հանդիպում ենք հայ պատմագրների, մանավանդ Փավստոս Բուզանդացու մոտ: Նախարարական չրջանի թագավորը համարվում էր «բնակ տէր երկրին», կամ «բնատէր երկրին հայոց»[72]: Թովմա Արծրունին հայ թագավորին անվանում էր «բնատուր տիրող հայոց» (ԹԱ., էջ 468): Այս տիտղոսներում արտահայտվում էր վոչ այնքան թագավորական իշխանության վերացական իմաստավորումը, որքան նրա կոնկրետ էությունը, իբրև պետական ամբողջ հողի դերադուն սեփականատեր: Ամբողջ Հայաստանի տերիտորիան համարվում էր թագավորական, արքունի հող, որպիսի իրավահայեցողությունը մինդամայն համանիշ է γῆ βασιλική-ին: Թագավորը նայում էր իր դիմավորած պետության վրա սեփական հողային իրավունքի տեսանկյունով, որտեղ ամբողջ պետական տերիտորիան նույնացվում էր թագավորական մի ընդհանուր միասնական կալվածքի հետ: Այդ են վկայում մեր պատմագրության մեջ հիշատակված զանազան թագավորների հրամայականները, որտեղ Հայաստանի ամբողջ տերիտորիան անվանվում է փեոդալների կալվածական տնտեսությունների այն

պէսք տերմիններով, ինչպես են՝ «ձեռասունկ», «ձեռասուն», «ձեռակերտ», «դաստակերտ»: Առաջ բերենք մի քանի օրինակներ:

«Ամենայն նախարարք մեծամեծք և ազատք և զօրքակալք և սիրելիք մեր թագաւորաց և չինականք, բնաւ ձեռասունկ և ձեռասունք մեր Արշակունեաց» (Ագ., ԺԲ, 75): Այստեղ ամբողջ տրկլերը Տրդատ թագավորի հրովարտակով անվանվում է «ձեռասունկ» և «ձեռասունք»:

«Ունիմք զանուս յիշատակարանն զառաքինի նախնեացն ձերոց, [որք] ունելով զներսոպէ՝ անցին և սիրեցին և Աստուծոյ կոմանցն... և յայնչափ մեծ իշխանութեան՝ դաստակերտ մեծ և սիրելի զհայոց աշխարհս անուանէին»: Թեոդոս կայսրին ուղղված այդ նամակում Հայաստանը կոչվում է հռոմայեցոց «դաստակերտ» (ԵՂ, էջ 91—92):

«Բնակ տէր երկրի» սխողոսի իրական նշանակությունը, վրով մեծարվում էին Արշակունի թագավորներն իրև հողային վերադուն սեփականատերեր, յերևում է Հայաստանի հին պատմությունից: Արշակունյաց թագավորության անկումից հետո, յերբ Հայաստանը բաժանված եր Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև և նախարարական իշխանություններն յենթակա էին նոր սյուզերեններին՝ Սասանյան թագավորներին ու բյուզանդական կայսրներին, «բնակ տէր երկրի» սխողոսը մեր պատմության մեջ կիրառվում եր մի քանի խոշոր ու նշանավոր նախարարությունների նկատմամբ: Իսկ արաբական տիրապետության շրջանում, յերբ զոյացան նախ՝ Բաղրատունյաց թագավորությունն և ապա Արծրունյաց և Սյունյաց թագավորությունները, այդ տերմինն սկսեցին գործադրել վերոհիշյալ նոր թագավորների տուվերն իշխանությունը վորոշելու համար[78]: Այդ տիտղոսային տերմինը մենք գտնում ենք նաև միջին դարերում, ինչպես այդ բացահայտ և XIII դ. վիմագիր հուշարձանից:

«Ես... Զաքարէ Դաւլա Հասան, որդի Վախտանգայ, թոռն մեծին Հասանայ, բնակատր ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհի, թագաւոր...» (Վ.Տ, էջ 81· Գանձասարի արձանագրություն):

Սակայն Արշակունիները, հանդիսանալով ֆեոդալական Հայաստանի թագավոր, նախարարական կալվածներից բաղկացած

պետության սյուզերեն իշխան, որի ձեռքում եր «տէրութիւն թագաւորութեանն Հայաստան երկրին» (ՓԲ, IV, Գլ. Բ, եջ 62), միաժամանակ ունեցին իրենց սեփական սենեկոչական կալվածքը, համարվում էին Ֆեոդալական իշխան, նախարար իրենց սեփական, անձնական պետավարությամբ ու տնտեսությամբ տարվող հողերի, որը կոչվում եր «ոստան արքունի»: Այդ «ոստան արքունի»-ն եր «բնիկ սեփական» Այրարատյան տերիերը, որը թագավորի անձնական սեփականությունն եր համարվում և պատկում եր նրա անմիջական իշխանության ու տնօրինության տակ: «Ոստան արքունի»-ն, ինչպես տեսնում ենք, համանիշ եղի օնտաքի-ին. Ինչպես որ թագավորը համարվում եր գերագույն սենիոր, կամ դլուխ, այնպես էլ Այրարատյան տերիերը՝ «Ոստան արքունի»-ն, ըստ Ղազար Փարպեցու՝ հանդիսանում եր «գլուխ երկրին Հայոց»:

Յեթե Հայաստանի ամբողջ հողը պետական սեփականություն եր հանձին թագավորի, ապա առանձին նախարարներն իրենց Ֆեոդալական հողերի վրա նստած էին և տնօրինում էին վո՛չ թե սեփականության, այլ ասկ սիրության իրավունքով: Հին հայ մատենագրական աղբյուրներում չենք գտնի հողային իրավունքի տեսականորեն ձևակերպված, գրավոր որևէքներով վավերացված նորմեր: Պետության հողային իրավունքի բնագավառում բոլոր հողային հարաբերությունները պահպանվում և կարգավորվում էին սովորութային իրավունքի նորմերով: Հողային սովորութային իրավունքը գոյություն եր ունեցել դարերի ընթացքում Արևելքի այն հնավանդ ըմբռնումներից հողային սեփականության մասին, որոնք, ծագելով արխայիկ Ֆորմացիայի առաջադեմ համայնական հասարակարգերում, ձևավորվելին դյուղական համայնքների սոցիալ-տնտեսական մթնոլորտում և ապա կերպարանափոխվելին ասիական Ֆեոդալական պետության իմաստավորումով:

2. ՀՈՂԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ.—Դարավոր սովորութային իրավունքի նորմերով սրբագործված գերագույն հողային սեփականության իրավունքն և նախարարների հողային սիրության իրավունքը համեմատաբար ավելի վորոշ գծերով յերևան է գալիս Հայաս-

տանի Արշակունյաց թագավորության չրջանի պատմության մեջ: Հողային իրավունքի այդ ըմբռնումն արտացոլել է նաև հայ մատենագրության էջերում: Նույնիսկ փավստոս Բուզանդացին, որ աչքի չի ընկնում իր հակաարշակունի մտայնությամբ, բնորոշ կերպով և արճանագրում թագավորին և նախարարներին վերաբերյալ հողային հարաբերությունը: Ներսես Կաթողիկոսին վերագրված խոսքերում, ուղղած հայ նախարարներին, ասված է հետևյալը. «Զի ամենեքեան դուք աւադիկ կայք և վկայէք, մանաւանդ դի ամենեքեան դուք կեցեալ էք յաղէտ Արշակունւոյ. ոմանք ի ձէնջ դաւաւտաեարք յեալք 'ի նոցանէն, և ոմանք մեծամեծք աչխարհաց, ոմանք աւագ աւագ աւանաց գեղից և գանձուց տեարք լեալ էք, և պէսպէս դաստակերտացն» (ՓԲ, IV, ԾՍ., եջ 166):

Մեր կարծիքն ավելի ևս հաստատելու համար տարև առաջ ենք բերում մի քանի որինակելի վայրեր հայ մատենագրությունից:

Արշակունի թագավորները սովորություն ունեյին նվիրելու նախարարներին հողեր առանձին ծառայություններիւ ու ռազմական քաջագործություններին համար, կամ, որամադրելով հողային տերիտորիաներ, հիմնել նոր նախարարություններ: Այս դեպքում հողերը բաշխվում եյին վո'չ թե թագավորի անձնական համարվող հողերից՝ «արքունի ոստանից», այլ սովորաբար պետական հողային տերիտորիայից, թեև, պետք է ասած, վոր կարող եյին նաև բաշխումներ տեղի ունենալ «վոստանիկ» հողերից, յերբ նախարարները Այրարատյան տենիտորիան եյին պատկանում և թագավորի պալատական վայրայներն եյին:

Մովսես Խորենացու տեղով՝ Վաղարշակ թագավորը տալիս է Շարայի զավակներից սերված Գուշարին ժառանգություն Զավախքի կես մասը, Կողբը, Ծորը, Զորը մինչև Հնարակերտ բերդը (II, գլ. Ը, եջ 106). նմանապես Սանասարի տոհմից Շարաշանին պարգևում է Արճն գավառը չրջակա հողերով, Տավրոս լեռն, ուր գտնվում է Սիմը և ամբողջ Կղեսուրն (Անդ, եջ 109):

Նույն Վաղարշակը, քաղաքական նկատառումներով, թողել էր արքունիքում, իր մոտ՝ միայն ավագ որդուն, վորպես թագաժառանգ, իսկ մնացած որդիներին հեռացրել էր, որամադրելով

նրանց «Հաշտեցնից գավառը» (Անդ, եջ 111)։ Յերբ հետագայում Հաշտենից գավառի այդ Արշակունիների սերունդն այնքան էր բազմացել, որ այլևս հողերը չէին բավարարում նրանց կարիքներին, Տիրան Թագավորը տալիս է նրանցից մի քանիներին նոր կալվածներ Աղիովիտ և Արբերանի գավառներում (Մխ, II, գլ· ԿԲ, 191)։

Նույն Տիրանն իր անդամակ յեղբոր, Արտավազդի, մահվանից հետո նրա ամբողջ կալվածական հողը տվեց Անձևացի նախարարական տոհմի պատանի Յերախնավին և կարգեց նրա մոտ իր մանրիմ պարսիկ Դրուատպին, որին էլ արամադրեց Տաոնոն ավանը (այժմյան Դիադին) չրջակա աղարտներով և ամրոցներով (Անդ, 192)։

Արտաշես Թագավորը պարգևում է Հայաստան պաղթած Սմատունի անվան տոհմին գյուղեր ու դաստակերտներ, և այդպիսով հիմնադրվում է Սմատունի նախարարությունը (Մխ, II, գլ· ԾԼ, 185)։

Խոսրով Թագավորը հաղթական պատերազմից հետո նվիրում և վաչե սպարապետին «զհանս Ջանջանակին և զԶրարաչախս և զՅլու գլուխ, ամենայն գաւառակօքն հանդերձ» (ՓԲ, III, Ը, 18)։

Պապ Թագավորը պարգևում է սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին պարսիկների դեմ հաղթական պատերազմներ վարելու համար բազմաթիվ գյուղեր (ՓԲ, V, Դ, 204)։ Նույն Պապը վերադարձնում է իր հոր ժամանակ վոչնչացրած Կամսարական տոհմից դեպվածով կենդանի մնացած ժառանգներին իրենց նախկին կալվածքները՝ Շիրակն ու Արշարունիքը (ՓԲ, IV, ԺԹ, 133)։

Մովսես Խորենացին պատմում է, թե ինչպես Տրդատ Թագավորը կամսար Լխանին, յերբ սա քրիստոնեություն է ընդունում և մկրտվում, պարգևում է «զմեծ դաստակերտն Արտաշիսի, որ այժմ ասի Դրասխանակերտ և զդաստան Շիրակ», իսկ յոթն որից հետո, յերբ Կամսարը վախճանվում է և սրա վորդի Արշավիրը մեծ սգի մեջ եր, Թագավորը նրան մխիթարելու նպատակով տալիս է նաև «զքաղաքն Երուանդայ և զնորին գաւառն մինչև գկատար ձորոյն մեծի» (II, Ղ, 242—243)։

Ի վերջո նշենք ավելի հետաքրքիր փաստ։ Տրդատ Թագավորը Հայաստանում քրիստոնեության հաստատելիս՝ բոլոր հե-

Թանոսական տաճարական կալվածքներն ու հողերը հանձնում է Գրիգոր Լուսավորչի տոհմին, և, այսպիսով, հիմնվում է կաթողիկոսական խոշոր կալվածատիրություն: Բացի այդ՝ նա ամբողջ Հայաստանում հոգևորականությանն ու եկեղեցիներին տրամադրում է հողեր՝ «չորս չորս հողս երդոյ յամենայն ագարակ տեղիս, իսկ յաւանան յօթին յօթին հողս երդոյ» (ԱԳ, գլ. ճԺԹ, 423, ՓԲ, Ե, ԼԱ, 237):

Յեթե Արշակունի թագավորներն իրենց վերապահում էին իրավունք հողեր ու կալվածքներ բաշխել պետական տերիտորիայից նախարարներին, ապա և տրամաբանորեն կարող էին իրավունք ունենալ նույն նախարարներին զրկելու այդ հողերից ու կալվածքներից: Այդ տեսակ դրկումները տեղի էին ունենում երբեմն պատիժ՝ նախարարների ըմբոստության կամ դավաճանության դեպքերում, ինչպես վկայում են մատենագրական տվյալները:

Խոսրով Թագավորը հանձնեց ապստամբված բզնեչի Բակուրի կալվածքները Վաղինակ Սյունի նախարարին (ՓԲ, ԻԻԻ, Թ, 21): Նույն Խոսրովը Դատարան Բզնունյաց էշխանի դավաճանության ու ապստամբության պատճառով վոչնչացնում է նրա ամբողջ տոհմը և, բռնագրավելով նրա հողերը, միացնում է «արքունի ոստանին» (ՓԲ, ԻԻԻ, Ը, 20): Դարձյալ այդ Խոսրովը վոչնչացնում է Մանավազյան և Որդունի նախարարական տոհմերը, վորոնք իրենց դժտություններով ու ըմբոստություններով խանգարում էին յերկրի անդորրությունը և չէին խաղաղվում, չնայած Թագավորի կողմից արված զգուշացումներին: Նրանց հողերը Թագավորը զրավում է և տալիս կաթողիկոսական տանը (ՓԲ, ԻԻԻ, Դ, 9):

Տրդատ Թագավորը, կամենալով վոչնչացնել Սլկունի նախարարին, վորը, անցնելով պարսից Թագավորի կողմը, դավեր էր լարում իրեն դեմ, հայտարարում է բոլոր նախարարներին. «Որ ոք ածէ առ իս զնահապետն Սլկունեաց, տաց նմա յաւիտենական իշխանութիւնամբ զդէս դա և զդաստակերտս» (ՄԽ, ԻԻ, ՁԴ, 228):

Այդ տեսակետից աչքի չի ընկնում մանավանդ Արշակ ԻԻ-ը, վորի Թագավորությունը միշտ ալեկոծվում էր սուր պայքարով

կենտրոնախույս նախարարական տոհմերի ու թագավորական կենտրոնաձիգ իշխանության միջև: Այդ նախարարների դեմ Աբշակը ձեռք էր առնում դաժան միջոցներ, վոչնչացնելով ամբողջ նախարարական տոհմեր և բռնագրավելով նրանց հողերն ու կալվածները. որինակ՝ նա վոչնչացրեց հայոնի կամսարական տոհմը և նրա Շիրակ ու Աբշարունիք գավառները միացրեց արքունի կալվածներին (ՓԲ, IV, ԺԹ, 133):

Վերջապես, Աբշակ II–ի վորդի Պապը, յեկեղեցական ֆեոդալականության դեմ մղած պայքարի հետևանքով, հրաման եր արձակել գրավելու յեկեղեցական հողերի մեծ մասը. «Զի յեբէն հողոյն գհինգն հատանէր յարքունեաս և զերկուսն միայն թողոյր երկուս հողս: Եւ ըստ հողոյն թողուր երկուս–երկուս առ դէզ...» (ՓԲ, V, ԼԱ, 237):

Թագավորների հողային դերագույն իրավունքը բնորոշող հետաքրքիր մի այլ դիծ ենք գտնում հին հայ մատենագիրների հաղորդումների մեջ: Աբշակունի թագավորներն իրավունք էին վերապահել իրենց տնօրինելու և կառավարելու բոլոր ամրոցքերդերը, վորոնք գտնվում էին նախարարների ավատական կալվածներում: Պայազորների նյութական կարիքները բավարարելու համար այդ ամրոցներին ու բերդերին, վորոնք թագավորի իրավասության տակ էին գտնվում, կցվում էին շրջակա գյուղերն ու ագարակները: Աբշակունիների անկումից և Հայաստանի բաժանումից հետո պարսիկներն այդ բերդերը բնակեցրել էին իրենց կայազորներով: Տարակույս չկա, վոր այդ ամրություններն անցել էին պարսիկների ձեռքը վո՛չ թե նվաճման կարգով, այլ վորպես ժառանգություն Աբշակունիներից: Բացի դրանից, Աբշակունիները ունեին իրենց տրամադրության ներքո սեփական վոտոտաններ—պալատ ամրոցներ նախարարներին պատկանող տերիտորիաներում (ՓԲ., IV, Ծ, 164, Ը, 213):

Թե վորքան խորն արմատներ ուներ հասարակական իրավմբըռնման մեջ հողային դերագույն իրավունքը, այդ բացահայտ և հետագա պատմություններից, յերբ Աբշակունիների անկումից և Հայաստանը Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև բաժանվելուց հետո՝ նախարարները դժվարին կացության մեջ ըն-

կան իրենց կալվածների պահպանության, որոնք գտնվում էին այս կամ այն մասում: Պարսկական Հայաստանում Սասանյան Շապուհը թագավոր էր նշանակել Խոսրովին, իսկ Բյուզանդական Հայաստանում կայսրը թագավոր էր նշանակել Արշակ III–ին: Այդ երկուսն էլ Արշակունյաց դինաստիայից էին և վասալներն էին Պարսկաստանի և Բյուզանդիայի տակ վասալներ: Ահա այդ բաժանումով Պարսկական Հայաստանի շատ նախարարներ տեղափոխվեցին Բյուզանդական մասը, որովհետև նրանց կալվածների մեծ մասը գտնվում էր այնտեղ: Պարսկական մասի նրանց կալվածները բռնագրավեց Խոսրով թագավորը: Այդ նախարարներից մեկը, ասպետ Սահակը, հետագայում նորից վերադարձավ Պարսկական Հայաստան: Խոսրովը նրան նշանակեց հայ զորքերի սպարապետ, վերադարձնելով նրանից խլված կալվածները և, բացի այդ, նվիրելով նոր կալվածներ, որոնք պատկանում էին Բյուզանդական մասում Արշակ III–ի մոտ գտնվող նախարարներին (ՄԽ, III, գլ. ԽԴ, 317—318): Սակայն Բյուզանդական մասի նախարարները չհամակվեցին և չափազանց դժգոհ էին Բյուզանդական քաղաքականությունից: Նրանք վերադարձան Պարսկական Հայաստան, երբ Խոսրով թագավորից գրավոր երաշխիք առացան, որ իրենց կվերադարձվեն խլված կալվածները, բացառությամբ այն հողերի, որոնք, ինչպես գրում է Խոսրովը. «ամենք ամենք պարգևեցաք, և ոչ չրջին պարգևի թագաւորաց առանց վնասու. մանաւանդ դի ՚ի դիւան հօրն մերոյ տեառն Շապհոյ արքայից արքայի եմուտ, այլ փոխանակ ընդ այնը և յաբխուն լինուստ լինումի և զգերդյն պակասութիւնն» (ՄԽ, III, գլ. ԽԸ, 325):

Պարսկական Հայաստանում Սասանյան թագավորներն իրենց կենթակա հայ նախարարների նկատմամբ վարվում էին տեղական հողային իրավունքի համաձայն: Պարսկական Արտաշես թագավորը վճռեց վճռամշակուհ հայ թագավորին ուղղած նամակում, երբ վերջինս միջնորդել էր վտարանդի ու փախստական նախարարների վերադարձման ու իրավունքների վերականգնման մասին, գրում է ի միջի այլոց հետևյալը. «Վասն որոյ զորդիացեալդ դորա զՀամազասպ կացուսցես ՚ի վերայ զօրացդ սպարապետ՝ մեր հրամանաւ, և ազգի դորա տացես զգահ հինգերորդ՝ պա-

*աուոյ նախարարացդ և զգեղս և զդաստակերտս, զոր կուեալ է նախնեացն ձոց հարց դորա, կալցեն դոքա: Սահէս և զաուն վճռաակարաց ազդացդ, զոր կալաք յարքունիս, թողցես ի քաց՝ աւերկիւղաբար ժառանգել նոցին մնացորդաց» (Մխ, III, գլ. ԾԱ, 332):*

3· *Ռեգալիաներ.*—Հոզային գերագույն իրավունքը բնորոշող մի այլ յերևույթն եր այսպես կոչված արքունի ռեգալիան (Regalia): *Ռեգալիան, իբրև արքունի վոստանից դուրս գանված յեկամտային վորոշ աղբյուրների մենաշնորհ իրավունք, բխում եր վոչ թե թագավորական իշխանության սուվերենիտետի վերացական իմաստավորումից, այլ այն ռեալ ըմբռնումից, վոր թագավորի հոգային սեփականության իրավունքը տարածվում եր, բացի հողային մակերեսից, նաև նրա ընդերքում պարունակված հանքերի, ինչպես և ջրային ռեսուրսների վրա:* Փաստորեն վկայության՝ Առեսա ավանի գետակի մոտ, վոր թափվում է Վանա ծովը, գանվում եր արքունի ձկնորսարան (III, Ը, 19): Ամենայն հավանականությամբ, ամբողջ Վանա ծովեղրի ձկնորսարանները պատկանում էին Արշակունյաց թագավորներին, չնայած վոր այդ լիճը գանվում եր Այրարատյան դավառից, Արշակունիների արքունի վոստանից հեռու և կազմում եր Վասպուրականի տերիտորիալ մասը, իսկ սա համարվում եր Աբծրունիների, Ռշտունիների և Բզնունիների նախարարական կալվածք: Մեր այդ յենթադրությունն ավելի ևս հաստատվում է արաբական պատմագիր Բալաձուրիի խոսքերով: Սա պատմում է եմեր Հաբիբի մասին, վոր, արշավելով Հայաստան, նվաճում է Վասպուրականը Վանա լճի հետ միասին և պրծում է բոլոր տեղական նախարարական կալվածները: Ներանից հետո Վանա լիճն իր ձկնորսարաններով դարձավ Հայաստանի արաբ վոխարքաների սեփականությունը— սկզբում Մահմետ—իբն Մերվան—իբն Հակամի և ապա Մերվան իբն—Մահմետի (յերևի առաջինի վորդին)[74]: Անշուշտ, Վանա լիճը ձկնորսարաններով հանդերձ դառնում եր արաբական վոխարքաների մենաշնորհ պատկանելիք վո՛չ թե նվաճման իրավունքով, այլ վորպես պետական ժառանգություն նախկին Արշակունիների, իսկ հետո Սասանյանների:*

Արքունի ռեզալիա էին համարվում վոսկու և արծաթի հանքերը: Բյուզանդական պատմագիր Պրոկոպիոսի տեղով՝ (Bell. Pers. I, 15) մարզպաններին ժամանակ Ֆարանգիատում[75] հանված ամբողջ վոսկին դառնում էր սեփականություն Սասանյան թագավորների[76]: Պետք է կռահել, որ այդ մենաշնորհ իրավունքն առաջներում պատկանում էր Արշակունի թագավորներին, և Արշակունյաց անկումից հետո ինքնաբերաբար անցել էր Սասանյան թագավորներին:

Թագավորների մենաշնորհ իրավունքը վոսկու և արծաթի հանույթների վերաբերմամբ արձանագրել է նաև Մխիթար Գոշն իր Դատաստանագրքում: Այստեղ նա այնքան հետու չի գնում, որ նույնիսկ այդ արքունի իրավունքը տարածում է պղնձի ու երկաթի հանքերի վրա. «Ի դառառս ոսկեհանս զտեալ յամենայն սահմանաց իշխանաց՝ արքայից լիցի, իսկ արծաթ՝ թագուհեաց. և ի կամս նոցա է մասնաւորել նոցա կամ ոչ: Այլ պղինձ և երկաթ և այլք 'ի նմանեսց նոցին—իշխանաց իցէ մեծամեծաց պարգեւօք թագաւորաց. նմանապես և աղ և բորակ, նաւթ և կուպր, ապակի և այլ ինչ այսպիսի: Իսկ ակն և մարգարիտ արքունի լիցի» (II, ժ, 325—326):

Հայկական մատենագրական աղբյուրներից կարելի չէ ցրտրտակացնել, որ աղահանքերը համարվում էին թագավորի մենաշնորհ սեփականություն: Այդ ակներև ենռանց, որ կողբի և այլ աղահանքերը բյուզանդական թագավորների ձեռքումն էին, երբ Հայաստանը նվաճվել էր նրանց կողմից: Բյուզանդական կայսր Հերակլը Հայաստանի բոլոր աղահանքերն և կողբի աղահանքերի երբորդ մասը արամադրել էր Ցեղր կաթողիկոսին (Սեբեոս, XXIX, էջ 112), որն այդտեղի չահագործումից տարեկան առնում էր 12·000 դահեկան չեկամուտ[77]: XIII դարում մոնղոլները, նվաճելով Հայաստանը, իրենց ձեռքը վերցրին աղահանքերը (կԳ, էջ 349): Վերջապես, Մխիթար Գոշի Դատաստանագրքի համաձայն, ինչպես բացահայտ և վերևում բերված հոդվածից, աղահանքերը համարվում էին, ըստ որեևքի, արքունի սեփականություն, թեև կարող էին տրամադրվել նաև իշխաններին վորպես պարգև թագավորի կողմից: Մխիթար Գոշի Դատաստանագրքի մեջ ներկա դեպքում անդրադարձել է

հնավանդ իրավարմբռնումը հողի պետական սեփականության մասին՝ հանձին Թագավորի: Հիրավի, Բագրատունյաց Թագավորության շրջանում աղահանքերը, մասնավորապես Կողբինը, պատկանում էին Թագավորներին: Այդ ակներև է 1038 թ. վիմական մի արձանագրությունից, ուր հիշված է, որ Բագրատունի Հովհաննես—Սմբատ Թագավորը, Դավիթ Թագավորի որդին, ավել է Հռոմոսի վանքին իրավունք՝ ձրի սառնալու Կողբի աղահանքերից տարեկան 100 բեռ աղ (ՎՏ, 21):

Վերոհիշյալ մատենագրական և այլ տեղեկությունները պարզորոշ ցույց են տալիս Արշակունի Թագավորների դերագույն հողային իրավունքը: Այդ հողային իրավունքը համանիշ է Արևմտյան Եվրոպայի միջնադարյան ֆեոդալական հասարակության մեջ՝ dominium directum կոչված դերագույն սեփականության իրավունքին: Սակայն հին Հայաստանի այդ dominium directum-ը համակված էր արևելյան դեսպոտիզմի բնորոշ դծերով, և նախարարական հողերը համարվում էին պետական հողային սեփականության բաղկացուցիչ մաս՝ հանձին Թագավորի: Ահա այս դիծը հանդիսանում է հիմնական հատկանիշներից մեկը, որով բնորոշվում է ֆեոդալիզմի ասիական ձևը:

Մեր պատմագիտական գրականությունն անհրաժեշտ ուշադրություն չի դարձրել հին Հայաստանի հողային սեփականության իրավունքի հարցի վրա, որ մեծ նշանակություն ունի հայկական ֆեոդալիզմի բնույթը պարզաբանելու համար: Այդ հարցին առաջին լրջորեն մոտեցողը Ն. Ադոնցն եր, որն իր «Армения в эпоху Юстиниана» աշխատության մեջ փորձում է լուսաբանել այդ պրոբլեմը, հիմնվելով սոսկ արևմտյան յեվրոպական ֆեոդալական իրավունքի անալոգիայի վրա, և, իհարկե, բացասական կարծիք և հայտնում Արշակունիների դերագույն հողային սեփականության իրավունքի նկատմամբ: Տվյալ հարցում Ն. Ադոնցի կոնցեպցիային և հետևել ընդհանուր առմամբ նաև Հ. Մանանդյանն իր «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» աշխատության մեջ: Կան նաև մի քանի հայագիտական ուսումնասիրություններ արևմտյան – յեվրոպական պրոֆեսորների, ինչպես օրինակ՝ Tournebiz, Fr.— Histoire politique et religieuse de l' Armenie (Paris, 1900) և Laurent, I.— L,Armenie entre

Byzance et l'islam (Paris, 1919), որոնք նույնպես չոչափում են հին Հայաստանի հողային իրավունքի պրոբլեմը: Այս վերջիններիս կարծիքով, հայ նախարարները լիակատար սեփականատեր էին իրենց ֆեոդալական կալվածքների, և նրանց հողային իրավունքը միանգամայն անկախ էր պետական սուվերեն իշխանությունից: Դժբախտաբար ներկա աշխատության շրջանակները թույլ չեն տալիս քննական տեսության առնել վերոհիշյալ հեղինակների կարծիքները, մանավանդ, որ Ն. Ադոնցի և Հ. Մանդյանի անընդունելի տեսակետները մենք քննության ենք ենթարկել մեր արդեն տպագրության համար պատրաստ ուսերեն «Феодализм в древней и средневековой Армении» աշխատության մեջ:

4. ՀՈՂԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ.— Հայաստանի պատմության հաջորդ շրջանում, արաբական տիրապետության դարերում, մանավանդ Բագրատունյաց թագավորության որով, գերագույն հողային իրավունքը դեռ վանդուն էր հասարակական իրավահայեցողության մեջ: Բագրատունյաց Հայաստանում գերագույն հողային իրավունքի սկզբունքը հայ թագավորների կողմից անխախտ էր պահպանվում: Ամբողջ հողային տերիտորիան համարվում էր պետական սեփականություն՝ հանձին սուվերեն թագավորի, որ հենվում էր իր դեսպոտական իշխանության վրա: Թագավորն էր սովորաբար բաշխում հողերը և վարչացնում իրեն ենթակա ֆեոդալ իշխանների հողատիրության իրավունքը:

Սմբատ Բագրատունի թագավորը Նախիջևան քաղաքը տրության իրավունքով հանձնել էր իր վասալ Սիսական իշխան Սմբատին (Ց. Դ., 209): Նույն թագավորը խոստացել էր իր վասալ՝ վասպուրականի իշխան Աշոտին ռադմական ողնության համար «տալ նմա քաղաքս, գաւառս, գեօղս և ագարակս» (ԹՍ., ԻՂ., 397): Համաձայն 1013 թ. վիմական արձանագրության՝ իշխան Գրիգոր Մագիստրոսը Գագիկ Բագրատունու որով նվիրաբերել իր կառուցած Հաւուց թառոց վանքին կալվածքները, և այդ նվերը վավերացվել էր «անջնջելի արձանագրով և աչխարհակալ թագաւորի թղթովն և կայսերական կնքովն» (ՎՏ, 14):

Սմբատ Բագրատունու թագավորության ժամանակ նրա վաս-

նալ Սյունիքի իշխան Աչոան իր վորդիների և յեղբայրների հետ միասին, ներկայությամբ այլ իշխանների, կազմում է Տաթևի վանքին պատկանած կալվածների սեփականատիրական արձանագրությունը, նշանակելով բոլոր սահմանները: Այդ արձանագրությունը, վոր ստորագրել են իշխան Աչոան և ներկա յեղած ֆեոդալները, ի վերջո վավերացնում է թագավորը հետևյալ մակագրությամբ. «Ես Սմբատ Բագրատունի՝ թագաւոր հայոց, հաստատեցի իմով ձեռամբս զայս վճիռս և եդի ի վերայ զիմ թագաւորական մատանին ի տորև» (ՍՕ, պլ. ԼԹ, 233): Նույնպես են վարվում Սյունիքի թագավորները, յերբ նախկին վասալական դրությունից ազատվելով, իրենց յերկիրը հայտարարում են թագավորություն: Սյունիքի թագավոր Վասակը վավերացնում էր ֆեոդալների նվիրաբերությունները հոդով ու կալվածքներով հոդուտ Տաթևի և այլ վանքերի հետևյալ ձևով. «Ես Վասակ թագաւոր իմով ձեռամբ հաստատեցի և եդի զիմ կնիքս արքունական» (ՍՕ, պլ. ԾՉ, 307—308): Պատմագիր Ստեփանոս Որբելյանը հաղորդում է, թե ինչպես Սյունիքի թագավորների հրամանով վասալ ֆեոդալներն իրենց կալվածներից վերահոդեր և դյուղեր էին բաժին տալիս այս կամ այն վանքին: Հողերի այդ նվիրաբերումը ձևակերպվում էր դրավոր ակտով ու համապատասխան ստորագրություններով և ապա վերջնականապես հաստատվում էր Սյունյաց թագավորի ստորագրությամբ ու կնիքով (ՍՕ, պլ. Կ, 321—332):

Վերևում բերված փաստերից վորոշակի հետևում է, վոր վասալ իշխանների հողային իրավունքը սահմանափակված էր, նրանք կարող էին ոտարել իրենց կալվածային հողերից իրենց սյուզերենի, այսինքն թագավորի, հաճությամբ ու թույլտվությամբ, վոր և վավերացվում էր վերջինի կողմից: Այս յերևույթը պետք է բացատրել իշխող իրավահարկադրությամբ, քանի վոր ճանաչվում էր միայն պետական հողային սեփականության թագավորի անձնավորությամբ, մյուս կալվածատեր իշխանները, վորպես ֆեոդալներ, ոգտվում էին հողերից վո՛չ թե սեփականության, այլ սերության իրավունքով, վոր սահմանվում և հաստատվում էր հողի գերագույն սեփականատերոջ ու տնօրինողի, այն է՝ թագավորի կողմից:

Սակայն հետագայում, ոտար նվաճողների տիրապետության փոփոխվող քաղաքական պայմաններում, գերագույն հողային սեփականության իրավունքն իրականության մեջ հաճախ խեղաթյուրվում էր և կարծես կորցնում էր իր սկզբունքային նշանակությունը: Այդ առանձնապես երևան է գալիս արաբների տիրապետության ժամանակաշրջանում, երբ որ զգալի փոփոխություններ են առաջացնում Հայաստանի հողային իրավունքի ընդհանրության: Արաբական շրջանում, ինչպես տեսանք, սկսվեց նախարարական սիստեմի կազմալուծումը: Շատ նախարարներ, արաբների նվաճողական քաղաքականության շնորհիվ, զրկվեցին իրենց առհմային կալվածներից և նույնիսկ այդ առհմերից շատերը ֆիզիկապես բնաջինջ եղան: Նախարարներից զավթված հողերը բաշխում էին նվաճողների մեջև և մասամբ էլ ընկնում էին այն փոքրաթիվ նախարարների ձեռքը, որոնք կարողանում էին համակերպվել արաբական քաղաքականության: Վերջապես, արաբների մտցրած հարկ էին սիստեմն զգալի չափով խախտեց տեղական կալվածատիրության իրավական կառուցքը, հարվածելով տեղական գերագույն հողային սեփականատիրության սկզբունքին:

Արաբները իրենց բոլոր նվաճած հողերը համարում էին խալիֆատի սեփականություն: Այստեղ, ուրեմն, հանդես էր գալիս ասիական դեսպոտական պետության համար այնքան բնորոշ՝ հողերի պետական սեփականության իրավունքը: Այդ հիման վրա էլ խալիֆ Ոմարը որոշեց էր սահմանել, որ ոչ մի մուսուլման իրավունք չունեը Արաբիայի սահմաններից դուրս անշարժ գույք ձեռք բերել և հողագործությամբ զբաղվել[78]: Բոլոր հողերը մնում էին նվաճողների ձեռքում որ չէ թե սեփականության, այլ տիրության, ժառանգական ոգտագործման իրավունքով: Այդ իրավունքը արտահայտվում էր խարաջ կոչված պարտականությունով, որը իսկապես հողային renta էր. խարաջը ծանրանում էր որ չէ թե անձերի, այլ միայն հողերի վրա:

Սակայն այդ որոշումը Ոմարից հետո կորցրեց իր նշանակությունը և գործնականում մոռացվեց անտեսվում էր մուսուլմանների կողմից: Նվաճողները, նույնիսկ խալիֆի վճռաբեկան-

բը, վոսոխականները, սովորական բան էին դարձրել հողերի զավթումը և կալվածների յուրացումը գրաված յերկրներում: Իսկ արաբների հետ մուտք գործած դրամական ռենտան և առևտրա-վաշխառուական կապիտալն առաջացրին անչարժ գույքերի վաճառք և գնումն, վորոնք իրենց հերթին նպաստում էին հողերի կենտրոնացմանը խոշոր ֆեոդալների ձեռքին:

Արաբների տիրապետության ժամանակ հայ ֆեոդալ իշխանները ընկան իրենց համար խորթ սոցիալ-քաղաքական պայմանների մեջ: Արաբները նվաճած յերկրներում, նաև Հայաստանում, հետապնդում էին բացառապես ֆինանսա-դանձահատուկ նպատակները, վորպեսզի յերկրից բան կարելություն չառ նյութական միջոցներ դուրս հանեն: Այդ նպատակների համար նրանք քիչ էին միջամտում տեղական ֆեոդալների ներքին հարաբերությունների և գործերում: Նրանք բավականանում էին, վոր տեղական իշխանները, վորպես վասալներ, կատարեն հարկային պարտականությունները և ըստ պահանջի զինվորական ուժեր ներկայացնեն իրենց դիմաց: Այդ վասալական հարաբերությունների համար նախարարները վասալների կապված էին վո՛չ թե անմիջապես խալիֆի, մուսուլման աշխարհի միապետի, այլ նրա վերնախավի՝ վոսոխականի հետ, վորը համարվում էր Հայաստանի գերագույն կառավարիչը: Զգալով իրենց վրա կենտրոնական իշխանության անմիջական ազդեցությունը և չկամենալով լինել մի մթնոլորտով, վորտեղ հողերի բռնի հափշտակումը, տուր և առ դարձել էր արաբների տեղական քաղաքականության անբաժանելի գործելակերպը,— մի քաղաքականություն, վոր վոնահարում էր գերերով պահպանված ավանդական իրավահավասարությունը պետության գերագույն հողային իրավունքի մասին,— նախարարները չհապաղեցին ոգտագործել առիթը՝ վերացնելու պայմանները իրենց չահերի տեսակետով: Այժմ ֆեոդալ իշխանները հնարավորություն էին ստանում նայել իրենց հողերին վո՛չ թե տիրության, այլ սեփականության իրավունքով: Հողային իրավունքի այդ տեսակ իմաստափոխումը դրդում էր ֆեոդալների ընչաքաղց ախորժակները և խթան հանդիսանում հողերի հավաքման ու կենտրոնացման, վորպիսի հանգամանքը նպաստում էր հողեր հավաքողների տնտեսական ու քա-

ղաքական ուժեղացմանը: Դրա հետևանքն այն եղավ, որ առաջացավ նախ՝ Բագրատունյաց թագավորությունը և ապա հերթով՝ Արծրունյաց և Սյունյաց թագավորությունները: Այս պայմաններում նրանք պարզան իրենց հողերի վաստական ավելաբանաները: Այդ թագավորներն իրենց հողային սեփականության իրավունքին նույնպես իրավաբանական ձև տվին, վերականդնելով իրենց անձի վերաբերմամբ դերազույն հողային իրավունքի ավանդական սկզբունքը: Հետևապես, այդ թագավորությունների նստած վասալական ֆեոդալ լիխաններըը, համաձայն այդ սկզբունքի, ոգտվում էին իրենց հողերից միայն սեփության իրավունքով: Այդ բացահայտ կերևում է վերն առած բերած վասաներից, երբ հողերի ոտարումը կատարվում էր Բագրատունի կամ Սյունի թագավորների համաձայնությամբ և վավերացումով:

5. ՀՈՂԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ.— Հողային դերազույն իրավունքի այդ տեսակ ըմբռնումն ավելի ցայտուն հանդես է գալիս Զաքարյան ժամանակաշրջանում: Թեև Զաքարեն ու Իվանեն համարվում էին վրաց թագավորների վասալները, բայց և այնպես այդ երկու լիխաններն ու նրանց ժառանգները ճանաչում էին Հայաստանը վասաների անկախ ու իրենց անմիջական լիխանությանն ենթակա տերիտորիա, որի դերազույն սյուզերենն էին համարում իրենց: Հենվելով իրենց յուրացրած հողային դերազույն իրավունքին՝ նրանք տիրապետների էին Հայաստանի հողերը բաշխում էին նախկին ֆեոդալական տոհմերին և նորաստեղծ ֆեոդալներին, ենթարկելով սրանց իրենց լիխանությանը և վերապահելով նրանց միայն հողի տիրության իրավունք:

Բերենք մի քանի որինակներ, որոնք բնորոշում են Զաքարյանների և սրանց վասսալ ֆեոդալների հողային հարաբերությունները՝ հողային դերազույն սեփականության իրավունքի վրա:

Իշխանաց իշխան Բուսլակը նվիրաբերում է Նորավանքին իր հայրենական հողերից Աղբերքս գյուղը, որը նա չէր էլ խլել «այլազգիներից» և որը, ինչպես նա նշում է նվիրաբերման

վճռում՝ «[իմ պարոնայք [Շահանշահ-Զաքարեի վրդովին և Իվանեն] մեծ սիզելով այլ ինձ էին որոշեալ» (ՍՕ, պ. Կե, 357)։

Ելիկում իշխանի վրդովե Լիպարիտը, վերադառնալով Գարդմանից և ներկայանալով Աթաբեկ Իվանեին, վերահաստատում է իր ֆեոդալական իրավունքները, առանալով նրանից գյուղերը Վայոց Ձորում, Գեղարքունիքում, Կոտայքում, Կայենում (Անդ, 360)։

«Ցետ աւուրց ինչ այր մի մեծազդի և տհմէ իշխանացն Բաղաց, Թոռն Զուրչեանց Մահտան անուն, զորոյ գնահատեն յաւերման ժամանակին բերեալ էր Աթաբէկին Իւանէ և բնակեցուցեալ ի Վայոց ձոր և տուեալ հայրենեօք պերճութն բերդ այրուձք ազատրակօք» (անդ, 366)։

Այդպիսի օրինակներ գտնում ենք նաև վիմագիր հուշարձաններում, որոնք ավելորդ ենք համարում մի առ մի թվել, գտնելով, որ վերևում բերվածներն էլ բավականաչափ հատատում են մեր ասածները։

Վերջապես, հողային դերագույն իրավունքը, որպես սեփականության դիմաւորող թագավորի իրավունք, որ հնագույն ժամերից ի վեր գոյծում էր Հայաստանում, իր արտահայտությունն է գտել նաև դրավոր օրինքներում։ Այդ տեսակետից կարևոր նշանակություն և ստանում Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, որ, հաղեցած իր ժամանակաշրջանի ֆեոդալական դասակարգային տարբերությամբ՝ արծարծում է նաև հողային իրավունքը մեր նշած սկզբունքով։

Մխիթար Գոշի Դատաստանագրքի II մասի («Աչխարհական օրէնք») Ա. դլխում, որ կրում է «Յաղագս դատաստանաց իշխանաց և որք ընդ ձեռամբն նոցա», հիշվում է, որ հողը պատկանում է թագավորին և իշխանին (եջ 315)։ Այստեղ իշխան ասելով՝ պետք է հասկանալ սուվերեն իշխող, անձնիշ։ Այս մեր կենսագրությունը հատատում է Դատաստանագրքի այլ համապատասխան հոդվածներով, որտեղ չեշտակի վորոշվում է թագավորի գերագույն հողային իրավունքը։

Նույն դլխում Մխիթար Գոշն ասում է. «Թագաւոր իշխանէ տուեալ գաւառ՝ եթէ չինէ ըստ հրամանի նորա բերդ և կամ ատան և քամ աւերակս ի նոյն տհմանն ի ժառանգութիւնս հա-

մաբեսցի նման, մի՛ լեցի փոխել առանց մեծի և իրաւացի յանցանաց. և զինի մահու նոցա՝ որդւոց նոցա լեցի հրամանաւ թագաւորի: Սոյնպէս ընդ ձեռամբ իշխանաց աղատաք լեցին և ընդ ազատաց ձեռամբ չինականք» (317):

Այս տողերից հետևում է, որ վասսալ իշխանը հողն ստանում է թագավորից տիրուհյան իրավունքով, այն էլ որոշ ժամանակով, իսկ յեթե այդ հողի վրա, թագավորի թուլտվուհյամբ կամ հրամանով, չինարարութհյուն է կատարվում, այն է՝ կառուցվում են դյուղեր, բերդեր, վերականգնում են ավերակները, ապա այդ հողերը մնում են ֆեոդալների ձեռքին ժառանգական տիրուհյան իրավունքով, որը կարող է վերացվել թագավորի կամքով, յեթե ֆեոդալը կատարել է լուրջ հանցանք: Անտարակուս, այս որենքի մեջ գրավոր կերպով արտացոլել և սովորութհյական իրավունքի հնավանդ մի նորմ, որը թերևս ծագում է Աբշակունյաց չրջանի նախարարական իրավունքից:

Վերևում բերված հոդվածում բնորոշն այն է, որ չինականները, այսինքն ճորտերը, ըստ յենթակարգութհյան ստանում են հողերն իրենց անմիջական սենիորներից, այն է՝ ազատներից, նույնանման ձևով, ինչպես որ իշխանները թագավորից: Ինչպես հայտնի յե, որ մի ֆեոդալական հասարակակարգում ճորտերը հողերի սեփականատեր չեն յեղել, այլ յեղել են ստոկ հողից ոգտվողներ: Հետևապես, Մխիթար Գոշի անալոգիան ավելի ևս չեշտակի ընդգծում է ֆեոդալական հողային իրավունքի առանձնահատուկ բնուհյթը Հայաստանում, որտեղ հողի սեփականութհյան իրավունքը պատկանում եր մեկին թագավորին, իսկ նրա յենթակա վասսալ իշխաններն ոգտվում եյին լոկ հողի տիրուհյան իրավունքով:

Այնուհետև թագավորի գերագույն հողային իրավունքին և վերաբերում հետևյալ կետը. «չինել քաղաք և բերդ, և կամուրջս չինել մեծամեծ գետոց, թագաւորաց լեցի» (II, Ա. 304):

Ինչպես ակնհայտ է Մխիթար Գոշի Դատաստանագրքի վերոհիշյալ իրավաբանական նորմերից, նրանք մեծ կամ նվազ չափով համամատ են Աբշակունյաց թագավորների հողային գերագույն իրավունքին: Այդ առանձնապես նկատելի յե նախարարներին հողեր տրվելու և յետ վերցնելու, նախարարական տերե-

տորիաներում բերդեր կառուցելու և արքունի ռեզալիաների վերաբերմամբ:

Հողային իրավունքի նույն սկզբունքն ենք տեսնում Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքում, որը գործում էր Կիլիկյան հայ թագավորության մեջ: Սակայն այստեղ նկատվում է այն փոքրիկ տարբերությունը, որ ֆեոդալ իշխանների հողային իրավունքը որոշ չափով լայնացված է և, ընդհակառակն, սեղմված է թագավորի դերադույն իրավասության վասալական իշխանների սերության ներքո դանվող հողերի նկատմամբ: Այդ յերևույթը պետք է բացատրել Կիլիկյան հայ պետության տեղական առանձնահատկություններով և մանավանդ նրա պետական կազմի բնույթով: Կիլիկիայի հայ ֆեոդալական կառուցքը դեռևի չափով ազդված էր, խաչակրաց արշավանքների և Արևմտյան Յեվրոպայի հետ ունեցած առևտրական հարաբերությունների ընորհիվ, արևմտա-յեվրոպական ֆեոդալիզմի սկզբունքներից:

6. ԹԱԳԱՎՈՐԻ ՍԵՆԻՈՐԱԿԱՆ ՀՈՂԵՐ.— Արշակունի թագավորները, բացի այն, որ հանուր պետական հողերից բաժին էին հանում և տրամադրում նախարարներին, սովորություն ունեին բաշխել հողեր նաև իրենց թագավորական սենեկապետական տերիտորիայից, այսպես կոչված «արքունի վոստանից»: Այդ արվում էր դլխավորապես պալատական պաշտոնյաների, գործակալների վերաբերմամբ, որոնք միաժամանակ ստանում էին նախարարական կոչում:

Այդ տեսակետից մեծ պատմափաստական նշանակություն ե ստանում 1907 թ. Բաշապարանում հայտնաբերված հունարեն արձանագրությունը, որը վերլուծել և պրոֆ. Մ. Ռոստովցեվը[79]: Այդ արձանագրության մեջ ասված է, որ «Տրդատ մեծ թագավոր Մեծ Հայքի պարգևել է այս [ինչին [անունը վերծանված չէ, յեղծված լինելու պատճառով] Գնթունու տոհմից Նիդ գավառն ու քաղաքը»: Նիդը մտնում է Աբարատյան մարզի մեջ որն, ինչպես դիտենք, «արքունի վոստան» էր: Այս արձանագրության ընորհիվ նախ ճշտիվ հաստատվում է Տրդատ թագավորի անձնավորությունը: Դա Տրդատ առաջինն է, որը հայ ավանդություններում, ըստ Մովսես Խորենացու Պատմու-

թյան, նուվնացվել և վաղարշակ թագավորի հետ և հայոց պատմության մեջ ներկայացվել է իբրև Արշակունյաց թագավորական դինաստիայի հիմնադիր, հայ պետականության անդրանիկ բարեկարգողն ու նախարարական սիստեմի կառուցողը: Ցերկրորդ՝ խիստ հետաքրքրական և հունարեն εἰς ἀρτάβ[ρι]α յեղծված բառի լուսաբանությունը, թեև յենթադրական և այդ հետևությունը: Ոստոսվցնվին այդ վերծանված բառը թարգմանում է «վան կօշիկների», վորտեղից յեզրակացնելու յի, վոր թագավորը Նիզ գավառը տվել է Գնթունուն «կոշիկների» համար, այսինքն՝ որամադրել և կալվածական ավատ վորոշ ֆեոդալական պարտականության դիմաց. այս դեպքում ավատատեր իշխանը պետք է հոդար արքունի դղեստանքի մատակարարումը: Այդպիսի ֆեոդալական պարտականությունը սովորական եր հին պարսկական, պարթևական և նույնիսկ XI դ. Թուրքեստանի պետություններում, վորտեղ ֆեոդալ իշխաններին ու պալատական մեծամեծներին տրվում եյին ավատական կալվածքներ, պայմանով, վոր նրանք հոդան պալատական տնտեսության դանազան մասերը:

Հիրավի, Մովսես Խորենացին, պատմելով վաղարշակի (իրականում՝ Տրդատ I-ի) ձեռներեցությամբ Հայաստանում կատարված պետական բարեփոխումների և նախարարությունների հիմնադրման մասին, հիշատակում է, վոր նա նշանակել է «դղեցուցանողս իւր զձեռէս ի գաւառաց քանանայից. անուն կոչէ զպին Գնթունիս» (II, դլ. Ի, 103): Թեև Մովսես Խորենացին վոչինչ չի ասում, վոր Գնթունուն այդ պարտականության համար որամադրվել են հողեր, սակայն ուշադրության առնելով Մովսես Խորենացու ասածի չարունակությունը, վորտեղ նա մի առ մի թվում է պալատական տնտեսական կառավարման ճյուղերը և այդ առնչությամբ դանազան նախարարների ավատական կալվածներ բաշխելը, պետք է կռահել, վոր նաև Գնթունի տոհմը բավարարվել է ավատական հողով:

Հետևապես, վերոհիշյալ հունարեն արձանագրությունը վորոշ չափով հաստատում է Մովսես Խորենացու ասածը Գնթունի նախարարության մասին և ընդ ամին հիմք է տալիս յեզրակացնելու, վոր նաև նրա պատմվածքը մյուս նախարարների մասին, վորոնք վաղարշակից (Տրդատ I) ստացել եյին հողեր՝ պալատական

*տնտեսության վորոշ պահանջները բավարարելու պարտականությամբ, դուրկ չեն պատմական հիմքից: Հիրավի, Մովսես Խորենացու Պատմությունից յերևում է, վոր մի շարք նախարարներ ավատական կալվածքներ էլին ստացել, վորի հանդեպ պարտավոր էլին հոգալ պալատական տնտեսության մատակարարումը. Գնթունի նախարարը հոգում էր թագավորի հանդերձանքի մասին, Վարաժնունի նախարարությունը— վորսի, Գաբեղյանները— ձիերի յերամակների և ախոռների, Աբեղյանները— արքունի զահույքի և տան սպասավորման, Գնունիները— դինու և մառանների, Սպանդունիները— մսի և սպանդանոցի, Զյուռնականները— սառույցի և ամառանոցների մասին և այլն. (II, գլ. Խ, 103—104):*

*7. ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ.— Այսպիսով, հանդում ենք այն կարծիքին, վոր բովանդակ պետական տերիտորիայի վրա տարածվող լիակատար հողային սեփականության իրավունքը պատկանում էր թագավորին, դերագույն սյուզերենին, վորի անձնավորության մեջ դերագույն հողային իրավունքը նույնացվում էր նրա քաղաքական իշխանության հետ: Այսպես չեր էլ կարող լինել այն ֆեոդալական հասարակակարգում, վորտեղ թագավորի քաղաքական իշխանությունը բղխում էր միանձնական պետական սեփականություն կազմող բոլոր հողերի վրա նրան պատկանող իշխանությունից: Դա մի բնորոշ յերևույթ էր, վոր հատուկ էր ասիական պետություններին, ինչպես ակնարկել է Կ. Մարքսը:*

*Թագավորի հողային դերագույն իրավունքի համատից էլ բղխում էր նախարարների հողատիրության իրավունքը, վորպես պայմանական հողային տիրություն: Այդ տիրությունը, չնայած իր ժառանգական բնույթին, կախումն ուներ կենտրոնական թագավորական իշխանությունից և կապված էր վերջինի հետ վորոշ պարտականություններով: Հողատիրության այդ յերկակի բնույթը, մի կողմից՝ թագավորի լիաղոր հողային իրավունքը ամբողջ պետական տերիտորիայի վերաբերմամբ, իսկ մյուս կողմից՝ նախարարների պայմանական հողատիրական իրավունքը նույն տերիտորիայում՝ արտահայտվում էր այն յերկու ձևերով, վորոնք արևմտա-յեվրոպական ֆեոդալիզմի տերմինաբանության*

մեջ հայտնի չեն dominium directum և dominium utile անուններ։

Dominium directum–ը—հողի ուղղակի, անմիջական սեփականությունը, մոտավոր ենթատային իրավունք, և dominium utile–ն—հողի ոգտագործման սեփականությունը, մոտավոր վասալական իրավունք— հանդիսանում էին հողային իրավունքի կրկնակ ծագման հեղ բևեռները։ Սրանցից մեկի վրա կանգնած էր թագավորի իշխանությունն իր կենտրոնաձիգ ելույթյամբ, իսկ մյուսի վրա՝ նախարարական, ֆեոդալական իշխանությունն իր կենտրոնախույս ուժերով։ Ֆեոդալական Հայաստանի ամբողջ պատմությունը պատմում էր այդ երկու բևեռների միջև տեղի ունեցող սուր բախումների մասին, որոնք դարավոր անհաշտ պայքար էր մղում արտադրության հիմնական միջոցին տիրանալու համար, այսինքն՝ հողի սեփականության անմիջական իրավունքի և լիակատար հողային իշխանության համար, պայքար թագավորի dominium directum–ի և նախարարների dominium utile–ի միջև։

Մենք տեսանք, որ հողային գերագույն իրավունքից բղխում է թագավորի գերագույն պետական իշխանությունը, քաղաքական իշխանությունը։ Այդ իշխանությունն իր ելույթյամբ դեպոտական էր, որի մեջ կենտրոնանում էին պետական կյանքի ու կառավարման հիմնական կողմերը։ Այդ իրավահայեցողությամբ թագավորը հանդիսանում էր գերագույն օրենսդիր, իրավունք և դատ սահմանող։ Այդ երևում է նաև մատենագրական մի քանի տվյալներից։ Ցեղնիկ Կողբացին ասում է. «Ընդէ՞ր օրինք ի թագաւորաց պնդին, և սաստք իշխանաց և պատիժ ի դատաւորաց» (I, ժԵ)։ Փավստոս Բուզանդացին Արշակ II–ի վերաբերմամբ գանգատվում է՝ «իրաւունք ումեք յարքունուստ ոչ ելանէին» (IV, գլ. ԺԲ, 110)։ Ի հարկե, այդ օրենսդրությունն ու իրավաբանությունը բնավ կատարված չեր վորոշ սահմանադրական սկզբունքների վրա, այլ բղխում էր թագավորի բռնակալ իշխանության բնույթից և կապված էր նրա անձնավորության հետ, որպես ֆեոդալական հասարակության միապետի, որի գերագույն իշխանությունը կենտրոնանում էր արքունիքում։ Այստեղից էին գնում հրամաններն ու կարգադրությունները,

վորոնք որևէ նշանակություն էլին ստանում: Իբրև այդպիսին, թագավորը դառնում էր իր հպատակների կյանքի ու մահվան տերը: Մենք տեսնում ենք, թե ինչպես թագավորը հրամայում և վոչնչացնել ըմբոստ նախարարներին, պղտնները հատանել և այլն:

Վորպես գերագույն սյուզերեն, նախարարությունների դըատավորող, տեր ու հրամայող՝ նա հանդիսանում էր պետության մեկ ու ինքնակալ ներկայացուցիչը, վոր հարաբերություններ էր պահպանում և բանակցություններ վարում ուրիշ պետությունների հետ, դաշինք էր կռում, պատերազմ հայտարարում ու ճեռնարկում, դեսպաններ առաքում և ընդունում: Նույնիսկ այն ժամանակները, երբ Հայաստանն ընկնում էր այս կամ այն ուրիշ պետության, ինչպես Սասանյանների, Հռոմի և Բյուզանդիայի գերիշխանության տակ, նմանապես Հայաստանի թագավորի անձնավորության մեջ արտահայտվում էր ամբողջ երկրի վասալական յենթակայությունը նվաճող ուրիշ պետության:

Վերջապես, թագավորի գերագույն իշխանությունից էր բղխում դրամ հատանելու իրավունքը: Մեզ հասել են դրամներ, տակավին նախասելջուկյան չրջանի հայ թագավորներից: Այդ ավանդական իրավունքն արտացոլել է նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքում. «Եթէ գահեկան և դրամ հատանիցէ, իշխանութիւն կալցէ ըստ իրաւանց դատաստանի: Այլ իշխանաց ո՛չ է իրաւացի հատանել գահեկան և դրամ, և թէ հատանիցէ, հրամանաւ լիցի թագաւորի» (II, Ա., 304):

## II· ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

1· ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ.— Ֆեոդալական Հայաստանում հողային սեփականության իրավունքը պատկանում էր բացառապես գերագույն սյուզերենին, թագավորին, վորի իշխանության ներքո, վորպես dominium directum գտնվում էլին պետական տերիտորիան կազմող բոլոր հողերը: Իսկ նախարարների, վորպես վասալ իշխանների, հողային իրավունքն արտահայտվում էր սոսկ տիրության իրավունքով, այն է՝ նրա ոգտագործմամբ, այսինքն՝ dominium utile: Ահա այդ իրավունքի

մեջ եր կայանում ֆեոդալական հասարակության արտադրության հիմնական միջոցին՝ հողին տիրելը: Ուստի կարևոր և պարզել հողատիրության ձևերն, այլապես ասած՝ վորոշել հողերի կատեգորիանները, վորոնք կազմում էին նախարարական հողատիրության հիմնական տարրերը:

Հայ մատենագրական աղբյուրներում հիշատակվում են գլխավորապես հողային սեփության յերկու տեսակներ՝ հայրենիք և պարգևականք, հիշատակվում և նաև յերրորդ տեսակը՝ ֆսակագինք կամ գանձագինք: Վերջին տերմինը հանդիպում և գլխավորապես միջնադարյան գրականության մեջ, նախարարական սիստեմի կազմալուծման և առևտրա-վաշխառուական կապիտալի ներմուծքի դարաշրջանում: Ուստի այդ վերջին կատեգորիայի հողերը չեն հանդիսանում ֆեոդալական հողային իրավունքի հիմնական ու բնորոշ տարրը:

Մեր պատմագետներից ու հայագետներից չատերը սովորաբար հայրենիք ու պարգևականք տերմինները նույնացնում են արևմտա-յեվրոպական ֆեոդալական հողային տերմիններին՝ հայրենիքը «feod»-ին, մի քանիսը նաև allod-ին, իսկ պարգևականքը beneficium-ին: Ցեթե մի քանի արտաքին նշաններն իրոք հիմք են տալիս անալոգիայով նույնացնել վերոհիշյալ տերմինները, սակայն ըստ եյության այդ հայկական տերմինների համապատասխանությունը feod-ին կամ allod-ին և beneficium-ին կարելի յե ընդունել վորոշ վերապահություններով միայն:

Զգեստք և աչքաթող անել մի կարևոր հանգամանք, վոր հայկական պարգևականքն ու հայրենիքն՝ և արևմտա-յեվրոպական beneficium-ն ու feod-ը, նաև allod-ը, իրենց դեներտիկ զարգացումով մեկնում են միանգամայն տարբեր հիմքերից: Արևմտա-յեվրոպական ֆեոդալիզմը, վորպես սոցիալ-տնտեսական ֆորմացիա, հաջորդելով անտիկ, սարտակատիրական ֆորմացիային, դադարել և հին-գերմանական համայնքի քայքայման և արտադրության անտիկ յեղանակի քայքայման սինթեզի վրա, ընդ սմին այդ ֆեոդալիզմն ունեցել և այնպիսի նախապայմաններ, ինչպես հռոմեական լատիֆունդիաներն ու կոլոնատը: Իսկ ֆեոդալիզմը Հայաստանում, ինչպես և ընդհանրապես Արևելքում,

պարզացել է նախնադարյան կոմունիստական տոհմային հասարակության քայքայումից, անցնելով դյուղական համայնքի միջոցով, որը պահպանեց իր դոյությունը Հայաստանի ամբողջ ֆեոդալական պատմության մեջ: Սկսած ֆեոդալիզմի զարգացման այդ յերկու տարբեր մեկնակետերն են, որոնց առանձնահատուկ բնույթի և տարածել Արևելքի ֆեոդալական հողային իրավունքը, ըստ որի բոլոր հողերը պատկանում են պետությանը՝ հանձին նրա թագավորի:

Հետևապես, սկսած տեսակետի վրա յեն կանգնած մի շարք պատմագետներ, ինչպես Ն. Ադոնցը (ԱԱԻ, 460—461), Տուրնեբիզը[80], Լորանն[81] և, սրանց հետևողությամբ, Հ. Մանանդյանը, յերբ հայկական հայրենիքը նույնացնում են արևմտաեվրոպական allod-ին:

«Մերովինգյան պարապշջանի allod-ը, որպես հողային դույքի տիպ,— ասում է Ն. Ադոնցը— միանգամայն զուգադիպում է հայկական հայրենիքին... այդ յերկուսն էլ ժառանգական հողեր են, որոնք սերնդից սերունդ են անցնում լիակատար սեփականության իրավունքով» (ԱԱԻ, 457): Հ. Մանանդյանը, համաձայնելով Ն. Ադոնցի ասածների հետ, իր կողմից ընդգծում է. «Թե՛ Արշակունիների արքունի յերկրում և թե՛ նախարարական իշխանություններում դոյություն են ունեցել մանավոր հատուկ կալվածներ ու հողեր, որոնք համարվել են նման մերձնափարյան allod-ների՝ ժառանգական լիակատար սեփականություն: Այս կարգի դույքերն անվանվել են հայրենիք»[82]:

Մերձնափարյան յեվրոպական ֆեոդալիզմում allod-ը, լինելով ինքնուրույն հողատիրության ձև և սերտ լիակատար սեփականություն, հակադրվում է beneficium-ին և feod-ին, որպես հողատիրության պայմանական ձևերին: Allod-ը սերտ պետում էր սկզբնական շրջանում, յերբ ֆեոդալական սեռատիրությունը նոր էր կազմակերպվում, և իսկական ֆեոդալական հարաբերությունները դեռևս չէին հասել իրենց զարգացմանը: Այլոդական հարաբերություններն ըստ իրենց էության մերձ մնում էին ֆեոդալական հարաբերություններից դուրս: Այդ ակներև է նրանից, որ ավատական հարաբերությունների և ֆեոդալական

պայմանական հողատիրության հետագա զարգացումով՝ allod-ն անհետանում և արդեն XIV դարում բացառիկ երևույթ է դառնում: Այդ միանդամայն բնական ու տրամաբանական երևույթ էր միջնադարյան յուրաքանչյուր ֆեոդալիզմի ծագման ու զարգացման պայմաններում: Իսկ Հայաստանում, ուր գերադասում հողային իրավունքի տիրապետության հանգամանքներում, ալոդական հողատիրությունը չէր կարող տեղ ունենալ: Ցեթե, այնուամենայնիվ, Հայաստանի ֆեոդալիզմի պատմության մեջ կարող են հանդիպել ալոդական թվացող հողատիրության՝ երևույթներ, ապա դրանք հետնադարյան ժամանակի են և բնավ չեն բխում նախապարսկական ֆեոդալիզմի էությունից: Հայաստանում, իրոք, ալոդական հողային իրավունքը երևան է գալիս թագավորական իշխանության ժամանակից սկսած և կոնկրետ ձև ստանում Սելջուկների արշավանքից հետո, առավելապես արաբական տիրապետության ժամանակից սկսած: Այդպիսի հողային իրավունք ձեռք էին բերում միայն մի քանի նախարարություններ, վրոնք, հենվելով իրենց իրական ուժին, հնարավորություն էին ունենում ինքնուրույն գործելու և կախված չէին Հայաստանում այլևս գոյություն չունեցող թագավորից: Այդպես էին Մամիկոնյան, Բագրատունի, Արծրունի, Սյունի և մի քանի այլ նախարարություններ:

Այստեղ տեսնում ենք երկու միանդամայն հակադիր երևույթներ: Այն ժամանակ, երբ միջնադարյան յուրոպական ֆեոդալիզմում allod-ը՝ թագավորական իշխանության ուժեղացումով և վասսալական կախումների կոնսոլիդացիայով՝ չքանում է ամբողջական հարաբերությունների մթնոլորտից, ընդհակառակը, Հայաստանում ալոդական հողատիրությունը սկսում է երևան գալ, այն էլ ցարդուրվի, գլխավորապես նախարարական տեռմի կազմալուծման պայմաններում, երբ հայկական ֆեոդալիզմը, ոտար նվաճողների ճնշման տակ, վերակառուցվում է նոր քաղաքական գծով:

Հիրավի, միջնադարյան մատենագրության մեջ, որինակ՝ Սա. Որբելյանի և ապա հաջորդ վիմական արձանագրություններում, քաղաքական հարաբերություններում առեղծված և առասպել-վաշխառուական կապիտալի պայմաններում մուտք գոր-

ծած «հայրենիք» տերմինը կորցնում է իր նախկին նշանակությունը: Բացի դրանից, ինչպես վերն ակնարկել ենք, այդ դարերում, սկսած արաբների տիրապետությունից, Փեոդալ իշխանների մեջ մեծ չափերով զարգանում և հողերի գնումն ու վաճառումը: Այս միջնադարում թե՛ ժառանգական սոհմային կալվածքը և թե՛ գնված հողերն ստանում են Փեոդալական հողատիրության մեջ մի առանձնակի նշանակություն՝ հողային սեփականության իրավունքի տեսակետից: Արձանագրություններում, սկսած XII դարից, և այդ դարաշրջանի մատենագրական աղբյուրներում, մանավանդ Ստ. Որբելյանի մոտ, գտնում ենք բազմաթիվ հիշատակումներ գանձագին կամ դրամագին հողերի մասին[83], ինչպես և «հալալ ընչից իմոց»[84] արտահայտությունը: «Հայրենիք» տերմինով արդեն նշում էին ամեն տեսակ հողային սեփականություն, թե՛ ժառանգական ավատը, և թե՛ գնված կալվածքը: Այստեղից էլ հայ վիմագրություններում յերբեմն և դալիս հողային սեփականության իմաստավորումով այնպիսի մի նոր տերմին, ինչպես «հայրենիք դանձագին»[85]:

Յեթե անդրադիտ վորոշներ արևմտա-յեվրոպական Փեոդալական տերմինաբանության մեջ, ապա գանձագին, դրամագին, կամ ֆակագին անվանված հողերն են, վոր համարվելով կալվածատեր-իշխանների անհատական սեփականություն, նմանվում են allod-ին, իսկ հայրենիքն իր սկզբնական ավատական նշանակությամբ feod-ն է, Փեոդալական հողատիրության հիմնական տարրը, վորով բնորոշվում է այդ սոցիալ-տնտեսական հասարակակարգը: Feod-ը (լատ. feudum, ֆրանս. fief, գերմ. Lehn) հանդիսանում էր պայմանական սեփականություն, վոր կապված էր վորոշ պարտականություններով նրա հետ, վորից այդ հողը ստացվել էր ժառանգական տիրության իրավունքով: Մեր պատմական գրականության մեջ չենք գտնում հատուկ բնորոշում «հայրենիք» տերմինի վերաբերյալ, իսկ նույն գրականության մեջ ավանդված վիճաբանական տվյալները յերբեմն այնքան խառնաշփոթ են, վոր տարբեր ու կտրուկ մեկնաբանության տիրք են տալիս. այդ տեսանք allod-ի և «հայրենիքի» անհարիր նույնացման վերաբերմամբ:

Դալով պարզաբանել կոչվող Փեոդալական հողերին, ապա

բառակազմությունից հետևում է, վոր նրանք թագավորի կողմից պարգևված, ընծայված հողեր էին: Ուրեմն այդ հայկական տերմինը միանգամայն նույնանիշ է միջնադարյան ֆեոդալական beneficium–ին: Արևմտյան յեվրոպական ֆեոդալիզմում beneficium–ն արտահայտում էր պարգևած հողին ցկյանս տիրելու իրավունք՝ վորոշ պարտականությունների, վորոշ ծառայության հանդեպ: Վերը թված մի շարք որինակներում բացահայտ յերևում է, վոր թագավորները պարգևում էին հողեր զորավարներին, նախարարներին և այլ ֆեոդալներին առանձին ծառայությունների ու կատարած գործերի համար: Սակայն այդ մատենագրական տվյալներից չի կարելի վորոշել, թե ինչ պայմաններով էին տրվում այդ հողերը, արդյոք ժամանակավո՞ր, այսինքն ցկյանս, թե՞ ժառանգական տիրության կարգով: Պետք է յենթադրել, վոր այդ հողային նվերները ցմահ տիրելու բնույթ ունեին: Բայց և այնպես այդ պարագան խոչընդոտ չեր հանդիսանում, վոր գործնականում այդ նվիրած հողերը դառնում էին ժառանգական: Այդ ակնբախ է Մխիթար Գոշի Դատաստանագրքից (II, Ա, եջ 317). թագավորի կողմից իշխաններին նվիրված կամ տրված հողերը դառնում էին ժառանգական տիրություն, յերբ վերջիններն այդ հողերի վրա կատարում էին չինարարական կամ մշակութային աշխատանքներ, ընդվրում այդ ժառանգական տիրության իրավունքը պետք է հաստատվեր թագավորի կողմից: Ուրեմն «պարգևականք» կոչված հողը ժամանակի ընթացքում դառնում է «հայրենիք»: Այս դեպքում նկատում ենք արևմտա-յեվրոպական ֆեոդալիզմին հոմանիշ յերևույթ, յերբ բենեֆիցիալական հողը հետագայում վերածվում է ֆեոդալականի, այսինքն beneficium–ը կամ «պարգևականքը» հանդիսանում է feod–ի կամ «հայրենիքի» նախապարագան, այն սաղմը, վորից զարգանում է վերջինս: Հիրավի, հայկական ֆեոդալիզմի զարգացման հետագա շրջանում «պարգևականքի» և «հայրենիքի» միջև, կարծես, ընկվում է այդ յերկու հողատիպական ձևերի վերաբերյալ իրավարմբռնումը: Այդ նկատելի յե Սա. Որբելյանի մոտ, վորը նույնիսկ պարգևված հողերն անվանում է «հայրենիք», միևյն ընծայման հանգամանքը չեչտելու համրանա յերբեմն կգում է «արքայատուր» բառը (գլ. ԿԶ, 411):

Հետաքրքրական է վերլուծական մոտեցումը, որով նա դալիս է ասպացուցելու, թե ֆեոդալական Հայաստանում ֆեոդ տերմինին համապատասխանում է խոստակ բառը, իսկ ֆեոդ ունեցողը կոչվում էր խոստակդար[86]: Այդ բառերը հանդիպում են Մովսես Կաղանկատվացու պատմության մեջ հիշատակված Աղվանից Վաչագան Արքայի կանոնադրության 6-րդ հոդվածում[87] և Ստ. Օրբելյանի պատմության մեջ (պլ. Լթ, 206—207, պլ. Խ, 219, պլ. Խթ, 232—2339): Համեմատելով Վաչագանի 6-րդ կանոնը Շահապիվանի ժողովի Բ. հոդվածի (ԿՀ, եջ 61) և «Կանոնք Ներսիսի կաթողիկոսի և Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի» ե հոդվածի հետ (ԿՀ, եջ 109), որոնք համանիշ բովանդակություն ունեն հոգևորականների ժառանգական հողատիրության իրավունքի մասին, և նկատի առնելով, որ Վաչագանի հոդվածում նշված «խոստակ»-ին համապատասխանում է վերջին երկու հոդվածներում կիրառված «հայրենիք» տերմինը, Հ. Մանանդյանն հանգում է այն եզրակացության, որ «խոստակը» վոչ այլ ինչ է, եթե վոչ «հայրենիք», որ համապատասխանում է եվրոպական «feod» տերմինին:

Այնուհետև խոստակ տերմինը հանդիպում ենք Ստ. Օրբելյանի Պատմության մեջ IX և X դ. դ. վերաբերյալ հողային նվիրաբերությունների վավերագրերում: «Խոստակդար», այսինքն ավատառու, ինչպես յենթադրում է Հ. Մանանդյանը, խոշոր ֆեոդալների վասալներ էին, «ազատները», որոնք իրենց սենիորներից ստանում էին հողեր՝ ճիշտ որ զորքում ծառայելու պարտականությամբ:

Ձառարկելով Հ. Մանանդյանի խոստակ բառի վերլուծման ճշտության դեմ, մենք այն կարծիքին ենք, որ նշված տերմինը, չնայած նրա լեզվական իրանա-պարթևական ծագմանը, խորթ է յեղել Հայաստանում վաղուց հաստատված ֆեոդալական տերմինաբանությանը: Հայ մատենագրության մեջ սովորաբար հանդիպում է «ֆեոդ» առումով միայն «հայրենիք» և վո՛չ թե «խոստակ» տերմինը, որը հիշատակվում է ընդամենը մեկ անգամ VII դ. (Վաչագանի կանոնը) և չորս անգամ IX և X դ. դ. վավերագրերում (Ստ. Օրբելյանի Պատմության մեջ):

Սակայն ուշագրավ է այն, որ թեև «խոստակ» տերմինը, ինչպես ասինք, և վավերագրերից, հանդես է գալիս գանազան գաղթերում, բայց մեզ հայտնի չէ որևէ վայրերում— Աղվանքում և Սյունիքում, իրար հետ անառեսապես ու քաղաքականապես սերտ կապված տերերներում, որոնք սահմանամերձ էին Մեծ Հայքին: Այս պարագան հիմք է տալիս ենթադրելու, որ ընդհանրապես «խոստակ» բառը դոյություն չի ունեցել հայ ֆեոդալական միջավայրում և երբեք տերմին տեղ չի գտել հայ ֆեոդալական իրավունքի թե՛ սովորական և թե՛ դրավոր նորմերում, չնայած որ Հայաստանի ֆեոդալական իրավունքի տերմինաբանության մեջ մուտք են գործել ու սովորական դարձել իրանա-պարթևական շատ անուններ: Ըստ երևույթին, «խոստակ» տերմինը մուտք էր գործել պարթևական պետիշխանության ժամանակ Աղվանից տերերը և այստեղից արձագանք տվել հարևան Սյունիքում, չտարածվելով այլևս Հայաստանի մյուս մասերում:

2. ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.— Վերը նշել ենք, որ նախաթաթարական հողատիրությունը պայմանական էր: Ինչո՞ւմն էր կայանում այդ պայմանականությունը:

Նախաթաթարական Հայաստանը ներկայացնում էր մի պետություն, բաղկացած ֆեոդալական իշխանություններից՝ նախաթաթարական վերջին հարյուրամյակներում ամրապնդվել էին թագավորները, որոնք իրենց կենտրոնական իշխանությամբ: Այդ պետական կազմի ու նրան անձնավորող թագավորի մեջ ֆեոդալները տեսնում էին իրենց դասակարգային տիրապետության հանդրվանը, որ ապահովում էր ֆեոդալական շահագործման սիստեմը և հնազանդություն ընձեռում միևնույն արտատնտեսական ճնշման տակ պահել խոհական արտադրողներին ամբողջ պետական տերիտորիայում: Այդ պայմաններում կենտրոնական թագավորական իշխանությունն ու ֆեոդալական միավորների համագործությունն, իրրև պետություն, հիմնված էին մոտիկ հարաբերությունների վրա: Թագավորի և վասալ նախարարների փոխադարձ հարաբերությունները արտահայտվում էին այն կախումով ու պարտականություններով, որոնք ունեին նախարարները միանալուն ու ամբողջ պետության հանդեպ՝ հանձին թագավորի: Այդ կախումը հողային բնույթ էր կրում և վո՛չ թե անձնական,

ինչպես կարծում են Ն. Ադոնցն ու Հ. Մանանդյանը, լինելով ֆեոդալական Հայաստանում իրր մի տիրող սյուղական հողատիրության կոնցեպցիայից: Ինչպես հատկանիշ է, արտադրության ֆեոդալական յեղանակի վրա հիմնված ամեն մի հասարակության սոցիալ-անտեսական կառուցքը հանդիսում է հենց հողային կախման հարաբերությունների վրա, կախման, որ հիմնարկիսական կարգերով իշխում է թագավորից, դերազույն սյուզերենից, մինչև ամենատարրերն առաճանալը՝ ճորտացած գյուղացին: Այդ հարաբերությունները, յեթե նույնիսկ անձնական համարենք, ինչպես կարծում են Ն. Ադոնցն ու Հ. Մանանդյանը, այնուամենայնիվ ծագում էին այս կամ այն ձևով հողի ոտնակուց և տիրելուց, որ պայմանավորված էր ավատական իշխանների վորոշ պարտականություններով:

Այդ պարտականությունները կայանում էին ծառայության մեջ, վորպիսի տերմինը համանիշ է յեվրոպական միջնադարյան ֆեոդալիզմի servitium-ին: Այդ «ծառայության» մեջ գլխավոր տեղն էր բռնում նախարարի պարտականությունը՝ իր զորքով հնչկայանալ թագավորին, ըստ նրա պահանջի, պետության պաշտպանության համար: Ինչպես բացահայտ է «Զորանամակ» կոչված ցուցակից, այդ զորքերի թիվը համապատասխանում էր յուրաքանչյուր ավատական իշխանի հողային տերության տարածությանը: Ամենահետ, տեսնում ենք բդեշխ կոչված ծայրագավառային ֆեոդալ իշխաններ, վորոնց պարտականություն էր ընդհանուր պետության սահմանները պաշտպանել: Կային նաև նախարարներ, վորոնց «ծառայությունն» էր արքունի պալատի անտեսության գանազան ճյուղերի մատակարարումը: Կային, վերջապես, նախարարներ, վորոնք պատվավոր պարտականություններ էին կատարում արքունի դրանը, ինչպես և այնպիսիները, վորոնք, թագավորի հանձնարարությամբ զանազան վարչա-պետական պաշտոններ էին վարում գանազան գավառներում:

Ահա այդ նախարարական «ծառայությունը» մինչև կապված և յեղել, ըստ մեր հին պատմագիրների լրատվամբանման, հողատիրության հետ: Այդ յերևում է նաև Բյուզանդական Հայաստանում ապաստանած հայ նախարարների նամակից, վոր ուղղ-

ված եր Պարսկական Հայաստանի թագավոր Խոսրովին, յերբ նրանք ցանկութիւն են հայտնում Հայաստան վերադառնալ և հավատարիմ ծառայել նրան, ինչպես և ծառայում էին նրա հորը՝ Արշակին, յեթե նա իրենց վերադարձնի բոլոր բռնագրաված հողերը (Մխ., III, գլ. ԽԸ, 323—324): Նույնիսկ նախարարական կոչում տալն, ըստ մեր պատմագիրների, մանավանդ ըստ Մովսես Խորենացու, տեղի յեր ունենում բացառապես հողի բաշխումով:

3. ՄԱՅՈՐԱՏ.— Նախարարական ծառայութեան որպանական աղերսը հողատիրութեան հետ վկայում է նաև հին Հայաստանում դոյութիւն ունեցող մայորատի իրավունքը, վոր կարելի յե թարգմանել «ավագութեան իրավունք»: Նախարարական տերիտորիան համարվում եր ավյալ ամբողջ տոհմի անբաժանելի և մխանական սեփականութիւն: Ահա ֆեոդալական հողատիրութեան այդ հիմնական սկզբունքն անխախտ եր մնում նախարարական հողի ժառանգումով ըստ ավագութեան՝ հորական գծով:

Նախարարական մայորատի իրավունքի մեջ նշմարում ենք սոցիալ-տնտեսական մնացուկ արխայիկ տոհմային հողատիրութեան, վոր վերաձևվել եր դյուղական համայնքի հողատիրութեան, ուր տոհմային ավագը, իսկ հետագայում դյուղական համայնքի ավագը, հանդիսանում եր կոլեկտիվի իրավական ներկայացուցիչ՝ տոհմա-յեղային միութեան մեջ: Այդ սոցիալ-տնտեսական բնորոշ դիծը՝ վերաձևված դասակարգային ձևով՝ պահպանվել եր Արևելքի ֆեոդալական հասարակութիւններում, ինչպես և Հայաստանում: Այստեղ նախարարական տոհմի կամ տան ավագը, վոր կոչվում եր նահապետ կամ տանուտեր, իրրև ներկայացուցիչ տոհմային ամբողջ անբաժանելի հողի և նրա սեփականութեան իրավաբանական անձն, պատասխանատու յեր իր տոհմի «ծառայութեան» համար: Ուստի թագավորական իշխանութիւնը, մեկնելով իր հողային դերագույն իրավունքի չահերից և նախարարական հողատիրութեան հետ կապված վասսալական ծառայութեան ապահովումից, իրեն իրավունք եր վերապահել միջամտելու մայորատական ժառանգների նշանակման հարցերին: Այդ բանն առանձնապես աչքի յե ընկնում Արշակունի թագավորների ժամանակ: Սրանք իրավունք եյին համարում, թե-

կուզ ձևականորեն, վո՛չ միայն հաստատել ամեն անգամ տանուտիրական կամ նահապետական իշխանության ժառանգումը նախարարական տոհմի ավագագույն անդամի կողմից, այլ և յերբեմն իրենք էլին նշանակում այդ նահապետին, տանուտերին: Այդ ժառանգական կարգն անխափան պահպանվում եր նախարարների նկատմամբ նաև Հայաստանի բաժանումից հետո նոր այուզերին ինքնակալների կողմից, հանձինս Սասանյան թագավորների, ինչպես և սկզբներում մի քանի բյուզանդական կայսրների:

Ի լուսաբանումն մեր ասածների՝ առաջ բերենք մի քանի մատենագրական ավյալներ:

«Եւ կացոյց արքայն (Աբշակ Բ) զվարդան, զերկոյ եղբայրն [Մամիկոնյան տոհմի] ՚ի նահապետութենան ազգին իւրեանց» (ՓԲ, IV, Բ, 67): «Եւ ազգին Մամիկոնեան տոհմին տանուտէր նահապետ կացոյց Թաղաւորն (Վարազդատ), վաչէ անուն ի նմին տոհմէ» (ՓԲ, V, ԼԷ, 245):

«Ցայնժամ կոչէ արքայ Կաւատ զվարազտիրոց զորդի Սմբատայ Բագրատունւոյ՝ Յոսրով Շուա կոչեցեալ, և տայ նմա զիշխանութիւն տանուտէրութեանն. առնէ զնա մարզպան. և արձակէ ի Հայս հանդերձ ամենայն ընչիւք հայրենի, զի զաշխարհն ի չինութեան պահեսցէ» (Սեբեոս, ԻԸ, 156):

«Եւ զորդի նորա (Վարազտիրոց Բագրատունւոյ) զանդրանիկ՝ որում անունն էր Սմբատ, կարգեաց արքայ [Պոնտատանտին Բյուզանդական] ի պատիւ հաւր իւրոյ, տուեալ նմա զիշխանութիւնն ընդէմ տանուտէրութեանն տոպետութեան» (Սեբեոս, ԼԲ, 188):

Մի քանի դարերի Հայաստանի մայրաքաղաքային իրավունքի գայտուն պատկերն են ներկայացնում Որբելյան տոհմի Սյունյաց իշխանության ժառանգումները: Իշխան Լիպարիտ Որբելյանի մահից հետո, վորը Զաքարե և Իվանե իշխաններից վերառաջել եր Սյունյաց յերկիրը վորպես ժառանգական տիրություն, նրան ժառանգում և անդրանիկ վորդի Ելիկումը: Վերջինի մահից հետո, թեև մնացել եր նրա վորդի Բուբտելը, բայց և այնպես իշխանությունը ժառանգում է նրա յեղբայր Սմբատը, վորպես տոհմի ավագագույնը, իսկ սրա մահից էլ հետո՝ յերրորդ յեղբայր Տաթուլիճը (ՍՕ, գլ. ԿԶ, 404—405, 419): Հայ մատենագրու-

քյան ներսում պահպանվել են բավականաչափ հիշատակումներ մայրապետական իրավունքի հետքերը ծագող վեճերի ու դժտությունների մասին։— «Իսկ Ստեփանոս Սիւնոյ [VI դարի վերջը] պայքարեալ վասն տանուտէրութեան լեալ ընդ հաբելբարեր իւրում Սահակայ» (Սեբ., ԺԹ, 92)։ Ցեղիչն պատմագիրն ավանդում է, որ Սյունյաց նախարար Վասակը սպանել էր իր հորեղբայր Վաղինակին, որն «ըստ որինի» ժառանգելու էր տոհմապետությունը, որպեսզի ինքը ղրավի ժառանգություն (Ցե., 178)։

Մայրապետական իրավունքն անդրադարձել է նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքում և մասամբ Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքում։

Մխիթար Գոշն այնքան լայն ծավալ և տալիս ավագության սկզբունքին, որ այդ իրավունքը նա տարածում է նաև թագավորական գահի ժառանգության վրա, որն, ինչպես հայտնի է Արշակունյաց թագավորների պատմությունից, հորից անցնում էր անդրանիկ որդուն։ Ըստ Մխիթար Գոշի՝ թագավորի մահից հետո նրա ժառանգական գույքը հավասար բաժանվում է որդիների և դուստրերի միջև, իսկ անդրանիկին անցնում էր գահը։ Իսկ յերե նրա մահից հետո կենդանի յեն յեղբայրները, ապա թագավորական գահը ժառանգում են ավագ ըստ ավագության, բայց վոչ մեռնողի որդիները, որոնք կարող են ժառանգել թագավորների այդ յեղբայրների վախճանով (II, Ա., եջ 300)։

Նկատի ունենալով, որ մայրապետ իրավունքը սովորույթի ուժով ավանդաբար մասամբ պահպանվել էր հայ գյուղական ընտանեկան համայնքների կենցաղում մինչև անցյալ դարի վերջերը։

Յերե ֆեոդալական Հայաստանում մայրապետ իրավունքն անհողդողդ պահպանվում էր նախարարական տոհմերում, ընդհակառակն՝ այդ իրավունքը չի դործում նույն սկզբունքով արքայական տոհմում, որտեղ ժառանգումն անցնում էր նույնպես ավանդության ձևով, բայց միայն հորական ուղիղ ձևով՝ որդուն։ Այդ պարզ յերևում է Մովսես Խորենացու պատմության մեջ. «Եւ քանզի բազում ունէր ուստերս, պատուհաս վարկաւ ոչ աճեցուցանել

առ իւր կալ ի Մծբին. վասն որոյ առաքէ զնոսա բնակել ի դաւառս Հաշտենից, և ի ձորն նորին սահմանակալ, որ է արտաքոյ Տարոնոյ. ի նոսա թողուլով զչինս ամենայն հանդերձ յաւելուածով մաքից առանձինն և ոռճկաց կարգելոց յարքունուստ: Եւ միայն զառաջինն որդին իւր, որ կոչէր Աբշամ, պահէ առ իւր ի հաճար թագաւորութեան, և զնորին ուստր՝ զոր անուանեաց Աբուաչէս...: Եւ եղև այս յայնմ հետէ և առ յապայ օրէնք ի մեջ Արշակունեաց, միոյ որդւոյ բնակել ընդ արբային՝ վախանորդ լինել թագաւորութեանցն, և այլ ուստերաց և դստերաց դնալ ի կողմանս Հաշտենից՝ յազգին Ժառանգութիւն» (Մխ, II, գլ. Ը, 111):

Նախարարական տոհմերի միջավայրում մայրաքաղաքի իրավունքի տերապետությունը վկայում է նախարարության մեջ պահպանված տոհմային հիմունքների մասին: Անշուշտ, արքայական դինաստիայում չէին կարող մնալ տոհմային հիմունքները: Պետության համատարած կազմակերպումը չէր կարող համատեղվել տոհմային կալվածքի զաղափարի հետ: Նախարարական տերիտորիան հանդիսանում էր ամբողջ նախարարական տոհմի կալվածք, իսկ պետական տերիտորիան, որը ընդգրկում էր իր մեջ բոլոր նախարարական կալվածքները, համարվում էր թագավորի, գերագույն իշխանության ինքնակալի հողային սեփականություն, որն, ի հարկե, կրում էր անհատական, անձնական և ո՛չ թե տոհմային բնույթ:

Այդ տեսակետից հետաքրքիր է բագրատունյաց թագավորության պատմությունը: Ցերբ Արշակունյաց անկումից հետո դարձ անց Աշոտ Բագրատունին վերականգնեց հայ թագավորությունը, գահակալության հարցում սկսեցին կիրառել Արշակունյաց դինաստիայում գործող ժառանգման կարգը: Սակայն, մայրաքաղաքի իրավունքի սկզբունքն այնքան ամրապնդած էր պահպանել բագրատունի տոհմի մեջ, որ նրա ամազագուն անդամները չէին հաշվում այդ նորամուծ կարգի հետ, տեսնելով այդտեղ իրենց վաղեմի տոհմային շահերի սահմանափակումն ու տարաձայնությունների խախտումը: Սովորաբար ամեն մի թագավորի մահից հետո, յերբ գահը ժառանգելու յեր թագավորի ավագ որդին, մնացորդ յեղբայրները վեճ ու տարաձայնություն էին հարուցանում և շատ անգամ բանը հասնում էր արյունալի ընդհարումների և բացաբաց ապստամբությունների:

## III. ՋՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հողային իրավունքի հետ սերտ առնչություն ունի ջրային իրավունքը: Հայտնի փաստ է, թե ինչ ահագին նշանակություն ունի ջուրը Արևելքի կլիմայական– աշխարհագրական պայմաններում, մասնավորապես նաև Հայաստանում, գիւղատնտեսական մշակույթի համար, որն առանց վոռոգման անկարող է դոյություն ունենալ: Ջրապուրկ հողը վոչ մի արժեք չի ներկայացնում: Ուստի այստեղ հողերի յուրացումը անտեսական նպատակներով անկարելի է առանց վոռոգման չինարարության, վորի մեջ առաջնակարգ տեղ է բռնում առուների արհեստական սիստեմը՝ ջրամատակարարումը կարգավորելու համար:

Այդ կարևորագույն պարագան իր վրա է գրավել Արևելքի ժողովուրդների պատմության մեջ զբաղվող շատ մասնագետների ուշադրությունը: Առաջավոր Ասիայի ու Յեգիպտոսի հնագույն քաղաքակրթության, նյութական և հոգևոր կուլտուրայի զարգացման պատմության մեջ վճռական դեր է խաղում վոռոգման մշակույթը: Այդ տեսակետից Մ. Վեբերն այնքան հեռու է գնում, վոր չարահյուսում է յուրահատուկ պատմական տեսակետ, վորի համաձայն հին Արևելքի բոլոր տնտեսական ու քաղաքական ինստիտուտները նա բացատրում է վոռոգման չինարարության հետևանքներով: Միջագետքում վոռոգումն Յեգիպտոսում Տիգրիս ու Եփրատ մեծ գետերի սիստեմով՝ դերակշռող դեր է խաղացել հին Բաբելոնի ու Ասորեստանի գյուղատնտեսական կուլտուրայում, վորտեղ ոչերացող թագավորները իրենց ձեռքում էին կենտրոնացրել վոռոգման չինարարության ու ջրաբաշխման ամբողջ գործը: Նույնն էր հին Յեգիպտոսում Նեղոսի ջրերով վոռոգելու բոլանդակ կառույցը[88]:

Արևելքի ժողովուրդների համար վոռոգման վճռական նշանակության վրա քանիցս չեշտել են Կ. Մարքսն ու Ֆ. Ենգելսն իրենց կլասիկ աշխատություններում:

«Պարսկաստանից մինչև Հնդկաստան, Յեգիպտոսից մինչև Աբիսսինիա,— ասում է Ֆ. Ենգելսը,— բոլոր տերկրներում հաճախ և ժողովրդական այն ասացվածքը, վոր առանց Նրի չկա երկրագործություն»[89]:

«Բազմաթիվ բռնապետություններ, վորոնք բարձրանում և

տապալվում էին Պարսկաստանում ու Հնդկաստանում, բոլորն էլ շատ լավ հասկանում էին իրենց առաջնադույն պարտականությունը. հոգալ հովիտների վոռոգման մասին, առանց որի այդ երկրներում անհնարին է երկրագործությունը»[90]:

Հայաստանի դաշտային մասերում էլ երկրագործության մշակույթի զարգացման մեջ առաջնակարգ նշանակություն ունի վոռոգումը: Այդ վոռոգման աղբյուրներն էին Արաքսն ու Ձիլբատան իրենց բազմաթիվ ճյուղերով, նաև սառըերկրյա ջրային հարուստ պաշարները: Տակավին Հայաստանի պատմության հնագույն շրջանում, խալդական թագավորության ժամանակները, այստեղ վոռոգման հսկայական ու հոյակապ շինարարություն էր կատարվում: Տեղական երկրագործական մշակույթի զարգացման համար, որ տարվում էր ֆեոդալական կալվածքներում, խալդական թագավորները կառուցում էին ջրատար առուներ Արարատյան դաշտում՝ Արաքսի և նրա ճյուղերի ջրերից, ինչպես նաև վասպուրականում: Այդ առուներից մի քանիսը, չնայած իրենց ալևոր հնությանը, դործում են տակավին այսոր էլ: Ակադեմիկոս Ն. Մառի ու այլ հետախուզիչների հնագիտական պրպտումներով հայտարերվել են Սևանի լիճն յեզերող Գեղամա լեռներից, նաև Արտաշատի վրա «մեդալիթյան ձիևերը—վիչապները»: Հայաստանի «նախապատմական» դարերի այդ ջրային առուվածները դանվում էին լճերի ու արհեստական ջրամբարների դըլխին, վորտեղից ջուրը առուների ջրաբաշխական ցանցով տարածվում էր Արարատյան դաշտում[91]:

Հայ մատենագրական աղբյուրներում բացակայում են տեղեկություններ հայ թագավորների ջրաշինարարական դործերի մասին: Սակայն պետք է յենթադրել, վոր դոյություն են ունեցել վոռոգման կառուցումներ, առանց վորի չէր կարող յղրպատնալ յերկրագործական մշակույթը: Մովսես Խորենացին, պատմելով Տիրան թագավորի մասին, վոր հողերը և պարտևում իր բարեկամ Դրուասպին, նշում է, վոր այդ հողերի վրա խաղողի և այլ այգինները վոռոգվում էին Գայլատու լճից հանված ջրանցքով (II, ԿԲ, 192): Բացի այդ՝ դտնում ենք կոմնակի ակնարկներ Արշակունի թագավորների ջրանցքակառուցման մասին նրանց շինարարական դործունեության այլ բնագավառներում: Ըստ Փավստոս Բու-

զանգացու Պատմության՝ Խորով Կոտակ թաղավորը անկեց Արտաշատ գաշտում ահագին անտառ, սկսած Գառնի ամրոցից մինչև Դվին քաղաքը՝ Ազատ գետի ուղղությամբ, ավելի հեռուն մինչև Արտաշատ քաղաքը և Արաքս գետը (III, գլ. Ը, 18)։ Անտառի անկումն այդպիսի մեծ տարածության վրա Արտաշատյան գաշտի չոր կլիմայական պայմաններում անհնարին կլիներ՝ առանց արհեստական ոռոգման սխեմի։ Այդ նպատակով կառուցվելու էին հատուկ ջրանցք— առուներ, մանավանդ, յերեք նկատի առնենք, որ այդ անտառատունկ հողերը տարածվում էին Արաքսի և նրա վտակ Ազատի միջև ընկած ուղղությամբ։ Մովսես Խորենացին ավանդում է Յերվանդ թագավորի շինարարական գործունեության—քաղաքների, պատասկերանների շինության մասին, որոնք շրջապատվում էին այգեստաններով, նաև արհեստական անտառներով (II, գլ. ԼԹ, Խ, ԽԱ, ԽԲ, 160—163)։ Անտարակույս, այդ բուսական մշակույթի աճեցման համար անհրաժեշտ էր ոռոգումն, որ հնարավոր էր միայն ջրանցքաշինարարության միջոցով։ Մովսես Խորենացին հիշատակում է Յերվանդի այդպիսի ջրանցքաշինարարության մասին Արաքսից, բայց հատկապես Յերվանդաշատ քաղաքի համար։ Ինչպես տեսնում ենք, այդ բոլոր շինարարությունները, հետևապես և ջրայինը, կենտրոնացած էր պետության գլխավորող արքայի ձեռքին։

Սակայն մենք ունենք մատենագրական ու վիմագրական տեղեկություններ ջրանցքաշինարարության մասին մյուս դարերի վերաբերմամբ[92]։ Թեև այդ տեղեկությունները վերաբերում են վանքերի կալվածական տնտեսություններին, բայց և այնպես այդ տվյալների հիման վրա կարելի յե յենթադրել, որ ազատ ֆեոդալների լայնածավալ գաշտային կալվածներն էլ նույնպիսի ջրանցքաշինարարության կարող էին յուրացվել յերկրագործական մշակույթների համար։

Սհա այդ ոռոգման նշանակությունն ու ջրանցքաշինարարության դերն անպայման պետք է առնչություն ունենային ջրային իրավունքի հարցի հետ, իսկ վերջինս էլ, իր հերթին, սերտորեն կապվում էր հողային իրավունքի հետ։ Թե որքան այդ յերկու իրավունքները փոխադարձ աղերս ունեցին և ջրային

հարցի իրավաբանությունը բղխում էր հողային իրավունքից, այլ ակներև և այն քնորոշ փաստից, վոր հայ պատմագրական և միջնադարյան վիմագրական հուշարձաններում դանում ենք համառոտ հողաստիրության ու ջրառիրության մասին սովորաբար գործածվող «հող և ջուր» դարձվածքը, յերկու տարրերի մի անբաժանելի ըմբռնում, վոր չի կարելի հողը յերևակայել առանց ջրի:

Մովսես Կաղանկատվացի (VII դ.) և ՍՏ. Որբելյան (XIII դ.) մատենագրիները պատմում են, թե ինչպես Պարսից Թագավոր Շապուհը, կամենալով վորոշել հայ նախարարների նախապատվության աստիճանները, դիմում է նրանց հետևյալ խոսքերով... «Բայց զԱրմենու զազգատոհմ և զնոցին նախապատիւ, զնախարարս նախագահութիւնս ոչ կարացաք դիտել ո՛չ ի նախնեացդ մերոց հարցն հարանց Թագաւորաց և ո՛չ այլ ուստեք յառնելմատաս մատենագրաց: Եւ արդ մի յերկուց առաջի կայ ձեզ նախարարացն Հայոց ազատ արանց կատարել զինդիրս մերոց Աբեայս աշխարհաժողով ազատագարմ կուսակալաց. ցուցանել ձեզ զնախնական զդիր ըստ իւրաքանչիւրումն ըստ առնց ազատագարմն ևկացն ձերոց զնախնատիճանն և զնախանիստ պատուն. և զարձեալ մեծապոյնն ունել զչքնաչուք մեծարանս ևս քան զևս: Եւ եթէ ոչ կարէք ակն ի յայս Աբեացս զնդի ժողովոյ ցուցանել զդիր նախագահութեան՝ զպատիւ և զտուն, զհող և զջուր և զտաճարաւածս ձեր Աբեացս աշխարհի ազատ արանցս չնորհեացուք» (ՄՕ, պր. Թ., 30—31. նաև Մովսես Կաղանկատվացի, II, Ա., 119—120):

«Հողն ու ջուրը» վորպես սեփականության յերկու անբաժանելի տարրեր հանդես են գալիս նաև կանոնական վորոշումներում, որինակ՝ Շահապիվանի կանոնների հոդ. Դ., նաև «Կանոնք Ներսէս կաթողիկոսի և Ներչապուհ Մամիկոնէից եպիսկոպոսի», հոդ. Ե. (ԿՀ, էջ 64 և 109):

Այսպիսով, հողային իրավունքն ինքնին պարփակում է իր մեջ նաև ջրային իրավունքը: Ուշադրության առնելով այն տեսակետը, վոր արծարծել ենք վերը Թագավորի հողային գերագույն իրավունքի մասին, հանդում ենք այն յեզրակացության, վոր այդ գերագույն սեփականատիրական իրավունքի

մեջ մանում և նաև ջրի իրավունքը, ջուրը հանդիսանում էր նույնպես թագավորի dominium directum-ի անբաժանելի մասը: Հետևապես, նախարարների ու հետագա ֆեոդալական իշխանների directum utile բնագիտության մեջ հողատիրության իրավունքի հետ սրսկանապես կապվում և նաև ջրատիրության իրավունքը: Ստ. Որբելյանն էր «Սիսական դավառի պատմության» մեջ առաջ և բերում մի շարք նվիրաբերական վավերագրեր ֆեոդալ իշխանների կողմից վանքերին, մանավանդ Տաթևի վանքին հողեր տրվելու մասին[93]: Այդ նվիրված դյուղերի, դաշտերի, այգիների և այլ տեսակ հողերի հետ միասին՝ նվիրաբերողները հիշատակում են, որ տալիս են նաև վոռոգման համար անհրաժեշտ ջրի կամ դետակների, նմանապես արհեստական առուների վրա տերելու իրենց պատկանյալ իրավունքը: Այդ նվիրատվական վավերագրերը նույնիսկ հատատավաճ են թագավորի տորթագրությամբ ու կնիքով, որպես այդ հողերի ու ջրերի դերագույն սեփականատերոջ:

«Հողի և ջրի» նույնանման նվիրաբերության ձևեր տեսնում ենք մինչնադարյան վիմական արձանագրություններում: Նվիրաբերությունները լինում են կամ ջրերի (դետակների և արհեստական ջրանցքների) լիակատար տիրության իրավունքով[94], կամ թե մասնակի, այն է՝ չարաթվա մեջ 3—4 որով ջրից ոգտվելու իրավունքով[95]: Առաջին դեպքում՝ վոռոգող ջուրը դառնում է կալվածատեր վանքի բացարձակ իրավունքի ոբյեկտ, որից վոչ վոք չի կարող ոգտվել առանց նրա թույլտվության, իսկ յերկրորդ դեպքում՝ ջրատիրության իրավունքը լիակատար չե և այդ ջրից ոգտվելու միատեղ իրավունք ունեն նաև ուրիշները, հերթական կարգով:

Վերն արդեն ակնարկել ենք, վոր հողային դերագույն սեփականության իրավունքը, մանավանդ Բագրատունյաց թագավորության անկումից հետո, միջնադարյան քաղաքական պայմաններում, միանդամայն խախտվել եր, յերբ զարգանում և ամրապնդվում էր հողային իրավունքը և նախորդ նախարարական հողատիրությունն առանում և առանձին խոշոր ֆեոդալական սեփականության իրավունքի բնույթ: Նույնն է տեղի ունենում և ջրի վերաբերմամբ, վոր սկսում է դառնալ այս կամ այն ուժեղ ֆեո-

դալի կալվածքի սահմաններում նրա սեփականություն, հետևապես դառնում է, ինչպես և հողը, վաճառքի ու գնման առարկա:

Այդ երևույթը բացահայտ է մի շարք պատմական ակտերից, որոնք դանում ենք հայ մատենադրության մեջ, մանավանդ Ստ. Որբելյանի մոտ: Առաջ բերենք երկու բնորոշ օրինակներ: Մեկը վերաբերում է Տաթևի վանքին, որը Ջրանցք և կառուցում իր տնտեսության համար և որի վանահայր Հակոբ եպիսկոպոսը 932 թ. գնում է Թիլիպոսե իշխանից նրան պատկանած Վարարակ անունով ակունքի Ջրի իրավունքը: «Ես Յակոբ՝ ընորհեալն Աստուծոյ Սիւնեաց եպիսկոպոս, դնեցի զվարարակ Ջուրն յաստուածապահ... Թիլիպոսէ Սիւնեաց տեառնէ ընդ 12·000 դրամի և մի պատուական գոհարի, և բազում ծախիւք և մեծամեծ աշխատութեամբ վերին օգնականութեամբն ածի զՋուրն ի լեռնէն Զազէձորոյ և բերի ի վարդուստս, և անկեցի որթս սորեկս և այդիս վայելուչս և դրախտս բազմածաղիկս և պտղալիցս...: Եւ չկայ յայս Ջրոյս հաշիւ ո՛չ Նորեցեաց, ո՛չ Խոտանանեցեաց, ո՛չ Շնհէրացեաց կամ Հալեցեաց, ոչ այլ մարդոյ, ոչ յարտ կորել և ոչ ի մարզ և ոչ պարտիզի Ջուր տալ՝ դատ ի մատակէդ եմպելոյ մարդոյ և անասնոյ» (պլ· ՄԹ, 254—255): Այս վկայությունից հետևում է, որ Ֆեոդալ իշխանից գնված ակունքի Ջուրը և նրա համար վանքի ծախքով շինված Ջրանցքը դառնում է Տաթևի սեփականություն, որի Ջրից իրավունք չունեն ոռոգվելու այդ Ջրանցքի ուղղությամբ ընկած գյուղերն իրենց երկրագործական մշակույթների համար, գյուղեր, որոնց շինականների աշխատանքը, թերևս պարհակի կարգով, չհատկացված կլիներ այդ Ջրանցքաշինարարության մեջ:

Նույնպիսի մի վաստ և ավանդում Ստ. Որբելյանը վայոց ձորի Գնդեվազ վանքի վերաբերմամբ, որը 1008 թ. կառուցում է Ջրանցք, և, համարելով իր սեփականություն, իրավունք չի տալիս նրանից ոռոգվելու սահմանակից գյուղերին. «Ի կաթողիկոսութեան հայոց տեառն Սարգսի, և ի թագաւորութեանն Գագկայ որդւոյ Աշոտոյ, իսկ ի Սիւնեաց և Բաղաց նորոգ թագաւորութեանն Վասակայ, կացեալ յաստղնորդութեան տանն այն հայր Սարգիս միւսն, և արարեալ բազում արդիւնս, և ածեալ զՋուրն ի լեռնէն ի մեծ դիտաւոր տարէն, ուր ակունքն են քաղցրա-

համ պետուն, որ Զկնարած կոչեն,... բաղում Յանիւ և մեծամեծ ծախիւք բերեալ յանդաստան վանիցն, և զանհուն առատպարն անջրդի արար ջրարբի և զամենայն լեռնակողմն. յորում ո՛չ զոյ ումեք հաշիւ ո՛չ Պրակեցնաց և կնչուտեցնաց և ո՛չ այլ սահմանակից պիւղօրէիցն և ո՛չ այլ ումեք...։Եւ զրկ ինքեան արձան ի վերայ եկեղեցւոյն անադեղով. և ահագին և մեծամեծ նղովիւք վակէ վան ջրոյն, զի մի՛ ոք իշխեսցէ կարել զնա և կամ հատրակաչ զոլ և բաժինս առնուլ, բայց միայն թէ ըմպեն ի ձմառակէն մարդ և անասուն» (Գլ. Ծ, 262—263)։

Այսպես ուրեմն, ջուրը, որ հանվում է իր բնական վիճակից և արհեստական վոռոգման և ծառայում վորոշ չինարարութեան միջոցով, դառնում է իրավահարաբերութիւնների օբյեկտ և տիրութեան իրավունքով պատկանում է բացարձակապես կալվածատեր ֆեոդալին, յերբ սա իր նյութական միջոցներով և սեփականատեր դառնում, և կամ գյուղական համայնքներին, յեթե սրանց աշխատանքով ու միջոցներով և ստեղծվել արհեստական վոռոգման սիստեմը։ Այդ մի յերևույթ է, վոր զարգացել է ուշ ֆեոդալական հասարակութեան իրավահարեցողութեան մեջ և սրբագործվել է սովորութեական իրավունքի նորմերով, վորոնք, ինչպես կտեսնենք ստորև, պահպանվել եյին Հայաստանի իրականութեան մեջ մինչև դրեթե XIX դարի վերջերը։

Սակայն այստեղ նշելու յե մի հանգամանքի վրա ևս։ Վերոհիշյալ միջնադարյան նվիրաբերական արձանագրութիւններում դերադույն հողային իրավունքն արտահայտվում է ո՛չ թե արքայի, թագավորի անձնավորումով, այլ բղխում է տեղական խոշոր ֆեոդալ իշխանից։ Այլապես չեր էլ կարող լինել, քանի վոր այդ դարերում Հայաստանը չեր ներկայացնում միասնական պետական տերիտորիա՝ ինքնուրույն քաղաքական իշխանութեամբ՝ հանձին թագավորի, այլ մի շարք իրարից անկախ, քիչ թե շատ ինքնուրույն ֆեոդալական իշխանութիւնների, վորոնք վասալներ եյին համարվում թուրք-մոնղոլական պետութիւններին անձնավորող սյուզերեններին։ Այնուամենայնիվ այդ հանգամանքը տեսականորեն չեր խախտում հողային ու ջրային դերադույն իրավունքի սկզբունքը, վոր գոյութեան ուներ հին Հայաստանում։ Այժմ իրավունքն ավանդաբար փոխանցվել եր ա-

ռանձին իշխաններով, որոնք իրենց համարում էին տեղական մասշտաբով «բնակ տեր» յուրքը, ֆեոդալական տերիտորիայի տիրակալներ ու հրամայող:

Տեսնենք այժմ, թե ինչպես է արտահայտվել ջրային իրավունքը Մխիթար Գոշի Դատաստանագրքում: Պետք է ասել, որ Դատաստանագրքի մեջ այս հարցը արծարծվում է չափազանց թռուցիկ, հակասական ու խառնաշփոթ ձևով: «Յաղագս դատաստանաց թաղաւորաց» Ա. հոդվածում Մխիթար Գոշը գրում է. «Բայց անդաստանք ջրարբիք լեցին ընդ հնդեւաւ, այլ ոսոխնք տասանորդեսցին. զի հող միայն է թագաւորի և իշխանի, և ոչ ջուր» (էջ 315): Այս պարբերության հիման վրա պետք է մակաբերել առաջին հայացքից, թե ջուրը չի կարող պատկանել թագավորին կամ իշխանին: Այստեղ, ինչպես տեսնում ենք, խոսքը վերաբերում է ջրին՝ հողային renovatio կապակցությամբ, մորպիսի renovatio իբր թե չի տարածվում ջրի վրա, մինչդեռ ջրարբի անդաստանից վերցվում է հնդեկով (բերքի 1/3), այսինքն ավելի, քան անջրդի հողերից, որոնք հարկված են տասանորդով. սրանից հետևում է, որ արդեն անուղղակի կերպով հարկված պետք է համարել նաև ջուրը: Ուրեմն, տվյալ դեպքում ջուրն էլ հանդիսանում է իրավունքի նույնպիսի օբյեկտ, ինչպես և հողը, և իրրև արհեստական վոռոդման միջոց նա հողի հետ միասին դառնում է կալվածատեր ֆեոդալի չհատործման առարկա: Հետևապես, հիմնականում այստեղ էլ բացատվում ջրատիրության իրավունքը, չնայած Մխիթար Գոշի խոսքերին՝ «Զի հող միայն է թագաւորի և իշխանի և ո՛չ ջուր»:

Յեթե Մխիթար Գոշի Դատաստանագրքում անորոշ ու հակասական կարծիք է արտահայտվում արհեստական վոռոդման ջրի իրավունքի նկատմամբ, ապա այդ հակասությունն ավելի ցայտուն է յերևան գալիս բնական ջրերի վերաբերյալ իրավունքի մեջ: «Այլ և պետք ուսոյ ասել նոցա է և ո՛չ առ ուր հասանեն» (II, ժ, 327, ծանոթ. ԺԲ): Ըստ այս իրավարմբռնման՝ գետը ակունքը պատկանում է կալվածատիրոջն, իսկ այդտեղից բնական հոսող ջուրը՝ վոչ վոքի[96]: Ուրեմն, Մխիթար Գոշի Դատաստանագրքում տեսնում ենք նույն իրավարմբռնումն, որ դոյու-

թյուն ուներ X դարում, ըստ Մատ. Ուրհայեցու Պատմության, որ ասում է, թե ինչպես Սյունյաց իշխան Գրիգորն վաճառում է իր կալվածքում գտնվող և իր սեփականություն համարվող վարարակ ակունքի Ջրի իրավունքը Տաթևի վանքին:

Միևնույն Գոշի Դատաստանագրքի ջրային իրավունքի վերհիշյալ խառնաչփոթ ըմբռնմանը կարելի է հակադրել Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքում արծարծվող նույն հարցը: «Եւ ջուր հանել ի դետոց Ջրելոյ կամ Ջաղցնոց համար, չկարէ ոք արգելուլ կամ ասել թէ սինօռն [սահմանը] իմ է, մի՛ հանել ջուր. կարեն հանել և տանել խանդկով ընդ ամէն մարդոյ դնոներ՝ ի յիր հողն և չինել գինչ իր պիտենայ. և չէ այն ջուրն քանց այնոր, որ տարաւ գայն ջուրն հայրենիք իւր սեփական» (ՍԴ., էջ 20):

Առաջադրված հոդվածից պարզվում է՝ 1) խոսքը վերաբերում է դետից հանած ջրին, որը, ըստ այն ժամանակվա իրավահայեցողության, չէր կարող համարվել ֆեոդալի սեփականություն, որի կալվածքով այդ դետը հոսում էր. 2) այստեղ հանդես է գալիս սերվիտուտային իրավունքը մի ջնաղարյան ֆեոդալական իրավահայեցողության համեմատ. սերվիտուտային իրավունքը հանդիսանում էր ֆեոդալի ջրատիրության իրավունքի բնական ու անհրաժեշտ սահմանափակումն Արևելքի յերկրագործության համար բացառիկ նշանակություն ունեցող վոռոգման պայմաններում. այդ սերվիտուտն այնուամենայնիվ սկզբունքորեն չէր խախտում թագավորի ջրային դերագույն իրավունքը:

Ընդհանրապես ջրային իրավունքը, որը այդպիսի առանձնակարգ նշանակություն ուներ ամբողջ յերկրի հողագործական մշակույթի համար, չէր կարող յերբեք մասնավոր իրավունքի բնույթ ունենալ: Նա պետության առանձնաշնորհությունն էր հանձին թագավորի գերագույն իշխանության և կրում էր հանրային բնույթ: Ուստի ջրատիրությունը պետության սահմաններում համարվում էր սոսկ տգտագործման իրավունք, որը յել նում էր կենտրոնական իշխանությունից: Ջրային իրավունքի այդ հիմնական սկզբունքը դարերից ի վեր սրբագործված էր սովորութային իրավունքով, որը պահպանողաբար կայուն էր

մնում ժողովրդական իրավահավասարության մեջ մինչև վերջին ժամանակները: Անգլիական ժողովուրդները համարում էին «հողն ու ջուրը» աստծու պարգև, որ ստեղծված է բոլոր մարդկանց հանուր բարօրության համար[97]:

Այդպիսի հայացքի հիման վրա յերկար ու ձիգ դարերի ընթացքում զարգանում էին սովորութեական իրավունքի նորմեր, որոնք կարգավորում էին և ուղղություն տալիս ջրի ոգտագործմանը:

Ըստ Անգլիական ժողովուրդների սովորութեական իրավունքի՝ բոլոր ջրերը ոգտագործման տեսակետից բաժանվում են յերկու տեսակի— բնական և հասած ջուր: Առաջին տեսակին են պատկանում բնական վիճակում գտնվող ջրերն, այն է՝ գետերը, վտակները, լճակները, մասնատիրական կալվածքներից դուրս բղխող աղբյուրները, անձրևի ջուրը և այլն: Յերկրորդ տեսակի յեն համարվում այն ջրերը, որոնք դուրս են հանված արհեստական միջոցներով յերկրի խորքից կամ բնական հոսուն ջրերից՝ առուները, ջրանցքները, ջրհորները, քյահրեզները և այլն: Ահա այդ յերկու տեսակ ջրերի վերաբերմամբ տարբեր իրավաբանական հարաբերություններ են ծագում: Բոլոր ջրերը, քանի նրանք գտնվում են բնական վիճակում, համարվում են «աստծու պարգև», և նրանցից իրավունք ունեն ոգտվելու անխտիր բոլոր բնակիչները ովքյար տերխտորխյում, որ կարող է վտոռզվել այդ ջրով: Ընդհակառակը, հանած ջուրը համարվում է մասնավոր սեփականություն թե՛ առանձին անհատների և թե՛ համայնքների: Այսպիսով, ջրերը պատկանում են նրանց ամբողջ բնակչության, լճերը և այլ կանգնած ջրերը՝ նրանց ջրամիայ բնակիչներին. ջրանցքներն ու առուները պատկանում են ամբողջ համայնքներին, որոնք կառուցել են այդ. հերթական վտոռզվելի ջուրը պատկանում է նրանից հերթականորեն ոգտվողին: Աղբյուրներն և ակունքները, որոնց ջուրը չի հոսում ովքյար համայնքի կամ մասնավոր կալվածատիրոջ հողերի սահմաններից դուրս, յենթարկվում են նրանց բացարձակ տիրության իրավունքին, իսկ յեթե այդ ջրերը հոսում են համայնական կամ անհատական հողերի սահմաններից դուրս, այդ ջրից իրավունք ունեն ոգտվելու հարևան համայնքները[98]: Ինչպես

տեսնում ենք, աշխատանքային սկզբունքը, որի միջոցով ստեղծվում էր արհեստական ոռոգման ջրերի ոգտագործումը, հանած ջրին տալիս և սեփականատիրական բնույթ, որ մեծ մասամբ պատկանում էր գյուղական համայնքներին և, ի հարկե, նաև կալվածատեր ֆեոդալներին, որոնք չհագուրծելով ճորտական աշխատանքը, կարողանում էին իրենց տնտեսության տարմաններում արհեստական ոռոգման սիստեմ կառուցել:

Դժբախտաբար մեզ հասած պատմական տվյալները Հայաստանի միջնադարյան և մանավանդ հին դարերի ջրային իրավունքի մասին այնքան սուղ են, որ լրիվ ու պարզորոշ պատկեր չեն տալիս: Բայց և այնպես վերը բերված տվյալները հիմք են տալիս առնելիքայորեն այն տեսակետը պաշտպանելու, որ հին Հայաստանում ջրային իրավունքն անխզելի աղերս ուներ հողային դերպետական իրավունքի հետ և բղխում էր հենց նրանից: Ի հարկե, սկզբունքային մի իրավահայեցողություն էր այդ, տեսականորեն դոյացած իրավական մի պաղատիար: Սակայն մի ժամանակ չի կարելի անտեսել և այն պարագան, որ շատ անդամ իրականության մեջ, մանավանդ միջին դարերում, երբ Հայաստանի քաղաքական կյանքը տակնուվրա էր լինում, ջրային իրավունքի այդ հիմնական սկզբունքը խախտվում և խեղաթյուրվում էր տիրապետող դասակարգերի կողմից և դառնում էր ինքնատարփակ և ինքնաբավ ֆեոդալների տակ տեղական շահերի արտահայտություն:

## IV. ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԻԵՐԱՐԽԻԱ.—Նախորդ դրույթներում տվիթ ունեցանք նշելու, որ նախարարական և ընդհանրապես ֆեոդալական հողատիրությունը չաղկապված էր որոշ պարտականություններ կատարելու հետ այսուդերնեկ հանդեպ: Այդ հարաբերությունները հայտնի չեն հին հայ ֆեոդալական իրավունքի մեջ ծառայություն անունով, որ համանիշ է արևմտաեվրոպական միջնադարյան ֆեոդալիզմի servitium-ին: Այդ ծառայությունից բղխում էր հողատիրության պայմանականությունն և ֆեոդալա-

*կան վասսալականությունը: Վասսալականությունը կրում էր հիերարխիական բնույթ, որով և բնորոշվում էր ֆեոդալական պետության կառուցվածքը, որպես հիերարխիական: Այստեղ յուրաքանչյուր ֆեոդալ իշխանին քաղաքական իշխանությունը «համաչափ և նրա հողատիրության ծավալին»[99]: Ֆեոդալական հիերարխիան յուրահատուկ ձևավորված պետական ապարատ էր, որ միանական ամբողջության մեջ էր ամփոփում տիրապետող դասակարգը և, այդպիսով, ապահովում ֆեոդալների տիրապետությունը: «Հիերարխիան ֆեոդալիզմի իդեալական ձևն է»[100]:*

*Հայ մատենագիրները հաղորդում են ֆեոդալական հիերարխիան բնորոշող բավականաչափ տվյալներ: Նախարարները համարվում էին «ծառայք» թագավորի: Հայ ֆեոդալական «ծառայ» տերմինը համանման է արևմտա-յեվրոպական ֆեոդալական տերմին servus-ին կամ famulus-ին, որպիսի բառով բնորոշվում էր վասսալի սոցիալական ու քաղաքական կացությունը այսուղերնել վերաբերմամբ:*

*Բերենք մի քանի որինակներ: «Զայնու ժամանակաւ ազգս տամբեաց յարքայէն Հայոց մի 'ի ծառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց, որ անուանեալ կոչէր բղեշխ, որ էր մի 'ի չորից, զահէրէց բարձէրէց տաճարին արքունի» (ՓԲ, III, գլ· Թ, 21):*

*«Ապաց դնաց առ մեծ իշխանն աշխարհատէրն մեծ ծառայն արքային Հայոց առ Մանուճէրհ Ռշտունի» (Անդ, եջ 24):*

*«Այս առաքէր թագաւորն Հայոց զբարեկիրը զծառայս իւր, զիշխանն Կորդուաց զՋոնն...հանդերձ բազում զօրօք» (անդ, եջ 21):*

*«Զեզ զիա՞րդ թուի, ծառայից այդպիսի աներկիւղ համարձակութեամբ դրել առ իւրեանց տէրն» (ՂՓ, II, գլ· իե, 95):*

*«Երդմնեցուցեալ զվաստակաւոր և զարմնախոհ սիւնեաց ծառայն մեր զքաջն Վարդան [Մամիկոնյան] և զընկերակիցս նորա» (Անդ, եջ 181—182):*

*«Նախ արա զիս արեաց տեառն ծառայ» (Անդ, III, եջ 363):*

*«Եւ մեր բնիկ տէրք եք և մեք ձեր բնիկ ծառայք եմք» (Անդ, եջ 372):*

«Կայր բդեաչխն վաղինակ 'ի ծառայութեան արքային» (փբ, 21):

Ֆեոդալական հիերարխիայի ամենաբարձր աստիճանը բռնում էր թագավորն իրրև տեր «բնակ յերկրի» և պերազուն իշխող: Թագավորից հետո հաջորդ աստիճանի վրա էին կանգնած «բդեչխները», ծայրամարզերի իշխողները, որոնց պարտականությունն էր պետական սահմանների պաշտպանությունն արտաքին թշնամիներից: Այդ հետևությամբ նրանք ըստ հիերարխիական աստիճանի կոչվում էին «պահէրէց արքունի տաճարին»: Բդեչխները, կանգնած լինելով այդ բարձր աստիճանի վրա, հանդիսանում էին կիսանկախ իշխաններ պետության մեջ, դրեթե իրավահավասար թագավորին, թեև յուրաքանչյուր նրա պերիշխանությանը: Ագաթանգեղոսի և Փաստոս Բուզանդացու խոսքերի համաձայն՝ Արշակունյաց Հայաստանում կային չորս բդեչխություններ «զառաջինն սահմանակալն ի Նոր–Շիրական կողմանէն [հարավարևելյան սահման], և զերկրորդ սահմանակալն յԱտրպատականայց կողմանէն [հարավ–արևմտյան սահման], և զերրորդն՝ յԱրուաստան կողմանէն [հարավային սահման], զչորրորդն՝ ի Մաղքթաց կողմանէն [հյուսիսում]»[101]: Արուաստան կողմը՝ Սղձնյաց մղեչխն էր, Ատրպատականյաց կողմը պետք է համարել Ծուխաց բդեչխը[102], իսկ Մաղքթաց կողմը— Վրաստանի սահմանի դիմաց՝ Գուգարաց բդեչխն էր (ՄԽ, II, գլ. Ը, 114):

Ազնուհետև բդեչխներից ցածր գալիս են նախարարները, որոնք բաժանվում են յերկու դասի՝ «ավագ» և «կրտսեր» նախարարներ: Մատենագրական աղբյուրներում չի տրվում նրանց տարբերող դծերի բնութագիրը, բայց և այնպես յեղած տվյալներից կարելի է յեզրակացնել, որ այդ յերկու դասերի տարբերիչ հատկանիշներն էին ֆեոդալական տների տոհմային ծագման հնությունն ու աղնվազարմությունը, նմանապես տերիտորիալ հզորությունը: Հետևապես «ավագ» մակդիրը վերաբերում է վո՛չ թե առանձին անհատներին, այլ ամբողջական տոհմին՝ սոցիալական առումով: Ավագ նախարարը վրոց չափով համապատասխանում է արևմտաեվրոպական ֆեոդալիզմի senior–ին: Ավագ նախարարների ամբողջ դասն ընդհանուր առմամբ մեր

մատենագրության մեջ կոչվում է ավագանի, որ բնավ չպետք է խմաստավորել հասակավոր տարիքի առումով: Պրոֆ. Հ. Մանանդյանն «ավագ» ու «կրտսեր» նախարարներին տարբերիչ հատկանիշը համարում է, բացի պահերեցությունից, նաև տարիքի մեծությանը: Այս դեպքում նա հետևում է պրոֆ. Ի. Ջավախովին[103], որը, հիմնվելով Ղազար Փարպեցու «պահու և աւուրբք» խոսքերի վրա[104], բերակացնում է, թե ավագ են համարվել նախարարները կամ «պահու», այն է՝ իրենց պահերեցությամբ, և կամ «աւուրբք», այն է՝ տարիքի հասակով[105]: Ի. Ջավախովի կարծիքը մի թյուրիմացություն է, որ բղխում է Ղազար Փարպեցուց քաղած ցիտատի վոչ ճիշտ մեկնաբանությից: Հետևապես, Հ. Մանանդյանի տեսակետն էլ հիմնավոր չէ, չնայած որ նա բերում է մի շարք վկայություններ, որոնք, պետք է ասած, շատ անգամ չեն համապատասխանում «ավագ» տիտղոսի դործածության կերկու իմաստով՝ «պահու և աւուրբք»: Ղազար Փարպեցու վերոհիշյալ «աւուրբք» բառը, լինելով սոսկ անհատական հատկանիշ, մի որևէ նախարարի անձնական հասակի վորոշիչ, չի կարող սոցիալական նշանակություն ունենալ: Վոչ մի տեղ հայ մատենագրության մեջ չենք դտնում այդ հատկանիշը՝ իբրև ավագ նախարարության բնորոշիչ: Այդ բառը մի անգամ և դործածվում Ղազար Փարպեցու մոտ, այն էլ վորպես դեկվածական և դրված և ապարատնա Վարդան Մամիկոնյանի բերանը, երբ նա Պարսից արքունիքում արտասանած ճառի մեջ ներկայացնում է հայ նախարարներին, վորոնց մի մասը իրոք կարող էլին հասակով իրենից ավագ լինել, իսկ մի մասն էլ «պահու» կարող էլին ավելի կերեց լինել: Վերջապես, ֆեոդալական հասարակության, այն էլ նրա ադնվադարմ վերնախավի սոցիալական մտայնության մեջ անհարիր կլիներ, վոր հասակը տոհմական ավագության ցուցանիշ լիներ, և վորևե աննշան ու անդրբ տոհմի հասակավոր ներկայացուցիչ դրավեր բարձրադույն հիերարխիական աստիճան իրենից թե՛ ծագումով և թե՛ կալվածական հարաստությամբ ավելի նշանավոր նախարարական տան համեմատությամբ:

Վերոհիշյալից արդեն կարելի յե կռահել, վոր կրտսեր նախարարներ պետք և համարվելին վո՛չ թե տարիքով ավելի կերի-

տատարղնելը, այլ նրանք, ովքեր իրենց ազնվազարմ ծագումով և հոգային հարաւորությամբ սոցիալական ու քաղաքական մեծ նշանակություն չեյին ներկայացնում և սաորադաս եյին իրենցից տատիճանով բարձր տոհմերից: Պետք է յենթադրել, որ կրտսեր նախարարները կարող եյին վո՛չ միայն թագավորի անմիջական վատասյները լինել, այլև մեծ մասամբ յենթավատասյական կախումն ունեյին ավագ նախարարներից: Հետևապես, որոշ նախարարների վատասյական կախումը մյուս նախարարներից նույնպես կարող է հատկանիշ հանդիսանալ ավագ և կրտսեր նախարարների հիերարխիական տատիճանը որոշելու համար: Պատմագիրը Սեբեոսի խոսքերից ակնհայտ է, որ Դիմաքսյան նախարարական տունը Բագրատունիների վատասյն եր: Իսկ մեր մատենագրության մեջ Բագրատունի տոհմը համարվում եր ավագ նախարարություն: Նմանապես այսպես կոչված Զորանամակից եյ յերևում է, որ Դիմաքսյան նախարարական տոհմը դուրս եր բերում միայն 300 ռազմիկ, որ նշան է այդ տոհմի նվազ հզորության: Այդ յենթադասակարգությամբ պետք է բացատրել, որ Բագրատունյաց տան նահապետ Սմբատը նշանակել եր Դիմաքսյան տոհմից իշխան Մհերուին իր տան կառավարիչ՝ «հավատարիմ և կամակատար» (Սեբ., պլ. ժէ, էջ 100—101):

Ամեն մի նախարարության պլուխ եր կանգնած տոհմի տարեքով ավագագույն անդամը, որի համար իսկապես կարելի յեր ասել «աւուրքք» ավագ: Այդ տոհմային ավագը կոչվում եր տանուտեր կամ նահապետ: Այդ տերմիններին լեզվաբանական բովանդակություններն էլ ավագի իմաստավորումն և ներկայացնում և նրանք համանիշ նշանակություն ունեն, տարբերվելով սոսկ լինգվիստական ծագումով: Առաջին տերմինը, որ ավելի հնագույնն է, հարում է հայերի եթնոգենեզի թրակո-փռյուգիական հիմքին՝ տոհմային հասարակակարգի արխայիկ ֆորմացիային, որտեղ տունը նշանակում եր տոհմ, իսկ տերը՝ տոհմի ավագ, պլուխ: Յերկրորդ տերմինը պարթևականից յուրացրած բառ է և, ինչպես ապացուցում է A. Meillet, ծագում է պարթևական nafapati-ից, որ նշանակում է նույնպես տոհմի, ցեղի պետ, պլուխ[100]: Նախարարական «տանուտերը», կամ «նահապետը», համարվում եր ամբողջ տոհմի ներկայացուցիչ, որի ձեռքումն

եյին առհմային կալվածքի բուն անդամ հողային իրավունքը և քաղաքական իշխանությունը նախարարական տերիտորիայի նկատմամբ: Նա անմիջորեն կապված էր վասսալական հարաբերություններով թագավորի հետ, որն ամեն անգամ նրան հաստատում էր տանուտիրական կոչման մեջ: Տանուտերի, նահապետի անձնավորության հետ էր կապված մայորատի իրավունքը: Նախարարական տան մյուս անդամները դասվում եյին տանուտերի կամ նահապետի իշխանության ներքո և կոչվում եյին սեպուհ: Այդ տերմինի լեզվաբանական իմաստը նույնպես բնորոշ է՝ հնադարյան տոհմային հասարակակարգից ծագելու տեսակետից: Ն. Մառի կարծիքով՝ սեպուհ հայերեն բառը (sepurn, որից sazepuro) վոխ և առնված իրանականից է համապատասխանում է դենդարական viśaputhra բառին, որը նշանակում է տոհմի կամ ցեղի որդի[170]: Սեպուհ բառը հոմանիշ է նաև ասսմերական barbita բառին, որը նույն նշանակությունն ունի, այն է՝ տոհմի որդի[108]:

Սեպուհ բառից է առաջացել արդիական հայ լեզվում գործածվող «սեպհականություն» բառը՝ առարկայի, գույքի պատկանելության իրավաբանական իմաստավորումով:

Վերջապես ֆեոդալական հիերարխիայի ամենավերջին աստիճանն են ներկայացնում այսպես կոչված «ազատ»-ները: Այդ բառը նմանապես փոխառություն է պարթևական լեզվից և հին հայերենում «ազն» նշանակում էր տոհմ[109]: Ազատների դասը միջին, փոխանցական շերտն էր կազմում տիրապետող նախարարների և հպատակ գյուղացության մեջ: Այդ յերևում է նրանից, որ մեր մատենագրության մեջ նրանք սովորաբար հիշատակվում են նախարարներից հետո և ամիրներից կամ շինականներից առաջ: Հետևապես, ազատները տիրապետող ֆեոդալական դասակարգի ստորին շերտն էյին կազմում, հանդիսանալով մանր ազնվական կալվածատերեր, որոնք կախված էյին նախարարներից հողային և անձնական հարաբերություններով: Ինչպես ասացուցում է Խրիմեանը, Սասանյան Պարսկաստանում էլ գոյություն ունեյին azat-ներ, որոնք մանր ազնվականներ էյին[110]: Հայ մատենագրական յերկերում հաճախ հոգևորական առանձին դասի «ազատ» անունը վերացարկվում է,

ստանալով ազնվականի, տոհմիկի իմաստ և, իբրև այդպիսին, դարձած լինում նախարարների սոցիալական կացութիւնը բնորոշելու համար, ինչպես «ազատութիւն», «ազատորեար», «ազատական»: Պետք է ասած, որ մեր հին դրականութեան մէջ պարզորոշ չէ արտահայտուում ազատների կամ նախարարների տարբերութիւնը նախարարներից, բայց որ այդ տեղի է ունեցել, պետք է կռահել մեր միջնադարեան դրականութեան տվյալներից: Ստ. Որբելեանն իր Պատմութեան մէջ բերում է մի շարք վկայութիւններ, որոնք վկայում են ազատների, ինչպես վասակների, անձնական ու հողային կախումը ֆեոդալ իշխաններից: Թվենք մի քանի օրինակներ:

«Ապա հասեալ վախճան առաքինւոյն Սաղոմոնի և ժողովեալ տէրանցն Սիւնեաց և ամենայն ազատաց նոցա» (պէտ. ԽԱ., 222):

«Նմանապէս և իշխանքն ղղեղանն էին բաշխեալ ազատաց իւրեանց» (պէտ. ԾԶ, 305):

«Որդի մեծատուր իշխանին Բագրատ Հասանայ, որ ունէր ընդ ձեռամբ պահենայն ազատս թագաւորութեանն այնմ» (պէտ. ԴԲ, 347):

Սյունեաց ֆեոդալ իշխանները Տաթևի և այլ վանքերին հողեր ընծայելիս՝ արձանագրութիւններում հիշատակում են որպես վկաների իրենց վասալ ազատների անունները (ՄՕ, պէտ. ԼԲ, 207, պէտ. Խ, 220, պէտ. ԽԹ, 231 և այլն):

Ֆեոդալական հիերարխիայի արտաքին ձևը սովորաբար արտահայտուում էր գահերեցութեամբ[111] կամ բարձերեցութեամբ[112]: Ըստ ստեղծած սովորութեի՝ արքունի պալատում հանդիսաւոր ընդունելութիւնների, տոնական հանդեսների, ճաշկերույթների կամ ընթրիքների ժամանակ բազմելիները, ալազ ու կրտսեր նախարարները, մատամբ և ազատները բազմում էին ըստ հիերարխիական աստիճանի, պահպանելով «բարձ ու պատիւ»-ի կարգը: «Բարձը»՝ այլապես «գահը» այն բազմոցն էր, որի վրա նստում կամ կռթնում էր ըստ ավագութեան կարգի ամեն մի նախարար, իսկ «պատիվ»-ը գլխի դարպասանք էր, վարսակալ[113], որն ուներ հատուկ ձևեր հիերարխիական աստիճանի համեմատ և կոչվում էր նաև գարդմանակ: Փավստոս Բուզանդացին մեզ ավանդել է հետաքրքիր նկարագիրը Արշակ II թագավորի հանդիսավոր ճաշկերույթի՝ հայ նախարարների մասնակցու-

թյամբ. «Եւ այլ յայսմ ազգաց և ի խոնարհ՝ որ դործակալս անուն բարձիւք առաջի արքային պատիւ ի գլուխ բաղմէին, թող զնահապետս մեծամեծս և զտոհմատեառս՝ որք դործակալք միայն էին ինն հարեւք քարձ. որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարդելոց» (IV, գլ. Բ, 68)։ Նույնպիսի տեղեկություն և տալիս Ստ. Որբելյանը. «Գրիդորիս հրամայէ մեծին Տրդատայ կարդել զթագաւորութիւնն իւր ըստ սահմանի կայսերացն յունաց և տալ ըստ իւրաքանչիւր պատշաճի զան և պատիւ իշխանացն յաջմէ և յահեկէ, որ և զեղեցկակէս յօրինեալ ի ժամ ճաշոյն նստել բարձս չորեքհարիւր իշխանաց» (գլ. Է, 24)։

Թե ինչ մեծ նշանակություն և ունեցել պահեցողությունը հայ ֆեոդալական հասարակության լրավահայեցողության տեսակետից, այդ ակներև է այն փաստից, որ զոյություն և ունեցել պահեցության կարգը վոչնչող հատուկ վավերագիր, որ հայտնի էր Գահնամակ անունով, և վորտեղ ցուցակագրված էին հայ նախարարությունները ըստ իրենց ավագության կարդի։ Գահնամակի կազմելը, ինչպես բացահայտ է մեզ հասած մատենագիր պատմությունից, վերագրվում է Սահակ կաթողիկոսին, վոր իբր թե Սահանյան վռամ թագավորի (423—439 թ. թ.) համար պատրաստել և այդ ցուցակը, քաղելով պարսկական արքունի դիվանի վավերագրերից[114]։ Մեզ հասած հին պատմական պատմությունների մեջ հայտնաբերվել և նաև մի այլ Գահնամակ, վոր մեր պատմագիտության մեջ ստացել և Զորաքամակ անունը, վորովհետև այդ ցուցակում նշանակված են ըստ ավագության տոհմերի նախարարությունները և սրանց գլխավորական ուժերի քանակը[115]։ Թեև այդ երկու հետաքրքիր վավերագրերը, ինչպես ցույց են տալիս պատմագիտական լուսաբանությունները, ավելի ուշ ժամանակի խմբագրություններ են, բայց և այնպես, քաղված լինելով հին աղբյուրներից, արժեքավոր նշանակություն են ստանում հայ ֆեոդալական լրավունքի պատմության համար։

Աբշակունյաց անկումից և Հայաստանի բաժանումից հետո, ինչպես ակներև և մատենագրական աղբյուրներից, հայ նախարարների պահեցությունը պահպանվում էր նաև Սասանյանների

բի արքունիքում: Սակայն արաբների տիրապետության ժամանակ, յերբ նախարարական կառույքը մեծ հարված եր ստացել ու քայքայվել եր, վերացավ նաև հայ նախարարների հիերարխիական սրադիցիաների կիրառումը: Միայն հայոց թագավորության վերականգնումով բաղրատունյաց օրով պահպանվեցին, կամ «բարձ ու պատիվը», նույնպես վերականգնում և ձևականորեն:

2· ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ.— Ի՞նչ պարտականություններով եյին արտահայտվում այն հարաբերությունները, վորոնք ֆեոդալական հիերարխիայի հիմքն եյին կազմում և շաղկապված եյին հողատիրության իրավունքի հետ:

Մենք արդեն ակնարկել ենք, վոր ֆեոդալ հիերարխիայի բարձրագույն աստիճանի վրա կանգնած բուն իշխանն՝ ստանձնած եյին պետության սահմանները պաշտպանելու պարտականություն և այդ պատճառով կոչվում եյին սահմանակալ, կողմնակալ, սահմանապահ, կողմնապահ:

Նախարարների ծառայությունը կատարվում եր յերկու ըստ ծոի, զինվորական ու քաղաքացիական: Ի հարկե, հիմնականը զինվորական ծառայությունն եր, վոր կայանում եր սահմանված քանակով իր յերկրից զորք հանելու պարտականության մեջ, և բուն թագավորի պահանջի՝ պաշտպանել պետությունն արտաքին թշնամիների հարձակման դեպքերում, մոնելով ընդհանուր զորարանակի մեջ իրրև պատերազմող ուժ: Իսկ քաղաքացիական ծառայությունն արտահայտվում եր հատուկ պաշտոնավարական պարտականություններով արքունիքում և պետության կառավարման գանազան ճյուղերում: Այդ զինվորական պարտականություններն ու պաշտոնները սահմանում եյին ավագ ու կրտսեր նախարարներն ըստ իրենց հիերարխիական աստիճանի ու դահլիճության: Նախարարները զորք եյին հանում իրենց սեփականության տարածության համեմատ:

Ինչպես կարելի յե յեզրակացնել Զորանամակից, նախարարների շարքում առաջին տեղն եր բռնում Սյունյաց իշխանը, վոր հանում եր 19,400 ձիավոր զորք և ապա հերթականությամբ հիշատակվում են իշխանները, վորոնցից յուրաքանչյուրը պարտա-

կան եր հանել 4000-ից մինչև 1000 ձիավոր: Անտարակույս, սըրանք ավագ նախարարներ էլին, ինչպես ակնբախ է թված անուններից՝ Մամիկոնյան, Բագրատունի, Արծրունի, Ռշտունի և այլն: Մնացյալները, վորոնք դուրս էլին բերում յուրաքանչյուրը 500-ից մինչև 50 ձիավոր, ամենայն հավանականությամբ, կրտսեր նախարարների չարքին էլին պատկանում:

Բացի զինվորական պարտականություններից՝ նախարարներն ստանձնում էլին նաև զանազան համապատասխան ծառայություններ ու պաշտոններ արքունիքում և պետական կառավարման ասպարեզում: Այդ քաղաքացիական պաշտոնն ընդհանրապես կոչվում է գործ, այսուհետև էլ պաշտոնավարությունը՝ գործակալություն, իսկ պաշտոնյան՝ գործակալ[116]: Գործակալությունը, վոր բղխում եր ֆեոդալական հողատիրության իրավունքից, ժառանգական եր համապատասխան նախարարական տոհմերում: Այն գործակալությունները, վորոնք ըստ նախարարական իրավունքի՝ տոհմային ժառանգական արտոնություն էլին, պատկանում էլին, ինչպես ակնհայտ է մատենագրական աղբյուրներից, ավագ նախարարներին: Այդ գործակալությունները հետևյալներն էլին.

Ա. Սպարապետություն.— Գլխավոր հրամանատարությունը Հայաստանի բոլոր զորքերի վրա. «Իշխանութիւն բովանդակ ի վերայ ամենայն զօրաց բազմութեան Հայոց Մեծաց» (ՓԲ, IV, գլ. Բ, 68): Այդ գործակալական պաշտոնը պատկանում եր Մամիկոնյան-տոհմին, վորն այդ իրավունքն իրեն եր վերապահում նույնիսկ Սասանյանների տիրապետության, մասամբ նաև արաբական իշխանության ժամանակները, մինչև Բագրատունիների իշխանության վերելքը: Փավստոս Բուզանդացին և Մովսես Խորենացին յերբեմն սպարապետություն բառի տեղ գործ են ածում հունական համանիշ «ստրատելատություն» տերմինը (ՓԲ, IV, գլ. Բ, 68):

Բ. Թագակապ ասպետություն.— Ինչպես բառի իմաստից ակնհայտ է, թագավորի գլխին թագ դնելու պաշտոն է, վոր պատկանում եր Բագրատունիների նախարարական տոհմին: «Թագադիր» տերմինը Բագրատունիների տոհմային ոխտագոն եր: Այս տերմինի հակառակ առումով նշանակությունների մեջ ավելի ճիշտ

պետք է համարել Ն. Ադոնցի կարծիքը. ասպետ— aspet բառը ծագում է իրանական vîδa-pati –ից և նշանակում տոհմի— vîδ պետ— pati[117]:

Գ. Հազարապետություն.— Պատկանում էր Գնունի նախարարական տոհմին: Փավստոս Բուզանդացու խոսքերի համաձայն՝ հազարապետի[118] պաշտոնի մեջ մտնում էին պետության կերկրագործական–տնտեսական և դյուղացիական, նամանավանդ ֆինանսա–հարկային դործերի կառավարումը (IV, գլ. Բ, 67):

Դ. Մարդպետություն.— Սա յուրատեսակ «արքունի դրան» մինիստերություն է, յեթե իմաստավորենք արդիական նշանակությամբ: Այդ դործակալական պարտականության մեջ էր մտնում Արշակունյաց թագավորության ժամանակ արքունիքի և թագավորի կանանոցի կառավարումը, թագավորական կալվածների, ամրոցների, բերդերի և այնտեղ ամբարված դանձերի պահպանության ու հսկողությունը[119] (ՓԲ, IV, ԺԴ, 117. V, Գ, 195. III, ԺԸ, 46—47. Ագ., գլ. ձԺԲ, 414): Այդ պաշտոնը վարում էր Մարդպետ կոչված իշխանական տոհմը: Մարդպետ անունը ծագում է mard-pet բառից, որը նշանակում է պետ, դլուխ մարդերի, մարդ ժողովրդի: Այս ժողովուրդը բնակվում էր Մարդաստան կոչված յերկրում (պատմական Վասպուրականում) և այնուհետև մարդպետ բառը դարձավ տոհմային տիտղոս (AIAO, 417), ինչպես ասպետ և, ինչպես տարբև կտեսնենք, մաղխազ տիտղոսները. V տարում յերբ Մարդպետական իշխանական տոհմը վոչնչացավ, այդ տիտղոսն անցավ Արծրունի տոհմին, որը դրավեց նրա հողերը (ԹԱ, III, ԺԵ, 339):

Մեր մատենագրության մեջ նկատելի յե, որ մարդպետությունը կապված է նաև ինչ–որ արքունի—պալատական պաշտոնի հետ: Այդ բացահայտ է նրանից, որ հաճախ մարդպետ բառին կցված է լինում «հայր» մակդիրը, ինչպես և մարդպետությանը՝ «հայրություն» մակդիրը: Ըստ Փավստոս Բուզանդացու՝ մարդպետը «անուանական կոչեր ըստ դործոյն՝ հայր թագաւորին» (V, Գ., 207)[119]: Պատմագիրները չեն բացատրում, թե ինչ էր նշանակում «հայր» և «հայրություն» տիտղոսները մարդպետության նկատմամբ: Համենայն դեպս մի բան պարզ է, որ «հայր» ու մարդպետ, կամ «հայրություն» ու մարդպետություն

տերմիններըը նույնանիշ իմաստ էին պարունակում: Հիրավի, Ագաթանգեղոսի Պատմութեյան հունական տարբերակում հայկական «մարդպետութեյուն» բառն արտահայտվում է πατρίκιος հայրութեյուն տերմինով[121]: Հայրութեյուն և πατρίκιος հասիմաստ բառերն իրենց նշանակութեյամբ հիմք են տալիս կռահելու, որ մարդպետը, որպես արքունիքում թագավորին ամենից մոտ կանգնած ու բարձրադույն դիրք վայելող անձն, կարող էր միաժամանակ թագավորի ժողովների խնամակալ կամ դատախազ լինել, բռնել հոր տեղը: Այս յենթադրութեյունն ավելի քան հավանական է դառնում, յեթե նկատի առնենք աթաբեկ բառայինույնանիշ (աթա—հայր, բեկ—իշխան) տիտղոսը, որ թյուրքաթաթարական ֆեոդալ թագավորների արքունիքում կրում էին նրանց զավակների դաստիարակները. այնուհետև աթաբեկ տիտղոսն անցնում է պալատական ամենաբարձր պաշտոնին՝ դրան հրամանատարին և այլն:

*Ե.* Մաղխազութեյուն.— Այս դործակալութեյունը վերապահված էր Խորխոռունի նախարարական տոհմին, որի ներկայացուցիչն արքունիքի թիկնապահ դրքի հրամանատարն էր: Մաղխազ տերմինը, ինչպես և տապետ, մարդպետ տերմիններըը, տոհմային տիտղոս էր, որ կրում էր Խորխոռունի նախարարութեյունը: Մաղխազ բառը նշանակում է ընդհանրապես տիրող, իշխան, թագավոր և ծագում է տոորական malʁazu–ից, որից պոյացել է նաև արաբական մելիք տերմինը. (AAIO, 400):

*Զ.* «Գործակալութիւն մեծի դատաւորութեանն».— Գերագույն դատավորութեյուն, որ, ըստ Փավստոս Բուզանդացու՝ պատկանում էր կաթողիկոսին (III, ԺԴ, 36), այսինքն հիերոկրատական պետին:

Կրոնական նախարարների և «սեպուհների» դործակալական պարտականութեյունների մասին մեր մատենադրութեյան մեջ չենք դտնում որոշակի տվյայներ: Սակայն հիշատակվում են մի շարք դործակալութեյունների անուններ, որոնք, ըստ յերևութին, վերապահված էին կրոնական նախարարներին: Մենք արդեն տեղեկացանք վերը նշելու մի շարք ծառայութեյուններ, որոնք կապված էին արքունիքի տնտեսութեյան մատակարարման հետ: Այդ պարտականութեյունները բաշխված էին որոշ նախարարութեյուն-

ներն մ[illegible]. որինակ՝ «չահախոսապետ», «վորսապետ», «տակառապետ», «սենեկապետ արքայից», «վարպետ արքայից», «ղեռնակիրը» և այլն: Բացի դրանից՝ մենք հանդիպում ենք դործակալության զանազան անուններին, վորոնց մի մասի նշանակությունը կարելի չէ կռահել այդ տերմինների բառական իմաստից: Փառքասոս Բուզանդացին հիշատակում է՝ «զաւառաւաներք», «մեծամեծք աշխարհաց», «զանճուց տեարք», «զաւագանաք չինականաց» (IV, ԾԱ, 165—166) և այլն:

Գործակալների թիվը հասնում էր մի քանի հարյուրի: Փավստոս Բուզանդացու ասելով՝ Աբշակ II թագավորի արքունիքում հավաքվում էին 900 գործակալներ (IV, Բ, 68):

3. ԱԶԱՏՆԵՐ.— Այդ, տեսնենք, թե ինչ տեղ էին բռնում «ազատները», ֆեոդալական հիերարխիայի սանդղին ասելով՝ ճանում կանդնած այդ ֆեոդալները, գործակալության պաշտոններում: Նրանք մանր հողատեր ազնվականներ էին, նախարարների չինթափասպաները: Ազատները նույնպես կարող էին գործակալներ լինել, ի հարկե, համեմատաբար ավելի սանդղին ասիճաններում, այն է՝ նախարարական ու թագավորական հողատիրությունների սահմաններում: Նրանք կարող էին լինել, ինչպես նկների և Շահապիվանի եկեղեցական ժողովի կանոնական հոդվածներից, նաև զաւակավորներ (ԿՀ, հոդ. ՃԺ, էջ 76): Հայկական «ազատ» տերմինն, ինչպես արդեն ասված է, իրանա-պարթևական ծագումն ունի և նրա իմաստն ավելի պարզ կլինի, եթե նկատի ունենանք, վոր Հայաստանի նախարարական սիստեմը շատ դծերով նման էր Սասանյան Պարսկաստանի ֆեոդալական կառուցքին: Սասանյան Պարսկաստանում, հիրավի, գոյություն ուներ ազատների բազմամարդ դաս, վորոնք նույնպես մանր ազնվականներ էին և վարում էին ստորադաս վարչական պաշտոններ[122]:

Սակայն ազատների հիմնական ծառայությունը պինվորական էր, և այն էլ հեծյալ: Հայաստանի հեծելազորը, վոր կազմում էր զորաբանակի ծուծը, բաղկացած էր ազատներից: Ուստի այդ զորքը կոչվում էր «ազատազորք», «ազատապունդ», նմանապես «ազատատպունդ կամ ազատախումբ բանակ»: Այսպիսով, ազատներն արտաքին հատկանիշով ներկայացնում էին ֆիավորների

դաս, նման հին Հռոմի ordo equester կոչված ձիավոր դասին կամ միջնադարյան Յեվրոպայի գերմանական Ritter և ֆրանսիական chevalier դասերին:

Ազատների հնձելագործային ծառայության այդ առանձնահատուկ բնույթը դանում ենք նաև Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքում. «Եւ պիշխանքս դատէ իշխանաց իշխանն՝ իշխանօք և իրենց տեսովն, նոյնպէս զազատսն, որ են ի մերս ձիաւորքն և լիճ ճորտերն»[123]: Ինչպես յերևում է, Սմբատ Գունդստաբլը ազատների չարքն է դասում նաև «լիճ ճորտերին», վորպիսի տերմինը թարգմանորեն վերաբերված է ֆրանկների ֆեոդալական սիստեմում գոյություն ունեցող homme lige անունով սոցիալական դասից:

Այնուհետև, ազատներն այդ ծառայությունը կատարում էին իրեն վասսալները, վորոնք տերում էին իրենց անհողից, այսինքն նախապարից, ստացած հողերին պայմանական հարաբերություններով:

Հայ մատենագրության մեջ ազատների հետ միասին հաճախ հիշատակվում են նաև ոստանիկներ կամ ոստանի մարդիկ: Ժամանակով այս տերմինի չուրջը հայ պատմագիտության մեջ արտահայտված հակասական կարծիքների տեսության մեջ[124], դանում ենք, վոր այդ յերկու տերմինները՝ ազատներ ու ոստանիկներ նույնանիշ են, ներկայացնելով միևնույն սոցիալական խավը, այն տարբերությամբ միայն, վոր ոստանիկները նստած էին թագավորի հողի վրա, Ոստանում: Ըստ Հ. Հյուբշմանի ստուգաբանության՝ հայերեն «ոստան» տերմինը փոխ է առնված պահլևիի ôstân բառից, վոր նշանակում է «արքունի յերկիր կամ քաղաք»: Այդ հետևությամբ Հ. Հյուբշմանը «ոստանիկ» թարգմանում է՝ արքունի կամ թագավորական յերկրից ծագող ազնվականներ կամ զորապետեր[125]: Հ. Հյուբշմանի ստուգաբանությունն ու մեր կարծիքը հաստատվում են Եղիշե պատմագրից քաղված հետևյալ ցիտատներով.

«Բազում և այլ ազատ մարդիկ, որ Ոստանիկսն անուանեն՝ յարքունի տանէ» (IV, 119):

«Եւ բազում ևս այլ ազատ մարդիկ. են որ յարքունի տանէ, և են որ ի տանէ նախարարացն իսկ նոցուն» (VIII, 251):

«Գունդ կազմէր ՚ի Հայոց մեծաց զազատ և զազատորդի և յարքունի տանէ զտստանիկ մարդիկ» (I, 16):

Ուրեմն վոստանիկները արքունի յերկրում, ինչպես և ազատները նախարարական յերկրներում կազմում էլին ղինվորական դաս: Իսկ Եղիշեյի հետեյալ խոսքերը՝ «բաղում և այլ այրուձի, որ յարքունի տանէ անտի էր» (III, 91), հիմք են տալիս յենթադրելու, վոր արքունի յերկրից, այն է՝ Ոստանից յեկած այրուձին, սոցիալական տեսակետից նույնն եր, ինչ վոր նախարարական յերկրների այրուձին, վոր բաղկացած եր ազատներից և կոչվում եր ազատազորք կամ ազատագունդ:

4. ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՐԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.— Տեսանք, ստանելով թագավորական իշխանության և նախարարների վաստականության հարաբերությունները հողատիրության ու ծառայության բնագավառներում, հանդիպում ենք մի հետաքրքիր ու կարևոր հարցի, թե արդյոք նախարարները, մանավանդ Արշակունյաց շրջանում, հարկ վճարո՞ւմ էլին իրենց այդպիսի թագավորին: Այդ հարցն ինքնին առաջ և դալիս, քանի վոր հայ մատենագրության մեջ այդ մասին վորոշ բան չի հաղորդվում: Այդ լռությունը հիմք և ծառայել մի շարք պատմագետների՝ ժխտողական կարծիք հայտնելու նախարարների հարկատվության մասին: Մատենագիրների այդ լռությունը դեռևս չի կարող ապացույց լինել, վոր նախարարները չեյին կրում հարկային պարտավորություններ թագավորի հանդեպ: Ջե՞ վոր մեր պատմագրության մեջ կարևոր շատ բաներ անտեսության են մատնվել և միայն արդի պատմագիտական հետազոտությունների ու քննությունների շնորհիվ են յերևան հանվել ու լուսաբանվել: Այդպիսի վիճակի յե յենթարկվել նաև նախարարների հարկային պարտավորությունը, վորը թեպետ այնքան սովորական ու բնական յերևույթ և թվացել մեր պատմագիրներին, վոր ավելորդ են համարել հիշատակելու կամ արժեք չեն տվել արձանագրելու այն: Ճիշտ է, վոր նախարարությունների կողմից թագավորներին հարկ վճարելու հարցը պաշտպանող պատմագետներն էլ բավականաչափ համոզիչ ապացույցներով չեն հաստատում իրենց տեսակետը:

կարծում ենք, որ տեսակետորեն մոտենալով այդ հետաքրքրական խնդրին, կարելի է ընդունել նախարարների հարկատվության պարտավորությունն առ իրենց թագավորը: Եվթե Հայաստանում հողային սեփականությունը չեղել է պետական ու կապապարվել է թագավորի գերագույն իշխանության մեջ, իսկ նախարարներն ոգտվել են, այդ հողերը ստանալով պետությունից կամ նրան դլխավորող թագավորից տիրության իրավունքով, ապա արտադրանորեն հետևում է այն իրավաբանական դրույթը, որ նախարարների այդ հողատիրությունը, լինելով պայմանական, կապված եր թագավորի գերագույն հողային սեփականության իրավունքի հետ մի՛շ միայն «ծառայությունով», այլ և իրական նյութական կախումով, որը կարող եր արտահայտվել հարկային պարտավորությամբ: Այս կենթադրությունն ավելի քան հավանական է դառնում, եթե նկատի ունենանք, որ նախարարական Հայաստանի բովանդակ սոցիալ-տնտեսական կառույցը հիմնված եր բացառապես արտադրության ֆեոդալական յեղանակի վրա, որտեղ հողն արտադրության հիմնական միջոց է և թագավորի գերագույն սեփականության իրավունքի մեջ է մտնում:

—Մեր կենթադրությունը ավյալ հարցի նկատմամբ կարելի է հաստատել մի քանի պատմական վկաստերով, որոնք թեև այնքան էլ շատ չեն, բայց կարծում ենք՝ որոշ չափով համոզիչ են:

Պատմական ավյալներից ակնհայտ է, որ Արշակունյաց դինաստիայի անկումից հետո Պարսկաստանի գերիշխանության տակ անցած Հայաստանը հարկ եր վճարում Սասանյան թագավորներին, մարզպաններին միջոցով: Վաստակ Այուբին, որ մարզպան եր, ասում է. «Հարկքս ամենայն աշխարհիս Հայոց առ քս են, և գործակալք ամենայն յիմում ձեռին են» (ՂՓ, դլ· ԽԵ, 179):

Ինչպես ակնարկել ենք վերը, Հայաստանի պարսկական մասում Սասանյան թագավորները նախարարական սիստեմն ու վարչա-պետական կաղմը գրեթե անփոփոխ եյին թողել: Միայն հայ թագավորի իշխանության վերացումից հետո, Սասանյան

թագավորների, որպես Հայաստանի դերադույն սյուներենի կողմից նշանակված մարզպանները, որոնք հանդիսանում էին պարսկական դերիշխանության ներկայացուցիչը Հայաստանում, կատարում էին տեղական նախկին կենտրոնական իշխանության ֆունկցիաները: Հետևապես, եթե «գործակալը ամենայն» ու «հարկը ամենայն աշխարհի Հայոց» մարզպանի ձեռքին էին, ապա այդ իրավունքը ժառանգություն էր մնացել նախորդ Արշակունի թագավորներից և վերանցվել էր ամսամատիկ կերպով մարզպաններին: Նկատի առնելով նախարարական սիստեմի խիստ ֆեոդալական բնույթը, երբ յուրաքանչյուր նախարար իր յերկրի լիակատար տերն էր վարչական ու տնտեսական տեսակետից, մանավանդ հողային ռենտայի, պետք է ենթադրել, որ Սասանյանները Հայաստանից պահանջվող հարկը հավաքում էին ո՛չ թե իրենք անմիջապես տեղական բնակչությունից, այլ ստանում էին նախարարներից, որոնք, անշուշտ, այդ հատուցանում էին, իրենց չինականներին չահագործելով: Այդպիսի կենսագրության հիմք են ծառայում Ղազար Փարպեցու բնորոշ խոսքերը, որոնք դրված են պարսից Հազկերտ թագավորի բերանը: Վերջինս մեղադրում է մարզպան Վասակ Սյունուն, որ սա պատճառ է եղել Վարդան Մամիկոնյանի և այլ նախարարների անկմանը հակապարսկական պատերազմում, որի հետևանքով ինքը դրկվել է նրանցից ստանալիք հարկերից, ուստի այդ հարկերը հրամայել է պահել Վասակից. «Եւ դ՚հարկեր պիտոյ աշխարհին Հայոց... զոր ապաներն, և զկատասին այնչափ զոր հանէր՝ հրամայեցաք խնդրել ՚ի տանէ քումմէ յորդւոց քոց՝ մինչև վճարեսցի ամենայն» (ՂՓ, պլ. ԽԶ, 182):

Եթե հայ թագավորներն Արտաշատյան ոստանում՝ իրենց անձնական պատկանող ֆեոդալական յերկրում, հարկերն անմիջապես ստանում էին իրենց չահագործման ենթակա խոշոր արտադրողներից, ապա միանգամայն հավանական է, որ վասալ ֆեոդալական յերկրներում նրանք հարկեր չեյին կարող ստանալ բնակչությունից, այլ նրանց վրա իշխող նախարարներից, որոնք իրենց հողային ռենտայից որոշ մասը վճարում էին սյուզերեն թագավորին հողատիրության պայմանականության հիման վրա:

Այդ հարկերը նախարարներից, ըստ երևույթին, պահանջվում էին նրանց հողերի ու բնակչության քանակի համեմատ: Դրանով պետք է բացատրել, որ Սասանյան կավազ և ապա Խոսրով Թագավորները ձեռնարկել էին հողերի ու աղբարնակության ընդհանուր համարակալության:

Մի այլ մասնագրական վկայությունից նույնպես կարելի է եզրակացնել, որ հարկերը վճարում էին Պարսից թագավորներին հենց իրենք նախարարները: Հաղկերտ Սասանյանի մահից հետո հայ ազատամարտ նախարարները ջարդում են Հայաստանում տեղած պարսկական զորքերին և ապանում նրանց ղորպետներին, ապա իրենք գրվելով, ապավինում են ամրոցներում և սարերում: Դրա հետևանքով Հայաստանում երեք տարի անիշխանություն էր տիրում, «վասն որոյ պակասեալ լինէին հարկք արքունի» (ՄԽ, III, գլ· ԾԶ, 341—342):

Վերջապես նշենք մի ուշագրավ պարագա, որ զարտուղի ապացույց է նախարարների կողմից թագավորին վճարվող վասալական հարկի: Արշակունի թագավորները, բացի իրենց սեփական Արարատյան յերկրում ունեցած ամրոցներից, ուր պահվում էին արքունի դանձերն ու հարստությունները, ունեյին նաև այդպիսի ամրոցներ զանազան նախարարական յերկրներում· Անգեղ բերդը՝ Անգեղատան գավառում (ՓԲ, IV, գլ· ԻԴ, 146), Անի՝ Դարանաղյաց գավառում (ՓԲ, Անդ), Արտագերս (ՓԲ, IV, գլ· ԺԹ, 133· գլ· ԾԷ, 174), Դարյունից կամ Դարոնից բերդ՝ Կովկաս յերկրում (ՓԲ, III, գլ· Խ, 16· V, գլ· Ա, 191), Ողական՝ Տարոնում (ՓԲ, V, գլ· Գ, 195): Անտարակույս, այս թագավորական ամրոցները, ուր պահվում էին թագավորական դանձերն ու հարստությունները, այն կենտրոններն էին նախարարական յերկրներում, վորոնք ծառայում էին իբրև տեղական իշխանություններից հավաքված արքունի տուրքերի պահեստներ:

Վերն արծարծված մեր կարծիքն ավելի ևս հաստատվում է, յեթե ուշադրության առնենք նաև Հայաստանի այն մասը, վոր Աբշակունիների անկումից հետո անցել էր Բյուզանդական իշխանության ներքո: Թեև մեզ հասած պատմական տեղեկություններն այն արքունի տուրքի մասին, վոր նախարարները (սաս-

բաղնիքը) վճարում էին բյուզանդական կայսրին, այնքան էլ պարզորոշ չեն հռոմեական աղբյուրներում, այնուամենայնիվ նրանք հիմք են տալիս հավանական ենթադրություններ անելու: Հայ նախարարները, ինչպես Բյուզանդիոնին ենթակա այլ վասալ թագավորները ու իշխանները, պարտավոր էին տալ Բյուզանդական կայսրին այսպես կոչված aurum coronarium— «թագի կամ պսակի վոսկի»: Ն. Ադոնցը, հիմնվելով հռոմեական մի դեկրետի[126] բովանդակության լոկ արտաքին իմաստի վրա, վոր Ծոփքի նախարար Գադդանից ապօրինի յեր վերցված հիշյալ վոսկին, կարծիք է հայտնում, թե դա կամավոր նվեր եր վասալներից (AAIO 113—114): Նույն տեսակետին է հարում նաև Հ. Մանանդյանը: Սակայն վերոհիշյալ կայսերական դեկրետից ակնբախ է, վոր aurum coronarium–ը հին սովորությամբ սահմանված պարտավորություն եր, վոր «ի նշան անձնվիրության դեպի հռոմեական կայսրությունը՝ բոլոր սատրապները (նախարարները) իրենց սեփական միջոցներից պետք է պատրաստեն վոսկու պսակը»[127]: Կարիք չկա ապացուցելու, վոր այստեղ խոսքը վո՛չ թե կամավոր նվերի, այլ սահմանված պարտավորության մասին է. այն իր էությամբ քողարկված հարկ եր, անկախ նրա քանակային չափից, վորով բնորոշվում եր նախարարի (սատրապի) հպատակությունը կայսրին, վասալական կախումը դերագույն սյուզերենից: Վոր aurum coronarium–ը պարտադիր հարկի մի ձև եր, յերևում է նաև նրանից, վոր բյուզանդական աղբյուրներում հիշատակվում են նաև սատրապների կողմից վճարելի յերկու հոմանիշ հարկերի մասին: Անաստասիոս կայսրի մի հրովարտակում (496 թ.) հիշատակվում են այսպես կոչված τὰ ἀρμενιακὰ δημόσια—«հայկական տուրքեր», հարկեր: Թե ինչ հարկեր եյին դրանք, մեզ անհայտ է, բայց մի բան պարզ է, վոր այդ հարկերն, ամենայն հավանականությամբ, վերցվում եյին հայ սատրապներից: Մյուս հարկի մասին հաղորդում է Պրոկոպիոս պատմագիրը (Proc. Aed., էջ 249), վորից պարզվում է, վոր սատրապները պետական հարկ, φόρους δημοσίους, եյին վճարում: 502 թ., յերբ պարսկա–բյուզանդական պատերազմ եր, Ծոփքի սատրապը (նախարարը, իշխանը), կամենալով փրկել իր յերկիրն և հպատակվել պարսից կավադ թագավորին,

նրա առաջ և դուրս դալիս, ունենալով իր հետ յերկու տարվա պետական հարկերը, վոր վճարում եր բյուզանդական կայսրին:

Այսպես ուրեմն, մի կողմից՝ այն վասալը, վոր Պարսկական Հայաստանում և Բյուզանդական Հայաստանում նախարարները վճարում եյին, իրեն վասալներ, արքունի հարկ, իսկ մյուս կողմից՝ այն հանդամանքը, վոր Պարսկական Հայաստանում և սկզբնական ժամանակաշրջանում նաև Բյուզանդական Հայաստանում անխոտոր եր մնացել նախարարական սիստեմն իր բոլոր իրավական ինստիտուտներով, կուվան են հանդիսանում կարծելու, վոր այդ արքունի հարկին ավտոմատիկորեն փոխանցվել եր Արշակունյաց Հայաստանից: Այդ միանգամայն հավանական է, մանավանդ վոր մեզ հասել են տվյալներ, վորոնք ակնարկում են նախարարների կողմից Արշակունի թագավորներին արքունի հարկ վճարելու մասին: Վոր իրոք այդպիսի պարտադիր սովորույթ կամ որենք գոյություն և ունեցել, այդ ակներև է, ինչպես կտեսնենք ստորև, Բագրատունյաց Հայաստանի թագավորի ու նախարարների վասալական հարաբերություններից, վոր Բագրատունիները ստիպված եյին Արշակունյաց թագավորության կարգերի հետևողությամբ:

5. ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ.—Յերե նախարարներն, իրեն վասալներ, վորոնց հողատիրությունը պայմանավորված եր վորոշ ծառայությամբ առ թագավորն և այդ ծառայությամբ նրանք համարվում եյին կենտրոնական իշխանության, այն է՝ թագավորի զորածակատները, ապա իրենց յերկրների ներքին դործերում նրանք վայելում եյին լիակատար իրավունք: Այստեղ և, վոր նախարարական իրավունքը հանդես եր դալիս իր բնորոշ հատկություններով: Տանուտերն իր նախարարական տերիտորիայում, վորպես նախարարական տոհմի դլխապետ, նույն դեպարտական իշխանությամբ եր ոժտված, նույն դերագույն իրավունքի տերն եր համարվում, նույն սենիորն եր վասալ կրտսեր նախարարների ու ազատների, ինչպես և թագավորն ամբողջ պետական տերիտորիայում: Տանուտերն եր հոգում իր նախարարության մեջ հարկեր հավաքելու մասին, այսինքն՝ տնօրինում եր իրեն պատկանող հողային ռենտան, դատ եր տեսնում իր

հպատակների վրա, դրել էր ժողովում, որի հրամանատարությունն ինքն էր կատարում և այլն:

Նախնարարական այդ իրավունքը, որ կենտրոնացած էր տանուտերի ձեռքին, ծագել էր ու զարգացել դարերի ընթացքում՝ նախորդ տոհմային պատրիարխատական հասարակակարգից: Հենց «տանուտեր» տերմինը նույնանիշ է տոհմապետ բառին, որ վերապրումային ձևով պահպանվել է տոհմային կազմակերպությունից, երբ վերջինս, սոցիալապես արմատվելով ու դասակարգայնորեն կառուցվելով, դարձել էր ֆեոդալական հասարակություն: Արխայիկ տոհմապետն, այն է՝ տոհմի ավագադուխը, տոհմի ներքին գործերի ու հարաբերությունների վեհապետն, ռազմական առաջնորդի՝ բոլոր հասարակական ֆունկցիաներն ու պարտականությունները կենտրոնանում են դասակարգայնորեն վերաստեղված բռնանդակությամբ այն իրավունքի ու իշխանության մեջ, որ յուրացրել էր սոցիալ-տնտեսապես ուժեղացած ու քաղաքական նշանակություն ձեռք բերած նախկին տոհմապետը, դառնալով տոհմային մնացյալ մասսայից:

Որ նախնարարական ֆեոդալիզմը, մանավանդ էր վաղադուխն չրջանում, պահպանել էր նախորդ տոհմային հասարակակարգի մնացուկները ու վերապրուկները, այդ ակներև է մի այլ հետաքրքիր ինտեռեսից, որ հայտնի չե հայ մատենագրության մեջ «աչխարհաժողով» անունով: Դա նախկին տոհմային հասարակության մեջ դոյություն ունեցող ավագների կամ տոհմապետների խորհուրդները կամ ժողովներն էին, ուր քննվում էին տոհմին վերաբերող գործերը: Ահա այդ «աչխարհաժողովը» կոչված նախնարարական ժողովներում, որ սովորաբար լինում էր թագավորի ղեկավարությամբ, իսկ թագավոր չեղած ժամանակները՝ կաթողիկոսի նախագահությամբ, բոլոր նախարարների և այլ ֆեոդալ իշխանների մասնակցությամբ քննվում էին ու խորհրդածության առնվում պետության վերաբերյալ գործերը, քաղաքական ճգնաժամերին ծագած կարևոր հարցերը և այլն: Այդ ժողովների մասին մեր հին պատմագիրները սովորաբար գործ են ածում «խորհուրդ արարեալ» կամ «խորհեցան աչխարհօրէն խորհուրդ» դարձվածքները: Այդ ժողովներն աչխարհիկ բնույթ ունեցին և տարբերվում էին այն ժողովներից, որոնք

հայոնք եյին «յեկեղեցական» անունով և դատարվում եյին պատճառան յեկեղեցական-վարչական ու կրոնա-դավանաբանական հարցեր լուծելու, ինչպես և կանոնական իրավանորմեր սահմանելու նպատակով:

Նախարարական ժողովներվ մասին բավականաչափ հիշատակումներ կան մեր մատենադրության մեջ, վորոնցից առաջ բերենք մի քանի որինակներ:

«Արդ միաժողով եղեալ մեծամեծք նախարարացն և 'ի մի վայր եկեալք, խորհուրդ խորհեցան. հաւանեցուցին զթագաւորըն, ածել զծերունին Գրիգորիկ յիւրեանց բանակին, զի ածցեն կացուսցեն զնա իւրեանց գլուխ առաջնորդ, զի նասցէ նա յաթոռն հայրապետական» (ՓԲ, III, գլ· ԺԴ, եջ 38):

«Այսպա յայնմ ժամանակի միաբան խորհեցան աշխարհօրէն խորհուրդ, եթէ ո՛ւմ պարտ եցէ զհայրապետութեան գկաթողիկոսութիւն ունել» (ՓԲ, III, գլ· ԺԷ, եջ 45):

«Այսպա առաւել ժողովեցան իմի ժողով միաբանութեան մարդիկ աշխարհին Հայաստան երկրին, նախարարք մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, պատուարք, պետք, իշխանք· բայց 'ի զօրավարացն, այլ և 'ի շինականաց անդամ ոմանիկ մարդկանն» (ՓԲ, III, գլ· ԻԱ, եջ 54):

«Այսպա ժողով լինէր նախարարացն և իշխանացն, զործակալք և զօրագլուխք, պետք և ամենայն աշխարհաժողովք բարմութեանն եկելոց կուսելոցն» (ՓԲ, III, գլ· Ի, եջ 54), յերբ Տիրան թագաւորի գերութեյան և նրան կուրացնելու մասին լուր հասավ Հայաստան:

«Եւ ժողովեցան եկին ամենայն իշխանքն Հայոց մեծամեծք 'ի մի վայր 'ի միասին, և Մուշեղ սպարապետն և Հայր մարզպետ, և ամենայն իշխանքն ասէին. Զի՞նչ արասցուք կամ զի՞նչ զործեսցուք, խնդրեսցո՞ւք գվրէժ թագաւորին մերոյ, թէ ոչ: Եւ այսպա հաստատեցաւ այս բան 'ի խորհրդեանն, և ասեն. Ոչ կարեմք հնթանալոյ 'ի պարսկաց 'ի ծառայութիւն մատանել, և թշնամի առնել գթագաւորն Ճունայ. և ոչ գերկոսեան թշնամի առնել, և ոչ առանց միոյ թիկանց կարեմք կենալ» (ՓԲ, V, գլ· ԼԹ, եջ 240):

«Զկարացեալ այսպիսի գեղմ և մոլեկան վարուց թագաւորին

Արտաշէսի տանել նախարարքն Հայոց՝ ժողովեցան միահամուռ առ մեծ քահանայապետն Հայոց... և ասեն ցնա՝ ոչ ևս կարեմք այսպիսի անօրէն և պիղծ գործոց թագաւորին համբերել... Սրդ՝ քեզ նախ պարտ է այսպիսի անհնարին աղէտից խնդրել հնարս և բառնալ ի միջոյ զայնպիսի ամբարշտեալ թագաւոր» (ՂՓ, I, գլ. ԺԲ, եջ 39—40):

«Ժողովեցան այնուհետև ըստ հրամանի տանուտէրացն Հայոց սուրբ եպիսկոպոսք ըստ գաւառաց աշխարհին Հայոց... Այսոքիկ ամենեքեան աւագ տանուտէրքն, հանդերձ աւագ սեպհօք և բարեպաշտ եպիսկոպոսօք... պատասխանի հրովարտակին զրէին առ թագաւորն Յազկերտ» (ՂՓ, II, գլ. ԻԳ, եջ 91—92):

«Սակայր այնուհետև խորհուրդ հաւանութեան ընդ թագաւորին և ընդ իշխանան, նախարարօքն և ղօրօքն հանդերձ՝ վասն խաղաղութեան հաստատելոյ, քակել, կործանել, բառնալ զղայթակղութիւնսն ի միջոյ, ի բաց կորուսանել» (Ագ., ՃԸ, եջ 394):

Վերևում բերված որինակները վկայում են, որ նախարարները, չնայած իրենց կենտրոնախույս ձգտումներին ու տեղական ֆեոդալ իշխանության ինքնուրույնության ապահովելու ձգտումներին, այնուհանդերձ կարիք ելին զգում հաստուկ ժողովներ գումարելով «աշխարհօրէն խորհուրդ» անելու՝ ընդհանուր պետական հարցերի մասին, այն է՝ թագավորական իշխանության, պատերազմի, հաստատական անդորրության, նաև կաթողիկոսի ընտրության հարցերի մասին, որոնք կարևոր ելին նրանց դասակարգային շահերի տեսակետից:

6. ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԻԵՐԱՐԽԻԱՆ ՑԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ.—Ֆեոդալական հիերարխիան Հայաստանում չարունակում էր դոյություն ունենալ նաև Արշակունիների անկումից և նույնիսկ Սասանյան տիրապետության վերացումից հետո: Սակայն այդ հիերարխիան արդեն նախարարական սիստեմը քայքայվում էր, կորցրել էր իր նախկին յուրահատուկ բնույթը, որ կազմակերպվել էր դարավոր տրադիցիաների և սովորութական իրավունքի համաձայն՝ նախարարական հասարակական-քաղաքական պայմաններում: Մի կողմից՝ արաբները և մյուս

դողմից՝ Բյուզանդիան ներմուծում էին նոր կարգեր Հայաստանի դասային հարաբերություններում և նոր հիմքերի վրա դնում ֆեոդալական դասակարգի վասսալական կախումը խալիֆատի կամ Բյուզանդիայի սուվերեն իշխանությունից:

Ֆեոդալական նոր կարգեր էին մտցվում Հայաստանի հասարակական–քաղաքական կառուցվածքում նաև արաբների տիրապետության հաջորդ դարաշրջաններում, յերբ ամեն մի նոր նվաճող՝ սելջուկյան, մոնղոլական, թյուրք–պարսկական իշխանությունն հաստատում էր իր կարգ ու կանոնները, յերբ տեղական սոխորությական ու ազգային իրավունքին առընթեր սկսում էր դործել մուսուլմանական իրավունքը: Այս պայմաններում հետզհետե վերանում էին նախարարական կազմի ֆեոդալական տերմինները, տեղի տալով նոր տերմիններին ու անուններին, վորոնք հատուկ էին նվաճողների բերած քաղաքական–հասարակական կառուցքի իրավաբանական նորմերին:

Այսպիսով, արաբական տիրապետության շրջանում Հայաստանի ֆեոդալական հիերարխիան ընդունեց նոր կերպարանք: Ֆեոդալական հիերարխիան, վորի դերադույն աստիճանը ներկայացնում էր սուվերեն սենիորը հանձին խալիֆի, նոր պայմաններում կերպարանափոխվեց այն ուղղությամբ, վոր գաղութերիվ յեղած, ստորացված և ուժասպառ հին ֆեոդալներն, ինչպես և սոցիալ–քաղաքական իրադարձություններում նորելուկ հայ ֆեոդալները, ձգտում էին իրենց դոյությունն ապահովել հզոր և ազդեցիկ իշխանների հովանու տակ: Այդպիսի իշխաններ էին արաբական տիրապետության շրջանում Բագրատունի, Արծրունի և Սյունի նախարարական տոհմերը: Սրանք ընդունակ յեղան պահելու վո՛չ միայն իրենց վաղեմի հասարակական–քաղաքական նշանակությունը, այլ և սկսեցին այժմ դեկավար դեր խաղալ հայ ֆեոդալական միջավայրում՝ չնորհիվ իրենց անտեսական հզորության ու քաղաքական ազդեցության: Նրանք դարձան ինքնուրույն սենիորներ, ունենալով իրենց ձեռքի տակ վասալական ու յենթավասալական ֆեոդալ իշխաններ, վորոնց թիվը միշտ ավելանում էր՝ վերոհիշյալ խոշոր իշխանների ֆեոդալական եքսպանսիայի չնորհիվ:

Այս պայմաններում դերիչխող դիրք դրավեցին սկզբում

Բագրատունիները, որոնց ժամանակ ֆեոդալական հիերարխիան գլխավորում էր ամպատումն այդ տոհմից: Նրանք, ինչպես և մյուս նախկին նախարարները, սկսեցին կոչվել իշխան: Բագրատունի տոհմի ամբողջ, մասնավորապես անմիջական մնացյալ վաղուց իշխանները, կոչվում էր «իշխանաց իշխան», իսկ նույն տոհմի մյուս անդամները, որպես գերիշխող տոհմին պատկանողներ, կրում էին «մեծ իշխան» տիտղոսը: Հետագայում արդեն, երբ կազմակերպվեց Բագրատունյաց թագավորությունը, «իշխանաց իշխան» տիտղոսն անցավ թագաժառանգին: Յերբեմն պատմական հուշարձաններում «իշխանաց իշխան» տիտղոսի փոխարեն հանդիպում ենք նույնանիշ առումով «տէրանց տէր»: Այդպես է լրին անվանում Վանեվանի 903 թ. արձանագրության մեջ Բագրատունյաց թագավորության սպարապետ Շապուհ Բագրատունին, Աշոտ թագավորի վորդին և Սմբատ թագավորի յեղբայրը (ՎՏ, էջ 6):

Նույն յերևույթն ենք նկատում Արծրունյաց և Սյունյաց ֆեոդալական իշխանություններում, որոնք սկզբում վասալներ էին Բագրատունի թագավորների և ապա, անջատվելով, հանդես յեկան որպես նրանցից անկախ թագավորություններ:

Յերբ Բագրատունյաց տոհմի տիրապետությունն այնքան ուժեղացավ, որ «իշխանաց իշխան» Աշոտ Ա. արաբական խալիֆաթի համաձայնությամբ իր ֆեոդալական յերկիրը թագավորություն և լրին էլ թագավոր հռչակեց, ապա նրա վորդի Սմբատն և թոռ Աշոտ Յերկաթն սկսեցին կրել Արևելքում ընդունված «թագավոր թագավորաց» կամ «շահինշահ» տիտղոսը: Այժմ ֆեոդալական հիերարխիայի աստիճանակարգությունը յերկարեց: «Թագավորաց թագավորից» հետո յերկրորդ աստիճանում կանգնած էին Բագրատունիների դերիշխանությունը ճանաչող Արծրունի և Սյունի «իշխանաց իշխանները» լրենց վասալներով հանդերձ, որոնք, ինչպես Բագրատունիների նախկին այլ յենթավասալները, այժմ բռնում էին յերրորդ աստիճանը: Վերջապես չորրորդ աստիճանը բռնում էին ազատները, որպես մանր կալվածատեր ազնվականներ, որոնք, ինչպես և նախարարական շրջանում, կազմում էին «ազատագունդ» հեծյալ զորքը[128]:

Բագրատունյաց դինաստիայի թագավորները ձգտում էին իրենց արքունիքում վերականգնել նախկին Արշակունյաց կարգերն ու ծառայութիւնները, որոնք, ի հարկէ, նոր քաղաքական պայմաններում առանում էին ժամանակին և սովորութիւնների համապատասխան բնոյթ: Վերականգնվեց նաև ֆեոդալական հիերարխիայի այնքան հատուկ դահերեցութեան ինստիտուտը, որի արտահայտիչ հատկանիշն էր «բարձ և պատիվը»: Այդ բացահայտ է 1001 թ. մի վիմական արձանագրութիւնից. «Ես Աշոտ իշխանաց իշխան, որդի Դէոր.... առն քաջի և պատերազմողի, հաւատարիմ եղեալ տանս Հայոց, առի բարձ և պատիւ 'ի Աշոտոյ Շահնշահէ և յորդոց իւրոց»... (ՎՏ, 12): Այդօրինակ բավականաչափ տվյալներ ունենք Թովմա Արծրունու պատմութեան մէջ, որից բերում ենք հետևյալ քաղվածքները.

«Իբրև եհաս թագաւորն [Սմբատ Բագրատունի] յաշխարհն իւր՝ եառ բերել պարգևս և պատիւս Աշոտի ըստ իշխանական յօրինուածի, և դիպուկիկ ձգեալ ի պատիւ դօրավարութեան Հայոց մեծաց, ըստ օրինի թագաւորացն Յունաց՝ տալ առաջի նորա նշանակս խաչազրօշս: Եւ Գուրգինի նորին եղբօրն զպատիւ մարզպանութեան դահակալութեան հավատացեալ, ըստ կարգի բարձաբերձութեան թագաւորացն Հայոց, մանաւանդ մեծին Տրդատայ թագաւորի» (ԹՄ, III, գլ. ԻԴ, 384):

Նույնիսկ արաբական վոստիկանների ու հրամանատարների կողմից առաջարկվում էին հայ իշխաններին խալիֆի անունից «բարձ և պատիվ», նրանք ընդունելին մուսուլմանական կրոնը:

«Սկսաւ խօսել բանսարն բանիւք ողբանօք, և պարգևս և պատիւս մեծամեծս հրամայէ բերել առաջի, և խոստանայր չքեղ և երևելի կացուցանել ի մէջ աշխարհակոյտ ամբոխիդ ի դրան արքունի, և ընդ առաջին իշխանացն լինել առաջի թագաւորին և բարձակից լինել մեծամեծացն արքայի ի գլխաւոր բազմականի անդ, յորժամ առեանն արքունական յարդարիցի» (ԹՄ, III, գլ. Բ, 216):

«Իսկ զօրավարն խոստացաւ երդմամբ տալ նմա զինչ և խընդ-

ըլլայ, մինչև հաւատար իւրոյ տէրութեանն քարձակից և պատուակից կացուսցէ» (ԹՄ, III, դլ. Բ, 230)։

Բագրատունյաց Թագաւորութեան իշխանների վասսալական ծառայութիւնը պահպանում էր ընդհանուր գծերով նախկին նախարարական սիստեմի տրադիցիաները, իհարկե, ժամանակին համապատասխան փոփոխութիւններով։

Պահպանվել էին սպարապետութիւնն ու հազարապետութիւնը։ Սպարապետութիւնն, ինչպես և սպասելի էր, այլևս Մամիկոնյան տոհմի առանձնաշնորհ իրաւունքը չէր, քանի որ Մամիկոնյանները վերացել էին քաղաքական ասպարեզից։ Այդ իրաւունքն անցել էր Բագրատունյաց տոհմի ձեռքը։ Սովորաբար այդ պաշտօնը վարում էր ամենամերձաւոր ազգականը, դվխաւորապես Թագաւորի յեղբայրը, յերբեմն էլ Թագաժառանգը։ Դրանով Բագրատունիները ամրապնդում էին իրենց քաղաքական դիրքն ու ազդեցութիւնը և պահպանում էին իրենց աւենիորական իրաւունքները ֆեոդալական պետութեան պայմաններում, որտեղ տակավին մեռած չէին վասսալական իշխանների կենտրոնախոյս տենդենցները։

Ինչ վերաբերում է հազարապետութեանը, թեև այդ մասին տվյալ դարերի մատենագրութեան մեջ մոչինչ էլ ասանդվում, բայց պետք է յենթադրել, որ նա ո՛չ միայն պահպանել էր իր նախկին եյութիւնը, այլ և ստացել էր ավելի կարևոր նշանակութիւն։ Առևտրական կապիտալի մուտքով ժողովրդական տնտեսութիւնն և ֆինանսական քաղաքականութիւնը Բագրատունյաց Թագաւորութեան պետական ու վարչական պայմաններում դրավիորեն բարդացել էր։ Այստեղ անհրաժեշտ է ուշադրութեան առնել մի եյական նշանակութիւն ունեցող հարց։ Ինչպես վերն ակնարկել ենք, հայ պատմագիտութեան մեջ տիրում էր կարծիք, որ նախարարական Հայաստանում վասսալական իշխանները հարկա-տուրքային հարաբերութիւններ չունեին իրենց սուվերեն Թագաւորի դիմաց։ Այդպիսի կարծիքը դվխաւորապես հիմնվում է այդ հարցի մասին մեր մատենագրութեան մեջ տիրող լռութեան վրա։ Սակայն Բագրատունյաց շրջանի, նկատմամբ արդեն կան, թեև սուղ, տեղեկութիւններ, որոնցից կարելի է եզրակացնել, որ վասսալ իշխանները պարտավոր էին Թագավորական դանձարանին վորոշ տուրքեր հատուցանել։ Անշուշտ,

այդ տուրքերն ու հարկերը վասալական յենթակայության հատկանիշներից մեկն էին: Թովմա Արծրունին պատմում է, թե ինչպես Սմբատ I Բագրատունի իր որբի և վրաց ու Աղվանից իր վասալ իշխանների դլուխն անցած՝ արշավում է դեպի Ատրպատական, որ ենդական Փեոդալ Աբդռահմանի վորդիները ապըստամբել էին, հրաժարվելով «տալ հարկս և պինուորել որպես օրէն էր» (III, դլ. ԻՀ, 394): Նույնանման դեպքի առիթով է ավանդվում Այրարատյաց Սմբատ իշխանի մասին, վոր ըմբոստանում է Բագրատունյաց Բագրատ Սմբատի՝ իր սյուզերենի դեմ, «արդել առնելով հարկացն տալ Բագրատունին»: Այստեղ էլ Սմբատ Բագրատունի իր դերագույն իրավունքը պաշտպանելու նպատակով արշավում է Այրարատ և, հնազանդեցնելով Այրարատի իշխան Սմբատին, ստիպում է վճարել հարկերը (Անդ, 397—398): Նույն Սմբատ Բագրատունի ռազմական արշավանք ձեռնարկելիս ընդդեմ Աշոտ Եմիքի՝ դեսպաններ է առաքում Հայոց Սահակ Բագրատունի, Վրաց Գուրգեն և Աղվանից տեր Ատրներսեհ և այն ժամանակ, «որք սիրողաբար առ նա պինդ պինդ հարկ հարկանէին» (ԹՄ, III, դլ. ԻԳ, 381):

Թովմա Արծրունու պատմության մեջ հիշատակվում են նաև մի քանի նույնորինակ վասալներ, թե ինչպես Բագրատունի Բագրատունիները խոտիլ հետևում էին, վոր վասալ իշխանները հարկերը մուծելին անմիջապես Բագրատունի դանձարանը և վո՛չ թե սպարապետին: Մինչդեռ յենթակա Փեոդալ իշխանները հաճախ, տարված լինելով կենտրոնախույս ձգտումներով, հրաժարվում էին հարկեր վճարել Բագրատունիներին, վորպեսզի թուլացնեն կենտրոնական իշխանության ուժն ու թոթափեն իրենց վասալական կախումը Բագրատունիներից: Տվյալ դեպքում հնարավոր է դուցե կարծել, թե խոսքը վերաբերում է այն հարկերին, վոր Հայաստանը վճարում էր արաբներին: Ճիշտ է, սկզբնական շրջանում արաբական խալիֆները առանում էին հարկերը հայ իշխաններից իրենց վոստիկանների, այսինքն՝ խալիֆական վոխարքաների միջոցով, ինչպես վոր անցյալում Սասանյան Բագավորները առանում էին հարկը նախարարներից՝ մարզպանների միջոցով: Սակայն Բագրատունյաց Բագավորության հիմնադրության ժամը՝ այդ հարկն արդեն խալիֆին ներկայացնում էին, իբրև

տուրք, իրենք հայ թագավորները, վորպես խալիֆի անմիջական վասսալներ: Իսկ այդ տուրքը հարկահանվում էր անմիջական արտադրողներից՝ թե՛ թագավորի ձեռքով իր անմիջական կալվածքներից և թե՛ վասսալ ֆեոդալների կողմից իրենց յենթակա չինականներից, ընդ վորում այդ հարկերի մեծ մասը դառնում էր ֆեոդալների սեփականություն և միայն վորոշ մասը մտնում էր թագավորի գանձարանը: Բագրատունի թագավորները, հենվելով իրենց ֆեոդալական այուղերենիեաների և քաղաքական ուժի, նամանավանդ խալիֆաթի կողմից հաստատված իրավունքի վրա, իրենք էլին ստանում պետական ռենտան, այսինքն՝ հարկերն ստանում էլին վոչ միայն իրենց կալվածքների անմիջական արտադրողներից, այլ և վասսալ ֆեոդալներից, - վորոնք, իրենց հերթին, հարկերը էլին ստանում սեփական կալվածներում անմիջական արտադրողներից: Բագրատունի թագավորներն այդ տեսակ հարկային քաղաքականությամբ թե՛ իրագործում էլին ֆեոդալական չահագործումը և թե՛ ամուր կախման մեջ էլին պահում իրենց յենթակա վասսալ իշխաններին: Ահա այդ հողային ռենտայի հետ կապված ու բարդացած հարկային սիստեմը, նամանավանդ առևտրա-վաշխառուական կապիտալի հետևանքով զարգացող վաճառականությունն ու մաքսային քաղաքականությունը բնականորեն ստեղծում էլին պետական ֆեոդալական անտեսություն, վորը պտնվում էր հազարապետի դերատեսչության ներքո:

Բացի սպարապետությունից ու հազարապետությունից, մենք դտնում ենք Բագրատունյաց ֆեոդալական պետության մեջ նաև մի այլ ծառայություն՝ մարզպանություն, վորի մասին տեղեկություններ չունենք նախարարական Հայաստանում: Այդ ծառայությունը պատկանում էր մի ժամանակ Պահլավունի տոհմին, մարզպան էր կոչվում իշխան Սմբատ (ՎՏ, 16, 19, 20, 21), այնուհետև հիշատակված է իշխան Աշոտը (ՎՏ, 23), նմանապես իշխան Գուրգենը մարզպանի տիտղոս է ստանում Սմբատ Բագրատունի թագավորից (ԹՄ., III, գլ. ԻԴ., 384): Բագրատունյաց շրջանի պատմագիրները վորոշ տեղեկություններ են տալիս այդ պաշտոնի էության մասին, ուստի այդ ծառայության ֆունկցիաները կարելի է վորոշել յենթադրաբար:

Այդ ծառայությունը մի վերապրուկ է Սասանյան տիրապե-

տուքյան դարերից, երբ Սասանյան թագավորները Հայաստանում նշանակում էին վորպես իրենց տեղակալ ու ներկայացուցիչ, վոխարքա՝ մարզպաններ: Մարզպանների միջոցով էր պահպանվում հայ նախարարների վասսալական կախումը Սասանյան թագավորից, մարզպանների միջոցով էին հավաքվում տուրքերն ու հարկերը Հայաստանի նախարարներից՝ Սասանյան դասճարանին ներկայացնելու համար: Սասանյան մարզպանության այդ բնորոշ գծերը հիմք են տալիս կռահելու, վոր Բագրատունյաց Հայաստանում այդ ծառայական տիտղոսը կրում էին ոտար թագավորների հետ հարաբերությունների դործը վարող իշխանները: Սրանք յուրատեսակ արտաքին դործերի մինիստրներն էին, յեթե այն անվանենք արդիական առումով:

Հերակլ, հնչատակված Ապղաբուկ մարզպանը Սմբատ Բագրատունուն հրովարտակով, վորպես արտակարգ դեսպան, ուղարկվում է Բյուզանդիոն, Միքայել կայսրի մոտ, հատուկ հանձնարարությամբ (Վ.Տ, 19):

Վերջապես Բագրատունյաց շրջանի մատենագրության մեջ հիշատակվում է իրրև բարձրաստիճան ծառայություն՝ տանուտերություն (ԹՈ., III, գլ. Բ, 218, գլ. ԺԸ, 346): Այդ ծառայությունը հատատավել էր Արշակունյաց անկումից հետո, Սասանյան տիրապետության ժամանակ, և բարձրադույն պաշտոն համարվելով, հանձնվում էր ամենադույն նախարարին, վոր դեկավորում էր բոլոր նախարարներին և հանդիսանում նրանց սենիորը: Այստեղ նկատում ենք հետևյալը. Արշակունյաց շրջանում տանուտերն, այլապես նահապետը, միևյն նախարարական տոհմի ամենադույն ներկայացուցիչն էր տվյալ կալվածքի սահմաններում, իսկ Սասանյան շրջանում այդ տերմինի նշանակությունը լայնանում է, դառնալով համահայաստանյան պետական տիտղոս, վոր վերապահվում էր ամենադույն նախարարին, իրրև Հայաստանի ներկայացուցչին Սասանյան արքունիքում: Այդ առումով էլ Սասանյան Հայաստանը, մինչև սրա յերկրորդ բաժանումը Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև (591 թ.), կոչվում էր նաև յերկիր տանուտերական:

Նման բնորոշ է, վոր Թովմա Արծրունին վերոհիշյալ ծառայություններն, այն է՝ զորավարություն (սպարապետություն),

մարզպանության, տանուտերության վորակում և պատիվ տերմինով (III, գլ. Բ, 218· գլ. ԺԸ, 346· գլ. ԻԹ, 384), վորպիսի պարտական ցույց և տալիս նրա սերտ աղերսը ֆեոդալական հիերարխիական սիստեմի հետ: Ցերբևին էլ, ըստ Թովմա Արծրունու, բարձրագույն աստիճանի պաշտոնյաները կոչվում են սեպուհական՝ «սեպուհ թիկնապահ իշխանք», «այլք ՚ի սեպուհ պաշտոնէից» (ԹՄ, III, գլ. Բ, 219):

Հիերարխիական ավելի ստորին աստիճաններում կանգնած իշխանները և սրանցից կախված ազատները Բագրատունյաց պետության մեջ վարում էին համապատասխան աստիճանի պաշտոններ, վորոնք կոչվում էին գործակալություն (ԹՄ, III, գլ. ԺԵ, 339, գլ. Ի, 362), մի տերմին, վոր, ինչպես տեսանք, դոյություն ուներ տակավին նախարարական շրջանում: Այդ գործակալների շարքում տեսնում ենք մարզպետներ, այսինքն՝ մարզերի պետեր, կողմնակալներ, կուսակալներ, գավառակալներ կամ գավառապետներ, բաղաքապետներ, գորագլուխ աշխարհի, վորոնք տեղական մարզային գործի հրամանատարներն էին (ԹՄ, III, գլ. Ա, 210· գլ. Բ, 223, գլ. Ի, 369):

7. ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՑ ՀԵՏՈ.— Ինչպես ակնհայտ է վերևում բերվածներից, Բագրատունյաց ֆեոդալական պետության ծառայություններն Արշակունյաց նախարարական շրջանից փոխ առնված անուններ են կրում, վորոնք մեծ մասամբ պարթևա-իրանական ծագումն ունեն: Սակայն այդ անունների հետ միասին Բագրատունյաց թագավորության մեջ յերևում են նաև ծառայությունների հունական անուններ: Այդ բնական եր, քանի վոր Հայաստանի բաժանումով Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև, Բյուզանդիոնի քաղաքական ազդեցության զարգացումով՝ մուտք են գործում Հայաստան պետական ու վարչական իրավունքի հունական տերմիններ: Փոքր Հայքում, վոր վաղուց Բյուզանդական կայսրության տերիտորիալ անբաժան մասն եր կազմում, տիրապետում էին արդեն բացառապես բյուզանդական անուններ: Այդ հունական անուններն հետզհետե թափանցում էին նաև Մեծ Հայքի սահմաններն, մանավանդ, յերբ նրա մի մասն ընկավ Բյուզանդիոնի տիրապետության տակ, և առավե-

Լատին արաբական տիրապետության շրջանում, երբ խալիֆաի թուլացումով, բյուզանդական ազդեցությունն ուժեղացավ Մեծ Հայքում: Այդ բյուզանդական տերմինները դեռևս այնքան էլ աչքի չեն ընկնում Բագրատունյաց թագավորության որոշ, երբ հայ թագավորները ձգտում էին վերականգնել նախկին նախարարական շրջանի ֆեոդալական տերմինները: Միայն Բագրատունյաց անկումից հետո, երբ Հայաստանն ընկավ բյուզանդական կայսրների կողմից նշանակված վարչապետների ձեռքը, հունական տերմինները բացարձակ գերազանցություն ստացան, և հետագայում, նույնիսկ սելջուկյան ու մոնղոլական տիրապետությունների ժամանակ, լայն կիրառումն ունեցին հայ ֆեոդալական միջավայրում:

Բագրատունյաց շրջանում հաճախ հանդիպում ենք կուրոպալատ տերմինին, որը, ըստ ներևութին, համապատասխանում է հայկական «իշխան իշխանաց» տիտղոսին: Այդպես էր կոչվում վասպուրականի «իշխանաց իշխան» Աշոտ Ապծրունին (ՏՄ, III, դլ. ԺԹ, 353): Նաև հանդիպում է «անտիպատ-պատրիկ» տերմինը, որպիսի տիտղոսով է անվանվում «իշխանաց իշխան» Վահրամ Պահլավունին (Մարմաշենի արձանագր. 1029 թ., Վ.Տ, 16):

Այնուհետև բավականին հաճախ հանդիպում են այնպիսի տիտղոսներ, ինչպես՝ մագիստրոս, հյուպատոս, ապոհյուպատոս, դուկ, վեստես, կատապան: Մեր մատենագրական աղբյուրները բնավ չեն պարզում, թե այդ տիտղոսները կրող հայ ֆեոդալների ի՛նչ տեսակ ծառայություններին կամ պաշտոններին էին համապատասխանում հունական տերմինները: Մեզ թվում է, որ հայ ֆեոդալական միջավայրում այդ տիտղոսները վո՛չ թե պաշտոնեական կոչումներ էին, ինչպես Բյուզանդիայում, այլ միայն սոցիալ-հիերարխիական նշանակություն ունեին՝ տիրապետող իշխանական դասին պատկանողների աստիճանը ցույց տալու համար: Այսպես օրինակ՝ հիշատակվում են «Գրիգոր Մագիստրոս», (Վ.Տ, 14, 18, 22, 23 և այլն), «Սարգիս դուկ արևելից» (Վ.Տ, 17, 20), որը նմանապես կոչվում էր «արևելից վեստ» (Վ.Տ, 22) և այլն:

Երբ Բյուզանդիոնը վերջին Բագրատունիների, Անիի թա-

դավոութեան, անկումից հետո դրավեց Հայաստանը, նա նշանակում էր իր կողմից Հայաստանի ընդհանուր կառավարիչ, որ կոչվում էր մագիստրոս: Այդ մագիստրոսները, որոնք հայեր չէին և նստում էին Անի քաղաքում, յերբեմն կոչվում էին նաև կատապան[129]: Այդպիսի մի քանի կառավարիչների անուններ մեզ հայտնի չեն վիմական արձանագրութիւններից, ինչպես օրինակ՝ Մագիստրոս Արոն (1054 թ.), ազդով բուլղարացի (Վ, 27), Մագիստրոս Բագրատ, որ միաժամանակ կոչվում էր և կատապան (1064 թ.), ազդով վրացի (Ibid.), այնուհետև Մագիստրոս Յոհան Մոնաստերիոտ[130]:

Անտարակուսա, վերոհիշյալ անձերի սիտղոսները պաշտոնեական էին և վորոշում էին Հայաստանի կառավարչին վորպես դերագոյն տուիճան ունեցող բյուզանդական պաշտոնեայի: Մագիստրոս, դուկ, կոմս և այլ տերմինները նոր բան չէին Հայաստանի համար, յերբ վերջինս բաժանվեց Սասանյան Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև: Բյուզանդական Հայաստանում հետզհետե մուծվում էր պետական-վարչական սիստեմն ըստ բյուզանդականի, վոր առանձնապես կարուկ կերպով արտահայտվեց 531 թ. Հուստինիանոս կայսրի ժամանակ, յերբ Հայաստանի զինվորական ու քաղաքական կառավարումը հիմնովին վերափոխվեց: Հայաստանի բյուզանդական մասի դերագոյն կառավարիչը նշանակվում էր կայսրի կողմից և կոչվում էր magister militum = զինվորական մագիստրոս, կամ ստրատեգ: Սրան յենթակա էին տեղական կառավարիչները, վորոնք կոչվում էին դուկ: Իսկ մինչև Հուստինիանոսը Հայաստանի դերագոյն կառավարիչը կոչվում էր comes Armeniae: Ուշագրավ է, վոր այդ comes-ի մասին հիշատակում է Մովսես Խորենացին. «Եւ այնուհետև ոչ ևս կացուցին Յոյնք 'ի բաժին իւրեանց թագաւոր, այլ առաքինորդ էր նախարարացն այնր կոչման քաջն Գագաւեն. և աշխարհին իւրեանց մասինն կացուցին Յոյնք կոմիս իշխան» (III, գլ. ԽԶ, 321): Բյուզանդական comes տերմինը, վոր հայերեն կոմս էր հնչվում, պահպանվել էր նույնիսկ մեր միջնադարյան ֆեոդալական սիստեմում: Մարտ վանքի 1301 թ. արձանագրության մեջ Սյունյաց իշխան Տարսայիճը կոչվում է «մեծ կոմս»: Կասկածից դուրս է, վոր այստեղ հին բյուզան-

դական comes տերմինը կորցրել է իր նախկին իմաստավորումն ու հանդես է գալիս սոսկ իբրև սոցիալ-հիերարխիական աստիճանը վորոշող տիտղոս, վոր յուրացվել էր այդ ֆեոդալ-իշխանի կողմից: Նույնն էր կատարվում, ուրեմն, մագիստրոս, դուկ և այլ տերմինների հետ, վորոնք, իբրև տիտղոսներ, դրծադրում էին հայ ֆեոդալ իշխանները մինչև դարերում, Բագրատունյաց թագավորության անկումից հետո:

Սակայն սելջուկյան արշավանքների հետևանքով, յերբ հայ ֆեոդալականությունն ուժասպառ էր յեղել և հյուծվել, տեղի տալով մուսուլման նվաճող ֆեոդալներին, վորոնք հաստատվեցին այստեղ, սկսեց արմատանալ թյուրք-պարսկական ֆեոդալական տերմինաբանությունը: Այդ նորամուտ ֆեոդալական տերմինները հայ միջավայրում առանձնապես արտահայտություն ունեցան, յերբ սելջուկներից ազատված Հայաստանն իր վերականգնված և մի չարք նորելուկ ամատական իշխաններով, դարձավ Զաքարյան տոհմի սեփականատիրություն: Այստեղ տեսնում ենք՝ ամիր (եմիր), սպասալար, աթաբակ (ատաբեկ), հեջուր անունները, վորպես բարձրագույն աստիճանի տիտղոսներ: Այս տերմիններն արդեն հայ ֆեոդալական միջավայրում իմաստավորում էին վորոշ ծառայություն, բովանդակում էին պաշտոնի նշանակություն:

Ամիր կամ ամիր էր կոչվում ծառայության դերագույն աստիճանի վրա կանգնած ֆեոդալ իշխանը, այն է՝ բարձրագույն կառավարիչը, տոհմարքան, իսկ հետագայում խալիֆաների քայքայմամբ՝ դերագույն տերը, յերկրի հրամայողը, վորի տոհմարքան էր առաջ: Զաքարե իշխանը, վոր իր յեղբայր Իվանեի հետ միասին վերականգնեցին Հայաստանը իբրև ինքնավար, թեև ինքնուրույն մի պետություն, կրում էր ամիր տիտղոսը, վորպես դերագույն վրացական կառավարիչ և հետո վորպես տոհմարքա Հայաստանի, վոր համարվում էր ճևականորեն վրաստանի վասալական պետություն: Հայ մատենագրական աղբյուրներում, մանավանդ վիմական արձանագրություններում, Զաքարեն ամիր տիտղոսի հետ՝ հաճախ կոչվում էր շահինշահ, թագավոր: Այդ հանգամանքն արդեն ցույց է տալիս, թե ինչ մեծ նշանակություն ուներ ամիր տիտղոսը: Նույն այդ Զաքա-

բյան դարաշրջանում Անի քաղաքի վերաբերյալ կառավարիչները, որոնք նշանակվում էին վրաց թագավորների կամ Զաքարյանների կողմից, կոչվում էին ամիր: Այդպիսի սիստրատ էր կրում Անիի ֆեոդալ իշխաններից մեկը՝ Վահրամ Պահլավունին[131]: Ուրեմն ամիր սիստրատը համապատասխանում է բյուզանդական սեբաստոկրատորյան ժամանակվա կատապանին: Այնուհետև հիշատակվում է Կայենի Մահկանաբերդի ֆեոդալ իշխան Քուրդը, որը վրաց Գեորգի թագավորի որոշ ժամանակ եղել է Թրիլիսիի ամիր, այսինքն՝ քաղաքի վարչապետ:

Սպասալար սրտր-թյուրքական բառը նշանակում է սպարապետ, պետության բոլոր զորական ուժերի գլխավոր հրամանատար: Իշխան Զաքարեն, որը ստացել էր վրաց Թամարա թագուհուց Վրաստանի սպասալարի աստիճան, չարունակում է այդ սիստրատը կրել, թեև իր եղբոր՝ Իվանեի հետ դառնում է ամբողջ Հայաստանի տերն ու հրամայողը: Հայ մատենագրության մեջ և արձանագրություններում Զաքարեի ամբողջական սիստրատը եղել է մեծ մասամբ ամիր-սպասալար, որը համապատասխանում է վրաց մանդատուրտա-խուցես սիստրատին: Այդ կրկնակի սիստրատը վկայում է, որ մի անձնավորության մեջ կենտրոնացել էին քաղաքացիական և զորական գերագույն իշխանությունները: Բնորոշ է, որ հայկական աղբյուրներում Զաքարեն սպասալար տերմինի փոխարեն, հորջորջվում է հայկական սպարապետ անուններով:

Աթաբակ կամ աթաբեկ տերմինը նույնպես բարձրագույն ծառայության աստիճանին և պատկանում է գրեթե համազոր և ամիր սիստրատին: Զաքարեյի եղբայր Իվանեն կրում էր աթաբակ սիստրատը, լինելով վրաց արքունիքի թիկնապահ զորքի հրամանատար: Այդ անունը նա չարունակում և պահել, երբ իր եղբայր Զաքարեյի հետ միասին տերում էր Հայաստանին: Հայ աղբյուրներում չատ հաճախ Իվանեն աթաբակ սիստրատի հետ առընթեր կրում էր նաև շահինշահ սիստրատը: Աթաբակ բառի համեմատական ստուգաբանությունը մենք տվել ենք վերը (տ. I, էջ (217—218) իրրև համանիշ հին հայկական մարդպետ և հունական պատրիկιος տերմիններին:

Վերջապես հեծյալ տերմինը պետք է վերևում բերված տերմիններից համեմատաբար ավելի ցածր աստիճանի դասել:

Հեղուք էին կոչվում պալատական կառավարիչները կամ վերակացուները: Պրոֆ. Ս. Ցեղիազարյանի կարծիքով՝ հեղուք նշանակում է արքունի աննկապատ [132]: Հետևապես, ըստ ֆեոդալական հիերարխիայի, հեղուքը յունքարկվում էր աթաբակին: Հայ աղբյուրներում հիշատակվում է հեղուք Գրիգոր, որ Զաքարե իշխաններից էր և Իվանեի ու սրա որդի Ավագի պալատական կառավարիչն էր: Աթաբակ Իվանեն իր մահվան ժամին այդ հեղուք Գրիգորին հանձնեց վերակացություն իր անչափահաս որդի Ավագի և արքունիքի վրա: Իսկ Իվանեի այդ որդի Ավագը, յերբ պահպանված էր կայնի ամրոցում մանդոյների կողմից, ուղարկում է այդ հեղուրին հաշտության բանակցություն վարելու թաթարական զորապետ Զարմաղանի հետ: XIII դ. առաջին քառորդում վերջին Զաքարյանների մոտ հեղուք էր իշխան Զաքարիա Պահլավունին [133]:

Բացի վերոհիշյալ թյուրք-պարսկական ծագումն ունեցող ֆեոդալական տերմիններից, որոնք վկայում են վասսալական ծառայության տեսակները Զաքարյան Հայաստանում, մենք հանդիպում ենք նաև հայկական բնույթ ստացած պարոն և պատրոն տերմիններին: Այս յերկու տերմինները միանգամայն վերացրին հայ ֆեոդալական միջավայրից նախարար տերմինը և մոտավ էլ հետ մղեցին իշխան ու տեր բառերը: Թեև վերջին յերկու տերմինները չարունակում էին վորոշ չափով կիրառվել միջնադարյան հայ ֆեոդալականության մեջ, սակայն այդ կատարվում էր ավանդաբար և հետզհետե սահմանափակվելու տենդենցով: Ուստի Զաքարյան տերապետությունից և մանավանդ մոնղոլական նվաճումից հետո իշխան և տեր բառերը վորոշ չափով փոխում են իրենց սկզբնական, նախկին իմաստն ու հարմարվում նոր սոցիալ-քաղաքական իրադրության: Տեր բառը իրավաբանական առումով սկսում է նշանակել անվականություն ունեցող, ինչը տարբեր իր ձևերում բնորոշ, իսկ իշխան ասելով ներկայացնում էին ընդհանուր առմամբ արյունական դասը, տերապետող դասակարգի վերնախավը, վոր ժառանգ և արտոնյալ իրավունք ներով: Այդ վերջին առումով, XIII դարից սկսած՝ պրականության մեջ և վիմական արձանագրություններում սովորական են այնպիսի դարձվածքներ, ինչպես «մի՛ ոք իշխեսցէ», «յոյնքն վոչ

վոք իրավունք չունի (Վ.Տ, 8, 7, 65, 67), կամ «իշխանութիւն ունի» (Վ.Տ, 72), այսինքն իրավունք ունի: Մխիթար Գոշի Դատաստանագրքում տեսնում ենք համապատասխան «իշխան լինի»— իրավունք ունենա (II, էջ 407, 409) ձևը:

Պատրոն և պարոն տերմինները, թեև հայացած բնույթ են ստացել, բայց նույնպես ոտար յուրացումներ են: Պատրոն բառը, որ հունական ծագումն ունի, ժառանգություն է մնացել Բյուզանդիայի քաղաքական ազդեցությունից և մուտք է գործել Հայաստան Բագրատունյաց շրջանում: Տակավին XI դարի մի արձանագրության մեջ, կեչառիսի վանքի, կարդում ենք պատրոն բառը (Վ.Տ, 18): Իսկ պարոն տերմինը, որ արդիական հայ լեզվում ստացել է բուրժուական քաղաքավարական դիմումի նշանակություն, Արևմտյան Եվրոպայի միջնադարյան ֆեոդալական բարոն— baron բառի հնչյունարանական ձևափոխումն է: Ամենայն հավանականությամբ՝ այդ տերմինը փոխանցվել է Զաքարյան Հայաստան Կիլիկյան հայ թագավորությունից: Վերջինս, սերտ քաղաքական ու առևտրական հարաբերությունները պահպանելով միջնադարյան Եվրոպայի ֆեոդալական հասարակությունների հետ, նմանապես անմիջական շփում ունենալով Կիլիկիայի վրայով անցնող խաչակրաց զորքերի հետ, յուրացրել և հարմարեցրել տեղական հայ ֆեոդալական սիստեմին Արևմտյան Եվրոպայի ֆեոդալական բարմաթիվ տերմիններ: Այդ տեսակետից բնորոշ է Սմբատ Գունդստաբլի Կիլիկյան հայ Դատաստանագիրքը, որ հագեցված է արևմտա-եվրոպական ֆեոդալական տերմիններով, ուր շատ հաճախ իշխան և տեր բառերի փոխարեն դործածվում են պարոն և պատրոն տերմինները:

Մատենագրական ու արձանագրական աղբյուրներից կարելի է եզրակացնել, որ պարոն տերմինը նույնանիշ է իշխան բառին: Այստեղից էլ մի շարք ածանցական բառեր՝ պարոնություն, իշխանության առումով, պարոնաւոդ (Վ.Տ, 135)— իշխանին պատկանող հող, մեծ պարոն— մեծ իշխան (Վ.Տ, 62, 122): Պարոն տիտղոսը կրում են նաև աղնվազարմ կանայք: (Վ.Տ, 128, 149):

Պատրոն տերմինը համանիշ է հին հայկական տեր բառին և, ինչպես ակնհայտ է միջնադարյան պատմական աղբյուրներից,

ֆեոդալական իրավունքի իմաստով նշանակում էր պյուգերին: Կիլիկիայի արձանագրության մեջ (1214—1224 թ. թ.) Հայկի ֆեոդալ իշխան Վասակ Պաղրակյանը, լինելով Զաքարյանների վասալ, Աթաբեկ Իվանեին և նրա զորքին անվանում[134]: Վաչուտյան իշխանական առհմի հիմնադիր իշխան Վաչեն Սպիտոսավանքի արձանագրության մեջ (1215 թ.) իր պատրոնն է համարում Զաքարեին և Իվանեին (Վ.Տ, 58): Գրիգոր Մագիստրոսը, Անիի Պահլավունի իշխաններից, Գագիկ Բագրատունու թագավորության ժամանակ կառուցում է (1033 թ.) լեհերեն «և բարեխոսութիւն» և իմ պատրոնիս (այսինքն՝ թագավոր Գագիկ) և իմ որդեացն» (Կիլիկիայի արձ., Վ.Տ, 18): Հոռոմոսի մի արձանագրությունը (1336 թ.) ավելի ևս հստակ է և մեր ասածը. «Ես Վահրամ Աթաբակ, պարոնաց պարոն, որդի Իւանէ, թոռն մեծին Շահնշահի, որդի ամէն սպասալար Զաքարիայի...» (Վ.Տ, 156): «Պարոնաց պարոն» տիտղոսը պարզորոշ իմաստավորում է այն սոցիալ-ֆեոդալական կացությունը, որ պատրոնը համարվում է պարոնների պյուգերին, սենիոր: Նույն այդ ֆեոդալական հիերարխիայի աստիճանն ու յենթակայությունն է արտահայտվում, երբ վիմական արձանագրություններում իշխանները—պարոնները, հիշատակելով վանքերի ու եկեղեցիների կառուցման և այդ վանքերին ու եկեղեցիներին նվիրաբերությունները անելու մասին, սովորաբար ընդգծում են, թե իրենք այդ կատարում են «ողորմութեամբ պատրոնին» (Վ.Տ, 58—166), կամ «յաղնութիւն կենաց իմ պատրոնացն Իւանէ Աթաբակի և արեան հարազատի իւրոյ Շահնշահի և Աւագին» (Վ.Տ, 144) և կամ «հրամանաւ պատրոնաց» (Վ.Տ, 77, 70):

Պատրոն տերմինից ածանցվում է նաև պատրոնություն բառը, որ պյուգերենության իմաստն է արտահայտում:

Սակայն երբեմն պատմական հուշարձաններում, մանավանդ XIV—XV դարերի արձանագրություններում, պարոն և պատրոն տերմինները խառնում են և նրանց տալիս են նույնանիշ իմաստ: Այդ խառնրումը, որ բնավ էլ համապատասխանում այդ երկու բառերի իրական բովանդակությանը, պետք է բացատրել նրանով, որ Զաքարյան չրջանի վերջերին և մոնղոլների տիրապետու-

թյան ժամանակ չափազանց մեծ ծավալ են ընդունում հայ ֆեոդալների կենտրոնախույս ձգտումները և խախտվում է Զաքարյանների կառուցած ամրակուռ ֆեոդալական սիստեմը. քայքայվում է այն պատվանդանը, որի վրա էին խարսխված այուզբենութեան ու վասալության կապերը: Ահա, ֆեոդալական հիերարխիայի այդ ավերակներում, յուրաքանչյուր իշխան, այն է պարոն, սկսում է իրեն մեծարել ու համարել «պատրոն» իր ֆեոդալական կալվածքի սահմաններում:

Ինքնին բնորոշ է, որ Մխիթար Գոշն իր Դատաստանագրքում չի կիրառում պատրոն և պարոն տերմիններն, որոնք նրա ժամանակ արդեն արմատացել էին հայ ֆեոդալական միջավայրում, այլ այդ տերմինների փոխարեն դրծածում է հնուց դրության մեջ գոյություն ունեցող իշխան և տեր բառերը: Մխիթար Գոշը Դատաստանագրքը կազմելիս՝ հետևել է հին գրական աղբյուրներին և կառչում է հին իրավաբանական տերմինաբանության՝ դանդաղելով իր ժամանակակից կենցաղում տիրող տերմինները:

Միջնադարյան հայկական ֆեոդալիզմի, այն է՝ պարոնության չրջանից մեզ հասել են մի քանի պաշտոնյաների տիտղոսների վերաբերյալ տերմիններ, որոնք մոտավոր կերպով բնորոշում են այն ժամանակվա ֆեոդալական հարաբերությունը: Համեմատաբար հաճախ է հիշատակվում ձեռնավոր բառը, որ, անտարակույս, հին հայկական գործակալ տերմինի վերափոխված ձևն է: Թեև գործակալ տերմինը յերբեմն հանդիպում է միջնադարյան հուշարձաններում, բայց այն, ըստ յերևույթին, բարձրագույն պաշտոնեության նշանակություն է ունեցել և վերագրվել է իշխան-ֆեոդալներին: Այդ ակնարկ է Տարոնյան Որբելյանների մահապանի արձանագրությունից (1289 թ.). «Ի թվիս ՉԼՀ. այս է հանդիսա սրբոյ նշուխ կոմնակալին, հզաւր և մեծ գործակալին և քաջապահ մենամարտին Աթաբակ Տարսայիճին» (ՎՏ, 131): Ձեռնավոր են կոչվել, առհասարակ, չորքային պաշտոնյաները, որոնք նշանակվում էին պարոնների կողմից: «Ձեռնավոր» և «ձեռնավորություն» առաջին անգամ հանդիպում ենք X դարում Տաթևի մի արձանագրության մեջ. «Եթէ ոք ընդ հակառակս ելանէ ի մերոց կամ յօտարաց, յաւագաց կամ ի ձեռնաւորաց և ի խոստակիդարաց կամ

'ի տաճուտէրաց ...» (ՍՕ, պլ. ՌԳ, էջ 233)։ Մեզ հասած արձանագրական տվյալներից կարելի չե յեղրակացնել, որ ձեռնավորները պարոնից կախումն ունեցող պաշտոնյաներ էյին, որոնք կատարում էյին նրա կողմից հանձնարարված վարչական պարտականություններ, ընդ որում նաև հարկահավաքություն (ՎՏ, 51, 129, 130, 149—150)։

Այնուհետև հանդիպում ենք վերակացուքյուն գավառի պաշտոնին։ Այդպիսի պաշտոն է տրվել իշխանաց իշխան Վաչեյին «Վասն հաւատարիմ ծառայութեան» Զաքարեյի և Իվանեյի որդիներին՝ Շահանշահի Ամադի կողմից (ՎՏ, 61)։

Կանգ չենք առնում այս չրջանում հանդիպող մի շարք պաշտոնեական անուննեերի վրա, որոնք ոտարամուտ բառեր են և ոտար իշխողների կողմից կիրառվել են տեղական հայ իրականության մեջ. որինակ՝ եվան, եվանուքյուն (արաբական ծագումով)—վոստիկանական պաշտոնյա, բեթոքար—նոտար, հարկեր ցուցակագրող, մուճուր, մուճուրուքյուն—մթերանոցի պետ և այլն։

8. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔԸ.— Մենք վերը հիշեցինք, որ իշխանաձն կանայք նույնպես կրում էյին պատրոն կամ պարոն կոչումները, ինչպես այդ բացահայտ և վիմական արձանագրություններից։ Դա խոսում հետաքրքիր յերևույթ է հայ ֆեոդալական իրավունքի բնագավառում, ուր բնորոշում է կինոջ սոցիալ-իրավական դրությունը։ Մեզ հասած պատմական աղբյուրներում, մանավանդ վիմական արձանագրություններում, բացահայտ է, որ տիրապետող ֆեոդալ դասակարգի կանայք միջնադարյան Հայաստանում որոշ ազատություն էյին վայելում քաղաքացիական-իրավաբանական հարաբերություններում։ Կրելով պարոն և պատրոն տիտղոսները՝ այդ կանայք վո՛չ թե սոսկ անվանորեն կամ ձևականորեն էյին իմաստավորում իրենց սոցիալական պատկանելությունը տիրապետող ազնվական դասին, այլև փաստորեն ցուցաբերում էյին իրենց տիրական իրավունքները ֆեոդալական կարվածների վերաբերմամբ և այն իրավաբանական հետևանքները, որոնք բղխում էյին զուտ կին տիրության պայմաններից։ Այդ իրավաբանական առումն է պարունակում 1228 թ. Հռոմոսի մի արձանագրություն հետևյալ խոսքերով. «պատրոնով լինի այս տիտղոս 'ի յարանց կամ 'ի կանանց» (ՎՏ,

71)։ մի այլ արձանագրության համաձայն (1320 թ., Անի) Աթաբակ Շահնշահի այրի իշխանուհի Խուանդզեն ազատում է Անիի քաղաքացիներին մի շարք հարկերից (ՎՏ, 160։ MA, 41)։ Կատրամիկե թագուհին, Աշոտ Թագավորի ամուսինը, ազատում է (1008 թ.) Տևկորի վանքը չարխատի հարկերից, վորպեսի վորշումը հաստատվում և վավերացվում է հիշյալ թագավորի կողմից (ՎՏ, 13)։ Նմանապես իշխանուհի Սեդան, իշխանաց իշխան Վահրամի կինը, նվիրում է Բագնայրի վանքին տասանորդ տուրքը իր սեփական Գաղտ գյուղի բերքից[135]։ Նույնպիսի վկաներ են արձանագրված մի շարք հուշարձաններում (ՎՏ, 132, 138 և այլն, ՍՕ։ պլ։ Ա, էջ 218—219)։

Վերևում բերված որինակները վկայում են, վոր կանայք ժառանգ եյին հողատիրության իրավունքով համահավասար այր մարդկանց հետ։ Հիրավի, սիրապետող ֆեոդալ դասակարգի կանայք հանդիսանում եյին ինքնուրույն սեփեր «հայրենիք» հոչված հողերի, այսինքն ժառանգական կալվածների (ՎՏ, 48, 84, 157), ինչպես և «գանձապին» հողերի (ՎՏ, 105, 161), գյուղերի (ՎՏ, 122), այգիների (ՎՏ, 134, 136) և այլ անշարժ գույքերի (ՎՏ, 10, 11, 48, 66, 74)։ Իրենց այդ գույքերի վերաբերմամբ կանայք ժառանգ եյին լիակատար տնօրինության իրավունքով։ Նույնպիսի իրավունքով նրանք տնօրինում եյին ամուսնու տունը բերած իրենց ժառանգը, նվիրաբերելով վանքերին ու եկեղեցիներին գյուղեր, այգիներ և փողեր (ՎՏ, 48, 122)։ Մենք այստեղ չենք թվում բազմաթիվ փաստեր, թե ինչպես կանայք իրենց սեփական միջոցներով կառուցում եյին վանքեր, եկեղեցիներ, կամուրջներ և այլ հասարակական շենքեր։ Նմանապես հետաքրքրական է, վոր սիրապետող դասակարգից մի քանի անհայ կանայք իրենց դրամական միջոցներով կառուցել են Անի քաղաքի պարիսպների բուրգերից մի քանիսը, վորոնց վրա հավերժացրել են իրենց անունները[136]։

Այս հետաքրքրական տվյալները, վորոնք բնորոշում են միջնադարյան Հայաստանի ֆեոդալ դասակարգի կանանց դրության իրավունքը, բնականորեն հարց են հարուցում, թե արդյոք դրության ունեյին նույնպիսի իրավունքներ նախասրաբական հասարակակարգում։ Այդ հարցին դժվար է պատասխանել, քանի

վար մեր հին մատենագրության մեջ չենք գտնում համապատասխան տեղեկություններ: Գեաք է ենթադրել, որ այդպիսի իրավունք հին Հայաստանի նախարարական պայմաններում գոյություն չի ունեցել: Այդ մեր կարծիքը բխում է նրանից, որ հայ մատենագրության մեջ եղած ազատ նկարագրությունները ֆեոդալական հասարակության ընտանեկան կենցաղի մասին, այնուհետև կանոնական իրավունքի նորմերն և, վերջապես, հենց Մխիթար Գոշի Դատաստանագիրքն այդ մասին որոշ տեղեկություններ չեն տալիս: Բնորոշ է, որ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, հորինված լինելով XII դարում, երբ տերում էին կանանց վերոհիշյալ գույքա-իրավական սովորույթները, իր հոդվածներում բնավ չի արտացոլել միջնադարյան այդ իրավունքը: Ընդհակառակն, Մխիթար Գոշի Դատաստանագրքի իրավարանական նորմերը կանանց գույքային և անձնական իրավունքի մասին տոգորված են մեծ նահմանափակումներով: Այդ բացատրվում է նրանով, որ Դատաստանագրքի հեղինակն այդ հարցում ոգեշնչվել է հին իրավաբանական աղբյուրներից, գլխավորապես կանոնական վարչություններ և կղերի բարոյախրատական խրատներ, որոնք համակված են ասկետիզմի կրոնա-էկեղեցական պահպանողականությամբ: Մխիթար Գոշի Դատաստանագրքի, ինչպես կտեսնենք հետո, կանանց իրավունքի վերաբերմամբ արտացոլել է վաղեմի տոհմա-պատրիարխատական դեդատաստանական կարգի վերապրուկները, ուր կինը դանվել է ստորացված, իրավազուրկ կացության մեջ, իսկ միջնադարյան իրավական սովորույթներում, որոնք արտացոլել են վիմական արձանագրությունները, ակներև է այն բեկումը կնոջ իրավական վիճակում, որ սկսել է դարդանալ ֆեոդալական հասարակության մեջ առևտրական կապիտալի ազդեցության: 

## V· ՇԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1· *ՀՈՂԱՑԻՆ ՌԵՆՏԱ ՑԵՎ ՃՈՐՏԵՐ.*— Նախորդ գլուխներում տեսանք այն ստանք Հայաստանի ֆեոդալական հասարակության տերապետող դասակարգը, որ հանդես է գալիս, երբեմն մեկ իրավատեր, մի դասակարգ, որի չտեղերին են բացարձակապես ծառայում գոյություն ունեցող իրավական հնաոճություններն և գործող իրավաբանական նորմերը: Սակայն այդ ֆեոդա-

լական հասարակությունը, լինելով իր էությամբ դասակարգային, ուներ նաև իրեն ներհակ սոցիալական մասսան, իսկական արտադրողների դասակարգը, որի չհատուցման վրա իր խարխլված ախրատեսող ֆեոդալ դասակարգի գոյությունը, և որին ախրելու և հպատակության մեջ պահելու նպատակին էր ծառայում ֆեոդալական իրավունքը: Այդ ներհակ դասակարգը, չհատուցվող սոցիալական մասսան, կազմում էին հողին ամրացված գյուղացիները—ճորտերը, որ հայ պատմական իրականության մեջ հայտնի էին շինական անունով, և ապա բռնակներ: Այդ չհատուցվող երկու սոցիալական խավերը հանդիսանում էին իսկական, անմիջական արտադրողներ, և սա անհրաժեշտ և պարզել նրանց իրավական դրությունը, յերևան հանել այն իրավաբանական նորմերը, որոնք կարգավորում էին յերկու հակառնյա դասակարգերի հասարակական-արտադրական հարաբերությունները, կամ, ավելի ճիշտ ասած՝ նշել ֆեոդալական իրավունքի այն նորմերը, որոնք սահմանափակում էին չհատուցվող դասակարգի իրավունքները և նրան դնում կախման վիճակում:

Ֆեոդալական հասարակության մեջ չհատուցման հիմնական ձևը հողային ռենտան է, այսինքն՝ հողատիրության իրացումը հողին կապված արտադրողների հավելյալ աշխատանքի յուրացումով՝ արտառնահատական ճնշման պայմաններում: Հողային ռենտան, ինչպես ապացուցել է Կ. Մարքսը, անցնում է արտադրության ֆեոդալական յեղանակի պարպացման յերկար հիմնական եւոապներով և բուն այնմ էլ արտահայտում է յերկար հաջորդական ձևով— աշխատապարտ ռենտա, արդյունավճար ռենտա և դրամական ռենտա: Այս յերկար ձևի ռենտայով էլ բնորոշվում է ֆեոդալական հասարակության արտադրական հարաբերությունների բովանդակ սիստեմը: Ահա հողային ռենտայի այս յերկար հիմնական ձևերն էլ պատմություն են ունեցել հին և միջնադարյան Հայաստանի հասարակական կառուցվածքում:

Մենք քանիցս ասել ենք վերը նշերս, որ հայկական ֆեոդալիզմը, իբրև մի տեսակ Առաջավոր Ասիայի ֆեոդալական սիստեմի, ներկայացնում է ընդհանրապես ֆեոդալիզմի արևելյան կամ ասիական ձևը: Ասիական ֆեոդալիզմի բնորոշ հատկա-

նիշներից մեկն էլ այն է, որ ռենտան և հարկը միևնույն նյութն են պարունակում: Այս կարևոր պարագայի վրա չի շեշտում Կ. Մարքսը. «Ռենտան և հարկը համընկնում են, կամ, ավելի ճիշտ, գոյություն չունի որևէ մի հարկ, որը տարբերվի հողային ռենտայի այդ ձևից»[137]:

Ուրվագծենք համառոտ, թե որոնք են հողային ռենտայի երեք հայտնի ձևերը:

Աշխատավարտ ռենտա — դա ֆեոդալական շահագործման առաջնակարգ ձևն է և հատուկ է ֆեոդալական հարաբերությունների վաղագույն ձևին: Այդ ռենտայի մեջ արտահայտվում է արտառնտեսական ճնշումն ամենացայտուն ձևով, իր անմիջական պրիմիտիվ բեղմնավորով, «երբ իսկական արտադրողը շաբաթվա մի մասը մշակում է փաստորեն իրեն պատկանող հողը աշխատանքի փաստորեն և իրավաբանորեն իրեն պատկանող գործիքների (արոր, անասուն և այլն) ոգնությամբ, իսկ շաբաթվա մնացած որերը նա աշխատում է հողատիրոջ կալվածքում, տիրոջ հողում՝ ձրիապես»[138]: Դա ռուսական барщина-ն է, կամ արևմտա-եվրոպական միջնադարյան ֆեոդալիզմի corvée և Frohndieenst-ը, իսկ հին Հայաստանում՝ կռ ու բեկարը, որոնց առաջին հիշատակումը դռնում ենք VII դարի սկզբներում: Սակայն այս դեռ չի նշանակում, որ այդ ռենտան դրանից առաջ չի գոյություն ունեցել: Ընդհակառակը, քանի որ ֆեոդալիզմը, այն էլ նախարարական սիստեմը, գոյություն է ունեցել շատ վաղուց, բնականորեն կռ և բեկարն էլ, իբրև աշխատավարտ ռենտա, այդ վաղագույն դարերում ավելի մեծ չափերով էին զարգացած: Բավական է հիշել խաշարը, որի մասին ակնարկում է Փավստոս Բուզանդացին (III, գլ. Ը, էջ 18):

Մխիթար Գոշի Դատաստանագրքում էլ նշվում է աշխատավարտ ռենտայի մասին այն իմաստով, որ գյուղացին պարտավոր է շաբաթվա 7 որից մեկը աշխատել իշխանի մոտ (II, հոդ. Ա, էջ 315):

Արդյունավետ ռենտա.— Ցերբ ֆեոդալական հասարակության արտադրական հարաբերությունները փոխվում են ավելի զարգացած ու բարձր ձևերի, աշխատավարտ ռենտան էլ վերափոխվում է արդյունավետ ռենտայի, որը, ինչպես Կ. Մարքսն է ասում, «առանձական տեսակետից ոչինչ չի փոխում հողային

ռենտայի եղության մեջ»[139]: Դա բնատուրքն է, որը իսկական արտադրողը վճարում է կալվածատեր ֆեոդալին նախկին աշխատապարտության փոխարեն:

Սակայն աշխատապարտ ռենտան մինչև այն ժամանակ չի անհետանում և իսպառ վերանում: Նա մասամբ պահպանում է իր դոյությունն արդյունավճար ռենտայի կից, մի բնորոշ յերևույթ, որը տեսնում ենք անխախտորեն Հայաստանի ֆեոդալիզմի ամբողջ պատմության մեջ: Նկատի առնելով այն, որ Հայաստանը ֆեոդալիզմի ասիական ձևը ներկայացնում, ապա և ռենտան հատուցվում էր հարկի ձևով, կամ, ըստ Կ. Մարքսի, «ռենտան ու հարկը» համընկնում են, ուրեմն հարկը բնական արդյունքով էր վճարվում, այսինքն բնահարկ, բնատուրք էր: Մատենագրական աղբյուրներում Հայաստանի բնատուրքի ամենահնադույն հիշատակումը պտնում ենք Քսենոֆոնի Անաբազիսում, մի փաստ, որը վերաբերում է Հայաստանի IV դարի (ն. ք. մեր տարեթվ.) պատմությանը: Այդ բնահարկը, ինչպես հայտնի է, չարունակում էր դոյություն ունենալ Հայաստանում վաղագույն միջնադարում շարիաթ ընդհանուր անունով և ապա ուշ միջնադարում խանական տիրապետության ժամանակ և նույնիսկ XIX դարի առաջին կեսում բահրա անունով:

Դրամական ռենտա.— «Դրամական ռենտա ասելով՝ հասկանում ենք հողային ռենտա, որը դոյացել է արդյունավճար ռենտայի վերածվելուց, որն էլ հերթին սոսկ վերաբերված աշխատապարտ ռենտա յեր»[140]: Կ. Մարքսը պարզաբանում է, որ «արդյունավճար ռենտայի վերածվելը դրամական ռենտայի, յենթադրում է արդեն առևտրի, քաղաքային արդյունաբերության, ապրանքային արտադրության համեմատաբար ավելի նշանակալի զարգացում» (Անդ): Դրամական ռենտան ամուր վոտք է դնում Հայաստանում արաբական տիրապետության որով, յերբ այդ նվաճողների հետ մուտք և գործում առևտրա-վաշխառուական կապիտալը: Ինչպես վկայում են մատենագրական աղբյուրները, արաբական տիրակալները սովորական բնահարկը վերածում են դրամական հարկի, որը ահագին տնտեսական հեղաշրջում և առաջացնում Հայաստանում խիստ մեծ կրիզիսով ակզբնական շրջանում, յերբ դրամական ռենտայի յերևույթը մե-

ապրել դրամների սղության եր դրացիում: Սակայն, դրամական ռեֆորմի հետքերը մեզ տանում են մինչև Հայաստանի պատմության VI դարը նախքան մեր տարեթվարկումը, Աքեմենյան սատրապության դարաշրջանը, ասես, Հերոդոտ (Herod. III, 94) և Քսենոֆոն (Cyropaidea, III, 1, § 34) պատմագիրների համաձայն, հայերը բնատուրքի հետ միասին Աքեմենյան թագավորներին վճարում էին նաև դրամական հարկեր:

Ահա այդ հոգային ռեֆորմն իր հիմնական գիծերը ուրվագծում է պետական հարաբերությունների ֆեոդալական ձևը, վերանում հողը հանդիսանում է պետության հիմնական միջոց:

Պետության այդ պայմաններում ստեղծված հասարակական հարաբերություններում ֆեոդալական սեփականատեր դասակարգը յուրացրել եր հողի սեփականության ու անօրինության մենաշնորհ իրավունքը, իսկ այդ հողը չհատարծումով իրացնելու համար նա ձեռք եր բերել իրավունք իրեն ենթարկելու իսկական արտադրողների աշխատանքը, վորոնք կարող էին տեր լինել արտադրության բոլոր միջոցներին, բացի միայն հողից: Հենվելով իր այդ ֆեոդալական իրավունքին՝ սեփականատեր դասակարգը դրժադրում եր արտատնտեսական ճնշում, ամենի պարզ տեսակ՝ բռնի հարկադրանք, վորով անմիջական արտադրողն ընկնում եր անձնական կախման վիճակի մեջ, այն է՝ ամրացվում եր ֆեոդալի հողին: Այսպիսով առաջանում եր ճորտական սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմանների համեմատ՝ առանում եր զանազան առանձնահատկություններ: Այդ չհատարծվող դասակարգը հանձինս ճորտերի, բաղկացած եր գլխավորապես գյուղացիական զանգվածներից, վորոնք պարտավոր էին կատարել կալվածատերերի օգտին իրենց վրա դրված պարտականքներ այն հարաբերություններով, վորոնք կապակցվում էին հողային ռեֆորմի մեջ:

Թեև հայկական աղբյուրները չափազանց սուղ, գերբեմն և հակասական տեղեկություններ են հաղորդում Հայաստանի ճորտերի մասին, այնուամենայնիվ հնարավոր և մոտավոր պատկերը կազմել այդ չհատարծվող դասակարգի իրավական դրության վերաբերմամբ:

Մեր պատմական մատենագրության մեջ տեղ գտած հեթանոսական դասակարգին, ազատանին, միջա հակադրվում է շինականների դասակարգը, որոնք հին հայ իրականության ճորտերն էին: Շինականները— գյուղացիներ էին: Ուստի մեր հին գրականության մեջ հաճախ հանդիպում ենք շինական տերմինին զուգահեռ կամ համանիշ առումով նաև գեղջուկ և ռամիկ բառերին: Այս հանգամանքն առիթ էր ավել մեր պատմագիտության մեջ անհապաղ վերջ դնել ապազուգելու, որ իբր թե շինական, գեղջուկ և ռամիկ տերմինները բնորոշում են ճորտության դասակարգային կատեգորիաներ:

Գեղջուկ— բառացի նշանակում է գյուղացի. սակայն այդ տերմինը, որ ծագում է գյուղ, գեղ բառից, կրում է մի՛չ թե անտեսա-սոցիալական իմաստ, այլ իմաստավորում է տեղական բնակության, այսինքն պետք է հասկանալ գյուղի բնակիչ կամ գյուղական համայնքի անդամ, անկախ նրա արտադրական նշանակությունից: Նույնը պետք է առնչ ռամիկ տերմինի մասին, որը բնավ չի ներկայացնում հատկապես սոցիալական նշանակություն այն առումով, որ նա հողի հետ կապված իսկական արտադրող լինեք: Հայտնի հայագետ Հ. Հյուբշմանի առաջարկությամբ հայկական ռամիկ տերմինը ծագում է պարթևական ramik բառից և համապատասխանում է նոր – պարսկական ram և rama բառերին, որ նշանակում է «խումբ, հոտ»[141]: Ուստի նա թարգմանում է այդ տերմինը—հատարակ ժողովուրդ, խաժամուժ ամբոխ: Նույն կարծիքին է պրոֆ. Հ. Մանանդյանը, որ թեև ավելի չհստակի է ընդգծում չինական ու ռամիկ տերմինների տարբերությունը: «Ռամիկ»-ները կազմել են հին Հայաստանի բնակչության առաջին խավն և վերջիս այդպիսին հակադրվել են, ինչպես և չինականները, նախարարներին, ազատներին, նաև հոգևորականներին ու առաջնորդներին»[142ա]:

Ակադեմիկոս Ն. Մառն և Ն. Ադոնցը ռամիկ բառը մեկնաբանում են զուտ սոցիալ-էկոնոմիկական տարբեր և, «ռամիկ», «ռամկավար» որ նշանակում է՝ առաջացել և առնական, ընկճված առնչ[142բ]:

Հիրավի, հայկական աղբյուրներում ռամիկ տերմինը մերթ հանդիպում է շինական բառի հետ կապված[145], մերթ իբրև ինքնուրույն բառ՝ ապրուստի պահպանման գաղերը թվելիս[146]: Առաջին դեպքում ռամիկ բառն առանում է վորոշէ նշանակություն, այն է՝ շինականը իբրև հատարակ մարդ, վորից, ի հարկե, չի կարելի յեղրակացնել, թե յուրաքանչյուր ռամիկ անպատճառ լինելու յի շինական: Յերկրորդ դեպքում կարելի յե հետևցնել, վոր ռամիկները կարող եյին լինել և քաղաքացիները, ի հարկե, ստորադաս խավերից: Ուրեմն գեղջուկ և մանավանդ ռամիկ տերմինները համանուն չեն շինական տերմինին, և յերբ մեր մատենագրության մեջ խոսքը վերաբերում է կախումն ունեցող դյուղացիներին, այն է ճորտերին, անշեղորեն գործածվում է շինական տերմինը:

Շինական բառը նույն արմատն ունի, ինչ վոր շինել և շեն (չէն) բառերը: Հ. Հյուբշմանի ստուգաբանությամբ հայերեն շեն բառը վերադրվում է գենդական sayana (Սյեստա) բառից[147] և նշանակում է բնակատեղ, մշակված, շինված տեղ, ավան, գյուղ[148]: Ահա այդ շեն բառից են ածանցել մեր պատմագետները շատերը շինական տերմինը, իբրև շենի բնակիչ, շենը շենաշատելով գյուղ: Այս բացատրությունը, մեր կարծիքով, այնքան էլ ուղիղ չէ: Հին հայ մատենագրության մեջ «գիւղ» կամ «գեօղ» ունեցել է իր առանձնահատուկ սոցիալ-տնտեսական նշանակությունը. այստեղից էլ գյուղացու, այն է գյուղի բնակչի, գյուղականի առումով և գործածվել գեղջուկ տերմինը: Իսկ շեն տերմինն այդ գրականության մեջ հանդես է գալիս ինքնուրույն առումով և միանգամայն անջատ գյուղից, ունենալով ավելի ընդարձակ նշանակություն և համապատասխանելով ընդհանրապես շինված, մշակված տեղ գաղափարը: Շեն կարող է լինել և՛ գյուղը, և՛ ագարակը, և՛ ավանը, և՛ գյուղաքաղաքը[149]: Բնորոշ է, վոր Փավստոս Բուզանդացու, մեր պատմագիրներից այդ ամենահնի մոտ, չենք հանդիպում ընդհանրապես շեն տերմինին գյուղի առումով, այլ միշտ հիշատակվում է գյուղ: Ընդհակառակն, ավելի հետագայում գրողների, ինչպես որինակ, Թովմա Աբծրունու կամ Ստեփան Որբելյանի մոտ, շեն տերմինը հաճախակի յե-

լեսյի և Թոմմա Արծրունու մոտ յերբեմն նույնիսկ շեն և պյուղ բառերը նույնանիշ իմաստ են պարունակում:

Գյուղ և շեն բառերի իմաստան ավելի պարզ կազուսանելու համար մեջ բերենք հետևյալ կտորը Ստ. Որբելյանի Պատմությունից: Սյունյաց իշխան Հրահատը, Տաթևի վանքին նվիրելով կալվածք, իր վճռագրի մեջ այսպես է արձանագրում. «... Եւ պեղ մի ի կոմսական պատառ Նորաշինիկ անուն... ասպասպուարեայն իւր լծլոր սահմանօք, լեռամբ և դաշտաւ, ջերմաւ և ցրտով, ծառով և անկով՝ որոյ սահմանքն են... և յայսմհետէ իշխան եմ պուռ Տէր Դաւիթ՝ Սիւնեաց եպիսկոպոս, և որք յետ քո այլ հայրապետաք յայդ սքանչելի յաջորդին մի ըստ մեծէ, զայդ շէնդ ուսել և վայելել, պահել և ունել, գնոյ տալ և գրաւական դնել և դինչ կամք են՝ առնել մինչև յաւիտեանս ժամանակաց...» (պլ. ԼԹ, էջ 209—210): Նույնպիսի իմաստ է պարունակում Ստ. Որբելյանի մեջ բերած մի այլ վճռագիր (պլ. Ի, էջ 219): Վերևում բերված ցիտատից ակներև է, որ հեղինակը, շեն ասելով, նկատի չի ունեցել ո՛չ թե միայն գյուղն, այլ գյուղն և նրա շրջակա դաշտերը, ձմեռային ու ամառային արոտավայրերն և ընդհանրապես մշակված հողամասերը:

Հովհաննես Դրասխանակերտցին չատ հազվադեպ է հիշատակում շեն բառը և այն էլ ո՛չ թե գյուղի առումով, որի համար նա միշտ գործածում է իսկական գյուղ տերմինը, այլ կառուցքի, շինված քի և մշակված տեղի իմաստաստորոգումով[148]: Նույնն նկատում ենք Ագաթանգեղոսի Պատմության մեջ, ուր հակադրվում են «շէնս» և «յանշէնս» բառերն, առաջինը շինավայրի, բնակավայրի և մշակված վայրերի, իսկ երկրորդը՝ անմշակ ու անբնակ տեղերի առումով:

Այս տվածներից յերևակայնում ենք, որ շինական բառը, իբրև ճորա գյուղացի նշանակող տերմին, առուգաբանորեն ածանցվում է ո՛չ թե շեն բառից, այսինքն, չի նշանակում շենի բնակիչ, ինչպես չատերն են կարծում, այլ շինել բայից, որը նշանակում է կառուցել, մշակել: Ուստի շինական նշանակում է կառուցող, մշակող, արտադրող՝ հողի վրա: Այդ առումով, իհարկե, շինականները կարող էին բնակություն ունենալ շենեբում, ավաններում և հատկապես գյուղերում[149]:

Սակայն շինականի համանիշ իմաստով մեր գրականության մեջ կան և այլ տերմիններ, այն է՝ ճորտ և ժողովուրդ: Առաջինը գործածական է միջին դարերի հուշարձաններում, դուրս է վաներ շինական տերմինը, և պահպանում է իր նշանակությունը մինչև այսօր էլ: Ճերկրորդը սովորական տերմին էր յեկեղեցական–կղերական միջավայրում: Այն առավել մեծ չափերով հանդես է գալիս միջնադարյան վիմական արձանագրություններում, յերբ հոգային կամ կալվածային նվիրաբերություններում հիշատակվում են «գյուղեր իրենց ժողովրդով» (Վ.Տ, եջ 100, 102, 124):

2· ՃՈՐՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ — Այն հարաբերություն, վորով բնորոշվում է գյուղացիների կախումը կալվածատեր ֆեոդալներից, հայ մատենագրության մեջ նշված է ծառայություն բառով: Այդ բառի նշանակությունն ակնբախ յերևան է գալիս Դվինի յեկեղեցական ժողովի սահմանած կանոններից 9–րդ հոդվածից, վորտեղ ասված է. «յորժամ ազատք պիւրեանց զերդ և զմարդ բաժանեն՝ յոլովք չարակնութեան առնեն, զծառայեալսն եկեղեցւոյ ջանան ի ծառայութիւն և ի տարկութիւն արկանել» (ԿՀ, հոդ· Թ, եջ 126): Սույն հոդվածի չարաշահության բովանդակությունից հետևում է, վոր «երդ և մարդ» բառերը վերաբերում են շինականներին: Ուրեմն ամբողջ հոդվածի իմաստն այն է, վոր ազատները շինականներին իրենց միջև բաժանելիս՝ չարաշահում են նաև գյուղի քահանաներին արկանում են կամ «ի տարկութիւն» կամ «ի ծառայութիւն», այսինքն դառնում են շինականների չարքը, մինչդեռ քահանաները պետք է ազատ լինեին:

Վերը տեսանք, վոր նախարարների վասսալական կախումն, ըստ մատենագրական աղբյուրների, նույնպես վորոշվում է ծառայություն տերմինով: Սակայն նախարարների և ընդհանրապես հայ ֆեոդալ իշխանների, իրրև ազատատեր, տիրապետող, ազնվական դասակարգի, ծառայությունը միշտ չեշտվում է վորպես մեհենադամյան տարբեր ու տոհմային անհարիր այն ծառայություններ, վոր վիճակված է յենթակա դասակարգին, չհավատարժող շինականության: Այս դեպքում շինականների ծառայությունը բնորոշվում է «ծառայութիւն ընդ հարիւօք» կամ «ի հարկի ծառայութիւն» բառերով, այսինքն՝ ծառայություն հարկադրական

պարհակով, իսկ ազատանիքի ծառայությունը, վոր պարհակությունից ազատ է, սովորաբար վորոշվում է «՚ի սպասու ծառայությունն» բառերով:

Շինականների «ծառայության» իրական արտահայտությունը կայանում էր հողային ռենտայի մեջ, վոր նրանք պարտավոր էին վճարել իրենց կալվածատերերին: Կալվածատեր իշխանները, վորպեսզի ապահովեին իրենց հողերի չահագործումը գյուղացիների աշխատանքով, կիրառում էին արտատնտեսական հարկադրանք, ճնշում: Այդ ճնշումն իրականացվում էր նրանով, վոր շինականներն ամրացվում էին հողին, այն է՝ ճորտացվում էին: Վոր հենց այդ ճորտական վիճակը, հողին ամրացված լինելու կացությունն էր շինական դասի սոցիալական եությունը՝ վորպես շահագործվող դասակարգի, այդ բացահայտ է մի շարք պատմաղրական ավյալներից:

Ճորտության, այն է՝ հողին ամրացված լինելու ցայտուն պատկերը Հայաստանի պատմության Սասանյան տերապետության շրջանից (սկսած V դարից) դռնում ենք Դվինի կանոնների վերահիշյալ 9-րդ հոդվածում: Այստեղ քահանաների սոցիալական իրավունքները պաշտպանելու առթիվ ակնարկված է, վոր «ազատանը» իրենց պատկանող «երդն ու մարդը» բաժանում են. իսկ մեկնելով այդ հոդվածի ամբողջ իմաստից, վոր «երդ ու մարդ» խոսքերը վերաբերում են շինականներին, պետք է բնդրակացնել, վոր շինական տունն ու հողը—«երդը» և ինքը շինականն էլ—«մարդը» հանդիսանում էին ժառանգական բաժանքի առարկա: Այնինչ կա էլ, վոր նույնչ հոդվածում արձանագրված է դեպք հնազանդ ֆեոդալական իրավունքը ճորտացած գյուղացու՝ շինականի անձնավորության վրա, վոր ամրացված էր հողին:

Շինականի վրա ծանրացած ֆեոդալական իրավունքի նույն իմաստն ենք դռնում պատմագիր Մովսես Կաղանկատվացու մոտ (VII դար): Աղվանից Թագավոր Վաչեն, հրաժարվելով պահից, «հաճեցաւ միայն զնախկինն առնուլ բաժին իւր, զոր ՚ի հօրէն էր առեալ հազար երդ, առ զայն ՚ի Թագաւորէն (պարսից Ֆերոզից) և նոտաւ ՚ի նմա...» (պէտ. ժ, եջ 24): Ուրեմն 1000 երդ, այսինքն 1000 տուն շինականներ ամրացված էին հողին, եթե Վաչեն իր իրավունքն էր համարում առանձին ժառանգական հողն այդ շինականներով հանդերձ:

Նույնիսկ հոգևոր վանքերին ու եկեղեցիներին նվիրաբերվող դեպքերում չինականները չէին բաժանվում հողից: X դարի վիմագիր մի արձանագրությունից, որ հայտնաբերել է Յա. Ի. Սմիրնովը Գեղամա լեռներում, երևում է, որ Իշխան Տիրոց Գնթունին իր կառուցած վանքին նվիրում է անվտանգ Սնճամ գյուղն իր չինականներով, «որպեսզի նրանք [անճավեցի գյուղացիները] ծառայեն վո՛չ մեկ մարմնավոր տերերին, այլ միայն այս սուրբ խաչին հավիտյան»[150]:

Դվինի վերահիշյալ 9-րդ կանոնի «երդ և մարդ» բառերը առիթ են տալիս մեզ ուշադրության առնել Ագաթանգեղոսի պատմության մեջ հանդիպող համանիշ դարձվածքը. «... (Տրդատ) Թագաւորն յամենայն իշխանութեան իւրում առ հաստարակ՝ զբնաց չորս-չորս հոգս երդոյ յամենայն տպարակ տեղիս, իսկ յաւանան ևօթն-ևօթն հոգս երդոյ՝ ի ծառայութիւն տպարաւորապետութեան քահանայութեանն» (պլ. ՃԺԹ, եջ 423): Բանի որ երդը, ինչպես Դվինի կանոնադրության մեջ, նույնպես էլ այստեղ նշանակում է չինականական տուն—ծուխ, ապա «հոգս երդոյ» պետք է հասկանալ չինականի հողաբաժին: Հետևապես, եթե այդ հողերը բաշխվում էին քահանաներին «ի ծառայութիւն», պարզ է, որ այս դեպքում այդ «ծառայութիւնը» կատարելու էին չինականները, որոնք ամրացված էին այդ «երդոյ հոգերին»: Այդ միանգամայն հասկանալի է. հողատարածությունը համապատասխան էր արտադրել գյուղ, որ պահպանում էր ֆեոդալ պատակալին և հողատիրության իրավունքներ էր վայելում, որպեսզի չհապաղեր այդ հողերն և առանց հողային ունեության՝ յուրացնելով չինականների աշխատանքը:

Ամենայն ակնբախ է չինականների ճորտական դրությունը Մխիթար Գոշի Դատաստանագրքում, որտեղ արտացոլել է ֆեոդալական իրավունքը, պահպանելով իր մեջ ավելի հին, թեև բազմատունյաց շրջանի, իրավաբանական նորմերն ու սոցիալական հարաբերությունները:

Մխիթար Գոշն իր Դատաստանագրքի II մասի Դ. պլխում, որ կոչում է «Յաղագս պատահանաց չինականաց» խորագիրը, ասում է. «Ապա յԱրարչէն եղև մարդկային բնութիւն, այլ ծառայել տէրանց յաղագս պիտոյից եղև հոգոյ և ջրոյ: Եւ

զայս պատճառս կարծեմ դառնասուն—ղի թողեալ զէրբունին ազատ է ուր և կամեցի կալ: Այլա թէ այսմ ոչ ներէ օր ի ախտանցն և բռնադատէ ղինացեալն անդրէն դառնալ, դինի մահուան հօրն ազատ են որդիք ձնելոք այլուր և ոչ անդ» (էջ 320—321): Այս հոդվածում պարզորոշ յերևում է չինականի բացարձակ կախումը ֆեոդալից և ամրացված լինելը սերոջ հողին: Թեև մարդս ազատ է առեղծվել «արարչէն», բայց «հողի և ջրի» կարիքից նա պետք է ծառայի իր տերերին: Այդ կախումը չի վերանում, յերբ նուիրիակ չինականը, թողնելով հողն ու ջուրը, հեռանում. այս դեպքում, յերբ նա հեռացել է սերոջ կամքի հակառակ, վերջինս իրաւունք ունի նրան բռնութեամբ յետ դարձնելու: Այդ կախումը շարունակվում և տարածվել չինականի մահից հետո նաև նրա ժառանգների վրա, որոնք ծնվել են սերոջ հողի վրա, իսկ յերբ ժառանգները ծնվել են չինականի հեռանալուց հետո «այլուր», դրանք ազատ են:

Վոր չինականն անազատ եր, այսինքն ամրացված եր հողին, այդ տեղեկութիւնները և նաև Դատաստանագրքի մի այլ հոդվածից, վորի համաձայն չինականը չի կարող ընդունել հոգևոր կոչում, այն է՝ մտնել ազատների դասը, մինչև վոր նախորոք չստանա սերոջ կամքն ու համաձայնութիւնը յուր «ծառայութիւնից» ազատվելու մասին (ՄԳ, II, հոդ. ԺԷ, էջ 333): Բացի վերոհիշյալներից, Մխիթար Գոշն իր Դատաստանագրքի մեջ մտցրել է փոքրիկ լամբագրական փոփոխութիւններով նաև Դվինի ժողովի կանոններից մեկ արդեն ծանոթ 9-րդ հոդվածը, վորով ուրիշն նա ճանաչում է չինականների ամրացումը հողին:

Չինականների կախումը կալվածատիրոջից և ամրացված լինելը հողին՝ ավելի պարզորոշ արտահայտվում են XII և XIII դարերի վիմական արձանագրութիւններում: Ֆեոդալ իշխաններն, իրենց արձանագրութիւններում հիշատակելով վանքերին և եկեղեցիներին նվիրաբերած հողերը, նշում են գյուղերի, այդինների, արտերի հետ միասին նաև չինականներին: Նվիրաբերվում են կամ անհատ գյուղացիներ, թվելով նրանց քանակը, յերբեմն էլ անուններըլ[151], կամ ամբողջական գյուղեր՝ բոլոր չինականներով հանդերձ: Առաջին դեպքում նկատում ենք առանձին չինականների անձնական կախումը ֆեոդալից, յերբ նա կարող է

ճորտին ոտարել իրրև սեփականութիւն, ուրեմն դնել ու ձեռք քերել, ի հարկէ հողի հետ միասին: Յերկրորդ դեպքում տեսնում ենք ճորտացած դյուղական համայնք, որի անդամներն անխզելի են համայնական հողից: Առաջ բերենք մի քանի արձանագրութիւններ ամբողջական դյուղերի նվիրաբերութեան մասին հանդերձ բոլոր չինականներով, որոնք ըստ յեկեղեցական տերմինաբանութեան, հաճախ հորջորջվում են ժողովուրդ անունով:

«Ի թուիս ՉՆ (1256 թ.)... Ես ոչխր Համազասպ, առաջնորդ սուրբ ուխտիս Հաղբատայ, աւրհնեցի զեկեղեցիս և տուի զգեղ ժողովուրդ համակցութեամբ Հաղբատայ միաբանացն առաջնորդութեամբ Գէորգ վարդապետի» (ՎՏ, եջ 100):

«Թվ. ՉԸ (1259): Ես Սահմանաս Սիւնեաց արշիեպիսկոպոս զմեր հայրենի գիւղն Վակոչ ի վանս սուրբ ուխտիս տուաք հայրենիք իրով ժողովրդով...» (ՎՏ, եջ 102):

«Թուին ՉԼԲ... ես Հասան իշխան... տուաք ես և եղբայր իմ Դաւիթ զմեր զանձապին գեղն գՎահրամազեղ և զՂամազանցն իւրեանց ամեն հող ու ջրով և բնորդի մարտկաւէ...» (ՎՏ, 124):

Նույնպիսի իմաստ են պարունակում մինչնագրյան մեր մաենագրութեան մեջ հիշատակված մի շարք վաւերք:

«Եւ ընծայեցի ի սուրբ զիմ հայրենիքն և զդանձապին գիւղն Զուայ իւր ամեն սահմանօքն, հողով և ջրով և այգեստանօք և բոլոր բնակչօք, զոր գնեալ է իմ յիմ եղբօրէն Ջալալէն աղատ յամենայն հարկաց...» (ՍՕ, գլ. ՀՍ, եջ 493):

Այս արձանագրութեան մեջ բնորոշն այն է, որ ընծայված գյուղը գնված և յետոյ «բոլոր բնակչօք». ինչպես տեսնում ենք՝ թե՛ գնման և թե՛ ընծայաբերութեան դեպքերում հիշյալ գյուղն անբաժանելի է համարվում բնակիչներից, այսինքն չինականներից, որոնք ուրեմն ամրացված են յետոյ հողին:

Բերենք մի այլ նույնանման որինակ: Սյունյաց իշխան Վասակի ամուսին իշխանուհի Մարիամը «գնեալ ի հպատրացի մարզկանէ զգեօղն Շողուպատայ ընդ 60,000 գրամի ազատ յամենայն աշխարհական հարկաց՝ ընծայէ ի սեպհական ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն. նմանապես և գեօղ մի՝ ի Մազազ գառատ ընդ 3000 դահեկանի գնէ և տայ ի սուրբ եկեղեցին, որոյ անուն գեղջն գնէր» (ՍՕ, գլ. Լէ, եջ 174): «Ազատ յամենայն աշխարհական

հարկաց» խոսքերը հիմք են տալիս յեղրակացնելու, վոր դյուղը նվիրաբերվում եր չինականների հետ միասին, վորովհետև հարկ տվողները, այսինքն ռենտա վճարողները կարող եյին լինել տվյալ դեպքում միայն հորթ դյուղացիները:

Չինականների հետ միասին ամբողջ դյուղերի այդպիսինակ նվիրաբերություններ պոնում ենք յերկար հետագրքեր արձանագրություններում— 1211 թ. Հաղբատի (Վ.Տ, 51), 1214 թ. Մանահնի (Վ.Տ, 54) և պարձյալ Մանահնի (Վ.Տ, 248—249):

Վերևում բերված փաստերը, կարծում ենք, միանգամայն ապացուցում են չինականների ճորտական կախումը ֆեոդալից և ամբացումը հողին: Այլապես չեր ել կարող լինել ֆեոդալական հասարակության մեջ, վորտեղ արտադրության յեղանակը և շահագործման ձևը խարսխված եր արտատնտեսական ճնշման վրա, վորպեսզի հնարավոր լինի ստանալու չինականի աշխատանքի հավելյալ արդյունքը հողային ռենտայի ձևով:

3. ՉԻՆԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ.— Չինականները, գտնվելով ճորտական դրության մեջ, այնուամենայնիվ վայելում եյին վորոշ քաղաքացիական իրավունքներ: Ջնայած մատենադրական տվյալների սղության և անորոշության՝ կարելի յե մոտավոր կերպով պատկերացնել այդ իրավունքները: Իհարկե, չինականների գույքային ու անձնական իրավունքները պետք է հարաբերական խմաստով պատկերացնել, քանի վոր նրանք, լինելով չհավասարված մասսա ու յենթակա արտատնտեսական ճնշման, վոտաստրեն զուրկ կարող եյին լինել իրենց պատկանած իրավունքներն օգտագործելու հնարավորությունից, յերբ իրականում իշխում եր ուժեղի բռունցքը, տիրապետող ու չհավասարված դասակարգի կամայականությունը և այդ տիրապետող դասակարգին ծառայող պետական-վարչական ապարատը: Սակայն չինականների այդ իրավունքների ամենապատկն ու դարավոր պաշտպանն եր հանդիսանում դյուղական համայնքը, վորն, ինչպես Ֆր. Ենգելսն է նշում, դյուղացիների համար միշտ յեղել է ուժեղ զենք ֆեոդալների ճնշման դեմ և սահման է դրել նրանց չհավասարծմանը:

Տարակույս չկա, վոր չինականներն ունեցել գույքային սեփականության իրավունք, բացատյալ հողից ու ջրից: Արդեն

այն փաստը, որ չինականը հարկաւոր էր, այսինքն անհրաժեշտ, նա ունենալու էր, իրրև սեփականութիւն, որոշ դույք և արտյունքներ, որպեսզի կարողանար կատարել իրեն վրա բարդված վճարումները: Բավական է այստեղ հիշատակել, որ չինականները քրեական հանցանքների դեպքում պատասխան վճռով յենթարկվում էին նաև դրամական տուգանքների, ուրեմն չինականը պետք է ունենար սեփական ինչք, որից կարելի էր վճարել: Այդ դույքը կարող էր լինել անշարժ, ինչպես որինակ՝ խրճիթը և սրան հարակից անասնական չենքերը, նաև չարժական, այն է՝ արտադրութեան միջոցներ (անասուններ, գործիքներ), սաւացած բնական արդյունքներ և այլն: Պետք է յենթադրել, որ եթե չինականն, իրրև հողին ամրացված ճորտ, կարող էր վաճառվել և ատարվել կալվածատեր ֆեոդալի կողմից իրեն ամրացված հողի հետ, ապա և նրանից չէր պահվում իր սեփական դույքը: Միմիայն անժառանգ, այսինքն՝ վորդիք չունենալու դեպքում, չինականի մահից հետո նրա ամբողջ դույքը, համաձայն «մեռյալ ձեռքի» — manus mortua սկզբունքի, անցնում էր կալվածատիրոջը. նույնը տեղի էր ունենում նաև չինականի ինքնակամ հեռանալու կամ փախչելու դեպքում: Հետևապես չինականներն ունեցին նաև ժառանգական իրավունք:

Ինչ վերաբերում է ընտանեկան-ամուսնական իրավունքին, այդ կարգավորվում էր կանոնական իրավունքի նորմերով: Բայց այդ իրավունքի՝ խորութիւն չէր դրվում «ազատների» ու չինականների մէջև: Միևնոյն ամուսնական հանցանքների (առևանգութիւն, պոռնկութիւն, ամուսնական անհավատարմութիւն և այլն) համար չինականները պատասխանատու էին տուգանք վճարել՝ կես չափով՝ համեմատած ազատների հետ, բայց և միևնույն ժամանակ յենթակա էին մարմնական պատժի, փրկից, խարկի, դերծ էին ազատները: Նույնպես էր նաև ամուսնալուծութեան դեպքերում (Շահապիվանի ժողովի կանոնները՝ ԿՀ., հոդ. Գ, Դ, Ե, Է, էջ 62—66):

Ահա այդ դասակարգական իրավունքին պետք է վերագրել այն հետաքրքրական յերևույթը, որ, ըստ մեր պատմագիրների տվյալների, չինականներն յերբեմն քաղաքական սուր ճգնաժա-

մերի ժամանակ և կարևոր դեպքերում վորոշ նշանակություն են ստացել իրրև քաղաքացիներ:

«Տրդատիոս Հայոց մեծաց արքայ, առ աշխարհս և առ գառուս, առ նախարարս և առ զօրս և առ շինականս և առ ամենեսեան ողջոյն» (Ագ. ԺԲ, 76):

«Իսկ նննդատուր իշխանն Սիւնեաց վաստակ ոչ վերջք պաղատէր զրել նամականի առ իշխանս և շինականս...» (ՂՓ, II, ԼՉ, 143):

Նաև թեև հիշատակվում է, վոր յերբեմն շինականները մասնակցում էին աշխարհաժողովներին կա՛մ անմիջորեն անձամբ (ՓԲ, III, ԻԱ, 54), կա՛մ իրենց դյուղապետների միջոցով, վորոնք կոչվում էին դասապետ շինականաց (ՓԲ, IV, ԾԱ, 165):

Ինչպես կարելի յե կռահել սակավաթիվ մասնավորական ակնյարկներից, շինականների հարաբերությունները իրենց ֆեոդալ կալվածատերոջ հետ պահպանվում էին դյուղապետների միջոցով: Յուրաքանչյուր դյուղական համայնք, վոր բաղկացած էր շինականներից, ուներ իր ավագը, վոր մեր մասնավորության մեջ հարջորջվում է «դասապետաք շինականաց» (ՓԲ, դլ. ԾԱ, 165), «դեղջուպտ», «աւագ շինին» (ՄԽ, 101), «պետպան» անուններով: Վերջին անվանները գտնում ենք նաև Քսենոֆոնի՝ հայ դյուղի նկարագրի մեջ (IV գ. ն. ք. մեր տարեթվ.) κωμάρχης, ἄρχων τῆς κώμης, վոր բառացի նշանակում է դյուղապետ: Հետաքրքիր է, վոր XIII դ. վիմական արձանագրություններում նույն նշանակությամբ հանդիպում ենք դայխ (հետագայում ուշ միջնադարից մինչև XIX դարը մեր դյուղերում փոխվել է ռես բառի) անվանին, վոր յիվմարանորեն, անշուշտ, թյուրք-թաթարական ծագումն ունի (ՎՏ, 50, 52, 68, 226): Միաժամանակ նույն միջնադարյան արձանագրություններում գործածվում է համանիշ իմաստով նաև գյուղական հայերեն անվանը (ՎՏ, ԼՀ 51):

Դասապետը համարվում էր դյուղական համայնքի ներկայացուցիչ, շինականների ավագ, վորի վրա յեր դրված շինականներից հարկ հավաքելը, թերևս նաև դատական իշխանությունը: Իրրև շինականների ներկայացուցիչ՝ նա մասնակցում է աշխարհաժողովներին (ՓԲ, անդ): Իսկ հարկահավաքի պարտականության մասին կարելի յե յեզրակացնել Քսենոֆոնի «10 հազարի

նահանջի պատմության» (Anabasis, V, 7, 13)։ Գյուղապետը, որի հետ հանդիպումներն ու բանակցությունները էին ունեցել նաև մյուս հրամանատարները, իր մոտ ուներ գյուղից հավաքած 17 հոգուանոց ընտանիքները, որոնք կազմում էին պարսից թագավորին հասկացված տարեկան հարկի մի մասը։ Նույն թեմատիկայով պետք է հասկանալ Ագվանից Վաչագան թագավորի կանոնների մեջ հիշատակված հետևյալ խոսքերը. «Ասաց Ջինին կալչկ պարտոյն եղեն և երկցն ասգէ» (ԿՀ, հտ. ԺԹ, էջ 195)։ Գնդջասարի մասին հիշատակվում է Պարտավի ժողովի (768 թ.) կանոններում. նրան վերապահված և նաև դյուղից հարկեր հավաքելը— «Գնդջատուտ, որ յաղագս սրբոյն հարկաց զղուան եկեղեցւոյ վարել ասէ» (ԿՀ, հտ. ԻԲ, էջ 172)։ Նույնը պետք է ասել և վերոհիշյալ գյուղական մասին, իրրև հարկատուների. «Եւ է այս գեղ ազատ յամենայն հարկէ և պատրանաց, ի ձեռնաւորաց, և զիւղականաց...» (ՎՏ, էջ 51)։

Ծառայական կախումը, վերջիս հետևանք ամբողջական ֆեոդալ դասակարգի ազատատեսակային ճնշման, իր կնիքն էր դրոշմում շինական դասի սոցիալ-իրավական կացության վրա։ Այստեղ գործում էին, իհարկե, սովորութային իրավունքի նորմերը, որոնք կարող էին ավելի կամ նվազ չափով տարբերվել զանազան նախարարությունների, իսկ հետագայում՝ ֆեոդալական կալտնությունների, նաև՝ նրանց յուրաքանչյուրի իրական ազդեցությունը։ Սակայն դասակարգային նվաճողության սոցիալական չեզոն ամեն դեպքում և ամեն տեղ դրսևորվում էր միատեսակ։ Այդ պարագան բնորոշ կերպով անդրադարձել և նաև մեր մատենագրության մեջ։ Մովսես Խորենացին դասակարգային հարաբերությունների կարգավորումը վերագրում է հայ Աբշակունյաց դինաստիայի հիմնադիր Վաղարշակ (իսկապես՝ պատմականաբարն հշտված՝ Տրդատ Ա.) թագավորին. «Հրաման տայ քաղաքացիսց մարդկան արդոյ և պատիւ պինել քան զկնդկացս, և զկնդկացս պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս. և քաղաքացիսց մի՛ կարի առ զկնդկօքն պերճանալ, այլ եղբայրսարար վարել» (Մխ. II, գլ. Ը, էջ 110)։ Այդ իրավաբանական դրույթն ավելի ցայտուն է արտահայտում Մխիթար Գոշն իր Դատաստանագրքում, համարելով այդ հին հայ թագա-

վորների սահմանած որենք. «Մրք քաղաքացիք առաւել քան պղեղջուկս պատուիցին և գեղջկաց նմանապէս առաւել պատիւ լիցի քան բնակչաց ազարակի. առյնպէս լիցի բերդի բնակչաց և աւանի. զի և կարդ առաջնոցն ի մերոց թագաւորացն այդոքիկ» (ՄԳ, II, հտ. Ա., եջ 318):

Շինականների ու «ազատ»-ների այդ չեշտակի հակադրությունն արտացոլել և նաև հայ յեկեղեցական ժողովների կանոնական վորոշումներում: Շահապիվանի ժողովի (443 թ.) կանոններում (ՀԿ, հտ. 4-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ, 12-րդ. եջ 64—70) սահմանվում է, վոր մեկնուն քրիստական հանցանքների համար շինականներն ավելի խիստ պատիժների յեն յենթարկվում «ազատ»-ների համեմատությամբ:

Շինականների անառևտրական շահագործման ու արտատնտեսական ճնշման պայմանների բղխող սոցիալ- իրավական դրություն սանձարձակ ազատություն եր տալիս ֆեոդալների ընչաքաղց ախորժակներին: Կալվածատեր ֆեոդալներն, իհարկե, ստորյա իրականության մեջ սահմաններ չեյին ճանաչում իրենց յուրացրած իրավունքի և ջանում եյին դուրս կորզել յենթակա շինականներից վորքան կարելի յե շատ հավելյալ արդյունք, հաճախ կանգ չառնելով զաժան ու բռնի միջոցների առաջ: Այդ հանգամանքն, ըստ յերևության, այնքան սովորական և յեղել, վոր Մխիթար Գոշն սահիպված եր իր խմբագրած որենքներում զգուշացնել ֆեոդալներին.

«Ի սարեմուտս ըստ կարի ծառայեսցէ և յաւուրս սօնից: Մի՛ լիցի չէքուչէք[152ա] բազում, այլ չիք լիցին անիրաւ սովորութիւնքն, զի և սահմանք բազում և յաւելորդ սովորութեանց նզև: Առանց պատասխանի մի՛ տուգանեսցի, այլ ըստ կրի լիցի թէ յանցաւոր ի սէրունիսն գայցէ, իսկ յայլս յանցաւոր գտեալ, դատաւորօք վճարեսցի» (II, հտ. Ա., եջ 316—317):

«Եւ եթէ աւելի քան զօրէնն անդթաբար հրամայիցէ գործել և այնու մնաս մահու հասցէ՝ ի տերանց ընդ հարկիս անկելոց, պարտապան լիցի սրեան դատաստանի գերագունից տերանց» (ՄԳ, II, հտ. ԺԴ, եջ 300):

Հայ մատենագրության մեջ պատահում են թեև սակավաթիվ, բայց հետաքրքրական տեղեկություններ շինականների վրա

ֆեոդալների զրծադրած բռնութիւնների մասին։ Մովսես Խորենացին իր «Վողբ»-ի մէջ խիստ բացասական գնահատում է բնորոշում նախարարներին. «Իշխանք ապստամբք, դպրակիցք դպաց, ժլատք, ագահք, հափշտակողք, աչխարհատեաց, ագանդաւէրք» (Մխ, II, գլ. ԿՀ, եջ 375)։ Մամիկոնյան իշխանները, որոնք արաբական խալիֆ Վալիդ II-ի հնարհիւ կարողացան նորից վերականգնել իրենց կորցրած ազդեցութիւնն և վերստանալ կալվածները, այնպիսի գաժան միջոցներ էին գործադրում հարկեր և տուրքեր հավաքելիս, որ գյուղացիները ստիպված էին զանգատներ ուղղել և բողոքել արաբական իշխանութեան առաջ[152]։ Արաբական տիրապետութեան ժամանակաշրջանի պատմագիր Ղևոնդը (VIII դար) ցաւումով և նկարագրում Հայաստանի գյուղացիների խիստ ծանր և հուսահատական գրութիւնը՝ անչափ հարկերի և կեղեքումների ճնշման հետևանքով։

Ասորական ժամանակագիր Դիոնիսիոս Տելլ Մահրեն (VIII դար) պատմում է Զորրորդ Հայքի[153] գյուղացիների մասին, որ նրանք ծանր կարիքի ու աղքատութեան ներքո ճնշված՝ անչափ հարկերի հետևանքով՝ ստիպված էին դնալ աշխատելու արծաթի ու կապարի հանքերում Տուռնս դամառում։ Ամբողջ պատմաբանը և ներկայացնում Աբիսամակես Լաստիվերտցին (XI դար) ճնշված ու աղքատացած գյուղացիութեան հակադրութիւնը հանդեպ ֆեոդալական տիրապետող դասակարգի, որ հղփացած իր հարստութեամբ, աչքի չէր ընկնում ազատութեամբ, համարձակութեամբ ու բանապատութեամբ. «Իշխանք զղոսիկք եղեն զողոց, վրիժագործք և արծաթոյ ծառայք. զառատսրք... կաշառառուք և վասն կաշառաց զդաննային զվրաւունս...։ Վաչխից և ասկոսաց օրէնք եղան և ցորենոյ բաժանապատիւթեան, որպէս երիվր պղծէ և արգելու զարդանդ առ ի տալոյ զպատուդ ՚ի ժամու իւրում առ ի վերակուր մարդկան։ Որ խոթէ զընկերն՝ պարծէր իմաստուն զոլ, և որ յափշտակէր՝ ասէր, ես հզօր եմ։ Զառնոս անառակից, ագքատացն, և զահմանս անդառնանաց նոցա յափշտակէին մեծատունքն» (գլ. ԺԲ, եջ 79—80)։ Նոյն Լաստիվերտցին, պատմելով Անի քաղաքի գրավման ու ավերման մասին սելջուկների ձեռքով, այսպես է նկարագրում տիրապետող դասակարգի բարքերի գեմքը. «Այս է բաժին անիրաւ քաղաքաց,

որ չինեն պինքեանս արեամբ օտարաց, և՝ ի քրտանց տնանկաց վարձամանան, և՝ ի վաշխից և յանիրաւութեանց զատունս իւրեանց ամբացուցանեն. և ինքեանք զխաս իւրեանց անողորմ ունելով առաջատաս և տնանկս՝ միայն հեշտութեան և վատկութեան սպասեն, և՝ ի գործոց ազատութեան ոչ խորշին, այլ միայն արբենալ լինին՝ ի ցանկութեանցն, որ զնոսա ըմբռնեալ ունի» (պ. ԻԴ, եջ 167):

Հետաքրքրական է, որ պատմագիրը Յեղիշեն, ցանկանալով ներկայացնել Պարսկաստանում դերված նախարարների ու ազնվականների՝ Հայաստանում մնացած կանանց թշվառ ու զրկալի դրութիւնը վարդանանց պատերազմի արհավիրքների ու ամբոխմանների հետևանքով, համեմատում է դրանց վիճակը չինականների հետ, անվանելով վերջիններին «զեղջուկ վչտացեալ» կամ չինական «վչտամբեր», զորոնք սովորաբար յենթակա յին մշտական տանջանքների և համբերութեամբ տանում են ամեն տեսակ զրկանքներ (III, եջ 259):

Խոսք չկա, որ չինականների ճնշված ու տանջալի վիճակը՝ թե՛ սոցիալ-իրավական և թե՛ անզուսպ շահագործման պայմաններում՝ մեծ չափով ազդում էր նրանց մտավոր ու բարոյական խառնվածքի վրա: Նրանց վիճակված էր հանապազ զեղել մտավոր խավարի, կոպիտ բարքերի զրկում: «Շինական», «չինականութիւն» բառերը հայ մատենագրական հուշարձաններում նույնիսկ դործածել եյին հոմանիշ այն ամենի, ինչ վոր կոպիտ և, տգետ ու վայրենի: Առօրյա կենցաղում գործածվում եյին «չինականամիտ», «չինականագոյն» բառերը, վորպես նվաստացուցիչ հատկանիշներ: Յեղիշե պատմագիրն այդ առումով խիստ բնորոշ արտահայտություն ունի. «Զի ի մէջ չինական մարդկան կեցեալ էր և տգիտագոյնս ևս էր՝ ի զրոց մխիթարութենէ»:

4. ՇԻՆԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ.— Այս սոցիալական հավասարութիւնների հողի վրա նյութվում էր այն պատասարգային ներհակությունը, վոր յերբեմն բռնկում էր նաև ժողովրդական հուզումներով: Այդ մասին մեր մատենագիրները մեծ մասամբ լռություն են պահում: Շատ սակավ, յերբեմն էլ կարծես

դեպվածորեն, մութ ակնարկներ կամ մխուճավոր կարճ հանդուրդումներ են անում տիրապետող դասակարգի դեմ բարձրացած ժողովրդական շարժումների, մասսայական ըմբոստացումների մասին:

Այստեղ առաջին տեղն է բռնում Հնականների վախճանի իրենց տեսիլքից, որ մի սովորական ու ընդհանրացած երևույթ է եղել: Այդ ակնարկներ է տո՛չ միայն մատենագրական աղբյուրներից, այլև այն իրավաբանական նորմերից, որոնք հատկապես սահմանված էին վախճանականների վերաբերմամբ:

Մովսես Խորենացին, իր «Ողբի» մեջ նշելով ժողովրդի ընդհանուր բարոյական անկումը, ի միջի այլոց ակնարկում է նաև այնպիսիների մասին, որոնք են «փախչողք ի ժառանգութենէ» (III, պլ· ԿՀ, էջ 364): Այստեղ «ժառանգութիւն» պետք է հասկանալ հող[154], իսկ հողից փախչողները կարող էին լինել, ի հարկե, ոչ թե ֆեոդալները, որ անհարիր ու անտրամաբանական բան կլիներ, այլ պարզապես Հնականները, որոնք իրենց անասնելի վիճակից ազատվելու համար դիմում էին փախուստի այն հողից, որին ամրացված էին:

Փախստական Հնականների մասին ունենք ավելի ուշագրավ տեղեկություններ Հարթաստիկ Աբշահավան քաղաքի պատմության շուրջը, որ Մովսես Խորենացին (III, պլ· ԻԲ, էջ 287—288) և Փավստոս Բուզանդացին (IV, պլ· ԺԲ, էջ 109—110) ավանդում են միահոգիության ու աննդհնդհոգ դրությունով: Աբշակ II թագավորը կենտրոնախույս նախարարների դեմ վարած պայքարի ընթացքում մտադրություն էր Աբշահավան քաղաքն և ապահովել այնտեղ վախճանների: Այստեղ վախճան տվող ու ապաստան գտնողների շարքում, որոնց վերհիշյալ պատմագրությունները վկայում են իբրև «գող, աւազակ, արբեհամանք, սպանող, մարդկոյզ» և այլ տեսակի «հանցագործներ», կային և Հնականներ, որոնք վախճան էին տվել իրենց հողերից՝ կալվածատերերի կեղեքումների պատճառով: Փախստական Հնականների ապաստանումը Աբշահավանում բացահայտ է նրանից, որ նախարարների պայ-

բուլղն Աբշահամանի դեմ հենց այդ հողի վրա էր: Այսպես է ավանդում այդ մասին Մովսես Խորենացին. «Եւ նախարարացն Հայոց ժողովեալ՝ դիմեցին ի վերայ արքունական ձեռակերտին Աբշահաւանի, և հարին զնա սրով սուսերի յառնէ մինչև ցկին, բայց ի ապագոյ առանց խնդրոյ, քան զի պատնեշեալք էին իբրա-քանչիւրք վերայ ծառայից իւրեանց»: Վոչ մի կասկած, վոր այս դեպքում «ծառայք» այդ նախարարների չինականներն և սրուկներն էին:

Ինչ վերաբերում է իրավաբանական նորմերին, վորոնք ուղղված են չինականի վախճանի դեմ, այդ ակներև է Մխիթար Գոշի Դատաստանագրքից (II, հոդ. Գ., էջ 320): Ֆեոդալ իշխանն իրավունք ունի բռնի ուժով վերադարձնել այն չինականին, վոր հեռացել է հակառակ նրա կամքի, այսինքն վախճան է ավել, և վերսին նստեցնել իր հողի վրա: Նույնն է արծարծված Սմբատ Դատաստանագրքում (ՍԴ, հոդ. ՃԻԳ, էջ 67):

Չինականների մասսայական ըմբոստացման մասին, վոր բերեն վերաբերում էր ապստամբական արյունալի էպոխի ընդդեմ շահագործող կալվածատերերի, մեզ հասել են թեև կցկտուր, բայց և այնպես բնորոշ տեղեկություններ, գլխավորապես VIII դարից: Այդ այն ժամանակներն էին, երբ արաբական տիրապետության տակ և դրամական ռենտայի ներմուծումով չափազանց ծանրացել էր արտադրող գյուղացիության սոցիալ-տնտեսական վիճակը:

Վերը հիշատակված ասորական ժամանակագիր Դիոնիսիոս Տելլ Մահրեն պատմում է, վոր Տուտիս գավառի (Ծովք) հանքահորերում աշխատող գյուղացիները, ծանր հարկերի ու դաժան բռնության ներքո հուսահատության հասնելով, ապստամբում են: Այդ ապստամբությունը, վոր տեղի չէ ունեցել մոտավորապես VIII դարի երկրորդ կեսում, ճնշվել և արյան հոթանքներում:

Պատմագիրներ Հովհաննես Դրասխանակերտցին (X դար) և Ստեփանոս Որբելյանը (XIII դար) հաղորդում են երկու գյուղացիական մասսայական ապստամբությունների մասին, վորոնցից մեկը եղել է Բագրատունյաց թագավորության մեջ, իսկ

մյուսը Սյունյաց իշխանության սահմաններում X դարի սկզբներին: Այդ ապստամբությունները խիստ ուշագրավ են սոցիալական տեսակետից, վորովհետև նրանք բռնկել են այն դարաշրջանում, յերբ Հայաստանում կատարվում էին սոցիալ-տնտեսական տեղաշարժեր, վորոնք հասցրել էին չինականներին նյութական մեծ ճղնաժամի և անտանելի ճնշման: Նվաճող արաբների հետ Հայաստան մուտք էր գործել առևտրա-վաշխառուական կապիտալը, վոր իր հերթին առաջ էր բերել դրամական rենտայի ուժեղ թափ: Այդ ժամանակ սկսվեց նախկին նախարարական հողերի կենտրոնացումը վոտքոթափիլ ֆեոդալական ուժեղացած իշխանների ձեռքում, վորոնք, դուրբայլին կուսակիսման հետևվից ընկնելով, դործոն մասնակցություն ունեցին նորամուտ առևտրական կապիտալի վերելքի մեջ: Արագ թափով զարգացող դրամական շրջանառությունը նրանց թեթանում էր ավելի ուժգին դարկ տալ դրամական rենտային, վոր անշուշտ քայքայիչ կերպով էր ազդում չինականների առանց այն էլ խղճուկ տնտեսության վրա ու ծանրացնում նրանց ճորտական կախման դրությունը:

Ահա այս պայմաններումն էր, վոր Բագրատունյաց Հայաստանում բռնկեց գյուղացիական ապստամբություն: Այդ ապստամբությունը տեղի ունեցավ Սմբատ I Թագավորի օրով, յերբ հարկերը բարձրացել էին ու չհագեցածումն էլ հասել էր ծայրագույն սահմանի, և յերբ հայ- արաբական անվերջ ընդհարումներն էլ մյուս կողմից՝ ավերում էին յերկիրը, վորի հետևանքով «երկրագործք մեր սպառեցան և սուղ դրեցան», ասում է պատմագիրը (ՅԴ, էջ 257): Կանգ չառնելով այդ ապստամբության մանրամասնությունների վրա, բավականանանք մի քանի հետաքրքիր գաղափարներ անելով Հովհաննես Դրասխանակերտցուց, վորոնք բնորոշում են տիրապետող ֆեոդալ դասակարգի հայացքները այդ չարժման նկատմամբ, դասակարգի, վորին պատկանում է նաև վերոհիշյալ պատմագիրը: «Վասն դի նուագ դունքն քան զհեծամածան ձեռներէց լինել ջանային, և ծառայքն ըստ Սողոմոնի հնարէին, դի զտեառս երեխաւորեալ՝ ի գեանի գնացուցանեն և ինքեանք երգեն յերիվարս ահիպարանոցս և առաքուր հարուստ՝ խրոխտացեալք և սնքացեալք մեծաւ ապստամ-

բաթեամբ» (ՅԴ, 258)։ Ամենայն հավանականությամբ այդ ա-պըսամբական յելույթները տեղի էին ունենում հարևան ժո-ղովուրդների հարձակումների ժամանակ, «և ապա խառն ընդ նո-սին ևս աւազակք և սրիկայք ի մէջ ընդ երկրի մերում» (ՅԴ., էջ 257)։ «Ազատակ» և «սրիկա» էին անվանվում մեր պատ-մադրի կողմից ապստամբ «ծառայք»։

Մյուս ապստամբական չարժումը, վոր նկարագրում է Ստե-փաննոս Ասողիկը, ծայր էր առել դրեթե նույն ժամանակներից Սյունի-քում։ Սյունյաց եպիսկոպոսի աթոռանիստ Տաթևի վանքին պատկանող Յուբաբերդ, Արևելապաշտ և Տամասկեր գյուղերն էին դրսից բարձրացրել իրենց շահագործող հոգևոր ֆեոդալների դեմ, հարձակվել վանքի վրա, ապտանել մի քանի մխաբանների, իսկ մյուսներին դուրս քշել և ապա գրավել էին յերեմնի իրենց պատկանած, իսկ հետագայում Սյունիքի իշխանաց իշխանի կող-մից վանքին նվիրված հողերը։ Շնորհիվ Սյունյաց իշխանի մի-ջամտության՝ չարժումը ճնշվում է և գրաված հողերը նորից վերադարձնում են վանքին։ Սակայն գյուղացիները չէին հան-գըստանում, ամբողջ X դարում նրանք մի քանի անգամ վերոհիշ-ապստամբում էին (ՍՕ, գլ. ԽՀ, ԽՄ, ԽԲ)։

Սոցիալական պայքարն ուներ իր դրսևորումները նաև այլ ուղիներով։ Շահագործվող ու ճնշվող գյուղացիության ներհակ տրամադրու-թյունները վերածվում էին մասսայական չարժումների՝ կրոնա-կան կեղևով։ Այդ կրոնական չարժումները, վորոնք տիրապետող հոգևոր պետերի կողմից հերձվածներ էին անվանվում և ծայր էին առել սկսած V դարից, ինչպես մանիքեցիները, պավլիկյան-ները, թոնդրակյանները և այլն, վոչ այլ ինչ էին, եթե վոչ մասսայական բողոք, ընթացքում տերող հասարակական կար-գերի դեմ, վորոնք արբադրվել էին իշխող յեկեղեցու կողմից։ Այդ «հերձվածողական» չարժումները համրերում էին սոցիալա-կան պայմաններում և կրում ցայտուն դասակարգային բնույթ, ներգրավելով ժողովրդական ստորին խավերը, մասնավորապես գյուղացիական՝ չինականական զանգվածները, վորոնք ամենից ավելի էին հեծում իրենց տերերի շահագործումների և բռնու-թյունների լծի տակ։ Այդ չարժումների դասակարգային հյու-

թյունն արտահայտում էր նաև այն դաժան, ճնշումներով և արյունալի դատաստաններով, որ տիրապետող ֆեոդալ դասակարգը տանում էր ապստամբների դեմ: Այդ տեսակետից ուշադրավ է Թոնդրակյանների չարժումը, որ ընդմիջումներով տևում է սկսած IX դարի կեսերից մինչև XI դարի կեսերը: Առանձնապես կատաղի թափ էր ստացել նա X դարում, զուգադիպելով Բագրատունյաց թագավորության ժամանակ բռնկած դյուզացիական ապստամբական չարժմանը:

Հետևապես, կրոնական դրոշակի տակ ծավալվող Թոնդրակյան չարժումը պարունակում էր իր մեջ նաև սոցիալ-տնտեսական նախադրյալներն, ինչ որ Բագրատունյաց կամ Սյունյաց իշխանությունների դարդացող ապստամբությունները: Թոնդրակյան չարժումները ճնշվում էին տիրապետող դասակարգի կողմից հրով և սրով: Հետաքրքրական է, որ Թոնդրակյանների յերկրորդ չարժման ճնշումը կատարվեց հայոց Պահլավունի իշխանական տոհմի ներկայացուցիչ Գրիգոր Մագիստրոսի ձեռքով, որն ակնառու դեմք է մեր պատմության մեջ, թե՛ յուր քաղաքական դերով, թե՛ իր կալվածական մեծ հարստությամբ և թե՛ իր դիտական-մատենագրական գործունեությամբ: Նա իր աշխատություններում նկարագրում է ձևնադրված խիստ միջոցներն ու դաժան հատածանքները, որոնցով անհնար ճնշել և ամբողջ չարժումը:

Այդպես էին հաշվի տանում տիրապետող ֆեոդալական դասակարգի շահագրգռված ներկայացուցիչները այն դյուզացիների՝ չինականների հետ, որոնք հանդգնում էին փորձ անել՝ բողոքելու անզուսպ շահագործումների դեմ և թոթափելու ճորտական լուծը:

## IV. ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ.— Սարկավագությունը հանդիսանում է շահագործման ամենատկրնական ձևը, որով մարդն սկսում է շահագործել մարդուն: «Սարկաւագներն ու սարուկները,— գրում է Լևոնը,— պատահարտապին տասջին խոշոր սրտհուն,»[155]:

Հայ պատմագիտները մինչև վերջին ժամանակները չեն զբաղվել այդ պրոբլեմով, չենթադրելով, թերևս, որ այդպիսի հարց չի կարող լինել: Նրանք անտեսել են այդ կարևոր հարցը, կուրորեն հետևելով մեր հին պատմագիրների ավանդին,

վորոնք այդ ինստիտուտի պրոֆեսորն էին մասին պարզորոշ վոչինչ չեն ասում: Սակայն, չնչին հին հայ պատմագրությունը համառ լռությամբ և անցել այդ հարցի վրայով, այդ դեռ չի նշանակում, վոր սարկավագությունը բնավ չի գոյացել Հայաստանում: Զե՞ վոր մեր հին պատմագրիները, ահագին եջեր ձոնելով տերտերական աշխարհիկ ու հոգևոր իշխանական անձերին, իրենց կրոնա-պատմական մոտեցմամբ, մերթ ընդունելով ու մերթ պարտավելով այս կամ այն իշխողների քաղաքական ու այլ գործերը, համբ ու պատանձված են մնացել իրենց ժամանակակից բազմաթիվ սոցիալ-տնտեսական հարցերի նկատմամբ, վորոնք այսոր խիստ մեծ դժվարությամբ և հնարավոր չեղման հանել ու լուսաբանել: Այդպիսի լռության մատնված հարցերից և նաև սարկավագությունը:

Նահապետական սարկավագությունը, կամ, ինչպես Լենինն էր անվանում՝ «սարկավագության նախնադարյան ձևը», տոհմական հասարակության քայքայման ազդակը հանդիսացավ, վորով պայմանավորված էր մարդը մարդուն չհատարծելու յեղանակը: Սարկական աշխատանքի չհատարծումն էր, վոր հնարավորություն էր տվել դասակարգային համակարգի տնտեսապես զորեղ ընտանիքների նահապետներին, առաջին հերթին համայնքների ավագներին, դասակարգերին, զեկավարներին, ռազմական առաջնորդներին և այլոց՝ կուտակել իրենց ձեռքում նյութական հարստություն և համայնական հողերի ուղղակի օգտագործումով նաև սարկական աշխատանքի յեղանակները տարածել նաև զրավված հողերի նախկին ազատ դասակարգիների վրա ու այդպիսով նրանց դնել կախման վիճակում: Սակայն ֆեոդալական տերտերության, յերբ ընդունք զարձավ հինականների արտատնտեսական ճնշումը, սարկական աշխատանքը չվերացավ իրականության: Նա չարունակում էր իր գոյությունը նաև ֆեոդալ հասարակության մեջ և ստանում էր առանձնահատուկ բնույթ Հայկական լեռնաշխարհի տնտեսական պայմաններում:

Բանի վոր Հին Հայաստանում արտադրության ձևը կրում էր ֆեոդալական բնույթ, ինքնին պարզ է, վոր սարկական աշխատանքն այստեղ այն նշանակությունը չուներ ու այն դերը չէր խաղում, ինչ վոր Հին Հունաստանի, Հռոմի և ընդհանրապես

Միջերկրածովյան աշխարհում, «անտիկ սարկուվյան» հասարակակարգությունների: Հայաստանի հասարակությունն, ընդհակառակն, խարխլված էր չինականների չհատադրծման, ճորտային արտադրական հարաբերությունների վրա: Սակայն միևնույն ժամանակ սարկական աշխատանքը չէր վերանում. նա պահպանվում էր և չհատադրծման հարուստ ապրյուրներ էր բաց անում: Տնտեսության վորոշ ճյուղերում և մարզկային աշխատանքի անդուռազ չհատադրծման վորոշ բնագավառներում այն թերևս առաջնակարգ նշանակություն էր ստանում՝ ճորտական աշխատանքի հետ համեմատած: Դրանով պետք է բացատրել, վոր սարկություն Ատաջավոր ու Փոքր Ասիայի հին ֆեոդալական պետություններում ծաղկում էր մեծ չափերով ու դարձել էր տիրապետող դասակարգի չհատադրծման տարբեր: Այսպիսով, Ատաջավոր Ասիայում, ինչպես նաև Հայաստանում, ֆեոդալական հասարակություններին մեջ ճորտության հետ միասին պահպանվում էր նաև սարկությունը, մինչդեռ Արևմտյան Եվրոպայի միջնադարյան ֆեոդալական ֆորմացիայում, վոր առաջացել էր անտիկ ֆորմացիայի քայքայման հետևանքով, դրությունն չուներ սարկական աշխատանքը: Այն արդեն X դարում վերացել էր ֆեոդալական Ֆրանսիայում, իսկ մի վորքր ուշ՝ նաև գերմանական ֆեոդալիզմի տերիրներում: Եվրոպական ֆեոդալիզմի զարգացման պրոցեսն ընթանում էր այնպես, վոր սարկությունն աստիճանաբար վերանում համամասնորեն էր ճորտության հետ ու անհետանում: Այդ պատճառով է Արևելքի ֆեոդալիզմի այն առանձնահատկություններից մեկը, վոր Կ. Մարքսն ու Ֆ. Ենգելսն անվանում էին ասիական ֆորմացիա, վորը վոչ այլ ինչ է, բայց եթե ֆեոդալիզմի ասիական ձևը:

Կ. Մարքսը և Ֆ. Ենգելսը միշտ շեշտում էին Արևելքի տերիրների զարգացման ինքնահատուկ գիծը, նշելով արևելյան տերիրների անշարժությունը, դանդաղությունը սոցիալ-տնտեսական զարգացման մեջ: Այդ անշարժությունը, նրանց կարծիքով, սկսվում է հենց այն շրջանից, երբ արհայիկ ֆորմացիան, այն է՝ տհմային հասարակությունը, դյուղական համայնքի ետապում քայքայվելով, վերանոցվում և դասակարգային հասարակության, ասիական ֆեոդալիզմի, վորտեղ սակայն, դյուղա-

վան համայնքը շարունակում և պահպանել իր հարաւոր դոյությունը: Այդ անշարժութիւնը Կ. Մարքսը բացատրում է որ՛չ թե Արևելքի ժողովուրդների ինչ- որ բնածին անշարժութեամբ, այլ այդ հասարակութիւնների տնտեսական կառուցվածքով: «Այս ինքնաբաւ համայնքի արտադրողական պարզ որգանիզմը, որ մշտապես վերարտադրվում է միևնոյն ձևով և որ պատահաբար կործանվելու դեպքում նոյն միևնոյն անունով, բանալի է տալիս ասիական հասարակութիւնների անփոփոխութեան գաղտնիքը լուծելու, անփոփոխութեան, որ այնպես ակնբախ հակապատկեր է կազմում ասիական պետութիւնների մշտական քայքայման ու նորաստեղծման և դինաստիաների անդադար փոփոխվելու հետ համեմատած»[156]: Այդ անշարժութեան չնորհիվ դասակարգային հասարակութեան պրոցեսում չերևան են գալիս չերկու պայքարող տենդենցներ՝ ստրկական ու ֆեոդալական, որոնցից ոչ մեկը չերկար ու ձիգ տարիների ընթացքում չի կարողանում չերակշռութիւն ստանալ[157]:

Դառնանք Հայկական լեռնաշխարհին և նրա հարևան չերկրներին, որտեղ սկզբում էր ասիական տիպի ֆեոդալիզմն իր յուրահատուկ իշխանութեամբ: Ստրկական աշխատանքը լայն չափեր էր ընդունել Հաթթական չերկրներում, ինչպես այդ ակնհայտ է Հաթթական օրենքներից, որոնք մի շարք չերաշխիքներով կարգավորում էին այդ ձրի ու անիմաստ կեղեքվող աշխատավորների սոցիալ-տնտեսական հարաբերութիւնները: Հաթթական Subbiluljum թագավորը, որ նվաճել էր Միթանի թագավորութիւնը (Հայկական լեռնաշխարհում), պարբերաբար վերցնում էր ռազմական տուրքի ձևով այդ չերկրի ազգարնակչութիւնից ահագին թվով մարդիկ, որոնք իբրև տորմկներ քշվում էին Հաթթական պետութեան տարածաններն ու այնտեղ բռնի ճնշմամբ գործադրվում էին անտանապահութեան ու չերկրագործութեան աշխատանքներում: Հաթթական բոլոր միջազգային դաշնագրերում, նաև հատուկ օրենքներում, շեշտակի հիշատակվում էր, որ չեթե տորմկները փախչեին որևէ վասալական կամ հարևան չերկիր, վերջիններիս իշխանները պարտավոր էին փախստականներին բռնել ու վերադարձնել ըստ պատկանելվույն[158]:

Սարկուէյան ու սարկական աշխատանքի մասին մանրակրկիտ կանոններ էին սահմանված Բաբելոնում՝ Համմուռաբիի ժամանակ։ Սարկաւորությունը գործադրած էր Ասորեստանում, որտեղ մինչև անգամ, ինչպես հայտնի է պատմական հուշարձաններից, անգին էին ունենում սարկական ապրուստամբերքները։

Ջնարած վար աշխատանքի չհասպարծման տեսակետից ճորտերի կացութիւնը Արևելքում դրեթե մոտենում էր և նուիրեակ ծերբեմն հավասար էր սորուհների վիճակին, բայց և այնպես նրանց միջև շնչահակի տարբերություն կար։ Սարուկը մխանգամայն զուրկ էր արհատպրութեան միջոցներից, մինչդեռ ճորան իր արհամարհութեան տակ ուներ, բացի հողից, սեփական արհատպրական միջոցներ։ Ցեթեն չհասպարծվող ճորտի արհատպրութեան արդիւնքների վորոշ մասն էր դառնում փեոդալի սեփականութիւն, ապա սարկական աշխատանքի արդիւնքներն ամբողջովին մտնում էին նրա սեփոջ ամբարները։ Ուսաի սորուհները, չունենալով արհատպրութեան վոչ մի միջոց, լինելով անձնատուր անհաղամայն կենթակա էին սեփոջ բացարձակ սեփականութեանն ու քոնութեանը, նրանք անմիջապես աշխատում էին փեոդալի սեփական տնտեսութեան մեջ, վորպես նրա անձնական մշակները։

2. ՀԱՑԱՍՏԱՆԻ ՓԵՈԴԱԼԻԶՄՆ ՈՒ ՍՏՐԿՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՔ.— Հայոց պատմության դուռը Հայաստանում բացվում է փեոդալական հասարակական կազմով։ Սոցիալ-տնտեսական ընթացքը Հայկական լեռնաշխարհում սկսել էր տակավին նախահայկական շրջանում և ապա իր դասակարգային ներհակության արհահայտութիւնը գտել էր այն փեոդալ հասարակության մեջ, վորը ներկայացնում էր Խալդական (Ուրարտական) պետութիւնը։ Ուսաի հայ ցեղնիկ տարրը, իր կազմավորման պրոցեսում Հայկական լեռնաշխարհի սոցիալ-տնտեսական իրականության մեջ, դուրս գալով քայքայվող տոհմային հասարակարգի շրջանակներից, խմորվում էր արդեն վաղուց տիրող դրության սուացած փեոդալական հարաբերութիւններում։ Այսպիսով, խալդական փեոդալիզմին հաջորդել էր հայկական փեոդալիզմը։ Հայկական փեոդալիզմն, ինչպես իրեր տե-

ամենք, անցել է դանդաղ եւ ցավոտ ճանապարհ եւ արտադրողական ուժերի հարաճուն զարգացման ընթացքում, յուրահատուկ սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմաններում կազմավորվում էր համապատասխան ձեւերով, դրսեւորվում էր առանձնահատուկ բնորոշ գծերով, սակայն հիմնականում անփոփոխ էր մնում արտադրության ֆեոդալական եղանակը: Այդ տեսակետից հայկական ֆեոդալիզմի զարգացման պատմության մեջ նշեցինք երեք հիմնական շրջան: Ըստ այդ շրջանների սոցիալ-տնտեսական հարաբերությունների էլ բնորոշվում է տուրքատիրությունը հին ու միջնադարյան Հայաստանում, ուր այդ ինստիտուտը թեեւ չէր հանդիսացել բովանդակ արտադրության հիմքը, ինչպես անտիկ ֆորմացիայի Հունաստանում եւ Հռոմում, բայց եւ այնպես նկատելի տեղ էր գրավում արտադրության մեջ, հանդիսանալով տիրապետող ֆեոդալ դասակարգի հարստացման միջոցներից մեկը, ճորտական աշխատանքի շահագործման կերպ:

Հայկական վաղ ֆեոդալիզմի ետապում, որ մոտավորապես սկսվում է Աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանից եւ տեւում է մինչեւ Արշակունիների հաստատվելը Հայաստանում, հայկական ֆեոդալիզմը դեռեւս դեգերում էր իր կազմավորման պրոցեսում, երբ առհմային հասարակակարգն իր վերջնական քայքայման ընթացքն էր ապրում ու արագ թափով կատարվում էր դասակարգային շերտավորումը պետական համայնքի ներսում: Նահապետական տուրքությունը, որ գոյություն ուներ Հայաստանի նախաֆեոդալական պայմաններում, այս շրջանում ավելի եւս զարգանում է, կորցնելով իր նահապետական բնույթը, եւ աճում է շնորհիվ ֆեոդալիզացիայի պրոցեսի, երբ քայքայված համայնական սեփականատիրության ավերակների վրա բարձրանում է մասնավոր սեփականությունը, և արտադրության գլխավոր միջոցները, առաջնային հողը, կենտրոնանում են տիրապետող դասակարգի ձեռքին, հանձին ֆեոդալ-կալվածատիրական հասարակական վերնախավի: Կալվածատերը, միանգամայն խզելով իր կապերը պետական համայնքից, կարող էր ամբողջական շրջանում տնտեսության առաջ տանել մեկուսի անմիջապես իր ձեռքի տակ ունեցած տուրուկների աշխատանքով, վորը նրան հնարավո-

թուքյուն եր ընձեռում ակքսպեռեալ հողերին իբրև անձնական սեփականության, համաձնքից չդուրս:

Չնայած վոր սարկաւերութքյունը հենց սկզ եռապում եր ավելի զարգացած լինելու, բայց այդ մասին խիստ ազատ տեղեկութքյուններ ունենք առաջին մեզ հասած գրավոր հուշարձաններում: Քսենոֆոնը 10,000 հույների նահանջի պատմութքյան մեջ հիշատակում է, վոր Հայաստանի ճանապարհներում հույներին ուղեկցում էին դամակի հետ միասին նաև սարուխներ՝ ἀνδράποδα, իբրև բեռնակիրներ: Անշուշտ, այդ սարուխները տեղական պարսիկ, դուցե նաև հայ, տարրերից էին: Մովսես Խորենացու մեզ ավանդած ժողովրդական վեպի տեսլով՝ հայ Սքաուչես Ա. Թագավորի թագման ժամանակ նրա գլխարկանի վրա բազմաթիվ մարդիկ զոհաբերվեցին ըստ տիրող սովորութքի (ՄԽ, II, գլ. կ և կԱ): Անտարակուսա, այդ կենդանի զոհերը սարուխներ էին լինելու, վորոնք գնում էին «հանդերձյալ կյանքը» իրենց տիրոջ հետ միասին. մի հնավանդ սովորութք, վորի մասին վկայում են հնադիտական պեղումները Հայաստանում Սեվանի մարզից[159] և Թոփրակ-կալեյից[160]:

Այս դարաշրջանում Հայաստանի քաղաքական ու անտեսական կյանքը սերտորեն կապված եր Փոքր Ասիայի հետ, վորտեղ, մանավանդ Իոնիական գաղութներում, ծաղկում եր հին հունական սարկաւերական անտեսութքյունն և վորտեղ այդ ժամանակներն սկսել եր իր աշխարհակալական եքսպանսիան նոր-նոր տարածքներ նուլնպես սարկաւերական անտեսութքյան հիմունքներով զարգացող Հռոմը:

Սարուխների դերը Փոքր Ասիայում խիստ նկատելի կերպով հանդես և գալիս այսպես կոչված Նաբխի բանակալ իշխանութքյան ներքո և Արիաստնկոսի փոքր-ասիական ապստամբութքյան մեջ (Strabo, XIV, 646):

Կան նաև վկայութքյուններ, վոր Սելեվկյան տիրապետութքյան ժամանակ Փոքր Ասիայում, որինակ՝ Փռյուգիայում, ֆեոդալական կալվածատիրութքյուններում սարկական աշխատանքն եր չափազանց տարածված:

Սարուկը համարվում եր նաև արժեքավոր ապրանք թե՛ մերձավորային առևտրի ասպարեզում և թե՛ պետութքյունների ու ժո-

դոմաբդների անառեսութեան մէջ, իբրև ամենակարևոր ու անհրաժեշտ «արտադրական դրծիք»: Տիգրան Մեծը, վոր հին աբևելյան աշխարհակալների ոգով բռնատեսո- Փեոդալ եր, յայնացնում եր Հայաստանի պետական սահմանները և լցնում յերկիրն անվերջ դերիների և սորուկների չարքերով ու արանց մեջոցով դարի ստալիս յերկրի արտադրողական ուժերին: Նա, միանալով իր դաշնակից Միհրդատ Պոնտացու, հին Հռոմի այդ քաջամարտիկ ախոյանի ու Հռոմեական եքսպանսիային Ասիայում այնքան ակտիվորեն դիմադրավոդի հետ, ինքն էլ կատարդ սպայքար եր մղում Հռոմի դեմ: Ներանք յերկուսը նաչնիկ Փոքր Ասիայի սորուկներին ոդտագործում եյին ընդդեմ Հռոմի: Միհրդատը Հռոմի դեմ իր վարած պատերազմներում հաջողութիւն եր ունենում Փոքր Ասիայի հունական պոդուքներում չնորհիվ այն բանի, վոր, դրավելով այդ յերկրները, անմիջապես ազատութիւն եր տալիս սորուկներին, իսկ անդ- անդ սորկատերերին դարձնում եր սորուկ և հանձնում ի սեփականութիւն նախկին սորուկներին[101]: Այդ սորկական չարժումը վկայում է, թե ինչ մեծ չափերի յեր հասել սորկատիրութիւնը Փոքր Ասիայում, վորին հարևան եր և վորի հետ քազաքական —տնտեսական հարաբերութիւններով կապված եր Հայաստանը. այսոհետ էլ, անտարակոյս, նուլն պայմաններում գարպանալու յեր սորկական ինտեռեսը:

✓ Յերկրորդ չրջանը՝ նախարարական Փեոդալիզմն է իր նախարարական իրավունքով, վոր սկսվում է Արշակունիներից և տևում մինչև արարական տիրապետութեան դարաչրջանը: Այս հատվում Փեոդալիզմն արդեն վերջնականապես ձևավորվել եր, ներծծելով իրանա-պարթևական Փեոդալիզմի բնորոշ գծերը, վորոնցից մեկն էլ, ինչպես վկայում են հին պատմական ավբյուրները, սորկատերութիւնն եր: Արշակունիների դինաստիան, հաստատվելով Հայաստանում, ձգտում եր ստեղծել այսոհետ նախարարութիւններին դլխավորող քազավորական կենտրոնացիկ իշխանութիւն քան պարթևական Փեոդալական ձևերի, վորոնց սոցիալ- անտեսական հարաբերութիւնները մեծ չափերով խարխլված եյին սորկական աչխատանքի չահագործման վրա: Հիրավի, հին պատմագիրները Պլուտարքոսն և Յուստինը

հիշատակում են պարթևների մոտ զարգացած սարկոմեյան մասին: Իրանա-պարթևական ֆեոդալիզմը, ինչպես արևելյան մյուս երկրների յուրահատուկ անշարժության, մորը շեշտել են Կ. Մարքսը ու Ֆ. Ենգելսը, բնորոշում և նրանով, որ մյուս երկրի սոցիալ-տնտեսական կառուցվածքում ֆեոդալական հարաբերման ձևերը չպիտակվել էին սարկոմեյան հետ:

Սակայն, մյուս կողմից, մյուր 387 թ. Հայաստանն Արշակունյաց հարստության վերացումով բաժանվեց Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, Հայաստանի, մանավանդ նրա արևմտյան մարզերի, քաղաքական-տնտեսական կյանքի վրա սկսում է ներգործել բյուզանդական կուլտուրան: Նախնադարական ֆեոդալիզմը Բյուզանդիայի անմիջական իշխանության ներքո զանազան մասում սկսում է ներծծել նաև բյուզանդական ֆեոդալիզմի տարրերը: Իսկ Բյուզանդիան, այդ արևելյան Հռոմեական կայսրությունը, ինքնին ներկայացնում էր արևելյան տիպի բռնակալ ֆեոդալական պետություն: Ազատ արտադրության ֆեոդալական կազմակերպի հետ միասին ծագկում էր սարկական շահագործումը, որն իր կլասիկ ձևերով այնքան էլ չէր տարբերվում Արևելքի մյուս ֆեոդալ երկրներում կեղածից, մանավանդ, որ Բյուզանդիան իր ֆեոդալ-պետական կառուցվածքում մորոշ չափով յուրացրել էր Սասանյան ֆեոդալիզմի հիմնական տարրերը:

Մի շարք վավերագրեր, ինչպես Պրոկոպիոսի «Anecdota»-ն, կայսրների արձնադրական նովելլաները, յեղիպտական պապիրուսները, պատկերացնում են բյուզանդական յուրահատուկ ֆեոդալիզմի զարգացման պրոցեսը: Այդ ֆեոդալիզմը դուրս էկել սարկաստերական հարաբերություններից մի՛շ չէր սրանց վերացման պայմաններում, այլ սրանց վերաստեղծմամբ, պահպանելով սարկաստերական հիմքի վերապրուկները:

Հայաստանի պատմության այս յերկրորդ շրջանում բացառձակապես տիրում է սրտատրության ֆեոդալական յեղանակը: Անմիջական արտադրողներն էին հանդիսանում գյուղական համայնքները, որոնք արդեն կորցնելով իրենց վաղեմի ազատությունն ու համայնական հողային սեփականությունը, դարձել էին նախարարներից կախված չինականներ: Ուսոի սրտուհները

սոցիալ–տնտեսական այս պայմաններում հետզհետե կորցնում են իրենց նախկին տնտեսական նշանակությունը: Երանգից չառները դառնում են ճորտեր և նույնպես յենթարկվում ֆեոդալական չարագործմանն իրրև չինականներ, մորոնք նստած են նախարարական հողերի վրա: Բայց և այնպես ստրկությունը չի վերանում իսպառ: Նա դեռևս առավելապես տնային տնտեսության մեջ և կալվածական տնտեսության վորոշ ճյուղերում շարունակում է մնալ վորպես «կենդանի գործիք»: Այս չրջանից մեզ հասած պատմագրական հիշատակարանները, չնայած իրենց սուղ և միջանկյալ տեղեկություններին, հաստատում են ստրկության ինտենսիվ զորությունը Հայաստանում:

Յերրորդ չրջանը սկիզբն է առնում արաբական տիրապետությունից, յերբ նախարարությունները արդեն սկսել էին անկյանալ, և Բագրատունյաց թագավորության անկումով նրանց փոխարինել էին բարմաթիվ մեծ ու փոքր իշխանական ու ազնվական տներ: Սրանք, իրրև տեղական ֆեոդալներ, գրված էին նախկին Հայաստանի տերիտորիայում, ուր հաջորդաբար կամ միջանկումներով տիրում էին զանազան արաբական, թուրք–մոնղոլական, թաթարական և այլ նվաճողներ: Այս չրջանում և սկիզբն առնում նաև ֆեոդալիզմի ստեղծման քայքայման պրոցեսը առևտրա – վաչխատուական կապիտալի առաջխաղացմանը զուգընթաց: Ստրկությունը կորցնում է իր նախկին նշանակությունն իրրև արտադրական «գործիք», քանի վոր ճորտ–դյուղացին այն ժամանակ ավելի չահավետ էր կալվածատեր–ֆեոդալի համար: Սակայն Հայաստանում ստրուկն այժմ ստանում է այլ արժեքի նշանակություն: Նա առևտրա–վաչխատուական կապիտալի հետզհետե ծավալման պարմաններում դառնում է ապրանք, տուր և առ առարկա, վոր արտահանվում էր Արևելքն ու Արևմուտքի համաչխարհային վաճառանոցները, վորտեղ մինչև կենդանի ապրանքների յեռան առաջարկ ու պահանջարկ էր լինում: Ուստի այս չրջանում անվերջ պատերազմները, նվաճումները, տարագրումները գերեվարության ու ստրկավաճառության հարուստ ապրյուրներ էին: Այդ տեսակետից բնորոշ էր Կիլիկիան, վորտեղ մի ժամանակ վերականգնել էր հայ ֆեոդալական մի պետություն, վորը Արևմուտքի առևտրական կապիտա–

լէ շահատակութիւնների լայն ասպարէզ եր պարձել համաչխարհային ասևարան ակրոց Վենետիկի և ապա Վենետայի շնորհիվ:

Ջնայած վոր սարկութիւնը վերջին չրջանում, կորցնելով իր վաղեմի անտեսական ու սոցիալական նշանակութիւնը, նահզել եր, բայց և այնպես մեր մատենագրական հուշարձաններում պահպանվել և այս չրջանից համեմատաբար ավելի բազմակողմանի տեղեկութիւններ: Բավական և միայն հիշատակել, վոր մենք ունենք մի չարք դատաստանագրքեր, ինչպես Մխիթար Գոշի, Սմբատ Գունդստաբլի, Անդրէ Անտիոքա, Ատրա-Հոռմեյական և այլն, վորոնց մեջ սարկութեան թնաբաիտուին հատկացված են առանձին հոդվածներ, և վորոշ նորմավորման են ենթարկվել սարսկների ու տերերի փոխադարձ հարաբերութիւնները: Այդ օրենսդրական նորմերը, ինչպես օրինակ՝ Մխիթար Գոշի Դատաստանագրքում եղածները, թեև մեծ մասամբ վերցված են ուսար աղբյուրներից, մովսիսական, ատրա-Հոռմեյական և այլն, այնուամենայնիվ այստեղ, մանավանդ Սմբատ Գունդստաբլի Որենսդրքում, դառնում ենք նաև հին հայկական կամ այս չրջանին համապատասխան սովորութիւնների հետևան վրա ընդունված, դուռ տեղական ու ժամանակակից բնութի կրող վորոշումներ սարսկների վիճակի մասին:

Հին հայ մատենագիրները սարսկների մասին հիշելիս՝ սովորաբար դործածում են բնորոշ զարձվածքներ. «սարկութեան ծառայութիւն», «ի կարդի սարկութեան», «ի սարկաց կարդի ծառայութեան», վորով նշում են նրանց սոցիալական դրութիւնը: Այս տերմիններդ ավելի ցայտուն են դառնում, երբ նույն մատենագիրները Հին Հայաստանի մյուս դասակարդերի սոցիալական հարաբերութիւնների վերաբերմամբ դործադրում են նրանց դրութեանը համապատասխան զարձվածքներ, ինչպես օրինակ՝ հայ նախարարների ու ազնվականների մասին— «ի սպասու ծառայութիւն», վորով բնորոշվում է նրանց ֆեոդալական հիերարխիական փոխադարձ կախումը. իսկ չինականների կամ մյուս վոչ արտոնյալ դասակարդերի վերաբերմամբ— «ի հարկի ծառայութիւն», վոր ցույց է տալիս նրանց դրութիւնը, վորպես ճնշման, տուրքատու ներքո դտնվողների:

Ինչպես նկատում ենք այս տերմիններից, վերոհիշյալ յերկք տեսակ ծառայությունները ներկայացնում են սոցիալական տարբեր հարաբերություններ, վորտեղ «ծառայություն» բառը արտահայտում է վորոշ կախումն, առորոշյալ դիրքավորումն յերկու տարբեր աստիճանների վրա կանգնած անձերի միջև:

Այդ հիմունքով հայ պատմաղբյուրներն ստրուկների կախումն իրենց տերերից վորակում էին՝ «ծառայութիւն ստրկութեան» կամ «ի ստրկաց կարդի ծառայութիւն» բառերով: Այսպիսով, ստրկությունը ծառայություն էր համարվում, ուստի և ստրուկները հոդվորվում էին «ծառայ» տերմինով, իսկ ստրուկ մատան կոչվում էր «ծառայրեար», հակադրվելով «աղատրեար»-ին, այսինքն ազնվական դասին:

Ստրուկ տերմինի լեզվաբանական վերլուծումը տակավին պարզված չե: Կան մի քանի փորձեր զանազան բանասերների կողմից, բայց այդ բացատրությունները դեռևս անբավարար պետք է համարել: Հայկազյան Բառարանում ստրուկ տերմինը դուրս է բերվում ստորին բառից: Մի փոքր ընդունելի յե Մյուլլերի տառապարանությունը, թե վորի ստրուկ բառը ծագում է սանսկրիտ çatru բառից, վոր նշանակում է թշնամի կամ star (սանսկրիտ) բառից, վոր նշանակում է ցրվել, դնտին նետել, դնտին խփել· քան այդմ, ուրեմն, «ստրուկ» նշանակում է գետին գարնված, տապալված գերի («Հայերեն արմատական բառարան»):

Սակայն «ստրուկ» տերմինի հետ միասին զանում ենք հին հայ պատմաղբյության մեջ նաև մի այլ տերմին՝ ընդոծին:

**Մովսես Խորենացին**, խոսելով հայերի ծագման մասին, առաջ է բերում առասպելական պատմություն, թե Հայկ նահապետը մտավ Արարատյան յերկիրը «հանդերձ որդւովք իւրովք և դստերօք և որդւոց որդւովք, արամբք զօրաւորօք՝ թուով իրիւ երիցհարիւր և, այլովք ընդոծնիօք, և եկաք յարեգեմովք ի նա, և բոլոր ազխիւ» (ՄԽ, 1, գլ· ժ, եջ 35): Այդ առասպելաբանության մեջ զանում ենք մի հին ավանդություն առհասարակ ցեղային հասարակության մասին, վոր յեղել է Հայաստանի արխայիկ շրջանի ազգաբնակությունը: Միևնույն ժամանակ այդ ավանդության մեջ արտացոլված է մի հիշատակություն, վոր առհմի կամ

ցեղի մեջ գիրել են նաև այնպիսի սոցիալական տարրեր, ինչպես ընդոծիները, վորոնք, անշուշտ տոհմիկներ չեյին, հակառակ պարագայում նրանք առանձնակի չեյին հիշատակվի:

Մովսես Խորենացու նկարագրությունից պետք է հետևցնել, վոր տոհմը մեջ, բացի արյունակից տոհմիկներից, կային նաև տոհմի հետ կապված այլ տարրեր, այն է՝ ընդոծիներ: Այս բառի վերջին ածանցը ծին (ազատեղից՝ ծնել, ծնունդ և այլն) լեզվաբանորեն համապատասխանում է հունական genos, լատինական gens և հին գոթական kuni բառերին, վոր նշանակում է մեր առումով տոհմ: Հետևապես, ծին բառի իմաստափոխումն է տոհմ: Թերևս այդ ծին բառի մեջ պետք է տեսնել ավելի հին հայկական տերմին, քան թե իրանական tauma բառից ծագած հայերեն տոհմ տերմինը կամ համանիշ zana բառից հայերեն–ազգ տերմինը, վորոնք այնքան պարզաբանական չեյին Հին Հայաստանում:

Ընդունելով, վոր ծինը տոհմի իմաստավորումն է համեմատաբար ավելի հին տերմինով, հիմք կունենանք հետևցնելու, վոր ընդոծին ասելով՝ պետք է հասկանալ այն բոլոր անձերը, վորոնք պատկանում են տոհմին: Սակայն այդ պատկանող անձերը դասարյուն տոհմիկներ չեյին, ապա թե վոչ միանգամ չհար Մովսես Խորենացու խոսքերում՝ «որդիների, որդիների որդիների և դուստրների» կողքին, վորոնք հարազատ տոհմակիցներ եյին, առանձին հիշատակել նաև ընդոծիններին: Ուրեմն սրանք խորթ, ոտար տարրեր եյին: Սակայն ուշադրության առնելով տոհմային հարաբերության սոցիալական կազմը, վորի համայնքը բաղկացած եր սոսկ արյունակից ազգակցությամբ միացած տարրերից, պետք է կռահել, վոր ոտար մարդը չեր կարող այդ համայնքի մեջ իրավահավասար անձ լինել: Հետևապես, այդ ոտարները, վորոնք տոհմին խորթ եյին ազգակցությամբ, կարող եյին լինել այնպիսի տարրեր, վորոնք կցվում, միացվում եյին համայնքին երբև դրսից ձևով բերվածներ: Ահա այդ իմաստն է պարունակում ընդոծին տերմինը, վոր բառացի նշանակում է տոհմին պատկանող: Իսկ ձևով բերվել կարող եյին միայն դերիներ, վորոնք, չեթե չեյին վոչնչացվում, անշուշտ, դառնում եյին ստրուկներ: Ուստի ընդոծին ասելով, պետք է հասկանալ ստրուկ-

ներ, նաև նրանք, որոնք ծնվել էին տոհմիկի և տարկուհու սահական հարաբերությունից, անվել տիրոջ տանը և պարձել էին տոհմին պատկանողներ: Ընդոծիններին սոցիալական դրությունը պարզորոշ հետևում է Մովսես Խորենացու այն խոսքերից, թե Հայկը պարգևեց իր թոռ Գաղմոսին «յիւրոց ընդոծնացն սպա սեռանախս». ուրեմն ընդոծիններին կարելի չէր նվիրարերել, իսկ նվիրաբերել կարելի չէր վո՛չ թե տոհմիկ տարրերին, այլ տարրից ծնվածը, որն, ինչպես տարուկ, զուրկ էր և կարելի չէր տասրել: Ընդծիմի տերմինի լեզվաբանական դուրսհանը դառնում ենք հին հունական οἰκοψενής բառի մեջ, որ նշանակում է տնածին: Այդպես էին կոչվում հին հունաստանում այն տարուկները, որոնք ծնվել ու մեծացել էին իրենց տիրոջ տանը: Նույն նշանակությունն ունի հին հռոմեական domi natus տերմինը, որով կոչվում էին տիրոջ տանը ծնված տարուկները:

Հին Հայաստանի իրականության մեջ տարուկ կանայք տվորարար կոչվել են աղախին: Սրա ծագումը, աղխ— alχ բառից է, որ նշանակում էր կարասի, տեխնիկական տարրիա, նրանաման տուն, իսկ աղխ— alχ բառն էլ գոյացել է haχl արմատից, որ վոչքր—ասիական ծագումն ունի և նշանակում է տուն. այստեղից էլ վրացերեն saχli— տուն: Հետևապես անձն էլ, տանավորապես կինը, որ կապված է տան հետ, իրր դառնում է տեխնիկության տարրիա, դասվում է alχ=աղխ-ի շարքում, այսինքն՝ տանուտիրոջ պատկանող, տարկացած, անազատ կինը տառնում է «ծառայի» հոմանիշ «աղախին» անունը, որ նշանակում է տնային տարկուհի: Հիերալիֆ վրացերեն moaχle բառը, որ նույն արմատից է, նշանակում է աղախին: Այս լեզվաբանական ակնարկը մեզ տանում է դեպի աղխ= աղախ= աղախին բառի սոցիալական մեկնաբանման և հիմք է տալիս կռահելու, որ «աղխ» ավելի հին վիճակով, քան թե «աղախին» բառը, այնուհանդերձ նույն սոցիալական իմաստավորումն ունի և այդ իմաստով էլ դրծածվել է Մովսես Խորենացու վերոհիշյալ պարբերության մեջ «ընդոծիններին» հետ միասին: Մի այլ տեղ Մովսես Խորենացու դրծածած աղխ տերմինը պարզապես ցույց է տալիս, որ կանանց է վերաբերում. «Զի կամ մեռցուք, և աղխ մեր՝ի ծառայութիւն ելցէ կացցէ» (ՄԽ, I, գլ. ԺԱ, եջ 38):

Բնորոշ է, որ այդ ու կին ստրուկները սովորաբար տարբերվում են սեռական անուններով այն բոլոր ժողովուրդների մեջ, ուր ընդհանրապես գոյություն է ունեցել ստրկությունը: Ինչպես Հին Հայաստանում այդ ստրուկները կոչվում էին «ծառա», իսկ կին ստրուկները «աղախին», այնպես էլ միջնադարյան Եվրոպայում՝ servus և ancilla· Թյուրք-մոնղոլական ժողովուրդների մեջ այդ ստրուկները հայտնի էին gul, իսկ ստրկուհիները kun անունով· Նմանապես հին սլավ ժողովուրդների մեջ хлоп և раба, իսկ հետագայում՝ раб և рабыня· Նախնական այդ роб (роба) բառը միևնույն արմատից է робить, робливать հին սլավոնական բառերի հետ, որոնց իմաստը կապված է ֆիզիկական աշխատանքի հետ (տե՛ս Даль–ի բառարանը) և նշանակում է վարել, հերկել, ցանել և այլն: Այս պարագան հիմք է տալիս ենթադրելու, որ ստրկության սոցիալական դերնեղիսը պետք է վերանել կնոջ մեջ: Ինչպես վոր նախնադարյան առաջին հերկրագործն եղել է կինը, նույնպես էլ առաջին ստրուկները եղել են կանանցից: Այս ենթադրությունն ավելի իրական է դառնում, երբ մտաբերենք, որ ստրկության նախնական ձևը կրել է տնային բնույթ, տարբերվ դալով իրրև նահապետական ստրկություն:

Ցերբ համեմատության ենք առնում հայկական ֆեոդալիզմի ստրկության վերաբերյալ հիշյալ տերմինները Արևմտյան Եվրոպայի միջնադարյան ֆեոդալիզմի պայմաններում տեղավին գոյություն պահպանած ստրկության հետ, դառնում ենք տերմիններ, որոնք նույն իմաստավորումն են ներկայացնում: Ինչպես հայտնի է, հին Հռոմում ստրուկը կոչվում էր servus, և ահա այդ լատինական բառից է գոյանում ֆեոդալական իրականության մեջ ֆրանկների servage տերմինը— ճորտություն, որի իմաստը նույնն էր, այսինքն՝ դյուղացին, ճորտը անազատ է: Իսկ ֆեոդալական ստրկությունն ուներ այլ տերմին՝ esclavage, որ բղխում է sclavus բառից:

Այն տվյալները, որ դառնում ենք հայ մատենագրության մեջ Հայաստանի ֆեոդալական ստրուկների չահագործման վերաբերմամբ, մեզ հիմք են տալիս ստրուկներին բաժանել հետևյալ տեսակների· ա) արբունի ստրուկներ· բ) ճորտացած ստրուկներ·

գ) անալին սարուկներ՝ ծառաներ ու աղախիններ. դ) առևտրական կամ գեկեղեցական սարուկներ:

3. ԱՐՔՈՒՆԻ ՍՏՐՈՒԿՆԵՐ.— Հին հայ պատմագրական մի քանի միջանկյալ տեղեկություններից կերևում է, որ նախապատմական Հայաստանում դոյություն են ունեցել այսպես կոչված արքունի սարուկներ: Բերենք այդ վկայություններից երկու որինակ:

«Այլ սուրբ կաթողիկոսն Ներսէս այլ ոչ ևս յաւել տեսանել զերեսս թագաւորին Արշակայ մինչև յորն ծորին կորստեան. այլ վախճանակ Ներսիսի զՈւնանակ ոմն անուն, և կացուցին փոխանակ նորա զլուսաւորչականութեանն. և էր սարուկ 'ի տարկաց արքունի» (ՓԲ, IV, գլ. ԺԵ, էջ 127):

«Նա և ի մէջ բերէր զամբաստանութիւն նորա Մուշկան Նուսարտուրա, և յայտ առնէր պատերազմակից ընկերօքն իւրովք, որ և յետ վճարելոյ պատերազմին բազում արիւն ետ յեղուլ վասակ. թէ որպէս սուտ երդմամբք խարէր և խջուցանէր յամբոցաց անտի. էր՝ զոր կոտորէր և էր՝ զոր գերի առնէր զծառայս և զաղախնայս արքունի» (ԵՂ, VII, 235):

Փաստում Բուզանդացին ու Ցեղիշեն, թե հայ պատմագիրների ժամանակ, չեն բացատրում, թե ինչ են արքունի սարուկները կամ արքունի ծառաները: Այստեղ կարելի է երկու տեսակ բնութագրություն անել: Այսպես հին կոչվում էր թագավորին անձնապես պատկանող սարուկները և կամ արքունիքին, այսինքն մեր ներկա ասումով պետության, թագավորի իշխանության ներքին տերիտորիային պատկանող սարուկները: Կարծում ենք, որ ավելի ընդունելի է երկրորդ բնութագրությունը: Ցեթե թագավորին անձնապես պատկանող սարուկները կոչվելին արքունի, ապա պետք է ասեինք, որ մյուս ֆեոդալներին պատկանողներն էլ հարկադրվելու էին համապատասխան ձևով, այն է՝ նախարարական սարուկ, ըղեխական սարուկ, կաթողիկոսական սարուկ և այլն, մի բան, որ բնավ չենք դտնում հայ պատմագիրների մոտ: Ուստի պետք է այն հետևության հանդենք, որ այս դեպքում սարուկները կոչվում էին «արքունի»— հասարակական-պետական առումով:

Իսկ արքունի սասելով՝ հայ պատմագիրները միշտ նկատի են ունեցել թագավորի անմիջական իշխանության ներքո գտնվող մերիտարքան:

Այդ տեսակ սորուկների դոյությունը սովորական է եղել Հին Արևելքի պատմության մեջ: Բաբելոնասանում, Ասորեստանում, Եգիպտոսում կային թագավորական սորուկներ, որոնք աշխատեցվում էին ջրանցքների, ճանապարհների, պետական-հասարակական շենքերի, բերդ-ամրոցների կառուցման և այլ նման հանրային շինարարական ձեռնարկությունների վրա: Նույնն ենք տեսնում սպարտական Հունաստանում (իլոտները Սպարտայում) և Հռոմում, ուր քաղաքային համայնքները հանդիսանում էին կոլեկտիվ տերեր այդպիսի սորուկների, որոնք հատկացվում էին մի՛չ թե անհատներին պատկանող, այլ համայնք- պետության: Վերջապես Արևմտյան Եվրոպայի Ֆեոդալիզմին էլ հայտնի են այսպես կոչված homines regii, որոնք թեև սորուկներ չէին նեղ առումով, այլ ավելի շուտ թագավորական-պետական ճորտեր, բայց նրանք ամենայն հավանականությամբ նախորդ, ավելի վաղ Ֆեոդալիզմի շրջանում պոդյություն ունեցող պետական կամ թագավորական սորուկներից էին:

Այս կատեգորիայի սորուկների ծագումը պետք է վերանել նախկին տոհմային հասարակության մեջ, երբ գյուղական համայնքները, բացի առանձին անհատ- անդամներին պատկանող սորուկներից, իրենց կոլեկտիվ սեփականության ներքո ունեին մյուս արտադրական միջոցների հետ նաև սորուկներ: Հետևապես հիմք ունենք կռահելու, որ արքունի սորուկները Արշակունյաց հարստության շրջանում հանդիսանում էին արքունական տերիտորիայի թագավորական սորուկներ, որոնք զործադրվում էին հասարակական –պետական կարիքներին ծառայող աշխատանքներում և, մանավանդ, թագավորի կալվածքներում զործող ձեռնարկությունների մեջ, այն է՝ զանազան հանքային ընդերքի, ջրաղացների, ձկնորսարանների և այլն: Փավստոս Բուզանդացին հիշատակում է իր Պատմության մեջ թագավորական ձկնորսարանի մասին· «և դիպեցան [հայ և պարսիկ զորքերը] միմեանց առ ափն ծովուն Բզնունեաց, յԱռեսան աւանէ, ՚ի

ձկնատեսանան արքունի ի վերայ դեսակին» (III, գլ. Ը, էջ 19)։

Աղվանից յերկրում, վոր իր սոցիալ-տնտեսական կուլտուրայով ու քաղաքական բախտով սերտորեն կապված եր Հայաստանի հետ, տեսնում ենք տարուկներ, վորոնք միանգամայն համանիշ են հայ պատմագիրների հիշատակած արքունի տարուկներին և զոր-ծադրվում եյին հասարակական-պետական աշխատանքներում։ Այդ մասին վկայում և Փավստոս Բուզանդացին իր Պատմության մեջ հայոց Արշակ Թագավորի վորդի Պապի իշխանության չըր-ջանից։

«Բայց մինչ դեռ խօսեցեալ գային զօրքն Պարսից ի վերայ Հայոց և Ուռնայր արքայ Ազուանից իւրով գնդաւն ընդ նոսա, խօսէր Թագաւորն Ազուանից ընդ այնոսիկ՝ որ ընդ իւրն էին, ասէր. Ցանձն լեցի ձեզ, յիշելով ի ժամանակի՝ երբեմն ձերբակալ արասցուք զզօրսն Ցունաց, զբազումս ի նոցանէ ապրեցուսջիք. զի կալեալս կապեալս տարցուք յաղթանս [մի այլ ձեռագիր որինակում՝ յԱղուանս] ի գործ կաւագործութեան գաղատոս որմաշէնս պիտոյից մերոց բաղաբից ապարանից և այլոց պիտոյից» (ՓԲ, V, գլ. Դ, էջ 197)։

Այս մեզ յենթադրության արքունի տարուկների մասին ավելի ևս հաստատվում է, յերբ ուշադրության առնենք Ղազար Փարպեցու և Ցեղիշեի վկայությունները Աբրահամ Կոստանդնոպոլսու Խորեն յերեցի մասին, վորոնք պարսից Հազկերտ Բ. Թագավորի (439—457 թ. թ.) հրամանով, մաղդեյական կրոնը չընդունելու համար, աքսորվել եյին Ասորեստան աշխատելու, վորպես «արքունի մշակներ»։ Այստեղ «մշակ» բառը, մեր կարծիքով, ունի տարկի իմաստ և վո՛չ թե չինականի, ինչպես յենթադրում է պրոֆ. Հ. Մանանդյանը[162]։ Աբրահամ Կոստանդնոպոլսու ու Խորեն յերեցի մարտիրոսագրության մասին, վորի առնչությամբել գործածվում է «մշակ» բառը, առաջ բերենք հետևյալ հատվածները. «մտեալ ի ներքս Դենշապուհ պատմէր Թագաւորին Ցաղկեդոնի գամենայն բանս և խնդիրս երանելի երիցանցն. և Թագաւորն հրաման տուեալ ասէ... երկիր պատչին արեգական և պատուել զկրօնն՝... արձակեսցին յաշխարհն իւրեանց. ապա թէ չհաւանեսցին՝ պատուհաս կրեսցին խեղդութեամբ և երթեալ Ասորեստան մշակութիւն արասցեն ընդ արբունի մշակսն». այնու-

հետո՝ «կարեալ զերկուցունց զականջն՝ եւս տանել յԱսորեստան ի գաւառն, որ անուանեալ կոչի Շամուլ, կալ՝ տալ նոցա ի հարկի և տանել մշակութիւն արքունի» (Ղփ, II, գլ. ԾԸ, եջ 230, 231):

«Իսկ աշակերտաք Երանելեացն ի կապանս կալեալ ի քաղաքին: Եկն պահճապետ մի արքունեի և հնան ի դնոսա քաղաքէ անտի արտաքս... Զարչարեաց դնոսա պանիւ... կարեաց դնոսա ունչս և զականջս և եւս տանել յԱսորեստան զի կայցեն ի մշակութեան արքունի» (Յե., 237):

Այս հատվածներից հետևում է, որ Աբրահամ Խոսրովանողն ու Խորեն եպիսկոպոսը ձերբակալված էլին ու կապանքի մեջ էլին, բայց այդ՝ չենթարկվում են ծեծի «պանիւ», ապա կտրում են նրանց ականջները (ըստ Յեղիշեի՝ նաև քիթը) և վիրջապես աքսորում պարսկական Ասորեստան՝ «արքունի մշակութեան»: Ինչպես պիտենք հին աշխարհի տարիտաերական կյանքից, տարկութեանը կիրառվում էր նաև իրրև պատժական միջոց, նմանապես տուգանքներին խարում էլին: Ուստի, պետք է ենթադրել, որ Աբրահամ Խոսրովանողն ու Խորեն եպիսկոպոսը, իրրև քաղաքական հանցագործներ, ծանր յմրաստանքներ, ենթարկվում են խոշտանգանքի պատժի, այն է՝ տարկութեան, որի համար էլ խարվում են (ականջները կտրվում) և ապա աքսորվում են այնտեղ, ուր, ամենայն հավանականութեամբ, պատանդական աշխատանքներ էլին կատարվում «արքունի տարուկների» միջոցով, որոնց չարքում, ըստ վերոհիշյալ պատմագրների վկայութեան, կային նաև շատ քրիստոնյա «արքունի մշակներ»: Հիրավի, այդտեղ քրիստոնյա «արքունի մշակներին» դնում էին Աբրահամին տարաութեան և սոսնձում (Խորեն եպիսկոպոսը այդ միջոցում վախճանվում է, չդիմանալով պատժի պայմաններին), վերջինիս չհասուցանելով, որը հավաքել էլին այդ «արքունի մշակներն» իրենց մեջ: Իսկ վերջինիցս ապաստիկ կարող էլին միայն տարուկները և ոչ թե չինականները կամ ճորտերը, որոնք անպատժան կապված էլին հողի հետ:

Պրոֆ. Հ. Մանանդյանը, հիմնվելով Ղազար Փարպեցու վերնում բերված՝ «կալ անդ նոցա ի հարկի» խոսքերի վրա, հակառակ Ե. Մ. Գարագաշյանի կարծիքի, պնդում է, որ Աբրահամ

Աստուածոյի համար վճարված դամարը վերնանք չի լեղել, այլ այն հարկն է, որ նա, «ի հարկի ծառայութեան» մեջ գտնվելով՝ երբև չինական, պետք է վճարել ցմահ: Ընդհակառակը, Ղազար Փարպեցու «կալ անդ նոցա ի հարկի» պետք է հասկանալ միմիայն Հառաւցանեզի հարկի առումով, որը դրված կլիներ «ի հարկի ծառայութիւն» խոսքերով, այլ նշանակում է հարկադրանք, բռնի ստիպումն, հարկադրական ճնշումն: Ցավ վերջապես, չկիա այդ հարկ եր, ապա ի՞նչպես եր չամիկեյու այդ «հարկը» ցմահ, չերբ միշ միշ չեր կարող կանխատեսել, թե ո՛րքան եր տևելու նրա կյանքը, իսկ ազատագրումը կարող եր կիրառվել միմիայն ստրուկների նկատմամբ, չերբ հառաւցվում եր այն վերնանքը, որով չամիկում եր ստրկի արժեքը:

«Մշակ» բառի ստրկի առումով կիրառելը գտնում ենք նաև Չենար Գլակի՝ «Պատմութիւն Տարանոյ» չերկի մեջ: Հայոց կաթողիկոս Գրիգոր Լուսավորչին ուղղված մի նամակում, ի միջի այլոց, բերվում են հետևյալ խոսքերը.

«Բայց արդ ազաչեմ զքեզ, երջանիկ մշակդ աստուծոյ, զի հրամայեսցես մխում ի պաշտօնէիցդ քոց՝ մեզ դրով առաքել զրուցատրութիւն ձերում ճանապարհորդութեան...» (պլ. ՉԳ, էջ 17): Այստեղ «մշակ աստուծոյ» բառերը դործածվում են իբրև համանիշ «ծառայ աստուծոյ» տերմինի, servus dei, раб божий— ստրուկ աստուծոյ իմաստով, որ այնքան դործածական է միջնադարյան մեր որերը կրոնա-կղերական տերմինաբանության մեջ իբրև տիտղոս հոգևոր անձերի:

Ելերջապես «մշակ» բառի լեզվաբանական վերլուծումն էլ մեզ բերում է նրա «ստրուկ» իմաստավորմանը: «Մշակ» բառն ազդարանական ծագումն ունի, հանդիսանալով ցեղական անուն, և բղխում է Մոսոխ, Մոսխ, կամ Մուշկ ժողովրդի անունից (այստեղից էլ Մուշ քաղաքի հնադարյան անունը Տարոնում), որն ապրում եր Հին Հայաստանի սահմաններում: Ասմենները, հետզհետե ղրավելով Հայաստանը, հեռանում են անդարնակ ժողովուրդների չարքում նաև մոսխերին, վորոնք բոլորը չկլին կարողացել ճողոպրել ու դաղթել ալժմյան Վրաստանի սահմանները: Հաղթական հեռաձողները չահագործում են այդ ստորադրված ու ճնշված ցեղը, որն աչխատեցվում եր յերբեմնի

երեն պատկանած, իսկ այժմ նվաճողների սեփականություն դարձած հողերի վրա, անչուչա, ստրկական աշխատանքի վիճակում: Այստեղից էլ Մոսես-Մուսակ-Մուշկ ցեղային անունը լեզվաբանական հնչյունափոխությամբ դառնում է «մշակ», նշանակելով ընդհանրապես ստորադաս աշխատող, ստրկացրած հպատակ, վոր այնուհետև սառնում է հասարակ անվան իմաստ (ԱԱՀՕ, էջ 436): Հիրավի, մինչև վերջին ժամանակները, ինչպես վկայում են ազգագրական ավյալները, հայ գյուղական կենցաղում, մանավանդ արևմտահայերի մեջ, մշակ էլին կոչվում այն սեզոնյա բանվորները, վորոնք յերկարատև վարձվում էլին թե՛ անասին և թե՛ դաշտային ու այլ գյուղատնտեսական աշխատանքների համար:

4. ՁՈՐՏԱՑԱԾ ՍՏՐՈՒԿՆԵՐ.— Հին Հայաստանի արտադրության տիրապետող ճյուղերն էլին յերկրագործությունն ու անասնապահությունը, վորոնք բացարձակապես բնատնտեսություն էլին հանդիսանում: Ահա այդ տապարեզումն եր չահագործվում գլխավորապես ստրուկների աշխատանքը: Սակայն մի հանգամանքն ստրբեր եր ստրկական աշխատանքի կիրառումը տոհմային հասարակության ու ֆեոդալական հասարակության մեջ: Նախաֆեոդալական հասարակության մեջ ստրուկը պարկ եր արտադրության միջոցներից, ինքն էլ իր անձով դառնում եր յուրաքանչյուր արտադրական միջոց, «կենդանի» գործիք, վոր ստրկատերը— լիներ նա առանձին նահապետական պետդատանը կամ գյուղական համայնքը—անխտիր կիրառում եր սեփական անտեսության բոլոր ճյուղերում, մանավանդ գյուղատնտեսության բնագավառում, յերբ տոհմի քայքայումով դեռևս հողային հարաբերություններն աչքառու մեծ չափերով չէլին կենարոնացվել առանձին անհատների սեփականատիրության ներքո: Այստեղ ստրուկն անմիջորեն չահագործվում եր ստրկատիրոջ բովանդակ անտեսության մեջ:

Այլ բան եր ֆեոդալ հասարակության մեջ, ուր արտադրական պայմանները վորոշ չափով փոխում էլին ստրուկների չահագործման նախկին յեղանակը: Ֆեոդալական հողատիրության հիմնական հատկանիշն այն է, վոր այստեղ խոշոր հողատիրությունը զուգակցվում եր մանր անտեսության հետ: Ֆեոդալ

կալվածատերը, կենտրոնացրած ունենալով իր ձեռքին լայնածավալ հողային տերիտորիա, անկարող էր այդ ահագին տարածության վրա . այն ժամանակվա արտադրողական ուժերի զարգացման պայմաններում սեփական խոշոր տնտեսություն վարել: Ուստի, ավելի շահավետ էր դառնում ֆեոդալ-կալվածատիրոջ համար վո՛չ թե չահագործել տուրիական աշխատանքն իր սեփական դյուղատնտեսության մեջ իբրև արտադրական միջոց, այլ ընդհակառակը, դործադրելով նույն արտատնտեսական ճնշումը,— զարձնել տուրուկին անմիջական արտադրող և ոտքի վել նրա արտադրած արդյունքներից:

Այդ նպատակով տուրուկներին հատկացվում էին հողատարածքներ մշակության համար, վորտեղ նրանք բնակություն էին հաստատում իբրև մանր յերկրագործներ և հիմնում սեփական տնտեսություն: Թեև այս դեպքում տուրուկը ձեռք էր բերում վորոշ ինքնուրույնություն և նյութական ավելի տանելի վիճակ, համեմատած այն դրության հետ, յերբ նա անմիջորեն չահագործվում էր տիրոջ կողմից նրա տնտեսության մեջ իբրև արտադրական դործիք, բայց և այնպես նա տնձնապես չէր ազատվում էր տուրիական սոցիալական դրությունից: Նա չարունակում էր կախումն ունենալ իր տիրոջից՝ ամրացված լինելով տիրոջ սեփականություն համարվող հողին ու կապված լինելով անձնական պարտավորություններով դեպի տերը, այն է՝ կոռով ու բահրայով, ֆեոդալական չահագործման այդ կաշխատանքի չղթաներով: Այդ «վերարտնակ տուրուկները», վորոնցից հետագայում զոյացան ճորտ դյուղացիները, և մխաճուլվեցին ճորտացած, նախկին ազատ դյուղացիության մասսայի հետ, միջնադարյան Յեվրոպայի ֆեոդալիզմում կոչվում էին servi casati, այսինքն «խրճիթավոր տուրուկներ», սեփական խրճիթ (casa) ունեցող տուրուկներ: Servi casati-ներին հանձնված հողերը կոչվում էին տուրիական—mansi servites, իսկ իրենք servi casati-ները համարվում էին յուրահատուկ անչարժ դույք, անիզոլելի պատկանելիք հողի. նրանց կարելի յեր վաճառել միմիայն իրենց հողի հետ միասին, վորին նրանք ամրացված էին:

Այսպիսով տուրուկների դասակարգը հետզհետե վերածա-

նախիսվում— պահում էր ժառանգական ճորտ, դյուղացիների դասակարգ:

Ահա այդպիսի համանիշ գծեր ենք նշմարում Հայաստանի սոցիալության ինտախտուտում: Թեև հայ մատենագրության մեջ առայժմ չենք գտնում հիմնավոր տվյալներ այդ մասին, սակայն յենթագրում ենք, որ Հայաստանի ֆեոդալիզմի վաղ շրջանում սպասկներն աշխատեցվում էին ագարակներում, որոնք, մեր կարծիքով, հանդիսանում էին կալվածատեր ֆեոդալների սեփական, նրանց ձեռքով անմիջորեն տարվող տնտեսություններ: Ուրեմն այս դեպքում, հակառակ պրոֆ. Հ. Մանանդյանի տեսակետի[163], կարծում ենք, որ Հին Հայաստանի ֆեոդալական պայմաններում գոյություն է ունեցել մորուչ չափով նաև Gutsherrschaft-ի տիպամը, յերբ ֆեոդալը վարում էր իր սեփական մեծ տնտեսությունը: Այդ տիպամը տակավին գոյություն է ունեցել Հայաստանի խավղական շրջանում: Այդ տնտեսությունների բազանեն էին ագարակներն ու դաստակերտները:

Ագարակ բառը հին սումերական ծագում ունի, որից գոյացել են նաև հին հունական agros և լատինական ager բառը, որ նշանակում է դաշտ, արտ, ընդհանրապես գյուղատնտեսական մշակման հող: Պետք է յենթադրել, որ ագարակները դաշտերում գտնվող խոշոր կալվածատիրական տնտեսություններ էին, որոնք տարվում էին կալվածատեր ֆեոդալի անմիջական տնօրինության ներքո, հետևապես կարող էին չահագործվել մեխանի սպասկների աշխատանքով: Այդ յենթադրությունը հիմնավորում ենք նրանով, որ հին հայ մատենագիրները միշտ տարբերում են իրարից գյուղ և ագարակ տերմիններն և միաժամանակ այդ յերկուսն էլ գործածում են իրար քով: Սահման մենք դիտենք, որ գյուղերի արտադրությունը գուտ ճորտական, չինականային էր: Թեև գյուղերը պատկանում էին ֆեոդալներին և ճորտական արտադրությունը ֆեոդալների շահագործման յեղանակի մեջ էր մտնում, բայց գյուղացիական տնտեսությունը բնավ չէր յենթարկվում ֆեոդալի անմիջական տնօրինությանը. դա սոսկ նրա ռենտայի աղբյուրն էր, որը արտահայտվում էր գլխավորապես բահրայով և կուսային ծառա-

յաւէտյաւիտեան: Գիւղի ու ապարակի այդ տարբերութեան մէջ եկ պետք է վերանայ արտադրողների ֆեոդալական չահագործման յերկու տարբեր ձեները: Յեթե գիւղի չահագործիչները հինականներ կամ ճորտեր էյին, ապա ապարակի չահագործիչները կարող էյին լինել միայն տարուկները, որոնք դանդաղ էյին ազատ անմիջական անօրինութեան ու չահագործման տակ, որպեսզի հնարաւոր լիներ վարձու ապրանքային, այսինքն կապիտալիստական անհատներ:

Առաջ բերենք մի քանի օրինակներ գիւղի և ապարակի մասին:

Փաւստոս Բուզանդացին պատմում է, թէ ինչպես Ոհան յեղեկատսը, փաւեն կաթողիկոսի վերին, «խոզակաուակ» էր անում և իր միմոսութիւններով վարձացնում հայ թագաւորներին, վերջինի նրանից կալվածներ ընծա առնում. «իսկ թագաւորն զմուրճակս գիւղաց կամ զազարակաց դրեալ ի կնքեալ գնէին և վերայ ոչինն Յոհաննու փոխանակ ընդ մեղաց իւրեանց. և ի թագաւորացն Հայոց առացաւ իւր գեղս եւ ազարակս եւ դանձս» (ՓԲ, VI, գլ. ժ, էջ 277—278):

«Որոց [իւր քրոջ վերջինիս վարդան, Հմայեակ ու Համազասպ Մամիկոնեաններին] եա եւ կնքեաց առնլ այրն Աստուծոյ Սահակ (կաթողիկոս) զտաղաւոածս գեղոիցն իւրոց եւ ազարակաց եւ որ ինչ մի անդամ էր իւր՝ եա նոցա ի ժառանգութիւն եւ զաւակի նոցա մինչև ցյաւիտեան» (ՂՓ, I, գլ. ԺՀ, էջ 76):

«Եւ գլխաւոր նախարարք մեր յապահովացեալք եւ հանգուցեալք ի հինից ազգատակաց՝ չինէին եկեղեցիս վիմարդ հաստատելոյս ձուլել կրաւ՝ ի մինոաստանս եւ յաւանս եւ յագարակս»... (ՅԴ., էջ 199):

Ուշագրաւ է Մխիթար Գոշի Դատաստանագրքի յերկրորդ մասի Ա. գլխում հիշատակված կանոնը, որ նա հարկել է հին հայ մատենագրական նյութերի հիման վրա (Մատենադարան Գատմութիւն, II, գլ. Ը. էջ 110) և որի մէջ նա ասում է. «Եւ զեղջկաց նմանապէս առաւել պատիւ լիցի քան զնաւակեաց ագարակի» (ՄԳ, էջ 318): Այստեղ ակնարկ տարբերվում է գիւղը, որի բնակիչներն, անտարակուսա, չինականներ էյին, ապարակից, որի բնակիչներն, ինչպես տեսանում ենք, իրենց ա-

ցեխակաև դրութեամբ ավելի սուր են յղվել, քան գյուղի բնակիչները՝ հնուկանները, իսկ այդպիսիները կարող էին լինել սարուկները:

Նախարարական շրջանում, ինչպես կարելի է կռահել հայ մատենագիրների ավանդած սուղ տեղեկութիւններից, սարուկները բնակեցնում էին նաև դաստակերտներում: Բնորոշ է, որ հայ մատենագիրները այստեղ էլ հաճախ նշանակում են դաստակերտները գյուղի հետ միասին, ինչպես անում են ազարակի նկատմամբ: «Եւ դունդս և պահապանս գրան արքունի պատրաստ զչորքս, զմի մի լերաքանչիւր, վառելովք և նոյն հին զարմից թագաւորացն՝ որ ի Հայկայ, որ ընդ ժամանակս ժամանակըս ժառանգութեան ի հարանց առացեալ գեղս և դաստակերտս» (Մխ, II, գլ. ի, եջ 104—105): Բայց թէ ինչ տարբերութեան կար ազարակի ու դաստակերտի միջև, հայ մատենագիրները չեն բացատրում: Պետք է ենթադրել, որ նրանք յերկուսն էլ նոյն նշանակութեան ունէին ըստ էութեան, թեպետ այն զանազանութեամբ միայն, որ դաստակերտն ավելի մեծ երկրի տարածութեամբ ու անառեսութեան ծավալով, որտեղ չատ անգամ բնակութեան ուներ կալվածատէր իշխանը, նման գուցե ռուսական կալվածատիրական усадьба–ին կամ գերմանական Frohnhof–ին, իսկ «ազարակն» իբրև տերմին ավելի հին ծագում ունի և իր էութեամբ առհմանական տնտեսութեան էր նկատացնում, թեպետ նման արդի «ֆերմա»–ին:

Դաստակերտ բառի ծագումը հայ լեզվագիտութեան մէջ բացատրված է և բացատրել հին պարսկական dasta—ձեռք և կերտ—չինել, կատարել բառերի բարդումով: Հետևապես դաստակերտ նշանակում է այն վայրը, որ չինված է կալվածատեր ֆեոդալի ձեռքով և ուրիշն վարիմի հետևողից գյուղը չէ: Հայ հին մատենագրութեան մէջ չատ հաճախ դաստակերտ բառի փոխարէն նոյն առումով գործածվում է ձեռակերտ տերմինը: Առկայն մեզ ավելի ճիշտ և թվում վերջերս Հայապետ Ց. Կարապետեանի վերլուծումը, որի համաձայն դաստակերտի առաջին վանկը գոյացել է վոչ թէ dasta— ձեռք, այլ հայ-իրանական dašt — դաչտ բառից[164]: Ուրիշն «դաստակերտը» (դաչտակերտ) նոյն իմաստաւորումն և պարունակում, ինչ որ «ագարակ» հա-

յերեն տերմինը, վորի առաջին մասը, արմատը՝ «ագար»—նույնանիշ է հունարեն agros ու լատիներեն ager—դաշտ բառին:

Դաստակերպներն իրենց էությամբ գյուղատնտեսներ էին, վորոնք, կառուցված լինելով գյուղերին կից, գտնվում էին ֆեոդալ կալվածատիրոջ անմիջական տնօրինության, անձնական տեփականության ներքո, իրրև իշխանական մեծ տնտեսություններ: Դաստակերտների գյուղական լինելու մասին վկայում են Զենոբ Գլակի խոսքերը· «Երկոտասան դաստակերտս եւս նմա...» և այնուհետև մի փոքր ստորև, հայորդի պարբերության մեջ այդ դաստակերտները նա անվանում է «տուն», «գիւղատուն», «տանդեղք»· «եւ ընդարձակեալ ունէին տաքս իւրեանց խաչանց արօտականս զդաստն Հաչահնից: Արդ այս առանագեղջ, ի ընդ տուեալ էին կոտցն ի ծառայութիւն, զոր և իշխանք զարձեալ հատատեցին ի սէր եկեղեցւոյն յամս երեսուն և յերկու թուով» (ԶԳ, էջ 37):

Այս ցիտատից կարելի է կռահել, վոր հիշյալ դաստակերտներն անասնապահական տնտեսություններ էին, վորոնք պատկանում էին հեթանոսական տաճարներին և չհատգործվում էին հողևոր ֆեոդալների անմիջական տնօրինությամբ, ինչպես այդ պետք է հետևցնել «ընդարձակեալ ունէին» և «ի ծառայութիւն» խոսքերից: Այդ չհատգործումը, վոր տվյալ դեպքում բռնորոշվում է իրրև ծառայություն, կարող էր լինել միայն տուրքերի աշխատանքը, վորով խոսքաս հնարավորություն էր ստեղծվում ընդարձակելու տաճարական տնտեսությունը: Այստեղ խոսքը չի կարող վերաբերվել չինականներին, վորոնք, ունենալով գյուղացիական տնտեսություն, կարող էին «ընդարձակել» միայն իրենց տնտեսությունը, բայց վոչ տարբերը, և վորոնց ֆեոդալական չհատգործումը Զենոբ Գլակը պետք է վերակերտ հին հայ մատենագրության մեջ սովորաբար հիշատակվող «ի հարկի ծառայութիւն» բառերով, ուր «հարկը» չինականների նկատմամբ հասկացվում է Հին Հարաստանի սոցիալ-տնտեսական պայմաններում վորպես ֆեոդալին վճարվող renta:

Վոր իրոք դաստակերտները բնակեցված էին տուրքերով՝ այդ բացահայտ է Մովսես Խորենացու խոսքերից, թե ինչպես Մամգոս Սպարապետը Յերվանդից գերի վերցրած 500 ծառանե-

ըլեն, վոր նա նվեր առացավ Արտաշես Թագավորից, «տարեալ բնակեցուցանէ ՚ի Թիլանց Մասեաց, ՚ի նոյն անուն Բագարան կոչելով զձեռակերտն» (ՄԽ, II, գլ· ԽԸ, եջ 172)։

Բնորոշ է Աբշամաման քաղաքի հիմնարկումը, վոր Աբշամ Բ· կառուցել էր սկզբում իբրև դաստակերտ, հետագայում իր անմիջական անուրինութեան ներքո դնելով կալվածական բնակատեղ· «Զայնու ժամանակաւ չինեաց իւր սեպհական դաստակերտ մի ի հովիտն անուանեալ ի Կոզ գաւառի»··· Ապա այդ դաստակերտը, բնակչութեան բազմացումով գառնում է ավան, իսկ այնուհետև քաղաք· «իսկ տեղին ուռանռատյը, քաղաքանայը· մեծացաւ, բազմացաւ և ելից գհովիտն ամենայն···» (ՓԲ, IV, գլ· ԺԲ, եջ 109, 110)։

Դաստակերտների անմիջական կախումը ֆեոդալ կալվածատիրոջից և սրա անձնական տնօրինման ու իրավունքի տարածումը դաստակերտի վրա՝ բացահայտ են Աղվանից վաչական սեպհական կանոնների ԺԹ հոդվածից· «սպասս սրանց՝ որչափ իւրեանց դաստակերտք են, դիրեց տանուց եպիսկոպոսի մի՛ իշխեսցեն հանել, և մի՛ եպիսկոպոսն իշխեսցէ հանել տանուց նոցա և տանել···»[165]։

Կալվածատեր իշխանները կարող էին դաստակերտը վաճառել կամ նվիրաբերել, բայց այս դեպքում վաճառվում և նվիրաբերվում էին նաև այդ տնտեսութեանն ամրացած իսկական արտադրողները, այն է՝ տուրքակները։ Այդ տեսիլ հիշատակներ, բացի Զենոբ Գլակի վերնում բերված վիճակութեան վերջին մասից, նաև մի քանի այլ արձանագրեր։

«Զդաստակերտսն և զպատրաստսն քրմօքն հանդերձ և նոյնի գեռնովքն եւ պահմանօքն ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցւոյ սպասաւորութեանն» (Ագ·, գլ· ՃՀ, 781, եջ 397)։ Նեկա դեպքում «պատրաստսն» հասկանալու է դաստակերտի ծառանեք, վորոնք, վոչ այլ ինչ էին, եթե վոչ տուրքակները, բայց վոչ չինականները, մանավանդ վոր նույն պարբերութեան մեջ այնուհետև ասվում է, թե նվիրաբերվել են «ի ծառայութիւն սպասաւորութեան»· մինչդեռ չինականներն իրենց հողերով հանդերձ վոչ թե «սպասավորներ» էին, այլ հարկատուներ՝

ունեաց (թէ՛ աշխատապարտ և թէ՛ արդյունավճար) հատուցանողներ:

«Եւ պահոն (Թագրան) ամենայն դատակերտօճն հանդերձ և սահմանօքն յանուն եղկեցւոյն նուիրէին» (Ագ., պլ. ձԹ, 784 եջ 398):

«Յայնմ ժամու և ազգային նոցա կամաւոր սկզբամբ իւրաքանչիւր հանդերձ՝ ի ձեռն մեծին Գրիգորի, ազբայել ընդունելով ի Ջրոյն, տալ նմա ժառանգութիւն զհեծ դատակերտն Աբատաշէն, որ այժմ ասի Դրասխանակերտ» (Մխ, պլ. Դ., եջ 242):

Վերահիշյալ վերջին խոսքերի հիման վրա հավանական ենք գտնում, որ դատակերալը սկզբնական չէր նա սակ կալվածական անհատութիւն եր, հատուկ անուն չէր կրում: Հետագայում, երբ վայրը քնակչութեան ստվարացումով ու սահմաններին ծավալումով ստանում է այլ անհատական նշանակութիւն և կորցնում իր նախկին բնութիւը, նա դառնում է աման, ամրոց կամ քաղաք և ընդամին յուրացնում է հատուկ անուն, ինչպես օրինակ՝ Դրասխանակերտը, Արշակավանը և այդպես մի սակաւ չարք դատակերտներ, որոնք հիշատակվում են հայ պատմագրութեան մեջ:

Վերևում բերված ցիտատներից ակներև է, որ դատակերտները հանդիսանում էին ֆեոդալ իշխանների անձնական կալվածներ և նրանց «ծառայութեան» ներքո գտնվող անհատութիւններ, ուստի և տուրքերին, պլխավորապես զերիներին և ապա ծառաներին, առաջին հերթին բնակեցնում էին իրենց պատկանող դատակերտներում: Այդ են վկայում հետևյալ փաստերը:

«Յայնժամ Սմբատայ զծառայն Ելուազայ, զոր զերեացն ի Բագարանէ, տարեալ բնակեցուցանէ ի Թիկանց Մառեայ, ի նմին անուն Բագարան կոչելով զգեղակերտն» (Մխ, II, պլ. ԽԹ, եջ 172):

«Իսկ զԱնոյշ դառաջին կինն Աժդահակայ եւ զդուստրսն ի սերմանէ Աժդահակայ աղջկունս՝ հանդերձ պատանեօք եւ այլ բազում զերեօք, որչափ թէ աւելի քան զերիս մի, բնակեցուցանէ յարևելեայ ուրոց մեծի լերինն՝ մինչեւ ի սահմանս Գողթանն, որ են Տամբատ, Ոսկիզայ, Դաժգունք եւ որ այլք առ եղերք գետոյն դատակերտս» (Մխ, I, պլ. Լ, եջ 84—85):

Ծակաչն հայ մատենագրական ավյալներից յերևում է, վոր քաղաքներն, ինչպես Տիգրան Մեծը կամ Վաղարշակը (ՄԽ, II դլ. Ը, եջ 105) և նախարարները դերեներին վորոչ դեպքերում քնակեցնում եյին նաև գյուղերում ու շենքերում: Հին Հայաստանի գյուղերն ու շենքերն այն վայրերն եյին, ուր նստած եյին ակղբում, ատհմային հասարակության չրջանում, ապատ համայնիկները, իսկ այնուհետև, ֆեոդալական չրջանում, ճորտացած գյուղական համայնքները, չինական դասակարգը: Հետևապես ֆեոդալ իշխանները, բնակեցնելով այդպես դերեներին ու ամրացնելով հողին երբև ճորտացած սարուկներ, չեյին նայում նրանց երբև իրենցից անմիջապես կախված սարուկների վրա, քանի վոր վերջիններս չեյին դառնում «արտադրական դործիք», չեյին աշխատում անմիջապես կալվածատիրոջ պատկանող անտեսություններում, այլ աշխատում եյին իրենց անձնական անտեսության մեջ: Այս դեպքում պետք է յենթադրել, վոր այդ ճորտ սարուկներն, ունենալով արտադրության սեփական վորոշ միջոցներ, ժամանակի ընթացքում միաձուլվում եյին համապյուղացի ճորաների հետ և դառնում չինականներ, իսկապես դուրս գալով սարկական վիճակից:

Թե ինչպես եր արտահայտում ճորտացած սարուկների, Հին Հայաստանի այդ servi casati-ների, կախումն իրենց փեոդալ տերերից կամ ինչ հարաբերություններով եյին նրանք կապված իրենց չահագործող կալվածատերերի հետ, հայ մատենագրական տպրյուրները մեզ տեղեկություններ չեն տալիս: Սակայն ուշադրության առնելով արտադրության ֆեոդալական յեղանակի ունիվերսալ բնույթը սարուկների և ճորաների վերաբերմամբ դրեթե բոլոր յերկրներում, դժվար չէ կռահել, վոր այդ ճորտացած սարուկները, գոնե սկզբնական չրջանում, յենթակա եյին բացառապես կոսային կարգի չահագործմանը: Համենայն դեպս նրանք միանգամայն տարբերվում եյին իրենց անտեսական ու սոցիալական դրությամբ չինականներից, յենթակա լինելով, չնորհիվ իրենց անազատ վիճակի ու անձնական անմիջական կախմանը տիրոջից, ավելի դաժան աշխատանքի և ավելի անգութ չահագործման:

Ըստ յերևույթին, ճորտացած սորուկները չպատճառում եյին դժուրթյուն ունենալ նաև միջնադարյան Հայաստանում, մասնավորապես Կիլիկյան թագավորության մեջ, ուր սորկության ինստիտուտը, նայած մեզ հասած պատմական տվյալներին, զարդացած եր բավականին մեծ չափերով: Այդ բացահայտ է Սմբատ Գունդստաբլի (Սպարապետի) Դատաստանագրքից, ուր նա սորուկների (ծառաների) և ճորտերի հետ միասին հիշատակում է նաև այսպես կոչված պարիկոսներ[66]: Այս տերմինը Կիլիկյան Հայ Դատաստանագրքի մեջ մտել է Բյուզանդական իրավունքից, վորտեղ այդ տերմինը հոլջորջվում է paroikos: Վերոհիշյալ հոդվածից պետք է այն հետևությունն անել, վոր Վերոհիշյալ պարիկոսը վո՛չ սորուկ է իր իսկական առումով և վո՛չ ընտանական, այլ իր սոցիալական նշանակությամբ բռնում է այդ կարգի մեջին տեղը:

Պրոֆ. Յ. Կարասը Սմբատի Դատաստանագրքի վերոհիշյալ ուսումնասիրության մեջ, նմանապես հին հայ իրավունքի պատմության նվիրած իր մի այլ աշխատության մեջ[67] պարիկոսներին համարում է հողին ամրացված սորուկներ— Grundsklaven: Հետևապես նրանք վորոշ չափով հոմանիշ են մեր ակնարկած ճորտացած սորուկներին:

Ճորտացած սորուկների կերբեմնի գոյությամբ պետք է բացատրել, վոր շատ հաճախ մեր միջնադարյան մատենագրության մեջ սորուկ և ճորտ բառերը խառնում են, նույնանիշ իմաստ տալով այդ կերկու տերմիններին: Նույնիսկ XVIII և XIX դարի սկզբի արխիվային վավերագրերում, ինչպես և Թբիլիսիի ու Ցեղուանի նախկին նահանգների հայ հոգևոր կոնսիստորիաների գործերում, շատ անգամ ստրուկ բառը գործածվում է ճորտի իմաստով, կերբ խոսվում է վանքապատկան ու յեկեղեցական կալվածքներում նստած ճորտերի մասին: Այս հանգամանքը վկայում է, թե ինչպես կերկար ու ճիզ դարեր անցնելուց հետո, կերբ այլևս վերացվել եր սորկությունը, այնուամենայնիվ «ճորտ» տերմինն իմաստավորվում եր «սորուկ» սոցիալական առումով, վոր հնազանդ մի մնացուկ և այն սորուկների իրական դրությունից, վորոնք ճորտացած եյին:

5· ՏՆԱՑԻՆ ՍՏՐՈՒԿՆԵՐ.—Յեթէ ֆեոդալական կալվածքներում ու հողերում դյուզառնեռեութեան մեջ չհապարծվում եր սարքական աշխատանքը, ապա էս առավել ոգտագործվում էին սարուկները կալվածատեր ֆեոդալի տնային տնտեսութեան մեջ· ղրանք տնային սարուկներ էին: Հին Հունաստանում այդ տեսակ սարուկները կոչվում էին οἰκέτας կամ οἰκῆες, հին Հռոմում famulus, իսկ միջնադարյան ֆեոդալական Յեվրոպայում՝ servi manentes: Այս սարուկները կազմում էին առանձին մի կատեգորիա, իհարկե հողազուրկ, բայց անձնապես կախված ֆեոդալից, որի տանը նրանք աշխատում էին, կատարելով այն ամենը, ինչ որ տնտեսութեան ուներ տնային տնտեսութեան հետ: Կային զանազան տեսակ ոպասավորներ, նաժիչներ, դայակներ, անհետաոավորներ, կարպետներ (դերձակներ), մանածագործներ, ջուլհակներ, կոշտպաններ, պարտիզպաններ, տավարածներ, վերակացուներ, դործակատարներ և այլն և այլն: Բազմակողմանի տնային տնտեսութեան կարիքները, կենցաղային բոլոր ոպասողական պահանջները բավարարվում էին սիրող բնատնտեսութեան պայմաններում տնային ինքնամփոփ տնտեսութեան արտադրանքներով, որոնք սահմանվում էին տնային սարուկների աշխատանքի չհաշտարծմամբ: Այս կարգի սարուկների մեջ չհաշտարծվում էին թե՛ այր-մարդիկ և թե՛ ավելի մեծ չափերով՝ կանայք, որոնք, բացի այդ, պետք է բավարարեին նաև ֆեոդալների սեռական պահանջները, հանդես գալով հարճերի դերում:

Ահա այս տնային սարուկներն էին, որ հայ ֆեոդալական տնտեսութեան մեջ իրենց իսկական իմաստով կոչվում էին «ծառա» և «աղախին»:

Առաջ բերենք հայ մատենագրութեունից մի քանի արձանագրութիւններ, որոնք վկայում են տնային սարկութեան մասին:

Աբրահամ Կոստովանդի «Վկայք արեւելից» պատմութեան մեջ նկարագրվում է, թե ինչպես մոգպետը, կամենալով հրապուրել քրիստոնյա Յեղանդուխտին, կարդագրում է՝ «Զի դերանելին եզանպուխտ տարեալ անցուցանիցեն առ պրուք ապարանից իւրոց և ցուցցեն նմա զամենայն արարս նորա և պրաքութիւն ծառայից նորա և զաղախնանց, զի հանցեն առաջի նորա, զի տեսանելով

պրպմութիւն առացուածոց նորա, համանեցի լինել նմա կնութեան»[168ա]:

Ագաթանգէղ վարդի Հովսեփը «ընակիչս աշխարհին [Հայոց] վարեաց ի պերութիւն, վաճառակուռ առնել ի կողմանս Ասորոց և յամենայն առմանս ակրութեանն առաքաց. և դիմս պերոյն ընդ խրեանց ունելով ի քաղաքն, լինել իրեանց ջրկիրս և փայտակոտրս» (ԹՒ., պլ. Զ, էջ 199—200):

«Եթէ կին ոք արար և ամուլ պատահեաց, և այրն հանցէ զնա վասն ամրութեան, որ ինչ կնոջն կարասի բերեալ է ի տուն, թէ՛ ապախին, թէ՛ անասուն, թէ՛ հանդերձ, թէ՛ արծաթ, առնուլ իշխան է և գնալ» (Կանոնք Շահապիվանի ժողովոյն. կՀ, էջ 64):

«Քահանայք մի՛ արբեցողք և մի՛ հանդանակողք և մի՛ արծաթագին աղախնայս առանուլ և կամ ի կապենաց պռոնկաց՝ ի տունս առնել զղարչելիսն, զոր ոչ հրամայեն օրէնք» (Կանոնք Ներսէսի կաթողիկոսի և Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի. կՀ, հտ. Լ, էջ 115):

«Իսկ դայրն Մամիկոնեան պվարդ ո՛չ միայն լոկ անձամբ, այլև ծառայիւք, զրամբ և կազմածով, յամուր տեղեաց չահատանին ի բարձրարերձ պարսպացն և յատպարափակ բարձունքն պահատանացն, ընկալեալ երկն պարծուի ի թիկս իւր և ընդ բազում անցուցեալ օթևանս՝ անհալ հասուցանէր խաղաղութեամբ ի յերկիրս Հայոց» (ՂՓ, III, պլ. ՀԲ, էջ 289):

Տնային տարկութեան պարզացումը նկատվում է պլխավորապես Արևելքում՝ Փոքր ու Աւաջավոր Ասիայում, վորտեղ յուրահատուկ սոցիալ-տնտեսական պայմաններում նա չատ անդամ համապատասխանում էր տիրող բնտանիքի հատատարիմ մարդ, բնտանիքի անդամին հատատար անձ և կամ հնարատրութեան էր տատնում իր տեղական բնտանիքն ունենալու[168բ]:

Բացի այդ՝ անային տարտկների վիճակը, մյուս կատեգորիայի տարտկների համեմատութեամբ, ավելի տանելի էր ու ավելի մեղմ: Այդ հատկանալի է. անային տարկութիւնն իր պարզացմամբ խոչընդոտ չարունակութեան և նահապետական տարկութեան, վոր սկսել էր գոյանալ տոհմային հատարակութեան մէջ և ապա տոհմի քայքայումով նոր սոցիալ-տնտեսական

պայմաններում չհապաղծման համապատասխան ձևեր էր ստացել: Այդպես էր նաև ֆեոդալական հասարակության մեջ, որտեղ տոհմային հասարակակարգի արտադրության վերապրուկներով կայուն էր մնում տնային ստրկությունն ստրուկների այլ կատեգորիաներին առընթեր:

6· ՏԱՃԱՐԱԿԱՆ ՍՏՐՈՒԿՆԵՐ.— Ինչպես հայտնի է, հասարակության ֆեոդալականացումով՝ կրոնական հաստատություններն էլ համապատասխան բնույթ ստացան: Առաջացավ կրոնահոգևոր իշխանություն իր առանձին ապարատով, իր հիերարխիայով, իր հոգային և նյութական այլ հարստության ձևերով, որոնք մի նոր համապատասխանում էին արտադրական նոր ձևերին, դասակարգային սիրող հարաբերություններին: Տակավին Հայաստանի հեթանոսության շրջանում յեկեղեցին ու նրա սպասավորությունը ներկայացնում են ֆեոդալ-կալվածատիրական կարգ, որ հետագայում քրիստոնեության մուտքով՝ դարձավ հեթանոսական մնացուկներին ու քրմական դասին հաջորդող քրիստոնեական վանքերի ու յեկեղեցիների և քրիստոնյա հոգևոր դասի ժառանգությունն:

Լինելով իր սոցիալական նյությամբ ֆեոդալական և իր տնտեսական կառուցմամբ կալվածատիրական, թե՛ հեթանոսական և թե՛ նրա ժառանգ քրիստոնեական կրոնավորությունն իրենց նյութական գոյությունը խարխուլ էին արտադրության ֆեոդալական յեղանակի վրա: Այստեղ էլ մնում էր ստրկությունը, որը, յեթե աչխարհիկ ֆեոդալական դասակարգը պահպանում էր միայն արտատնտեսական ճնշումով, ապա հոգևոր ֆեոդալական դասակարգի մեջ վավերացվում էր նաև կրոնատուվածաբանական դատափարախոսությամբ ու սրբատրծվում յեկեղեցու «որհնությամբ»: Գոյություն ունեին հատուկ տաճարական ստրուկներ՝ ἱεροδοῦλοι, որոնք չհապաղծվում էին հոգևոր դասի ձեռքում կենտրոնացած լայնածավալ կալվածքներում ու տաճարական տնտեսություններում թե՛ իբրև ճորտացած ստրուկներ և թե՛ իբրև տնային ստրուկներ:

Հուլն պատմագիր Ստրաբոնի ասելով՝ հայերը նվիրաբերում էին Անահիտ դիցուհուն այր ու կին գերիներ, որպիսի ստրուկներն թիմն ահագին չափերի էր հասնում[169]: Ագաթանգեղոսը,

պատմելով Անահտի մեհյանի կործանումը Գրիգոր Լուսավորչի ձեռքով, ավելացնում է՝ «և զպատահարսն և զպատաւորսն քրմօք հանդերձ և նոցին պահնօքն և սահմանօքն ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցւոյ սպասաւորութեան» (պ. ՃԸ, էջ 781):

Տրդատ Թագավորը պատերազմում ձեռք բերած ավարից, որա թվում նաև գերիներից, մասն էր հանում և նվիրում տաճարներին. «նաև հինգերորդ ևս հանէր յամենայն մեծամեծ աւարացն ածելոց, և մեծամեծ պարգևս քրմացն չնորհէր» (Ագ. էջ 24):

Քրիստոնեության ընդունումն էլ չարունակվում էր սարուկների նվիրաբերումը եկեղեցիներին: Ներսես Կամսարականը, պատերազմից ավար վերցնելով գերիներ, «եկեալ ի վաղարշապատ՝ տայ ի սուրբ եկեղեցիան զվեչտասանհերսդ մասն գերեացն»[170]:

Բնորոշ է, որ մինչև վերջին ժամանակ հայ ժողովրդական հավատալիքներում պահպանվել էր սովորություն՝ ուխտ անելու, երեն նվիրելով այս կամ այն սրբին. այդպիսիները կոչվում են «սրբի գութ», այսինքն սրբի սարուկ, ծառա: Տաճարական սարուկների վերաբերմամբ հիշողություններ են պահպանվել հայ ժողովրդական ավանդությունների մեջ, որտեղ պատմվում է տաճարներին սպասարկող «կաղ գևերի» մասին Մուշի ս. Կարապետ վանքում, Վասպուրականի Հոգովոց վանքում և այլն, որոնք կառուցված են նախկին հեթանոսական տաճարների ավերակների վրա:

«Անճևացոյց գավառի Հոգովոց վանքում գտնվում է կուռքաթի անունով մի գև. Գրիգոր Լուսավորիչն այստեղ գևերին հալածելիս՝ զիջավ սրա խնդրին ու չհալածեց սրան այն պայմանով, որ չարունակ ծառայեր այս վանքին ու սրա թոնիրների մոխիրը տաներ ածեր Տիգրիս գետը: Նույնիսկ Տիգրիսի ափին ցույց են տալիս մի տեղ, որտեղից այս գևը վանքի մոխիրները հանում, լցնում և գետը: Վանքի անտեսուհին ամեն որ մի գունդ խմոր և չաղախում և դնում թոնրի ականի մեջ, որպես կուռքաթի բաժին»[171]: Նույնանման ավանդություն պատմվում է ժողովրդի մեջ ս. Կարապետ վանքի մասին, որն առաջ և բերել Գ. Սրվանձտյանն իր «Գրոց—բրոց» յերկասիրության մեջ:

7· ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ.— Սարկավագության գործողության ամբողջությունը կարելի է ճանաչել մասամբ նաև սարուկների քանակի առկայությամբ: Ինչպես կարելի է կռահել հայ մատենագրության ավանդների հիման վրա, սարուկների քանակը՝ Հին Հայաստանում եղել է բազմաթիվ: Հայ մատենագիրները հաճախ հիշատակում են «ծառայս անճին բազումս», բայց չեն տալիս թիվը: Սակայն և այնպես երբեմն հայ մատենագրության մեջ առաջ են բերվում նաև թվեր: Անանիա Շիրակացու առթիվ՝ Ներսես Կամսարականը «ի յաղթել պատերազմաւ բահղճացին առնու զերբ սասուիկ յոյժ», և ապա այդ սարուկներից մանր հանելով զանազան նվիրաբերությունների համար, իրեն անճնապես թողնում է 570 սարուկ (ԻԱ հարցումն): Մովսես Խորենացին ավանդում է Սմբատ Սպարապետի մասին. «Եւ ապա առաք առեալ զդանճան Երուսաղէմ և ծառայս անձինս հինգհարեւր, նաև զընտիր ընտիր զանճուցն մեհենից՝ բերէ Արտաշէսի: Եւ Արտաշէս պարգեւէ Սմբատայ զծառայսն Երուսաղէմ» (ՄԽ, II, գլ· ԽԸ, էջ 171):

Այս թվերը ներկայացնում են միայն մեկ անգամվա ձեռք բերված սարուկները: Սակայն հայ թագավորներն ու նախարարները պատված էին անվերջ պատերազմներով ու ասպատակություններով, որոնց ժամանակ, անտարակույս, քանի-քանի անգամ այդպիսի 500-ներով էին սարուկներ ձեռք բերվում:

8· ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ.— Սարուկները, լինելով անհիշատակ արտադրողներ, որոնց չափազրծումը կատարվում էր արտատնտեսական ճնշումով, անտարակույս, ըստ այնմ էլ պետք է դրված լինեին առանձնահատուկ սոցիալ-իրավական պայմաններում, որտեղ հնարավոր լիներ չափազրծումը տերերի կողմից: Այդ պայմանները դոյացել էին հենց սարկավագության ծագման առաջին մոմենտից, այսինքն տհմային հատարակության քայքայման սկզբնական ուրից, և ձևավորվել պատակարգային հատարակակարգում, երբ համաճայն զարգացող արտադրական հարաբերությունների՝ հասարակական կազմակերպման մեջ արտատնտեսական ճնշման միջոցները: Հետագայում, դարերի ընթացքում, սարուկների սոցիալ-իրավական պայմանները օրինականացվեցին այն իրավա-

քանական նորմերում, վորոնք սահմանում էր տիրապետող դասակարգն իր դիրքերն ապահովելու և իր շահագործման եղանակներն արդարացնելու նպատակով: Սկզբնական շրջանում այդ օրինականացումը հենվում էր սովորութային իրավունքի վրա, վոր դարերով մշակվել ու կոփվել էր հասարակական հարաբերություններում, իսկ հետագայում պետական կենտրոնական իշխանության միջամտությամբ այդ օրինականացումն արտացոլեց սեփականության գործող իրավունքի մեջ գրավոր նորմերով:

Ահա այդ ենք տեսնում նաև Հին Հայաստանում, վորտեղ տարուկների շահագործման պայմաններն արտացոլել են հայ իրավաբանական նորմերում, վորոնց մեզ հասած գրավոր օրինակներն առայժմ միակ աղբյուրներն են տարուկների սոցիալ-իրավական դրությունը պատկերացնելու համար: Այդ տեսակետից չատ սուղ նյութ է պահպանվել Հայաստանի հին դարերի պատմությունից, վորովհետև այդ շրջանում բացակայել է պետական աշխարհիկ օրենսդրությունը:

Հայ յեկեղեցական ժողովներում սահմանված կանոններից մի քանիսներում արձագանք է գտել նաև տարուկների, ծառաների ու աղախինների սոցիալ-իրավական վիճակը: Այդ սվյալները խիստ թերի յեն ու բնավ չեն ներկայացնում տարկության բովանդակությունը, վոր տակավին չարունակում էր կարգավորվել սովորութային իրավունքի նորմերով:

Նմանապես Մխիթար Գոշի ու Սմբատ Գունդստաբլի դատաստանագրքերում հոլինված են հատուկ հոդվածներ, վորոնք իրավական կարգավորման ներքո յեն առել տարուկների ու տարկատերերի փոխադարձ հարաբերությունները: Սակայն այդ յերկու հեղինակները տարբեր յեղակետներով են մոտենում տարկատիրական իրավունքին: Մխիթար Գոշը տարուկների իրավական դրության հատկացված հոդվածները հոլիններիս՝ ամբողջովին չեն թարկվել և Մովսիսական օրենքներին, այն հարմարեցնելով Հայաստանի իրականության ու տեղական ֆեոդալական պայմաններում վերաբերվող տարկատիրության: Իսկ Սմբատ Գունդստաբլը, մանդամասն այլ բնույթ և ավել տարկատիրական իրավունքին, չնայած վոր նրա ամբողջ Դատաստանագիրքը կազմված է, հիմք ունենալով Մխիթար Գոշի

Դատաստանագիրքը: Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքում չափազանց նվազ է նկատվում Մովսիսական օրենքների աղդեցությունը. ընդհակառակը, սարկուքյան վերաբերյալ օրենքները գլխավորապես առդորված են Հունա-Հռոմեկան (բյուզանդական) և մասամբ տեղական ֆեոդալական իրավունքի սկղբունքներով: Ուստի Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքի հոդվածները, վորոնք վերաբերում են սարուկներին, կրում են ավելի խիստ ու դաժան բնույթ Մխիթար Գոշի Դատաստանագրքի համեմատությամբ. այս մի ակնբախ հանդամանք է, վորից պետք է կռահել, վոր Կիլիկիայում սարկուքյունը կայուն մի ինստիտուտ էր տակավին և սարուկների վիճակը համեմատաբար ավելի ծանր ու չարքաշ էր:

Այդ, տեսանենք, թե վերոհիշյալ սղբյուրներն ի՞նչպես են ներկայացնում սարուկների սոցիալ-իրավական դրությունը Հայաստանում:

9· ՏԻՐՈՋ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՎՐԱ.— Հին հայոց իրավունքի բոլոր սահմանումները տոդորված են մի հանուր խմաստով, վոր սարուկն ազատ մարդ չէ. նա անձնապես պատկանում է վո՛չ թե իրեն, այլ տիրոջը. նա իրավանց անձն չէ, այլ սոկ իրավանց առարկա: Հայ մատենագրության աղբյուրներում սարուկներն, այսինքն ծառաներն ու աղախիններըը, սովորաբար հիշատակվում են անփականության նյութերդեն իրերի հետ միասին: Աբրահամ Յոսոփովանցի՝ «Վկայք Աբեղից»-ի մեջ սովորական դույքի հետ, վորն այնտեղ արտահայտված է «արար» բառով, թվում է նաև «պրագմատիկոն ծառայից նորա [մոզպետի] և զաղախնայ»· իսկ մի փոքր հետո այդ բոլորն, այսինքն «արարը», ծառաների ու աղախինների բազմությունը համարում է առարկված, անփականություն. «զի տեսանելով պրագմատիկոն առարկուածոց նորա» (էջ 337): Կանոնադրքի ու Դատաստանագրքի հոդվածներում կանանց ոժիտի մասին հիշատակելիս՝ սովորաբար անասունների ու անշունչ առարկաների հետ միասին, իրրև սեփականության իր, թվում են նաև «աղախիններին»:

Մեր հին մատենագրության մեջ սարուկը՝ ծառան միշտ հակադրվում է տիրոջը: Որինակ՝ Ցեղիչեն ասում է. «Ոչ երևէր

այնուհետև առաւել պակը քան զծառայ» (III, էջ 115), կամ ինչպես չէշմած և Աստրա–Հռոմէական Դատաստանագրքում. «Զի ծառայն և ակր չեն հաւասար յանձն իշխանութեան» (հոդ. ԻԹ, էջ 14): Յետ Հին Հայաստանում տիրապետող դասակարգը՝ ազատանին արհամարհանքով էր վերաբերվում դեպի չինականները, ինչպես այդ ակներև է Ցեղիշէի վկայութիւնից՝ «Զի ի մէջ չինական մարդկան կեցեալ էր և տիրատոքն ևս էր ի պատ մխիթարութենէ» (պ. Ը, էջ 171), ապա ևս առաւել արհամարհանք էր տածվելու դեպի տարուինները՝ ծառաներն ու աղախինները: Զատ չէր կանոնադրում Աշտիշատի եկեղեցական ժողովը (365 թ.), որ «ծառայից պատուիրէր կալ յարդարն հնազանդութեան իւրեանց տէրանց» (կանոն Զ.):

Տիրոջ տեսականութեան իրավունքը տարածվում էր նաև տարկի ընտանիքի անդամների՝ կնոջ ու զաւակների վրա: Այդ մասին վկայում է Մխիթար Գոշի Դատաստանագիրքը. «Եթէ պատահի քրիստոնէի դնել ծառայ քրիստոնեայ ըստ օրինացն վեց ամ ծառայել և ելանել յեօթներորդ ամին. եղիցի մեղ—յորժամ ըստ գնոյ իւր ծառայեացէ՝ ելցէ ազատ: Եթէ ինքը միայն մահասլ իցէ միայն ելցէ, և եթէ կնաւ հանդերձ մահասլ իցէ, ելցէ և կինն ընդ նմա: Ապա թէ տէր իւր տացէ նմա կին և ծնանիցի նմա որդիս և դստերս, կինն և որդիքն տեառն ծառայ եղիցին, և նա միայն ելցէ. փրկանօք ելցեն և նոքա» (ՄԳ, II, հոդ. Ի, էջ 335):

Տարուկը, զուրկ լինելով անձնական իրավունքից, չէր կարող մորևէ հասարակական պաշտոն վարել կամ կոչումն ստանալ, որ վերապահված էր միայն ազատ դասակարգին: Այդ բացահայտ է նրանից, որ տարկին արգելված էր, համաձայն կանոնական իրավունքի, հոգևոր կոչումն ընդունելը: Այս որոշումը մտել է նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքի (II, հոդ. ԺԵ) և Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքի մէջ (հոդ. ԺԸ, ՃԺԵ), որոնք թույլատրում են տարկին հոգևոր կոչումն ընդունել միայն այն դեպքում, երբ նրանք իրենց տիրոջ համաձայնութեամբ նախապես լիակատար ազատութիւն են ստանում: Նմանապես տարկատերն իրավունք չուներ տարկին իրեն ծառանդ դարձնել (ՍԴ, հոդ. ԺԸ: ԱՀԳ, հոդ. ՃԺԷ):

Այդ նույն հիմունքներով սարուկն իրավունք չուներ հանդես գալ դատական ատյանում խոսելու և կամ իր տիրոջ փոխարեն իրեն անձնափոխանորդ ներկայանալու: Այդ արդելքը բացահայտ և Սաորա–Հռոմեական Դատաստանագրքից. «Եթէ ոք հրամայէ իւրում յառենի փոխան իւր խօսել և առնել իրաւունս ինչ, չունի հրաման ծառայս օրինացս խօսել վասն նորա, զի ծառայն և տէրն չեն հաւասար յանձնիչխանութեան» (Ա.Հ., հտ. Ի, էջ 14):

Տիրոջ անձնականության իրավունքն իր սարկի վրա վաչ մի բանով չէր տարբերվում այն իրավունքից, որ ուներ տերն իրեն պատկանյալ անասուններին ու այլ անշարժ առարկաների վերաբերմամբ: Այդ անձնականատիրական իրավունքը արտահայտվում էր նրանով, որ տերը կարող էր իր սարուկներին, մյուս անձնական իրերի հետ համահավասար, նվիրաբերել մի ուրիշին կամ վաճառքի ու գնման առարկա դարձնել:

Տերերը կարող էին իրենց սարուկներին նվիրաբերել՝ դատարան անձերի ու կրոնական հաստատությունների: Մովսես Խորենացին պատմում է, թե ինչպես Գեղամ Նահապետան ընծայում է սարուկներ և իր ստացվածքի մեծ մասն իր վարդի Սիսակին. «Մաս դմեծ մասն ընչից իւրոց տուեալ, և ծառայ՝ անձինս բազումս» (Մխ, I, գլ. ԺԲ, էջ 44), կամ ինչպես Արտաշես Քաղավորը նվիրում է Սմբատ Սպարապետին Ցերվագից գերված սարուկներին. «Եւ ապա աւար առեալ զդանձան երուսաղայ, և ծառայս անձինս հինգարեւր... բերէ Արտաշէսի: Եւ Արտաշէս պարգեւէ Սմբատայ զծառայան երուսաղայ» (Մխ, II, գլ. ԽՀ, էջ 171): Ըստ նույն Մովսես Խորենացու Պատմութեան՝ Ռշտունյաց Նահապետ Պահարոսը խոստանում է Բարդգիսրանին ընծայել սարկուհիներ. «խոստանայ հինգ հարիւր կին գեղեցիկ և հազար քանքար ոսկւոյ՝ զի օգնեսցէ նոցա» (Մխ, II, գլ. ԺԹ, էջ 127): Ագաթանգեղոսը պատմելով Անահտի մեհյանի կործանումը, ավելացնում է. «Եւ զղաստակերտան և զպատաւորսն քրմօքն հանդերձ և նոցին գեառնովքն և սահմանօքն ի ծառայութիւն նուիրեցին Լևեղեցւոյ սպասաւորութեան» (Ագ., գլ. ՃՀ, 781, էջ 397):

Ամենի ցայտուն որինակ է ներկայացնում Անանիա Շիրակա-

ցու վկայութիւնը «Յաղագս հարցման և լուծման» մէջ, ուր նա խօսում է Նեբաւհ Կամսարականի կողմից արված հիւրասիրութեան մասին. «Նեբաւհ Կամսարական որդի Աբշալոմի, անուանակից և նախնի այժմ Նեբաւհի, ի յաղթել պատերազմաց բազմաց առնու զերկիր սատիկ յոյժ և հառնայ ի գաւառն արքունի բնակեցուցանէ թագաւորին պարսից զհատասակ զերծոյն։ Եւ թուեալ զհատասակն՝ և ընծայէ որդւոյ արքայի գ. է. [յոթերորդ] մասն։ Եւ հրաժարեալ ի նոցանէ, դառնայ յաշխարհն իւր։ Եւ եկեալ ի տուն պարիկպետի՝ յոյժ մեծարի ի նմանէ ոչ սրտիկս պնախարար, այլ մարդիս գիր ոք ի թագաւորաց։ Եւ սա տայ նմա գ. ը. [ութներորդ] մասն զերծոյն։ Եւ եկեալ առ սպարապետն, զոր խորատարանն կոչեն, և առեալ ևս ի նմանէ մեծարեալ՝ տայ նմա գ. ժզ. [տասնըչորսերորդ] մասն զերծոյն։ Եւ ևս յառաջ եկեալ՝ հառնէ յաշխարհն իւր՝ և ընդ առաջ լինի նմա եղբայր իւր կրտսեր Հրահատ և տայ նմա գ. ժզ. [տասներեքերորդ] մասն զերծոյն։ Եւ ևս յառաջ եկեալ՝ ընդ առաջ լինին նմա ազատքն հայոց և տայ նոցա զինն մասն զերծոյն։ Եւ եկեալ Վաղարշապատ՝ տայ ի տուրս եկեղեցիսն գ. ժզ. [տասներեքերորդ] մասն զերծոյն։ Եւ եկեալ Սահակ առաջ եղբայրն իւր՝ տայ նմա գ. ի. [քառներորդ] մասն զերծոյն» (ԱՃ, Հարց. իև, էջ 25—26)։

Սարուխների նվիրաբերումը Թագավորին սերտ առնչութիւն ունի, որ Մխիթար Գոշի Դատաստանագրքի մէջ նշվում է իբրև պարտադիր կանոն։ Այդ օրենքի համաձայն՝ պատերազմում ձեռք բերված զերիների մեկ տասներորդը պետք է հատկացվի Թագավորին, յետև վերջինս անձամբ չի մասնակցել պատերազմին (ՄԳ, II, հոդ. Ա. էջ 312)։ Սարուխների նվիրաբերման մասին հիշատակում է նաև Առաջ-Հատմիչական Դատաստանագիրքը, որտեղ այդ նվերի գործողութիւնը պահանջվում է վավերացնել գրավոր ձևով. «Թէ ոք տայ մարդու գեաղ կամ տացուած ի պատիւ նորին կամ տուն կամ ծառայ, և տայ նմա թուղթ հաստատութեան, իշխանութիւն ունի այնուհետև տիրել նմին, որով պատուեցաւ տառնայ, և անվհատեալ վայելէ...» (ԱՀԴ, հոդ. ԺԲ, էջ 45)։

Սարսուռները նվիրաբերելու չարքին և դասվելու նաև այն սովորությունը, որ ամուսնու տունը վնասված ժամանակ մեջ պահպանելու ու անասուններին հետ մնում էին նաև սարսուռները, որոնք կապում էին կնոջ անփափկանությունը. «Եթէ կին աք առար և ամուլ պատահեաց, և այրն հանցէ զնա վասն ամլութեանն, ապ ինչ կնոջն կարասի բերեալ է ի տուն, թէ՛ պղախին, թէ՛ անասուն, թէ՛ հանդերձ, թէ՛ արծաթ, առնուլ իշխան է և գնալ» (ԿՀ, կանոնք Շահապիվանի ժողովոյն, հոդ. ե, էջ 64):

Նույն պարագան հիշատակվում է նաև Աստրա–Հռոմեական Դատաստանագրքում. «Թէ առնու այր կին և բերէ զնովք իւր պղտուղ, ծաղայս, ոչխար, երամակս, լուծս եղանց և այլ զինչ և իցէ տուրս և սատցատածս...» (հոդ. ՁԱ, էջ 34):

Վերջապես իբրև սեփականատիրական առարկա, սարսուռը ժառանգաբար կարող էր անցնել մեռածի ժառանգներին, եթե, իհարկե, սարկաւագը կատակով ազատություն չի չնորհել սարսուռներին: Այդ խնամքը կարելի է հետևցնել Աստրա–Հռոմեական Դատաստանագրքի ԺԶ հոդվածից. «Եթէ աք առնէ կատակ, եթէ, սաղմ և եթէ հիւանդ, և կամի ազատել զծառայս իւր, թէ մի և թէ երկուս, կարող է ազատել և թէ Դ. են, զերկուսն, պարտի ազատել և ի հնգէն ցառն՝ զվէցն պարտի թողուլ և ի տասն զերեսունն՝ զմին յերից թողուլ և յերեսունէն ցհարիւրն զմին ի չորից կարող է թողուլ: Ապա թէ աւելի ազատ է, քան զոր հրամայէ նոմոս, աւելի մնայ ժառանգաւորացն: Իսկ եթէ աք առնէ կատակ և զվէ ազատ զամենայն ծառայս իւր, մնան ամենեքեան ծառայ ժառանգացն» (ԱՀԴ, էջ 12):

Ինչպես ամեն մի իր, այնպես էլ սարսուռը զանում էր առևտրի առարկա: Սարսուռը ներկայացնում էր փոխանակական արժեք այն ժամանակվա առևտրական հարաբերություններում: Թերևս այդ հանգամանքը խթան էր հանդիսանում բազմաթիվ և անզգալ պատերազմների ու հարձակումների, որոնք հարուստ ավարառումների աղբյուրներ էին այն ժամանակվա սարկական չուկաներին դերիներ մատակարարելու համար: Հին գարերում Բաբելոնը, Փյունիկիան, Հունաստանը, Փոքր Ասիայի Միջերկրական ծովամասի հունական գաղութները, Հռոմը, Աթենքը, իսկ միջին գարերում՝ Բագդադը, Բյուզանդիոնը, Վե-

նետիկը, Զենովան այնպիսի հսկայական միջազգային չուկաներ էին, որ ընդունակ էին կլանելու անսահման քանակով կենդանի ապրանք, որ հարաճուն ալիքներով հեղեղվում եր Ասիայի ու Ցեվրոպայի բոլոր ծայրերից: Այդ սարկական չուկաները անհրաժեշտ էին աշխատավոր ձեռքեր գնելու համար, քանի որ այդ դարերում արտադրության մեջ չահագործվում եր տակավին սարկական աշխատանքը:

Հայաստանումն էլ սարուկներն առևտրի առարկա էին. նրանք գնվում էին իբրև աշխատող ձեռքեր կամ վաճառվում էին իրենց տերերի կողմից ուրիշներին և կամ վերջապես դառնում էին արտածման չահավետ ապրանք դեպի տարբերկրյա չուկաները: Սարուկը փոխանակական արժեք լինելու դաղափարն արտացոլել է նաև հայ ժողովրդական վիպասանության՝ «Սասնա Ծռերի» մեջ, որտեղ դերին ներկայացվում է արժեքավոր ապրանքի նշանակությամբ. «Գերին դին եղնի, տիրուն կ'ասնի»[172]:

